Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material



ՀԱՅ ՎԱՆՔԵՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

215.1
Uh26.0
or2
206.5
U-47

24 NOV 2011

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՎԱՆՔԵՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱԻՆՈՒՆԻ

SAHAKIAN LIBRARY
No:
VOL.

1931

ՏՊԱՐԱՆ ՍԲՐՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

6 FEB 2013

2916

ՇՐԱՄԱՆԱՒ
ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՑ

ՅԱՅԿԱԶՅԱՆ ԼԻԲՐԱՐԻ
ՀԱՅԿ

Գրադարան
Հայաստան

5188 - 2011

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Քանի մը տողերով կ'ուզենք լուսաբանել վանական կեանքին առաջ անապատներ առանձնացող բարի հիսոնեաներուն անապատական կեանքին վիճակը եւ յետոյ գրել թէ ի՛նչ պատճառներէ մղուած նոյն բարեպաշտ հիսոնեաները թողուցին անապատական կեանքը ու հիմնեցին մեծամեծ վանքեր որոնք վերածուեցան հոգեւոր կեանքի եւ կրօնական ուսման եւ աղօթքի արբանեակներու։ Այս հիմնական բացատրութիւններէ վերջ պիտի գրենք հայկական վանքերու հիմնարկութիւնը Ս. Երկրին, եւ մասնաւորապէս Երուսաղէմի մէջ, մի եւ նոյն ժամանակ ցոյց տալով այն պատճառները որոնք հանդեցին անոնցմէ շատերը. բայց միջանկեալ պիտի լուսաբանենք Երուսաղէմի Հայ Վանօրէից Յուցակը գրի առնող Անապատս վանականին իմաստութիւնը՝ մանրամասնելով անոր մասին այն պատմական պարագաները զոր հաղած ենք օսար պատմիչներէն։ Ի վերջոյ կը փափաքինք բացատրութիւններ տալ նոյնպէս աշխատասիրութեանս բովանդակութեան եւ ուրիշ պարագաներու մասին։

Ա

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՆԱՊԱՏԸ

Վանական պատմութիւնը Երուսաղէմի Անապատ կը կոչէ այն ընդարձակ լեռնոտ միայնութիւնը՝ որ Ս. Քաղաքին արեւելքէն կ'երկարի հազար մեթր հակումով մինչեւ Յորդանան եւ Մեռեալ Ծով եւ կը տարածուի հիւսիսէն հարաւ։ Այդ մասին պէտք է կցել Յորդանանի աջակողմի դաշտը՝ երիքովէն սկսելով մինչեւ Ասփալտեան Լիճին հիւսիսը։

«Երուսաղէմի Անապատ» սահմանուած վերոյիշեալ նոյն հողա-

մասին մեռնականները հրեական, հռովմէական եւ բիւզանդական շրջաններուն, ինչպես նաեւ իսլամական տիրապետութեան ժամանակ գիւղեր կային որոնք կ'ապրէին հողագործութեամբ. բայց նոյն հողամասին վրայ ջուրը անբաւական էր մեկուսութեան եւ առնին պէտքերուն համար. անձրեւի ջուրը կը հաւաքուէր ջրհորներու մէջ եւ ամրան օրերուն մարդեր եւ անասուններ կը տառապէին ծարաւէն. վաղանցիկ գարուն մը միայն ունէին, անմիջապէս արեւի կիզիչ ճառագայթները կը խամրեցնէին նորաբոյս կանաչութիւնը եւ բուսականութիւնը: Անա այս հողային բարիքներէ եւ ջուրէ զրկուած հողամասին վրայ է որ յանախ կը հաստատուէին անապատականները որոնք ջրհորներներ կը փորէին եւ կամ հեռի տեղերէ կը հայթայթէին ջուրը, արհաբար կը կրէին օրուան ծարուքիւնը եւ տապը: Շատ քիչ տեղեր կային որ ջրոտ վայրեր ունէին: *Յորդանանի* դաշտը Գ. դարու վախճանին սկսաւ կրօնաւորական *կեանքը* Հրէաստանի Անապատին մէջ մեկ քանի անապատականներ կ'ապրէին հոն աղբիւրներու մօտիկ քարայրներուն մէջ: Անոնք հաղածանքներէ փախչելով եկած բնակած էին Անապատին մէջ եւ հոս հոն Մեռեալ Ծովուն ափանց մօտիկ եղեգներու մէջ կը ծածկուէին:

Երուսաղէմի անապատական կեանքին հիմնադիրը եղած է Խարիտոն. որուն բնակած տեղը մինչեւ այժմ կը կոչուի *Ուստի Խարիտոն*: Հետեւեալն էր կենցաղը այն անապատականներուն որ կը բնակէին այս հողամասին մէջ. այն այրը կամ հիւղակը՝ որուն մէջ երկար տարիներ կ'առանձնանար անապատական մը՝ կ'ըլլար լուսոյ եւ արբութեան վառարան մը, երբ Ս. Անտոնի, Իլարիոնի, Եւթիմիոսի եւ Սաբայի նման մեծ վանականներ կ'ստանձնէին նոյն բազմաթիւ հիւղակներու կրօնական դաստիարակութիւնը, եւ արդարեւ այն ատեն հիւղակը կը վերածուէր *Մայր Հիւղակի* երբ աշակերտներ կը հաւաքուէին նոյն հիւղակներուն շուրջը: Անա վանական հաստատութիւններէն առաջ *խուցի* (laure) կեանքը այն անապատականներուն՝ որոնք բազմաթիւ խումբերով ցրուած էին Երուսաղէմի Անապատին մէջ հաղարէն մինչեւ Մեռեալ Ծով, ինչպես յիշեցինք:

Ինչ էին ասոնց կրօնական սովորութիւնները: — Շաբաթ եւ կիրակի օրերը խուցին մէջ կը կատարուէր հասարակաց կրօնական կեանքին սկիզբը: Եկեղեցին՝ ուր կը կատարուէին հանդիսութիւնները եւ պատարագը, հիմնաքարը եղաւ անոր՝ որ չեղոյ պիտի կոչուէր

վանք. տուն մը՝ ուր կրօնաւորները պիտի վարէին հասարակաց կեանք մը: Ծոմը կը խզուէր երեկոյին միայն *աղ ու հացով*: Այս ծայրայեղ սակաւակերութեան սահմաններուն մէջ, պէտք էր խոյս տալ յափրանքէն եւ վառ պահել ախորժակը: Ըմպելիքի համար միայն սակաւ ջուր գործածել: Սաղմոսերգութիւնը եւ գիտերային աղօթքը որոշ եւ հաստատուն ձեւ մը կ'ստանար: Վանական օրենսդիրը ցոյց կու տար նաեւ հարկը ձեռքի աշխատանքին եւ կը հանկցնէր թէ բոլոր չարիքներուն արմատը ծուլութիւնն է: Վանքը, Պաղեստինի մէջ, վանական ամենէն լաւագոյն բուսականին իսկ, խուցը չ'անհետացուց. եւ նոյն իսկ Անապատի ամենէն մեծ անձերուն ցոյց կու տայ՝ թէ կրօնական կեանքին մէջ վանքը ստորակարգ էր խուցէն. խուցը հաղբակներուն կամ, ինչպես կ'ըսեն՝ *տղայոց* տունն էր: Հոն էր որ ապագայ խրճիթաւորը պիտի ճիներ, եւ պիտի ենթարկուէր այն փորձերուն՝ որոնց տեւողութիւնը իր զարգացումները միայն պիտի որոշէին: Մեկ խօսքով, այս կրօնական խցային կամ խրճիթային կեանքէն ծնան վանքերը:

Երուսաղէմի Անապատին ո՛չ ծագման եւ ոչ ալ զարգացման ժամանակ չհետեւուէր որ եգիպտոսի վանքերը միջամտած ըլլան: Պաղեստինի անապատներուն բոլոր մեծ հիմնադիրները եկած էին Փոքր Ասիայէն, կամ այն դաշտավայրէն որ կը տարածուի նոյն տեղւոյն արեւելեան սարահարթին ստորոտէն: Իրենց գործերը կը պարտին իրենց ձեռնհասութեան: Հաւանականութենէն եւ ճշմարտութենէն դուրս է մտածել սակայն թէ եգիպտական անապատները առանց ազդեցութեան մնացին Երուսաղէմի Անապատին վրայ: Դ. դարուն Եգիպտոս եւ Պաղեստին յանախ յարաբերութեան մէջ էին: Երուսաղէմի անապատականները յանախ կ'այցելէին Եգիպտոս Ս. Անտոնի անապատը՝ ուր անոնք երկար ժամանակ կը մնային Մեծ Անապատականին մօտ ու կը լսէին անոր հրահանգները: Եգիպտական մեծ անապատականներ ալ այցելած են Երուսաղէմի Անապատը: Պատմութիւնը կը վկայէ թէ արիոսական վարդ Նիտրիոյ Անապատէն ստորական միայնակեացներ ղրկած է Պաղեստին: Ուրիշ եգիպտական վանականներ՝ որոնց մէջ կային Սկիտեցիներ ալ՝ դարձալ աքսորուած են Պաղեստին, ինչպես ոմանք ալ նոյն պատճառներով աքսորուած են Հայաստան, ուր անոնք առարկայ եղած են տեղւոյն հաւատացեալոց յարգանքին:

Բ

ԽՈՒՃԵՐԷՆ ԵԵՏՈՑ ՎԱՆՔԵՐԸ

Երուսաղէմի Անապատին մէջ Դ. դարուն խցային կեանքը զարգացում մը ունեցաւ. եգիպտական անապատներուն մէջ, *անհատականութիւնը* այլ եւս ապարդիւն դարձած էր, տարիներով առանձնական կեանք վարողները անտարակոյս մտածեցին թէ նոյն կեանքը իր մասնաւոր հաղորդութիւններէն զատ, ոչ մի կերպով հաւաքական օգտակարութիւն չի կրնար ընծայել, ինչ յետոյ յատկանշական գաղափար դարձաւ հետեւեալ ըմբռնումը, «պէտք է միացնել հոգիները ազատելու համար», խցային կեանքը պէտք էր տանիլ դէպ ի զարգացման ճանապարհը եւ յառաջ բերել միաբանակցի կեանքը. վասն զի այս կեանքը աւելի կատարեալ է քան անապատականինը՝ զօրութեամբ այն առաքինութեանց՝ որոնց գործադրութիւնը կը պահանջէ համարիւն եղբարց ընկերութիւնը: Եգիպտական Անապատին մէջ փորձառութեամբ կը տեսնէին անապատական կեանքի անպատեհութիւնները: Այլ եւս գաղափարները փոխուած էին, մենակեացներուն յարաբերութիւնները մտերմացան: Անապատականները հետզհետէ խտացուցին իրենց շարքերը ու եկան հաստատուելու ծերունի մենակեացներու մօտ. հաստնցած էր միաբանակցութեան գաղափարը: Անապատական Պախոմիոս հասկցած էր այս պարագան եւ գործի ձեռնարկեց. ան ընդարձակեց իր բնակարանը եւ պատրաստուեցաւ ընդունիլ այն եղբայրները՝ որ պիտի գային իր շուրջը հաւաքուելու: Նեղ կու գար իր շէնքը. հետզհետէ բարձրացան վանքերը Նեղոսի երկու կողմերը եւ անոնք օժտուեցան նաեւ եկեղեցիներով: Պախոմիոս ոգին էր նոյն վանքերուն, որոնց տուաւ նաեւ կանոնագրութիւն մը՝ որուն համար, աւանդութիւնը կ'ըսէ թէ՝ հրեշտակներէն ստացաւ զայն: Եգիպտոսի վանքերուն պատմութիւնը կը վկայէ թէ այս նոր հաստատութիւնները ո՛րպիսի զարգացում ունեցան եւ ո՛րպիսի արդիւնքներ ընծայեցին քրիստոնեական կեանքի համար:

Այս բացատրութիւններ տալէ վերջ պէտք է դիտենք թէ Երուսաղէմի Անապատի խցային կեանքը Դ. դարէն վերջ տակաւին շատ Ժամանակներ տեւական մնաց: Նոյն դարէն սկսեալ բեւ մեծամեծ

վանքեր ու եկեղեցիներ կառուցուեցան նոյն Անապատին մէջ, բայց չխափանուեցան անապատականներու խուցերը. նոյն իսկ արաբ պատմիչներ կը յիշեն թէ իսլամ տիրապետութեան օրով Սելովամի շրջակայքը, մասնաւորապէս Թէոդոսի եւ Սաբայի մեծ վանքերուն, կը մնային հազարաւոր խուցեր ուր կը բնակէին մենակեացներ, որոնց այդքան բազմութեամբ խցաբնակութիւնն ու շրջագայութիւնը առիթ տուած է յարձակումներու եւ կոտորածներու: Պատմական այս իրողութենէն կը հետեւի թէ որքան որ Եգիպտոսի Անապատին մէջ խցային վիճակը դադրած ու անոր յաջորդած էին վանքերը, բայց Երուսաղէմի Անապատը կը պահէր իր խցային կեանքը, հիմնարկելով հանդերձ մեծամեծ ու բազմաթիւ վանքեր, որոնք փառքն ու պսակը եղան Ս. Երկրին՝ զարգացնելով հոն քրիստոնեական ճարտարապետութիւնն ու գեղարուեստը եւ հրապուրելով խուռներամ ուխտաւորներ այլ եւ այլ երկիրներէ. այլ եւս անապատը վերածուած էր շինցած ու զարդարուած քաղաքի մը: Մեր նիւթին սահմանին դուրս չեմ նկատեր քանի մը տող ալ գրել մեր Տիրոջ Տնօրինական Տեղեաց վրայ կառուցուած եկեղեցիներու մասին: Պաղեստինի վանքերու եւ եկեղեցիներու կառուցուածքները զարգացման երեք գլխաւոր շրջաններ ունեցած են. Ա. *Կոստանդինեան (Դ. դար)*, Բ. *Եւդոկեան (Ե. դար)* եւ Գ. *Յուստինիանոսեան (Զ. դար)*: Կոստանդիանոս կայսր քրիստոնէութիւնը պետական կրօնք հռատարակելէ վերջ 325ին հրամայեց որ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ կառուցուի հոյակապ մը հեղինակաւ դարու պանդոնի ձեւով, եւ Գողգոթայի մեծ եկեղեցին շինուի բիւզանդական ոճով. կամարակապ եւ գեղազարդ՝ Կոստանդինեան Ս. Յարութեան տաճարը նախադուռներով միասին բիւզանդական ճարտարապետութեան գլուխ գործոց մ'եր, ուր ոսկին ու արծաթը առատօրէն կը փայլեր եւ փառքն էր քրիստոնէութեան: Նոյն կայսեր միջոցաւ շինուեցան նաեւ Վերնատան, Ձիթենեաց Լերան եւ Բեթղեհէմի եկեղեցիները: Անոնցմէ վերջը շինուած է Գեթսեմանիի Ս. Կուսի եկեղեցին: Ե. դարու առաջին քառորդին Երուսաղէմ կը գտնուէին Հռոմայեցի տիկիններ, ինչպես Բալլա եւ երկու Միլանիաներ՝ որոնք Երուսաղէմ բնակելով իրենց առատաձեռնութեամբ մղում կու տան նոր եկեղեցիներու եւ վանքերու կառուցման: Այս շրջանին Համբարձման Լերան ուրանկիւնային եկեղեցին շինութեամբ՝ Երուսաղէմի մէջ կը ներմուծուի շինութեան նոր տիպար մը, որ

հիսոնեական աշխարհին մէջ տակաւին հազիւ կը ճանչցուէր։

Եւդոկսիա Թէոդոս Բ.ի թագուհին էր, որ իբր ախոռական Երուսաղէմ կը բնակէր Ե. դարուն. ան Ս. Տեղեաց համար ունէր ջերմեռանդ նախանձաւորութիւն մը եւ շինեց բազմաթիւ հաստատութիւններ. ինք ոն մը գործածուեցաւ շինութեանց մէջ։ Եւդոկսիան էր որ շինել տուաւ Ս. Ստեփանոսի, Պրոպատիկէի եւ Սելոամի փրկչամեայ եկեղեցիները, ինչպես նաեւ Ս. Յովհաննու Մկրտչի երեք կոզակով եկեղեցին. մինչեւ Զ. դարու կիսուն եկեղեցիները շինուած են Եւդոկսիա թագուհիին նախընտրած ճարտարապետական ոճով. Յուստինիանոս ինչ ոճին կու տայ ինք կեանք մը եւ Երուսաղէմը կը դառնայ Մատապայի Մոզայիկի *Սուրբ Քաղաքը*։

Մինչեւ Է. դարու սկիզբը թէ՛ կը պահպանուին Դ. դարէն սկզբնաւորուած եկեղեցեաց շինութիւնները ու վանքերը եւ թէ կ'աւելնան նորեր ալ. այս կերպով Երուսաղէմ Դ.էն մինչեւ Զ.ի վերջը եկեղեցիներով ու վանքերով զարդարուն խալաթ մը կը դառնայ. իսկ Երուսաղէմի Աճապաղը կը բարձրանան մեծամեծ եւ փոքր վանքեր՝ պահպանելով հանդերձ մենակեացներու հազարաւոր խրճիթները փապարներու բնական այրերու մէջ։

Այս վանական շինութիւններու ոճը միածեւ էր. վանքերը կ'ունենային ընդհանրապէս կանոնաւոր մեծութեամբ տաճուած եւ բանձր քարերով շինուած աշտարակ մը, որ կ'ունենար մի եւ նոյն ոճը եւ ներքնապէս ունէր աղցիր, սանդուխներ, ստորերկրեայ տեղեր. վանքը իր դիմացը կ'ունենար եկեղեցի մը կորնթական խոյակներով եւ բիւզանդական սիւներով. կամարները կամ առաստաղները կ'ըլլային կամարակապ եւ յատակը մոզայիկներով։

Առանց պատճառի չէր որ վանականները իրենց ապխատիկ բնակարանները կը վերածէին բերդի. կրօնական շրջաններ, Հրէից եւ Սամարացւոց ապստամբութիւնները, Արաբացւոց եւ Պարսից արշաւանքները չէին դադրեր Պաղեստինը խռովելէ, մինչեւ այն որոշ արշաւանքին՝ որ խլեց յունական կայսրութենէն այս գեղեցիկ եւ նշանաւոր գաւառը։

614ին Պարսիկները իրենց արշաւանքին ժամանակ Երուսաղէմը կրակի տուին եւ այրեցին ու բանդեցին բոլոր սրբավայրերը։ Երբ 627ին Տիգրիսի հովտին մէջ Բիւզանդացիք յաղթեցին Պարսիկներուն եւ Պարսից թագաւոր Խոսրովը մեռնելով Պարսիկները ետ

ուեցան Պաղեստինէն. Պարսիկները Հերակլի նեռ խաղաղութեան դաշինք կը կնքեն ու գերի տարուած խաչը կը վերադարձնեն Երուսաղէմ։ Մոտեսոս՝ Թէոդոսի վանքին մեծաւորը՝ բանդուած բազմին սրբավայրերը կը նորոգէ օգնութեամբ Տիբերիոյ, Տիւրոսի, Դամասկոսի եւ Աղեքսանդրիոյ հիսոնեից. նոյն իսկ ամենափոքր մասունքներն անգամ կը նորոգուին, ինչպես յայտնի կ'ըլլայ Ը. դարու վրացական ձիսարանէն։ Նիւթական միջոցներու անբաւականութեան պատճառաւ կարելի չըլլալով այս վերաշինութեան առթիւ գործադրել սրբավայրերու նախնական յատակագիծը, անոնցմէ շատերը առժամանակեայ շինուած են լաւագոյն ժամանակներու մէջ լրացնելու համար անոնց ամբողջացումը։ 633ին Սոփրոնիոս յաջորդելով Մոտեսոսի՝ շարունակեց անոր վերանորոգութեան գործը։ Արաբական արշաւանքէն յետոյ, ըստ Կոստանդին Պորփիւրոժենի, Մենն կարալոս «Մեծ գուարներ ղրկեց Պաղեստին, ուր շինել տուաւ բազմաթիւ վանքեր»։ 810ին Aix-la-Chapelle մէջ գրուած արձանագրութիւն մը կը յիշէ այն ապբիւրները՝ որոնցմով պիտի նորոգուէին Ս. Երկրի եկեղեցիները։ Commemoratorium de Casis Deiի մէջ կը գտնուի Երուսաղէմի պատրիարքութեան կրօնական շինուածքներուն եւ անոնց անձերուն մէկ ցուցակագրութիւնը, ինչպես նաեւ յատկացուած ծախուց ցուցակ մը, զոր կայսրը կ'ստանար իր կողմէն ղրկուած պատուիրակին ձեռքով. անոնա այս ցուցակներէն կը հասկցուի Թ. դարուն Ս. Երկրի սրբավայրերուն եւ կղերին կացութիւնը։

Գ

ՀԱԳՈՒԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՄԷՋ

Մենք այս աշխատութեան մէջ յիշած ենք թէ Հայք Դ. դարէն սկսեալ ուխտաւորութեան պատճառներով կը յաճախէին Երուսաղէմ. այդ պարագան փաստելու պէտք չկայ։ Հայք շատ կանուխէն հիսոնէութիւնը ընդունած ըլլալով՝ յաջողած էին Երուսաղէմի Տճօրինական Ս. Տեղեաց մէջ տիրանալ որոշ իրաւունքներու, եւ իբր

համայնիք կը վայելէին շատ մը Տճօրինական Ս. Տեղեր՝ որոնց պահպանումին ու պայծառութեան կը հսկէին։ Բիւզանդական շրջանին Հայոց յատուկ էր Սիոնի հանապարհին վրայ գտնուած փողոցը՝ որուն Ruga Armeniorum անունը կու տային միջին դարու մէջ, եւ ան կը տաճէր մինչեւ Սիոնի եկեղեցին, զոր կը յիշատակէ Raade իր Պետրոս վրացիին գերմաներէն կենսագրութեան մէջ (Տե՛ս էջ 45–46)։ Այս պատմական տեղեկութիւնը կը բաղնիք նոյն Մատապայի այն մոզայիք յարակ — յիշատակարանին որ Զ. դարուն շինուած էր — եւ ան հրաշալիօրէն կը համապատ իլչ որ պատմութիւնը եւ ուղեգիրները կը սորվեցնեն մեզ Երուսաղէմի հերին դիրքին եւ գլխաւոր արքայական մասին, որ հոն կը գտնուէին՝ երբ Երուսաղէմ իր փառքին գեղիքին վրայ էր։ Մատապայի այս մոզայիք յարակը ի մէջ այլոց ցոյց կու տայ նաեւ Հայոց Կայիափայի տան տեղւոյն վրայ շինած եկեղեցին՝ որ *Ս. Պետրոս եկեղեցի* անունէն ալ կը ճանչցուի. ցոյց կու տայ նաեւ *Ս. Պետրոսի հառաչանաց վանքը*՝ որու մասին արդէն գրած ենք. առաջինը տեղն է Ս. Պետրոսի ուրացման, իսկ երկրորդը՝ զղջման։ Իսկ յիշատակարանը՝ որ այսպէս շատ պարզօրէն երկու եկեղեցիներու տեղը կը ճշդէ՝ լսելի հարուած մը կու տայ անոնց՝ որ կը հականատեն յայտարարել թէ՝ Հայոց Ս. Փրկիչ եկեղեցին Կայիափայի տան տեղւոյն վրայ չէ շինուած, վերջին դարերու գործ է ըսելով, եւ Կայիափայի տան տեղը ցոյց կու տան Պետրոսի հառաչանաց տեղւոյն վրայ. մինչ երկուքն ալ Զ. դարէն առաջ գոյութիւն ունէին արդէն ինչպէս յայտնի է յիշատակարանէն, եւ երկուքն ալ կը վերաբերէին Հայոց. ահա ուրեմն այլ եւս ի նպաստ Հայոց վճռուած կը նկատուի այդ շատերէ կնճռոտուած խնդիրը (Տե՛ս Cabrol-Leclercqի Dict. d'Archeologie chretienne et de Liturgie, էջ 2344–2346, բառն Jérusalem.

Երուսաղէմի մէջ երբ կային հայկական թաղեր, կային ուրեմն բազմաթիւ հայ վանքեր՝ որ շինուած էին բիւզանդական շրջանին, Դ–Թ. դարերուն. անոնք կառուցուած էին Հայոց ազգային Ս. Տեղերու եւ նահատակաց գերեզմաններուն եւ կամ անոնց նշխարներուն ամփոփուած տեղերուն վրայ, պահելով հանդերձ հայ խցաւոր մենակեացներու խրճիթները, որոնք՝ ըստ Պաղեստինի սովորութեան՝ հաստատ կը մնային վանքերու կառուցումէն վերջ, ինչպէս յիշեցինք։ Հայկական վանքերու գոյութեան կը վկայեն 1. նորագիւտ *Հայկական մոզայիք արձանագրութիւններ*, 2. *Մոխսս կա-*

թանկայոտուացին եւ 3. *Անտատա հայ վանական*։ Ա.— Բիւզանդական Երուսաղէմը ունեցած է մեկ աւելի հայ թաղեր, մին՝ Սիոնի մէջ, ուր երբեմն կը բանակէր Հռոմայեցւոց լեգեոն մը, նիւթ մեր Ս. Յակոբ վանքին դիմացը, եւ միւսը՝ Պռոպատիկէի Հայոց վանքին մօտ, ուր կը բնակէին նաեւ Ասորիները։ Բիւզանդական շրջանին Հայոց կողմէն հիմնարկուած հայկական Պողիկոսի վանքին աւերակներէն վերջերս երեւան եկած գեղակերտ հայերէն մոզայիք արձանագրութիւնը, ինչպէս նաեւ Զիրենեաց Լերան հայկական մոզայիք յիշատակարանները, որոնց արձանագրութիւնները մեր այս ուսումնասիրութեան մէջ, պերճախօս ապացոյցներ են թէ բիւզանդական Երուսաղէմին փառաց գենիքին վրայ գտնուած շրջանին՝ Հայերը եւս բերած են իրենց բարեպաշտական բանկագին մասնակցութիւնը Ս. Քաղաքը գեղազարդելու հայկական վանքերով, եկեղեցիներով ու մատուռներով։ Այս յիշատակարանները պատահաբար երեւան եկած արձանագրութիւններ են, երէ պրպտումներ ըլլան մեզ սեպհական յայտնի աւերակներուն մէջ եւ այլուր, տարակոյս չկայ թէ ուրիշ յիշատակարաններ եւս պիտի վկայեն Հայոց հին վանքերու գոյութեան։

Երկրորդ վկայութիւնը կու տայ մեզ Է. դարու մատենագիրներէն Մովսէս Կաղանկատուացի, որ կը ծանօթացնէ իր ժամանակի Աղուանից ազգի անց ու դարձերը։ Անոր պատմութեան անանուն շարունակող մը՝ Աղուանից պատմութիւնը կը բերէ մինչեւ Ժ. դար։

Կաղանկատուացին Երուսաղէմի Ս. Տեղեաց եւ վանքերու մասին ունի յիշատակարան մը՝ որուն մէջ կը նկարագրէ Քրիստոսի Ս. Գերեզմանին, Ս. Յարութեան տաճարին, Գիւս Թաչի, Գողգոթայի, Ս. Սիոնի, Պիղատոսի պալատին, Համբարձման, Բեթղեհէմի, Հովուաձոցի եւ Յորդանանու, ինչպէս նաեւ Գեթսեմանիի Ս. Կուսի դամբարանին վերաբերութեամբ, յետոյ կ'աւելցնէ Երուսաղէմի Աղուանից վանքերու նկարագրութիւնը։ Յիշատակարանին բովանդակութիւնը ականատեսի տեղեկութիւններ են, վասն զի արբանեակներու տարածութեան մասին անոնք մանրամասնութիւններ ունին։ Այս յիշատակարանը անոր համար աւելի բանկագին է, վասն զի Դ. դարու հայ ուխտաւորի գրչէն ելած է եւ ճշգրիտ նկարագրութիւնն է Ս. Երկրին մէջ կոստանդինեան արքայավայել գլխաւոր շինութեանց. միայն թէ յիշատակարանին ինչ ինչ տողերուն մէջ ձեռնմխութիւններ կը դիտուին, կա՛մ ընդօրինակողներուն կողմէն եւ

կամ ան՛նց կողմեն՝ որոնք վերջին տարիներու մէջ կառուցուած արբավայրերու անուններեր չգտնելով անոր մէջ՝ իրենց ժամանակի արդեն կառուցուածները աւելցուցած են յիշատակարանիս վրայ, ինչ որ յիշատակարանին մէջ խանգարումներ յառաջ բերած են։

Երրորդ վկայութիւնը կու տայ *Անապատս հայ վանականին* վանքերու ցուցակը։ Այս ցուցակը Պաղատիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէկ գիրքին մէջ գտնուած է եւ հրատարակած են գայն 1896ին Ղ. Ալիշան «*Վասն վանօրէից որ ի Ս. Քաղաքն Երուսաղէմ*» խորագրով եւ գաղղիերէնի թարգմանութեամբ, ըստ խնդրանաց Société de l'Orient Latin-ի խմբագրին. 1835ին Հ. Ղուկաս Ինճիճեան իր *Հնախօսութիւն* գիրքին (Բ. հտր. էջ 199–201 *շինուածք նախարարաց որ յԵրուսաղէմ* անուամբ, 1931ին Տիգրան Հ. Թ. Սաւալանեանցի *Պատմութիւն Երուսաղէմի* գործին մէջ (Ա. Հտր. էջ 243–246) ուր նոյն ցուցակը բաղդատուած է ուրիշ օրինակի մը եւ Ինճիճեանի տպագրեալ օրինակին հետ եւ տարբերութիւնները նշանակուած են լուսանցքին վրայ։

Ո՞վ էր այս ցուցակագիր Անապատս վանականը կամ վարդապետը. մեր պատմութիւնը կը լռէ այս մասին։ Այս ցուցակին նեռածական մէկ հատուածին համաձայն Անապատս՝ Համազասպ Կամսարական Պահլաւունիի խնդրանքով Երուսաղէմ կու գայ, ժամանակ մը կը մնայ հոն եւ իբր ականատես վկայ կը ցուցակագրէ Հայոց հօրանատուն վանքերը։ Ի՞նչպէս պիտի գիտնանք Անապատսի իմքնութիւնը. մեր մատենագրութիւնը դիւրութիւն չի տար մեզի այդ մասին, ուստի ստիպեալ կը դիմենք օտար պատմիչներուն։

Յունաց Հերակլ կայսր որ բազմիցս պատերազմեցաւ Պարսից հետ իր երկրին պատպանութեան համար եւ ի վերջոյ յաղթութիւնը շահելով Պոլիս կը դառնար, Է. դարու առաջին քառորդին դեմ յանդիման գտնուեցաւ Արաբիոյ խորհրդին խուժող բազմաթիւ բանակներու որ եկած խրնուած էին Սիւրիոյ սահմանագլուխին վրայ։ Հերակլ յոգնած էր պատերազմներէն եւ իր գանձը դատարկ էր, բայց ամփոփեց իր բոլոր ոյժերը եւ քրիստոնեայ ու արաբ քրիստոնեայ ստուարաթիւ բանակով մը փորձեց նախատիլ Արաբներուն դեմ. զօրաց ընդհանուր հրամանատար կարգեց *Վահան անուն հայազգի մը* հայոց նախարարական սերունդէն. Վահան քանիցս յաջողութեամբ կռուած է Արաբներուն դեմ. եւ զինուորները այնքան վստահացած էին անոր որ նոյն ժամանակ կայսր հռչակեցին

զանիկա։ Աղեքսանդրիոյ պատրիարք Եւստիքիոս (Ժ. դար) իր առաքերէն գրած Տարեգիրքին մէջ Վահանի զինուորներուն Դամասկոսի մօտերը Ռամատի հեղեղատին քով տեղի ունեցած մեծ դժբաղդութիւնը մանրամասն կը նկարագրէ եւ տեղեկութիւն կուտայ Վահանի կացութեան մասին։ 634ին Դամասկոսի մէջ կար Մանսուր անունով պատօճեայ մը որ հաղթապետն էր եւ Հերակլի գանձապահը, եւ ան էր որ կը վճարէր զինուորներու թոշակը ու կը հայթայթէր պարէնը։ Վահան դրամ կը պահանջէ Մանսուրէն, վերջինս կ'առարկէ դրամի չգոյութիւնը եւ դրամ չի վճարեր Վահանի բանակին, հակառակ սիպողութեան։ Արաբական զինուորները մօտեցած էին երկու օրուան ճանապարհ, իր եւ արաբներուն մէջ կը գտնուէր անդունդի նմանող հեղեղատ մը. մինչ երկու կողմերը այսպէս պատրաստակամ էին յարձակման, Մանսուր թողուց Դամասկոսը եւ գտաւ Վահանի բանակը, իբր այն թէ դրամ բերած էր զինուորներուն բաշխելու համար։ Մանսուր երբ կը մօտենար բանակին գիշեր էր. Դամասկացի բազմաթիւ մարդեր կ'ընկերանային անոր եւ կը կրէին լապտերներ, եւ երբ բանակին մօտեցան՝ սկսան բմբուկներ եւ ձնդղաներ զարնել եւ բարձրաղաղակ պոռալ. Մանսուր այսպէս կը վարուէր չարամտութեամբ եւ խաբէութեամբ։ Վահանի զինուորները լսելով ձնդղաներու եւ բմբուկներու աղմուկը կասկածեցան թէ Արաբները կ'ուզին հետի կողմէն յարձակիլ եւ պատրեցան, ամենքն ալ սկսան փախչիլ. ինկան Ռամատի մեծ հեղեղատին մէջ եւ կորան։ Փոքրիկ մաս մը միայն ազատեցաւ, որոնցմէ ոմանք փախան զանազան տեղեր, ուրիշներ վերադարձան Դամասկոս, մինչեւ Երուսաղէմ եւ Պաղեստինեան կեսարիա։ Դամասկոս դիմողները պատմեցին վախճալով պատահածին եւ յարձակման պատրաստութեան, եւ միւս կողմեն ալ գրեցին Հերակլի ա՛յն ամէն չարամտութիւնները, որոնցմով Մանսուր պատճառ եղած էր զինուորներուն պարտութեան, ու ամենէ օգնութիւն խնդրեցին։ *Իսկ Վահան կայսեր հով վերադառնալէ եւ ապահովութենէ վախնալով՝ փախուստ տուաւ եւ հաշուեցաւ Սիւնա լեռը, ուր ընդունեց վանական կեանքը եւ ստացաւ Անապատս անունը. ան է հեղինակը հատոր մը, որուն մէջ կը վկայաբանէ Դաւիթի վեցերորդ Սաղմոսը* (Տե՛ս Patro. Grec. t. CXI, col. 1096–1097)։

Վահանի մասին Եղիփիոսի խօսքերը համառօտեցինք. ան՝ Վահանի տեղ *Մահան* կը գրէ, ինչպէս նոյնը կը գրեն բոլոր արաբ

պատմագիրները. միայն Թեոփանես կը գրէ *Պաան*. ըստ Saint-Martin բացատրութեան, որովհետեւ արաբերէն տուֆի *վաւ* գիրը շատ կը նմանի *միմ* գիրին. *Վանան* հայերէն անունը կարդացուած է *Մանան* արաբ հեղինակներէն, ոյնպէս Թեոփանես՝ որ Վանանի մէկ ուրիշ կռիւը կը նկարագրէ, *Պաան* կ'անուանէ զանիկա։ Caussin մատենագիրը (III. IX. էջ 435) բացէ ի բաց կը գրէ Մանա-նին Վանանին հետ նոյնութիւնը։

Saint-Martin Վանանին ազգատոհմը կը ճգդէ (Տե՛ս Lebeau, Hist. du Bas-Empire, ԺԱ. գիրք, էջ 208) եւ կ'ընդունի զայն Մամիկոնեանց նախարարութեան սերունդ, վասն զի Վանան անունով բազմաթիւ անձեր կը գտնուին նոյն տոհմին մէջ. եւ արդարեւ ան բիւզանդական բանակին մէջ իր յաջողութիւններովը հռաստատեց թէ յաջակորով սերունդի մը զաւակն էր։ Ուրեմն որոշ է թէ Վահան՝ *Մամիկոնեան* էր եւ ո՛չ թէ *Մոկսոյնութի*, ինչպես կը կարծէ Հ. Ն. Ակինեան (Տե՛ս *Ծառաջ*, 1931, p. 1481)։ Եւտիքիոսի վերջին տողերը բանկագին են, վասն զի ան կը ճգդէ պատերազմիկ հայ Վահանի Սիճա Լերան վանքը հաւուիլը այն պատճառներով՝ որ վերեւ պարզուեցաւ եւ հոն վանական դառնալով կրօնական գրականութեամբ զբաղիլը. եւ անոր անունին Աճառասոյի փոխուիլը ունի անտարակոյս իր հաղթական պատճառները։ Ուրեմն Աճառասաս անուան տակ պէտք է ճանչնալ Է. դարու առաջին քառորդին ապրող Վահան Մամիկոնեանը՝ բիւզանդական արեւելեան բանակին մեծ հրամանատարը։ Վանք հաւուելէ յետոյ ան սուրի ու ասպարի տեղ կը կրէ խաչն ու գրիչը։ Մեր Ձեռագրաց Մատենադարանին մէջ նոյն Աճառասաս վանականին անունէն կը գտնուի *Աղօթագիրք* մը (p. 1130), որ մեկնութիւնն է վեցերորդ Սաղմոսին, ինչպես Եւտիքիոսն ալ յիշեց, եւ անտարակոյս ունեցած է նաեւ ուրիշ կրօնական աշխատութիւններ։

Աճառասաս վանական Երուսաղէմի Հայոց վանքերուն ցուցակագրութիւնը հաւանական է որ կատարած է 634ին, այսինքն Երուսաղէմի հանապարհով Սիճայի վանքը հաստած միջոցին, քէրեւս մէկ երկու տարի ալ մնալով Երուսաղէմ։ Անոր ցուցակագրած վանքերն էին անոնք՝ որ Պարսից արշաւանքին յետոյ Մոտեսոսի վերաշինութեան ժամանակ նորոգուեցան, առատաձեռնութեամբ ա՛յն ուխտաւորաց եւ իշխանաց՝ որոնք կը յիշուին Հայոց Կոմիտաս կաթողիկոսին կողմէն Մոտեսոսին գրուած նամակին

մէջ։ Աճառասոյի այս ցուցակագրութենէն առաջ, Զ. դարու կիսուն արդէն տեղի ունեցած էին Երուսաղէմի մէջ կրօնական խլրտումներ, քաղկեդոնական դէպքեր, որ վրդովեցին հայ վանականութեան նահապարտիկ կեանքը եւ բանի մը վանքեր ալ գրաւուեցան կամ հրդեհուեցան։ Վանօրէից Ցուցակին եւ Երուսաղէմի Ցովհաննէս պատրիարքին՝ Աղուանից Աբաս կաթողիկոսին ուղղեալ նամակին մէջ կը կարդանք թէ «Հայոց իշխանները գրաւուած վանքերը՝ թէ առանց եւ թէ կանանց, ազատելու համար Ցուստինիանոս կայսեր հօրը կենդանւոյ, այսինքն 70,000 ոսկի դահեկան տուին եւ տիրացան անոնց. Հայոց իշխանները այդ դէպքերուն ժամանակ կը պատպանէին վանքերը ու կը բողոքէին հոռոմ պատրիարքին ոտնձգութիւններուն դէմ, այդ պատճառաւ պատրիարք Աբասի կը գրէ թէ Հայոց իշխանները «զԿեսարիա կալան բռնութեամբ». այդ պատճառաւ իբր պատասխան կ'ըսէ անոնց թէ՝ «Կեսարիան հանոյ է ձեզ, երթայք ի Կեսարիան կացէք եւայլն». նամակին մէջ յայտնապէս գրուած է թէ Հայոց վանքերէն մին հրդեհուած է. հոռոմ պատրիարքն էր հրդեհել տուողը։ Հետեւեալ դէպքն ալ ցուցակագրութենէն յառաջ պէտք է նկատենք. Հոռոմները՝ մասնաւորապէս Ցուստինիանոսի երկդիմի քաղաքականութենէն քաջալերուած, կը բռնադատէին որ Երուսաղէմի հայ վանականները ընդունէին Քաղկեդոնի ժողովը եւ յունական դաւանութիւնը. հայ վանականները կ'ընդդիմանային եւ ստիպուեցան դիմել Ցովհաննէս Գաբեղեան կաթողիկոսին (557–574). «*Եւ միաբան ժողովեալ ամենայն հարքն եւ առաջնորդք վենետասանացն եւ խրհրդեալ միաբանական, անձինք իւրեւ հինգ հարիւր, գրեցին առ երանելի կաթուղիկոսն Ցոհան եւ առ այլ սրոտակեսն. եթէ զի՞նչ պարտ իցէ առնել, հաւանի՞լ նոցա եւ ունիլ զտեղի բնակութեան իւրեանց, եւ թէ՝ թողուլ եւ ելանել անտի, զի հրամանն թագաւորին խստանայր ի վերայ արքոյ քաղաքին եւ հայրապետացն զի մի բնակեսցին անդր ի Հայոց կրօնաւորաց եւ Ցակոբիկ ասորի կամ չհպիպացուցն, այլ միայն որք ողջ ունին զհաւատս թագաւորին եւ զՑոբինոսի ասմնականութիւնն*»։ Կաթողիկոսը կը պատասխանէ թէ հաւատքի մասին մի՛ հնազանդիք անոնց, թողուցէք վանքերը եւ դուրս ելէք այդ վանքերէն։ Այս հրամանին վրայ շատերը դուրս ելան իրենց վանքերը եւ գոյքերը թողլով, իսկ շատերն ալ դուրս չելան քաղաքէն ու համբերեցին հոռոմ պատրիարքներուն տուած նեղութիւններուն եւ ատարանութեանց, մինչեւ որ իսլամ-

ները տիրեցին Երուսաղէմի եւ Պաղեստինի։ Այս տողերը գրուած են Յովհաննէս Գաբեղեան կաթողիկոսի մահուանէն վերջ, եւ այս յայտնի է կաթողիկոսին համար *երանելի* բառին գործածութենէն։ Յուցակագիր Անաստաս վանական կը դնէ այս պատմական ծանօթութիւնները՝ որոնք իրմէ առաջ պատահած էին, եւ կը ծանօթագրէ նաեւ յուցակագրութենէն իչ վերջ տեղի ունեցած դէպքերը, որոնք մեծապէս վնասեցին հայկական վանքերու գոյութեան եւ շատ իչեր մնացին անվնաս։ Կը դասաւորենք հոս նոյն պատճառները.

Ա. *Քաղկեդոնական խնդրոյն պատճառաւ Երուսաղէմի պատրիարքարուն գրաւումներն, ինչպես վերեւ յիշեցինք։*

Բ. *Հայոց կաթողիկոսներուն եւ իշխաններուն անհոգութեան եւ վանականաց ծուլութեան պատճառաւ տեղի ունեցած խնդումները։*

Գ. *Մեր շատ մը վանքերուն մէջ երբ առաջնորդները կը փախճանէին եւ չկար հոգաբարձու մը որ առաջնորդ նշանակէր փախճանողին տեղ, այդ պատճառաւ Երուսաղէմի պատրիարքները անմիջապէս կը գրաւէին զայն։*

Դ. *Իշխաններուն պահանջած հարկերուն ծանրութենէն ազատելու համար հայ վանականները իրենց վանքերէն դուրս էնան. խաղաքի պարիսպի մօտ իրենց ունեցած վանքերը կանանց վանքերու վերածելին եւ սարկաւագուհիներ կարգելին, որպէս զի հարկ չտնարեն եւ ազատ ըլլան, ինչպես միւս կանանց վանքերը։*

Ե. *Հայ վանականները իրենէ դուրս էնան եւ ուրիշ տեղեր գնացին, եւ վանքերու անուններն փոխելին ու անուանեցին նահատարարներու եւ ազատներու անունով, թերեւս անոնցմէ կարենան օգնութիւն եւ ողորմութիւն գտնել։*

Զ. *Իշխան տիրապետութեան սկզբնաւորութեան թէեւ հայ վանականները հանգստացան, վասն զի պատրիարքները այլեւս ունկը չէին կրնար բռնադատել, բայց դժբախտաբար Հայոց երկրին ամէնէն պատճառներով շատ նեղուցան, վասն զի հայ բազաւորներուն եւ իշխաններուն վանքերուն պարգեւած գիւղերը եւ ագարակները այլեւս նկատուս չէին բերեր, եւ վանականները չկրնային հատներէն՝ բողոքին իրենց վանքերը, եւ «ԺԸ. վանք միայն մնացին», ու գրուեցան մերձակայ տեղերը։*

Վանօրէից Յուցակին մէջ բովանդակուած վանքերու անուններէն յայտնի է թէ Հայոց նախարարական տուներէն շինուած եւ հոգացուած

են Երուսաղէմի այս վանքերը, բայց Յուցակին սկիզբը եւ ներածականի առաջին մասին մէջ իբր հիմնադիր կը յիշուին Ս. Գրիգոր Լուսաւորչի, Մեծն Ներսէսի եւ Տրդատ թագաւորի անուննները. անհաւանական չէ Թ. դարուն ասոնց ալ վանքերու շինութեան մասնակցութիւնը Երուսաղէմի մէջ, բայց Յուցակին բովանդակութիւնը յայտնապէս ցոյց կու տայ թէ նոյն վանքերը առաւելապէս հայ նախարարութենէն կողմէն շինուած են բիւզանդական շրջանին։ Վանօրէից Յուցակը ու յարակից ներածական մասը ձեռնմխութենէ զերծ մնացած չէ, անոր մէջ կրկնութիւններ կան եւ անորոշութիւններ։ Յուցակին հեղինակութիւնը Անաստաս վանականին տալով մեկնեղ՝ ոմանք ներածական մասը ուրիշի կողմէն յաւելուած կը նկատեն, բայց հաւանական է որ այդ մասն ալ նոյն հեղինակը գրած է իբր պատմական նախընթաց դէպքեր, եւ ուրիշ մ'ալ յաւելումներ մտցուցած է. կան ցուցակներ, ինչպես Վենետիկի 1624 ի ձեռագիրը, որ չունին ներածական մասը, այլ միայն Վանօրէից պարզ Յուցակը. այդ պատճառաւ ներածականը կը նկատուի անվաւեր։

Բայց ինչ որ ալ ըլլան այս դիտողութիւնները, հայ Անաստաս վանականին կազմած Յուցակը իր մեծ արժէքեն բան մը չի կորսընցներ. այդ փոխրիկ եւ նիւանեն գրուածքը կը ցոլացնէ Հայ-Երուսաղէմի անցեալ փառքը ու հայ իշխանաւորներու հաւատքը զոր ցոյց տուին բիւզանդական տիրապետութեան ժամանակ, երբ Ս. Քաղաքը կը պանծար հոյակապ եկեղեցիներով ու վանքերով ու խաչին նշոյլները կը հառագայթէին արբանեակներու կաթողիկէներուն վրայ։ Անաստաս վանական միակն է որ կը հաղորդէ Հայ-Երուսաղէմի փառքը թէ՛ մեզի եւ թէ՛ գալիք սերունդներուն, որոնք պիտի կարենան պահել իրենց մէջ այդ փառքը զգալու ոյժը ու պիտի սիրեն համակուիլ անով որ ոյժը եւ զօրութիւնն է Հայասաններայց եկեղեցիին եւ Հայ Ազգին։

* * *

Երուսաղէմի մէջ Նախնեացս տիրացած մեծ փառքեն նաեակ մը տալու համար ձեռնարկեցի այս աշխատութեան. այն օրեն ի վեր որ Երուսաղէմ հաստատուեցայ բուռն սէր մը գոյացաւ իմ մէջս կարելիութեան սահմանին մէջ գրելու համար Ս. Քաղաքին հօրանատուն հայկական վանքերու պատմութիւնը։ Երուսաղէմի արդի հայ պատ-

միչները պարզ ցուցակ մը զատ ունէ պատմութիւն չունին հայկական նին վանքերու եւ եկեղեցիներու վրայ, լուռ կը մնային ի մասին արանց եւ կանանց ա՛յն հայ մեծատուններու՝ որոնք զարդը կը կազմէին բիւզանդական Երուսաղէմի զանազան թաղերուն ու կը պահեին մեր հայրենի երկրին «Հայ իշխաններու» փառքը ու հաւատքը։ Ակնարկ մը հայ Աստուածային Ցուցակին վրայ կը համոզէր մեզի թէ նոյն եօթանասուն վանքերէն շատերը այսօր անյայտ էին ու թաղուած կամ անճանաչելի դարձած աւերակներու, եւ կամ արեւամուտներու յառաջ բերած փլուզումներէն եւ հանդումներէն վերջ կառուցուած օտար շէնքերուն գեհիններու տակ։ Բայց չէի յուսահատած այս տխուր վիճակին ու կ'ուզէի գոնէ գրել պատմութիւնը այն հայ վանքերուն որոնք կը յիշուէին մեզի ծանօթ աւերակներով, մզկիթի փոխուած կամ բռնագրաւուած վանքերով ու եկեղեցիներով, մոզայիքներու եւ արձանագրութեանց ու ձեռագրաց յիշատակարաններուն մէջ եւ կը յուսայի թէ անոնցմով ծանօթ վանքերու պատմութիւնը գրելով ցոլմ մը կամ նաեակ մը պիտի կրնայի տալ իմ սիրելի մեռազնէից. 5–6 տարիներ այս գործին լծուեցայի եւ *Միտճի* հրատարակութիւնն ալ մեզի խթան մը եղաւ աւելի խորացնելու մեր պրպտումները, ընթերցումները եւ ի հարկին նամբորդելով ձեռք բերելու պատմական ատաղձներ մեր ձեռնարկած այս վանօրէից պատմութեան։ Մեր վերեւ յիշած աղբիւրներէն զատ այս աշխատութեանս համար իբր աղբիւր օգտուած եմ վաղեմի օտար ուխտաւորներու Ուղեգրութիւններէն, թէեւ անոնք կամաւորապէս ժլատ մեր վանքերու վերաբերեալ պատմական տեղեկութիւններու մասին, բայց երբեմն անգիտակցաբար տեղեկութիւններ սպրդեցուցած են իրենց գրուածքներուն մէջ եւ այդպիսով կարելի եղած է օգտուիլ անոնցմէ ալ։

Օգտուած եմ ընդհանրապէս Ս. Տեղեաց վրայ այլ եւ այլ լեզուներով հրատարակուած կարեւոր գործերէն՝ որոնք կը խօսին Ս. Երկրի վանքերու ու եկեղեցիներու եւ անոնց տեղագրութեան եւ հնախօսութեան վրայ. մասնաւորապէս զանց ըրած չեմ, բայի տեղագրականէն, պատմական եւ նկարագրական տեղեկութիւններ տալու ի մասին խաչակրաց այն եկեղեցիներուն որոնք կը գտնուին մեր նկարագրած իւրաքանչիւր հայկական վանքի կամ եկեղեցիի գտնուած տեղւոյն մէջ, գաղափար մը տալու համար նոյն միջավայրի տարբեր եկեղեցիներու շինութեանց ու պատմութեան նկատ-

մամբ։ Վերեւ յիշուած գրուածքներուն մէջ պրպտելով է որ կը գտնէիմ այն մասերը որ կը վերաբերին հայ վանօրէից պատմութեան։ Երբ Երուսաղէմ չգտնուէի՝ դժուար թէ կարենայի այս տեսակ պատմութիւն մը գրել, քանի որ մեծապէս դժուարին էին հայթայթել պատմական աղբիւրները։ Այն հատասուն վանքերը ու եկեղեցիները՝ որոնց պատմութիւնը ու նկարագրութիւնը արդի մեթոտներով խմորանալ կու տամ այս աշխատութեանս մէջ, իւրաքանչիւրը զատ զատ ուսումնասիրութիւններ ըլլալով՝ հարկ չը տեսայ պահել անոնց տեղագրութեան ու ժամանակագրութեան դասաւորումը. տեսած ըլլալով մանաւանդ այս հաստատութեանց մէկ քանիներուն հիմնարկութեան թուականներուն անորոշութիւնը, եւ իւրաքանչիւր վանքի եւ եկեղեցիի իրարու հետ ո՛եւէ կապակցութիւն չունենալը։ Աշխատած եմ ո՛եւէ պատմական տեղեկութեան կցել անոր յիշատակարանը կամ տեղեկութեան աղբիւրը։ 1927–1931 կը հրատարակէիմ *Միտճի* մէջ Հայ–Երուսաղէմի վանքերու պատմութիւնը եւ գիրքի վերածեցիմ շատերու փափաքանաց վրայ՝ պարբերաբերին նոյն յօդուածները կոկելով եւ յարդարելով զանոնք, միեւնոյն ժամանակ աւելի նոխացուցիմ սոյն աշխատութիւնը նկարագրութեամբ նոր եւ աւելի կարեւոր վանքերու եւ եկեղեցիներու որ կը պակսին *Միտճի* մեր յօդուածաշարքերուն մէջ։

Շարունակելի գործ մ'է մեր այս աշխատասիրութիւնը, վասն զի յայտնի է թէ Ս. Երկրի հողը տակաւին կը պահէ իր մէջ յիշատակարաններ, ինչպէս նաեւ օտար պատմագիրներու տարբեր տեղեկութիւններու էջերը հաւանաբար ի յայտ պիտի բերեն աշխատութենէս դուրս մնացած վանքերու եւ եկեղեցիներու պատմութիւնը. յուսով եմ թէ մեր ներկայ եւ ապագայ միաբանակից եղբայրները պիտի աշխատին իրենց ալ տալու ցոլմ մը Հայ–Երուսաղէմի անցեալ լուսաւոր փառքերէն։

Այս ներածութիւնը վերջացնելէ յառաջ պարտ կ'զգամ յայտնել իմ անմոռաց երախտագիտութիւնը մեր բազմերախս մեծ ուսուցչին եւ Ս. Աթոռոյս երջանկայիշատակ Պահակալ Տ. Եղիշէ Ս. արքեպս. Դուրեանի՝ որ աշխատութեանս պատրաստութեան սկիզբի տարիներուն շնորհ բերած է յուշարձի մի քանի հատուածներուն հայերէն թարգմանութիւնը կատարել, ինչպէս յիշած եմ իր տեղը, եւ դիւրութիւններ տալ ինձ. կը խոնարհիմ իր յիշատակին առջեւ եւ հանգիստ կը մաղթեմ իր անմահ հոգւոյն համար։ Ծիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։

Շնորհակալութեան պարտք մը ունիմ հայտնացնել նաեւ մեր պատուական Պատրիարքական Տեղապահ եւ տպարանի տեսուչ Դեր. Տ. Մեսրոպ Ս. Եպիսկոպոս Նշանեանի, որ հաճեցաւ եղբայրական սիրով աշխատասիրութեանս մասուր տպագրութեան համար հսկել հարկ եղած խնամքը ու հոգածութիւնը չխնայելով։

Շեմ մոռնար փութաջանութիւնը եւ աջակցութիւնը մեր միաբանակից եղբայրներուն եւ կամ մեր ծանօթներուն անոնց, որոնք սատարեցին այս գիրքին պատրաստութեան եւ տպագրութեան համար դիւրութիւններ ընծայելով։

Տէրը օրհնէ այն ամէն աշխատաւորները, որ Իր անունովը կը կատարուին։

1931 Օգոստոս 12

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՎԱՆՍ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ

Աղօթարար Ազգիս եւ

Ս. Աթոռոյ

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. Ա.Ղ.Ա.ԻՆՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՑ

		էջ
Ա.	*Տեառնընդառ հայ վանքը Յովսափատի Ձորին մէջ.*	1 – 6
Բ.	*Հայոց Ս. Աստուածածնի վանքը Բեթղեհէմի նահանջարիւն վրայ.*	6 – 12
Գ.	*Սիոնի վրայ Հայոց Ս. Յակոբեանց վանքը.*	12 – 21
Դ.	*Էյն–Կարիմ գիւղի Հայոց եկեղեցին Բեթղեհէմի նահանջարիւն վրայ.*	21 – 30
Ե.	*Այնֆեարիմ գիւղի Հայոց վանքն ու եկեղեցին.*	30 – 46
Զ.	*Քերկին հայ գաղութը եւ անոր եկեղեցին.*	47 – 58
Է.	*Յովհաննուոյ եկեղեցին.*	58 – 65
Ը.	*Յովակիմ–Աննայի եկեղեցին Երուսաղէմի մէջ.*	66 – 81
Թ.	*Ս. Փրկչի վանքը.*	81 – 94
Ժ.	*Ս. Պետրոսի վանքը Երուսաղէմի մէջ.*	94 – 105
ԺԱ.	*Ս. Հրեշտակապետի վանքը Երուսաղէմի մէջ.*	105 – 114
ԺԲ.	*Երուսաղէմի Ռշտունեաց վանքը եւ անոր Ուրբանոցը.*	114 – 120
ԺԳ.	*Սեղմաղի Աւազանը եւ անոր մօտ գտնուող վանքերը.*	121 – 128
ԺԴ.	*Ս. Պողիկոսի վանքը Երուսաղէմի մէջ.*	129 – 137
ԺԵ.	*Պազաւոն Կաթողիկոսի վանքը Երուսաղէմի մէջ.*	137 – 144
ԺԶ.	*Զիթենեաց Լերան վրայ Աշակերտաւանի եւ Բերի եկեղեցիներն ու վանքերը.*	144 – 166
ԺԷ.	*Մարիամանց կամ Իւղաբերից եկեղեցին Երուսաղէմի մէջ.*	167 – 172
ԺԸ.	*Քրիստոսի Ըմբռնման եկեղեցին Գեթսեմանիի մէջ.*	173 – 181
ԺԹ.	*Գեթսեմանիի Ս. Աստուածածնի Գերեզմանի եկեղեցին.*	181 – 196
Ի.	*Պետրոսի վանքը Երուսաղէմի մէջ.*	196 – 203
ԻԱ.	*Ս. Սարգսի վանքը Երուսաղէմին դուրս.*	204 – 216
ԻԲ.	*Քրիստոսի Ս. Ծննդեան եկեղեցին եւ Հայոց վանքը Բեթղեհէմի մէջ.*	217 – 248

		էջ
ԻԴ.	Ս. Յակոբեանց վանքն ու Մայր Եկեղեցին Երուսաղէմի մէջ.	248 – 278
ԻԴ.	Գողգոթայի վեհ եկեղեցին կամ Մատուռը.	278 – 300
ԻԵ.	Ս. Նիկողայոսի վանքը Ծոպկի մէջ.	300 – 317
ԻԶ.	Ս. Գեորգի վանքը Ռեվկի մէջ.	318 – 328
ԻԷ.	Մելիտինեցի հայեր Եւթիմիոսի վանքին մէջ.	329 – 339
ԻԸ.	Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին Ս. Յարութեան մէջ.	340 – 347
ԻԹ.	Հայ Միաբանութեան մը ծագումը Մար–Սապայի վանքին մէջ.	348 – 360
Լ.	Թէոդոսի վանքը, ամէնէ հայազգի վանահայրը եւ իւրակերտ Մայր եկեղեցին.	361 – 368
ԼԱ.	Քոզիբայի վանքը եւ ամէնէ հայ միաբանները.	369 – 375
ԼԲ.	Ս. Յովհաննէս Մկրտչի վանքը Նապլուսի մէջ.	376 – 386
ԼԳ.	Թաբոր Լերան եկեղեցիները.	386 – 395
ԼԴ.	Ս. Ստեփանոսի վանքը Երիքովի մէջ.	395 – 402
ԼԵ.	Ս. Հրեշտակապետաց վանքը Գազայի մէջ.	403 – 412
ԼԶ.	Ս. Յովհաննու Կարապետի վանքը Յորդանանու ձորին.	413 – 422
ԼԷ.	Ս. Զաքարիայի վանքը Նազարէթի մօտ.	423 – 431
ԼԸ.	Ս. Յովհաննու Առաջամարտչին եկեղեցին Ս. Յարութեան գաւիթը.	431 – 436
ԼԹ.	Մալթի հայ գաղութը եւ ամէնէ եկեղեցին.	436 – 439
Մ.	Կեսարիոյ (Պաղեստինեան) հայ գաղութը եւ ամէնէ եկեղեցին.	440 – 452



ՄԿՐՏԻՉ ԵՊԱՍ. ԱՂԱԻՆՈՒՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՎԱՆՔԵՐ
ԵՒ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐ
ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ

Ա

ՏԵԱՌՆԵՂԲՕՐ ՀԱՅ ՎԱՆՔԸ ՅՈՎՍԱՓԱՏԻ ՁՈՐԻՆ ՄԷՋ

«Գլխադիր» եւ «Տեառնեղբայր» կրկին Ս. Յակոբներու յիշատակին վաղնջական ժամանակներէն կառուցուած է Սիոնի լեռան վրայ հռչակաւոր Հայոց վանքը, որ ունեցած է իր յաւուրս միաբանութիւնը, եւ ունի իր ուրոյն պատմութիւնը։ Սեանդութիւն, յիշատակարաններ, արքունի հրովարտակներ, արձանագրութիւններ եւ պաշտօնական գրութեանց ամբողջութիւն մը, անհերքելի կերպով կ'ապացուցանեն նոյն մենաստանին հայկական սեպհականութիւնը։ Երուսաղէմի Հայ միաբանութիւնը Սիոնի բարձունքին վրայ կառուցած այդ պանծալի հաստատութենէն զատ, ունեցած է ուրիշ վանք մըն ալ, յանուն Ս. Տեառնեղբօր, Յովսափատի Ձորին մէջ։ Անոր հետքը թէեւ չկայ հիմակ, բայց պատմական փաստեր եւ յիշատակարաններ կը վկայեն թէ Նախնի դարերու հայ բարեպաշտութիւնը չէ գոհացած Սիոնի Ս. Տեառնեղբօր միակ վկայարանով, այլ անոր նահատակութեան տեղւոյն վրայ կամ մօտը ջերմեռանդօրէն փափաքած է, չատ կանուխէն, հաստատել ուրիշ վանք մըն ալ «Ս. Տեառնեղբայր» անունով։

Եկեղեցական պատմութիւնէն գիտենք թէ Տեառնեղբայրը երկար ժամանակ Երուսաղէմի եկեղեցւոյն եպիսկոպոսապետն էր, ու անոր Աթոռը, իբր խորհրդանշան քրիստոնէական նուիրա-

պետութեան, մեր Ս. Յակոբայ եկեղեցւոյն մէջ կը մնար. փիտենք նաեւ թէ Տեառնեղբայրը նահատակուած է Տաճարին մօտ տեղ մը. վասն զի այն ժամանակի քրիստոնէական կրօնի ընդդիմադիրները ուզեցին փակել բերանը Քրիստոսի այդ անձնուէր Առաքեալին, բայց ան իր ձայնը լսելի կ'ընէր Տաճարին աշտարակէն, և ճշմարտութեան հակառակորդները կատաղութեան նոպայէ մը բռնուած՝ աշտարակէն վար գլորեցին Տեառնեղբայրը. և երբ ան կ'աղօթէր իր թշնամեաց համար, անոնցմէ մին տուփանով զարկաւ Սուրբի գլխին, ու ան նահատակուեցաւ ի սէր Քրիստոսի: Եւսեբիոս՝ Հիգեսիպպոսէն եւ Կղեմէսէն առնելով, մանրամասն կը պատմէ անոր նահատակութեան պարագաները ու կը գրէ. «այսպէս վկայեաց նա, եւ թաղեցին զնա անդէն ի տեղւոյն. եւ մինչեւ ցայսօր ժամանակի չիրիմ նորա կայ առ կողմն տաճարին» (Եկեղես. պատմ. Դպր. Բ., էջ 125–130): Այս վկայութիւնը բացորոշ կերպով կը հաստատէ ակրող աւանդութիւնը Ս. Տեառնեղբօր գերեզմանին նկատմամբ: Դ. դարուն, կիւրեղ երուսաղէմացիին օրով, Տեառնեղբօր նշխարները գտնուած և Սիոն փոխադրուած են, մեր այժմու Ս. Յակոբայ եկեղեցւոյն տեղը, ինչպէս կը վկայեն աւանդութիւնք և վկայաբանութիւնք: Բայց ամէնէն որոշ վկայութիւնը կու տայ Շարիթը քաղաքին (Փարիզի մօտ) մատենադարանին մէջ գտնուած եւ յունարէնէ լատիներէն թարգմանուած Ժ. դարու ձեռագիր մը, զոր Պոլլանտեանք հրատարակած են 1889ին (Revue Biblique, 1919. էջ 480–499): Այդ ձեռագրին համեմատ Դ. դարուն Ս. Տեառնեղբօր գերեզմանին վրայ կը շինուի վկայարան մը և նշխարներէն մաս մը կը փոխադրուի այդ նորակերտ վկայարանը:

Նոյն թուականին, յայտնի է թէ քրիստոնէական եկեղեցւոյ մէջ տակաւին մուտ գործած չէր խարականութեան ոգին. բոլոր քրիստոնեանները, «մի հօտ եւ մի հովիւ», առ հասարակ չերմեռանդութեամբ կը յաճախէին անօրինական Ս. Տեղեր. պաշտամունքներ կը կատարէին միաբանաբար: Որոշ թուականէ մը յետոյ է որ՝ Երուսաղէմի մէջ, իւրաքանչիւր ժողովուրդ կ'ունենայ իրեն սեպհական ուխտատեղիները և վանքերը: Մեր ձեռքը գտնուած յիշատակարաններ կը վկայեն թէ Է. դարուն, Յովսափատ Ս. Տեառնեղբօր վանքը Հայոց սեպհականութիւնն էր: Անաստաս հայ վարդապետի կազմած ցանկին մէջ, գուցէ պատճառաբանութիւնները առարկելի մասեր մատնանշեն, սակայն ան իր հիմքին մէջ իրականութենէ գուրս չի կրնար նկատուիլ: Երուսաղէմի եւ շրջակայից մէջ երեւան եկած հայկական արձանագրութիւններ, մոզայիքներ և աւերեալ հայ վանքերու հատակագծոր յիշատակարանները յոյս կը ներշնչեն թէ օր մը թերեւս կարելի ըլլայ վերականգնել Անաստաս վրդ.ի վանօրէից ցուցակը՝ իր գլխաւոր պիծերուն մէջ(*):

Դիտուածները կեդրոնի Զորին մէջ «Գերեզման Ս. Յակոբայ» անուամբ ճանչցուած յիշատակարանի մասին տարբեր բացատրութիւններ կու տան: Ան բոլորովին տարբեր է Յովսափատի Ս. Տեառնեղբօր վկայարանէն: Նոյն յիշատակարանին ճակատը փորուած է ժայռին մէջ. ծոփորի մը (frise) հետ կառուցուած է չորս փոքր սիւներով, եւ ունի անդաստակ մը. որ կը տանի դէպի գերեզմանական չորս սենեակներ՝ որոնց իւրաքանչիւրը կը բովանդակէ բազմաթիւ խուցեր: Այս գերեզմանին Ս. Յակոբ անունը տրուած է աւանդութեան մը համաձայն, որպէս թէ Առաքեալը հոն ապաստանած էր Քրիստոսի չարչարանաց ժամանակ և հոն թաղուած էր իր մարտիրոսութենէ վերջ: Յիշատակարանը ծածկուած է երրայական արձանագրութիւններով: Վերջնոցս մէջ գտնուած աւելի հին արձանագրութիւն մը քովթարի մը (architrave) վրայ քանդակուած՝ ցոյց կու տայ թէ այս գերեզմանը Պէնի-Հէզիրներու (Beni-Hésir) քահանայապետական ընտանիքի մը ուխտը անդամոց կը վերաբերի: Իսլամները այս գերեզմանը կը կոչեն Տիվանը–Ֆարաւուն (Տե՛ս Dict. de la Bible, P. Vigouroux, բառն Tombeau):

Յովսափատի Ս. Տեառնեղբայրը հետեւեալ կերպով կը յիշուի նոյն Անաստաս վարդապետի ցուցակին մէջ. «Սահառուննաց վանքըն, զոր Ֆարաւվաւիճ կոչեն, որ Տեառնեղբօրն է, զոր ընկալաւ վէմն»: Որո՞նք են Սահառուննիք.— Սահառուննիք կը նկատուին հայ նախարարութիւններէն մին, որուն ծագումը չատ յայտնի չէ:

Ան Ս. Սահակի գաւնամակին մէջ Իե. կարգն ունի: Զորրորդ

(*) Անաստաս պատմական անձ մըն է, որ երուսաղէմ գալով կը ցուցակագրէ այն հայ վանքերը, որ գոյութիւն ունէին նոյն դարուն, հայ իշխանի մը խնդրանաց համաձայն:

դարէն սկսեալ պատմական դեր մը ունեցած են Սահառունիք։ Իրենց բնակութիւնը կը թուի ըլլալ Շիրակի մէջ։ Մուշկ, Բաս և Կարհի Սահառունիք կը յիշատակուին պատմութեան մէջ։ Իսկ Ե. դարուն, Դաւիթ Սահառունին չինած է Մրենի հոյակապ եկեղեցին Շիրակի մէջ. և ան յիշատակներ ունեցած է շատ հեռի տեղեր՝ որ չեն յիշատակուիր, նոյն իսկ Աղթամարի մէջ, ըստ Ալիշանի (Շիրակ, էջ 140)։ Սահառունեաց մասին կարելի է փոքր ի շատէ ծանօթութիւններ քաղել Ալիշանի Շիրակէն (էջ 141–142)։ Անհաւանական չեմ նկատեր Դաւիթ Սահառունիի վերագրել Ցովսափատի Ս. Տեառնեղբօր վանքի վերաշինութիւնը, քանի որ ան կործանուած կրնար ըլլալ 614ի Պարսիկ արշաւանքներու ընթացքին։ Թ — ԺԲ։ դարուն կը յիշուի նոյն վանքը նոյն իսկ օտարներէն։ Արաբ մատենագիր մը, Մուգատտաֆի 985ին կը գրէ թէ՝ Ցովսափատը ծաղկեալ ուխտատեղի մըն էր, պարտէզներով, այգիներով ու զարդարուած եկեղեցիներով, և կը յարէ թէ ճգնաւորուն վանականներ, ինչպէս Հայեր, Յոյներ եւ Ասորիներ խուցերու մէջ կը բնակէին եւ կը չէնցնէին Սելովամի արաբ գիւղակին ստորոտը (Revue Biblique, 1919. էջ 493–495)։ Այս վանքը ԺԲ. դարուն, Սալահէտտինի և անոր յաջորդներուն արշաւանքներուն հետևանքով որչափ ալ կործանուած նկատենք, բայց քանի որ ունինք յիշատակարաններ, որ բացայայտօրէն կը յիշեն այս վանքին գոյութիւնը մինչև ԺԸ. դար, կը տարուինք մտածել թէ Հայ միաբանութիւնը կարողացած է նոյն արշաւանքներէն վերջ վերաշինել Ս. Տեառնեղբօր վանքը։ Օտարներէն Ալլատիոս, Վատիկանի մատենադարանապետը (✻ 1669), իր Երուսաղէմի պատմութեան գրքին մէջ («Վարք Սրբոց» Հ. Մկրտիչ Ասգերեանի, Հտ. 10. էջ 257) կը գրէ. «Ոչ կարի հեռի է ի Զատրոյն Ցովսափատայ վանք Սրբոյն Յակոբայ աստուածեղբօր՝ բնակեալն ի Հայոց»։ Մեր Ս. Յակոբայ մատենադարանին (Թ. 1130) անթուական ձեռագիրը «Աղօթագրքի» մը մէջ, Մարկոս գրիչ հայ ուխտատեղիներու ընդօրինակեալ ցուցակի մը մէջ, Ցովսափատի վանքերու շարքին կը յիշէ Ս. Տեառնեղբօր վանքը, ըսելով. «Եւ եկեղեցի մի Յակոբայ առաքելոյն, որ եղեւ քարկոծեալ ի տաճարն». բայց ամէնէն բացայայտ վկայութիւնը կը գտնենք Ղալաթիոյ (Կ. Պոլիս) Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ գրչագիր «Գանձարան»ի մը յիշատակարանին մէջ, զոր ընդօրինակած

է Ղ. վրդ. Փիլոզալէմեան — «Եւ արդ գրեցաւ սա ի սուրբ քաղաքիս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Ցարութեանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և Գողգոթայի և Սուրբ Յակոբայ, և Ցովհաննու Առաքելոյն Քրիստոսի, եւ Սուրբ Սարգսի զօրավարին, եւ Սուրբ Առաքելոցս եւ Հրեշտակապետացս, եւ Սուրբ Փրկչին, եւ Սուրբ Ծննդեանն, եւ Սուրբ Աստուածածնին, եւ Սուրբ Համբարձմանն եւ Սուրբ Տեառնեղբօր, եւ Սուրբ Լեռնակոզմանն, եւ այլ ամենայն Տնօրինականացս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Ի կաթուղիկոսութեան Հայոց Տեառն Կարապետի, եւ յեպիսկոպոսութեան սուրբ քաղաքիս Երուսաղէմայ Տէր Մեսրոպայ եւ Տէր Աբրահամին, և այլ ամենայն միաբանացս Սուրբ Յակոբայ ամէն...։ Ցիշեցէք... զանարհեաս գրիչս զՆերսէս էրէցս, եւ զծնողսն իմ... Ցետկար եւ զմարթայ...» (Նօտարք Հայոց, էջ 18–19)։ Ինչպէս կը տեսնուի, յիշատակարանիս գրիչը՝ Ներսէս էրէց իր «Գանձարանին» ընդօրինակութիւնը կը կատարէ Երուսաղէմի մէջ և կը յիշատակէ իր ժամանակին ազգային ուխտատեղիները, և առանց թուականի կը յիշէ իբրև ժամանակակից Կարապետ կաթողիկոսը եւ Երուսաղէմի հայ եպիսկոպոսները։ Կարապետը՝ Կիլիկիոյ կաթողիկոսն է (1448–1477), որով նոյն ձեռագիրը ընդօրինակուած կ'ըլլայ 1448 էն մինչև 1477 երկարող տարիներուն մէջ, և Ցովսափատի Ս. Տեառնեղբօր վանքն ալ իր գոյութիւնը պահած կ'ըլլայ մինչև այդ թուականը։

Ուշադրութեամբ կարդալով վերի յիշատակարանի մէջ յիշուած ուխտատեղիները, կը դիտենք որ նախ եւ առաջ կարգաւ նշանակուած են քաղաքին մէջ գտնուածները, և ապա քաղաքէն դուրս գտնուած «Ս. Փրկչի, Ս. Ծննդեան, Ս. Աստուածածնին, Ս. Համբարձման և Ս. Տեառնեղբօր և Ս. Լեռնակոզման» վանքերը. արդէն իր կարգին յիշատակուած ըլլալով Սիոնի մեր Ս. Յակոբայ վանքը Լեռնակոզման վանքէն յառաջ. առանձինն յիշատակուած Ս. Տեառնեղբօր վանքը, պէտք է ընդունիլ թէ՝ Քարուվանքի և Ցովսափատու Ս. Յակոբայ վանքը, որ այժմ աւերակ է։

Պատմական այս յիշատակներուն անդրադարձումը յիշել կու տայ մեզ մեր նախնեաց բարեպաշտական ոգին, որ գիտցած է Ս. Տեղեաց յարգը ճանչնալ եւ անոր բազմապիսի չնորհաց վայելքը ըմբոշխնել. նոյն ոգին կրած է նախ մեր Սարգիս Շնոր-

հալի վարդապետը, որ Յակոբայ Սառաքելոյն կաթողիկեայց Թըղթին մեկնութեան գրքին վերջին յորդորակին մէջ, հետեւեալ կերպով կ'աբտայայտուի. «Ես ես սակս այնորիկ գերուսաղէմ սիրեմ եւ գովեմ եւ երանեմ, զի այսպիսի զանազանութիւնք չնորհացն Աստուծոյ եղեն անդ»։

Երանի՛ անոր որ կը զգայ ու կը գնահատէ Ս. Տեղեաց մէջ Աստուծոյ չնորհաց զանազանութիւնները և կ'արժանաւորի անոնց։

Բ

ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՎՐԱՅ

Նոյն Վաւիլին Հասատատութիւնը

1. Մեր այս յօդուածը պիտի ունենայ երեք հատուած. Ա.— Մանուշեան վանքին և եկեղեցւոյն հաստատութիւնը. Բ.— Անոր հայկական վերաշինութիւնը, ձեռագիր «ճառընտրի» մը համաձայն, Գ.— Նոյն վանքին չիշատակութիւնը Սաղիմական ծիսարանաց մէջ։ Երուսաղէմի մէջ կամ դուրսը գտնուած բոլոր եկեղեցիները և ուխտատեղիները կառուցուած են ի պատիւ Քրիստոսի մնօրինական գործերուն, ինչպէս նաև Ս. կուսին եւ կամ Ս. Խաչի չիշատակին. յետոյ հիմնուած են տաճարներ՝ սուրբերու անունով։ Սրբավայրերն և տօներն նախապէս միայն Երուսաղէմի յատուկ էին, տեղական բնոյթ ունէին. համանման հաստատութիւններ և տօնակատարութիւններ չորրորդ դարուն միայն տարածուեցան քրիստոնեայ աշխարհին մէջ։ Ի հնումն ինչո՞ւ չինուած էր Բեթղեհէմի ճանապարհին վրայ գտնուած վանքը։— Երուսաղէմէն Բեթղեհէմ վեց հռոմէական մղոն կը հաշուի հին ճանապարհով. վերոյիշեալ Ս. Աստուածածնի վանքը կառուցուած էր Բեթղեհէմի ճանապարհին վրայ, Երուսաղէմէն

երեք մղոն հեռաւորութեամբ, ճիշդ կէս ճանապարհին, Հռաքէլի գերեզմանին և Յունաց Ս. Եղիա վանքին խիստ մօտիկ։ Քրիստոնեայ բարեպաշտութիւնը՝ եկեղեցւոյ վաւերական Աւետարաններէն զատ, կարգ մը անվաւեր գրքեր ևս օգտագործած և իր ներշնչարանը ըրած է, մասնաւորապէս Յակոբոս Տեառնեղբօր «Նախաւետարանը» կամ «Քրիստոսի Մանկութեան Աւետարանը», որ հայերէն ալ թարգմանուած և տպագրուած է, ու ներբանը», որ հայերէն ալ թարգմանուած և տպագրուած է, ու ներչնչումներ տուած ջերմեռանդ հաւատացեալներու՝ որ կարողացեր են անոնց չինիչ պատմուածքներու ազդեցութեամբն ստեղծելու քրիստոնէական բեղուն արուեստ մը։ Բեթղեհէմի կէս ճանապարհին վրայ կառուցուած այդ վանքը Քրիստոսի Մանկութեան Աւետարանէն ծագում առած է։ Տիրամայր Ս. Կոյսը՝ Յովսէփին և այլոց հետ, Քրիստոսի ծնունդէն առաջ, երուսաղէմէն կը ճամբորդէ դէպի Բեթղեհէմ։ Երեք մղոն ճամբորդելէ յետոյ, ան ջրհորի մը քով կը հանգչի։ Արաբներ այդ տեղւոյն կ'ըսեն Գաթիզա, որ կը նչանակէ տեղի հանգստեան։ Ս. Կոյսը, նոյն միջոցին, դարձեալ ըստ Մանկութեան Աւետարանին, կը յարէ թէ՝ «Աչքերուս երկու ժողովուրդներ կ'երևան, մին՝ հեկեկագին, կ'արտասուէ և կը հեծէ, միւսն՝ մեծապէս կը խայտայ և կը հրճուի»։ Ահա՛, ըստ աւանդութեան, Ս. Կուսին այդ հանդստեան տեղւոյն վրայ է որ քրիստոնէական ջերմեռանդութիւնը կառուցած է վանք ու եկեղեցի, ի չիշատակ և ի պատիւ Ս. Կուսին։ Մետափրաստ՝ Յոյն Սրբագիրը (Ժ. դար) կը չիշատակէ զանոնք և կ'ըսէ թէ անոնք կառուցուած էին Ե. դարուն, «Բեթղեհէմի ճանապարհին վրայ ի չիշատակ Տիրամօր», և այն վանքին տեսուչն էր, 460ին, Ս. Թէոդոս՝ նչանաւոր մենակեացը, Բեթղեհէմի տրեւելեան կողմը գտնուած իր սեպհական վանուց չինութենէն առաջ (Migne, P. G. Հատ. 119, էջ, 476)։ 570ին Իտալացի Անտոնինոս ուղևորը կանգուն տեսած է նոյն վանքը իր բոլոր չէնքերով, որ հաւանաբար կործանուեցաւ պարսկական յարձակումներէն (614), և կամ Յաթիմեան էլ Հաքէմի (996–1021) հրամանաց հետևանքով։ 1106ին, ռուս վանական հայր Դանիէլ կ'այցելէ այս ուխտատեղին և իր «Ուղեգրութեան» մէջ կը չիշէ թէ եկեղեցի և վանք մը չինուած էր այս տեղ ի պատիւ Ս. Կուսին, բայց այժմ, կը յարէ, անոնք աւերակ վիճակ մը ունին. այս է պատճառը որ ան չի չիշատակուիր մեր

Ս. Աթոռոյ մատենադարանին Մարկոս գրչի ընդօրինակած ձեռագրին (Թ. 1190) Ս. Տեղեաց հին ցուցակին մէջ, որ հաւանաբար Խաչակրաց ժամանակ լատիններէնէ թարգմանուած է: Ուրիչ տղբիւրէ ալ կը տեղեկանանք թէ Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին տիրացած էր նոյն Գաթիզմայի (Ս. Կուսի այս վանքին) հողերուն և այգիներուն, ու կը վայելէր անոնց արդիւնքը. Bethléem, le Sanctuaire de la Nativité, էջ, 141): Այս վկայութեանց համաձայն, նոյն վանքը գոյութենէ դադրած էր ԺԲ. դարուն:

Նոյն Վանքին հայկական վերահաստատութիւնը

2. Վերև յիշեցինք արդէն թէ Բեթղեհէմի ճանապարհին վրայ գտնուած Ս. Աստուածածնի վանքին տեսուչն էր Ս. Թէոդոս, որ ժամանակ մը նոյն պաշտօնը վարելէ վերջ, մնացած էր Բեթղեհէմի արևելեան կողմը և հիմնած էր Տիր Տուսի կոչուած վանքը. աւանդութեան մը նայելով, (ըստ Մետափրաստի, (Migne, P. G. Հատ. 114, էջ, 478), երեք մոգերը գիշեր մը այս տեղ հանգչած են, երբ հրեշտակէն հրաման առած են վերադառնալ իրենց երկիրը, առանց Երուսաղէմ հանդիպելու: Ս. Թէոդոսի կենսագրին նայելով՝ յիշեալին վանքը ունէր չորս եկեղեցիներ, Հայոց, Սրբոց, Պարսից և սլաւոնաց վանականաց համար: Նոյն դարուն, վանականներ կային՝ որ անխափ իրենց վանքերուն մէջ կ'ընդունէին ամէն ազգէ վանականներ, որոնք իրենց սեպհական լեզուաւ ուրոյն ուրոյն կը կատարէին եկեղեցական պաշտամունքը. այսպէս էր նաև Ս. Թէոդոսի վանքին մէջ. Հայք ալ իրենց մայրենի լեզուով հո՛ն կը կատարէին եկեղեցական արարողութիւնները: Ս. Թէոդոս տարակոյս չկայ թէ նոյն կանոնը ընդգրկած էր Գաթիզմայի իր տեսչութեան օրով ալ: Ուստի Երուսաղէմի Հայ միաբանութենէն ոմանք, հինաւուրց իրաւունքի մը վրայ հիմնուելով, ջերմեռանդութեամբ պիտի փափաքէին վերահաստատել Գաթիզմայի Ս. Աստուածածնի կործանուած վանքը, չէնցընելու զայն և օժտելու ուրոյն միաբանութեամբ մը. այս մասին ունինք «ճառընտիրի» մը խիստ չահեկան յիշատակարանը, որ բացայայտօրէն կ'ապացուցանէ այն վանքին հայկական վերաշինութիւնը: 1215ին, մեր Ս. Յակոբայ վանքին մէջ ընդօրինակուած է նոյն ճառընտիրը, որ կը գտնուի այժմ Վենետիկի Մխիթարեանց մատենադարանին մէջ (Հին. Թ. 1553), և ցոյց կուտայ մեզի նոյն Գաթիզմայի վանքին հայկական վերահաստատութեան պատմական յիշատակագրութիւններն, որոնց կարևորները նոյնութեամբ կ'ընդօրինակենք հոս. «Յամի վեցհարիւրորդի վաթսներորդի եւ ի չորրորդում ամի շրջաբերութեան Հայ Տուարի (= 1215). ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի, ի վերջացեալ և ի նուազեալ դառն ժամանակի, յաւուրս աստուածապատիւ և հոգեւոր տեառն Յովհաննիսի Հայոց Կաթողիկոսի, յաշխարհիս Պաղեստինի՝ ի մէջ գերութեանս Երուսաղէմի, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ Առաքելական Աթոռոյս՝ գրեցաւ գիրս գերահրաշ . . . : Արդ՝ ցանկացող եղեալ այսմ գեղեցիկ աստուածային տաճիս, ձգնաւոր ոմն՝ անուն Յովհաննիս, հանդերձ հերբ իւրով կրաւնաւոր կարգաւ, եւ քարի անուն ասացեալ յանձինս՝ իւրեանց ունեցոյ զիանս արտաքս Երուսաղէմի, հանդիպ Սուրբ Սիոնի, ի վերս ձանապարհին Բեթղեհեմի, որ է յետ հանգստարան Սուրբ Աստուածածնին. մինչ գայր յընծայումն ի տաճարն, աստուածացեալ մանկամբն Յիսուսիս Քրիստոսիս. վասն այսորիկ քարի անուն եւ ընտրեալ խահանայն Գէորգ կանկնեաց զտաճարն սուրբ եւ անուանեաց յանուն Սուրբ Աստուածածնի, յիշատակ նորա ապրհնութեամբ. նմանապէս եւ եղբարուորդի իւր Յովհաննիս զոր վերագոյն յիշեցաք՝ ընկալաւ զայդ բարեաց յիշատակ և բարեխաւս առ Աստուած՝ իւրեանց և ծնողաց իւրեանց և աւանդեցին ի Սուրբ Աստուածածնին գանձ անկողոպտելի, ի վայելումն շնորհաւորող որդոյ իւրեանց Գրիգորոյ սարկաւագի, եւ այլ կրաւնաւորաց եւ խահանայից:

Արդ աղաչեմք զամենեսեան՝ որք աւկտիք ի սմանէ ընթերցմամբ կամ գաղափար առնելով, որտի մտաւք յիշատակեսջիք զստացողք սորա զՅովհաննիս և զքեռ իւր զՏիկնիերես, և զժառանգաւոր նոցունց Գրիգոր սարկաւագ. և զԳէորգ զգնացեալն առ Քրիստոս, և զվերջին աշխատողս և զգծողս և զգրագրողս զՅովհաննէս զվերջացեալս յամենայն բարեաց, և խոչորութեանս (գրոյս) անմեղադիր լերուք. և որք աւգնական եղեն ի գին սորին ի կանանց կամ յարանց կամ, ի քահանայից, Քրիստոս Աստուած միոյն ո. ապատ . . .» (Ճոպեալն կը պակէ): Յիշատակարանին մէջ յիշատակուած կաթողիկոսն է Մեծաբարոյ Յովհաննէս (1203–1220):

Այս տողերէն կը հասկցուի թէ՝ 1215ին, Աբաբացիք կը տիրէին Պաղեստինի, նոյն վանքը կը վերաչինուի ի ձեռն Գէորգ քահանայի, որ յիշատակարանս գրուած ժամանակ արդէն վախճանած է. նոյնին եղբօրորդին Յովհաննէս ձգնաւոր ստացողը կ'ըլլայ սոյն ձեռագիրին, ի պէտս իր որդւոյն Գրիգոր սարկաւագին և նոյն վանքին միաբանաց: Ձեռագիրին գրիչն է ուրիշ Յովհաննէս մը, անտարակոյս կրօնաւոր, որ Ս. Յակոբայ վանքին մէջ կ'ընդօրինակէ այս ձեռագիրը և կը յանձնէ ստացողին, իբր «գանձ անկողոպտելի» պահելու համար Բեթղեհէմի ճանապարհին վրայ գտնուած Ս. Աստուածածնի նորակերտ վանքին մէջ: Անյայտ կը մնայ մեզ թէ՝ այս հայկական վերաչինութենէն քանի՞ տարի վերջ կործանուած է նոյն վանքը, և ի՞նչ պարագաներու տակ: Հայ եպիսկոպոս մը, Նիկողայոս Ակիւրմանցի անուամբ, 1483ին, ուխտաւորութեամբ այցելութեան առթիւ, կազմած է ուխտատեղեաց ցուցակ մը «Տնօրինական Ս. Տեղիք Երուսաղէմի» խորագրով, որուն մէջ Գաթիլմայի այս ուխտատեղին «և ջրհորն որ աստղն երևի» բառերով միայն կը յիշատակէ, որ է ըսել թէ՝ նոյն թուականին արդէն վերստին քանդուած էր վանքը և միայն կը մնար Մոգերուն կամ աստղին աւանդական ջրհորը. իսկ Ժե. դարուն, Բեթղեհէմի ճամբուն վրայ, Ս. Կուսի հանգստեան տեղւոյն կենդանի յիշատակը տակաւին կը մնար, երբ ուղևոր մը՝ Ֆելիքս Ֆապրի կ'այցելէր նոյն տեղը, և անձամբ կը տեսներ Հայոց նոյն վանքին փլած պատերուն աւերակները (Bethléem, le Sanctuaire de la Nativité, էջ, 3):

Վանքին Յիշատակութիւնը ըստ Ծխատոմարաց

3. Փարիզի Ազգ. Մատենադարանի հայերէն ձեռագրաց մէջ կայ «ճաշոց» կամ «տօնական» մը, որուն անգլ. թարգմանութիւնը կատարած է Բրօֆ. Կոնիբեր (Ritual Armenorum, էջ 516–527), սոյն ձեռագիրը, ըստ Հ. Պարոնեանի, Ը–Թ դարու հնութիւն ունի, և կը պարունակէ Սաղիմական տօնակարգը, որ կը կատարուէր Ս. Տեղեաց մէջ. յիշատակարան չունի. Կոնիբերի՝ անո՛ր մասին տուած տեղեկութիւնները խիստ չահեկան են, և կը

դիտուի որ Ս. Տեղեաց պաշտամունքն և արարողութիւնները ճշդօրէն կը յարմարին Դ. դարու ուխտաւորուհի Էթէրիայի Ս. Տեղեաց «Ուղեգրութեան» բովանդակութեան հետ (Հրատ. 1888ին, այլևայլ լեզուաց թարգմանութեամբ): Փարիզի Սաղիմեան ճաշոցը Ս. Աստուածածնի Հայոց վանքի նկատմամբ ունի հետևեալ ծանօթութիւնը (Rit. Arm. էջ 526), զոր կը թարգմանեմ բառ առ բառ. «Օգստ. 15. Տօն Մարիամու Աստուածածնին: Ցերբորդում մղոնի Բեթղեհէմի. այս կանոն կատարի. Սաղմ. ՃԼԲ. 8. Եսայի. Լ. 10–15. Գաղ. Գ. 29. Դ. 7. Սաղմ. ՃԺ. Ղուկ. Բ. 1–7»: Ինչպէս կանխաւ գրեցինք, Երուսաղէմէն մինչև Բեթղեհէմ վեց հռովմէական մղոն էր. երրորդ մղոնին, Բեթղեհէմի ճամբուն վրայ չինուած էր Հայոց Ս. Աստուածածնի վանքը, ուր, հին դարերէ սկսեալ, համաձայն այս ձեռագիր ճաշոցին, Օգստ. 15ին կը կատարուէր Ս. Աստուածածնի տօնը: Երուսաղէմի մէջ կանոն էր, և է ցայժմ, որ մէն մի տօն կը կատարուէր իր պատկանեալ եկեղեցւոյն մէջ: Ճաշոցին այս ծանօթութիւնը, սակայն, մեր առջև դժուարութիւն մը կը հանէ. քանի որ հին դարերէ սկսեալ, Օգստ. 15ին կը կատարուէր Ս. Աստուածածնի տօնը Գեթսեմանիի Տիրամօր տաճարին մէջ, ուր կար դամբարանը, և պատմականօրէն և աւանդութեամբ կը հաստատուի այս պարագան. Գեթսեմանիի Ս. Աստուածածին եկեղեցին Դ. դարուն գոյութիւն ունէր արդէն, ինչպէս կը յիշէ Էթէրիա ուխտաւորուհին իր «Ուղեգրութեան» մէջ (Թարգմ. էջ 71), եւ կ'անուանէ զայն «գեղազարդ եկեղեցի». և Օգոստ. 15ի Ս. Աստուածածնի Տօնը հո՛ն կը կատարուէր, որուն համար ունինք անհերքելի վկայութիւններ. Մօրիկ կայսեր (582–602) հրամանագիրը այս տօնին հաստատման մասին՝ պարզապէս Ս. Աստուածածնի տօնին՝ կայսրութեան բոլոր սահմաններուն մէջ տարածելու ձեռնարկ մ'էր, վասն զի նոյն տօնն արդէն նախապէս հաստատուած էր Ս. Երկրին մէջ: Ինչպէս այս պատմական տեղեկութիւնները, նոյնպէս մինչև ցայսօր Ս. Աստուածածնի տօնին առթիւ տեղի ունեցած տեղական սովորութիւնները կը հակասեն վերոգրեալ ձեռագրին ծանօթագրութեան: Բարեբախտաբար. «Երուսաղեմայ Տօնակարգ» խորագրով, ԺԱ–ԺԲ դարու վրացական ձեռագիրի մը հրատարակութիւնը, 1923ին, Գերմանի գիտնական Բրօֆ. Goussenի մէջոցաւ, այդ դժուարութիւնը գլու-

խովին կը հարթէ. նոյն ձեռագիրը գտնուած է Փարիզի Ազգ. Մատենադարանին մէջ (Թ. 3). Goussen թարգմանած է զայն և ծանօթագրելով կազմած է Երուսաղէմի ուխտատեղիներուն ցուցակը, օգտուելով նաև վրացերէն երկու ձեռագիր տաղարաններէն, որոց մին գտնուած է Երուսաղէմի երբեմն Վրաց, այժմ Յունաց Ս. Խաչ վանքին մէջ, իսկ միւսն ալ Սատպերտի եկեղեցւոյն մատենադարանը. (Revue Biblique, 1924, էջ 611–623): Արդ՝ Գերման գլխականին հրատարակած վրացական ցուցակին դիմելով՝ կը տեսնենք որ Գարիզայի (Ս. Կուսի հանգստեան տեղը), որ է Հայոց Ս. Աստուածածնի վանքը, ունի հետևեալ ծանօթութիւնը. Օգոստ. 13ին, «ի վերայ ճանապարհին Բեթղեհէմի, ի Գաթիզմա, Յերրորդում մղոնի, ի գլուխն Պէյթ Էպրի, նաւակատիք Ս. Աստուածածնին»: Ահա այս կերպով կը ճշդուի թէ՝ Օգոստ. 13ին, նոյն վանքին նաւակատիքը տեղի կ'ունենար, ըստ վերոյիշեալ կանոնի. ոչ թէ Օգոստ. 15ի Աստուածածնի Տօնին, որ յատուկ էր միայն Գեթսեմանիի տաճարին: Վանքին կ՝նուած գլուխը Պէյթ Էպրի, արդի Պէյթ Պահիր գլուխին մէկ սխալ ուղղագրութիւնն է: Պէյթ Պահիր, ուր չինուած էր Ս. Աստուածածնի վանքը, կը գտնուէր Հռաքելի գերեզմանին մօտերը. և նոյն գլուխի սահմանին մէջ կը համարուին՝ մօտակայ Պէյթ Ճալա գլուխն և Հայոց Ս. Յակոբայ վանքին Պարոնիար կոչուած ձիթաստանն ու այգեստանը և հողերը: Առաջնոյն Յունաց Ս. Աստուածածնին եկեղեցւոյ մէջ, մինչև հիմակ ցոյց կը տրուի Ս. Կուսին նստած քարէ աւանդական աթոռը. իսկ երկրորդին ընդհանուր տարածութեան վրայ տեղ տեղ երևան եկած են քրիստոնէական վիմափոր գերեզմաններ և հին ջրհորներ, տապանաքարեր որոնցմէ ոմանց վրայ գտնուած են նշանագրեր (Palestine Exploration Fund, 1902, էջ 237–240). իսկ տեղւոյն սենեակներու նորոգութեանց ժամանակ, երևան հանուած են հայկական տառերով քանդակուած քարերու բեկորներ (Աստուածատուր եպս. Տ. Յովհաննէսեանի, Ժուգրկ. Պտմ. Երուսղ., Հտր. Ա. էջ 298).

Գ

ՍԻՈՆԻ ՎՐԱՅ ՀԱՅՈՑ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ

1. Ս. Ստեփանոսի նախարաց գիւտը, փոխադրութիւնը, եւ նորագիւս տապանը

Որպէսզի կարողանանք ի յայտ բերել Սիոնի Ս. Ստեփանոս վանքին ծագումը, հարկ է ամփոփել Ս. Ստեփանոսի նշխարաց գիւտին,ատոր փոխադրութեան և նորագիւտ տապանին պատմութիւնները: Նշխարաց գիւտը տեղի ունեցաւ 415ին, և բոլոր ճառընտիրները կը պատմեն զայն: Կափարգամաղայի (գիւղ Գամալիէլի) Ղուկիանոս քահանան, նոյն գիւղի Գաբատաղեայ ագարակին մէջ, կը գտնէ Ս. Ստեփանոսի նշխարները, Նիկոդիմոսի, Գամալիէլի և անոր որդւոյն Աբիբայի նշխարաց հետ: Այս գիւտը Ղուկիանոս քահանայ ոչ միայն Երուսաղէմի Յովհաննէս հայրապետին կը զեկուցանէ, այլ նաև նամակով կը հաղորդէ Աւգեայի և Աւգոմուտի քրիստոնէից, որք ցնծութեամբ կ'ընդունին այս աւետիսը: Յովհաննէս պատրիարք որ, նոյն միջոցին, Դիոսպոլիս (Լիւդ) կը գտնուէր, Պեզագոսի դէմ ժողով մը գումարելու գործով, այս գիւտը ստուգելու համար, երկու եպիսկոպոսներով կ'երթայ Կափարգամաղա, և հանդիսաւորութեամբ նշխարաց մեծ մասը կը փոխադրէ Սիոն, Վերնատան եկեղեցին, ուր Ս. Ստեփանոս սարկաւագ ձեռնադրուած էր, և այս առթիւ նորակերտ կը կառուցանէ Սիոնի Մայր եկեղեցին: Կափարգամաղան ագարակն էր օրէնուսոյց Գամալիէլին: Որոշ վկայութիւն չունինք թէ ո՛ւր թաղեցին Ս. Ստեփանոսի մարմինը. միայն Գործք Առաքելոցը կը գրէ թէ «Եւ բարձին զՍտեփանոս արք երկիւղածք, և արարին կոծ մեծ ի վերայ նորա» (Ը. 2): Քրիստոնէական աւանդութիւնը կու տայ մեզ այդ երկիւղածներուն անունները, որք են օրէնուսոյցն Գամալիէլ և անոր եղբօրորդին Նիկոդիմոս. վերջինս Քրիստոսի թաղման ալ ապաւառած է: Այս աւանդութեան արձագանգը կ'ըլլայ մեր վկա-

յասէր հայրապետը, Գործք Առաքելոցի իր խմբագիր մեկնութեան մէջ (էջ 153)։ Կափարգաղաման իր չրջանակներով հին և նոր տնտեսութեան ռահվիրաներուն ուխտատեղեաց կեդրոնն էր. յարմարագոյն վայրն էր՝ որ Գամաղիէլ ճշմարիտ իսրայէլացիի մը զգացումներով առլցուած Ս. Առաքեալոյն նշխարները ամփոփէր իր ագարակին մէջ, ուր յետոյ պիտի միանային իրեն ու պահէին, ինչպէս նաև Նիկոդիմոսի նշխարները։ Այս դէպքէն 23 տարի յետոյ 438ին, Թէոդոս Բ. կայսեր թագուհին, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Երկիրը, առաջնորդութեամբ Աղեքսադրիոյ Կիւրեղ հայրապետին։ Եւդոկսիա թագուհին փափաքեցաւ Ս. Առաքեալոյն քարկոծման աւանդական տեղւոյն վրայ քաղաքէն դուրս կառուցանել եկեղեցի մը և հոն զետեղել տալ անոր նշխարները։ Կիւրեղ Աղեքսանդրացին, ինչպէս կը վկայէ ժամանակակից Կիւրեղ Սկիւթոպոլսեցին, տօնական հանդիսաւորութեամբ նախավկային նշխարաց մէկ մասը Սիոնէն փոխադրեց թագուհիին չինել տուած եկեղեցին, և զետեղեց սաղարկրեայ մատրան մը մէջ։ Այս եկեղեցին, 614ին, պարսկական յարձակմանց ժամանակ կործանուեցաւ, Խաչակիրք վերաշինեցին զայն իր տեղւոյն վրայ։ 1187ին, երբ Սալահէտտին պաշարեց Երուսաղէմը, քաղաքին քրիստոնեայ բնակչութիւնը ռազմական պատճառներով ստիպուեցաւ քանդել նոյն եկեղեցին, որպէս զի թշնամին դիւրութիւն չունենայ նոյն կողմէն քաղաքը մտնելու։ Այդ փլուզումէն ի վեր, նոյն մեծածախս եկեղեցին աւերակաց կոյտ մ'էր, և միայն կը յիշուէր իբր ուխտատեղի։ 1882էն սկսեալ պեղումներ կատարուեցան հոն, և երեան ելան Եւդոկսիայի եկեղեցւոյն գեղակերտ մոզայիքները և հիմերը, ինչպէս նաեւ զանազան վիմափոր գերեզմաններ։ 8–10 տարիներու ընթացքին, Դոմինիկեանք հին եկեղեցւոյն հիման վրայ կառուցին նոր մը, և օժտեցին զայն Ս. Դրոց դպրոցով մը և ընդարձակ մատենադարանով։

Հին օրերէ սկսեալ հնախոյզք կ'ուզէին գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի կափարգաղամա վաղեմի գիւղը, որ, ըստ Դուկլիանոսի նամակին, երուսաղէմէն 20 մղոն հեռի էր։ 1600ին, գիտնական Քուարէսմիոս Ս. Երկրի Ֆրանչիսկեանց մեծաւորը, ի զուր կը փնտռէր Ս. Առաքեալոյ տապանին հետքը, ծանօթ վայրին մէջ. կափարգամաղան ոեւէ անունի մը հետ չէր կրնար նոյնացուցնել. մինչեւ որ հռչակաւոր տեղագիրը՝ Գոնտէր եւ ոչ նուազ անուանի տեղակալ մը, ապա Լորա Քիչնէր, իրենց Պաղեստինի քարտիսագրութեան մէջ, կափարգամաղան նոյնացուցին այժմու Պէյթ–Ճէմալ գիւղին, Եաֆայի եւ Երուսաղէմի ճանապարհին վրայ, դէպի հարաւ. նոյնը պնդեցին պաղեստինագէտ Լիւվէն, Հ. Բառնաբաս Մէյսթէրման և այլք։ 1891–ին սկսուցաք ուխտաւոր մը, նոյն գիւղին մէջ հող մը կը գնէ բարեգործութեան նպատակաւ և կը նուիրէ Սալէզեանց, որ նոյն հողին վրայ կը կառուցանեն երկրագործական վարժարան և տիպար ագարակ մը։ Ս. Առաքեալոյ նշխարաց առաջին պիւտէն 1501 տարի յետոյ է որ Պէյթ–Ճէմալի երկրագործական վարժարանի տեսուչը պեղումներ կատարել կու տայ այն տան բակին մէջ, ուր քանի մը դար առաջ եղած էին մոզայիքի կտորներ, պատի և սիւներու քակորներ, պեղումները չարունակելով՝ 1913–ին արդարև գըտնուեցան բիւզանդական ոճով չինուած մատուռ մը, գեղակերտ մոզայիքով զարդարուած, և անսովոր երկու պարապ գերեզմաններ։ Այս նորագիւտ տապանը կը կարծուի թէ՝ Նախաստաքաւազին այն տապանն է, ուրկէ 415–ին, անոր նշխարները փոխադրուեցան Սիոնի եկեղեցին։ Գերմանիա տպագրուած փոքրիկ տետրակ մը, "Le tombeau de St. Etienne protomartyr, étc." խորագրով, այս կարեւոր գիւտի մասին կու տայ պատմական ճիշտ տեղեկութիւններ։

2. Ոսկր ուղեգրաց վկայութիւնները Սիոնի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ նկատմամբ

Քանի որ Ս. Առաքեալոյ նշխարաց մէկ մասը կը մնար Սիոնի եկեղեցւոյն մէջ, կանոնական պարագայ մ'էր որ անոր վրայ քրիստոնեայք կառուցանեն վկայարան մը, մասանց փոխադրութենէն վերջը. բայց այս մատուռը, ինչպէս նաև Ս. Քաղաքի բոլոր եկեղեցիները եւ վանքերը, 614–ին, հրդեհի եւ կործանման ենթարկուեցան Պարսից արշաւանքներէն, որ երկրակալութենէն աւելի, Մօրիկ կայսեր համար վրէժխնդրական պատերազմ մըն էր, և ընչաքաղցութեան ծարաւ մը Խոսրով Բ.ի զինուոր-

ներու կողմէն. 300է աւելի տաճարներ քանդուեցան և հազարաւոր մեռելներ և վիրաւորներ դիտապաստ ինկան Երուսաղէմի փողոցներուն մէջ. Զաքարիա պատրիարք գերի տարուած էր Տիզբոն Բրիստոսի Ս. Խաչին հետ: Նորագիւտ արաբերէն յիշատակարան մը մանրամասն կը հաղորդէ թիւերն այն մեռելոց, որ անթաղ կը մնային քաղաքին փողոցներու մէջ և թովմա անուն քրիստոնեայ մը, իր կնոջ հետ, կը փութայ թաղել մեռելները: Նոյն իսկ չէին խնայուած Սիոնի հին եկեղեցիները, անոնց հետ նաև Վերնատան եկեղեցին և Ս.Ստեփանոսի մատուռը, որ յարակից էր նոյն եկեղեցւոյն (Revue Biblique 1897, էջ 156): Զաքարիայի յաջորդ Մոտեստոս կանաց քիչ ժամանակի մէջ վերականգնել կործանած և այրեցուածները, մանաւանդ Սիոնի թաղը, ուր վերաշինեց Ս. Ստեփանոսի եկեղեցին որու մասին հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք քրիստոնեայ հնախօս Լըքլէրքի յօդուածէն (տե՛ս Dictionnaire d'Archéologie chrétienne et de Liturgie, 655–668): Մոտեստոսի վերաշինութենէն յետոյ, 670ին, առաջին անգամ գաղիացի Արկուլֆ եպիսկոպոսն է որ կը նշանակէ Սիոնի Ս. Ստեփանոսը իր «Ուղեգրութեան» մէջ, և կ'ընծայէ մեզ գեղեցիկ նկարագրութիւն մը և թանկագին յատակագիծ մը, որուն համաձայն, Ս. Ստեփանոսը կը յիշուի իբր կոյրդ եկեղեցի, վասն զի այդ թուականին տակաւին չէր անջատուած վերնատան եկեղեցիէն: Անգղիացի Բէդ պատմաւէլին (720) և Վիլլիպալտ (723–726) տեղեկութիւններ ունին նախավկային նոյն մասերան վերաբերմամբ: Բայց կը թուի թէ՝ 808ին այլևս Ս. Ստեփանոս անջատուած էր Սիոնի Մայր եկեղեցիէն, և մասանց փոխադրութեամբ վերաշինուած էր Յովսափատի վանքերու շարքին: Լատին յիշատակարան մը, Commemoratorium de casis Dei խորագրով, որ տեսակ մը ցուցակ է վանօրէից և կը պարունակէ մեզ մի վանքի վանականաց նոյն ժամանակի (808) վիճակագրութիւնը, հետևեալ կերպով կը դասաւորէ Յովսափատի սահմանէն համրելով մինչև Սիոն գտնուած վանքերը:

Ս. Դեւոնդէս	1	քահանայ
Ս. Յակոբ	1	»
Ս. Քառասունք	3	»
Ս. Բրիստափոր	1	»
Ս. Ակիւլինէ	1	»
Ս. Կիրակոս	1	»
Ս. Ստեփանոս	3	» և 15 բորոտ
Ս. Դոմետիոս	1	»

ՏԱՔ - 2011

Այս մեծ ու պզտիկ վանքերը անհաւասարակոյս, ամէնքն ալ Սիոնէն դէպի Յովսափատ նայող բլուրին վրայ հոս և հոն ցրուած էին. և որովհետև ուղեգիրը Յովսափատի ձորէն սկսած է իր դասաւորումը, այնպէս ցոյց կու տայ թէ ամէնքն ալ կը գտնուին Յովսափատ, մինչ իրականին մէջ, անոնցմէ ոմանք, ինչպէս նաև Ս. Ստեփանոս չինուած էին Սիոնի մէջ, և արդէն 15 բորոտներու յիշատակութիւնն ալ ցոյց կու տայ թէ Ս. Ստեփանոսի վանքը կառուցուած էր Դաւթի դրան մօտ, ուր կար նաև քաղաքին ուրկանոցը, որ 1875ին միայն տեղափոխուած է քաղաքէն դուրս: Այս ապացոյցներու հանդէպ յայտնի սխալմըն է Հ. Լակրանժի ա՛յն ենթադրութիւնը որով կը ջանայ վերադրել յիշատակարանին վկայութիւնը պատշաճեցնել Երուսաղէմի պարսպէն դուրս, Եւդոկիա Թագուհիին չինած Ս. Ստեփանոս եկեղեցւոյն (տե՛ս Saint Etienne et son sanctuaire à Jérusalem, էջ 83): 850ին ալ, գաղիացի Բեռնարդոս վանականը կը տեղեկացնէ թէ Սիոնի մէջ կար Ս. Ստեփանոս անուամբ եկեղեցի մը, որ կը գտնուէր Վերնատան եկեղեցւոյն արեւելեան կողմը. իր խօսքերն են հետեւեալները. «Ս. Ստեփանոս Սիոնի Մայր Եկեղեցւոյն ձախ կողմը կը գտնուի. ա՛յն լերան վրայ, որուն ստորոտն է Ակեղդամայն — Դեօղ արեան, ուր կայ օտարականաց գերեզմանը». 1145ին, 1360ին, երկու անանուն ուղեւորներ ևս, մէկը սլաւ, կը յիշատակեն Սիոնի Ս. Ստեփանոս եկեղեցին: Այս օտար յիշատակարաններն օրքան որ ունենան իրենց անորոշ կողմերը, սակայն և այնպէս անոնք հիմնապէս միաձայն են և կը հաստատեն Սիոնի Ս. Ստեփանոս վանքը:

3. Ազգային յիշատակարաններ Սիոնի Ս. Ստեփանոսի վանքի մասին

Նոյն վանքի ծագման պարագան դժուար է հաստատել ազգային յիշատակարաններով, բայց հաստատել հրականութիւն մ'է

թէ Սիոնի Ս. Յակոբեանց վանքը, հին դարերէ սկսեալ, հայկական սեպհականութիւն մը եղած է: Նոյն վանքի ընդարձակ աւերակը, որ գոյութիւն ունի այսօր և կը գտնուի մեր Ս. Հրեշտակապետ վանքին դիմաց, ճանապարհով մը զատուած, եւ Դաւթի դրան մօտիկ, Հայոց անհերքելի սեպհականութիւնը, եւ թէ ԺԴ. դարու ձեռագիր Ճաշոցի մը յիշատակարանը, զոր ստորև պիտի պարզենք, բացայայտ կ'ապացուցանեն նոյն վանքին ազգային սրբավայր մը ըլլալը: Ո՛րքան որ Ս. Յակոբեանց վանքին հայկական հաստատութիւն մը ըլլալուն ծագումը մութ է, բայց մենք պիտի չանանք, ստուգութեան մօտ հաւանականութեամբ մը, մէջ բերել մեր ապացոյցները և յետոյ աւելցնել ա՛յն բացորոշ յիշատակարանը, զոր ունինք: Ինչպէս որ վերեւ յառաջ բերուած օտար ուղեգիրներու վկայութիւններէն յայտնի եղաւ, Ս. Յակոբեանց մատուռը Մայր Սիոնի Վերնատան եկեղեցիէն անջատուած էր Ը. դարու վերջերը, և ստուգութեան մօտ հաւանականութիւն մ'է որ Հայոց Ս. Յակոբեանց վանքը, Սիոնի մէջ, վերահաստատուած էր Ի. դարու վերջերը, կամ Ը.ի սկիզբը: Ինչպէս ծանօթ է, Հայոց Անաստաս վարդապետը, Ը. դարուն, կազմած էր Երուսաղէմի Ազգ. Վանօրէից Ցուցակը, որուն մէջ յիշուած վանքերը կ'անուանակոչուին ա՛չ թէ վանքերուն բուն իսկ անուններով, այլ նոյն վանքերը չինող կամ մատակարարող նախարարութեանց կամ Հայ արքունիքի անուններով: Նոյն Ցուցակին մէջ կը կարդանք հետեւեալը.

« Աւետումեաց վանիցն Ս. Սիոնի կողմն է »:

« Այլ վանիք Աւետումեաց, որ հատատուորին քնակիցին ի կողմն Սիոնի »:

Ամատունի նախարարութիւնն է որ Սիոնի մէջ կը շինէ կամ շինել կու տայ երկու վանք, որոց երկրորդը հաւատաւոր կանանց բնակութեան յատկացուած է: Ծանօթ ըլլալով որ հին ժամանակներէ սկսեալ, հաւատաւոր հայ կանայք կը բնակէին Սիոնի մեր Ս. Հրեշտակապետ վանքին մէջ, որ բնաւ տարակոյս չի վերցներ, և միւս կողմէն, նոյն վանքին շատ մօտ, հանդիպակաց կողմը, կը գտնուէր Ս. Յակոբեանց վանքը, ինչպէս կը յիշուի ստորեւ մէջ բերուելիք յիշատակարանին մէջ, եւ արդէն նոյն դիրքը ունի Ս. Յակոբեանց վանքի այժմու աւերակը. Ա՛ն եզրակացնենք թէ Ամատունեաց անուամբ յիշուած երկու

վանքերէն մին Ս. Հրեշտակապետն է, իսկ միւսն Ս. Յակոբեանց: Վերջնոյս վերաշինութեան իբր թուական կարելի է դնել Ի–Ը դար, վասն զի ճիշդ այս միջոցին էր որ Ս. Երկրին պարսկական գրաւումէն յետոյ, Երուսաղէմի պատրիարքութեան եւ Հայոց կաթողիկոսութեան յարաբերութիւնները բարւոքուած էին. այս պարագան կը հաստատեն Պարսկաստան գերի տարուած Զաքարիա պատրիարքին՝ Պարսից Ժողովին մէջ ի նպաստ Հայ Եկեղեցւոյ ըրած յայտարարութիւնները, եւ անոր յաջորդին՝ Մոսեստոսի՝ առ կոմիտաս կաթողիկոսն ուղղած թուղթը և վերջինին պատասխանը (տե՛ս Սեբէոս, էջ 131–139): Մոսեստոս իր նամակին մէջ կը յիշէ ա՛յն առատաձեռն օժանդակութիւնը, զոր Հայ ուխտաւորներ չէին խնայեր Երուսաղէմի Ս. Տեղեաց վերաշինութեան համար, և գրձնել կը խնդրէ կաթողիկոսէն. «Մի՛ պակասիլ ամենեւին ի յիշել եւ նայիլ ի մեզ եւ յաղքատս Երուսաղէմի, եւ որ ինչ պիտոյ է ընուլ»: Այս բարւոք յարաբերութեանց մէջ, Պարսիկ տէրութեան սահմանին մէջ գտնուող նախարարութիւնները և մանաւանդ նոյն պետութեան համակիր Ամատունիք պատեհութիւններ կրնային ստեղծել բարեպաշտական յիշատակներով յաւերժանալու համար Ս. Երկրին մէջ. այս տուիքներուն վրայ, կրնանք հաստատել թէ Սիոնի վրայ Հայոց Ս. Հրեշտակապետ և Ս. Յակոբեանց վանքերը շինած են Ամատունիք, Ի–Ը դար. վասն զի արդէն Ը. դարու վերջերը, Ամատունեաց աստղը մարելու վրայ էր, և անոնք արբաբական արշաւանքներու հետեւանքով, Շապուհ Ամատունիի և անոր որդւոյն Համամի առաջնորդութեամբ, 12,000 մարդերով, ստիպուեցան հեռանալ իրենց բնագաւառ Արտազէն և ապաստանիլ Ցունաստան, Ճորոխի անդիի կողմը, ինչպէս կը հաղորդէ մեզ Ղեւոնդ Պատմագիր (էջ 168). հետեւաբար, Ամատուններուն Ս. Տեղեաց եկեղեցաչէն գործը կրնայ կատարուած ըլլալ միայն մինչեւ Ը. դարու սկիզբը: Ս. Աթոռոյ մատենադարանին (Թ. 1130) ձեռագրին մէջ գտնուած Մարկոս գրչին ուխտաւեղեաց ցուցակի մը ընդօրինակութեան մէջ ևս կը յիշատակուի Ս. Յակոբեանց վանքը, « յարեւելս հարաւոյ Երուսաղէմի » խօսքերով: Բայց նոյն վանքին հայկական սեպհականութեան կարկառուն և անհերքելի ապացոյցը կու տայ ա՛յն յիշատակարանը՝ զոր կը գտնուի մեր մատենադարանին (Թ. 1863) ձեռագիր Ճա-

չոցին մէջ։ Նոյն ձեռագիրը ընդօրինակողն է Ներսէս արեզա կրակցի, որոյ մասին կարևոր տեղեկութիւններ տրուած է («Սիոն» Թիւ 2. էջ 52–53, 1927). ինքը եղած է առաջին ստացողը եւ երկրորդը՝ Երուսաղէմի Աբրահամ եպիսկոպոսը, որուն համար, այլ գրով յիշուած է հետեւեալը. « . . . եւս առաւել Տէր Աբրահամ Երուսաղէմա եպս.ին որ զգիրքն ստացայ յիշատակ լինէ և ծնօղաց իմոց եւ ամենայն արեան մերձաւորաց, եւ մեծ Խաթուն որ զգրմ. երեա». ձեռագիրը ընդօրինակուած է Հայոց Ս. Սահիանոս վանքին մէջ, Երուսաղէմի Յովհաննէս Ճօսլին պատրիարքի օրով, ՋՂԴ (= 1334) Թուականին, ինչպէս կը հաստատէ յիշատակարանին հետևեալ հատուածը.

« . . — Փրեցաւ ձեռաւքս անարժանիս
Որ Ներսես Կրակցի կոչի.
Ստուգագնող պատուիրանի.
Եւ յանցաւոր Տեառն աւրինի
Սուտ խահանայի
Եւ մեղաւոր յաւետնայնի
Ի Հայկազանւոյ թուականի
ՋՂԴ (= 1334) հաւարի։
Ի վանս Սահիանի,
Մերձ առ դրունս Հրեշտակապետացն Միխայելի եւ Գաբրիելի
յԵրուսաղէմ սուրբ խաղաքի։ . . . .
Եւ յառաջնորդութեան Եղիի. տէր Յոհաննիսի
Որ աւեղի անուն ձաւշիի կոչի» . . .

Ուրեմն, ըստ այս յիշատակարանի, Սիոնի վրայ Հայոց Ս. Սահիանոսի վանքը կանգնուն էր մինչև 1334 Թուականն, եւ վերագոյն յիշուած անանուն սլաւ ուղեգիրին համաձայն, նոյն վանքը անվնաս մնացած էր 1370 Թուականին։ Ժե. դարուն Ս. Աթոռս ընդօրինակուած Տաղարանի մը յիշատակարանին մէջ, ի չարս ազգային ուխտատեղեաց, ընդօրինակող Ներսէս երէց չի յիշատակեր Ս. Սահիանոսի վանքը (Նօsարf Հայոց, 18–19), հետևաբար ան քանդուած կ'ըլլայ 1370–1447 Թուականը, մեզ անյայտ պատճառներով, 1483ին միայն Սկիւրմանցի Նիկողայոս եպիսկոպոսը՝ իր կազմած Ս. Տեղեաց Ցուցակին մէջ, կը յիշէ Սիոնի կողմը, իբր ուխտատեղի «Ս. Սահիանոսի գերեզմանը», եւ յիշեալը զանց չ'ըներ յիշատակել նաեւ Ս. Քաղաքի պարիսպէն դուրս Նախավկային միւս ուխտատեղին հետևեալ բառերով. «եւ յերուսաղէմայ եզերն՝ Դամադիկլի եւ Ս. Ստեփանոսի Գերեզմանն»։

Օտար և ազգային այս յիշատակարանաց ամփոփումը անհերքելի կը դարձնէ Սիոնի վրայ Հայոց Ս. Ստեփանոսի վանքին գոյութիւնը, և որ քրիստոնէական բարեպաշտութեան մը յիշատակարանը եղած է դարերով։ Այս պահուս, որ այս տողերը կը գրեմ, աչքերս Նախավկային աւերակին կողմը կը նային և միտքս կը հասկնայ անոր անխօս լեզուն. և կը ստիպուիմ աչքերս յառել երկինք գոչելով. ո՜վ Տէր, պարգեւէ՛ մեզի նոր Սմատուններ, որ վերաշինեն այս աւերեալ վանքը քարկոծեալ Նահատակին, որուն դարերով բախտակից եղած է հալածական Հայ ժողովուրդը։

Դ

ԷԼ–ՊԻՐԷՀ ԳԻՒՂԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՎՐԱՅ

1. Ո՞ւր է Էլ–Պիրէհ.

Էլ–Պիրէհ Նապլուսի ճամբուն վրայ, Երուսաղէմէն դէպի հիւսիս, 16 քիլոմէտր հեռի գիւղ մըն է. Հին Կտակարանի Պէթթօն է ան, Բենիամինի ցեղին քաղաքներէն մին (Յեսու Թ. 17)։ Այս գիւղին մօտ, Ռամայի և Բեթելի մէջ, Դեբովրա մարգարէուհին կը դատէր Իսրայէլի ժողովուրդը (Դատ. Դ. 4)։ Մարինոս ուրիշն կը դատէր Իսրայէլի ժողովուրդը (Դատ. Դ. 4)։ Մարինոս ուրիշն կը կարծէ թէ («Պատմ. Ս. Երկրի» հայ. թարգմ. Ա. Հոր. էջ 395) Էլ–Պիրէհ գիւղը Մաքմասն է, որ տարբեր գիւղ մըն է, դէպի արևելք։ Ըստ իր աստուածաբանական, Եւսեբիոս կը յիշատակէ զայն իր «Տեղիք Եբրայեցւոց» անուամբ գրքին մէջ, իբր մեծ գիւղաքաղաք մը։ Այժմ Էլ–Պիրէհ հազար բնակչօք գիւղ մըն է, եւ

չինուած ժայռոտ բլուրի մը գագաթը, որուն ստորոտը կը գըտնուի, ճանապարհին մօտիկ, առատահոս աղբիւր մը՝ որուն վրայ կառուցուած է մկկիթ մը:

Բայց Էլ–Պիրէհ պատմական ուրիշ մեծ հռչակ մը ստացած է ա՛յն ուանդութեան համաձայն, թէ ան եղած է այն տեղը, ուր Ս. Կոյսը կը կարծէր թէ Յիսուս Մանուկը, Զատկի տօնը երուսաղէմի մէջ կատարելէ յետոյ, ուրիշ ուղեկիցներուն հետ մեկնած էր. հո՛ն ծանօթներուն և բարեկիններուն մէջ փնտռուելուա՛ն, բայց չգտնուելով՝ իր ծնողք դարձան Երուսաղէմ (Ղկս. Բ. 42–51): Էլ–Պիրէհ առաջին կայանն էր Երուսաղէմի մօտիկ. Զատկի առթիւ ուխտի եկող Հրէայք հո՛ն կը հաւաքուէին և կը միանային խմբովին ճամբորդելու համար. հո՛ն կար նաև իջևան մը, Սամարիա և Գալիլիա մեկնողներուն համար: Դ. դարուն քրիստոնեայ չերմեռանդութիւնը հաւանաբար եկեղեցի մը հիմնած էր հոն, յանուն Տիրամօր Ս. Կուսին, մչանջենաւորելու համար աւետարանական այդ դրուագը: Ըստ Յերոնիմոսի, Հեղինէ թագուհին է նոյն եկեղեցւոյ առաջին հիմնադիրը:

2. Էլ–Պիրէհ Խաչակրաց ժամանակ.

Ս. Գերեզմանի լատին Յիշատակագիրքէն կ'իմացուի թէ Առաջին Խաչակրաց առաջնորդը Գոտըֆրօայ տը Պուիյիոն Երուսաղէմի գրաւումէն յետոյ, Ս. Գերեզմանի սեպհականութեան համար 21 գիւղեր չնորհած էր. Էլ–Պիրէհ այդ գիւղերէն մին էր, որուն հետ կային մերձակայ Էլ–Բամ, Քալանտէ, Պէյթ–Լիճճէ և Սուպիէ գիւղերը, Ռամալլահի արևմտեան կողմը: Յիշատակագիրք Էլ–Պիրէհը կը կոչէ Պերրա կամ լատիներէն Mahomerie: Առաջին Խաչակրութեան տարիներուն, հոս կը բնակէին քաղքենի ազնուականներ, գլխաւորաբար Ֆռանկներ, ինչպէս յոյց կուտայ մեզ Ս. Գերեզմանի Յիշատակագրոց 131 թիւը: Այս քաղաքացիները ունէին երդուեալներու ատեան մը, ուր երբեմն կը գումարուէին բոլոր անդամներով. անոնք հնազանդութիւն և հաւատարմութիւն կ'երդնուին ո՛չ թէ իշխանի մը կամ կոմսի մը, այլ կ'ուխտէին հաւատարիմ մնալ Ս. Գերեզմանի վանքին, որուն ներկայացուցիչն էր մատակարար մը, որ կ'ապրէր Էլ–Պիրէհի ժողովրդապետին եւ պաշտօնէութեան հետ. անոնք ամէնքն ալ

հնազանդ էին Ս. Գերեզմանի, այնպէս որ առանց հաւանութեան մեծաւորին, չէին կրնար վաճառել իրենց այգիներն, և եթէ վաճառումը տեղի ունենար, արդիւնքին կէսը կը տրուէր նոյն մեծաւորին: Ասկէց զատ ոևէ ստացուածք չէին կրնար ծախել Տաճարականաց և կամ ուրիշ եկեղեցիի մը. նոր այգիները պարտաւոր էին տնկել Ս. Գերեզմանի հողերուն վրայ. նոյն քաղաքացիներէն չատերը տեղւոյն հասարակութեան կը յատկացնէին իրենց անձը և ստացուածքը: Ս. Գերեզմանը՝ հողերէ և տուներէ զատ, Էլ–Պիրէհի մէջ, ո՛չ միայն գերիշխանութեան այժով, այլ ուղղակի կը ժառանգէր դղեակ մը, եկեղեցի մը և աւազան մը. գիւղն օժտուած էր նաև հիւանդանոցով մը, ուխտաւորներու յատուկ հիւրանոցով մը, որ տեղւոյն սեպհականութիւնն էր. եկեղեցին կը կրէր Ս. Կուսին անունը, անոր ստացուածոց մատակարարութիւնը ստանձնած էր Ս. Գերեզմանի կողմէն կարգուած անձը: Եկեղեցիին մօտ տնկած էին քարէ խաչ մը, հօմն աստիճան պատուանդանի մը վրայ, ուրկէ ուխտաւորք կրնային նշմարել Երուսաղէմի Դաւթի աշտարակը (Revue Biblique, 1926, No 2):

3. Էլ–Պիրէհի եկեղեցւոյն հնախօսական ուսումնասիրութիւնները.

Նոյն եկեղեցւոյն հնախօսական քննութիւնը առաջին անգամ կատարած է կոմս Մելքիոր տը Վոկիւէ (1829–1916), և իր քննութեան արդիւնքը հրատարակած է իր մեկ գրքին մէջ, (Les Eglises de la Terre Sainte, էջ 338–39), ուր կը գրէ թէ անձամբ այցելած է Էլ–Պիրէհի եկեղեցւոյն, զորս չինած են առաջին խաչակիրք: Անոր կառուցուածքը նման է Երուսաղէմի Ս. Յովակիմ–Աննա եկեղեցւոյն նըմանն. կրկնակամարներն կը հանգչին քառակուսի սիւներուն վրայ, կամարներ որ կ'ընդհատուէին գետինը հասնելէ յառաջ, և ծնօտներով (saillie) կը կապուէին պատերուն: Եկեղեցւոյն հիւսիսային պատը և կողակը (abside) տակաւին անվնաս մնացած են, բայց աստի, եկեղեցւոյն աւերակաց մէջ տեսնուած է կամարա–

չէն տապանաքար մը, որ հաւանաբար գերեզմանն է Խաչակիր ասպետի մը։

Երկրորդ հետազօտութիւնը կ'ընեն անգլիացի երկու հնախօս երկրաչափներ՝ Գոնտէր և Քիչնէր. 1874 Յունուար 24ին կը քննեն աւերակները, կը պատրաստեն անոնց յատակագիծը, ըստ Պաղեստինի Հնագիտական ընկերութեան, և իրենց քննութեան արդիւնքը կը տեղեկագրեն հետեւեալ կերպով. «Այս գիւղի աւերեալ եկեղեցին պահպանուելու լաւագոյն վիճակ մը ունեցած է. երկու թեւերու սիւները և արեւմտեան պատը փլած են։ Այն կը վերաբերէր Ս. Գերեզմանին և աւարտած էր 1146ին։

Նոյն եկեղեցւոյն քովը կար հիւանդանոց մը։ Պատերը խիստ հաստ են, հիւսիսային եւ հարաւային պատերուն հաստութիւնը 9 ոտք է, արեւմտեան պատին երկարութիւնը դրսէն 72 ոտք, հիւսիսայինը՝ 110 ոտք, եկեղեցւոյն աւանը 14 ոտք տրամագիծ ունի, եւ կողմնակի մասերը՝ 7 ոտք։ Նեցուկները՝ որ կապուած են սիւներուն հետ, ներսի կողմէն կը մնան պատերուն վրայ։ Եկեղեցին երկու կողմին վրայ ունի չորս չորս պատուհան. հարաւային կողմը կայ կողմնակի դուռ մը, արեւմտեան կողմէն, երկրորդ պատուհանին քով։ Ներսի որմաքարերը գեղեցկօրէն յարդարուած են չափաւոր մնծութեամբ. քարերուն վրայ կը տեսնուին որմնադիրներու տեսակ մը նշաններ, որ յաճախակի կրկնուած են քարերուն վրայ։ Արտաքին որմնադրութիւնը չատ կոշտօրէն յարդարուած է, քարերը ողորկ չեն, անոնց կցուածքները խիճերով բռնուած են, իսկ պատերուն ներսի կողմի քարերը տաշուած են։ Պատուհանները կամարաձև են, սիւներուն խոյակները զանազան ձևեր ունին։ Արևելեան պատերն ամբողջ են. կողմնակի մասերը կը մնան։ Եկեղեցին՝ համաձայն իր չինութեան ժամանակին, կը թուի թէ իր նաւին (nef) վրայ ուներ գմբիկոն մը. կամարներուն աղեղները սրածայր եղած են. արևելեան պատուհանները՝ կողմնակի պատերուն նման կամարաձև են։ Սիւներուն խոյակներուն վրայ, պատուհաններուն տակէն, պատերուն շուրջը չինուած է քիւ մը» (The Survey of western Palestine, էջ 88–89)։

4. Էլ–Պիրէհի եկեղեցին հայկական է.

Ինչպէս որ տեսանք, եւրոպացի քննիչներ Էլ–Պիրէհի եկեղեցւոյն չինութիւնը կը վերագրեն Խաչակրաց. բայց մենք պիտի կարողանանք հաստատել թէ այդ եկեղեցին հայկական է, Խաչակիրներէն յառաջ, և մէկը ա՛յն բազմաթիւ եկեղեցիներէն, որ Ս. Երկրին մէջ չինուած էին հայ բարեպաշտներէն։ Թէև հրնոգոյն վաւերագիր մը երևան չէ եկած դեռ այդ մասին, բայց յետնագոյն դարու ձեռագիր յիշատակարան մը, զոր յառաջ պիտի բերենք, պիտի հաստատէ թէ Էլ–Պիրէհի եկեղեցին հայկական էր և մինչև ժէ. դար կանգուն մնալէ յետոյ կործանուած է։

Այդ յիշատակարանէն առաջ հոս կ'ամփոփեմ այն տեղեկագրութիւնը, զոր 1875ին հրատարակած է Մուրատեան Մելքիսեդեկ վրդ. (ապա Եպս.) Սիոնի մէջ, որու խմբագրապետն էր։ Մուրատեան լսելով որ Էլ–Պիրէհ գիւղին մէջ հայկական եկեղեցի մը կը գտնուի, քանի մը մխիթարիներով կ'այցելէ հո՛ն և հետևեալ կերպով կը նկարագրէ իր տեսածները. «... եկեղեցւոյ երեք եալ կերպով կը նկարագրէ իր տեսածները. «... եկեղեցւոյ երեք խորաններն մինչև ցկամարն և հիւսիսային ու հարաւային պատերն տակաւին կանգուն են, իսկ արևմտեան կողմն, ուր գլխատերն տակաւին կանգուն են, իսկ արևմտեան կողմն, ուր գլխաւնուած է նախագաւիթն, բոլորովին քակուած է և նոր ժամանակներս բանջարեղինաց պարտիզի հասարակ պատով պատուած։ Եկեղեցին գրեթէ քառակուսի ձև ունի, 34 մետր երկայնութեամբ և 20 մետր լայնութեամբ։ Սեղաններու և հարաւային ու հիւսիսային կանգուն մնացած պատերու քարերէն կ'երևի յայտնապէս, որ եկեղեցին շինուած է խիստ ընտիր ճաշակաւ, ընտիր տեսակ և արբատաշ քարերով, սիւներով և խոյակներով, ուսնեցած է երկու մեծ գմբէթ միջավայրին և աւագ խորանին վերայ և թերևս երկու փոքր գմբէթ երկու փոքր խորաններու վերայ։ Թէև թուական չը կայ, բայց հնագիտական հետազօտութիւնն ցոյց կը տայ, որ աւելի քան ութ կամ ութն հարիւր տարուան չէնք է, և եթէ ո՛չ յառաջ, անշուշտ մեր Ռուբինեան թագաւորական հարստութեան ժամանակ չինուած է։ ... Հարաւային պատին վերայ, ուր նռնենի մը կեցած է, կայ արձանագիր, մեծաւ մասամբ անվերծանելի. երկու հարիւր տարի յառաջ փորագրուած, Պետրոս անուն վարդապետի ձեռամբ ...։ Աւագ խորանին կամարակապ կիսագօտւոյն վերայ ևս հայկական գրե-

րու հետքեր կը նշմարուին, բայց եղծուած լինելով չեն կարդացուիր։ . . . Ով որ Հայաստանի մէջ չրջագայած է և կիսաւեր վանքերն ու եկեղեցիները տեսած, առաջին նայուածքով կարող է վկայել որ էլ–Բիրէհ գիւղի եկեղեցին հայկական եկեղեցի է և Պաղեստինի մէջ նշանաւոր հայկական հնութիւն...։ Զարմանալի է որ Պ. Վոկէ, իւր «եկեղեցիք Ս. Երկրի» անուն տեղեկագրական գործոյն մէջ, առանց որևիցէ հաւանական փաստի, յիշեալ եկեղեցւոյ չինութիւնն Խաչակրաց կ'ընծայէ, գոնէ չը նկատելով, որ եկեղեցին բնաւ լատինական ձեւ չունի» (Sion, 1875, Յունիս, էջ 136–37)։ Մենք իրաւունք կուտանք Մ. Բարատեան վարդապետի չիտակ դիտողութեան, նկատի առնելով Գոնտէրի և Ռիչնէրի գծագրած յատակագիծը, անոր սիւներուն և խոյակներուն գծագրութիւններն, ընդհանուր չէնքին ճարտարապետական կառուցուածքը և հայեցի արձանագրութեանց հետքերը, որք բացարձակ կերպով կը հերքեն Տը Վոկիւէի և այլոց կարծիքները։ Ինչպէս տեսանք վերև, Տը Վոկիւէ ինքն է որ. կը գրէ թէ՝ էլ–Պիրէհի եկեղեցին չինուած է Պրոպատիկէի Ս. Յովակիմ–Աննա եկեղեցին նմանութեամբ և ճարտարապետութեամբ. վկայութիւն մըն է այս իրեն աննպաստ, վասնզի Պրոպատիկէի եկեղեցին ի սկզբանէ հայկական եղած է, ըստ յուցակի Անաստաս վրդ. ի «եւ ի ներս քաղաքն Արշակունեաց վանքն, ի Սուրբ Պրոպատիկէ կոչմանն». և մենք այս պարագան հաստատած ենք այլ ապացոյցներով ևս (տե'ս «Տարեցոյց» Ս. Գափամաճեան, 1926)։ Փաստ մը չէ որ Ֆռանկները, առաջին Խաչակրաց ժամանակ, տիրացած են անոր. և Երուսաղէմի լատին առաջին ինքնակալը՝ նոյն եկեղեցին էլ–Պիրէհ գիւղովը, Ս. Գերեզմանին կալուած արձանագրած է. նմանօրինակ դէպք մըն ալ, նոյն միջոցներուն, պատահած է Երուսաղէմի Ասորիներուն, որոնց մէկ եկեղեցին, պարտէզներով կը գրաւէ կոտրփրօայի ղէնքի ընկերներէն Ժէօֆրօա, որուն պատճառաւ, չատ տարիներ, բանտարկուած կը մնայ Դամբէի մէջ, և Երուսաղէմի հայ եպիսկոպոսին միջնորդութեամբն է որ ան կ'ազատի հայազգի Վահրամին չնորհիւ (Abbé Martin, Les premiers princes croisés et les Syriens Jacobites de Jérusalem)։

Վերևի բացատրութեանց հաստատութեան համար կը թարգմանենք Camille Enlart ի "Les Monuments des Croisés, dans le Royaume de Jérusalem» հոյակապ գործին մէջ գետեղած (Բ. Հատ., էջ 276) էլ–Պիրէհի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ մէկ նկարագրութիւնը, կրօնական հնախօսութեան մասնագէտ և ժթ. դարու կիսուն էլ–Պիրէհի եկեղեցին այցելող Պարոն Taylor ի (Անգլիացի ընտանիք ծնած, ի Պրուքսէլ, 1789–1879) կարեւոր մէջբերումներով.

«Եկեղեցին 43 մ. երկարութիւն և 22 լայնութիւն ունէր. իր ոճը լաւ կը համապատասխանէ 1146ին՝ որ անոր աւարտումի թուականը կը նկատուի»։ Սակայն, Պարոն Taylor ի մէկ դիտողութիւնը կը հաստատէ այն աւանդութիւնը՝ որուն համաձայն եկեղեցին կառուցուած էր նախնական սրբավայրի մը տեղւոյն վրայ. «հիւսիսային կողմը, կ'ըսէ, մեծ մասամբ առաջին մայր եկեղեցիին խոշոր քարերովը չինուած է»։ Ամբողջ չինուածքը՝ Տիւրոսի, Թորթոզի և Սեբաստի մեծ եկեղեցիներու նման, լեցուած քարերու միջուկի մը վրայ՝ խիտ կապերով բռնուած՝ տաչուած քարեր կը ղարդարեն։

Յատակագիծը՝ բացի երեք կողակներէ, որուն կեդրոնինը նեղ դաս մը ունի, կը պարունակէ նաև նաւ (nef) մը և կողմնաթեւեր՝ որոնց չորս գերանամէջերը (travées) առաւել կամ նուազ պահուած են հիւսիսային կողմը. եկեղեցին խաչաձև չէ։ Կողմնաթեւերը ունին գեղեցիկ ցցուած կամարներ՝ որ կը բարձրանան մինչև մոյթերը մայր կամարին։

Այս վերջինը ամբողջութեամբ անհետացած է. չի գիտցուիր թէ՝ ան որքանաձե՞ւ էր թէ ցցուն կամար. բայց Պարոն Taylor տակաւին կրնայ հաստատել թէ «նաւին ստորին սիւները կ'սկսին կրկնակամարները կրող խոյակին տակ գտնուած վիմաշարի մը դարևանդով (encorbellement)»։ Նաւին հիւսիսային պատը կը նայ այն ատեն հիւսիսային կողմնաթեւին հետ, որուն արտաքին պատին քարերը փրցուած էին և երեք կողակները, հարաւային կողմնաթեւի կիսակործան մնացորդները միայն կը մնային աւերակներու վերջին վիճակին մէջ։

Աղեղները և կրկնակամարները կրկնակոր և խիտ ցցուն էին. կողակներու պատուհանները՝ առանց ոևէ զարդի, պորտի քարին (clef) հետ ունէին խիտ բարակ բեկուածի մը աղեղը. կողմնաթեւերն ու աղեղները ունէին կրկին չրջանակում, մին՝ ներքին և չեղ, միւսն՝ առանց չեղութեան, և զարդարուած կըրունկի ձեւով ցցուածի մը (moulure) նման։ Գլխաւոր կողակը ունէր երկու որմածակ իրարու վրայ։

Մոյթերը ուղղանկիւն էին և հաստատուած չորս սիւներով. միևնոյն յատակագծով կխսամոյթեր կողմնաթևերուն պատերուն կը յենուին: Չեմ կրնար դիտնալ թէ այս խիստ թանձր պատերը որմայեղեր (contreforts) ունէին: Ռեմլէի և Թորթոզի նման, մոյթերը ունէին խոյակներ, բայց ասոնք իրենց զարդերովը աւելի կարճ էին նմանօրինակ յիշատակարանաց մէջ գտնուածներէն:

Այս խոյակները ունէին խոյօղներ (volutes) և երկկարգ կարճ պարզ տերևներ, կորածայր ձևով: Անոնք չունէին ոչ կոճղիզաւոր զամբղաձև զարդ և ոչ ալ փորածոյ թակաղաղ: Հիւսիսային կողմնաթևը զետեղուած սիւն մը կէս բարձրութեամբը կտրուած էր, ինչպէս Թորթոզի եկեղեցիին մէջ: Կողմնաթևերու պատուհաններուն և մեծ կողակին բարձր պատուհանին յենարանին տակէն անցնող և սիւնաշարքերուն ու կողակներուն մոյթը կազմող շարունակական լարով մը բոլոր թակաղաղները կապուած էին: Ինչպէս Ռեմլէի և Գազայի եկեղեցիներուն մէջ, յենարաններու երկրորդ կարգ մը կար նաւին և գլխաւոր կողակին մէջ եւ կը պսակուէր շարունակական երկրորդ լարով մը: Այս հորիզոնական ցցուածներու կտրածը (profil), ինչպէս Թորթոզի եկեղեցիին մէջ, միակերպօրէն բաղկացած է տեսակ մը հակադարձ ատտիկայարկէ (attique), բայց հոս կտրածը, ինչպէս խոյակները, աւելի ծանր են քան Թորթոզի եկեղեցիին մէջ, ինչ որ կը հաստատէ այս վերջին եկեղեցիին աւելի յառաջացեալ թուականը:

Պարոն Taylor տեսած է նաև վանական չէնքերու մնացորդները, զոր կը նկարագրէ այսպէս.

«Խաչակիրներու թուականին ուրիշ չէնք մը՝ որ կը կապէ եկեղեցին հարաւի կողմէն, կը թուի ըլլալ հին վանք մը: Հո՛ն կը տեսնուի պատին մէջ ագուցուած տապանաքար մը և որուն զարդարանքը կը ներկայացնէ խիստ գեղեցիկ փոքր կամարներու յօրինուած մը»:

Այս հեղինակաւոր տողերը բաւական են հաստատելու թէ այս եկեղեցին Խաչակրաց յատուկ հիմնարկութիւն մը չէր, այլ հինէն մնացած Մայր Տաճար մը, գեղեցիկ ճարտարապետութեամբ չինուած: Խաչակիրք պատրաստ կը գտնեն զայն և կը կատարեն նորոգութիւններ համաձայն իրենց ճաշակին:

Տարակոյս չկայ որ 1187ին, Խաչակրաց վերջնական մեկնումէն յետոյ, մերայինք դարձեալ տիրացան Էլ–Պիրէհի եկեղեցւոյն,

և ըստ մեր յիշատակարանին, մինչև 1696 թուականն սեպհականութիւնն էր Հայոց:

Այն յիշատակարանը՝ զոր վերև յիշեցինք, գրուած է ձաոդնտրի մը մէջ, (Թ. 985, Մայր Ցուցակ հայ. ձեռագրաց Միխիթ. վանս. Վենետկի, Բ. Հատ. էջ 132–33). նոյն ձաոդնտիրը հաւանաբար ընդօրինակուած է Ս. Յակոբայ վանքին մէջ, ԺԳ. դարուն. գրիչն է Կիւրեղ կրօնաւոր. ստացող եղած են Պօղոս երէց, անոր մեռնելէն յետոյ, իր կինը Մելիքա, և ապա Անանա խաթուն: Նոյն ձեռագիրը, 1696ին, անտարակոյս կը գտնուէր Էլ–Պիրհիի Ս. Կուսի եկեղեցւոյն մէջ, Երուսաղէմի ճանապարհին վրայ, ուր կը հանդիպի Ծայրեցի (Արճախ) Աթանաս, և յիշատակարան մը կը գրէ նոյն ձեռագիր ձաոդնտրին մէջ. կը հասկցուի թէ Աթանաս իր եղբօր Բասելի հետ Պոլսոյ ճամբով կ'այցելէ Երուսաղէմ և իր ուխտը կատարելէ վերջ, կ'ուզէ մեկնիլ ցամաքի ճամբով, կու գայ Էլ–Պիրէհ, որ Միջագետքի հայ ուխտաւորաց կայանն էր, Նապղուսի ճամբուն վրայ: Ահա այդ եկեղեցւոյն մէջ կը գրէ սոյն յիշատակարանը:

«ի թուականութեան հայկական,
հազարերորդ հարիւրեակի
քառ տասն եւ թի հինգեակ ի աւելի.
զոր Աթանաս իմ Ծայրեցի՝
հանդերձ եղբաւրն իմ Բասիլի,
եկաք ի քաղաքս Կոստանդնի՝
որ է մայրաց մայր քաղաքի.
ևախ եւ յառաջ է Բիւզանդի.
կայսերական նախաթոռի . . .»

«Ճաւուրս մեծի Սրբոյ Էջմիածնի ի կաթողիկոսութեան տէր Նահապետին, և Սուրբ Երուսաղէմայ Յովհաննու և Միանասայ մեծագահ պատրիարքաց. նա և կոստանդնուպոլսի Սրբազան Պատրիարքի եփրեմին, և նորին աթոռակալին տէր Թորոսին և տէր Աստուածատուր աւագ քահանային . . : հոգետեմերի մուռն ծրի, ի գրան տիրամօր Սուրբ Աստուածածնի՝ ի Սուրբ Երուսաղէմայ ճանապարհի որ և զաղօթս յիշողաց մեզ պաշար լիցի՝ երկնաւիզ ուահի. ամէն»:

Յիշատակարանիս մէջ յիշուած Ծայրեցի երկու եղբայրներու ինքնութեան մասին Ս. Յակոբայ մատենադարանին (Թ. 390)

ձեռագիրը ունի հետեւեալ յուշագրութիւնը. «Նուաստ պարտաւոր բանասիրի Աթանասի Ծայրեցւոյ սկսեալ մատենիս սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ ընթերցեալ յանկ ածի ՌՃՂԶ (= 1697) ի թուին, յորժամ ես եւ իմ եղբայր Բարսեղ վարդապետ Ս. Երուսաղեմ եկաք»:

Էլ Պիրէճի հայկական եկեղեցին հոյակապ յիշատակարան մըն է քրիստոնէական ջերմեռանդ բարեպաշտութեան մեր պատուական նախնեաց՝ որ գիտցած են արժէքը երուսաղէմին և կարողացած են ըսել Ոսկերերանի հետ. «մտածենք մեր երուսաղէմ քաղաքին վրայ. մշտապէս յիշենք պայծառութիւնը անոր՝ որ յաւիտենական թագաւորին մայրաքաղաքն է» (Հմ. Սաղմոսի մեկնութեանն):

Ե

ԱՅՆՔԵԱՐԻՄ ԳԻՒՂԻ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԸ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

1. Այնքեարիմը Ս. Գրոց մէջ.

Այնքեարիմը՝ երուսաղէմէն, դէպի Արեւմուտք, վեցուկէս քիլոմեթր հեռաւորութեամբ գիւղ մըն է, չրջապատուած լեռներով, այգիներով եւ ձիթաստաններով: Ան՝ Յեսուայ գրքին, ըստ Եօթանասնից թարմանութեան, (Ժե. 60) Կարիմ քաղաքն է. Կարիմ կը նշանակէ այգի, և մին է Յուդայի տասնեւմէկ քաղաքներէն, որ կը յիշուին նոյն գրքին մէջ. Կարիմ կը պակսի եբրայեցերէն բնագրին մէջ, ոմանք կը կարծեն թէ նոյն համարները բնագրէն լինկած են. իսկ Յերոնիմոս այդ գիւղին չատ մօտիկ ապրած ըլլալով հանդերձ, նոյն համարին պակսելուն մասին ենթադրական մեկնութիւններ կու տայ, որք ընդունելի չեն նկատուած: Երեմիայի (Զ. 1) և Նէեմիի (Գ. 14) մէջ «Կարիմ»ը կը յիշատակուի Բեթհարիմ, որ կը նշանակէ տուն այգիի, իսկ

Այնքեարիմ՝ «աղբիւր այգիի»: Հաւանական է նաեւ որ նոյն ըլլայ Բեթհոգլիի հետ, որ դարձեալ կը յիշուի Ա. Թագ. Է. 11-ի մէջ: Այս տեղւոյն արդի գիւղին մօտ, գլխաւորաբար լերան կողին վրայ, կը գտնուէին հրէական գերեզմաններ, որ կ'ապացուցանեն այս վայրերուն հնութիւնը: Այնքեարիմը Ս. Յովհաննէս Մկրտչի աւանդական հայրենիքն է. հետեւաբար աստուածաշնչական քաղաք մը, որ գոյութիւն ունէր Աւետեաց երկրին Իսրայէլացւոց գրաւումէն յառաջ, եւ ան գաղթած չէ երբեք դեր մը կատարելէ Իսրայէլի պատմութեան մէջ: Ղուկ. Ա. 39ի մէջ կան հետեւեալ խօսքերը. «Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ՝ գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդայ. եւ եմուտ ի տուն Զաքարիայ...»: Այս խօսքերուն մէջ յիշուած «լեռնակողմը» վերագրեալ Այնքեարիմ քաղաքը կ'իմացուի, ինչպէս որ կ'ապացուցանէ Ս. Գերեզմանի կանոնիկոս՝ Երուսաղէմացի Յովհաննէս Մարթա ծանօթ պաղեստինացին իր հնախօսական մէկ գրուածին մէջ զոր հոս կ'ամփոփենք: Ան կը գրէ թէ 1253ին, Աստուած Իպն Աստուլ՝ Մպաի անուանի մատենագիր մը կը ձեռնարկէ չորս Աւետարանաց սրաբերէն քննական թարգմանութեան մը. ինչպէս որ ինքն ալ կը պատմէ, այս նպատակին համար կը գործածէ բազմաթիւ յունարէն, արաբերէն և խպտերէն օրինակներ: Յիշեալ կանոնիկոսը 1884ին, Մպտոց Երուսաղէմի Ս. Գէորգ վանքին մէջ կը գտնէ Իպն Էլ Աստուլի աշխատութեան ամբողջ մէկ օրինակը, ընդօրինակուած 1359ին. այդ թարգմանութեան մէջ նշանակուած է թանկագին ապացոյց մը հաստատող թէ Այնքեարիմը Յովհաննէս Մկրտչի հայրենիքն էր: Ղուկասի վերոյիշեալ համարը՝ «Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ գնաց ի լեռնակողմն փութապէս» դնելէ յետոյ, Իպն Էլ Աստուլ լուսաբանքին վրայ կը գրէ թէ՝ խպտի եւ արաբ թարգմանութեանց ձեռագիրները, լեռնակողմն (In-montana) բառին տեղ կը գնեն Այնքեարիմ: Կանոնիկոսը՝ այս ծանօթութիւնը յիշելէ զկնի կը յարէ թէ ինքն հաստատած է այս պարագան արաբերէն ձեռագրի մը մէջ, որ կը գտնուի Երուսաղէմի Մպտինները մօտ, 1326ին ընդօրինակուած Թոմաս Սայեղի կողմէն. այս թարգմանութիւնը, ինչպէս գրած է ընդօրինակողը, կատարած է յունարէն բնագրի մը վրայէն. Ղուկ. Ա. 39 համարին խօսքերը՝ ոչ թէ լուսաբանքին վրայ, այլ նոյն իսկ բնա-

գրին մէջ կը կարդացուին հետեւեալ կերպով. «Յարուցեալ Մարիամ յաւուրն այնոսիկ գնաց յԱյիվեարիմ, ի քաղաքն Ցուդայ...»: Պատական և եթովպական ուրիշ ձեռագիրներ ալ նոյն բառերը ունին (տե՛ս La Patrie de Saint Jean-Baptiste. էջ 123–126): Նոյնը կը հաստատէ նաեւ Փարիզի Ազգ. Մատենադարանին (թ. 3) երուսաղէմի վրացերէն ձեռագիր ծիսարանը (Ժ–ԺԴ դար), որ Օգստ. 28ին, Ս. Յովհաննէս Մկրտչի գլխատման տօնին առթիւ, կը յանօթագրէ հետեւեալը, «ի գիւղն Այիվեարիմ, յեկեղեցւոջն Սբբոյն Եղիսաբեթի, կատարի այս կանոն...» (տե՛ս Revue Biblique, 1924. էջ 611): Ուրեմն, այս վկայութիւններէն կը հետեւի թէ Արեւելքի քրիստոնեայ ժողովուրդները աւանդաբար գիտէին որ Այնքեարիմը Յովհաննէս Կարապետի հայրենիքն էր. նոյն աւանդութիւնը կը հաստատեն նաեւ Պաղեստինի ուխտաւոր ուղեգրաց վկայութիւններն եւ ա՛յն եկեղեցիներուն չէնքերը, որ պատմականօրէն գոյութիւն ունէին անցեալոյն մէջ: Նոյն պատմական տեղւոյն մէջ, գլխաւոր երկու եկեղեցիներ կային. մին նախապէս կը պատկանէր Ցունաց, ինչպէս ցոյց կու տայ հոն գտնուած մոզայիքի մը յունարէն արձանագրութիւնը, իսկ միւսն՝ Հայոց: Առաջինը ինչպէս յիշեցինք, ըստ աւանդութեան, Զաքարիա քահանայի տան տեղւոյն վրայ կառուցուած էր յանուն Ս. Յովհաննու Ծննդեան, բայց ան դուրս կը մնայ մեր այս ուսումնասիրութենէն: Մեր նպատակը պիտի ըլլայ հաստատել Այնքեարիմի հայկական եկեղեցիին և յարակից վանքին պատմականութիւնը:

2. Այնքեարիմի հայկական վանքին ու եկեղեցւոյն ծագումը.

Ղուկասու Աւետարանէն (Ա. 23–35) եւ աւանդութենէ կը հասկցուի թէ Զաքարիա քահանան Այնքեարիմի մէջ երկու տուն ունէր, մին քաղաքին մէջ, իսկ միւսը քաղաքէն դուրս, սարահարթի մը վրայ: Հայոց վանքն ու եկեղեցին չինուած էին այդ լերան վրայ: Զաքարիայի միւս տան տեղը, հո՛ն, ուր Եղիսաբեթ «թագուցանէր զանձն ամիսս հինգ», ս՛ուրբ Ս. Կոյսը Նազարէթէն այցելութեան եկած էր իր մօրաքրոջ աղջկան՝ Եղիսաբեթի. հայկական աւանդութիւնը այս յիշատակներուն կցած

է անվաւերական մը (Apocryphe) ուրիշ դրուագը. Եղիսաբեթ իր զաւակը մանկակոտոր Հերովդէսի վնասարարներէն ազատելու համար, կը փախչի լերան կողմերը եւ ժամանակ մը կը մնայ քահանոցի մէջ. Ան կ'աղօթէ Աստուծոյ ու կ'ըսէ «... բացցէ երկիր հրամանաւ քո տէր եւ կլլեսցէ զմայրս հանդերձ մանկամբս իմով եւ մի հայեսցին աչք իմ տեսանել զմահ որդւոյ իմոյ: Եւ զայս ասացեալ նորա առաժամայն պատառեցաւ լեառն եւ ընկալաւ զնա հանդերձ մանկամբ եւ կամարաձեւ ծածկեաց զնոսա լեառն», (Մանկութեան Աւետարան, Ձեռ. Ս. Աթոռոյ մատենադարանին, թիւ 1432): Աւետարանին այս յիշատակներով ոգեւորուած, հին դարերուն, հայ բարեպաշտութիւնը հոյակապօրէն կառուցած է Այնքեարիմի եկեղեցին ու վանքը. բայց դիտելի պարագայ մըն է որ եկեղեցաչէն մեր նախնիք, Ս. Երկրին մէջ, իրենց ներշնչարան ընտրած են ո՛չ միայն վաւերական Աւետարանաց դրուագները, այլ նաեւ օգտուած են անվաւեր գրուածքներու չնչին և օգտակար պատմուածքներէն, մասնաւորապէս եկեղեցաց չինութիւններու առթիւ, անխտիր ազդուած են նոյն գիրքերէն, և այս կերպով, Երուսաղէմի և չրջակայից մէջ բարեպաշտօրէն կառուցած են Յովակիմ–Աննայի, Դաթիզնայի Ս. Կուսին եւ Այիվեարիմի մեծածախս եկեղեցիները. նոյն իսկ մեր եկեղեցւոյ վարդապետներէն ոմանք իրենց մեկնողական գրուածոց մէջ աչքէ հեռի չեն պահած հայերէնի թարգմանուած անվաւերականները, (տեսնել այս մասին մեր յօդուածը «Հայ Աստղագէտ», 1925, էջ 110): Այնքեարիմի հայ հաստատութեանց ծագումը շատ հին է, ինչպէս յետոյ պիտի տեսնենք. հնախօսութեան հայթայթած ապացոյցները մեզի պիտի համոզեն թէ անոնք չինուած են նոյն իսկ Դ. դարուն վերջերը: Վերոյիշեալ Յով. Մարթա կանոնիկոսն է գրածեալ որ իր մէկ գրուածքին մէջ (Անդ. էջ 128–127), իբր ապացոյց նոյն եկեղեցւոյ հնութեան, մէջ կը բերէ Դ. դարուն, Սեբաստիոյ Պետրոս եպիսկոպոսին մէկ ճառը ընդդէմ Եւնոմիոսի, և, ի մէջ այլ ապացոյցներու, կը յիշէ այն տեղերը, որ, ըստ Աւետարանի, վկաները եղան Քրիստոսի գօրութեան և աստուածային առաքելութեան, և այդ տեղերը քրիստոնեայք սրբազան յիշատակներով զարդարած են: Նազարէթի Աւետման եկեղեցիէն յետոյ կը յիշէ Զաքարիայի եկեղեցին, Երուսաղէմի մօտերը, ի յիշատակ Ս. Կու-

սին, որ այցելութեան գնաց իր մօրաքրոջ դստեր եղիսաբեթի մօտ։

Ս.ընքեարիմի հայ եկեղեցւոյն եւ վանքին ուսումնասիրութեան առթիւ, մեր ձեռք հասած հայերէն յիշատակարանները դնելէ յառաջ, գլխաւոր օտար ուղեւորաց տեղագրութեան եւ հնախօսութեան ամփոփոյքը կը փութամք քաղել վերոդրեալ աշխատասիրութենէն (էջ 127–166) եւ կը դնենք հոս, նոյն վանքին եւ եկեղեցւոյն նկարագրութեան ամբողջութիւնը լրացուցած ըլլալու համար։

3. Ջանազան ժամանակի osար ուղեգիրներու վկայութիւնները Ս.ընքեարիմի նայոց վանիին ու եկեղեցւոյն նկատմամբ.

Ս.յն բոլոր օտար ուղեորներէն, որոնք այցելած եւ ուղեգրած են իրենց ծանօթութիւնները, ոչ մին կը յայտարարէ թէ նոյն հաստատութիւնները Յաչակրաց կողմէն չինուած ըլլան. եւ կ'ընդունին թէ՝ նոյն վանքն ու եկեղեցին Յաչակրաց թուականէն չատ յառաջ չինուած են, միայն ցաւալի է ըսել թէ բացի մեկէն, զոր պիտի յիշենք, խորհրդաւոր լռութեամբ մը, չեն խոստովանիր թէ Ս.ընքեարիմի նոյն հաստատութիւնները հայերի հնադարեան եւ հոյակապ հիմնարկութիւններ են՝ որոնց կը վկայեն հայերէն յիշատակարանները, ինչպէս որ պիտի տեսնենք։ Նոյն հաստատութիւնները, իբր հաստակառոյց եւ զարմանալի կոթողներ եւ հայ ճարտարապետութեան գլուխ գործոցներ, Ս. Երկրին մէջ, չեն ունեցած իրենց հաւասարը։

Վկայութիւններ osար ուղեգիրներէ.

Ս. Սեբաստիոյ Պետրոս եպիսկոպոսէն յետոյ, 530ին, նոյն վանքն ու եկեղեցին կը յիշատակէ Թեոդոս Աւագ Սարկաւագը, որ այցելած է Ս.ընքեարիմ եւ ծանօթագրած է զայն հետեւեալ կերպով. «Երուսաղէմէն մինչեւ Յովհ. Մկրտչի մօր՝ Եղիսաբեթի բնակած տեղը, հինգ մղոն կը հաշուուի»։ Երուսաղէմէն Ս.ընքեարիմ հեռաւորութեան ճիշդ չափն է այս։

Բ. 808ին, սրաշօսնական շահի անձնաւորութիւն մը որ Երուսաղէմի եւ շրջակայ վանքերու եւ քահանայից վիճակագրութեան վրայ ունի տեղեկագիր մը (Commemoratorium de casis Dei) խոթագրով, Ս. Յովհաննէս Կարապետի վանքը կը դասակարգէ մ'յն վանքերուն մէջ, որ Ս. Քաղաքէն երկու փարսախ հեռի կը գտնուին, իր խօսքերն են. «Ս. Յովհ. Կարապետի վանքը, ո'ր ան ծնած է, կը գտնուին երկու խահանաներ. — Ս. Թէոդոսի մէջ՝ երկու. — Ս. Սարգիսի մէջ՝ մին»։

Դ. Եպիփան անուն ուխտաւոր մը, (ըստ ոմանց, Թ. դարուն, ըստ այլոց, ԺՍ. դարուն կ'ապրէր), Յովհ. Մկրտչի հայրենիքը ցոյց կու տայ Երուսաղէմի եւ Էմմաուս-Նիկոպօլսոյ մէջ, կարիճ լերան վրայ։ «Ս. Քաղաքին մօտ, կը յարէ ան, դէպ արեւմուտք կը գտնուին երկու այրեր, որ կը պատուհակին Հերովդէսէն նահատակուած Բեթղեհէմի Մանկանց նշխարները։ Անկէց գրեթէ վեց մղոն, դէպ արեւմուտք կը գտնուի կարիճ քաղաքը»։ Կարիճը ինչպէս տեսանք, Ս.ընքեարիմն է, որ Յաչակրաց ժամանակ, յոյները կը կոչէին Օրիճ, իսկ լատին թագաւորութեան սկզբնական տարիներուն, պետական արձանագրութեանց մէջ կը կոչուէր Montana, եւ Ֆրանկ տիրապետութենէն սկսեալ, լատին պետական հողերու մասն կը կազմէր։ 1110ին Սեպտ. 28ին, Պաղտին Ս. Թագաւորը՝ կը հաստատէ, ի նպաստ Երուսաղէմի Ս. Յովհաննէս հիւանդանոցին, կատարուած նուիրատուութիւն մը, որուն արձանագրութիւնն հետեւեալն է. «Կը հաստատեմ նաեւ իմ նուիրատուութիւնը, որ է երկու գիւղ Պիրաֆաւա եւ Մոնթաւու, հողեր եւ տուներ Երուսաղէմի զանազան տեղերու մէջ»։ Պիրաֆաւան՝ այժմու Պիրասֆաւան է, որ Երուսաղէմի հրս. արեւմտեան կողմը կը գտնուի՝ Ս.ընքեարիմի մօտ։ Պաղտին Դ. ևս կը հաստատէ նոյն նուիրատուութիւնը 1154 Յուլիս 30ին։

Դ. Ռուսագի Դանիէլ վանահայր՝ 1113ին կ'այցելէ Ս.ընքեարիմը, եղիսաբեթը ու անոր զաւակը պահպանող վհուհի աւանդական պարագան յիշելէ յետոյ, կը յարէ թէ նոյն տեղւոյն վրայ կը գտնուի եկեղեցի մը՝ որուն տակ կար փոքրիկ այր մը, ու անոր դրան կից նստած էր ուրիշ եկեղեցի մը։ Զանց կ'ընենք 1130ին, 1150ին, 1170ին, 1185ին, 1187ին այն անանուն ուղեգրութիւններն, որոնք կը հաստատեն Ս.ընքեարիմի վանքին ու եկեղեցւոյն գոյութիւնը։

Ե. 1310ին, Մարհի Սանուդ կ'այցելէ Ս.ընքեարիմ եւ իր չի-

նած տեղագրական քարտէսին վրայ, նոյն տեղը ցոյց կու տայ հրե.—արեւմուտքը: Ուրիշ երկու քարտէսներ եւս միեւնոյն տեղը կը նշանակեն Ս.յնքեարիմը:

Զ. 1384ին, Նիկոլա Թրեմոպայեի, Ս.յնքեարիմը կը նկարագրէ հետեւեալ կերպով. «Զաքարիայի տան տեղւոյն վրայ շինուած է եկեղեցի մը կոստանդիանոսի մօր Հեղինէի կողմէն: Այս տեղւոյն մօտիկ կայ աղբիւր մը, հա՛ս էր որ Եղիսաբեթը ընդառաջեց Ս. Կուսին, երբ վերջինս կ'այցելէր իրեն. շինուած եկեղեցին կամարակապ էր, բայց հիմակ այլեւս գոմի վերածած են զայն. հա՛ս է նաեւ այն վհակը, որ Բեթղեհէմի մանկանց կոտորածի ժամանակ, ինքն իրեն բացուեցաւ, եւ Եղիսաբեթ պահեց իր մանուկը հոն, եւ վէմը այսպէս կիսաբաց մնաց մինչեւ այսօր: Հովիտին միւս կողմը, գրեթէ դիմացը, կայ նաեւ խիստ գեղեցիկ եկեղեցի մը, որ շինուած է նոյնպէս Ս. Հեղինէէն, հա՛ս է որ ծնած է Յովհ. Մկրտիչ եւ ուր կը բնակէին Զաքարիա եւ Եղիսաբեթ . . . »:

Է. Անցնինք այժմ վանահայր Կրոհինիոսի վկայութեան (1400): Ան Ս.յնքեարիմի Յովհ. Ծննդեան եկեղեցին յիշելէ յետոյ, Հայոց վանքին նկատմամբ կու տայ հետեւեալ վկայութիւնը. «Աեւելի հեռուն երրորդ լերան վրայ կը գտնուի Հայոց վանքը, որուն եկեղեցւոյն մէջ, աջակողմը, սեղանին մօտ, լեռը երկու կանգուն ճեղքուած եւ նորէն մոմի նման միացած է. երբ Հերովդէս Բեթղեհէմի մանուկները կը կոտորէր, Եղիսաբեթը Յովհ. Մկրտիչը առաւ եւ լեռը փախաւ եւ ըսաւ,— Ով լեռ, ընդունէ՛ մայրը եւ զաւակը, եւ լեռը բացուեցաւ»:

Ը. 1422ին, Յովհաննէս Բոլոնիր կ'այցելէ եւ կը գրէ. «Հոն մին միւսին վրայ, երկու եկեղեցիներ չինուած են, վերի եկեղեցին գրեթէ աւերակ է, վարի եկեղեցիին մէջ, պատին ափուցած են այն վէմը, ուր փոքրիկն Յովհաննէս պահուած մնաց մանկանց կոտորածին ժամանակ»: Միեւնոյն դարուն վերջերը, Ֆրանսացի Սուրիացի, Ս. Երկրին մեծաւորը (Custode) այն եկեղեցւոյն վրայ կը գրէ հետեւեալը. «Իմ առաջին պաշտօնավարութեանս (1485), եկեղեցին տակաւին կանգուն էր ամբողջութեամբ, բայց յետոյ փլած է եւ չէ վերաշինուած, բայց սեղանները իրենց տեղերը կը մնան . . .»: Իսկ 1483ին, Յովհաննէս տը Սոլմ եւ այլք կը գրեն թէ այս աւերումներուն հակառակ, ուխտաւորք երկար ժամանակ կը յիշեն պատերուն վրայ նկարուած սրբոց պատկերները:

Թ. Կուտովիչ, Էօժին Ռօժիր ուղեւորները կը նկարագրեն թէ «վարի եկեղեցին երկար ատեն դիմադրեց գործուած քանդումներուն անոնց, որ եկեղեցին ու վանքը յափշտակած էին եւ կը բնակէին հոն. հակառակ աւերներուն, տակաւին զարմանք կը պատճառեն այն որմանկարները, որ կը զարդարէին պատերը:

Ժ. 1531ին, Միտալացի Անսօլ ուղեգիր ուխտաւորը՝ զոր կը յիշէր «այն գեղեցիկ նկարը՝ որ կը ներկայացնէ Ս. Կոյս Մարիամը եւ Եղիսաբեթը այն տեղն իսկ, ուր իրարու հանդիպեցան, գրկախառնուեցան եւ փոխանակեցին իրենց ողջոյնները»:

ԺԱ. Անտարակոյս Մետանացիին նկարագրած այն նկարն է զոր՝ Ջուալլար, 1586ին կը տեսնէր նոյն եկեղեցւոյն պատին վրայ հինգ հազարերորդ մեթր բարձրութեամբ չրջանակի մը մէջ. համաձայն անոր, նոյն նկարը կը ներկայացնէր երկու կիներ, ոտքի վրայ կեցած: Ջուալլար, բայց աստի, կը գրէ նաեւ հետեւեալը. «Ս. Կուսի աղբիւրէն քիչ հեռի, այդիներով, ձիթաստաններով չրջապատուած խիստ բարեբեր լերան մը բարձունքին վրայ, կը գտնուէր Զաքարիայի տունը: Հոն չինուած էր գեղեցիկ եկեղեցի մը եւ վանք մը, բայց անոնք այժմ աւերակ են, վաղեմի հաստ պատերը միայն կան, ինչպէս նաեւ եկեղեցւոյն մէկ մասը, որուն որմերուն վրայ նկարուած են սրբոց պատկերները: Այս եկեղեցին ունէր երկու յարկ, բայց հիմակ տեղացիները հաստատուած են հոն. սոյն եկեղեցիին տեղւոյն վրայ էր որ, Ս. Կոյսը փութապէս այցելութեան եկաւ Եղիսաբեթին, երկար ամիս բնակեցաւ եւ արտասանեց իր «Մեծացուսցէ» երգը (տե՛ս վերեւ, նոյն, էջ 133–152):

Այժմ, սիրե գրենք Ս.յնքեարիմի Հայոց եկեղեցւոյն եւ վանքին նկատմամբ գիտնոց կողմէն կատարուած հնախօսական ուսումնասիրութիւնները, նոյն եկեղեցւոյն առանձնայատկութիւնները եւ ի ձեռն ունեցած ազգային յիշատակարանները:

4. Ս.յնքեարիմի հայոց վանքին ու եկեղեցւոյն հնախօսական ուսումնասիրութիւնները.

Սոյն վանքին ու եկեղեցւոյն նկատմամբ կատարուած հնախօսական քննութիւնները պիտի յիշատակենք.— Ա. 1854ին,

Գերմանացի Թոպլէր գիտնականը անձամբ կատարած է այդ վանքին ուերակաց ուսումնասիրութիւնը և սա եզրակացութեան եկած է թէ այդ աւերակները նշաններ ցոյց տուած են հեռաւոր հնութեան մը, մինչեւ ե. կամ նոյն իսկ Դ. դար. իր խօսքերն են. «Պատերը խիստ թանձր են, և ցարդ անվնաս մնացած կամարները՝ չատ հաստատուն: Պատերը՝ այնչափ հաստատուն են որ կարելի է ըսել թէ անոնք տասնեհինգ դարեր կարողացած են տակալ եւ վերծ մնալ փլուզումէ: Զափեցի անկիւնաքար մը՝ որ ունէր երկու մէթր երկարութիւն, վաթսուն սանթիմէթր բարձրութիւն և նոյնքան թանձրութիւն:

Աւանդութիւնը՝ այս հաստատութիւններուն համար ընտրած է խիստ սեպաձև զառիվայր մը՝ որ թոյլ չկրնար տալ մնեւնոյն հաւասարութիւնը ունեցող գետնի մը վրայ հաստատել մեծ չէնք մը: Մենք հոն ճշդրիտ չգտանք երկյարկանի չէնքի մը գոյութիւնը: Գուարէմոիոս՝ լատին կրօնաւորը նոյն վանքը կը նկատէ երկու մասի բաժնուած չինութիւն մը. կարելի է եզրակացընել թէ կային հոն ստորնայարկ չէնք մը, դէպի հիւսիս, եւ վերնայարկ չինուածք մը, դէպի հարաւ, մին միւսին նեւրը, խիստ զանազան հաւասարութեամբ, այնպէս որ՝ ստորնայարկ եկեղեցիէն վերնայարկ եկեղեցին կրնային երթալ սանդուխի մը միջոցաւ»: (Տե՛ս Topographie Von Jérusalem. Հար. Բ. Պերլին, *1854. էջ 355–356*):

Բ. երբ, *1861*ին, նոյն վանքին ու եկեղեցւոյն գետինը կատարեալ մաքրուած էր, և ստորնայարկը նորոգուած, անգլիացի Գոնտէր եւ Քիչներ անոնց մասին հետեւեալ տեղեկագիրը ներկայացուցին. «Այն Սիրրի Մարիամ ըսուած աղբիւրին արեւմուտքը, հարաւային բլուրին վրայ, և ռուսական նորաչէն հիւրանոցին խիստ մօտիկ, լատինք՝ *1861*ին, աւերակներ գտած են, երբ կը չինէին Զաքարիայի գիւղական տան նոր մասուռը: Գետինը մաքրուած էր *15–20* ոտք խորութեամբ և գտած են հին եկեղեցւոյն ստորին յարկը, Յովհաննէս Բոլոնըրի յիշատակութեան համաձայն. վասն զի նոյն ուխտաւոր ուղեգիրն էր որ *1422*ին, կը գրէր թէ Ալինքեարիմի վանքը ունէր ստորերկրեայ մասուռ մը և վերնայարկ եկեղեցի մը...: Հո՛ն ցոյց կը տրուի այն վէմը, որ մոմի պէս կակուղնալով, պատսպարեց փոքրիկն Յովհաննէս Մկրտիչ, Հերովդէսի պիտուորներու հալածանքէն:

Այս մասուռէն դուրս, դէպի հարաւ, կը տեսնուին կործանուած կամարներ եւ աղեղնաձև զարդեր (arceau), հին վանքի մը մնացորդը: Պատերը լաւ չինուած են եղերքները տաչուած կմբաւոր քարերով (bossage): Արեւմուտքէն կարելի է մտնել բակի մը մէջ, ուր միակտուր սիւնի մը վրայ, կը բարձրանայ քարէ կամարի հատուածը (segment) ցած սրածայրով. ասիկա կամարի մնացորդն է, և միւս մասը փլած: Քանի մը քարեր չեզակի քանդուած են, բայց անոնց վրայ չեն տեսնուիր որմադրի նշանները:

Բակին հիւսիսային կողմի ճեմելիքէն, նեղ աստիճան մը կը տանի վերև յիշատակուած վերնայարկ եկեղեցին, որուն պատերուն վարի մասը միայն մնացած է, կոզակը և սեղանը կարելի է դնել: Եկեղեցիին ներսի կողմը, յանցելումն, կճակով (stuc) ծեփուած էր և կային որմանկարներ: Կճաճեփին վրայ կը նըշմարուին չատ մը որմագիրներ (graffito) և քարի մը վրայ կոչտօրէն քանդակուած է քահանայապետին եփուդը (éphod) կամ վակասը. այս քանդակը չինուած է անտարակոյս համաձայն աւանդութեան մը՝ որ անճշտօրէն կ'ենթադրէ թէ Զաքարիան քահանայապետ մ'էր: Կոզակին հարաւային կողմը կը գտնուի աւազանը: Ցետոյ մատուռին կողմը, դարձեալ դէպի հարաւ, կը տեսնուին խուցերու և աստիճաններու հետքեր: Այս աւերակները մասամբ մը ծածկուած էին գետնին տակը մրգաստանի մը՝ որ երբեմն կը ծածկէր բոլոր այս տեղերը, ուր գտնուած են մատուռը, խուցերը եւ ուրիշ չէնքեր: Քարէ յիշատակարաններու պակասը ցոյց կու տայ թէ այս վանքին չինութիւնը ժ-ի. դարու չի վերաբերիր և թէ Խաչակիրներու ժամանակ չինուած չէ ան: Այս տեղ կան երկու աղբիւրներ»: (Տե՛ս Survey of W. Palestine, Mémoirs III. Londres. *1883, էջ 60–61*):

5. Նոյն եկեղեցւոյն առանձնայատկութիւնները.

Պաղեստինագէտ Մէյսթէրման՝ իր վերագոյն յիշատակուած երկասիրութեան մէջ, նկատի կ'առնու թէ բոլոր այցելուք՝ եկեղեցիէն աւելի ուշադրութիւն դարձուցած են վանքին աւերակներուն. ան կը յարէ թէ եկեղեցին կը ներկայացնէ յատկանշական և հրահանգիչ քանի մը առանձնայատկութիւններ, որ կը թուի թէ խուսափած են նոյն այցելուներու ուշադրութենէն. իր

բացատրութիւնները կը դնենք հոս նոյնութեամբ: «Վանքը չինուած է խոշոր քարերով, որոնց ուշադրութիւն դարձուցած են բոլոր ուղեգիրները. բայց եկեղեցին սնարքը պէտք է դիտել աւելի ուշադրութեամբ: Հիւսիսային արեւելեան կողմը, անկիւնաքարի մը չափն է 1 1/2 մէթր երկարութիւն, 1 մէթր բարձրութիւն եւ 1,15 լայնութիւն եւ 5,000 քիլոկրամ ծանրութիւն. ատոյդ է որ անոր շուրջի քարերը այնքան մեծ չեն, բայց դարձեալ խոշոր քարեր են: Նկսի կողմը, կոզակը պահած է չորս վիմաշարքեր, իւրաքանչիւրը 65 սանթիմէթր բարձրութեամբ եւ ամենք ալ մէկ մէթրէ աւելի երկարութեամբ: Քարերը լաւ չարուած են եւ կցուածքները ա՛յնպէս կատարեալ են որ կարելի կ'ըլլայ բաղդատել զանոնք հռովմէական այս կերպ կառուցուածքներու հետ:

Կոզակին մենախուցներէն (retrait) երեսին միոյն վրայ քանդակուած է քահանայապետին եփուտը, զոր արդէն ծանօթագրած են անգղիացի քննիչները, ինչպէս տեսանք վերև: Աւելցընենք թէ ինչ որ դիտողութեան արժանի է, սա է թէ այս փոքրիկ քանդակը առաջին անգամ կճակով ծեփուած վիճակի մէջ գտնուած է, ինչպէս նաև կոզակին մնացեալ մասերը. և այս կճակը ծածկուած էր նկարներով: Արդ այս նկարները, պէտք է դիտել որ ամէնէն ուշ, ժ-ի. դարուն չինուած են, ինչ որ աւելի կը բարձրացնէ եփուտը ցոյց տուող քանդակին հնութիւնը: Եփուտը՝ հին քրիստոնէից կարծիքին համաձայն, կը վերաբերէր Զաքարիային: Ցիշատակուած որմագրերը քանդակուած են քարի վրայ: Կոզակին մէջ կը տեսնուին հայկական, յունական եւ լատինական հին խաչերու գծագրութիւններ, ամէնքն ալ գըտնուած են նկարներով զարդարուած կճակին տակ: Եկեղեցւոյն կողմնակի պատերուն վրայ, կը նշմարուին իրարու վրայ եղած երկու ծեփեր, երկուքն ալ կը կրեն գունաւոր հետքեր, երկրորդը յայտնապէս զարդարուած է սրբոց պատկերներով: Սեղանին դրաւած տեղը չատ աւելի դրական հնութեան մը նկարագիրը կ'ընծայէ: Սեղանին հիմը, որ դեռ կը տեսնուի, 1,90 մէթր երկարութեամբ, 1 մէթր լայնութեամբ և 50 սանթիմէթր թանձրութեամբ կրային միակտուր քար մըն է: Այս քարին վարի մասը սկիզբէն հողին մէջ մտած է. ահա թէ ինչպէս, սեղանը անընդմիջաբար կառուցուած է բարձրութեանը վրայ այն երեք

աստիճաններուն՝ որ կը տանին դէպի կոզակը: Վերի աստիճանը գրեթէ երկու մէթր երկարութեամբ փորուած է սեղանին հիմը կազմող քարին մէջ, այնպէս որ՝ սեղանին առջև 30 սանթիմէթր լայնութեամբ տեղ մը միայն կը մնայ: Ուրեմն յայտնի է թէ՝ սեղանը իր նախնական տեղը կը գրաւէր, և պատարագիչը սեղանին հետևը կը կենար, երեսը դէպի ժողովուրդը դարձուցած:

Առաքելական հրահանգներու համաձայն, եկեղեցիները դէպի արևելք կառուցանելու սովորութիւնը ե. դարուն սկսած է. քահանան կը պատարագէ սեղանին առջև, նայելով դէպի արևելք և քամակը դարձնելով ժողովրդին: Սակայն նախապէս չինուած եկեղեցիներուն մէջ, ընդհանրապէս սեղանը կը պահէր իր նախնական տեղը, մինչև մատրան կամ եկեղեցին քանդումը կամ նորոգութիւնը, նոյն իսկ մինչև ժ-ի. դար: Ցանցելումն, կը տեսնուի որ սեղանը կը հաստատէին կոզակին առջև, յարմարցնելով այնպէս, որ քահանան կարենար սեղանին հետևը կենալ, դէմքը դարձնելով հաւատացեալներուն: Բայց այս պարագան կանոնէն չեղում մըն էր, և չի գտնուիր ո՛եւէ օրինակ մը՝ որով կարելի ըլլայ հաստատել թէ ժ-ի. դարուն, Պաղեստինի մէջ, այս հին սովորութիւնը նորոգուած է:

Դիտենք նաև թէ Մեծացուցածի եկեղեցին ճշդիւ արևելք չի նայիր: Իր առանցքը կը կազմէ մագնիսային հիւսիսով 138 աստիճաններու անկիւն մը, այսինքն թէ նոյն եկեղեցին կը նայի հիւսիսային արևմուտքէն հարաւային արևելք: Որովհետև եկեղեցւոյ անարքը լերան կռթնած է. զուցէ առարկուի թէ արեւը իր ծագումէն չատ վերջը միայն այստեղ կ'երևի, երբ աչքը արդէն կը տեսնէ որ արեւը չատ կանուխէն հակած է դէպի մէջօրէն, որով կարելի է բացատրել թէ ինչո՛ւ եկեղեցին դէպի արևելք ուղղուած չէ: Այս խորհրդածութիւնը ստուգիւ կ'ուննար իր արժէքը և թոյլ պիտի չտար պնդելու եկեղեցւոյն դէպի արևելք հակելու (orientation) պարագայի մասին, եթէ սեղանը ունենար առաքելական կանոններով պարտադրած դիրքը: Բայց իրաւամբ, վանդ պատարագիչը երեսը դէպի հիւսիսային արևմուտք դարձնելուն պատճառաւ, պէտք է եզրակացնել թէ եկեղեցին չինողները դէպի արևելք նայելու ո՛եւէ օրէնք չէին գիտեր, և ուրիշ մտազբաղում չեն ունեցած, այլ միայն եկեղեցին կառուցանել իրենց բարեպաշտութեան թելադրած

ծրագրին և տեղւոյն տրամադրութեան պահանջմանց համաձայն։

Վերջին նկատողութիւն մըն ալ, սեղանին ձախը, կողակին կողմը, կայ նեղ դուռ մը, որուն սեմը հողէն վեր է 30 սանթիմէթր և կը տանի քառակուսի, բայց անկանոն սենեակ մը, գրեթէ երկու մէթրնոց։ Ամբողջ վարի մասը փորուած է ժայռին մէջ, 1–2 մէթր բարձրութեամբ։ Այս սենեակը միակն է իր տեսակին մէջ. եւ ո՛եւէ եկեղեցիի մէջ, նման չինուածքի մը չենք հանդիպիր։ Ինչո՞ւ համար այս փոքրիկ սենեակը խնամքով մը կապուած է կողակին հետ։ Արդեօք Զաքարիայի տա՞ն կը վերաբերի. և այս սենեակը՝ իր ժայռոտ մասովն արդեօք Եղիսաբեթի հինգ ամսուան առանձնութեան բնակարա՞նն էր. ուրիշ ի՞նչ յիշատակ կրնար ներկայացնել ա՛յն քրիստոնէից, որ կառուցին այս եկեղեցին։ Անօգուտ պիտի ըլլար՝ այս մասին կարծիք մը յայտնել, վասն զի ուղեկիրները ծանօթագրութիւն մը չեն հաղորդած մեզ»։ (Տե՛ս "La Patrie de Saint Jean Baptiste", էջ 172–175)։

6. Այնթեարիմի հայոց վանքին ու եկեղեցւոյն ազգ. յիշատակարանները.

Այնքեարիմի Ս. Կարապետի վանքին հիմնարկութեան ծագման մասին պատմութիւնը արձանագրութիւն մը չունի, միայն Անաստաս հայ վարդապետը՝ իր Ս. Տեղեաց ցուցակին մէջ, «Մամիկոնեանց վանքն որ յանուն Ս. Կարապետին» խորագրով կը յիշէ երկու վանքեր, մին՝ քաղաքէն դուրս, որ «Լեռնակողման» Հայոց վանքն է, միւսը՝ Սիոնի մէջ։ Մամիկոնեանք՝ քանի որ Տարօնոյ Ս. Կարապետ վանքին հովանաւորը եղած են, անտարակոյս պիտի փափաքէին Ս. Կարապետի ծննդավայրին՝ Այնքեարիմի մէջ, կառուցանել իշխանավայել յիշատակարան մը։ Հայք՝ մինչև Խաչակրաց ժամանակ, Մամիկոնեանց սոյն վանքին խաղաղ կերպով տիրացած էին և ո՛չ ոք զլրենք անհանդիստ կ'ընէր։ Սալահէտտինի երուսաղէմի գրաւումէն յետոյ է որ նոյն տեղւոյն վրայ կը ծագին սեպհականութեան խնդիրներ։ Սալահէտտին՝ Պաղեստինի չրջակաները, իրեն հետ պատերազմող յաղթականներուն չնորհած էր հողեր, որոնց մէջ կը գտնուէին վանքեր և եկեղեցիներ։ Սալահէտտին հողային այդ «պարգևները» հին և նոր սեպհականատէրերուն միջև խնդիրներ երևան բերին և պաշտօնական դիմումներու դուռ բացին (Տե՛ս "Meistermann", la "Terre Sainte", 1925, էջ 33)։ Այդ կարգի հողերէն կը կարծուէին Հայոց Լեռնակողման վանքի սեպհականութիւնները և այդ պատճառաւ նեղութիւններու կ'ենթարկուէին տեղւոյն վանականները։ Ս. Աթոռոս դիւանական թղթոց մէջ կա՛յ Եգիպտոսի Սուլթան Մէլէք Սալիհի (1240–1250) մէկ հրովարտակը, որով կը թոյլատրուի հայ վանականաց, համաձայն արքունական հին հրամանագրերու, տիրանալ նոյն վանքին և տեղի չտալ ոտնձգութիւններու, և կ'արգելու գրացիներուն անլիրաւ ընթացքը (Տե՛ս Ժուլկգրկի. Պտմ. Երուսլ.ի, Հատ. Ա. էջ 184)։ Բայց կ'երևի թէ չատ քիչ ժամանակի համար, օգուտ մը ունեցաւ այս բարձրագոյն հրամանը, վասն զի, ինչպէս տեսանք ուխտաւոր ուղեգիրներու մանրամասն ծանօթագրութենէն, գրացիները չարուեստակած են իրենց ապօրէն պահանջները, վանքն ու եկեղեցին քանդելու, անբնակելի դարձնելու իրենց բոլոր յարձակումներով։ Հայ միաբանութիւնը ամէն գնով կը տոկար սակայն, և կը չարունակէր իր աշխատանքը. այնպէս կը տեսնուի որ արուած նեղութիւններուն հակառակ, անխափան կը կատարուէին ժամասացութիւն, գրչագրական և գրական գործունէութիւններ, ինչպէս ցոյց կու տան յիշատակարանները, մեր այս տեսութեան ի վկայութիւն. հոս կը դնենք նոյն հատակոտոր յիշատակարանաց օրինակներ։ Այսպէս, Ցովհաննէս արեղայ մը. 1386 թուին, ձեռագիր մը կը նուիրէ «Լեռնակողման» վանքին. «. . . յիշեսջիք զվերջին զսպացաղ զովանիս արեղայս, որ զգիրս գնեցի ի տէր Գրիգորէ որ ի Սսէ. եւ դարձեալ տուի ի ձեռնակողմն ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց ի թուին ՊԼԵ» (Ձեռ. Թ. 89)։ Դարձեալ նոյն ձեռագրին մէջ, ուրիշ գրիչ մը, Սեւիսանոս, 1390ին, կը գրէ. «Գրեցաւ սակաւ գիրս ի հոչակաւոր անապատս ձեռնակողմանս, որ յանուն Սբ. Ցովհաննիս Կարապետին, ՊԼԹ. Ցուլիս Ժ. ձեռամբ Սեւիսանոսի . . . Սբ. Երուսաղէմի Գրիգոր Մըսըրցուն»։ Այս Սեւիսանոս Սեբաստացին է որ 1390ին, նոյն վանքին մէջ, կ'ընդօրինակէ «Մաշտոց» մը. «Գրեցաւ սակաւ գիրս ի հոչակաւոր անապատս ձեռնակողմանս որ յանուն Ս. Ցովհաննիս Կարապետին ի թուին ՊԼԹ. ձեռամբ Սեւիսանոսի, յեպիսկոպոսութեան Ս. Երուսաղէմի տէր Գրիգորի Մըսըրցւոյ», (Թ. 661)։ Դարձեալ նոյն գրչէն, 1392ին,

«... Ողորմեա Ք. եւ միաբան եղբարցս վեհականութեանս կրաւնաւորացս եւ գործաւորացս առ հասարակ. ի թվ. ՊԽԱ., կազմեցաւ ձեռամբ անարժան Ստեփանոսի. (Թ. 271), «Սաղմոսարան-Ժամագրքի» մը, 1392 Թուականաւ նոյն գրչին մէկ յիշատակարանէն. «... ևս եւ ինձ ի տուն խոցելոյս եւ մեռոյ խաւարելոյս բերաւարժ աշխատողի տուրս եւ կազմողի Ստեփանոսի եւ միաբան եղբարցս վեհականութեանս մեղաց թողութիւն խնդրել ... ի թվ. ՊԽԱ. կազմեցաւ Սաղմոսարանս». (Թ. 271): Նոյն վանքին մէջ Մատթէոս կրօնաւոր մը կը կազմէ Սարգիս Շնորհալւոյ «Մեկ. Կաթողիկեայ Թղթոց» գիրքը (Թ. 299) ու կը գրէ հետեւեալ անթուական յիշատակարանը. «... զկազմող տուրս զՄատթէոս զյոգնաւոր տուտանուն կրաւնաւոր յիշեսջիք յաղօթս ձեր. արդ կազմեցաւ սա յանապատիս ընդ հովանեաւ Սբ. Կարապետին եւ Սբ. Վիտին եւ Սբ. Սծածնին եւ Սբ. Ծնընդեան...»: 1417ին կը յիշատակուի Լեռնակողմեցի Աստուածատուր միակեց մը՝ որ Պօղոս Գառնեցի Ս. Աթոռոյս առաջնորդին (յետոյ կաթողիկոս) հետ, խոշոր Ճառընտիրի մը գրչութեան նպաստած է, «եւ ընդ նմին յիշեսջիք զԱստուածատուր միակեցն զլեռնակողմեցին, որ ի ծախսին աւգնական եղեւ ...»: (Թ. 1): Ուրիշ մը, Յովհաննէս արեղայ, 1448ին, գարձեալ նոյն վանքին մէջ կը կազմէ «Յայտմաւուրք» մը (Թ. 1822) և կը գրէ. «կազմեցաւ այսմաւուրս «Լեռնակողման» վանսն Սբ. Յովհաննու Մկրտչին ձեռամբ տուտանուն Յովհաննէս անուանբ արեղայի 'ի թվին ՊՂԷ. ...»: Այս յիշատակարանին մէջ կը յիշուին նաև Լեռնակողման վանքի Կիրակոս միայնակեացը եւ Տրապիզոնցի մայր մը: Կայ նաեւ յեպիսկոպոսութեան Սբ. Քաղաքի Երուսաղեմայ տէր Մեսրոպայ եւ տէր Աբրահամի» ընդօրինակուած անթուական Պահաձարանի մը յիշատակարանը, ուր այլ ազգային Ս. Տեղեաց հետ կը յիշատակուի նաև սուրբ Լեռնակողմը (Տե՛ս «Նօսարք Հայոց», էջ 19): Մեսրոպ և Աբրահամ եպիսկոպոսները Ս. Աթոռոյս պահակալ գտնուած են 1445–1461: Սբ. Աթոռոյս (Թ. 1662) ձեռագիրը ընդօրինակած են Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ, մին՝ Մանուէլ, 1466ին, միւսն Սարգիս, 1469ին, Լեռնակողման վանահայր Աբրահամ քահանայի համար, յիշատակարաններն են. «... գրեցաւ սա ի թվիս Հայոց ՋԺԲ. ... ձեռամբ Մանուէլի 'ի խնդրոյ Աբրահամ հիյի. հաւր վանից Սբ. Յովհաննու Մկրտչին Լեռնակողմանեն», «... ձեռամբ Սարգսի սպասաւորի Սբ. Հրեշտա-

կապետաց՝ ի յիշատակ եւ ի վայելումն արբասիր կրօնաւորիս Աբրահամ արեղային, սպասաւոր Սբ. Յովհաննու Լեռնակողմանեն. թվ. ՋԺԸ. մայիս ԺԵ.»: Ուրեմն յայտնի կ'ըլլայ թէ այս միջոցներուն Ս. Խաչ եարիմի վանքին միաբանութիւնը ճնշումներու տակ ստիպուած է թողուլ վանքը, որ դրացիներուն քանդումներուն հետեւանքով հետզհետէ սկսած է աւերիլ: Ինչպէս տեսանք, օտար ուղեգիրներ մինչև 1586, կը յիշատակեն վանքին կիսակործանման պատերը և անոնց վրայ նշմարուած որմագրերը: Բայց կը թուի որ՝ վանքը որքան որ բռնագրաւուած էր, սակայն հայ վանականներ և հայ ուխտաւորներ մերթ ընդ մերթ կը յաճախէին հոն թէ՛ այցելութեան և թէ՛ ուխտի համար. այսպէս Ս. Աթոռոյ պատրիարք Մինաս Ամթեցի իր Օրագրութեան մէջ, 1694ին և 1695ին կը յիշատակէ թէ՝ նոյն ժամանակ պատրիարքական խնդիր մը ծագած էր և Ս. Յակոբի միաբաններէն ոմանք Լեռնակողման վանքը երթալով հոն ժողով մը կը գումարեն և կ'որոշեն գրել Կ. Պոլիս ու աշխարհական տեղապահ մը խնդրել կառավարելու համար Ս. Աթոռը. ու այս պատճառով վէճեր և յուզումներ պակաս չեն ըլլար վանականներու միջև:

Դարձեալ նոյն պատրիարքին Օրագրութիւնէն կ'իմացուի որ որպէսզի լատին կրօնաւորք սիրով և յարգանօք վարուին Լեռնակողման վանքն այցելող հայ վանականներուն հետ եւ հիւրընկալեն զանոնք, Մինաս պատրիարք՝ իբրեւ յիշատակ, լատինաց վանքին նուէր կը ղրկէ վաթսուն երկու կտոր պղինձ ու մետաքսահիւս Քիւրմանի պատուական գորգ մը, (տե՛ս Տ. Հ. Թ. Սաւալանեանց, Պատմ. Երուսաղէմի, Ս. հատ. էջ 648): Թերեւս այդ ժամանակներէն մնացած է տարին անգամ մը, Մեծ Պահոց վեցերորդ շաբթուն, հայ ուխտաւորներուն Ս. կարապետի վանք երթալու ու լատինաց եկեղեցին մէջ իրենց ուխտը կատարելու սովորութիւնը: Իսկ առաջները, մինչդեռ կանգուն էր տակաւին Լեռնակողման Հայոց վանքը, ուխտաւորները կ'երթային ու մէկ կամ երկու օր կը մնային հոն՝ ներկայ գտնուելու համար սուրբ պատարագին (անդ, էջ 648–649):

Իսկ գալով նոյն վանքին ԺԸ. դարու աւերեալ վիճակի մասին Ս. Աթոռոյս վաստակաւոր միաբաններէն Յովհաննէս եպս. Երուսաղիմացի (Հաննէ, † 1733), կը գրէ թէ իր ժամանակ, նոյն վանքին պատերը միայն գոյութիւն ունէին, իր տուղերն են.

«. . . Էր սա փառաւոր վանք, և ունէր եկեղեցի գմբեթաչէն յոյժ պեղեցիկ ի ձեռս աղգիս Հայոց լեալ, որ և միաբանք իսկ բնակէին ի սմա, բայց ի չարութենէ . . . ի վաղ ժամանակաց երկու հարիւր ամաւ յառաջ փախեան ի վանացն, և . . . աւերեալ զվանքն ի սպառ քակեցին, որոյ և որմունքն միայն այժմ երեւին: Բայց գոյ մերձ եկեղեցւոյն դարպաս մի մեծ իբր պանդոկ, որ ասեն թէ՝ զինեատուն վանիցն...» (Պատմ. Երուսաղէմի, էջ 296): Հայ միաբանութեան տիպոզական լքումէ յետոյ է որ լատինք՝ 1621ին, անյաջող փորձերով, և ապա, 1725ին, վերջապէս կը տիրանան նոյն տեղերուն՝ իսպառ ջնջելով հայկական յիշատակարանները որ կը գտնուէին վանքին աւերակաց մէջ (Ժամնկգրկի. Պատ. Երուսաղէմի, Հար. Ա. էջ 304–5):

Ստեփանոս Սեբաստացի գրիչը, իր երկու յիշատակարաններուն մէջ, ինչպէս վերեւ տեսանք, Ս.ինքեարիմի վանքը կը կոչէ հիչյակաւոր Անապաս եւ իրաւունք ունէր. վասն զի, համաձայն օտար ուղեգիրներու նկարագրութեան, զոր վերև տեսանք, արդարեւ նոյն վանքը հռչակաւոր էր իր ճարտարապետական կառուցուածքով եւ ներքին զեղեցիկ որմանկարչութեամբ. ա՛ն հիանալի եւ հոյակապ յիշատակարան մըն էր, որ կը վկայէր Մամիկոնեանց նախարարութեան եկեղեցաչէն գործոց, որոնց լծորդուած էր դիւցազնական ոգին, որ հովանաւորը եղած էր, ինչպէս Մշոյ Ս. կարապետին, նոյնպէս Ս.ինքեարիմի Ս. Յովհաննու Մկրչի փառաչուք տաճարին:

Զ

ՔԷՐԷԿԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԵՒ ԱՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ

1. Քէրէկ հաղաթին անուններ, ամրութիւններ եւ դիրքը.

Քէրէկ Ս. Գրոց Քիր–Մոաբն է (Եսայի ԺԵ. 1), կ'ըսուի նաև Քիր–Հարես (Երեմիա ԽՀ. 31). Քիր–Հարես (Եսայի ԲԵ. 11). Քիր–Հարեսեդ (Եսայի ԺԶ. 7, Դ. Թագ. Գ. 25) եբրայական բը-նագրին այս անուններն Եօթանասնից Թարգմանութեան մէջ կը նշանակեն քաղաք մը որ ունի ամրութիւններ. իսկ մեր նախնիքը կը գոհանան Քիր–Մոաբը թարգմանել «պարիսպ Մոաբացւոյն» և միւս համարներն ալ՝ միայն Մոաբ անունով, մինչ Էականին մէջ վերոյգրեալ անուններ կը նշանակեն Մոաբացւոց մայրաքաղաքը. իսկ Բ. Մակ. ԺԲ. 16 համարի մէջ գործածուած Քարայի բառը կը նկատուի Քէրէկ քաղաքը: Ոմանք Մոաբայի արձանագրութեան մէջ յիշատակուած Qarka կամ Qarha անունը կը կարծեն արդի Քէրէկը. ընթերցողին կը յանձնարարուի կարդալ Դ. Թագ. Գ. 1–27 համարներն, ուր կը պատմուին Ծուղայի և Իսրայէլի Թագաւորներուն Մոաբացւոց հետ ըրած պատերազմներուն հետևանքները և Մոաբայի արտաուէչ արարքը ողջակիզելով իր անդրանիկ որդին Քիր–Մոաբի պարսպաց վրայ: Քէրէկը՝ Բիւզանդացւոց ժամանակ, կոչուած է Քարաք–Մոաբ, ինչպէս ցոյց կու տայ Մատթպայի նորագիւտ մոզայիքէ քարտէսը, նաև Մոաբ–Քարաք, ըստ Ստեփանոս Բիւզանդացւոյն. իսկ Թէոդորէ Կիւրացի մեկնիչը (Ե. դար), երբ Եսայիի վերոյգրեալ ԺԵ. 1 համարին մէջ, կը խօսի Մոաբացւոց վրայ, կ'ըսէ թէ «անոնց մայրաքաղաքն էր այն քաղաքը՝ որ հիմայ կը կոչուի Քարաք–Մոպա», Եաչակիրք կ'ըսէին «Դրագ», իսկ Արաբացիք՝ Քէրաք: Արաբացի պատմիչներէն Եագուտի, Ապուլֆէտայի եւ Տիմիսքի տուած տեղեկութիւնները ճշդիւ կը յարմարին արդի Քէրէկին: Նոյն քաղաքը Մեռեալ Ծովուն արևելեան կողմը, Լի-

սան ըսուած հրուանդանին քիչ մը արեւելեան հարաւ կը գտնուի ուղղակի գծով ծովէն չորս քիլոմէթր հեռու. սեպաձեւ սարահարթի մը վրայ շինուած է ան, Մեռեալ Ծովէն 1400 մէթր բարձր, տեսակ մը հսկայական արձանեբոյն՝ որ դարերու ընթացքին արհամարհած է արեւելքէն եկող ամէն կարգի թշնամի յարձակումները: Քաղաքին ամրակուռ պարիսպները մեծ մասամբ կը մնան մինչեւ ցայսօր, զարդարուած քառակուսի աշտարակներով, առաջին անգամ անոնց հիմը դրած է Մովսէս Քաջբերունի՝ Մովսէս սուրբերկրեայ և բարձրադիր գանգրան բաժանումներով: Խաչակիրներէն յետոյ, սուլթան Պիպարս էր որ նորոգեց նոյն ամրութիւնները, տեղ տեղ դնելով արաբական արձանագրութիւններ: Եգիպտական իշխանութեան ժամանակ, Բէրէկի բերդը ծառայած էր իբր բանտ. սուլթաններէն Մէլէք-Էն-Նասըր 1294ին հոս աքսորուած և բանտարկուած էր, 14 տարեկանին՝ ան սուլթան հռչակուեցաւ Բէրէկի մէջ: 1390ին, եգիպտական ապստամբները՝ դարձեալ հոս բանտարկեցին սուլթան Պարքուքը՝ որ յետոյ բանտէն ազատուելով դարձաւ իր իշխանութեան գլուխը, ինչպէս կը յիշէ մեր յիշատակարանները մին: Ի հնուէն Բէրէկ մտնելու ճամբան ժայռի մը փորուած անդխաձև նեղ և դժուարանցանելի փապուղիներ էին: Բէրէկ գտնուած հրէական, պարսկական, հռովմէական և արաբական դրամները ցոյց կու տան թէ Բէրէկի պարիսպները բացի Հրեաներէն, նշաւակ եղած են պարսիկ, հռովմայեցի և արաբական բանակներուն յարձակման: Նոյն քաղաքը, Հռովմայեցւոց կայսրութեան օրերէն, Գ. դարուն ալ, յայտնի քաղաք մըն էր, մինչեւ անգամ Էլակապալ կայսրը Բէրէկի մէջ դրամ կոխած է. գտնուած է նմոյշ մը յիշեալ դրամէն, որուն մէկ կողմը՝ կայսեր դիմնեպատակ կիսանդրին և դրոշմուած է Մարկոս Աւրելիոս Անտոնինոս անունով. միւս կողմը՝ երիտասարդի մը կերպարանքին տակ, բախտը ներկայացուած է, մէկ ձեռքով ամաղթիղջիւր մը բռնած, իսկ միւսով ղեկ մը, Բարաք-Մովաք արձանագրութեամբ:

2. Բէրէկը Խաչակրաց ժամանակ, բերդը եւ անոր եկեղեցիին նկարագրութիւնը.

Քրիստոնէութիւնը շատ կանուխէն մուտք գտած էր Բէրէկի մէջ: Ե. դարուն Բարաք-Մոպա անուամբ եպիսկոպոսութիւն մը կար. իր եպիսկոպոսներէն երկուքը ծանօթ են, մին Դեմետրիոս՝ որ 536ի Երուսաղէմի ժողովին ներկայ գտնուած է, իսկ միւսը՝ Յովհաննէս աշակերտը Սաբայի վանական Ստեփանոսի: Մատոպայի մոզայիք քարտէսին Բէրէկի մասը անվնաս մնացած ըլլալով՝ Բէրէկը հոն կը տեսնուի ժայռի մը վրայ թառած, մեծամեծ չէնքերով, եկեղեցիներով և սիւնազարդ սրահներով: Խաչակիրք՝ երբ Բէրէկի ափերեցին, քաղաքը գրեթէ ամայի գտան և աւերակ. Երուսաղէմի Լատին թագաւոր Ֆուլկի օգնանպատ Բայէնն էր որ 1136ին, յաջողեցաւ ամրացնել անոր պարիսպները՝ աւելցնելով եկեղեցի և ուրիշ կարեւոր չէնքեր, և Բէրէկը եղաւ Անդրյորդանանի գլխաւոր պողոտան: Բէրէկի և Մոնրէալի պարոնութիւնը իր դիրքովն ու տարածութեամբ Երուսաղէմի Լատին թագաւորութեան կարեւորագոյն պարոնութիւնն էր: 1177ին, Ռընօ Տը Շաթիյլեոն՝ իր կնոջ մահուամբ՝ երկրորդ անգամ ամուսնացաւ «Թրագի տիկնոջ՝» Անդրյորդանանի պարոն Հոնֆրօա տը Տօրոնի այրուն Էթիէնթ տը Միլլիի հետ, եւ Բէրէկի պարոնութիւնը ստանձնելով՝ քաղաքին եւ մղեց Սալահէտտինի 1183ի, և հետեւեալ տարիներու յարձակումները. բայց ան 1187ի պատերազմին՝ սպաննուեցաւ Սալահէտտինէ. եւ անոր այրին մէկ տարուոյ չափ պաշտպանեց Բէրէկը՝ որ սովին պատճառաւ միայն անձնատուր եղաւ: Խաչակրաց տիրապետութեան ժամանակ, Բէրէկի ամայութիւնը եկան չէնցնելու զանազան գաղթականներ. այնպէս որ ծովային և ցամաքային վաճառականութիւնը մեծապէս ծաղկեցաւ. Մեռեալ Ծովուն վրայ անընդհատ կ'երթեւեկէին վաճառաբարձ նաւեր, ինչպէս երբեմն Յուստինիանոսի օրով. այնպէս որ երթեւեկող նաւերուն տուրքը մեծ եկամուտ մը եղած էր Բէրէկի պարոնութեան. այս վիճակը ալ աւելի զարգացաւ Ռընօ տը Շաթիյլեոնի պատերազմասէրէ և յանդուգն ձեռնարկներուն առթիւ: Բէրէկի պարոնները իրենց ընդարձակ սահմաններուն վրայ, դիւրութիւններ կու տային վաճառականաց, ինչպէս նաև առանձնաշնորհումներ՝ Երուսաղէմի

Ս. Յովհաննու հիւանդանոցի ասպետներուն, որպէս զի անոնց հաշուոյն երթևեկող նաւերը ղերծ մնային մաքսէ: Լատիներէն նոյն արտօնագիրները կը մնան ցարդ, ինչպէս Բայէն 1152ին, նոյնպէս Տը Շաթիյլեոն 1177ին, վերահաստատած են այդ արտօնութիւնները:

Բէրէկի բերդին նորոգութիւնը կ'սկսի Երուսաղէմի լատին թագաւորներու ժամանակ: Նշանաւոր է նոյն բերդի եկեղեցին, որուն նկարագրութիւնն է հետևեալը. «բերդին արևելեան ճակատը չինուած է այն միևնոյն վարպետներէն՝ որ Թորթոզի մայր եկեղեցւոյն ամենէն հին մասը չինեցին, վասն զի երկու շէնքերուն մէջ միևնոյն է վիմագրական նշաններու չարքը: Պատերուն դուրսի կողմի քարերը քիչ յղկուած են և եզրաքարերը խիտ չարուած:

Բէրէկի բերդին փոքր եկեղեցին ունի կոզակ մը և երեք գեղանամէջով պարզ նաւ մը: Կոզակը կը կազմէ երկրորդ պատին արտաքին մը եւ մեծազանգուած որմի մը կցուած է, եւ որ կարուած անկեան մը քառակուսիի մը յատակագիծը ունի: Նաւը ծածկուած է կորաձև որբանով մը և պարզ կխսասիւներու կրած հենանակներով: Կխսասիւները միայն ճակատակուած են. ճակատակը կը մեղմանայ քառակուսի յատակագիծով բարբառորին (imposte) տակ, ինչպէս հենանակալը. կամարի բարաւորը կխսասիւներու բարաւորները կ'երաչխաւորէ, անոնք իրը կարած (profil) ունին գօտի մը, փորոքներէ (rainures) շրջանակուած փորուածք մը (gorge) և գաւազան մը (baguette):

Ինչպէս Montjoieի մայր եկեղեցւոյ նաւուն մէջ, կողմնակի պատերը մեծ աղեղներով՝ կրկնակամար, առանց հենանակալի քանդակուած են: Ուղղանկիւն պատուհանները կամարին մէջ մտած ձևով յարդարուած են, հարաւի կողմէն երկու գերանամէջերով (travée), իսկ հիւսիսէն միայն մէկ գերանամէջով: Կոզակը ունի միայն փոքր կամարաձև պատուհան մը: Գլխաւոր լոյսը կ'առնէ ճակատի մեծ պատուհանէն: Վերջինս ունի կրկնակ շրջազարդ (chambranle) մը որ կորաձև է, նման այն մայրադրան (portail) որուն վրայ ալ չինուած է: Այս մայրադրան վերին կորութիւնը իրը ցցուակ (moulure) ունի ցցանկիւնին (arête) վրայ պարզ փորուածք մը և կը շրջանակուի բարաւորներու ցցուածին նման կամարաքիւով (archivolte): Ինչպէս

Montjoieի մէջ, այս մայրադուռը բարաւոր չունի: Մեծ կամարը ունի պորտի քար մը (clef), մինչ ճակատի պատուհանները՝ կտրտնական կցուած մը: Ճակատը կը վերջանայ հորիզոնական գծով:

Տեղւոյն ներքին հաղորդակցութիւնները բարելաւելու համար, ԺԳ. դարու ընթացքին, ճակատը չինուած լայն սանդուխով մը մայրադուռը խափանուած է. այն առեն դուռ մը բացած են առաջին գերանամէջին հարաւային պատին մէջ և պատրսպարած են զայն ծածկոյթի մը տակ, որ մեծ սրահին ծածկոյթին դիմացը կը գտնուի: Պէրութի և Գազայի մայր եկեղեցիներու նման ցցանկիւն կամարով քառակուսի շէնք մ'է, եւ որ ունի պատշգամ մը: Հարաւային և արևմտեան կողմը ան ունի երկու կորաձև կամարներ՝ կտրտնական կցուածով եւ առանց զարդի:

Այս մատուռը մեծ նմանութիւն ունի Montjoieի նաւով եկեղեցիին հետ, և որ ինքնին վանքին նախնական մատուռը կը նկատուի: Ան կը տարբերի Թորթոզի եկեղեցիէն իր պատերուն վիմաշարքովը. բայց այս մայր եկեղեցիին հետ ան ունի աչքի զարնող համանմանութիւններ, որոնք են. միևնոյն վիմագրական նշաններ, կամարներուն մէջ միևնոյն ուղղանկիւն պատուհաններ, կխսասիւներուն վրայ միևնոյն ճակատակներ, մայր դուռներու վրայ միևնոյն կամարաքիւը և միևնոյն ձևը բարաւորներու և Բէրէկի յատուկ պարուրազարդերու (boudin): Հաւանական կը թուի որ միևնոյն վարպետը Ժ-ի. դարուն վերջերը հսկած է երեք շինութիւններուն: Այս եկեղեցին 1271ին մզկիթի փոխուած է:

Բերդը կը պարունակէ քաղաքային ճարտարապետութեան երկու նշանաւոր մասեր, հարաւային արևմուտք, բերդին տիրոջ տունը, և հարթավայրին դէպի կեդրոնը, մեծ սրահը:

Տունը ունի դիտանոց մը, ունի երկու սրահներ՝ վարի եւ վերի, ցցանկիւն կամարներով չինուած: Վերի սրահը ունի երկու կրկնակ պատուհաններ: Սրահին ծայրը արևելքէն կապուած է կխսաշրջանակային աշտարակ մը որ կը պարունակէ ցցանկիւն կամարով չինուած ուղղանկիւն սենեակ մը. արևմուտքէն կլոր աշտարակ մը սիւներով կապուած սրաձև կամարազարդ սենեակով մը: Հինգթերթ կխսածաղիկ խորով (զարդ, cavet) մը կը շրջապատէ սենեակը և անոր արտաքին պատուհանը կը կրէ իր շրջապատին վրայ միևնոյն զարդարանքը: Կը թուի թէ այս աշ-

տարակը չինուած էր ԺԳ. դարուն և ցցանկիւն սրահները 1180–1200»: (Տե՛ս Camille Enlart ի Les monuments des Croisés dans le Royaume de Jerusalem, II. p. 96–98):

3. Քէրէկի հայ գաղութը եւ իր եկեղեցին.

Քէրէկի ճիշդ ծաղկեալ վիճակին, 1181ին, Երուսաղէմի համբով, Քէրէկ կու գար Կիլիկիոյ իշխաններէն Ռուբէն Բ., Լևոն Մեծագործ թագաւորին եղբայրը: Ռուբէն նպատակաւ մը կ'այցելէր Քէրէկի տիրոջ՝ որ էր, ինչպէս վերև նշանակեցինք, Տը Շաթիյլեոն, որ իր քաջագործութիւնները հասուցած էր մինչեւ արկածախնդրութիւն և կողոպուտ: Ռուբէն անտարակոյս լսելով նոյն պարոնին համբաւը, ըստ Սմբատ Պատմչի և այլոց, Քէրէկ գացած էր կնութեան առնելու անոր Իզապել դուստրը: Ռուբէն էր «բարեմիտ, առատ, տեսլեամբ գեղեցիկ եւ ի գինուրութեան արի եւ աջող ի նետելն», Պատմչին ըստ այս յատկութիւններէն ունէր. ուստի յաջողեցաւ հաճոյել իր նպատակին. մեծածախ հարսնիք մը կատարեց Քէրէկի մէջ և մեկնեցաւ Կիլիկիա: Ռուբէն, ինչպէս ի համբաւոյ, նոյնպէս անձամբ տեսաւ Քէրէկի եւ այս կողմերուն բարգաւաճ վիճակը, և առևտրական նպատակաւ բազմաթիւ գաղթականներու խուժումը. հաւանական է որ՝ ան իր վերադարձին՝ թելադրեց Կիլիկեցի հայերը կամ իր հետեւորդները՝ հաստատուելու Քէրէկի մէջ, օգտուելու համար Լատին իշխանութեան թոյլտուութիւններէն, առանց մտաբերելու թէ՝ Տը Շաթիյլեոնի արկածախնդրութիւնները օր մը կործանումի պիտի առաջնորդէին Քէրէկ քաղաքը և Լատին իշխանութիւնները: Քէրէկի մէջ հայ գաղութի մը գոյութիւնը ստոյգ է. ան տեւած է մինչեւ ԺԹ. դարու կէսը. յայտնի է թէ Խաչակրաց մեկնումէն յետոյ, որչափ որ Հայք արաբական իշխանութեան տակ, պահեցին իրենց գոյութիւնը, չնորհիւ իրենց եկեղեցւոյն՝ որուն ծոցէն չզատուեցան դարերով, հակառակ բազմապիսի դժուարութիւններուն, բայց կորսնցին իրենց լեզուն ու կենցաղը, իբացնելով հետզհետէ իրենց դրացիներուն կենցաղական սովորութիւնները, ինչպէս կը նկարագրեն ուղևորք և հնախօսք, յետոյ դժբաղդ պարագաներու տակ, ձուլուեցան ուրիշ ազգերու հետ. միայն անոնցմէ երկու ընտանիք յերուսաղէմ և երկուք՝ ի Բեթ-

զնէմ, չատ ժամանակ առաջ հաստատուած են: Այս ընտանիքներուն սերունդները պետական տեսմարներուն մէջ արձանագրուած են էլ-Պեհվի: Իսկ անոնց ազգատոհմին մէջ մինչեւ ցարդ Հնթում անունը գործածական եղած է սա աւանդութեան համաձայն, իբր թէ Քէրէկի հայերը Հեթում թագաւորին միջոցաւ Կիլիկիայէն Քէրէկ գաղթած են: Ճիշատակարանները կը հաստատեն թէ Կիլիկիոյ Հայոց իշխանները անխնամ չէին թողած այդ գաղութները, մասնաւորապէս Երուսաղէմ, Կիպրոս, Աքքոնա և Քէրէկ գտնուող հայեր կը վայելէին արքունի օժանդակութիւններ, (տեսնել այս մասին «Սիսուան» էջ 482): Ս. Սիոնի մատենադարանին Թ. 1822 ձեռագիրը «Ցայսմաւուրք»ը, իր յիշատակարանով վաւերագիր մ'է որ կը հաստատէ այս պարագան: 1316ին, Դրազարկի մէջ Վահան գրիչ կ'ընդօրինակէ այդ Ցայսմաւուրքը, ի յիշատակ իր հօրը Սահմանոսին և մօրը Ոսկեհատին. ահա այս ձեռագիրն է որ Օշինի որդին Լևոն Դ. Հայոց թագաւորը (1320–1341), յատուկ պատգամաւորութեամբ Քէրէկ կը ղրկէ, իբր նուէր Հայոց եկեղեցւոյն. այդ ձեռագրին 1329ի և 1330ի յիշատակարանները նոյնութեամբ կը դնենք հոս իբր պատմական վաւերագիր:

«Պարգեւ է գիրս ի Լեւոն թագաւորեն Հայոց: Ի Քարաւ յեկեղեցին վանացական:— Ով սուրբ եղբայրք, որ ընթերնոյք զարդոցս ընդունութիւնն եւ զխաչարուին ու սխիթարիչ հոգով. Յիշեցիք ի Քրիստոս զՊարոն Վասիլն, զտէր Սիմեոնայ կրայիլ, Բաղդերն, որ է ետուն Լեւոն թագաւորին, որ եթեր զգիրս ձեզ ի սխիթարութիւն. դուք խնդրեցիք ի Քրիստոսէ իւր թողութիւն եւ իւր նախնեացն արքայութիւն եւ ի բանիսն ձեզ ազատութիւն եւ Տէրն կատարէ զխնդիրն ձեր ի բարին»: .... «Եւ զանարժանս այդ յիշեցիք զԳրիգոր երեց? Սիմեոնայ կրայիս որ ակի ի հետ իմ Պարոնին. ու բերաք գիրս Բարաքոյ եկեղեցւոյն. Թվ. ՉՀՀ (= 1329)....»

«Ես Լեւոն թագաւորս ամենայն Հայոց ի թվին ՉՀԹ (= 1330) շնորհեցի զգիրս Բարաքոյ Հայ ծառայնոյն որ յամենայն ժամ կարդան յեկեղեցւոջ զնարհիրուացն զնահատակութիւն եւ զքաջութիւն հաւատոցն, որ վասն անուանն Քրիստոսի յանձինս իւրեանց կրեցին, զոր չնեն ծառայքն եւ քաջալերեալ յորդորին ի սէրն Քրիստոսի եւ հաստատին ի հաւատս նորին եւ հասցերութեամբ տանին քաղցր վշտաց եւ նեղութեանց, զոր կրեն վասն անուանն Քրիստոսի ակն ունելով երա-

ևակաև յուսոյն եւ հետեւողք ղինին քազմաչարչար մարտիրոսացն, եւ յորժամ ընթեռնուն եւ լսեն զչարչարանս մարտիրոսաց, նա զմեզ յաղաւթս իւրեանց։... Ու կու աղաչեմ զհանուանայդ, որ զկարդալն ամենայն այսոյք չայնիք վասն սիրոյն Քրիստոսի որ [ի աւրհնեալ] յաւիտեանս»։

Այս յիշատակարաններուն մէջ Լեւոն Թագաւորէն զատ կը յիշուին Պարոն Վասիլ Բաւղէր և Գրիգոր երէց։ Վասիլը՝ յիշատակարանէն կ'երեւի, Լեւոն Թագաւորին քեռին է, անոր պաշտօնն էր արքունի սեղանին անտեսութիւն, որ կ'ըսուի Պողոս ըստ Ալիշանի («Սիսուան» 484–485) Պողոս բառով պէտք է հասկնալ Ֆրանս. Boutillier բառը, որ կը նշանակէ սեղանապետ։ Իսկ Գրիգոր երէց արքունի ատենադպիրն էր։

Նուիրուած ձեռագրին վերոյիշեալ յիշատակարաններուն մէջ Բէրէկի եկեղեցւոյն անունը չէ յիշուած, բայց Երուսաղէմի հայ պատմիչները կը յիշատակեն թէ նոյն եկեղեցւոյն անունն է Ս. Գեորգ, և մեր առած տեղեկութեանց նայելով՝ Բէրէկի խալամական թաղին մէջ կը գտնուի եկեղեցի մը նոյն անուամբ, և տարին մի անգամ, Ս. Գէորգի տօնին, Ցոյնք հոն կ'երթան պատարագելու. տարակոյս չկայ թէ նոյն եկեղեցին կը վերաբերէր Հայոց, և օտարական հնախօսի մը գրածին համաձայն, նոյն եկեղեցւոյն մէջ մինչև ցարդ անվնաս կը մնան պատերուն որմանկարները։

Բէրէկէն բերուած յիշատակարան-քարի մը կեղծ արձանագրութենէն խաբուելով՝ Աստուածատուր եպիսկոպոս Տ. Ցովհաննէսեան իր Պատմութեան մէջ կը գրէ (Ա. հատ. էջ 187–188) թէ Բէրէկ ունեցած է նաև Ս. Յակոբ անուամբ եկեղեցի մը, Հեթում թագաւորէն հինուած. նոյնը կը կրկնեն ծանօթ հնագէտ Բէյրմոն Կաննօ և Բրօֆ. Մաքլէր, յենլով նոյն կեղծ յիշատակարանին վրայ որ այժմ կը գտնուի մեր ժառանգաւորաց վարժարանի թանգարանին մէջ, և յայտնի է անոր կեղծութիւնը այլանդակ և անընթեռնլի գրերուն ձևէն։

Մեր այս տողերուն եղրակացութիւնը սա է թէ Բէրէկի հայք գաղթած էին Կիլիկիոյ կողմերէն, Խաչակրաց ժամանակ, Կիլիկեցի թագաւորներ մասնաւոր հոգածութիւն ունէին անոնց վրայ. կառուցած էին Ս. Գէորգ եկեղեցին, դժբախտ պարագաներ եւ ճանապարհներու դժուարութիւնները պատճառ դարձան որ ցրուի նոյն գաղութը և այլք տիրանան անոր եկեղեցւոյն։

Բէրէկի նոյն ցրուած գաղութին պատմական կեանքի մասին դժբաղդաբար ծանօթութիւն չունինք. բայց կ'երևի որ անոնց մէջ չէին պակսեր ուշիմ և բանիմաց հայեր։ Ժ. դարու առաջին քառորդին կամ կիսուն կը հանդիպինք Բէրէկցի վաճառականի մը՝ որ կ'ապրէր Նոր Ջուղայի մէջ Գերաք աղա անուամբ։ Ցարութիւն Թ. Տէր Ցովհաննեանց իր Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան գործին մէջ (Ա. հատ. էջ 139–140) կը խօսի Գերաք Աղայի մասին և կ'ըսէ թէ ան Յակոբ Աղայի որդին էր և վաճառականութեան մէջ երեւելի էր. առևտուրի զբաղում ունէր Եւրոպայի, Աստրախանի և Գէլանի կողմերը։ Գերաք Աղա երկու որդի ունեցաւ, մէկուն անունը Յակոբ, որմէ ծնաւ Յովհաննէս, որ Ջուղայի հալածանքներու ժամանակ հեռացաւ և գնաց Սուրաթ, ուր վաճառականութեան ու ազգասիրութեան կողմէն նշանաւոր հանդիսացաւ։ Գերաք Աղայի գործերու մասին լիուլի տեղեկութիւն չունինք. բայց ան՝ որովհետև Ջուղայի Ս. Աստուածածին եկեղեցիին ժողովուրդներէն էր, նորոգել տուաւ նոյն եկեղեցին և ունի հոն յիշատակներ։ Յիշատակութեան արժանի են այն երկու գեղարուեստական նկարները զոր Վենետիկի մէջ նկարել տալով Ս. Աստուածածնի եկեղեցիին ընծայեց, եւ որոնք մինչեւ այժմ նոյն եկեղեցիին հիւսիսային և հարաւային պատերուն վրայ բեւեռուած են։ Նոյն պատկերներուն համար հետեւեալ կերպով կ'արտայայտուի Յ. Տէր Յովհաննեանց (անդ. Բ. հատ. էջ 196), Գերաք Աղա նոյն պատկերները Վենետիկի մէջ ճարտար պատկերահանի մը ձեռքով կտաւի վրայ նկարել տուաւ պատին չափին ու յարմարութեան համաձայն, և բերաւ իրենց տեղերը գետեղեց զանոնք։ Հիւսիսային պատին պատկերն է Հերովդէսի պալատը և Ս. Յովհաննու գլխատումը։ Նոյն պատկերին ներքեւ կը գտնուի պատկերը Գերաք Աղայի որ ձեռնամած աղօթքի կեցած է, եւ ձեռնամածութեան մէջ գրուած է Գերաք։ Հարաւային պատին պատկերն է Յիսուսի քառասնօրեայ գալուստն ի Տաճար, եւ անոր ներքեւը կը գտնուի Գերաք Աղայի կնոջ և անոր երկու զաւակներուն պատկերը։ Ս. Աստուածածնի եկեղեցիին վրայ իր կատարած նորոգութեան եւ այլ յիշատակներուն համար Գերաք Աղա յետ վախճանի նոյն եկեղեցիին հարաւային դրան առջեւ թաղուած է եւ տապանագիրն ալ հետեւեալն է.

Այս է տապան բարեպաշտի՝
Հաստատահաւատ քրիստոնէի,
Սզաւէն հայ Գիւրաքեցի՝
Որդի զոլով սա Պարոնի,
Գերաք աղայ ազօրմելի։
Ով հանդիպողք ի յայսմ չիրմի,
Լի բերանով դուք զողորմի.
Թիվն. ՌՃԾԷ (= 1708)։

Գերաք աղայի մասին կը պատմուի նաև հետեւեալը.

Պ. Արմենակ Սաքզեան «Նոր Ջուղայեցի վաճառականի մը անուան հայկական երկու մեսափներու առթիւ» գրուած յօդուածի մէջ (Անահիտ. 1929, Մայիս–Յունիս Ա. տարի, թիւ 1, էջ 57–65) կը գրէ թէ 1921ին գարնան Ֆլօրանսօ գանուած միջոցին, պարճկլօի թանգարանին մէջ ուշադրութիւնը գրաւած են փաթթոցաւոր գէմքեր կրող մետաղներ, որոնց երկուքը հայերէն արձանագրութիւն ունեցեր են և երրորդ մը՝ լատիներէն։ Այս վերջինը Սուլթան Սէլիմ Ա.ի պատկերը կը կրէր և եղիպտոսի գրաւման ի յիշատակ յօրինուած էր։

Հայկական մետաղները իրենց երեսի կողմը կը կրէին կնդանագիր մը.— մէկուն վրայ՝ իրանը միայն, միւսն՝ ամբողջ մարմնով,— և յետսակողմը՝ համանման նշանակներ, եղերքներուն վրայ բոլորաձև դրոշմուած են արձանագրութիւնները որ նոյնն են մէն մի կողմ։

Անձնաւորութեան գլուխը խորշոմներով բեռնաւոր, ճակատէն տեանուած կը ներկայանայ, իրանը միայն ցոյց տուող մետալին վրայ՝ քիչ մը քովընտի ծռած,— չեչուած դիմագծերով ու յատաջակարկառ քիթով։ Երեսը՝ ածիլուած, թեթև ընչացքով, կորովի և խիստ արտայայտութիւն մը ունի։ Հագած է մուշտակէ օձիքով վայելուչ վերարկու մը, գօտիով մը մէջքը սեղմուած, և որուն քղանցքները զանգակաձև կ'ընդլայնին։ Թիկնոց մը որ ձախ կողմ կը կոճկուի՝ ըստ պարսկական սովորութեան, կը տեանուի վերարկուին ներքև։ Սէ ձեռքով համրիչ մը կը դարձընէ, մինչ ձախը ազդրին կը կրթնի։

Այսպէս է պատկերացուած դիմանկարը, ուր աչքի կը զարնէ նաև մեծազանգուած փաթթոց մը։

Ցետսակողմին վրայ կ'երեւնան չորս նշանակներ։ Գառն Աստուծոյ, որուն կ'ակնարկէ արձանագրութիւնը և որ կեդրոնը զետեղուած է, ամենէն կարևորն է։ Ս. Հոգւոյն ազաւնին քրիստոնէական երկրորդ նշանակն է հոն։ Վեր բարձրացող ափսէ մը և արևը՝ Պարսկաստանի դինանշանը կ'ոգեն։ Վերջապէս, մեղուներու պարս մը որ կը թռչի դէպի ինչ որ փեթակ մը պէտք է ըլլայ, ըստ ամենայն հաւանականութեան՝ աշխատանքի եւ գործունէութեան այլաբանութիւն մը կը ներկայացնէ։

Յարգելի յօդուածագիրը կ'աւելցնէ թէ անյնար եղած է ամբողջապէս քակել արձանագրութիւնը։ Երեսակողմը, «ես եմ ծառայ Յիսուսի Քրիստոսի» բանաձևէն զատ, ան կը կարդայ «Ջուղայցի» բառը, ինչպէս և Գրիգոր . . . ևից Գևորքի» անունը։ Հօրենական անուն մը որուն միայն վերջաւորութիւնը ևից կը տեսնուի, գրուած է «Գրիգոր» ծննդեան անունէն, «Գևորքի» ծագման տեղւոյն անունին միջեւ։ Այդ անունը կը սերի այժմեան Քհրիէն, որ Պաղեստինի մէջ գիւղ մ'է, Յորդանանի ձախ եզերքին վրայ։ Հոն կար ատենով հայկական հին գաղութ մը 1330ին, երբ Կիլիկիոյ Լեւոն Դ. թագաւորը բարաք գիւղի եկեղեցւոյն կը նուիրէր Յայսմաւուրք մը՝ իր ինքնագիր յիշատակարանով։

Ցետսակողմին վրայ կ'երևայ «Յիսուս Քրիստոս Գառն Աստուծոյ որ շնորհից . . . աւևնայն երկրի» պարբերութենէն յետոյ, հայկական տոմարի 1122 տարեթիւը, որ կը համապատասխանէ Քրիստոսի Թուականին 1672–73 տարւոյն։

Ներկայացուած անձնաւորութեան հագուածքը ժէ. դարու պարսկական զգեստաւորման կը մօտենայ, ինչպէս կը տեսնենք, օրինակի համար, ժ. Պ. Թավէրնիէի պարսիկ զգեստով կենդանագիրը (1712)։

Յօդուածագիրը յետոյ մէջ կը բերէ Յ. Տէր Յովհաննեանցի մեր վերեւ յիշատակած Գերաք Աղայի եւ անոր որդւոյն մասին գրածը ու անոր տապանագիրէն կ'եզրակացնէ թէ Գերաք Աղա ծագմամբ Քէրչկ քաղաքէն ըլլալով հաստատուած է ի Նոր Ջուղա ու վաճառականութեամբ զբաղելով վէնետիկ գացած ու չինել տուած է վերոյիշեալ մետաղները։

Հ. Ղ. Ալիշանի Հայ–Վենետ գիրքին մէջ (էջ 501 եւ 503) կը յիշատակուին 1° Գէորգ–Միխայէլ ընտանիքը, ծագմամբ Ջուղայեցի և ժէ. դարէն սկսեալ Իտալիա հաստատուած։ Այս գերդաստանին իտալացած սերունդները մինչեւ հիմակ կը պտնուին Լիվոր-

նիոյ մէջ։ 2° Առաքել Դիրաքեան մը, նաւապետ կամ նաւավար, որուն նաւուն անունն էր Մատռնա Տէյլա փաչէ (Ամառուածամայր խաղաղութեան)։ Ասոնք հաւանաբար միևնոյն ընտանիքէն էին։

Մեր այս պատմական մէջբերումներով աւելի կը զօրանայ արժէքը Քէրէկի հայ գաղթականութեան, որ արժանացած էր Կիլիկեան հայ թագաւորաց հովանաւորութեան եւ խնամոյ։ Քէրէկի հայերէ ոմանք Զուղայի, Երուսաղէմի կողմերը և այլուր տեղափոխուելով երևելի հանդիսանալնին կ'ապացուցանէ թէ ծագմամբ Կիլիկեցի նոյն ժողովուրդը իր մէջ կը պահէր կենսունակութիւն մը, որով կարողացաւ ան դիմադրելու ահեղ մրրիկներու եւ երկար դարեր պահեց իր գոյութիւնը, եւ անոնց բնկորները՝ որ Քէրէքէն թէև յորդի ունգի նման հողմավար եղան, բայց գացած տեղերնին արմատ բռնեցին և ուռճացան, Գերաք Սլան իր յիշատակներովը զմայլելի օրինակ մ'է այդպիսիներուն։

Գրուածքիս խմբագրութեան համար, բաց ի վերոյգրեալ աղբիւրներէն, օգտուած ենք նաև հետևեալ գիրքերէն.

Dictionnaire de la Bible, par F. Vigouroux, *1904*, Paris տե՛ս բառն Kir Moab, էջ *1895–1906*։

Guide du Nil au Jourdain. etc. par Meistirmann. Paris. *1909*, տե՛ս էջ, *252–259*. Քէրաքի մասին։

Է

ՀՈՎՈՒԱՆՈՑԻ ԵԿԵՂԵՑԻՆ

1. Հովուանոցի եկեղեցւոյն վերաբերեալ ազգային յիշատակութիւններ.

Բեթղեհէմէն կէս ժամ հեռի, դէպի արևելք, Պէյթ–Սահուր գիւղին մօտ կը գտնուի այս եկեղեցին, որ ձօնուած է յիշատակին այն հովուաց՝ որոնց աւետեց հրեշտակը Յիսուս Քրիստոսի Ս. Ծնունդը, ըստ Աւետարանի։ Երուսաղէմի հայ միաբանու-

թիւնը, ի հնուէն, այս եկեղեցիին մէջ կը կատարէր Յունուար 5ին Ծննդեան Ճրագալոյցին կամ Եպիփան գիշերի պաշտամունքը և կ'երգէր «Փառք ի բարձունս» հրեշտակային երգը։ Ըստ սաղմոսական ծիսարանի, Քրիստոսի Տնօրինական գործերուն տօնակատարութիւնները տեղի կ'ունենային այն տեղերը՝ ուր մեր Տէրը կատարած էր իր Փրկագործութեան խորհուրդը։ Այսպէս սահմանեալ հրահանգներու համաձայն, պաշտամունք կը կատարուէր Ս. Յարութեան, Գողգոթայի, Սիոնի, Համբարձման, Գեթսեմանիի, Ղազարիոնի եւ այլ եկեղեցեաց մէջ, ինչպէս ցոյց կու տայ սաղմոսական հին ձայնոցը։ Ըստ այսմ, Քրիստոսի Ծննդեան տօնը Բեթղեհէմի եկեղեցւոյն մէջ կատարուած միջոցին, նոյն տօնը Ճրագալոյցին կը տօնախմբուէր «Հովուաց» եկեղեցին, զոր չատերը սխալմամբ կը գրեն «Հովանոց»։ Մինչև ԺԲ. դար, մեր ձեռագիր ծիսարանները Ս. Ծննդեան Ճրագալոյցին առթիւ, կը հրահանգեն նո՛յն օրը երթալ Հովուանոցի եկեղեցին և կատարել օրուան կանոնը։ Փարիզի և Օքսֆորդի մատենադարանաց Ը. կամ Թ. դարու ձեռագիր երկու Տօնամակները կը պարզեն մեզի նոյն օրուան արարողութիւնը՝ Հովուանոցի եկեղեցւոյն մէջ։ Այդ երկու հնադարեան յիշատակարանները կ'ամբողջացընեն Դ. դարու լատին ուխտաւորուհի Էթէրիայի Հովուանոցի եկեղեցւոյ մասին գրած նկարագրութիւնը. վասն զի անոր Օրագրութենէն ինկած է այդ մասը։ Նոյն եկեղեցւոյ մասին մէջ կը բերենք հետևեալ ազգային յիշատակութիւնները, ժամանակագրական կարգաւ։ 690ին Գրիգոր քորեպիսկոպոս Արշարունին, «ընթերցուածոց մեկնիչ» մը. կը գրէ. «ժողովին ի հովուանոցն յիւրաքանչիւր ժամուն եւ այս կանոն կատարի. Սղ. ԻԳ. Սղ. ճԼ. Ղուկ. Բ. 8–20, Մատթ. Ա. 18–25, Ծննդ. Ա–Գ, 20, Ես. Է. 10–18, Ելից. ԺԴ. 24–ԺԵ, 22, Միք. Ե, 1–8, Առակ. Ա. 1–9. Ես. Թ. 5–7. ԺԱ. 1–9, Լե. 4–8, ԽԲ. 1–7, Դան. Դ. 1–90, Տիս. Բ. 11–15, Սղ. ճԺ. Մատթ. Բ. 1–12։ Տաշեանի Ձեռագրաց ցուցակին (Թ. 5 և 9) երկու ձայնոցները, մին՝ 1223 կամ 1261, միւսն՝ 1506 թուականաւ, կը հրահանգեն. «Ճրագալուցին Յունվարի հինգ ժողովին ի Սուրբ Հովուանոցն ի տասներորդ ժամն, եւ այս կանոն կա. ՍՂ. Տէր հովեացի զիս, դարձեալ ՍՂ. ո՛ հովեաղ իսրայելի ունչ. Աւետ. ըստ Ղուկասու. Եւ հովիւք . . .» « . . . Ցետ այսորիկ գալոնն ի Հովուանոցին ի Սուրբ Բեթղեհեմ, եւ ժողովին

ի ներքս ի յայրն ի սւստրանն եւ այս կանոն կատարի. ՍՂ. ԿՅ. Տէր ասաց ցիս. Սուս. Մասր. եւ Ցսի. Քսի. ծնունդն եր այսպիս.»։ Ս. Աթոռոյս մատենադարանին ձեռագիրներէն (թ. 12 և 1863) ձեռագիրներն ալ քննելինք, կը կրկնեն միեւնոյն կանոնը եւ կը հրահանգեն նոյն օրը երթալ Հովուանոցի եկեղեցին, եւ կատարել ա՛յն կանոնը զոր չինած էր Յակոբ Տեառնեղբայրը, և ապա՛ դառնալ Բեթղեհէմի Ս. Այրը «խնկօք և մոմեղինօք»։ Գրչագիր եկեղեցական մատեանք այս հրահանգը իրարմէ ընդօրինակած են յար և նման, մինչև ԺԲ. դար, և յետոյ ալ։ Զեռագիր ճաշոցներէ զատ մեր մատենագիրներէն ոմանք ալ կը յիշատակեն Հովուանոցի եկեղեցին։ Անանիա Շիրակացին «երկրից երանելի վարդապետը» (Ը. դար) իր «մեացորդք բանից» գրուածքին մէջ (էջ 7) հետևեալ կերպով կը յիշատակէ. «. . . խաչի գրեալ է ի սկզբան կանոնին այսպես, թէ soli Սրբոյ Յայտնութեան կատարի ի Յունվարի, որ է վեց աւուրն. ժողովին ի Հովուանոցն եւ գայս ինչ կանոն կատարեն եւ ապա ի Բեթղեհեմ եւ ի յայրին»։ Դարձեալ, Մովսէս Կաղանկայտուացի (Ը. դար) իր Պատմութեան մէջ (էջ 227–28), «Անուանք վանօրէից, որք յերուսաղէմ են շինեալ» խորագրով գլուխ մը ունի, ուր իբր «ականատես», Երուսաղէմի վանքերուն և եկեղեցւոց վրայ շահեկան տեղեկութիւններ կու տայ, և ի մէջ այլոց կը յիշատակէ Հովուանոցի եկեղեցին, որուն նկատմամբ իր կատարած նկարագրութիւնը՝ տեղագրական եւ պատմական տեսակէտով մեծ կարևորութիւն ունի. իր խօսքերն են. «... եւ անտի յարեւելից կուսէ ըստ Յորդանանու կողմանէ երէք ասպարիզօք հեռի ի Բեթղեհեմէ. է Հովանոց (Հովուանոց), ուր երկու եկեղեցիք են, եւ պատսարագ մատչի»։ Գրիգոր Տաթեւացին ալ, իր ծննդեան քարոզին մէջ կը յիշատակէ Հովուանոցը և կատարուած կանոնը. «... վասն այսորիկ այսօր նախ ի Հովուանոցն ընթանամք, որ է հասարակ տեղի սուրբ ժամատունն, ուր բանաւոր հօտս եւ ժողովեալք եւ ասեմք Սաղմոս . . . եւ ապա երթան առ Մսուրն ի յայրն ի տեղի ծնեալն. վասն զի ի յայրն ծնաւ Քրիստոս փրկիչն, եւ ի մսուրն եդաւ, եւ հովիւքն ընթացան» (Ջմրան հատոր, էջ 31–32)։

2. Հովուանոցի եկեղեցւոյն պատմական ծագումը.

Բեթղեհէմի արևելեան կողմը կը գտնուի Պէյթ–Սահուր փոքրիկ գիւղը, որ է ըստ Ս. Գրոց Բերութքամամ «հանդէպ Բեթզահէմի» (Երեմ. ԽԱ. 17). այս գիւղին սահմանին մէջ է «Հովուաց դաշտը», ուր չինուած է «Հովուանոց»ը (արաբ. Տէյր էր–Ռաւաթ) և հո՛ս էր որ հրեշտակները հովիւներուն աւետեցին Քիստոսի ծնունդը։ Մարինոս լատին պատմիչը կը վկայէ թէ չատ հին ժամանակներէն, այս տեղւոյն վրայ չինուած էր փառաւոր եկեղեցի մը Ս. Հեղինէ թագուհիին կողմէն, երկարութիւնը 46 թզաչափ, իսկ լայնութիւնը՝ 25, և նուիրուած էր Ս. Հրեշտապետաց։ Ըստ վկայութեան Նիկեփորոսի, այս եկեղեցւոյ մէջ կը գտնուին երեք հովուաց գերեզմանները, ինչպէս 670ին տեսած է Արգուլֆ եպիսկոպոս, իր ուխտաւորութեան առթիւ։ Մարինոս դիտել կու տայ թէ այս նուիրական տեղը կը յարգեն ո՛չ միայն քրիստոնեաները, այլ նաև մահմետականները կանթեղ կը վառեն, խունկ կը ծխեն, և լատին կրօնաւորք Ծննդեան Ճրագալուցին «փառք ի բարձունս» կ'երգէին։

Ե. դարուն, կիւրեղ Սկիւթուպոլսեցին՝ իր «Մար–Սապայի» կենսագրութեան մէջ չահեկան տեղեկութիւններ կու տայ Հովուանոցի եկեղեցւոյն հիմնարկութեան և այլ պարագայից նկատմամբ. յիշեալին տուած տեղեկութեան համաձայն, աբբա Մարկիանոս, որ հակառակորդ մը եղած է Քաղկեդոնի ժողովին եւ վանական էր Երուսաղէմի Ս. Բնսսարիոնի վանքին, եւդոկիա թագուհիին նկատմամբ, 454ին, Բեթղեհէմի արևելեան հիւսիսային կողմը, կը հիմնէ «Հովուանոցի եկեղեցին»։ Սկիւթուպոլսեցիէն զատ, միաբնակ Զաքարիա հեռաւոր եկեղ. Պատմութիւնը և Նախատեսութիւնք Սրբոց (Plérophorie) գործը, Լանտ Anecdota Syriaca աշխատութիւնը կը պատմեն Մարկիանոս վանականին հակաքաղկեդոնական գործերը, որոնց համաձայն կը հասկցուի թէ Մարկիանոս միանալով իր գաղափարակից Ռոմանոս վանականին հետ ջանացած է քաղկեդոնիկ Յովնաղի տեղ 451ին Երուսաղէմի աթոռը բարձրացնել Թէոդորոս վանականը և համոզած է Երուսաղէմի Մարտիրոս եպիսկոպոսը ընդունելու (484ին) Զենոնի հրովարտակը։ Այս վերջին տեղեկութիւնը կը հերքէ Սկիւթուպոլսեցին այն հաւատքով թէ՝ Մարկիանոս

յետոյ իր համոզումը փոխած և յարած է քաղկեդոնականութեան։ Մարկիանոս ցո՛րչափ հաւատարիմ կը մնայ վիպաբնակութեան, իր վանքը չէն և ճոխ էր, և ո՛ւր հարիւրաւոր վանականներ կը բնակէին իր տնօրէնութեան տակ. բայց յետոյ իր վանքը ինկաւ չքաւորութեան մէջ և անչքացաւ։ Սկիւթոպոլսեցին երկու դէպքեր ևս կը պատմէ, և այդ առթիւ կը յիշէ «Հովուանոց»ը. առաջինով՝ կը պատմէ Տէյր–Տօղի վանքին հիմնադիր Ս. Թէոդորոսի այցելութիւնը Հովուանոցին, որ կը գտնուէր Տէյր Տօղի վանքին եւ Բեթղհէմի միջեւ. իսկ երկրորդով՝ Թեկուայի վանքն ապաստանած Որոգինէսեան վանականաց մէկ արարքը. 542ին նոյն վանականները, զէն ի ձեռին, կ'ուզէին քանդել Մար–Սապայի վանքը. բայց անոնք չկրցան հասնիլ իրենց նպատակին. եւ չատ մը դեգերումներէ յետոյ, յոգնած՝ ապաստանեցան «երանելի Մարկիանոսի վանքը». դարձեալ, ըստ նոյն պատմչին, Մարկիանոս վախճանած է 492ին։ 542էն վերջ Հովուանոցի նկատմամբ պատմական յիշատակութիւն չենք գտներ օտար եկեղեցական մատենագրաց քով։ Հաւանաբար այդ վանքը 614ին կիսաքանդ եղած է պարսկական յարձակումներու առեն։

3. Հովուանոցի եկեղեցւոյն տեղւոյն նկատմամբ տարակարծութիւն.

Պաղեստինագէտներէն Մէսթէրման՝ յետ մահու հրատարակուած իր մէկ ուսումնասիրութեան մէջ («La Terre Sainte, 1923») կ'եղրակացնէ թէ Հովուաց դաշտի եկեղեցին Ս. Գրոց Գաղիրայ աշտարակին (Մնուխիֆ, Լե. 21) մօտն էր, և դաշտն ալ կը կոչուէր Սիար էլ–Ղանեմ։ Տէյր էր–Ռաւաթը բուն «Հովուանոց»ը չէր, այլ ան Հռութի վանքն էր, որմէ Սիար էլ–Ղանեմ 600 քայլ հեռի կը գտնուէր, դէպի արեւելեան հիւսիս։ Մէսթէրման այլ եւ այլ վկայութիւններ յառաջ կը բերէ իր այս ճշտումը հաստատելու համար, և կը յարէ թէ Գաղիրայ աշտարակի «Հովուանոցին» մէջ կ'ապրէր 385ին աբբա Յովհաննէս Կասիանոս, ինչպէս ինքն ալ կը յիշատակէ իր Մարսէյլ գրած մէկ ճառին մէջ. 388ին ալ դարձեալ հո՛ն կը բնակէր «Վարք Հարանց»ի հեղինակ Բալլատիոսը։ Մէսթէրման յետոյ մէջ կը բերէ Ե. դարու սաղմոսական վրացերէն նորագիւտ ձեռագրանը, որուն համաձայն Ծը-

ննդեան ձրագալոյցին զիշերը կղերականք և հաւատացեալք Բեթղհեմէն կ'երթային Հովուանոցը և կ'երգէին «Փառք ի բարձունս» երգը. նոյն հեղինակը կը յիշէ նաև Երուսաղէմացի Եպիփան վանականը, որուն տեղեկութեան համեմատ, «Հովուանոցը (Poemnium) կը գտնուէր Բեթղհեմի արևելեան կողմը, ա՛յն տեղը ուր հրեշտակը երեւցաւ հովուաց և ըսաւ անոնց. . .»։ Մեր այս էջերը չեն ներեր Մէսթէրմանի ուսումնասիրութեան մանրամասնութիւնները մի առ մի յիշել. իր մէջ բերած վկայութիւնները անորոշ են և տարտամ։ Ի հակառակին, ուրիշ գիտնական մը, Լիէվէն տը Համ, իր մէկ աշխատասիրութեան մէջ («Guide indicateur des sanctuaires et Lieux historiques de la Terre-Sainte» էջ 62–63), չ'ընդունիր մէջ բերուած ճշտումը, յայտնելով թէ Բեթղհէմցիներուն դարաւոր աւանդութիւնը կը հակասէ այդ կարծիքին, և թէ ամէն դարու ուխտաւորներն իսկական «Հովուանոց»ը կը նկատեն Պէյթ–Սահուրի մօտիկ եկեղեցին որ մինչև հիմա պահած է իր գոյութիւնը, թէեւ կիսով աւերակ։ Լիէվէն մէջ կը բերէ նաև վկայութիւնը ժ–ի. դարու ուղեգիր ռուս վանական Դանիէլի, որ իբր ականատես կը վկայէ թէ Պէյթ–Սահուրի Հովուաց դաշտի եկեղեցին, թէև կիսով աւերակ, կը գտնուի Բեթղհեմի դիմացը, Ս. Ծննդեան վանքէն մէկ վերստ հեռաւորութեամբ. ի հնումն կար հոն գեղեցիկ վանք մը, ձիթաստանով»։ Դարձեալ, նոյն հեղինակը գտնութեամբ կը յիշատակէ թէ Սաֆիր էլ–Կանէմի մէջ պեղումներ կատարողներն իրենց ձեռքովը յարմարցուցած են երկու հովիւներու կարծեցեալ գերեզմաններն։ Այդ վայրը զուրկ է պատմականութենէ, և թէ հո՛ն տեղ մը եղած է միայն գիւղիչնութեան։

4. Մեր այցելութիւնը Հովուաց եկեղեցւոյն.

Դպրոցական արձակուրդէն օգտուելով, Սեպտ. 19ին մեր Ս. Ծննդեան վանքի արդի և նախկին տեսուչներուն՝ Տ. Վրթանէս եւ Տ. Աշոտ վարդապետաց, Նորայր և Մատթէոս սարկաւագաց (այժմ Տ. Նորայր վրդ. և Տ. Շաւարշ վրդ.) և Բեթղհեհէմի դպրոցին ուսուցիչ Յակոբ կարապետեանի հետ այցելեցինք Տէյր էր–Ռաւաթի եկեղեցին, որ կը գտնուէր ընդարձակ դաշտի մը կեդրոնը. ան որբանաձև էր և այրի մը մէջ փորուած. եկե-

ղեցւոյն արեւմտեան կողմը, իրարմէ փոքր անջատումով երկու մարմարեայ սիւներու տակ կը գտնուէր երկաթ Հովուաց գերեզմանը, որուն մօտերը կային մոզայիքի մնացորդներ. հարաւային և հիւսիսային պատերը ունէին պատուհաններ վերնայարկի եկեղեցին լոյս առնելու համար, և որք այժմ փակուած են քարերով, կոզակին երկու կողմերը կը նշմարուին հետքեր որմանկարներու, որ 35 տարի յառաջ, հրդեհի մը հետեւանքով ոչընչացած են: Այս եկեղեցիին վրայ, ի հնումն, կառուցուած էր ուրիշ եկեղեցի մ'ալ, որուն աւերակները տակաւին կ'երեւին. կը թուի թէ ան աւելի պայծառ էր և ունէր չքեղ կառուցուածք մը, տակաւին կ'տեսնուին սեղանը իր վէմքարով, կամարներուն չորս վիմաշարքը, կոզակին աջակողմեան հնօրեայ պատը. կիսով փլած, մոզայիքի բեկորներ և եկեղեցւոյն սեռմը. աւանդաբար կը պատմուի թէ Հովուանոցի այս եկեղեցին ունէր կանանց յատուկ վանք մը. այս վերնայարկ եկեղեցւոյն տեղւոյն վրայ հոս հոն ցրուած կան խոյակներ՝ ծաղկաձև քանդակներով, մարմարէ սիւնաբուններ, որ հաւանաբար Յաչակրաց քանդակագործութեանն արտադրութիւններն են: Տէյր էր–Ռաւաթի այս վանքը, ինչպէս վերև ակնարկեցինք, բուն Հովուանոցի եկեղեցին էր, և այժմ կը գտնուի Ցունաց ձեռքը. կ'թուի թէ ան, որքան որ Պարսից յարձակման կործանուած էր, բայց ատորնայարկը կանգուն մնացած էր և վերնայարկը վերաշինուած էր Յաչակրաց օրով, ինչպէս կ'ապացուցանեն տաշուած սիւներու մնացորդները: Համաձայն մեր քննութեան, ճշդրիտ կը նկատենք մեր կաղանդակատուացիին վերև մէջ բերուած յիշատակութիւնը և Լիէվէնի բացատրութիւնները, որ ճշդրտօրէն կ'ապացուցանեն թէ Պէյթ–Սահուրի Հովուաց դաշտի եկեղեցին՝ պատմական մեր «Հովուանոցն» է:

Այցելեցինք նաև Միար էլ–Կանէմի դաշտը, Տէյր էր–Ռաւաթէն քիչ մը հեռի. Ֆրանչիսկեանք հոն արտ մը գնելով՝ այդիի վերածած են զայն և պարսպած. 1859ին ալ պեղումներ կատարուած են և գտած են չատ մը այրեր՝ որ հաւանաբար պերճմանները էին. չգտանք հոն ո'չ վանքի և ո'չ եկեղեցւոյ հետքեր. և ըստ մեր համոզման, Միար էլ–Կանէմի արաւ տեղագրութիւնը և պրպտումները չեն հաստատեր Մէսթէրմանի դիտողութիւնները. հետևաբար Տէյր էր–Ռաւաթ՝ դարաւոր աւանդութեամբ և պատ-

մականութեամբ կը մնայ իբր բուն «Հովուանոց»ը, որուն ընկերովի սեպհականատէր՝ Հայք, Ցոյնք և Լատինք Ծննդեան գիշերը, ի հնումն, կ'երթային հոն թափօրով, «Փառք ի բարձունս» երգելու և պատարագելու համար: Մենք վերև յիշատակեցինք մեր ազգային յիշատակութիւնը, որ կը հաստատուն այս պարագան: Բայց աւելի վերջին դարերու մէջ, մինչև 1813 թուականը՝ երբ ուխտաւորք և միաբանութիւնը Ս. Ծննդեան տօնին հանդիսաւորութեամբ Բեթղեհէմ կ'երթային՝ սովորութիւն էր Ս. Աստուածածնի խառատուիճ պահած մաղարան ուխտի երթալով և ապա դուրսի կողմը, անոր առջևը կեցած՝ Հովուաց տեղւոյն դիմացը, «Մորմոքեցիր մեծ» շարականէն յետոյ կը կարդային Աւետարան և կ'երգէին «Փառք ի բարձունս» երգը. և ապա կը դառնային Ս. Ծննդեան եկեղեցին (տե'ս ձեռ. Ս. Աթոռոյ մատ.ին, Թ. 893, էջ 245): Օտար ծխարաններն ալ հետեւեալ կերպով կը նկարագրեն «Հովուանոց» երթալու հանդիսական թափօրը. «Կէս գիշերին զանգակահարութիւն կ'ըլլայ, բոլոր ուխտաւորները կը հաւաքուին Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին. և հո'ն կը կատարեն գիշերային ժամերգութիւնը, կղերը կ'զգեստաւորուի Ս. Այրին մէջ եւ կը մատուցանէ գիշերուան պատարագը. յետոյ կը կազմուի մեծ թափօր, ժողովուրդը եւ կղերը լապտերներով եւ մոմեղինօք եւ կանթեղներով կ'իջնեն Հովուաց դաշտի «Փառք ի բարձունս»ի եկեղեցին, ուր կը կատարուի առաւօտեան ժամերգութիւնը եւ բարձրասլիճան եկեղեցական մը կը պատարագէ. լուսածագին՝ բոլորն ալ կը վերադառնան ի Բեթղեհէմ, և Պատրիարքը աւագ սեղանին վրայ Ս. պատարագ կը մատուցանէ.» (տե'ս Bethléem, le Sanctuaire de la Nativité, էջ 182): Դարաւոր սովորութիւն մը, այժմ թէեւ խափանուած, բայց երուսաղէմի Հայ Եկեղեցին՝ նախընտրած է «քաջ հովուին» Ծննդեան Ս. Այրին մէջ երգել հրեշտակային չքեղ երգը, — «Փառք ի բարձունս Աստուծոյ» եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ը

Ս. ՅՈՎԱԿԻՄ–ԱՆՆԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

(ի Պրոպատիկէ, Յովհ. Ե. 2)

Պրոպատիկէի անդամալուծին բժշկութեան պատմութիւնը ծանօթ է Աւետարանէն (Յովհ. Ե. 2–17). Պրոպատիկէն՝ Տաճարին մօտիկ դրան մը անունն է, որ կը կոչուի նաև «Ոչխարաց դուռն»: Աւետարանի այդ համարը պէտք է կարդալ այսպէս. «Եւ էր յԵրուսաղէմ, ի Պրոպատիկէ աւազան, որ կոչիւր եբրայեցերէն Բեդհեզդա, հինգ սրահ:» Յիսուսի գործած սքանչելեաց ի յիշատակ, քրիստոնէութեան նախկին դարերուն, Պրոպատիկէի մէջ չինուեցաւ եկեղեցի մը, յանուն Ս. Աստուածածնի մօր՝ Աննայի: Ս. Կուսի ծննդեան տեղը որոշելու համար բաւական վէճեր եղած են, և զանազան աւանդութիւններ կան, կը կարծուի թէ ան ծնած է ի Նազարէթ կամ ի Բեթղեհէմ, բայց այս վարկածները ա՛յնքան չեն զօրաւոր, որքան արևելեան ա՛յն աւանդութիւնը՝ որուն համաձայն կը վկայուի որ Ս. Կոյսը ծնած է յԵրուսաղէմ, իր մօրը Աննայի տան մէջ, Պրոպատիկէի մօտ, այդ պատճառաւ ա՛յն եկեղեցին՝ որ չինուեցաւ Պրոպատիկէի մէջ, անուանակոչուեցաւ Ս. Աննա: Թողլով մերձաւոր ժամանակի վկայութիւնները, մէջ կը բերենք աւելի հինները՝ որոնք են Սեբաստացի Պետրոս Նպս.ի (Դ. դար), Վրացի Պետրոս Նպս.ի (Ե. դար) յիշատակութիւնները, ասոնցմէ զատ Երուսաղիմայ Պատրիարք Սոփրոնիոս (Է. դար), Յովհաննէս Դամասկացի (Ը. դար) իրենց քերթուածներով և քարոզներով կը հաստատեն թէ՝ Ս. Կոյսը ծնած է ի Պրոպատիկէ, և հոն է անոր մօր՝ Աննայի տաճարը, որ կոչուած է նաև Անդամալուծին եկեղեցին:

1. Ս. Յովակիմ–Աննայի եկեղեցւոյ պատմութիւնը.

Ս. Յովակիմ–Աննայի եկեղեցւոյ մասին ամէնէն հին վկայութիւնները հոս պիտի յիշենք. հինգերորդ դարուն վերջերը Վերգիլիոս և վեցերորդ դարու առաջին քառորդին Անտոնինոս Վկայ և Թէոդորիոս կը վկայեն թէ Եւդոկսիա հիմնարկեց Ս. Ստեփանոսի եկեղեցին, և իրենցմէ յիշատակուած ուրիշ եկեղեցի չեն մատնանշեր որ նոյն թագուհին շինել տուած ըլլայ: Արաբներուն Երուսաղէմ գալէն յառաջ կրօնական շինութեանց մասին երեք որոշ շրջաններ կը գտնուին Երուսաղէմի պատմութեան մէջ, Ս. Կոստանդիանոսի և Հեղինէի (Դ. դար), Եւդոկսիայի (Ե. դար), Յուստինիանոսի (Զ. դար): Վերև յիշուած վկաները Յուստինիանոսէն յառաջ են և անոնք Եւդոկսիայի կ'ընծայեն միայն Ս. Ստեփանոսի շինութիւնը, անոնք իրենց լռութեամբն իսկ Ս. Յովակիմ–Աննայի եկեղեցիին չինութիւնը կը վերագրեն առաջին շրջանին: Ս. Հեղինէ միայն երեք մեծ եկեղեցիները չէ որ շինած է, պատմիչները կ'ըսեն թէ ան շինել տուաւ նաև ուրիշներ իր ներկայութեամբը և կամ Երուսաղէմի պատրիարքին միջոցաւ: Եւ եթէ ստոյգ է որ Ս. Աննայի նշխարները որ Կ. Պոլսի մէջ կը յարգուէին, և նոյն իսկ Ս. Հեղինէի ձեռքով բերուեցան. բանաւոր կ'ըլլայ Դ. դարուն շինուած երկրորդական եկեղեցիներուն առաջին չորքին դասակարգել այն եկեղեցին՝ ուր Կոստանդիանոսի բարեպաշտ մայրը կրնար միևնոյն ժամանակ պատուել Տիրամօր ծննդեան տեղը և Անոր ծնողաց՝ Յովակիմայ և Աննայի գերեզմանը:

Անտոնինոս Վկան իր Ուղեգրութեան մէջ կարևոր տեղեկութիւններ կու տայ Ս. Յովակիմ–Աննայի եկեղեցւոյ մասին, նախ ան կ'ըսէ թէ եկեղեցին կը տարածուէր մինչև Բեթհեզդայի սրբատեղին միոյն վրայ, յետոյ կը յարէ թէ Աւազանը մասամբ մը տակաւին նոր լեցուած էր, մինչ միւս մասը քաղաքին լուացման պիտոյից կը ծառայէր. բժշկութիւն գործելու ոյժը գոգցես անցած էր Յովակիմ–Աննայի եկեղեցիին, ուր գտնուած էր բնական մինութեամբ ուխտի համար դրուած քանդակեալ ոտք մը՝ որ այժմ կը մնայ Լուվրի թանգարանը, Բարիզի մէջ: Եթէ յունական արձանագրութեան դիրերուն ձևը թոյլ չի տար այս ուխտադիր նուէրը տանիլ մինչև աւետարանական ժամանակաշրջանին, որ առանց ժամանակ առ ժամանակ հրեշտակը հիւանդ մը կը բժշկէր, անտարակոյս զայն կարելի է տանիլ Անտոնինոսի թուականին և այսպէս Զ. դարուն ցոյց տալ Պոմպեիա Լուկիլիա կոչուած հռովմայեցի տիկնոջ մը հրաշալի բժշկութիւնը Յովակիմ–Աննայի եկեղեցիին մէջ:

Զ. դարու այս մեծ եկեղեցին ո՛չ 614ին Պարսիկներէն և ո՛չ 636ին Արաբներէն չէ քանդուած: Խոսրով սրբավայրերը կողոպտեց և կրակի տուաւ այն մայր եկեղեցիները որոնց տանիքները փայտէ չինուած էին, ինչպէս Ս. Յարութիւն և Ս. Մեհիանոս: Բայց Յովակիմ-Աննայի նուազ լայն և սկզբանէ քարէ կամարներ ունենալով ինչպէս պիտի այրէր: Բարերը չեն կրնար այրիլ: Ան չքանդուեցաւ Պարսիկներէն: 637 ին Երուսաղէմի գրաւման ժամանակ, Օմար մասնաւորապէս հրամայեց որ եկեղեցիները չը քանդուին և կամ ուրիշ չէնքի չվերածուին: 738ին պատահած երկրաշարժէն ալ ապահով մնաց այս եկեղեցին, մինչ շատ եկեղեցիներ քանդուեցան թէ՛ Երուսաղէմի մէջ և թէ՛ Յորդանանի կողմերը:

810ին Commemoratorium de Casis Dei յիշատակարանին հեղինակը կը յիշատակէ այս եկեղեցին իր կղերովը և իր կոյսերովը:

870ին Բեռնարդոս վանական իր Ուղեդրութեան մէջ կը գրէ թէ այն եկեղեցին խիստ մեծ էր: Անոր անդաստակը կ'երկարէր մինչև Բեթհեզդայի սրահներէն մին վրայ. այս թուականին եկեղեցին գոյութիւն ունէր և Ս. Քաղաքին չորս կամ հինգ մեծ եկեղեցիներէն մին էր:

Արաբ պատմիչներէն Միւճիր-էտ-տին և Սպուլֆէտա մեզ կը պատմեն թէ Խաչակիրներէն առաջ եկեղեցին գոյութիւն ունէր, վանդզի առաջին անգամ ըլլալով հոն հաստատուած էր իսլամական վարժարան մը: Միւս կողմէն ժ-ի. դարու արևմտեան պատմութիւնները Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցին կը նկատեն իբրև հնագոյն յիշատակարան մը, առանց ակնարկութիւն ընելու ա-նոր չինութեան և կամ նորոգութեան մասին: Իսլամ տիրապետութենէն յետոյ միշտ յարգուած է Statu quoի կանոնը: Սրբավայրերու նորոգութիւնը երկու չրջաններու ժամանակ միայն կատարուած է. մին՝ Մեծին Կարոլոսի և միւսն՝ Կունդ Կարոլոսի օրով:

Խաչակիրք երբ Երուսաղէմը գրաւեցին այս եկեղեցին յատկացուցին Բենեդիկեան կրօնաւորուհիներու, երբ 1103ին Seawulf հոն այցելեց՝ անոնք թուով չորս էին. բայց հետևեալ տարին, Պաղտին Ա.ի կինը Արգա՝ որ հոն տարագրուեցաւ, ճոխացուց եկեղեցին իր արդիւնքներովը: 1130ին Պաղտին Բ.ի աղջիկը եւ Մելիսանդ թագուհիին քոյրը Յուդիթ կրօնաւորուհի դարձաւ և

հոն բնակեցաւ մինչև 1144, Բեթանիոյ նոր վանքը երթալէ յառաջ: Յովհաննէս Վրդպապուրկցի 1150ին Ս. Աննայի միաբանութիւնը գտաւ աւելի բազմաթիւ և բարգաւաճ:

Սալահէտտին 1187ին Երուսաղէմը գրաւելէ յետոյ, Յովակիմ-Աննայի եկեղեցին մէարէսէի վերածեց, Ապուլֆէտա պատմագիրը (✻ 1331) այս մասին կուտայ հետևեալ տեղեկութիւնը. «Սուլթանը (Սալահէտտին) 1192ին հրամայեց չինել պարիսպները եւ աւելցուց եկամուտները այն վարժարանին զոր հիմնած էր այս քաղաքին մէջ:— Իսլամութենէ յառաջ, այս չէնքը ծանօթ էր Հաննա Իւմմ Մէրիէմ (Աննա՝ մայր Մարիամու) անուամբ. իսլամ տիրապետութեան տակ, այս եկեղեցին կը ծառայէր իբր Տուն գիտութեան-Ջուանկները երբ հիճրէթի 492 ին Երուսաղէմի տիրացան՝ վերածեցին զայն իր առաջին նպատակին. — վերջապէս սուլթանը երբ Երուսաղէմի տիրեց, դարձեալ զայն վարժարանի վերածեց և Պէհա-էտ-տին-իպն-Շէտտատ գատաւորին յանձնեց վարժարանի տեսչութիւնը և հաստատութեան ստացուածոց վարչութիւնը»: Մի ուրիշ արաբ պատմագիր Միւճիր-էտ-տին 1520ին Երուսաղէմի եւ Քեթրոնի իր պատմութեան մէջ կը գրէ. «Սալահէտտին՝ իր չուրջը գտնուող իւլէմաներու հետ խորհրդակցելով Ս. Աննա կոչուած եկեղեցին, որ կ'ըսեն թէ Մարիամի մօր՝ Ս. Աննայի գերեզմանը կը պարունակէ, և կը գտնուի Պապ էլ-Սէպաթի մօտ, Shafeïtes գիտուններուն յատուկ վարժարանի մը վերածեց. (նոյն դպրոցը իսլամութեան կրօնա-իրաւագիտական չորս դպրոցներէն մին էր): Միևնոյն հեղինակը կ'ըսէ դարձեալ. «Սալահէտտինէ հիմնուած մէտրէսէն, Յունաց ժամանակ եկեղեցի մ'էր, եւ կը կոչուէր գերեզման Աննայի; վասն զի, ըստ աւանդութեան, ան կը պարունակէ Մարիամի մօր՝ Անայի գերեզմանը, Սալահէտտին հիմնած է զայն 1192ին: Այս դպրոցի չէյխին պաշտօնը իսլամ կայսրութեան մէջ կարևոր պաշտօններէն մին է»:

Զանց կ'ընենք յիշատակել Ricoldi (1292), François Pipino (1330), իտալացի Անանուն (1384), Guillume Baldenzel (1330), անգղիացի Jean Mandevill (1330), Ludolphe (1336), Դոմինիկեան Fabri (1479 և 1483), իշխան Radzivel (1583), ուխտաւորները որ այցելած են Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցին, և անոնցմէ չատեր կը յիշատակեն թէ Ս. կոյսը նոյն տեղը ծնած է և հոն կը գտնուի

Ս. Աննայի գերեզմանը՝ որուն վրայ չինուած է նոյն եկեղեցին։

Ժամանակակից պատմագիրներէն de Vogüè, Frère Liévin, կարմինալ Lavigerie, P. Rocchi, Կրոդդա–Ֆէրադայ (Հռոմ) վանքին Բարսեղեան յոյն կրօնաւորը, P. Bassi, երբեմնի պատմագիր Ս. Երկրի, և այլք պատմական ուսումնասիրութիւններ ունին այս եկեղեցիին մասին, Mauss ճարտարապետը՝ որ 1888ին նորոգած է Ցովակիմ–Աննայի եկեղեցին, և նոյն տարին հրատարակած է գիրք մը "La Piscine de Bethesda à Jérusalem» խորագրով։ Իսկ Ափրիկէի միսիոնար P. Leon Cré 1893ին չահեկան բանախօսութիւն մը ըրած է Երուսաղէմի Դոմինիկեանց սրահին մէջ, նոյն եկեղեցւոյ պատմութեան և ճարտարապետութեան մասին, և մենք մեր երկու հատուածներու համբագրութեան առթիւ մեծապէս օգտուած ենք նոյն բանախօսութենէն (տե՛ս R. B. 1893, էջ 245–274)։

2. Ս. Ցովակիմ–Աննայի եկեղեցիին նկարագրութիւնը.

Այցելուները տեսնելով այս եկեղեցիին սրակամարները (arcs en ogive) կը հաստատեն թէ եկեղեցին առաւելն ԺԲ. դարուն կը վերաբերի։ Եւրոպայի համար միայն ճիշդ կրնայ ըլլալ այս եզրակացութիւնը, քանի որ Խաչակիրներու միջոցաւ հոն տարուեցաւ այս կերպ չինութեան եղանակ մը։ Բայց Սիւրիոյ և Պաղեստինի մէջ, ստոյգ է որ սրակամարը կը գործածուէր քրիստոնէութեան առաջին դարերուն։

Եկեղեցւոյ հիւսիսային պատը քննելով դիւրաւ կը գիտնանք թէ երկու նորոգութիւններ կատարուած են։ Սակայն մոյթերու կեդրոնը, մանաւանդ գմբէթը և կողակները կ'երևին թէ կը վերաբերին նախնական չինութեան։

Եթէ մենք յաջողինք գիտնալ Թուականը այն վերջին նորոգութիւններուն, որ կը թուին բովանդակել ամբողջ ճակատը և դէպի հիւսիս, ներքին հին գաւիթը և մերձակից գերանամէջի կէսը, մեծ քայլ մը առած պիտի ըլլանք եկեղեցիին ուսումնասիրութեան համար։ Պատմութիւնը մեզ կը սորվեցնէ թէ եկեղեցին, ինչպէս որ է այսօր, Խաչակիրներէն յառաջ գոյութիւն ունէր և իսլամները հոն վարժարան մը հաստատած էին։ Սակայն մայրադուռը եւ ամբողջ ճակատը յայտնի է թէ քրիստոնէից

գործն է։ P. Bassi կարծիք կը յայտնէ թէ իսլամական վարժարանի վերածուիլը տեղի ունեցած է 930ին և 950ին միջև։

Բայց ի՞նչպէս ապահովուիլ թէ այս երկու թուականներու միջև նորոգութիւն մը տեղի ունեցած է. եկեղեցւոյ գաւթին խիստ մօտ գտնուած է պրոպատիկէ իջնելու համար Խաչակիրներուն կողմէն չինուած աւելի հին կառուցուածք մը՝ որուն քարերը կը թուին ցոյց տալ՝ եթէ ոչ գործաւորները, գոնէ այն միևնոյն քարահանքը լայն երակով, 55 սանթիմեթր բարձրութեամբ խոշոր քարեր, որ կը զարդարեն եկեղեցիին ճակատը։ Այս վերջինս ալ ուրեմն ստուգիւ կը վերաբերի Խաչակիրներէ առաջ Թուականի մը։

Փոքրիկ արձանագրութիւն մը երկաթի սուր ծայրով մը՝ մարդու բարձրութեամբ՝ քանդակուած մայրադրան վրայ, ուշադրութեան արժանի է։ Մեր օրերուն ալ, Երուսաղէմի մէջ օտար ուխտաւորները կը սիրեն նշանակել սուրբ Տեղերու քարեբրուն վրայ իրենց անունը և իրենց ճամբորդութեան տարին։ Այս վիմագրութիւնը (grafitto) կը պարունակէ յունական գիրեր և թիւեր։ Յունական գիրերը այսպէս կը կարդացուին το γενε, որ τὸ γενέθλιον բառերուն սկզբնաւորութիւնն են, և թիւերէն յետոյ կարդացուած է θητα գիրը, և կը մեկնուի ծնունդ, ինձնորդ ասիա։ Եւ որովհետև Նիկիոյ ժողովէն ի վեր, Ցոյները ընդունած էին Յուլեան տումարը, այն տարւոյն մէջ կ'սկսի քաղաքային տարին Յունվարի սկիզբը, ուստի ընդունուած է սա իմաստը, ծնունդ, ինձնորդ։ Բայց որ Թուականին, հոն գրուած է Թուով՝ ղոր կը կոչենք արաբական, և արաբները կը կոչեն հնդկական։ Կ'ըսուի թէ մեր թիւերուն գործածութիւնը փոխ առնուած է Սպանիոյ Մաւրիտանացիներէն և Ֆրանսա բերուած է Թ. դարու վերջերը նշանաւոր Ժիրպէրի կողմէն՝ որ յետոյ Պապ ընտրուեցաւ Սեղբեստրոս Բ. անունով։ Ուրիշ հեղինակներ կը հաստատեն թէ մեր արդի թիւերը բերուած են Արևելքէն՝ ուր անոնք կը գործածուէին այս Թուականէն չատ յառաջ։ 250 թիւը չատ դիւրաւ պիտի կարդացուի մայրադրան վրայ։ Ցոյները երկաթ ատենէ ի վեր կը գործածէին Թուական մը որ կ'սկսի Կ. Պոլսի երրորդ ժողովէն, 608ին։ Թուականը ճշդօրէն կը համապատասխանէ ուրեմն փրկչական 930 Թուականին։ P. Bassi, Ս. Երկրի հին պատմագիրը, կարծիք յայտնած է թէ եկեղեցին իսլամական վար–

իսկական պարզ քանդակագործութիւն մը մասնաւոր գաղափարի մը բացատրութիւնը չի՞ կրնար ըլլալ։

Նոյն եկեղեցիին մէջ կայ նաեւ ուրիշ խորհրդապատկեր մը գագաթին վրայ այն մոյթերուն որոնք կը չրջանակեն գմբէթը բռնող կոզակը։ Հոն որոշ կ'երեւի մարդու մը և եզան մը քանդակը, անվարժ ձեռքի մը քանդակներ են ասոնք, բայց Ս. Գրքոց մեկնութեան համար հրաշակերտ մը են։ Արդէն ծանօթ են խորհրդապատկերները Ս. Մատթէոսի և Ս. Ղուկասի որ մեզ թողած են Փրկչին կրկնակ ազգաբանութիւնը։ Այս խորհրդապատկերին պերճախօս և խորհրդաւոր վկայութիւնը ցոյց կուտայ այն տեղը ուր ծնաւ Ս. կոյսը, յայտարարելով իր հօր և նախնեաց անունները, «Որ Հեղեայի . . . որ Ադամայի»։

Վերջին աստիճան հետաքրքրական ուրիշ նուիրագիր-խորհրդապատկեր մը գտնուած է հոն վերջին ժամանակներս, անոր բացատրութիւնը կարելի է գտնել Martignyի "Dictionnaire des Antiquités Chretiennes» գիրքին մէջ. և պիտի տեսնուի որ քարը անգամ մ'ալ լեզու կ'ելնէ յայտարարելու Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցւոյն հնութիւնը և գոյութիւնը անոր մէջ կրկնակ գերեզմանի մը։ Ս. Յովակիմայ և Աննայի եկեղեցւոյն դրան աջ կողմը կը հանդիպինք չքակահի մը, որուն վրայ կը գտնուի քրիստոնէական առաջին դարերու պարզ բայց զարմանալի մէկ խորհրդանշանը։ Շքակահը կը ներկայացնէ տարածութեամբ եւ ձեւով անհաւասար երկու սանտալներու լայնքին վրայ դրուած թղթապատաս մը (volumen)։

Սանտալները նմանութիւն մը են այն ոտներուն՝ զոր քրիստոնեայք կը քանդակէին գերեզմաններուն վրայ։ Արդ, ըստ Martignyի, այս հազուագիւտ և հետաքրքրական խորհրդանշանը ցոյց կուտայ գերեզման մը։ Արդարև ի՞նչ կը նշանակէ այս խորհրդանշանը։ Հնախօսները զանազան կերպով կը պատասխանեն. օրինակի համար այսինչը չուած է իր վերջին բնակարանը, կամ աւելի ևս, սովորական լեզուի մէջ գործածուած մեղմաբանութեան մը համաձայն, «մեռած է»։

Սանտալներու զանազանութիւնը ցոյց կուտայ երկու տարբեր անձեր։ Գալով թղթապատատին՝ երբեմն չատ սովորական էր ամուսնութեան վերաբերեալ յիշատակարաններու մէջ, և դամբաններու բազմաթիւ քանդակներու մէջ ևս ամուսնոյն ձեռքին մէջ ներկայացուած կը գտնուի, և կը կարծուի՝ իբր դաշինք առուսնութեան։ Արդ այս դաշինքը կրկնակ գերեզմանի մը խորհրդապատկերին վրայ գնելով՝ չի՞ թուիր նշանակել թէ ընկերակցութիւնը եւ փոխադարձ հաւատարմութիւնը տեւած են մինչեւ գերեզման։

Բանախօսը իր այս խիստ չահեկան նկարագրութենէն յետոյ կը պատմէ թէ չատ մը պրպտումներէն յետոյ նոյն եկեղեցիին դասին մէջտեղը, 18 մարտ 1889ին, վեց աստիճանով հողին տակ գտնուած է սենեակ մը, որուն մէջ նշմարուած են նկարներ, սոնոր բարձրութիւնն է 3 մ., 60, լայնութիւն՝ 4 մ., 90, երկարութիւնը՝ 5 մ., 60. ըստ բացատրութեան և համոզման բանախօսին, այս նկուղ սենեակը կը թուի ըլլալ Ս. Յովակիմ-Աննայի գերեզմանը զոր յայտնապէս կը յիշատակեն բազմաթիւ ուղեգիրներ։ Ըստ իս, եթէ այս նորագիւտ գերեզմանը Ս. Յովակիմ-Աննայի գերեզմանը նկատուի իսկ, չէ կարելի սակայն, հերքել Գեթսեմանիի Ս. Աստուածածնի տաճարին մէջ գտնուած յիշեալներու գերեզմանները. նկատելով որ վերջիններս հին քրիստոնէից կողմէ Ս. կուսի ծնողաց ի պատիւ հաստատուած սանդուկան յիշատակարանները կրնան նկատուիլ, և կամ թերևս անցեալ դարերու մէջ տեղի ունեցած և մեզ անծանօթ փոփոխութիւններու և բարեպաշտական անհրաժեշտութիւններու հետևանքով Գեթսեմանիի տաճարին մէջ հաստատուած են նոյն գերեզմանները։ Այս մասին կը կարծեմ թէ չէ կարելի վճռապէս խօսիլ։

3. Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցւոյն հայկական յիշատակները.

Ս. Աննայի եկեղեցւոյն ու վանքին գոյութեան պատմական և նկարագրական այս ընդարձակ տողերէն յետոյ այժմ փութանք սոյն եկեղեցւոյն հայկական ըլլալը հաստատել։ Մենք ուներնիք մեր ձեռքը հաստատուն և վաղեմի յիշատակարան մը՝ որ է Հայոց Աննաստաս վարդապետին վանօրէից ցուցակը, «Վասն վանօրէից որ ի Ս. քաղաքն Երուսաղէմ» խորագրով։ Նոյն գրքուածքին մէջ յիշատակուած Հայոց 72 վանքերուն մէջ, մասնաւորապէս կը յիշուի Պրոպատիկէի եկեղեցին ու վանքը, «Ուր ի

ներս ի խաղաղ Աւշակունեաց վանիցն՝ ի տուրք Պրոպատիկի կողմանեն», զոր ինքն անձամբ տեսած է մինչ հայկական վանքերուն հետ։ Սակէց աւելի բացորոշ վկայութիւն չի կրնար ըլլալ, այս պատճառաւ է որ վերև յիշուած գիտնական եկեղեցականը չատ իրաւամբ կարծիք կը յայտնէ թէ՝ Յուստինիանոսի ի Պրոպատիկէ շինած Հիւրանոցին վարչութիւնը յանձնուած էր Պրոպատիկէի կից Աբշակունեաց վանքի կրօնաւորներուն (R. B. *1893*, էջ *262*). կը վկայէ նաև *1483*ին Ադկէրմանցի Նիկողայոս Եպս. Երուսաղէմի ուխտատեղիներու իր ցուցակին մէջ հետևեալ կերպով. «Պրոպատիկէ աւազանն, որ կոչի երբայեցերէն սրահ, ուր անդամալոյծն բժշկեցաւ և վերեզմանն Աստուածածնի ծնողաց, Յովակիմայ և Աննայի, և ծնունդն Աստուածածնին»։ Նիկողայոս Եպս. այս տողերով կարևոր պարագայ մը մէջ կը բերէ ըսելով որ՝ Աննայի և Յովակիմայ գերեզմանները կը գտնուին Ս. Աննայի եկեղեցւոյն մէջ, թէպէտ ուս ճանապարհորդ մը՝ վանահայր Դանիէլ (*1113*) կը վկայէ նոյնը ուրիշներու հետ։ Սակայն այս կէտը, հնախօսնեբուն մէջ, տակաւին վիճելի է։

Երուսաղէմայ Հայոց պատրիարք Գրիգոր Շղթայակիր մեր Ս. Յակոբայ վանքին մէջ, *1728*ին ցօրենի քարուկիր համբարանոց մը չլինել կուտայ, նոյն միջոցներուն, Յովհաննէս Եպս. Երուսաղէմացի (Հաննէ), Ս. Յովակիմայ և Աննայի եկեղեցիէն բերուած մարմարեայ բոլորակ խաչքար մը ձեռք կ'անցնէ ու գրել կուտայ հետևեալ յիշատակարանը. «Խաչս է Յովակիմայ և Աննայի Տանէն, ուր ծնաւ Ս. Աստուածածին»։ Նոյն խաչքարին եզերքն ալ սա յիշատակարանը «Կանգնեցաւ Ս. Խաչս Գրիգոր հայրապետին և ամենայն միաբանից որ չինեաց ցօրենատուն. Թվին ՌՃՀԷ=*1728*» գրելով կը զետեղեն ցօրենատան գրան ներսի կողմը։ Վերոյիշեալ Յովհաննէս վրդ. իր պատմութեան մէջ (էջ *299*) կը գրէ (*1727*) թէ՝ «ի նոյն կողմն Ս. Աննայի (հարաւային կողմը) գտան խցիկք և խրճիթք կրօնաւոր կուսանաց . . . և այժմ ամենեքեան աւերք են և ոչ ոք բնակի ի նոսա»։

Ս. Յակոբայ վանքի միաբան հանգուցեալ Աստուածատուր Եպս. Տ. Յովհաննէսեանց իր «Պատմութիւն Ս. Երուսաղէմի» գլուխին մէջ (էջ *157* Հար. Ա.), կը գրէ թէ՝ կարդացած է ինքն հայերէն ձեռագիր մատեանի մը յիշատակարանին մէջ այս պարբերութիւնը «Գրեցաւ գիրքս ի տուն Յովակիմայ և Աննայի», բայց

թուականն անյայտ. և յետոյ մի ուրիշ տեղ (էջ *91*, նոյն), «Անդ Պրոպատիկին տեսանի հոյակապ և գլխաւոր եկեղեցիքն, յանուն Յովակիմայ և Աննայի և տեղի ծննդեան աւետարանական կուսին։ Սպասէին կարգալ էր զայն դպրոց. ձեւ եկեղեցւոյն է նման եկեղեցեացն Հայոց երէք խորանաւ, և երկաթի օղակ վարագուրին Աւազ սեղանոյ կային տախտին ցնծ ժամանակս ի գլուխ սեանց, պսակեր Աւետեաց դարձեալ ի միւնոյ յաջակ և յահեկէ եղծեալ, զոր բարձին յատիճ ի տիրեղն իւրեանց։»

Այս վկայութիւններն անուշադիր են և կը հաստատեն Պրոպատիկէի վանքին ու եկեղեցւոյն հայկական ծագումը։ Համբարձման լերան վրայ և Գամասկոսի գրան մօտ նորագիւտ հայկական գեղակերտ մոզայիքներն՝ որ կը կրեն հայերէն արձանագրութիւններ, ինչպէս նաև նոր պեղումներն ու գիւտերը տակաւ առ տակաւ իրաւունք պիտի տան յիշատակաց արժանի Հայոց Անաստաս վարդապետին՝ որ անձամբ Երուսաղէմ եկած ու ցանկագրած է Հայոց *72* վանքերն ու տեսած անոնց պայծառութիւնը։

Խրիմի պատերազմին հետևանքով *1861* Նոյեմբեր *1*ին Սուլթան Մէճիտ կայսեր կողմէն Ս. Յովակիմ–Աննայի եկեղեցին Ֆրանսայի պարգև տրուեցաւ։

Ֆրանսական կառավարութեան կողմէն նոյն հոյակապ եկեղեցին Լավիժըրի կարմելիտներն կողմէն հիմնուած Ափրիկէի միսիոնարաց ընկերութեան յանձնուեցաւ պահպանութեան համար։ Նոյն ընկերութիւնը եկեղեցին մէկ կողմը երկու ընծայարաններ հաստատած է յոյն մելքիտներու համար։

Թ. Մինրդատեանց իր «Նկարագիր աղետից Երուսաղէմի» եալն գիրքին մէջ եկեղեցական իշխանութեան կողմէն Յովակիմ–Աննայի հայկական եկեղեցւոյ սեպհականութիւնը չպաշտպանուելուն համար դիտողութիւններ գրած էր, որոնց հակառակ Զաքարեան պատուելի «Երեւակ» հանդէսին միջոցաւ քննադատական յօդուած մը հրատարակած ըլլալով՝ Թ. Մինրդատեանց *1864*ին «Դասաւանութիւն դասաւանութեանց» անուն գրքոյկով մը կը պատասխանէ անոր. նոյն պատասխանին մէջ Ս. Յովակիմ–Աննայի եկեղեցւոյ հայկական ծագման և ճարտարապետութեան մասին տեղեկութիւններ և ապացոյցներ մէջ բերուած ըլլալով, կարևոր մասերը նոյնութեամբ կը դնենք հոս, պահելով անոր գրչութեան ոճը։

«Սալահէտտին Սէյրէթուլլահը (Իօմէրին մղկիթը) կը տեսնէ հոն իրենց կրօնքին համեմատ յարգուելուն տալէն զկնի. երբ ժամանակ դուրս կ'ելնէ՝ կը տեսնէ որ նոյն իրենց տաճարին դիմացդբը երեւելի եկեղեցի մը կայ.— այս որո՞ւ է, կը հարցնէ Հայրապետին (Աբրահամ պատրիարքի). նա ալ կ'ըսէ թէ՝ — Մերեմ Աննային ծնողացը տունն է և Յովակիմ-Աննա կը կոչուի: կը դառնայ բարկութեամբ մը պատասխանել, թէ՝ — ես որուն անուամբը կառուցուած ըլլալը չեմ հարցներ քեզի, այլ ո՞ր ազգինն է այդ եկեղեցին՝ որ համարձակեր է մեր տաճարին (Հայբէմի Շէրիֆին) դրան դէմ հոյակապ եկեղեցի կառուցանել:

Յայնժամ պատրիարքը ոտքը խյնալով մը կ'ըսէ.

— Տէ՛ր, Ազգիս Հայոց ու քու նուաստ ծառայիդդ է, և եթէ արժան դատես՝ ինձ պարգեւէ, ապա թէ ոչ կամք քո է՝ որպէս կամիս նոյնպէս արա.— իսկոյն կը հրամայէ Սալահէտտին՝ որ անի սօֆտաներուն մէտրէսէ ըլլայ իր անուամբ. քանզի չէ արժան կ'ըսէ՝ մեր տաճարին դէմը եկեղեցի լինել և եթէ ես չառնում իմ յաջորդներս անշուշտ կ'առնուն. նա մանաւանդ Մար Եագուպը ձեզի բաշխեցի վասնորոյ անոր տեղ անպատճառ պիտի առնում աս, որ յաղթութեանս նշան մը ըլլայ՝ ու ինձ համար աղօթեն յիշեալ սօֆտաները: կը սկսի սրբազան պատրիարքը դողալ ու սարսափիլ և չուարիլ (ինչպէս իր գրութենէն առնելով՝ երկու դար ու կէս յառաջ իր Ս. Երկրի Պատմութեան մէջ կը գրէ Տ. Յակոբ քահանայն Սմասիացի). «Մտածեցի թէ՝ եթէ հրաման բռնաւորին վերստին չկատարելու որ լինիմ, յայնժամ թէ Ս. Յակոբ ձեռացնուս պիտի երթայ, և թէ Յովակիմ-Աննան, ապա ուշի եկեալ մտածեցի թէ վինչ արարից. ուստի երկու չարեաց փոքրագոյնն է ընտրելի ասելով՝ երբ բռնաւորն թախանձեաց վերստին, իսկոյն առաջի նորա անկայ՝ և ասացի՝ կամք քոյին տէրութեանդ է. զայս ասելով յանձնեցի տունն Յովակիմ-Աննայի. և այս եղեւ ՈԼԶ. հոկտ. ժ. թուականին»: Որ անկից, այսինքն 1187 թուականէն մինչեւ 1856 թուականին որ ըսել է՝ 669 տարի՝ Սպահաssին մեsրեսի կամ Սպահիյէ կը կոչուէր, նոյնիսկ Յովակիմ-Աննայի տունը:

Թէպէտ երբեմն ՌՀՀ թուին, այսինքն՝ 1629 ամին, նոյն Յովակիմ-Աննայի եկեղեցւոյն հարաւային կողմը գտնուած մատուռը՝ ուր Սուրբ Կուսին Ծննդեան տեղն է. լատինք կարացին

ձեռք բերելով զանի իրենց կուսանաց ճգնութեան տեղի ընել. սակայն եկեղեցին բոլորովին չկարացին իրենց իւրացնել, ինչպէս որ կը գրէ ժամանակակից և ականատես նոյն Յակոբ քահանայն Սմասիացի և կ'ըսէ՝ «այս եղեւ սակս Թողելուն Արարացւոց աստղի, ուր երբեմն մերս կուսանք ճգնէին, ապա յօրինակ առեալ ի նոցունց լատինք, յիւրեանց կուսանին բնակեցուցին քանի լինչ խրճիթս չինելով անդ. թէպէտեւ ոչ երկարատեւեաց գայն. քանզի ոչ միայն ոչ թոյլ ետուն Արաբացիք, այլ եւ հովիւն մեր արթուն (այն է Դրիգոր Պարոնտեր հոգելոյս հայրապետն) ըստ իւրում արթնութեամբն առիթս առեալ նա եւս թախանձեաց զեկեղեցին հրաշակառոյց բերել ի ձեռս, որ բազմօք յառաջ ամօք՝ յափշտակեալ էր Սալահէտտին ի ձեռաց նախնեաց մերոց (Պատմ. Սրբոյ Երկրին. ձեռ.)»: Բաց ի սոյն պատմութենէն այլ եւ Հանէնէի պատմութենէն ալ կ'երեւի, ուր կ'ըսէ, թէ՝ «յորում բնակէին (կուսանք) ի ժամանակս խաղաղութեան, և այժմ աւերք են (հիմա խրճիթք կուսանաց) և ոչ ոք բնակի ի նոսա (Պատմ. Հան. եր. 229. Տիպ. Պօլ. 1782)»: Այս «ի ժամանակս խաղաղութեան բնակէին կուսանք» ըսածն ալ՝ լատինաց համար հասկնալու չէ, այլ նախնեաց ժամանակի եղածը կ'ակնարկէ Հաննէին զուրցածը, թէպէտեւ ինքը չ'որոշեր որ ազգին կուսանքը ըլլալ:

Եւ ահա՛ Բանին իսկ եղելութիւնը, մեր ձեռքը գտնուած յիշատակարաններուն և արձանագրութիւններուն, նաև մինչեւ ցարդ բերնէ բերան անցած աւանդութիւններուն նայելով .... Ջամբրճեանին վկայ բերած Անաստաս վարդապետին ցուցակին մէջ ալ կայ, ուր կը գրէ յիշեալ վարդապետը՝ թէպէտեւ առանց անունը տալու այսպէս. «20րդ՝ Արշակունեաց վանքն՝ որ առ պրօպատիկէիւ» կ'ըսէ. որ եւ այս տեղեկութիւնը առաւել եւս կը ստուգէ մեր վերը դրած պատմութիւնը, և որով յիշեալ եկեղեցին մերն ըլլալը յայտնի ցուցնէ. քանզի Սալահէտտինին յաջորդող պատմութենէն գրեա թէ հինգ դար յառաջ գրուած է՝ յիշեալ ցուցակը ու տեղեկագիրը. և որովհետեւ պրօպատիկէ աւազանին մերձ ի նախնեաց անտի մինչեւ ցայսօր՝ ուրիշ ո՛չ վանք մը, ոչ եկեղեցի մը կայ ու եղած է, բաց ի Յովակիմ-Աննայի տունէն. վասնորոյ առանց տարակուսութիւն մը յարուցանելու կ'ենթադրենք թէ՝ անպատճառ յիշեալ Յովակիմ-Աննայի տունն է՝ Անաստաս վարդապետին ցուցուցած վանքը, և անոր չինութիւնն

ալ մեր Արշակունի տէրութեանց չինածն է, և ոչ գժխոյ Հեղինէի, ինչպէս որ անգիտութեամբ՝ միայն օտար ազգաց չափազանցօրէն և անտեղի գրուածներուն և խօսածներուն նայելով՝ Հաննա Երուսաղէմացին իր պատմութեանը մէջ բոլոր Երուսաղէմի վանքերուն չինութիւնը անոր ընծայելէն զատ՝ նմանապէս այս Ցովակիմ–Աննայի տանը չինութիւնն ալ անոր կ'ընծայէ, որոնց անտեղիութիւնն ալ «Երուսաղէմի Հանապարհորդութեան» մէջ կրնայ տեսնուիլ, եթէ ի լոյս ընծայի հրատարակութեամբ: Նոյնիսկ Ցովակիմ–Աննայի եկեղեցին մերն ըլլալու, որով Քրիստոսի «մարդիկ երբ լռեն քարիւք կ'աղաղակեն» ըսածին նման՝ անոր չինութիւնը կ'աղաղակէ թէ Հայոց չինութիւն և Հայոց եկեղեցի է, որով ուրիշ վկաներու կարօտութիւն չձգեր՝ քանի որ կանգուն կայ: Որովհետեւ նախ եկեղեցիին ձեւը ինքնին կը յայտնէ թէ Հայոց եկեղեցի է. երկրորդ՝ անոր կաթուղիկէն թէպէտ փոքր, բայց մեր Ս. Յակոբայ տաճարին միևնոյն ձեւն ունի, և գիտես թէ միևնոյն ճարտարապետին ձեռքէն ելած է: ըստ որում Ս. Յակոբայ տաճարն ալ Արշակունեաց չինածն է. երրորդ դէպ ի արեւելք միայն չինուած է անոր խորանը կիսաբոլոր կամարի մը մէջ, որն որ Հայոց եկեղեցւոյն վերապահեալ է միշտ: Զորրորդ՝ Աւազ սեղանի երկու կողմի փոքրիկ խորաններն ալ նոյնը կ'ապացուցանեն, որն որ ըստ մեծի մասին Հայոց եկեղեցւոյն յատկացեալ է այս ձեւը. հինգերորդ՝ եկեղեցւոյն թէ հարաւային և թէ հիւսիսային որմերուն մէջ կամ անոնց առջեւ խորանաձեւ տեղի և սեղան չկայ, ուր ընդ հակառակն լատին եկեղեցեաց սովորութիւնն է միշտ, որն որ իրենց բոլոր եկեղեցիներն ունին նոյն ձեւերը. վեցերորդ՝ եկեղեցւոյն աւազանը դեռ 1857 թուին կանգուն էր հիւսիսային որմին մէջ ըստ նախնի սովորութեան հին եկեղեցւոյն Հայոց, որն որ ընդ հակառակն լատին եկեղեցեաց մէջ չկայ: Եօթներորդ՝ տակաւին 1857 թուին Աւազ սեղանին վարագոյրին երկաթէ օղակները կեցած էին, որով առաւել ևս կ'ապացուցուի Հայոց չինութիւն և Հայոց եկեղեցի ըլլալը. քանզի լատինաց եկեղեցին բոլորովին վարագոյր չունի՝ որ երկաթեայ օղակներ ունենայ ... բայց սա ալ կ'ըսեմք թէ 1858 թուին՝ նորոգելու ժամանակնին եթէ նոյն երկաթին օղակները և յիշեալ մկրտութեան աւազանը՝ խարդախութեամբ մը հանեցին անյայտ ըրին նէ լատինք՝ Հայոց յիշատակը կամ լաւ եւս է ըսել Հայոց նշանները բնաւ չնչեցին նէ՝ անի չեմք գիտեր. ըստ որում յիշեալ թուին նորոգութեան ժամանակնին՝ որմերուն առջին սեղաններ աւելցուցին իրենց սովորութեան համեմատ, որով և մեր հայկաշէն եկեղեցին՝ հռովմէաշէն դարձուցին...»:

Թ

Ս. ՓՐԿՉԻ ՎԱՆՔԸ

Աւետարանի պատմութեան համաձայն, Ցուդայի առաջնորդութեամբ քահանայապետներու և ժողովրդեան ծերերու մարդերը սուրերով և բիրերով Ցիսուսը Գեթսեմանիի մէջ կը բռնեն ու կապելով կը տանին՝ նախ Աննայի՝ և յետոյ Կայիափա քահանայապետին տունը, ուր, յետ հարցաքննութեան, ամբոխը կը պոռայ ըսելով թէ «մահապարտ է» ու ոմանք կ'սկսին Ցիսուսի երեսը թքնել, կռփել և ուրիշներ ալ կ'ապտակեն. այդ պահուն Պետրոսը գաւթին դուրսը նստած կը տեսնար. ան՝ աղախինի մը հարցման վրայ՝ երեք անգամ կ'ուրանայ Ցիսուսը. յետոյ Պետրոս յիշելով իր վարդապետին խօսքը՝ դուրս կ'ելնէ և դառնապէս կ'սկսի լալ (Տե՛ս Մատթ. ԻԶ. 57–75, Մարկ. ԺԴ. 53–72, Ղուկ. ԻԲ. 54–62, Ցովհ. ԺԸ. 12–27):

Ցիսուսի այս տնօրինական գործերուն ի յիշատակ՝ կայսրական տան տեղւոյն վրայ քրիստոնեայք Զ. դարուն, կառուցած են սրբավայր մը, իբր կեդրոն ուխտագնացութեան. և նոյն սրբավայրը մինչեւ հիմակ գոյութիւն ունի եւ սեպհականութիւնը կը վերաբերի Հայոց և այժմ ան կը կոչուի Ս. Փրկչավանք:

Պիտի գրենք նախ Ս. Փրկչավանքին պատմութիւնը և վերկայութիւնները և յետոյ պիտի յիշենք Ե. դարէն սկսեալ Աւազ Հինգշաբթիի գիշերուան թափօրը Ս. Փրկչի եկեղեցիին մէջ. եւ ապա ի ձեռին ունեցած մեր յիշատակարաններու համաձայն, պիտի յանօթագրենք նոյն վանքին մէջ տեղի ունեցած դէպքերը:

1. Ս. Փրկչի վանքին պատմութիւնը.

Կայիափայի տունը կը յիշատակուի իբր աւերակ տեղ մը՝ ուր 333ին այցելած է Պորտոյլ անանուն ուխտաւորը որ կ'ըսէ. «Սկովամէն Սիոն ելանք, այսինքն արեւմտեան բլուրը որ ընդհանրապէս այս անուամբ կը կոչուի, և կը թուի ըլլալ այն տեղը ուր էր Կայիափայի տունը»: Կիւրեղ Երուսաղէմացին Կայիափայի ապարանքը իր օրով աւերակ ցոյց կու տայ. «Կշտամբեմ զքեզ եւ ապարանիցն Կայիափայ, որ եւ այժմիկ կործանումն ցուցանեն քեզ գրաստապարտեցոյն զօրութիւն» (Կոչումն Ընծայութեան, Գիրք ԺԳ.). Մինչդոյն աւերակ վիճակը տևած է մինչև 400 թուականը:

325–360 թուականներուն՝ սրբավայրերու չինութեանց առթիւ միայն նկատի առնուեցաւ պահպանել Զաղանաց սիւնը Ս. Սիոնի մէջ. մէկ դար վերջն է որ կառուցուած է Կայիափայի տան աւերակին վրայ սրբավայր մը, յանուն Ս. Պետրոսի, 530ին միայն կը յիշատակեն զայն Թէոտոսիոս ուխտաւորը և Անանուն մը Breviarus de Jérusalem անուամբ պատմութիւնը:

Ուղեգիրներու վկայութիւնները և նորագիւտ յիշատակարանները կը հաստատեն թէ չատ կանուխէն Կայիափայի տան տեղւոյն վրայ չինուած սրբավայրէն զատ ուրիշ եկեղեցի մը կառուցուած է նաև Ս. Պետրոսի հառաչանաց կամ զղջման տեղւոյն, այսինքն ուղղակի Սիոնէն Սկովամ իջնող փողոցը պտնուող բլուրին արևելեան զառիվայրին վրայ: Այս երկրորդ սրբավայրին վրայ առանձինն կ'անդրադառնանք:

Որքան որ վերևի յիշատակարանները նոյն սրբավայրը Ս. Պետրոսի անուամբ կը կոչեն, բայց Հայք Ս. Փրկիչ կը կոչեն զայն, ի յիշատակ Փրկչին չարչարանաց, զոր Ան կրեց այս տեղւոյն մէջ: Դարձեալ նոյն նպատակաւ ուխտաւորները ի վաղուց հետէ յարգած են Զաղանաց սիւնը և Բրնտոսի Բ. Բանտը՝ որ փոքր մատուռի մը վերածուած է: Նոյն տեղւոյն վրայ գոյութիւն ունի նաև խոշոր վիմար մը՝ որ հոն բերուած է ըստ աւանդութեան, իբր կախարիչը Ս. Գերեզմանին: Երբ Խորազմեանք 1244ին խորտակել կ'ուզէին զայն, հոն կը գտնուէր նաև սիւնի այն կտորը որուն վրայ թառած աքաղաղը խօսեցաւ Պետրոսի ուրացման ժամանակ: 1479ին Ֆելիքս Ֆապրի կը պատմէ թէ Հայերը ծայրայեղ աղքատութենէ մղուած կը մտածէին այս

քայքայուած վանքը վաճառել ուրիշի, բայց Հայաստանցի հարուստ ուխտաւոր մը նոյն պահուն երուսաղէմ գտնուելով՝ վանքը և եկեղեցին նորոգեց և առատ նուէրներով ազատեց Միաբանութիւնը տագնապէ մը (Evagatorium, I. էջ 265): P. Nau՛ի այս վանքին նկատմամբ 1674ին գրի առած նկարագրութիւնը ստոյգ կը մնայ իր լայն գիծերուն մէջ. «Քաղաքէն դուրս ելնելով՝ Դաւթի Դուռնէն՝ որ կը կոչուի նաև Սիոնի Դուռ, Կայրափայի տան՝ որ մօտիկն է, այցելութիւն կը տրուի: Ան այժմ փոխուած է և հոն չինուած է եկեղեցի մը՝ որ Հայոց ձեռքը կը գտնուի: Զորս կամ հինգ աստիճաններէ հոն կարելի է իջնել. ցոյց կը տրուի նարնջենի մը՝ որ, կ'ըսուի թէ տնկուած է այն տեղը ուր Առաքեալը վառուած կրակէն կը տաքնար սպասաւորներու հետ և որոնց առջև ան ամչցաւ իր բարի Վարդապետին աչակերտը ըլլալու: Աքաղաղին պատկերը քանդակուած է հարթ քարի մը վրայ և ազուցուած է եկեղեցիին դիմացի պատին:

Եկեղեցին կը նայի արևելք, ինչպէս միւս եկեղեցիները զոր ունին բոլոր արևելցիք: Ան չինուած է աւերակին վրայ այն եկեղեցիին՝ զոր երբեմն կառուցած էր Ս. Հեղինէ, ի յիշատակ այն տնօրինական գործոց որ տեղի ունեցան հոն...: Շատ մը նեղութիւններէ վերջ մեր Տէրը հոն նեղ ու մթին բանտի մը մէջ դրուեցաւ: Հո՛ն է յիշատակարանը, տեղը և պատկերը՝ սեղանին մէկ կողմը:

Բանտը քառակուսի փոքրիկ սենեակ մ'է, ուր չինուած է սեղան մը: Խիստ ցած ու նեղ դուռնէ մը կը մտցուի, և երկու կամ երեք անձեր միայն հոն կրնան կենալ» (Տե՛ս Voyage Nouveau. էջ 100):

Ս. Փրկչի վանուց եկեղեցին փոքր սիրուն շէնք մ'է, առանց սիւնի. մէկ սեղան միայն ունի, որուն վէմն է, ինչպէս յիշուեցաւ Ս. Գերեզմանին կախարիչ վիմը, զոր հրեշտակը չրջեց ու վրան նստաւ (Մատթ. ԻՀ. 2): Այս կախարիչին վաւերականութիւնը ուրիշ քրիստոնեայ ազգերն ալ կը հաստատեն և միշտ ուխտի կու գան: Աւազ սեղանը նուիրուած է յանուն Ս. Փրկչայ: Երկրորդ Բանտի սեղանէն զատ, եկեղեցւոյն գաւթին մէջ կը գտնուի պատարագամատոյց սեղան մը յանուն Ս. Զաքարիայի:

Աւազ սեղանի ետևի կողմը կար պահարան մը որ ունէր սեղան մը յանուն Ս. Երորդութեան: Այս պահարանին դուռը հին

ժամանակներէն հիւսուած էր պատով և ներսն ալ ուերակ։ 1886ին դուռը բացուած և ներքին կողմը նորոգուած է, և թէև սեղանն ալ վերահաստատուած էր, սակայն վերջին նորոգութեանց առթիւ հարկ տեսնուած էր վերցնել զայն։

Այս եկեղեցիին գաւիթը Գրիգոր Պարոնտէր պատրիարքէն սկսեալ իբր գերեզմանատեղի յատկացուած է Ս. Աթոռոյ գահակալներուն և այլ բազմաչխատ բարձրաստիճան եկեղեցականաց։

2.— Աւագ Հինգշաբթի գիշերուան Թափօր կանոնը Ս. Փրկչի եկեղեցիին մէջ.

Դ. դարէն սկսեալ Երուսաղէմի մէջ Աւագ Հինգշաբթի գիշեր տեղի կ'ունենար եկեղեցական թափօր մը, որ Ձիթենեաց Լեռնէն սկսելով և Տնօրինական Ս. Տեղեաց մէջ կանգ առնելով՝ ընթերցմամբ և սաղմոսերգութեամբ կը շարունակէր իր այցելութիւնը և կը վերջացնէր Դողգոթայի մէջ. կը տեսնուի որ Դ. դարուն նոյն թափօրը Ձիթենեաց Լեռնէն կ'իջնէր Գեթսեմանի և անկէ ալ կու գար Դողգոթա. այս տեղեկութիւնը կը քաղենք լատին ուխտաւորուհի Էթէրիայի Ուղեգրութենէն։

Զ-ի դարուն եկեղեց. թափօրը կ'սկսի Աւագ Հինգշաբթի գիշերը այցելելով նաև Ս. Փրկչի եկեղեցին, որ եկեղեցական լեզուաւ կ'ըսուի «Սուրհ Քահանայապետին». ինչպէս վերև յիշուեցաւ, Զ. դարու քառորդին չինուեցաւ Ս. Փրկչի եկեղեցին, կայիափայի տան տեղւոյն վրայ. ահա նոյն թուականէն սկսեալ ուխտաւորները կը յիշատակեն Աննաթ Հինգշաբթիի այցելութիւնը ի Ս. Փրկիչ։ 1192 թուին Մաչկուոր վանքին մէջ ընդօրինակուած երկաթագիր սաղմոսական ձաշոց մը հետևեալ կերպով կը յիշէ թափօրին այցելութիւնը ի Ս. Փրկիչ. «եւ անդին երթան ի սրահ քահանայապետի ի տեղին յորում ապաշխարութիւն Պետրոսի, եւ ընթերնուն Աւետ. ըստ Մատթ.ի ՃԻԸ. «իսկ ելոցա կաղեալ զՅիսուս...» եւ յետոյ թափօրը սաղմոսելով գիշերային կու գայ Դողգոթա եւայլն։

Այժմ տեսնենք թէ Զ. դարու վրացի սաղմոսական ուխտաւորը ինչպէս կը նկարագրէ այս այցելութիւնը.

«Էջ 77... կ'արտասանեն սաղմոս եւ աղօթք, յետոյ թափօր կու գայ դէպ ի Ս. Պետրոս ուր էր կայիափայի տունը եւ կ'երգեն հինգե-

տորդ կցուրդը (antiphone)... կ'արտասանեն կը սաղմոսը «Կեցո զիս Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ, ընկղայ ես ի խորս անկնդոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ»։

Այս սաղմոսը բարձր աստիճանով մեսիական է, կը գուշակէ մեր Փրկչին տառապանքը խաչելութեան ժամանակ։ Պէտք կ'ըլլայ հոս նշանակել այն համարները որ մասնաւորապէս կը վերաբերին Յիսուսի Քրիստոսի բերուիլը Կայիափայի առեանը, որուն տան մէջ գումարուած էր քահանայապետներու և Հրէից ծերերուն ժողովը, ի խնդիր վկայութեան ընդդէմ Յիսուսի, մեռցնել տալու համար զԱնիկա — 5 համար. «բազումք եղեն իմ զիս զընդխոյ իմոյ, որք ատէին զիս ի տարապարտուց» — 6 համար. «զօրացան յիս բշնաւիք իմ եւ ատելիք իմ ի նմանիր, ինչ զոր ոչ յափշտակեալ էի՝ տուժէի նոցա» — 10 համար. «օսար եղէ ես յեղբարց իմոց եւ հիւր որդւոց մօր իմոյ» — 11 համար. «նախանձ տան ի կիր զիս, եւ նախատինք նախատչաց ինց անկան ի վերայ իմ»։ Այս համարները հաստատուելեան այն անարգանքի և նախատանաց տեսարանով զոր պատրաստեցին Սենեդրիոնի անդամները Յիսուսը մահուան դատապարտելով։

Այս հատուածներուն վրայ պէտք է աւելցնել նաև 27 համարը. «եղիցին բնակարիւք նոցա աւերակ, եւ ի յարկս նոցա մի ոք իցէ որ բնակիցէ»։ Անէծք մը որ աւերակի կը վերածէ Յիսուսը հալածողներու ցեղը և բնակարանը. անէծք մը որուն ճչգօրէն կատարումը կը հաստատէին Երուսաղէմի քրիստոնեաները՝ ցոյց տալով ամէն ազգի ուխտաւորներուն Կայիափայի տան աւերեալ պատերը. արդէն յիշեցինք այս մասին կիւրեղ Երուսաղէմացիին խօսքերը։

Յիշենք նաև լատին բանաստեղծ Prudenceը (405), որ իր գործերուն չատ տեղերուն մէջ իրազեկ կը թուի Պաղեստինի տեղական աւանդութեանց ան հետևեալ կերպով կը բացատրէ իր Dittochaeon աշխատութեան մէկ քառեակին մէջ. «ան ինկած է. հայհոյիչ Կայիափայի ամբարիշտ տունը, ուր Քրիստոսի սուրբ երեսը ապտակուած է. այս է վիճակը մեղաւորներուն, երենց մահէն յետոյ անոնք պիտի ապրին միայն երենց աւերեալ մահարոյր յիշատակարաններուն մէջ»։

Կայիափայի տան աւերակները թողուած էին այդ վիճակին մէջ իբր մարգարէական յիշատակարան մը և աստուածային վը-

բէժխնդրութեան ապացոյց մը. և այդ էր պատճառը որ այն ատեն այս տեղւոյն վրայ եկեղեցի չկար:

Ս. Պետրոսի եկեղեցին չինուած էր արդէն Զ. դարու առաջին քառորդին, ինչպէս յիշեցինք արդէն, Աւագ Հինգշաբթիի թափօրի ժամանակ հոն կը կարդացուէր Մատթ. ԻԶ. 57–Իէ., 2, որ կը պատմէ Կայիափայի տան մէջ Յիսուսի տրուած նախատանաց տեսարանը: Յիշատակարանները հետևեալ կերպով կը հրահանգեն թափօրին գնացքը. «Ցետոյ թափօրը կ'երթայ Կայիափայի տունը ուր Պետրոս ուրացաւ Տէրը. հոն կը գտնուի Ս. Պետրոսի եկեղեցին: Միևնոյն Թուականին աւագ սարկաւագ Թէոդոսիոս իր Ուղեգրութեան մէջ կը պատմէ. «Այն սիւնը որ Կայիափայի տան մէջ էր՝ այժմ կը գտնուի Ս. Սիոնի մէջ: Մինչ Տէրը կը ձաղէին և սիւնը զրկած էր, իր բազուկները, ձեռքերը և մատները անոր մէջ կը մտնէին իբր կակուղ մոմի մէջ . . .»: Ս. Սիոնէն՝ Կայիափայի տունը, որ է այժմ Ս. Պետրոսի եկեղեցի, յիսուն քայլ է: Թէոդոսիոսի պայմանագրական քայլը 5–6 մէտր է. կը հետևի ուրեմն որ սոյն հեղինակը Կայիափայի տունը 250 մէտր հեռի կը դնէ վերնաասունէն, ինչ որ կատարելապէս ճիշդ է: Այս եկեղեցին Պարսից արշաւանաց ժամանակ կանգուն էր, վասն զի Ս. Տեղեաց ծիսարանին վրացական թարգմանութեան վկայութեան համաձայն, ան Սուիրոնիոսի ժամանակն ալ Աւագ Հինգշաբթիի հանդիսական թափօրի ընթացքին նոր կայանի մը տեղն էր: Հոն բարեպաշտ հաւատացեալները կը յիշէին Փրկչին վերջին դիշերուան բոլոր դէպքերը, հարցաքննութիւնը, սուտ վկայութիւնները, Կայիափայի երդմնեցումը և Յիսուսի պատասխանը հաստատելով թէ՝ ինքն է «Քրիստոս, Աստուծոյ Որդին», քահանայապետին բարկութիւնը և Փրկչին ի մահ դատապարտութիւնը, Պետրոսի երեք անգամ ուրացումը գութին մէջ, Սենեքրիմի անդամոց և ծառաներու անարգանքը, Պետրոսի զղջալը հաւախօսի ատեն, երբ Փրկիչը իրեն կը նայէր: Իւրաքանչիւր ոք իր յատուկ զղջումը կը յայտնէր հոն աղօթելով «ի ծունր»:

Աչակրաց Թուականէն սկսեալ Աւագ Հինգշաբթիի հանդիսական թափօրը կը կորնչէ իր կանոնաւորութիւնը և նոր փոփոխութիւններ մտնելով ընդունուած կանոնը կը խանգարուի:

(Տե՛ս Ordre des offices de la Semaine Sainte à Jérusalem du IVe au Xe siècle. P. J.-B. Thibaut):

3. Դէպքեր՝ որ տեղի ունեցած են Ս. Փրկչի վանքին մէջ, յիշատակարանաց համաձայն.

Ինչպէս տեսանք նախընթաց հատուածներուն մէջ Ս. Փրկչի վանքը չատ հին է, և կառուցուած է Կայիափայի տան տեղւոյն վրայ, Արաբացիք կը կոչեն այս վանքը Հասրէլ-Մեսիհ, վասն զի, ինչպէս յիշեցինք, հոն կը գտնուի Քրիստոսի երկրորդ բանտը: Ան չինուած է քաղաքին պարսպէն դուրս: Անաստաս վարդապետն ալ կը յիշէ զայն իր Վանօրէից Ցուցակին ներածական մասին մէջ, իբր արքունական ձախքով չինուած:

Նկատի առնելով դարերու ընթացքին նոյն վանքին վրայ կատարուած յարձակումները այլ և այլ կողմերէ և ենթարկուած աղետաւոր տեսարաններու, ինչպէս կը վկայեն յիշատակարանք, արդարև հրաշք մը պէտք է համարել անոր մինչև այսօր կանգուն մնալը: 1353 Թուականին (Հիշ. 1 Շապատ 755) Հեօճճէլթէ մը կը հասկցուի որ վասիլ եպիսկոպոսի օրով, փոխանորդ Գաբրիէլ վարդապետը՝ տեսնելով որ Ս. Փրկչի վանքը ամբոխին յարձակումներուն հետևանքով քանդուած էր, ուզեց վերաշինել, բայց արգելքի հանդիպեցաւ: Հայերը վանքին նորոգութեան համար Մելիք Մանսուր Հիւսսամէտտին Սալահիէն հրովարտակ ըստացած էին, բայց հակառակորդներուն բողոքին վրայ սուլթանը քննիչներ ղրկած էր Երուսաղէմ. և անոնց աննպաստ տեղեկութեան վրայ, սուլթանը հրամայեց քանդել վանքը և թողուլ իր առաջին աւերակ վիճակին մէջ. դատաւորը կոչելով Գաբրիէլ վրդ.ը պատուիրեց անոր բոլորովին քանդելու վանքը. ան չի քանդեց և ցոյց տուաւ Մելիք Սալիհ Իսմայէլի չինութեան հրովարտակը. բայց դատաւորը բողոքագրով մը տասն անձեր կը ղրկէ Եգիպտոս, որուն վրայ սուլթանը դարձեալ հրովարտակով մը կը հրամայէ կործանել վանքը և վերածել իր առաջուան վիճակին: Նոյն հրովարտակին վրայ ամբոխը բազմութեամբ կը դիմէ և ի հիմանէ կը քանդէ վանքը:

Ս. Յակոբայ Մատենադարանին Թ. 540 ձեռագրին յիշատակարանին համաձայն, 1355ին կը վերաշինուի վանքը. ահա յիշատակարանը.

«Ես նուաստ կարապետ վարդապետ որ եմ ի գաւառին Տոսպայ վերձ առ ստորոտ լերինն Վարագայ, եւ ի տղայութեան հասակիս սիրեցի զսպասաւորութիւն Բանի. գնացի առ Յովհաննիկս վարդապետն Սրմիշեցի եւ աշակերտեցի նմա, զ. ամ եւ առի զաւրհնութիւն կարգի քահանայութեան, եւ անտի գնացի ի վանսատանն Պղաձոր առ հոչակաւոր վարդապետն յԵսայի եւ անդ կացեալ զամս ը. առի զաւրհնութիւն հիւանդի վարդապետութեան յերեսուն ամին եւ առաջնորդութեամբ Բրիսոսի եկի ի սբ. խաղաս երուսաղէմ երկիրպագանել սբ. Տնաւրինական տեղացս եւ տեսի զսբ. Փրկիչ եկեղեցին որ է տեղիք չարչարանաց Բրիսոսի Աստուծոյ յուսոյն մերոյ. եւ կոխան ձեալ անօրինաց այլ եւ ձիոց եւ իշուց, խախած եւ ծակած. եւ ես նուաստս կատողութեամբ Յիսուսի գնեցի ի Պերլանեցի ի չորս հազար դրամ ընդ գինն եւ ընդ կաշառն, եւ զ. անգամ յեգիպտոս իջայ եւ առի թուղթ հրամանի չարխանի Եգիպտոսի շինութեան վանիցս Սբ. Փրկչին, բ. անգամ յերկիրն Կիլիկեցւոց գնացի եւ բազում աշխատանս կրեցի ի ծովու եւ ի ցամաքի զի հեշտոտն ընթանայի ընդ ցամաքն, եւ ի յերուսաղէմ անպատմելի վշտացայ ի չաւօրինաց եւ չարհնաւորաց այլ եւ ի սուտ եղբարց»:

Կարապետ վարդապետ այս յիշատակարանը գրած է իր սեպհական Աստուածաշունչին մէջ զոր յետոյ կը նուիրէ Ս. Փրկչի վանքին, ի յիշատակ իր հօրը Թովմայ քահանային և մօրը:

Կարապետ վրդ.ին կողմէն Ս. Փրկչի վանքին վերաշինութեան թուականը յայտնի է ուրիշ յիշատակարանէ մը (Թ. 574), որուն մէջ կը յիշուի կարապետ վրդ.ը, 1355ին, և անոր հետ՝ Սարգիս մեհնակաց մը իբր անոր գործակից. ուրեմն 1355ին վանքին վերև յիշուած քանդումէն անմիջապէս վերջ Տոսպեցին է որ կը ձեռնարկէ վերաշինութեան, ըստ իր վերոյիշեալ անթուական յիշատակարանին:

Ունինք նաև ձեռագիրի մը անթուական յիշատակարանը (Թ. 1818), ուրկէ կը հասկցուի նաև որ Կարապետ վրդ. Երուսաղէմացի Ս. Փրկչի վանքին վերաշինութեան չուրջ կը պատմէ հանման դէպքեր, ինչպէս Տոսպեցին, այդ պատճառաւ ոմանք այս երկու անձերը կը նկատեն միևնոյնը: Տոսպեցին իր անձին համար կը հաղորդէ մանրամասնութիւններ. իսկ Երուսաղէմացին չուռ է իր անձին չուրջը, միայն թէ իր Ղուկասու մեկնութեան ձեռագրին մէջ բուն յիշատակարանէն զատ, ձեռագրին լուսանցքին վրայ, ինքնագիր հետևեալ տողն ունի. «Տէր Յս. ողորմեա Կրպ. վրդ.ին Եմացո»: Եմացո (Երուսաղէմացի) բառը հոս ալ կըրկնած է. իր անձին համար քանիցս այս մակդիրը գործածող անձը ինչպէս կրնայ այլուր փոխել Տոսպեցիի. ըստ իս այս հաւանական չէ. յետոյ Երուսաղէմացին իր յիշատակարանին մէջ կը յիշէ նաեւ Գեթսեմանիի Ս. Կուսի տաճարին նորոգութիւնը, ինչ որ չի յիշեր Տոսպեցին. այդ պատճառաւ Երուսաղէմացին Տոսպեցիին հետ նոյնացնելու հակամէտ չըլլալով մեր «Միսթաւաֆ եւ Սյցելոմ Հայ Երուսաղէմի» աշխատութեան մէջ զատ զատ անձեր ներկայացուցինք ծանօթութեամբ մը (էջ 200), և վերջնական ճշդումը պիտի կատարենք այն ատեն երբ Երուսաղէմացիին տպրած թուականը կարողանանք հաստատել:

Ս. Փրկչի վանքին վերաշինութեան այս թուականէն սկսեալ վանքին մէջ կը ծաղկի գրչագրութեան արուեստը և յետագայ դարերու մէջ ալ կը յարատևէ: Այսպէս 1363ին կիրակոս գրիչ իր Աստուածաշունչի ԺԲ. Մարգարէից գիրքերը կ'ընդօրինակէ նոյն վանքին մէջ ու իր յիշատակարանին մէջ կը յիշէ վանքին վանահայր Ներսես վրդ.ը ու անոր ծնողքը և ուրիշ մրաբաններ: Կիրակոս գրիչ յետոյ նոյն Աստուածաշունչը հետը կտուց անապատ տարած է (Տե՛ս Միսթաւաֆ եւն. էջ 205):

1355ին Ճառընտիր մը, և 1363ին Սարգիս գիրք մը կ'ընդօրինակէ Ստեփանոս երէց նոյն վանքին մէջ. յիշեալ գրիչը Ս. Յակոբի մէջ եւս ուրիշ ընդօրինակութիւններ կատարած է (անդ, էջ 483): 1398ին Սահակ աբեղայ Դրիմցի կ'ընդօրինակէ Ճառընտիր մը, և կը նուիրէ Ս. Փրկչի վանքին: Իր յիշատակարանին մէջ կը յիշատակէ իր ժամանակակից միաբանակիցները. Գառնաղ վարդապետ, Աստուածատուր դպրապետ: Յովհաննիկս սկևռաս, Յովհաննիկս բդեազործ, Սրեւ միաբանակից, Յովհաննիկս Շառնախեցի և Ցակոբ դպիր (անդ, էջ 434): 1424ին Յովհաննիկս աբեղայ հոն կ'ընդօրինակէ Սարգիս գիրքը և յիշատակ կու տայ զայն Ս. Փրկչի վանքին (անդ, էջ 351–52):

1355 ի վերաշինութենէն 125 տարի վերջ 1478ին, ըստ Ցապրիի Ուղեգրութեան, զոր վերև յիշեցինք, Ս. Փրկչի վանքը ծախու կը հանուի պարտքի համար. բայց Հայաստանցի անանուն ուխտաւոր մը պարտքերը կը վճարէ, վանքը կը նորոգէ եւ կը յանձնէ Միաբանութեան: Հոգելոյս Տ. Դուրեան Սրբազան այս

անանուն ուխտաւորին յիշատակին համար Ս. Փրկչի վանքին մէջ քառակուսի յախճապակիի յիշատակարան մը դնտեղել տուաւ սա խօսքերով. «1479, Սեպտեմբեր Ուխտաւորին. F. F. 1925, Մ. Ս. Ց.»:

Այս վերանորոգութենէն 134 տարի վերջ, 1613ին Երիւղոր Պարոնտէր պատրիարքին օրով, վանքին հակառակորդներէն ոմանք գիշեր ատեն կ'այրեն թէ վանքին և թէ եկեղեցիին դուռները, կը կողոպտեն վանքն ու եկեղեցին: Պատրիարքը և դատաւորը վանք կ'երթան քննութեան համար. կը տեսնեն այրեցաւեր վանքը. դատաւորը բան մը չի կրնար ընել, միայն կը բաւականանայ գործուած վնասները գրի առնուլ և յանձնել պատրիարքին. հակառակ դրացիներէն ոմանք քննութենէն զրգռուած տարբեր հակառակութիւններ կը սարքեն ու կ'ըսեն թէ իրենց նախնիք Սուլթան Սիւլէյմանի կալուածոց վերակացութիւնն ունէին, և զոր կը վարէին ժառանգաբար. կ'ամբաստանէին թէ այն արտը ուր քրիստոնեայք իրենց մեռելները կը թաղէին՝ մաս կը կազմեր իրենց վերակացութեան յանձնուած կալուածոց: Դատարան կը կանչեն վանքի տեսուչ Աստուածատուր վրդ.ը և ուրիշներ, որոնք կը ներկայացնեն իրենց պաշտօնագիրերն ու դատաւորը կը հաստատէ գերեզմանատան սեպհականութիւնը: Դրացիները աւելի կը նեղեն պատրիարքը՝ որ կը դիմէ Սրքուհի Դուռը. կրկին քննութիւն կ'ըլլայ արքունի հրամանաւ. դարձեալ կը հաստատուի գերեզմանատան օրինաւորութիւնը: Դրացիները դրգռուած՝ այս անգամ վանքին պատերը կը ծակեն ու քարերը կը խլեն պատերէն կործանելու համար զայն. գիշերը միւսանգ քանդումին ձայները երբ կը լսեն, օգնութիւն կ'աղաղակեն. բայց չարագործները կը փախչին: Դարձեալ քննութիւն կը կատարուի, արդիւնքը անորոշ. միայն թէ պատրիարքին կը պատուիրեն որ վանքին պարիսպները նորոգէ, երկաթէ դուռը դնել տայ տեղը և ամրացնէ բոլոր տեղերը: 1614–15 թուականներուն գրուած պաշտօնագրերէն կը հասկցուի թէ Երիւղոր պատրիարք Պարոնտէր ընդարձակ նորոգութիւններ կատարած է Ս. Փրկչի վանքին մէջ: Դամասկոսի կուսակալին կողմէն յատուկ պաշտօնեայի մը կողմէ տեղւոյն վրայ քննութիւն կը կատարուի՝ այս նորոգութեանց մասին ու կը հաստատեն վերաշինութեանց օրինաւորութիւնը:

1691ին Յովհաննէս պատրիարքի օրով, դարձեալ ուզողականները պարսպին վրայէն վանք կը մտնեն. կը կողոպտեն եկեղեցին, կ'սպաննեն Յովհաննէս և կարապետ միաբանները և միւսներն ալ կը փախչին: Յովհաննէս պատրիարք տեսնելով այս չարիքները, կայսեր կը դիմէ և նոր հրովարտակով մը կ'սկսի նորոգել վանքը և կը բարձրացնէ հին պարիսպները չորս կանգուն չափ, և յետ քննութեան հազիւ հազ դատաւորը վաւերական կը նկատէ այս նորոգութիւնները չատ նեղութիւններէ վերջ: Դրացիները դարձեալ այս նորոգութեանց համար խնդիր կը յարուցանեն և պատրիարքը 1695ին, իր գիմումին վրայ կրկին հրովարտակ կ'ստանայ. բայց հակառակորդք կը պնդեն իրենց պօրէն պահանջներուն վրայ. 1698ին միայն հայ միաբանները մի քիչ կը հանգստանան:

1631ին Մինաս պատրիարքի օրով, Երուսաղէմի Սալահիէ իսլամ վարժարանին վերատեսուչները դատարան կը դիմեն և կ'ամբաստանեն պատրիարքը և Թարգման Յովհաննէս վրդ.ը ըսելով թէ՝ Հայոց Փրկչայ վանքին ձիթենեաց պարտէզը, գերեզմանատունը, Ս. Փրկչի պարսպէն մինչև արեւմտեան ճանապարհը Սալահիէ դպրոցին կալուած կը նկատուին, վանքին և պարտէզին վրայ տարեկան վարձք մը (հէքիր) դրուած ըլլալով ամէն տարի կը վճարէին. տասն տարիէ ի վեր չեն վճարած նոյն տուրքը և պարագ ունին 8800 փարայ և կը պահանջեն որ վճարուի: Հայոց Թարգմանը դատարանին առջև պաշտօնագրերով կը հերքէ այդ ամբաստանութիւններն, և դատաւորն ալ կը մերժէ ամբաստանողներուն բողոքը:

1703 Օգոստոս 18ին Ս. Փրկչի վանքին մէջ կը ծագի աւելի քաւալի դէպք մը, թելադրութեամբ հակառակորդ դրացիներուն. նոյն օրը, Ս. Փրկչի միաբանները կերակուրի համար Ս. Յակոբ գիմած ըլլալով՝ ոմանք եղելութիւնը իմանալու համար կ'երթան Ս. Փրկիչ՝ ուր կը տեսնեն վանքին դուռը կիսաբաց, միաբաններէն ոմանք սպաննուած, եկեղեցիին և սենեակներուն դուռները խորտակուած և վանքը թալանուած. յետ քննութեան ստուգուած է որ սպաննուած է Սարգիս վրդ.ը և երեք ծերուկ միաբաններ: Հայերը խստիւ բողոքեցին դատաւորին, որ ոչ միայն աւազակները պտնելու ջանք մը չէ ըրած, այլ մեռելները ուն համար չորս քսակ դրամ պահանջած է հայոցմէ: Հայերը

կ'ատուգեն որ գողերը ինքզինքնին գալով վանքին հակառակորդ դրացիներէն մէյն թիւլադրութեամբ կատարած են այդ ոճիրը։ Ցոյնք և լատինք ևս միանալով կը դիմեն Պոլիս թէ՛ Պատրիարքարան և թէ կառավարութեան, որպէս զի վանքին հակառակորդները Գազա տեղափոխուին և անոնց տեղը եկեղիչերինները բնակեցնեն։

1800ին, Պետրոս պատրիարքի օրով, Մեծն Նաբոլէոն իր զինուորներով Պաղեստինէն կը քաշուէր. լեռնական Ֆելլահները Ռէմլէի դատարկութենէն օգտուելով քաղաք մտած ու ամէն ինչ կողոպտելէ ու Հայոց Ս. Գէորգ եկեղեցին ևս թալլելէ յետոյ կը մնային ու կու գան հաստատուիլ Երուսաղէմ, Սիոնի թաղին մէջ։ Աւարառուները գիշերը Ս. Փրկչի վանքը կը մտնեն, գտածնին կը յափշտակեն, կը խորտակեն պատկերները, եկեղեցւոյն խաչը ու կը մնային Ռէմլէ։ Նոյն միջոցներուն Յոպպէի, Ռէմլէի ու Երուսաղէմի վանքերը կ'ենթարկուին մեծ նեղութիւններու։ 1810ին, Թէոդորոս պատրիարքին օրով, անտանելի դարձած էին եկեղիչերի զօրաց աւարառութիւնները. եկեղիչերիք քաղաքային պատերազմ բացին Մղրըպի զինուորներուն դէմ. երուսաղէմ ահուսարսափի մատնուած էր, եկեղիչերինները Դաւթի բերդին մէջ հաստատուած էին, բայց անոնցմէ մաս մը փախչելով գացին աւերեցին Ս. Փրկչի վանքը զոր պաշարեցին Մղրըպի զինուորները անձնատուութեան համար և չորս ժամ պատերազմեցան. երբ եկեղիչերինները չհամակերպեցան, ռմբակոծեցին վանքին պարիսպները, որուն պատճառով հիւսիսային պատը կործանեցաւ և երկու տեղէ խրամ բացուեցաւ. Մղրըպինները ներս խուժեցին և սպաննեցին հոն ապաստանողները։ Այս ընդհարումներուն պատճառաւ Յերուսղէմի Յակոբ եպիսկոպոսը և միաբաններ նուազած հազիւ հասան Ս. Յակոբ։ Զինուորները վանքին կարասիները աւարի տուին, մինչև անգամ դուռներուն բեւեռները եւ նիգերը հանեցին։ Քաղաքապետը չկրնալ կուտայ Ս. Փրկչի պարսպին խրամատները, և կ'ստիպէ Հայերը որ նորոգեն կործանուած տեղերը ու հոն միաբաններ հաստատուին, ըստ առաջնոյն։

Տխուր դէպքերու այս համառօտագրութենէն կը տեսնուի որ մանաւորապէս ԺԲ. դարէն մինչև ԺԹ. դար պարբերաբար Ս. Փրկիչ վանքին վրայ պակաս չեն եղած թալանները և յարձակումները մերթ հակառակորդ դրացիներէն և մերթ աւարառու աւազակներէն. այս կրկնուած աղէտներուն և կործանումներուն հանդէպ կը դիտուի որ Հայ միաբանութիւնը դարուց ի դարս երբեք չէ ընկճուած, այլ կամքի ու հաւատքի զօրեղ ուժգնութեամբ մը դիմակալելով՝ կարողացած է չորունակ վերաչինել վանքը պահպանելով սրբավայրին վեհութիւնը։ Կրնա՞նք ըսել թէ Ս. Փրկիչ նահատակ վանք մը եղած է։

Դէպքերու այս համառօտութիւնը քաղեցինք Երուսաղէմի Պատմութենէն զոր հանդուցեալ Ս. Եպ. Տ. Յովհաննէսեան յօրինած է ու արաբերէն պաշտօնագիրներէ, հէօճէթներէ և հրովարտակներէ թարգմանելով այս դէպքերը մանրամասն գրի առած է ժամանակագրական կարգաւ։

Վերև յիշուած գլխաւոր վերաչինութիւններէ ու նորոգութիւններէ զատ, այլ և այլ ժամանակներ մասնաւոր նորոգութիւններ կատարուած են Ս. Փրկչի վանքին մէջ. այսպէս 1734ին Գրիգոր Շղթայակիր և Յովհաննէս կոլոտ պատրիարքները Ս. Փրկիչ եկեղեցին կը նորոգեն սեղանն ու յատակը սալարկել ու խաչկալը վինել կուտան աշխատակցութեամբ միաբաններու։

1794ին Եւդոկիացի Պետրոս պատրիարքին օրով Սկևայ Զէրգէցի Մատթէոս աբեղան՝ Ս. Փրկչի տեսուչը՝ եկեղեցին անօթները կ'աւելցնէ և բոլոր եկեղեցին չինիապատ կը զարդարէ։

1812ին Ս. Փրկչի տեսուչ Եւդոկիացի Անտոն աբեղայ՝ վանքը և անոր խուցերը նորոգել կու տայ։

Ս. Փրկչի վանքը ճոխ է խաչքարերով, տապանագիրներով և այլ յիշատակարաններով որոնց ընդօրինակութիւններն ամփոփուած են Սիոնի գերեզմանատան տապանագիրներու հետ Տ. Հ. Թ. Սաւալանի Պատմութիւն Երուսաղէմի նորատիպ գիրքին յաւելուածին մէջ (էջ 1256–1304)։

Ժ

Ս. ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

(Հառաչումն Պետրոսի)

Արդէն նկարագրեցինք Ս. Փրկչի վանքը որ չինուած էր Կայիափայի տան տեղւոյն վրայ, և ուր Պետրոս առաքեալ ուրացաւ իր վարդապետը և այս դէպքին յիշատակին համար էր՝ որ Հայերը կառուցին նոյն վանքը և արաբացիք անոր Հապս էլ-Մէսիհ անունը կուտան։

Ս. Պետրոսի անուամբ չինուած է Ե. դարուն վանք մը ևս, Սիոն լերան արևելեան կողին վրայ, ի յիշատակ Պետրոս առաքելոյն ղղման և ապաշխարութեան։ Ոմանք խնդիր կը յարուցանեն ըսելով թէ՝ Հայոց Ս. Փրկչի վանքին կառուցումը աւելի վերջին դարերու աւանդութեան համաձայն է, վասնզական աւանդութիւնը և նորագոյն հետազօտութիւնները կ'ապացուցանեն թէ Կայիափայի տունը կը գտնուի Սիոնի արևելեան կողմը, Սելոամ գացող ճանապարհին զառիվայրին վրայ, և թէ այդ տան տեղւոյն վրայ չինուած է տաճար մը Պետրոսի թէ՛ ուրացման և թէ ապաշխարութեան յիշատակին համար. նոյն տեղւոյն այժմու սեպհականատէր Աստմբսիոնիսդներուն կարծիքն է այս, որուն հակառակը կը գրեն ուրիշ գիտուններ և մասնաւորապէս Ֆրանչիսկեանք։ Թէ՛ աւանդութիւնը և թէ՛ ուխտաւորաց Ուղեգրութիւնները կ'ապացուցանեն թէ յառուն Ս. Պետրոս առաքելոյն երկու եկեղեցիներ կառուցուած են, մին՝ ուրացման տեղւոյն վրայ, որ է Հայոց Ս. Փրկիչ վանքը, միւսն՝ Սիոնի արևելեան կողմը, Սելոամ տանող ճանապարհին վրայ, և ան կը կոչուի Պետրոսի հառաչանաց վանքը։

Այս երկրորդ վանքին առաջինէն զատ ըլլալուն և անոր գոյութեան մասին ուղեգրաց պատմական ծանօթութիւնները մէջբերելէ յետոյ, վանքին հայկական հիմնարկութիւն մը ըլլալուն և անոր նկարագրութեան վերաբերութեամբ օտարազգի երկու մասնագէտ գիտուններու մէկ գրուածքը պիտի թարգմանենք,

կցելով անոր նոյն վանքին աւերակներէն գեւան եղած քազմաստեղեան պղնձէ ձուագարանին մասը կազմող հողէ սկաւառակի մը եզերքին յուշնարէն արձանագրութեան մնկնաբանութիւնը՝ նոյն գիտուններուն կողմէն։

1. — Յիշատակութիւնք Ուղեգրաց.

808ին, Commemoratorium de Casis Dei *յիշատակարանին հեղինակը կը յիշէ այս վանքը. նոյն յիշատակարանին նպատակը Ս. Տեղեաց կամ լքեալ և աւերեալ եկեղեցիներուն ցուցակը կազմել չէ, այլ պարզ թուարկում մը երուսաղէմի և շրջակայից քահանաներուն և կղերականաց՝ Մեծին Կարոլոսի կողմէն տրուելիք նպաստներուն բաշխումը դիւրացնելու համար։ Ան կը խօսի միայն քահանայ ունեցող եկեղեցիներուն վրայ. այսպէս կ'ըսէ ան. «Ս. Պետրոսի մէջ, ուր անիկա լացաւ, հոն կան հինգ քահանաներ և կղերներ»։ Ան ո՛եէ ակնարկութիւն մը չընէր ոչ Առաքեալին ուրացումին, և ո՛չ քահանայապետին տան։ Ուր անիկա շատ բառերը կը թուին ցոյց տալ գոյութիւնը ուրիշ սրբավայրի մը՝ միևնոյն Ս. Պետրոսի անուամբ, բայց տարբեր յիշատակի մը նուիրուած։ 870ին Բեռնարդոս վանական կը գրէ, «քաղաքին հարաւային կողմը կայ Սիոնի լերան վրայ ուրիշ եկեղեցի մը, այն տեղւոյն վրայ, ուր Պետրոս ուրացաւ իր վարդապետը»։*

Բեռնարդոս վանականին այս ծանօթագրութեան մէջ Ս. Պետրոսի եկեղեցւոյն ցոյց տուած վայրը ճիշդ է, ինչպէս նաև մօտը գտնուած Ս. Սաթփանոսի եկեղեցին, բայց այս վերջինը քարկոծման տեղը չէ որ չինուած է, այլ մասանց ամփոփման տեղը. գալով իր ցոյց տուած Ս. Պետրոսի եկեղեցւոյն, չինուած է ան իր ղղման տեղւոյն վրայ։

Ի-Ը դարուն խմբագրուած է Երուսաղէմի եկեղեցեաց ծիսարանը, որուն հին և նահիլ վրացերէն թարգմանութեան երկու ձեռագիրները 1912ին տպագրուած են Թիֆլիսի մէջ Ջէքելիձէի կողմէն. այս ձեռագիրներէն մին (նահիլ) ցոյց կու տայ մեզ Ս. Պետրոսի սրբավայրերու երկուութիւն մը, 21 Յունվարին, ունի հետևեալ յիշատակութիւնը «ի Ս. Պետրոս նաւակատիք». 18 Օգոստոսին, ուրիշ մը. «Ս. Պետրոս Առաքելոյն եկեղեցիին մէջ նաւակա-

տիմ»: Այս երկու նաւակատիքները, կ'ըսեն, կ'ապացուցանեն երկու եկեղեցիներ, մին է կայիափայի պալատը, ինչպէս ծիսարանը ուրիշ տեղ ցոյց կու տայ, միւսն է այն եկեղեցին ուր Պետրոս լացաւ:

Եպիփան վանական (ԺԱ. դար) կը գրէ իր պատմութեան մէջ (P. G. CXX, 261, 264) թէ «քահանայապետին պալատին մէջ կար տեղ մը ուր կը տեսնուէր ակութ մը որուն մօտ աղախին մը հարցուր զրաւ Պետրոսի և որ երեք անգամ ուրացաւ Քրիստոսը, երբ իսկոյն հաւը խօսեցաւ»:...

«Բազաքէն դուրս, աջ կողմը, պարսպին մօտ կար եկեղեցի մը՝ ուր Պետրոս քահանայապետին տունէն դուրս ելլելով՝ դառնապէս լացաւ, և եկեղեցին աջ կողմը, գրեթէ երեք հետաքննէց հեռի էր Սելոամի աւազանը»:

Soewulf՝ 1102–1103ին, հետևեալ կերպով կը խօսի. «Բազաքին պարսպին մօտ, արտաքին կողմը, Սիոն լերան արևելեան կողին վրայ կը գտնուի Ս. Պետրոսի եկեղեցին՝ Հաւախօսի (Gallicantus) կոչուած, ուր Պետրոս Տէրը ուրանալէ յետոյ, քաշուեցաւ խորունկ այրի մը մէջ, որ հոն կը տեսնուի ցարդ և ուր ան դառնապէս լացաւ»:

Անկլո–Սաքսոն վաճառականին այս տողերէն որոշապէս կ'երևի որ Աւետարանի համաձայն կ'ընդունի թէ Պետրոս այս այրին մէջ քաշուելու համար քահանայապետին տունէն փախած էր:

1165ին, Յովհ. Եպս. Վըրզպուրկի կու տայ մեզ նկարագրութիւն մը կայիափայի տան և Հաւախօսի եկեղեցւոյ մասին. այս ուղեգիրը այն մատենագիրներէն է որ դասաւորին պալատը քահանայապետին տանը մէջ կը կարծեն. ըսելէ յետոյ թէ Ցիսուս Գեթսեմանիէն առաջնորդուեցաւ Սիոն՝ ուր կար պալատը, կ'աւելցնէ. «Պալատին դիմացը, դէպի արևելք, կար այն անդաստակը ուր Ցիսուս կապուած տարին, և բոլոր գիշերը հոն բանտարկուած մնաց քահանայապետին մարդերէն: Միևնոյն տան մէջ Պետրոս ուրացաւ Տէրը հաւախօսէն առաջ: Հոն էր նաև որ՝ հաւախօսէն յետոյ, երբ Տէրը անոր նայեցաւ, ան յիշեց Ցիսուսի խօսքը, զղջացաւ, արտասուեց և փախաւ քարայրի մը մէջ որ կը կոչուի Հաւախօս»: Ետոյ կ'աւելցնէ, «Սիոնէն Յովսափատի ձորը տանող ճանապարհին վրայ, Սիոնի դրան սորոտը կառուցուած է եկեղեցի մը որ յոյներուն ձեռքը կը գտնուի»:

1172ին, դարձեալ Վըրզպուրկի եպսն. Թէոտորիք՝ որ ընդհանրապէս իր նկարագրութիւններուն մէջ աւելի ստուգապատում է, ցոյց կու տայ մեզ պալատը, «Սիոնի լերան վրայ Ս. կուսէ եկեղեցւոյն առջև, քաղաքին պարսպին կողմը. հոն կը գտնուի, կ'ըսէ, Փրկչին ի պատիւ կառուցուած մատուռ մը, և ուր կար նաև մեծագոյն մասը այն սիւնին՝ որուն կապուեցաւ Տէրը: Անկէ դէպի արևելք, հրապարակին աջ կողմը, յիսուն աստիճաններէ կարելի է վար իջնել Հաւախօսի եկեղեցին ուր կը պահուին Պետրոսի կրած չղթային երկու օղակները: Ետոյ սեղանին ձախ կողմը, գրեթէ վաթսուն աստիճաններէն կարելի է իջնել խիստ մթին ստորերկրեայ այր մը, որուն մէկ անկիւնը քաշուեցաւ Պետրոս իր ուրացումէն յետոյ փախչելով: Հոն նստած ներկայացուած է Պետրոսը նկարի մը մէջ, գլուխը ծռելով իր ձեռքերուն մէջ, և կ'արտասուէ իր բարի վարդապետին չարչարանաց և իր ուրացման համար: Աղախին մը կը կենայ անոր առջևը սպառնական, իր ոտից տակ աքաղաղ մը՝ որ կը խօսի: Այս եկեղեցին Հայոց ձեռքը կը գտնուի:

1180ին, յոյն վանական Յովհաննէս Փոկաս ևս կը խօսի Հաւախօսի եկեղեցիի մասին եւ կը յիշէ ապաշխարող Պետրոսէ պատկերը:

Citez de Jherusalem յիշատակարանին հեղինակը՝ որ 1187էն առաջ Երուսաղէմ կը բնակէր, կը գատէ երկու սրբավայրերը, ինչպէս իր նախորդները, և հին փրանսերէնով մը կը գրէ.

«Ս. կուսին վախճանած եկեղեցիին առջև կը գտնուի մատուռ մը՝ ուր մեր Տէրը դատուեցաւ, ծեծուեցաւ և չարչարուեցաւ. փշով պսակուեցաւ, այստեղն էր կայիափայի տունը»: Ուրիշ տեղ մը խօսելով Դաւթի գուռնէն Սկովամ տանող ճանապարհին վրայ, կը գրէ, «Այս ճանապարհին վրայ, դէպի աջ, գրան մօտ կար վանք մը որ կը կոչուէր Ս. Պետրոս Հաւախօսի: Այս վանքին մէջ կար խորունկ փոս մը, հո՛ն էր որ կ'ըսեն թէ Ս. Պետրոս պահուըտեցաւ երբ Ցիսուս Քրիստոսը ուրացաւ»: Ջանց կ'ընենք նորագոյն ուղեգիրներու յիշատակութիւնները որոնք մէջբերուած են P. Urbain Coppens-ի Le Palais de Caïphe et le Nouveau Jardin Saint-Pierre աշխատութեան մէջ, որմէ քաղած ենք մեր վերև յիշած ծանօթագրութիւնները:

2. Ս. Պետրոսի վաճիին հիմնարկութիւնը հայկական է. պատմական եւ հնախօսական ակնարկներ.

Վերեւ տեսանք որ գլխաւոր ուշադրաց պատմութեան հատմառնայն, Հաւախօսի Ս. Պետրոսի վանքը ուրոյն հաստատութիւն մ'է Հայոց Ս. Փրկչի վանքէն. մին չհնուած է Ս. Պետրոսի ուրացման տեղւոյն՝ որ է կայիափայի տունը, և միւսն՝ նոյն Առաքելոյն զղջման և ապաշխարութեան տեղւոյն վրայ: Այս վանքն ալ հայկական հիմնարկութիւն մը ըլլալը Անաստաս վարդապետը իր «Վանօրէից ցուցակին» մէջ կը վկայէ հետևեալ կերպով. «Պետրոսի վանին, որ արտաքոյ քաղաքին է, ի կողմանէ Սեղոխացւոյ, որ կոչի Հառաչումն Պետրոսի, ընդիւր եւ ծախիւր արհուն շինեալ եղեւ»: Այս յիշատակարանէն զատ, գժբախտաբար ուրիշ յիշատակարանով մը չենք կրնար հաստատել այս հիմնարկութեան հայկական ըլլալը. միայն Վարդան վրդ. Մարաթացին 1321ին կ'այցելէ Ս. Պետրոսի այն այրը, ուր Առաքեալը քաշուած էր ապաշխարելու համար, հաւանաբար Հառաչանաց վանքի եկեղեցին նոյն թուականին նոր քանդուած էր, և Վարդան վրդ. միայն այրը այցելեց: Ս. Տեղեաց իր Աղօթապիրքին մէջ «Հառաչումն Պետրոսի» անունով ունի աղօթք մը զոր տեղւոյն վրայ յօրինած էր, ըստ խնդրանաց Ս. Յակոբի մէկ երկու միաբաններու, կը գրէ ան. «եկեալ հասայ ի տեղիս եւ ի խոր վիհս ուր դառնափպիծ հառաչանօք եղաց Պետրոս զկորուստ իւր մեծ ապաշաւանաւք».... Պետրոսի ապաշխարութեան նկատմամբ ան ունի հետևեալ հատուածը որ կը ներկայացնէ քրիստոնէական հին դարերու ապաշխարողներուն սրտառուչ ձևերը. «եւ նա ի ծունկս իջեալ եւ ի գառնակսկիծ խոցոյն խածատեր զբազուկս իւր եւ հոսէր արիւնն, եւ ափ զափի հարեալ ապաշուէր, եւ բարձան ծնծէր. վայ գոչելով անձին իւրոյ: Հարկանէր զծնօտսն եւ ճողէր զմօրսան, հոսէր արիւնն եւ նա ոչ իմանայր ի սրտին կսկծոյն եւ ի չերմութենէն . . . »: (Ձեռ. Թ. 1130):

Անաստաս վրդ.ի վերեւի յիշատակարանին տակ, Աստուածատուր եպս. Տ. Յովհաննէսեան՝ իբր ծանօթութիւն հետևեալը կը գրէ իր պատմութեան մէջ. «ի ձեռագիր օրինակս զոր ունիմ առ ինձ, գրեալ ի ի կողմն Սեղոխացւոյ, սակայն ինկնելով գետնին գտանի այժմ ի Սիոնի իբր 15 վայրկեան դէպ յարեւելս՝ մօտ ինչ զատ ի վայր իջանելով, ուստի յայտնի երեւի Սեղոխացւոյ գիւղն իւր պարագայիւք յարեւելս»:

*1172ին ուղեգիր Թէոտորիք եպս.ին վերեւի վկայութիւնն ալ իր արժէքը ունի. յիշեալը՝ իբր ատուգապատում հեղինակ՝ նկատելէ յետոյ Պետրոսի վանքի եկեղեցին ու ապաշխարութեան այրը, կը մանրամասնէ այն խորհրդաւոր նկարը որ այդ թուականին զետեղուած էր նոյն եկեղեցիին մէջ, ու ազա կը յարէ թէ նոյն եկեղեցին Հայոց սեփականութիւնն էր: Յիշել պէտք է նաև Վրդ.ի վկայութիւնը. ան Հառաչանաց վանքը Յունաց ձեռքը կը կարծէ. քննիչները որքան Թէոտորիքը ատուգապատում կը կարծեն, նոյնքան Վրդ.ի Յովհաննէս եպիսկոպոսը՝ չփոթող մը: Ան շատ անգամ հայը յոյնին հետ, ինչպէս յոյնը հայուն և ասորիին հետ կը չփոթէ: 1165ին իր այցելութեան ժամանակ Դաւթի բերդին դիմաց գտնուած եկեղեցիները նկարագրելու առեն, Մար–Սաբայի վանքի մերձաւորութեան Métochion յունական վանքը հայոց սեպհականութեան կը կարծէ. և չի յիշեր անոր մօտ հայոց վերաբերեալ նախիւն

թիւնը, ընդունելով հանդերձ թէ նոյն ցուցակին մէջ յաւելուած ներ եղած կրնան ըլլալ: Անոնք որ գրչի մէկ հարուածով կ'ուզեն ջնջել հայկական վանական հաստատութիւնները, անոնց դէմ պաշտպանութեան իբր յենակէտ ցոյց կու տանք հայկական արձանագրութեամբ այն մոզայիքները որ կը տեսնուին քանի մը տեղեր Երուսաղէմի մէջ և Պաղեստինեան սրբավայրերու բաւական նշանակալից քանի մը ցուցումները: Առանց խօսելու Ս. Եւդիմէոսի վրայ, որ ծագմամբ հռոմէական կայսրութեան հայոստանցիներէն էր, և կը բնակէր իր վանքը, և չմանրամասնելով չորս հարիւր հայ ուխտաւորներու Յորդանանի այցելութիւնը, պէտք է յիշենք Ս. Սաբայի և Ս. Թէոդոսի նորահաստատ վանքերու հայալեզու վանականներու կարևոր հաստուածները:

Այսպէս յանդգնութիւն մը չէ ուրեմն մտածել թէ խել մը հայկական կամ յունա–հայկական վանքեր կառուցուած են Ե. դարու վախճանին կամ Զ.ի ընթացքին. վանք մը և եկեղեցի մը նուիրուած էր Պետրոսի հառաչանաց, բարձր բլուրի մը ա–բեւելեան զառիվայրին վրայ, Սելովամէն գրեթէ երեք նետընկէց հեռի (Եպիփան վանական): Պիտի ուզէինք գիտնալ թէ ի՛նչ տեսակ կապեր էին որ կը միացնէին այս վանքը Ս. Թէոդոսի վանքին հետ որ անկէ կը տեսնէին զայն, իբր պատկ լեռնային անապատի. վասն զի Երուսաղէմի մէջ մեծ անապատականին տօնը (11 Յունվար) կը կատարուէր Ս. Պետրոսի Առաքելարանին մէջ և Թէոդոսեան վանքին անունը գտնուած է քազմաստեղեան ճրագարանին սեաւառակի մը վրայ զոր գտած է P. Germer-Durand պեղումներու ժամանակ: Յիշատակարանաց ներկայ վիճակը չի թոյլատրեր մեզի սաուգութեամբ հաստատել թէ այս յարաբերութիւնները սկսած էին հայ Սոփրոնիոսէն (※ 543), որ Ս. Թէոդոսի առաջին յաջորդը և մեծ չինողն էր, կիւրեղ Սկիւթուպոլսեցիին ըսածին համաձայն: Բայց պէտք չէ նոյն յարաբերութեանց հնութիւնը տարակոյսի տակ ձգել: Ս. Թէոդոսի վանական Մոտեստոսը՝ պարսից մեհենումէն յետոյ փութաց վերաշինել Հառաչանաց վանքը որ իր սրտին չատ մօտ էր: Ս. Ցարութեան ծիսարանը (Typicon) որ խաչակիրներէն գոնէ մէկ դար յառաջ գրուածագրելի էր, Սւաւ Ուրբաթի հանդիսական թափօրի կայան մը ցոյց կու տայ հոն: Նոյն ծիսարանէն յայտնի է այն եղականու-

թիւնը՝ թէ պաշտամունքի մասերը կայաններուն համաձայն չէն: Այսպէս Յիսուսի Կայիափայի տանէն երթալուն և Պետրոսի ուրացման մասին ցրուելու ակնարկութիւններ: Ս. Պետրոսի մէջ կարդացուած աւետարանը կը պարունակէ Յուդայի յուսահատութիւնը, արեան գլուղի սասցումը և տնտարանը պատրաստի լատին ուր թափօրը խոկոյն կ'ուղղուէր (Մատթ. ԻԷ. 3–32): Այն սրբավայրը ուր կը յիշատակուէր Կայիափայի տանէնը և Պետրոսի ուրացումը հաւանաբար Սիոնի մօտ էր, (Բեռնարդոս վանական), ինչ որ կը հաստատէ վանական Եպիփանին վերագրուած նկարագրութեամբ տրուած դիրքը:

Բայց այս միևնոյն հեղինակը անձուկ կերպով Ս. Սիոնի կը կցէ Կայիափայի, ինչպէս նաև Աննայի և Պիղատոսի յիշատակները: Այս եկեղեցիին կողակին կամ անմիջական մերձակայքին մէջ կը տեսնէ այն սկուտքը՝ որուն մօտ Պետրոս ուրացաւ Յիսուսը: Ս. Տեղեաց հայկական ձեռագրութիւնը նմանապէս Վերնատան եկեղեցւոյն մէկ կողմը ցոյց կու տայ Պիղատոսի պալատը և բանտը՝ ուր Քրիստոս բանտարկուեցաւ: Այս բանտը մատուռ մ'էր ըստ յետնագոյն վկայութեանց և կը նկատուէր Կայիափայի տունը, և հոն պատարագ կը մատուցուէր: . . . Յաչակիրնեն առաջ աւետարանի պատմութեան վրայ հիմնուած այս կըրկնակ յիշատակները և տարբեր տեղերու մէջ անոնց հաստատուԹեան պատճառաւ ե. կամ Զ. դարու սկիզբը եկեղեցիներ չինուեցան. 1.— Պետրոսի ուրացման եկեղեցին, Կայիափայի տան տեղւոյն վրայ, վերնատան հիւսիսային կողմը և մօտը. 2.— Նոյն Առաքելոյն Հառաչանաց եկեղեցին, Ս. Սիոնէն ուղղակի Սելովամ իջնող փողոցին արևելեան զառիվայրին վրայ . . . :

Հառաչանաց վանքի եկեղեցին՝ որ դիմակալեց ԺԱ. դարու կործանարար հալածանքներուն և 1099ի պաշարման գործողութիւններուն, մեծ համբաւ կը վայելէր միջին դարուն: Բոլոր ուխտաւորները կ'այցելէին հոն և կը կոչէին զայն Հաւսիսան Ս. Պետրոսի վանքը: Անոնք սովորաբար հոն կ'երթային Կայիափայի

տունը Թողէ վերջ՝ երբ կ'իջնէին Սելովամի աւազանը: Այս եկեղեցին Թէև քիչ հեռի քաղաքին պարսպէն, չէր գտնուեր այն անմիջական ճանապարհին վրայ՝ որ ամրութեանց ստորոտը կ'երկարէր: Այս ճանապարհէն դուրս, աջին կ'իյնար, երբ Սիոնի բարձրութեան արևելեան զառիվայրէն կ'իջնէին Սելովամի ուղղութեամբ: Քաղաքին դուռնէն դէպի հարաւ գացող պողոտային վրայ ճիւղաւորուած սանդխաւոր ճամբայ մը Թոյլ կու տար ուղղակի հոն մտնել: Ճանապարհը ճիւղաւորումէն սկսեալ յիսուն աստիճան էր: Եկեղեցին չինուած էր խիստ խոր և խիստ մթին քարայրի մը վրայ, ուր, կ'ըսեն Թէ, Պետրոս առաքեալ ապաստանած էր քաւելու համար իր մեղքը: Գրեթէ 32 աստիճաններով սանդուխ մը սեղանին ձախէն կը տանէր այրին խորը, ուր նկար մը կը յիշեցնէր այն աւետարանական յիշատակը՝ որուն նուիրուած էր այս սրբավայրը: . . . 1172ին, Հայոց ձեռքն էր նոյն եկեղեցին. լատին միրապետութենէն մինչ մէկ դար վերջ կանգուն էր եկեղեցին, բայց 1323ին ան աւերակ էր: Ս. Սիոնի աւերակներէն մէկ նետընկեց հեռուէն ցոյց կու տային գաթալանցի ուխտաւորները, ուր՝ կ'ըսէին Թէ, կար գեղեցիկ եկեղեցի մը հին ժամանակ:

Կործանումը այնքան արմատական էր որ, 1335ին, Jacques de Verone եկեղեցիի հետք չի գտներ այլևս, բայց այրը՝ 140 քայլ Կայիափայի տունէն, (ըստ Polonerի 187) կը հրապուրէր ուխտաւորները: 1461ին Louis de Rochechouart հետևեալ կերպով կը նկարագրէ այն տեղը՝ ուր Պետրոս դառնօրէն լացաւ. «բոլորակ տեղ մ'է ան, վասն զի երբեմն հոն չինուած էր բոլորշի մատուռ մը, որուն հետքերը այժմ հազիւ նշմարելի են»:

Յովպրի (1480–83) իր բոլոր բարի կամեցողութեան հակառակ չյաջողեցաւ գտնել Հաւանոսի այրը: Ստոյգ է Թէ այս Թուականին Պետրոսի Հառաչանաց եկեղեցին չէին տեղականացներ այրի մը մէջ: Քարայր ըսուածը այն ատեն կը նկատէին ցցուած քար մը որմէ ուխտաւորները յիշատակի համար կը փըրցընէին կտորներ. և կը մտածուի այս բարեպաշտական սովորութեան մէջ գտնել ս. այրին անհետացման բաւականաչափ բացատրութիւն մը: Յովպրիի կողմէն նշանակուած արաբական ջրբուղիի մը մերձաւորութիւնը Թոյլատրած է P. Germer-Durandի ստոյգ եղանակաւ մը Պետրոսի Հառաչանաց վանքին նոր տեղը

ճշդելու: Սակայն այս տեղը չատ քիչ համաձայն գտած են միջնադարեան պատմութիւններու հետ և սկսած են բլրին կողին վրայ փնտռել այր մը:

1699ին, Ֆրանչիսկեան մը կը գրէ. «Կայիափայի տունէն մենք հասանք այն այրը ուր կ'ըսեն Թէ Պետրոս լացաւ իր մեղքին վրայ. ան չատ փոքր է. և քիչ մը քաղաքէն դուրս, Յովսափատի ձորին կողմը, Սելովամի մօտ, որ Ս. Գրոց մէջ անուանի է»: Վերջին դարերուն մէջ այլևայլ այրեր ցոյց կը տրուին իբր Ս. Պետրոսի ապաշխարութեան այրը, բայց անոնք չեն յարմարիր պահանջներու մէջին դարու վկայութիւններուն որ կը նկարագրեն Թէ խորունկ խոռոչ մը ուղղահայեացօրէն կը մխրճուի հողին մէջ եկեղեցւոյ յատակին տակ: Աւերակ պատերու, գուբերու և գանազան մոզայիքներու բաւիղի մը մէջտեղը P. Germer-Durandի ձեռքով գտնուած այրը իր դիրքովը և ձևովը աւելի գոհացում կու տայ քան ունէ այր որ ցոյց կը տրուի:» (Տե՛ս PP. Hugues Vincent et F. M. Abel, Jerusalem Nouvelle Բ. հատ. էջ 486–487, 490–491):

Այս աւերեալ եկեղեցիին գետինը երբ 1882ին Ասսոմբսիոնիսդները ծախու առին, նոյն Թուականէն սկսեալ պեղումներ կատարեցին և գետնին ամէնէն աւելի վերին խաւերն աւելի նոր Թուականի մը, այսինքն արաբական տիրապետութեան վերաբերեալ առարկաներ դուրս տուին, ինչպէս միհրապ մը, ապա բիւզանդական չրջանի չինուած եկեղեցւոյ մը մնացորդները երևան եկան. իսկ ամէնէն ստորին խաւը դուրս կու տար երբայական Թուականի տուն մը, աղօրիք մը և ուրիշ գանազան առարկաներ: Բիւզանդական չրջանէն եղածներն ամէնէն ճոխն էին. մարմարեայ քանդակեալ խոյակները, կիսասիւնները, մոզայիքները, տապանները և գանազան գիւտեր կը հաստատեն հնագարեան եկեղեցիի մը գոյութիւնը. հարիւրեակ մը բիւզանդական դրամներ գտնուած են գետնոյն պեղումներուն և մաքրութեան ժամանակ: Նոյն դրամները կը գասաւորուին այս կերպով. Ոնորիոսէն (395), եւ Թէոդոս Բ.էն (408) մինչեւ Անաստաս (491) եւ Մօրիկ (582): Գտնուած առարկաներուն մէջ կը տեսնուին նաև ուխտի նուէր մատանի մը՝ որուն ճանակը (chaton) աքաղաղ մ'էր, պղնձէ խնկաման մը և նշխարի կաղապար մը:

Հողէն հանուած այս բոլոր առարկաներուն մէջ քրիստոնէա-

կան կանթեղները կը վխտային իրենց սովորական զանազան ձեւերով: Այս կանթեղներուն մեծ մասին մէկ կողմը, կերոնական քարայրին մօտ, ըրնորի մը մէջ գտնուեցան «պղնձէ փոքրիկ ճրագարան մը խաչով զարդարուած՝ և կտորները կարմիր հողէ սկաւառակի մը՝ որ կը կրէր յունարէն արձանագրութիւն մը: Ճրագարանը թէև կոտրուած, տակաւին կը պահէր մաս մը այն շղթաներէն որ երբեմն զայն կը կրէին. դիւրին էր անոր միջոցաւ գիտնալ թէ՝ ինչ էր զոր բիւզանդացիք կը կոչէին բազմաստեղեան ձրագարան (polycandilon) որուն վրայ կը հաստատէին չատ մը կանթեղներ: Թրծուն հողէ սկաւառակը՝ որուն կտորները մօտեցնելով փակցուած են, կը ներկայացնէր խիստ չահեկանութիւն մը իր արձանագրութեան պատճառաւ. ըստ երևոյթին, ան մաս կը կազմէր միևնոյն ամրոցութեան, և կոխուած էր ճրագարանին տակը ընդունելու համար իւղի այն կաթիլները որ կրնային թափիլ կանթեղներէն»: Սկաւառակին երեսքին վրայ քանդակուած արձանագրութիւնը հետևեալն է. ✠ ὁ ἅγιος Θεοδώσιος μονῆς Ἰώσηφ ταπ(ει)νός. ✠ սկիզբը ունի մեծ խաչ մը հաւասար թևերով և գաւառակներու (կէտերու դրուած տեղ, cantons) մէջ չորս կէտերով. անոր ծայրը նման խիստ փոքրիկ խաչ մը և առանց կէտերու: P. Germer-Durand խիստ ուղիղ կերպով կը լուծէ այս տեսակ մը փոքր հանելուկը՝ ուր դասական քերականութիւնը միջամուխ չ'ըլլար:

Տկար յունարէնով մը կը բացատրուի թէ սոյն նուէրը արուած է Ս. Թեոդոսի վանքին իսնարհ Ծոխփին: Բիւզանդական միջին դարու քրիստոնէական արձանագրութիւնը՝ բարեպաշտ վանականներու կամ հաւատացեալներուն կողմէն տրուած սրբավայրի մը ընծաները՝ հարիւրներով ցոյց կու տայ և արդի Պաղեստինի մէջ քիչ ուղղափառ եկեղեցիներ կան՝ որ ունեցած չըլլան այդպիսի նուէրներ: Այս պարագային ի՞նչպէս տարակուսիլ թէ վանական Ծովսէփը խիստ հարևանցի հելլէնական մչակոյթ մը ունէր, կամ կատարելապէս անտարբեր կը մնար յունարէնի պատահական համաձայնութիւններուն: Բոլորովին պարզմտօրէն կ'արձանագրէ իր վանքին պաշտօնական տիտղոսը և իր անունին կը կցէ ղեղծական (péjoratives) տիտղոս մը:

Այս տեսակ նման կարճ արձանագրութիւններ պատահական չեն կրնար ըլլալ. անոնք առատօրէն կ'երևնային Փոքր Ասիոյ քրիստոնէական յիշատակարանաց մէջ, մասնաւորապէս կապադովկիոյ՝ վանականութեան այդ ընտիր երկրին մէջ: Վերև յիշեցինք, ինչ կարևոր դերը գրաւած էին ե. դարէն սկսեալ հայկական կամ յունա–հայկական դաղութները Պաղեստինի մեծ վանքերուն մէջ, և կապադովկիացիները այս անապատականներուն մէջ սովորաբար ամենէն նշանաւոր տարրն էին: Ուրեմն հաւանական պիտի կարծուի թէ Ս. Թէոդոսի այս խիստ համեստ հելլենապէտ Ծովսէփը կապադովկիացի հայ վանական մ'էր, որ իր եկեղեցւոյ նուէր տուած բազմաստեղեան ձրագարանովը աւելի կը զօրացնէ այս տողերը գրող P. Abel գիտնականին պատմական հետևութիւնները: Աւելի դժուարին է գտնել այս նուէրին թուականը: P. Germer-Durand հնագրօրէն քիչ ժամանակ յառաջ կը վերագրէր զայն «հինգերորդ դարու երկրորդ կիսուն» (*Տե՛ս վերև, էջ 507–509*):

ԺԱ

Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

1. Ս. Հրեշտակապետի վանքին տեղը.

Կը փափաքինք մեր ընթերցողներուն ծանօթացնել երուսաղէմի մեր Ս. Հրեշտակապետի վանքը, որ կը գտնուի Հայոց թաղին մէջ, Ս. Յակոբի արևելքը, երուսաղէմի հարաւային կողմը, պարսպին մօտ և ոչ հեռի Ս. Փրկչի վանքէն: Այս վանքը, ըստ սաղիմական պատմիչներու, չինուած է Աննա քահանայապետին տան տեղը: Աննա պաշտօնական քահանայապետ մըն էր, բայց կը պահէր իր ազդեցութիւնը, թէև իր պաշտօնը նոյն ժամանակ կը վարէր իր փեսան՝ Կայիափա: Կալանաւորուած մեր Փրկիչը Ցիսուս Աղբիւսաց դուռնէն բերուեցաւ նախ Աննայի քով. «եւ առին զնա նախ առ Աննա, որ էր աներ Կայիափայի, որ քահանայն զնա նախ առ Աննա»

նայապետն էր տարեւոյն այնորիկ» (Յով. ԺԸ. 13)։ Պատմագիրները կ'ըսեն թէ Յիսուսի բերուած ժամանակ Աննան զբաղած էր ուրիշի մը հարցաքննութեամբ. այդ պատճառով Յիսուսը կապեցին ձիթենիի մը և յետոյ բանտարկեցին։ Աննա քիչ վերջ կ'սկսի Յիսուսի հարցաքննութիւնը և նոյն միջոցին քահանայապետին սպասաւորներէն մին անիրաւաբար ծանր կերպով կ'ապտակէ Յիսուսը. և Աննան Յիսուսը չղթայակապ կը ղրկէ Կայիափային։ Մեր Փրկչին նկատմամբ Աննայի տան մէջ կատարուած այս աւետարանական դէպքը նախնի բարեպաշտ քրիստոնէից թելադրած է որ Աննայի տան տեղւոյն վրայ վանք և եկեղեցի կառուցուի յաւերժացնելու համար Փրկչին առաջին Զարչարանաց եւ բանտարկութեան այս յիշատակը։

2. Ս. Հրեշտակապետ աւուրը.

Նկատի առնելով Ս. Հրեշտակապետի վանքին տեղւոյն վերաբերմամբ պատմուած աւանդական յիշատակները, ի սկզբան մեկնութիւն մը չենք կրնար տալ թէ՝ ինչո՞ւ այս վանքին ու եկեղեցիին անունը Ս. Հրեշտակապետ դրուած է. նոր դրուած անուն մըն ալ չէ. շատ հին դարերէն մեզ կը հասնի ան։ Տեղացի Արաբները այս վանքը կ'անուանեն Տէյր էլ Ջէյթունիէհ (Ձիթենիի վանք), անշուշտ պատճառով այն ձիթենիին որուն կապուեցաւ Յիսուս. բայց բոլոր քրիստոնէից մէջ ընդհանրացած անունն է Ս. Հրեշտակապետ։ Այս անուանակոչութիւնը կարելի է հետևեալ կերպով բացատրել։ Եկեղեցւոյ Հայրերը զանազան մեկնողական բացատրութիւններ կու տան Աննայի տան մէջ յանդուգն սպասաւորին կողմէն Յիսուսի տրուած ծանր ապտակին մասին, և կը յայտնեն, մասնաւորապէս Ոսկեբերան, թէ այդ ապտակահարութեան ժամանակ երկնային զինուորները սարսափեցան և ծածկեցին իրենց երեսը։ Աստուածորդւոյն յանդգնաբար տրուած այդ ապտակի ահաւորութիւնը տպաւորեցուց այդ հոգեղէն էակները ու անոնք սոսկալի մեացին մարդ արարածին այդ մեծ անիրաւութեան համար։ Եկեղեցւոյ Հայրերուն քրիստոնէական այս ըմբռնումին համաձայն էր որ բարեպաշտները, ի պատիւ եւ ի պարծանս երկնային զօրութեանց, Աննայի տան տեղւոյն վրայ կը հիմնարկեն վանք ու եկեղեցի։ Ս. Հայրերու նոյն բացատրութեան կատարելապէս համաձայն է նաև մեր Ս. Ներսէս Շնորհալի հայրապետն ալ, երբ իր Աչեր անձառ երգին մէջ կը գրէ.

«Ծառայն զերեսն այն ապտակեր
յորմէ Սրովբէն թեւաւքօղէր.»։

3. Ս. Զիբեենի.

Որո՞նք են այն աւանդական յիշատակները, որ երկնային զօրութեանց պատուոյն յաւերժացման տենչանքին հետ մեծապէս ազդեցին բարեպաշտներու՝ որպէս զի սրբազործեն եկեղեցիով և վանքով Փրկչին առաջին Զարչարանաց և բանտարկութեան տեղը, որ է Աննայի տունը. — երեք են անոնք. Զիբեենի, Բանտը և Ոտասնեայի քարը։

Դեղեցիկ և սրտառուչ զրոյցներ հիւսուած են նոյն ձիթենիին մասին. նուիրական ծառ մը դարձած է ան եւ կը մնայ մինչեւ ցայսօր. դարէ դար հին արմատէն բողբոջած են նոր ճիւղեր որ կը հովանաւորեն եկեղեցիին հիւսիսային կողմի անկիւնը՝ չորքսան պատի մը մէջ. բարեպաշտ ուխտաւորներ կ'այցելեն միշտ անոր, եւ բարեպաշտութեան առարկայ ալ կ'ընեն զայն։ Պատմական հանգամանքէ ալ զուրկ չէ ան։ Երուսաղէմի Եղիազար պարիսպը, որ իր պաշտօնին ամենայն Հայոց Հայրապետութիւնը աբքը, որ իր պաշտօնին ամենայն Հայոց Հայրապետութիւնը միացնելու յանդուգն ձեռնարկն ալ բրած է, 1666 ին Ս. Ծնընդեան տօնին օրը, Ս. Յակոբի տաճարին մէջ վիրաւորհիւթիւն կը կատարէ նոյն ձիթենիին քամուած լուղով. և նոյն միւռոնէն կը բաշխէ եկեղեցիներուն, և Հռոմայ Պապին ալ կը ղրկէ նոյն միւռոնէն Լատինաց իրաղրանքին համաձայն։ Սոյն միւռոնօրհնութեան արարողութիւնն ալ մասնաւոր կնդակով մը կ'իմացնէ նոյն տարեւոյն Յունուար 23 ին Պոլսի Հայոց, եւ կը յիշէ վերեւ յիշուած պարագան (Տե՛ս Հաճատոս Պատմութիւն Երուսաղէմի էն. Տօրէն վրդ. Մխիթարեանի, էջ 103–106։) Երուսաղէմցի Հաննէ Տօրէն վրդ. իր Պատմութեան մէջ (էջ 242) հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ և կը յայտնէ թէ ինքը լսած է հրաշախառն զրոյցներու պատմութիւններ այս ծառին նկատմամբ. այնպէս որ՝ անոր պտուղին կուսոը դեղթափիլ նման, ծննդական կանանց, ջերմոտներու և աչացաւ ունեցողներուն բժշկութիւններ տուած է. օտարներ ևս շատ յարգ կ'ընծայեն այս Ձիթենիին։

Ս. Յակոբայ մատենադարանին անթուական ձեռագիր մը (Թ. 1290) կը պարունակէ պիտանի և անպէտ մասերով և խառնափնդոր գիրով գրուածք մը. «Պատմութիւն պատկերիս, որ եղեալ է ի Յռանկիզտան ի Հռոմ, որ պատուեաց մեզ պատրի Սևտոնն բարեբժիշկըն» խորագրով. անոր համառօտութիւնը կուտանք հոս: Յրանչիսկեան կրօնաւոր մը Հայոց մնծաւորին կը դիմէ խնդրելով որ Ս. Հրեշտակապետի եկեղեցւոյն Յիսուսի կապուած ձիթենիէն կոճղ մը տայ իրեն. կրօնաւորը կ'ստանայ կոճղը և ինքն հիւանդանալով՝ նոյն կոճղէն կը չինէ մանուկի մը պատկերը ու զայն անտուկին մէջ դնելով կը տանի Հռոմ: Բայց ճանապարհին փոթորիկ կը պատահի և անտուկը ծովը կ'իյնայ: Պատրի Անտոն իբր ականատես կարգ մը հրաշապատում զրոյցներ կը վերապրէ ձիթենիի կոճղէն չինուած մանուկ պատկերին՝ ու ձեռագրիս անանուն հայ գրիչը միամտօրէն կը հաւատայ պատմուած հրաշքներուն. զոր օրինակ՝ պատկերին ծովուն վրայ քալելով Հռոմ հասնիլը. նոյն պատկերին համար վանք ու եկեղեցի կառուցուիլը Սուրբ Երեխայ անուամբ. աղնուական կնոջ մը կողմէն պատկերը վանքէն գողնալով իր տունը տանիլը. բայց յետոյ պատկերին ինքնիրեն նոյն եկեղեցին վերադառնալը. դարձեալ ուրիշ կին մ'ալ ի գոհացումն իր բարեպաշտութեան, նոյն պատկերը գողնալով և անոր նմանը տեղը դնելով տուն տանիլը, և երկրորդ օրը եկեղեցի դառնալուն գողցուածը իր տեղը եկած կեցած տեսնելը և այլն: Այս դէպքերէն յետոյ, կը յարէ պատմողը, եկեղեցիին պաշտօնեաները կ'ստիպուին պատկերը պահել գանձատան մէջ, բանալիով կը փակեն ու պահապան կը դնեն և միայն Քրիստոսի Ս. Ծննդեան տօնին դուրս կը հանեն:

Նոյն ձիթենիին նկատմամբ ժողովրդեան մէջ տիրող ծայր աստիճան բարեպաշտութեան հետևանքով հիւսուած ու չինուած են այսպիսի հրաշապատում զրոյցներ՝ մանաւանդ Արևմուտքի մէջ, ինչպէս կ'երևի վերի տողերէն:

Բ. Բանտը.

Աւանդական յիշատակներէն երկրորդն է Բանտը, որ առաջինի կը կոչուի. ման մի մեր Փրկիչը երբ Աննայի տունը բերուեցաւ առաջին անգամ ըլլալով այդ տեղը բանտարկուեցաւ. և յետոյ

կատարուեցաւ հարցաքննութիւնը: Առաջին բանտը կը գտնուի եկեղեցիին հիւսիսային կողմը, խցանման փոքրիկ տեղ մը, ուր կայ պատարագատեղոյց մեղաւ, ներքևը բոլորակ փոս մը, յատակը և չրջապատը պեղեցիկ և քանդակածոյ մարմարիոններով զարդարուած և մշտավառ կանթեղներով լուսաւորուած: Ցիշուած կճեպայ չորս քարերը յիշատակուած են 1831ին Ս. Հրեշտակապետի տեսուչ վանցի Բարսեղ վրդ.էն, ինչպէս կ'երևի յիշատակարանէն:

Գ. Ովսաննայի հարը.

Այս քարը կը գտնուի եկեղեցիին արևելեան կողմը պատէն դուրս աջակողմի անկիւնը. նոյն քարը բացուածք մը ունի մարդու բերանին նման: Հաննէ վրդ. հետևեալ կերպով բացատրութիւն կու տայ այս մասին. Քրիստոսի՝ իշով և յաւանակով այս տեղէն անցած ժամանակ ամբոխը կ'աղաղակէր ըսելով. «օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն Տեառն». փարիսեցիներէն ոմանք ըսին անոր. վա՛րդապետ, սաստէ՛ քու աշակերտներուդ. պատասխան կու տայ Յիսուս և կ'ըսէ. «կ'ըսեմ ձեզի, եթէատոնք լռեն, քարերը պիտի աղաղակեն». և աւանդութենէ զրոյց մը կայ թէ ոխականայի հարը մին էր այդ քարերէն որ լեզու ելան ու ըսին. «խաղաղութիւն յերկինս և փառք ի բարձունս»: Այս քարն ալ նմանապէս բարեպաշտներու յարգանքի առարկայ եղած է:

4. Հրեշտակապետի վանքին հայկական ծագումը.

Ս. Հրեշտակապետի վանքը անյիշատակ ժամանակներէ ի վեր հայկական սեպհականութիւն եղած է եւ է՛ մինչեւ ցարդ: Պատմական որոշ արձանագրութիւն չունինք անոր հիմնարկութեան մասին, բայց աւանդութիւնը և Անաստաս վրդ.ի ցուցակը բաւական են հաստատելու թէ Ս. Հրեշտակապետի հայկական վանքն ու եկեղեցին հիմնարկուած են Հայոց ձեռքով: Jérusalem Nouvelle ի հեղինակները կը յիշատակեն զրոյց մը (Բ. հատ. էջ 50) թէ քրիստոնեայ Հայաստանի նախկին թագաւորներէն մին, իր նեղուած միջոցին դիմած է Գաբրիել եւ Միքայէլ հրեշտակապետաց, որ անոր օգնած եւ պայման դրած են որ փոխարէն

թագաւորը նոյն տուրքը տեղւոյն վրայ եկեղեցի մը կառուցանէ, որպէս զի ապատի վտանգէն: Նոյն հեղինակները կը յարեն թէ այս զրոյցը յայտնող գրեթէ աննչան որմանկար մը կը տեսնուի նոյն եկեղեցիին կողակին մէջ:

Այս աւանդութենէն զատ կայ նաև Անաստաս վրդ.ին յիշատակութիւնը որ է հետևեալը. Այղ վանիք Առաստուածայ, ուր հաւատարմի բնակիչի ի կողմն Սիոնի. վասն զի այս վանքին մէջ շատ անգամներ բնական են հաւատաւոր կիներ, որ են մայրապետք. բայց յիշատակարանները ցոյց կու տան միւս կողմէն թէ վանականներ ևս բնական են հոն պարբերաբար: Կը թուի թէ հին դարերուն՝ կոյսեր կը բնակէին այս վանքին մէջ. բայց Ժդ. դարու մեր ձեռագրական յիշատակարաններէն, ինչպէս նաև 1479 և 1483 ին Դոմինիկեան Յէլիքս Ֆապրիի Ուղեգրութիւնի կ'իմանանք որ վանականներու բնակութիւնը կը շարունակուէր, և երկու հարիւր տարի վերջը միայն մայրապետներ կը հաստատուին հոն: Պէտք է գիտել նաև Հրեշտակապետի եկեղեցիին տեղագրական պայմանները. ան չրջապատուած էր հայկական–սրբավայրերով, իր դիմաց և կողմնակի ունէր Ս. Աստիսանոսի և Ուրկանոցի վանքերը, որոնց միոյն աւերակը այժմ գոյութիւն ունի, միւսինը՝ ճանապարհին միացած. քիչ մը հեռուն կը գտնուի Հայոց Ս. Փրկչի վանիքը և թերևս ուրիշներ ալ: Սիոնի մայր եկեղեցիին մօտիկ, այս եկեղեցիները իւնումն կը կազմէին հայկական եկեղեցիներու խումբ մը Սիոնի Թաղին մէջ. այս պարագային մէջ Հրեշտակապետի վանքին անունց խիստ մերձաւորութիւնը կ'ապացուցանէ հայկական ծագումին պարագան:

5. Ս. Հրեշտակապետի եկեղեցին.

Ս. Հրեշտակապետի վանքի եկեղեցին այլևայլ չէնքերու մէջ կառուցուած գեղեցիկ և սիրուն չէնք մըն է. արդի չէնքը տակաւին չկայ որ քանդուած և կամ հնութենէ փլցուած չէնքին տեղ չինուած է. հարաւային կողմնակի դուռնէ մը ներս կը մտնենք եկեղեցիին գաւիթը, որ ընդարձակ տարածութիւն մը ունի, 51 ոտք երկայնութիւն և 17 ոտք լայնութիւն. գաւիթը կցուած չէ բուն չէնքին, վերջէն չինուած կ'երևի, և ճարտարապետական ձևով բոլորովին կը տարբերի: Ունի Զարչարանաց

սեղան մը, և հիւսիսային պատին մէջ չինուած է նոր աւազանը. հինը կը մնայ բուն տաճարին մէջ և այժմ անգործածելի: Գաւիթէն ներս կը մտնենք և կը դիտենք որ իսկական տաճարի կառուցուածքը ունի մէկէ աւելի հետաքրքրական կողմեր. եկեղեցիին ճիշտ մէջտեղը չորս հատ սիւներ ատեանը կը բաժնեն երեք մասերու, մէջտեղինը ընդարձակ և լուսաւոր, կողմնաթեւերը խիստ նեղ և մթին. առաստաղի կամարաձև պատուհանները աւելի կը լուսաւորեն մէջտեղի մասը. եկեղեցիին երկայնութիւնն է 36 ոտք, իսկ լայնութիւնը 27 ոտք. ունի երեք սեղաններ, մէջտեղինը Ս. Աստուածածնի անուամբ, աւելի ընդարձակ քան միւս երկուքը որ կառուցուած են Ս. Հրեշտակապետ մը անունով. պատերը շատ թանձր են. նկատի առնելով այս պարագան, ինչպէս նաև յիշեալ չորս թանձր սիւներու գոյութիւնը, կը մտածենք թէ եկեղեցին չինող ճարտարապետը, անշուշտ հայ, ի մտի ունէր հայկական ոճով եկեղեցիին ճիշտ մէջտեղը գմբէթով մը զարդարել տաճարը, բայց կը տեսնենք որ գմբէթի փոխան առաստաղը կը կրէ պարզօրէն չինուած ծածկ մը, զոր Հաննէ վրդ. կ'անուանէ սագաչիճ, այսինքն, հատանաբար կամ նաւակի մը և կամ սագի մը ձևով բացատրութեամբ: Բայց մեզ անծանօթ կը մնայ թէ ինչո՞ւ հայ ճարտարապետը հրաժարած է իր սկզբնական յատակագիծէն և կամ ի՞նչ արգելքի հանդիպած էր ու զանոնք ըրած էր գմբէթին չինութիւնը: Ձեռնհասներէն ոմանք բիւզանդական, և այլք միջնադարեան կը նկատեն այս չէնքին կառուցումը: Բուն կառուցման թուականը անծանօթ կը մնայ, քննիչներ Ժդ. դարու գործ կը նկատեն զայն, բայց մենք յիշատակարաններէն քաղելով դիտել կու տանք թէ 1215 փրկչական թուականով յիշատակութիւն գտած ենք ձեռագրաց մէջ. եկեղեցիին պատերուն վրայ գետեղուած խաչքարերուն ամենէն հինն է 1355 ի խաչքարը, որ ապացուցած է հին աւազանի պատին մէջ, և այն չի կրնար եկեղեցիին հիմնարկութեան թուական նկատուիլ, ինչպէս նաև վերոյիշեալ 1215 թուականը: Զանազան թուականներու մէջ նորոգութիւններ կատարուած են Ս. Հրեշտակապետի եկեղեցիին մէջ: 1286ին ալ Հայոց Լեւոն Գ. թագաւորը անոր պարիսպը չինել տուած է համաձայն այն յիշատակարանին որ գրուած է Ս. Յակոբի եկեղեցիին մէկ սիւնին վրայ (Տե՛ս Հաննէ, Պատմութիւն Երուսաղէմի. էջ 242): Շրթայա-

կիր և Կիրակոս պատրիարքներու օրով ևս կարևոր նորոգութիւններ կատարուած են։ Իսկ 1795 ին ալ Առաքեցի Յովհաննէս քհ. եկեղեցիին բոլոր պատերը գեղեցիկ չինիներով զարդարել տուած է, ըստ յիշատակարանի։

6. Ֆրանչիսկեաներ կը հիւրընկալուին Ս. Հրեշտակապետի մէջ.

Սուլթան Սիւլէյման Բ.ի կ'ընծայուի երուսաղէմի սրդի պարբսպին վերաշինութիւնը, և կ'աւանդուի թէ պարսպէն դուրս թողուած են Սիոնի եկեղեցին, Փրկչի մեր վանքը և ուրիշներ, հակառակ արքայական հրամանին, այդ պատճառաւ ճարտարապետն ալ պատժուած է։ Պարսպէն դուրս թողուած այդ վանքերը դրացիներուն կողմէն ենթակայ էին աւերումներու և կեղեքումներու։ Սիոնի վանականաց մասին տեղացիներուն բողոքները հասան մինչև արքունիք, Պոլիս։ Սիւլէյման Բ. երեք հրովարտակներ հրատարակեց, վերջինը՝ 2 Յունիս 1551 ին, և հրամայեց որ Սիոնի վանքէն Ֆրանչիսկեանները վտարուին։ Վտարուածներու գլխաւորները նոր վանք մը ունենալու համար, դիմեցին Սուլթանին՝ բայց չյաջողեցան. դիմեցին Պոլսի Հայոց պատրիարքարանը որ անոնց տուաւ յանձնարարական մը՝ որպէս զի Ս. Յակոբի Միաբանութիւնը կա՛մ քաղաքին մէջ և կա՛մ դուրսը վանք մը տրամադրէ անոնց բնակութեան համար։ 1554ին Պոլսի այդ դիմումին վրայ Միաբանութիւնը, Մերտինցի Անդրէաս պատրիարքի օրով, յետ երկար խորհրդակցութեան, քրիստոնէական սիրոյ ղգացումէն մղուած որոշեց Ս. Հրեշտակապետի վանքին մէջ առժամաբար հիւրընկալել Սիոնի վանքէն վտարուած Ֆրանչիսկեան կրօնաւորները. և առանց վարձքի անոնց յատկացուցին եկեղեցիին մէջ երկու խորան, եկեղեցիին հետ կողմէն երկու ջրհոր և բնակութեան համար երկու բաժին, խաչէն մինչև պարտէզ, և հաստատեցին դաշինք մը որուն մէջ յիշած են ինչ ինչ կենցաղական պայմանները։ Ֆրանչիսկեանք հօթը տարի կը մնան Հրեշտակապետի վանքին մէջ և ապա կը յաջողին վրացիներու Ս. Յովհաննէսի վանքը գտնել և հոն բնակիլ։ Մինչև հիմակ ցոյց կը տրուի այն խորանը և աւանդատունը ուր պաշտամունք կը կատարէին անոնք. նոյն իսկ կ'ըսուի թէ եկեղեցիին

հիւսիսային արեւելեան անկեան կողմը, դէպի արեւելք, հողի տակ կը գտնուի ստորերկրեայ տեղ մը, ուր ի սկզբան ապաստանած են Ֆրանչիսկեանք։

7. Ս. Հրեշտակապետի վանքին մի քանի հին վաստակաւորները.

ԺԴ. դարու քառորդէն մինչեւ ԺԸ. դարու կէսը, յիշատակարաններու նայելով՝ Ս. Հրեշտակապետի վանքը աւելի բարգաւաճ վիճակ մը ունեցած է, մասնաւորապէս ունեցած է պայծառ դէմքեր ու վաստակաւորներ՝ որ կարեւոր գործունէութիւն մը ունեցած են այս վանքին մէջ, մա՛նաւանդ դաւանական խնդրոց առթիւ։ Կ'ուզենք յիշել այդ շրջանին մի քանի գլխաւոր դէմքերուն անուններն իրենց համառօտ գիծերով.

1°. Յովհաննէս վրդ. 1215 ին, իբր իր գրասիրութեան հետեւանք նոյն վանքին մատենադարանին կը նուիրէ Եսայի Մարգարէի և Գործք Առաքելոցի ձեռագիրները։

2°. Ստեփանոս գրիչ (երկայն) Ս. Հրեշտակապետի մէջ 1316ին կ'ընդօրինակէ ձաշոց մը։

3°. Անանուն գրիչ մը, Դաւիթ Ս. Պատրիարքի օրով, 1316ին կ'ընդօրինակէ ձաշոց մը։

4°. Մատթէոս երօնաւոր, Դարանաղցի, 1318 ին նոյն վանքին մէջ կը կազմէ ձաշոց մը։

5°. Ներսես արեղայ Կրակցի, նշանաւոր գրչագրող մը, որ 1331 ին նոյն վանքին մէջ կ'ընդօրինակէ ձաշոց մը. ունի նաեւ ուրիշ ընդօրինակութիւններ։

6°. Կարապետ արեղայ Խարբերդցի, փիլիպոսեայ (երգեցող), 1332ին գարձեալ նոյն վանքին մէջ կ'ընդօրինակէ Մեկն. Կարող. Թղթոց գիրքը որուն յիշատակարանին մէջ (ձեռ. Թ. 229) կը յիշէ օրուան պատրիարքը՝ Վարդան արքեպիսկոպոս, անոր եղբօրորդին Մարտիրոս խանանան, իր կիրակոս ուսուցիչը և միաբաններ՝ որոնք են, Կարապետ վրդ., Ստեփանոս, Պետրոս և Պողոս, Գրիգոր, Կարապետ, Ներսես, Սարգիս, Թորոս, Գրիգորիս, Մատթէոս, Յովսեփ երօնաւոր, միանձնուք՝ Բարսեղ, Կիրակոս, Թուղթ կոկոզ Մանուէլ, Թաթէոս, Սարգիս, Ղազար, Ստեփանոս Զուղիակ, Տոներ, Յովհաննէս փակակալ, Թորոս խոստովանահայր, գրչագրողին ծնող-

քը՝ Պառնեսաս եւ Ճոհար, եղբայրները՝ Բաւերեգիս, Յովհաննիս, Կիրակոս, Սարգիս, քոյրերը՝ Տիկին եւ Խեր։

7°. Անանուն գրիչ մը, 1397 ին կ'ընդօրինակէ Յիսուս որդի կիրքը, գտնուած նոյն վանքին մէջ։

8°. Գրիգոր Սրծկեցի, 1441ին հոն կ'ընդօրինակէ Աւետարան մը։

9°. Մանուէլ գրիչ, 1466 ին Ս. Հրեշտակապետի վանքին մէջ կ'ընդօրինակէ Մաշտոցի Վարդան վրդ·ի կիրքը։

ԺԲ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՌՇՏՈՒՆԵԱՑ ՎԱՆՔԸ ՈՒ ԱՆՈՐ ՈՒՐԿԱՆՈՑԸ

1. Նոյն վաւրին եւ անոր ուրկանոցին շինութեան ծագումը.

Ս. Քաղաքին հայկական վանքերէն մին էր Ռշտունեաց վանքը, որուն ծագման վրայ գրելէ յառաջ, հարկ կը սեպեմ անոր շինութեան ժամանակին մասին ծանօթութիւն մը տալ։ Տարաբախտիկ ախտ մը շատ դարեր յառաջ վարակուած էր Պաղեստինի, մասնաւորապէս Երուսաղէմի մէջ, զիտնալ պէտք է թէ ուրկէ° ճարակած էր նոյն հիւանդութիւնը։

Ընդհանուր կարծիք կայ եւ պատմութեամբ ալ կը վկայուի թէ Եբրայեցիներն են որ Եգիպտոսէն Պաղեստին բերած են զայն իրենց հետ որ երկրին մէջ տարածուելով՝ ան փոխանցուած է Եւրոպիոյ եւ Ասիոյ կողմերը։ Հնագամատեանը ամենահին յիշատակարանն է, ուր մանրամասն կը նկարագրուի խղճալի վիճակն անոնց՝ որ կ'ենթարկուէին ուրկութեան, Ս. Գրոց բառով՝ «կեղ եգիպտոսի» կոչուած հիւանդութեան (Տե՛ս Երկրորդ Օրենք. ԻԸ. 27, 35), ըստ Abbé Vigouroux'ի (Տե՛ս Dict. Bible. Հար. Դ. էջ 179, բառն Lèpre), Եգիպտացի պատմագիր և քուրմ Մանեթոն՝ իր պատմութեան մէջ կը յիշատակէ եգիպտական վէպ մը, որուն համաձայն, իբր թէ Եբրայեցիք Եգիպտոսի մէջ բորոտութեամբ վարակուած ըլլալով՝ վտարուած են Նեղոսի ափերէն. նոյն մըտքով գրած են Յուստինոս և Տակիտոս, որոնց դէմ, սակայն Յովսեպոս Հրեայ պատմագիրը իր մէկ գործին մէջ կը հերքէ զանոնք, յարելով թէ Եբրայեցիք չէին որ եգիպտոս մտած ժամանակ հետերնին տարին նոյն ախտը, այլ անոնք վարակուեցան տեղացիներէն. Եբրայեցւոց նման փիւնիկեցիներն ալ ունեցան նոյն հիւանդութեան վարակումները, իրենց առևտրական յարաբերութեանց հետևանքով։ Լատին բանաստեղծ մը, Լուկրետիոս, իր Զբնութենէ իրաց քերթուածին մէջ, կը հաստատէ թէ ուրկութիւնը Նեղոս գետին ափերեն յառաջ կու գար, ուստի կը յարեն գիտնականք թէ՝ բորոտութեան ծագումը պէտք է փնտռել եգիպտոսի մէջ։ Այս պատճառներուն համաձայն, ուրկութիւնը տևական դարձած է Իսրայէլացւոց պատմութեան ամբողջ ընթացքին մէջ։ Հրէից ափիւռքը, Ասիոյ մէջ, Յունաց և Հռոմայեցւոց պատերազմները, ինչպէս նաև Արաբներուն յաղթանակը և Խաչակիրք բորոտութիւնը ծաւալեցին Արևմտեան երկիրներու մէջ։

Շնորհիւ գիտութեան հայթայթած միջոցներուն և վարակեալներուն խիստ առանձնացումներուն, նոյն ախտին սաստկութեան առջևն առնուեցաւ։

Շատ կանուխէն, Երուսաղէմի հայ վանօրայք, ուզած են Ս. Քաղաքին մէջ ծաւալած ուրկութեան աւերները դարմանել, մըղուելով թէ՛ մարդասիրական և թէ՛ բարեպաշտական տեսակէտներէ։ Քրիստոնէական սկզբնական շրջանին, նոյն ախտէն վարակուածները փողոցներուն մէջ կը մնային անխնամ և անտիրական, քաղաքէն դուրս, դաշտերու և ձորերու մէջ, մարդկային ընկերութենէ վտարուած, յուսահատական նոպաներու տակ կը մահանային։ Ժողովրդէն վարակուածներէն զատ, կը գտնուէին վանօրէից մէջ նոյն կարգի հիւանդ վանականներ՝ որ կը մնային անդարմանն և անխնամ։ Ուստի հայ վանականութիւնը, նոյն իսկ Զ. կամ Է. դարուն, նկատի առաւ անհրաժեշտ պէտքը վանքի մը՝ որ ունենայ իրեն յատուկ ուրկանոցը։ Այս պարագան յայտնապէս հասկնալի է Աղաստաս վրդ·ի վանօրէից Յուցակէն,

ուր հետևեալ կերպով յիշատակուած է այս վանքը. «Ընդշտուեաց վանին որ ուրկանց հր Հայոց վանւորիցն, նոյն կողմն»: Ուրկանոցի վանքի յիշատակութիւնը այսչափ միայն ծանօթագրուած է. պատմութիւնը կը լռէ անոր ծագման, զարգացման և քաղաքական տակնուվրայութեանց հետևանքով յառաջ եկած զանազան վիճակներու մասին: Հակառակ մեր պրպտումներուն, այս վանքին նկատմամբ, դժբախտաբար գոհացուցիչ տեղեկութիւններ չկրցինք ունենալ. գոհ պիտի ըլլանք մեր ձեռք բերած քիչով: Անաստաս վրդ.ի վերև յիշատակուած ծանօթագրութիւնը շատ մութ կէտեր ունի զոր պիտի ջանանք լուսաբանել, որքան կարելի է:

2. Ո՞վ հիմած է այս վանքը.

Անաստաս վրդ.ի ծուցակէն հետևեալ պարագան որոշ կը հասկցուի թէ նոյն վանքը Ուրկանոց նախարարութեան յուշակերտն ու ձեռակերտն է: Պատմութենէ իրազեկ կ'ըլլանք թէ Ուրկանոցք շատ հին նախարարութիւն մըն էին, ըստ գիտնոց, նոյն իսկ Ուրարտական շրջանէն մնացած. շատ կանուխէն կը բնակէին վանայ լճին հարաւային սահմաններուն վրայ. Աղթամարն էր անոնց ամրութեան բերդը և անոնց զարգացման վերջնակէտը կը նկատուի է. դարու կէսը, մինչև Թէոդորոս Ուրկանի զօրավարը. նոյն ժամանակամիջոցը Ուրկանոց անկման շրջանն է որ ատեն ճորտերը կը դառնան իրենց դրացի Արծրունեաց, որ Ուրկանիներէն աւելի զօրեղցած էին: Ցայտնի է պատմութենէն Ուրկանի Թէոդորոս զօրավարին կատարած դերը Հայոց կրօնական և քաղաքա–պատմական դէպքերուն մէջ: Հետևելով Սեբէոսի և Ցովհաննէս Կաթողիկոսի՝ կը նկատենք որ Թէոդորոս Ուրկանին Բիւզանդական շրջանին Հայաստանի վրայ կարգուած է «սպարապետ և պատրիկ», և յետոյ քաղաքական փոփոխութեանց բերումով անցած է Արաբներուն կողմը և կարգուած է ըստ Ասողիկի, «իշխան Հայոց». և ըստ Սեբէոսի, Վրաստան, Աղուանք, Սիւնիք մինչև Տէրպէնտ, անոր իշխանութեան կը յանձնուին: Իր ժամանակի քաղաքական դէպքերու հետևանքով Ուրկանին կ'ունենայ գործունէութեան շրջան մը, մերթ փառքի և մերթ լքումի: Ան իր պաշտօնին պահանջին համաձայն, քանիցս

կը ճամբորդէ Սիւրիա և հուսկ ուրեմն, կը վախճանի իր գերեզած համազգիներուն մօտ, և ըստ Սեբէոսի, մարմինը կը փոխադրուի Հայաստան եւ կ'ամփոփուի իր հայրերուն գերեզմանին մէջ: Ուշտունեաց տիրոջ Թէոդորոսի վերաբերեալ այս պատմական հաստատ կիրճ տողերուն տեղեկանալէ յետոյ, Ուշտունիներէն ո՞վ էր որ կարենար իր ոյժին և ազդեցութեան ապաւինելով՝ բիւզանդական կամ արաբական շրջանին Ս. Քաղաքին մէջ, յաջողիլ կառուցանելու Ուշտունեաց վանքը, անոր սեպհական ուրկանոցովը. պատմական ապացոյց չունինք. միայն ներհայեցողութեամբ (intuition) կը համարձակինք ըսել թէ հաւանաբար Թէոդորոս Ուշտունին է որ սիւրիական իր առաջին այցելութեան՝ ուխտի գալով Երուսաղէմ՝ չինել տուած է նոյն վանքը ի յիշատակ Ուշտունեաց նախարարութեան, անտարակոյս հետևելով միւս նախարարութեանց՝ որ յիշատակներ ունէին Ս. Երկրին մէջ:

3. Ո՞ւր հիմուած էր այս վանքը.

Այս վանքը չինուած էր մեր Ս. Հրեշտակապետ վանքին հանդիպակաց կողմը, համաձայն աւանդութեան և այն կցկտուր տեղեկութեանց զոր կը յիշեն սաղմոսական վերջին դարու հայ պատմիչները: Նոյն վանքին բուն տեղը ճշդօրէն որոշելու համար, մեր այս տողերը պէտք է հիմնուին պատմական յիշատակարանաց վրայ: 808 ին, Մեծն Կարոլոսի վիճակագիրը պաշտօնեան, ինչպէս յիշած ենք այլուր, Սիոնի Թազամասին վանականաց վիճակագրութիւնը պատրաստելու համար, Գեթսեմանիէն սկսելով՝ զրի կ'առնու վանականները ու վանքերը, և յառաջանալով կը հասնի Սիոնի Հայոց Ս. Ստեփանոսի վանքը, և կ'արձանագրէ հետևեալը. «Ի Ս. Ստեփանոս, ուր կար անոր գերեզմանը, կը գտնուին երկու քահանայ և 15 բորոտներ» (Տե՛ս "Commemoratorium Casis Dei"): Զենք անդրադառնար Հայոց Ս. Ստեփանոսի վանքի պատմական մասին՝ չկրկնելու համար մեր նախապէս գրածը: Բայց ինչո՞ւ վիճակագիրը Ս. Ստեփանոսի վանքին քահանայից թուարկման կը միացնէ բորոտներուն թուարկումը, մինչ ի պատմութենէ գիտենք թէ ուրկանոցը Ս. Ստեփանոսի վանքին մէջ չէր. բայց անտարակոյս մօտն էր անոր, և կրնանք մտածել թէ Հայոց վա-

նօրէից ուրկանոցի վանքը պարսկական կամ արաբական յարձակմանց օրերուն քանդուած ու տակաւին չէր վերաշինուած այն թուականին, բայց ուրկանոցի սենեակները գոյութիւն ունէին և կամ նորոգուած էին սոսկ պաշտօնեան վանք ու վանական հոն չգտնելով՝ նշանակած է միայն բորոտներուն թիւը և միացուցած մերձակայ Ս. Սահիանոսի վանքին քահանայից թուոյն: Յետնագոյն դարու ուղեգիր ուխտաւորի մը գրածէն կը հասկցուի թէ յիշատակեալ վանքը Դաւթի դրան մօտ էր և վերանորոգուած, ու գարձեալ հոն կը մնային ուրուկները: Տեղագրական պարագաներէ դատելով՝ կը նկատուի որ ուրուկներու ապաստանարանը ու վանքը շրջապատուած էր մօտակայ քանի մը վանքերէ. իր դիմացն էր Ս. Հրեշտակապետը, որուն Ս. Միխայէլ անունը կը տրուէր, Ս. Ստեփանոսը՝ Սիոնի արևելքը գըտնուող Ս. Սիմեոնի եկեղեցւոյն և մերձակայ Ս. Պետրոսի վանքին մէջտեղը: Նոյն տեղւոյն մօտ էր նաև Անաստաս վրդ.ի ծուցակին մէջ յիշուած Երիցավանքը, Դաւթի դրան մօտ, որու մասին վրացերէն սաղմոսական ծիսարանը (Տե՛ս Դերմ. Թրգմ. Goussen ի) հետևեալ ծանօթութիւնը կուտայ «Հոկտ. 5 ին, Ժուրտին Խահանային վանքին, Լաշերևայի մէջ (փոխ. Պլաշերնայի), Ս. Միխայէլի մօտ, նաւակատիք Ս. Աստուածածնի եկեղեցւոյն»: Այս խօսքերը յայտնի կ'ընեն թէ՝ Երիցվանքն ալ, յանուն Ս. Աստուածածնի, մօտ էր Հայոց Ս. Հրեշտակապետին, ինչպէս նաև Դաւթի դրան, ուր կար Ռշտունեաց վանքը իր ուրկանոցով, և ուրկէ Ս. Յակոբայ մայրավանքն ալ շատ հեռու չէր: Վանքերու այս խմբաւորումէն դատելով կարելի է եղրակացնել թէ ցուցակագիր վրդ.ին՝ ուրկանոցին նկատմամբ, «հայ վանօրէից» բացատրական խօսքը ճըշգրտօրէն կ'արդարանայ, թէև սխալ մը չ'ըլլար, եթէ Ռշտունեաց վանքին ուրկանոցը նկատենք Ս. Քաղաքին բոլոր հայ վանօրէից մէկ հաստատութիւնը:

Ուրկանոցի վանքին տեղը ճշդելու համար, ունինք նաեւ Վըրզպուրկի եպիսկոպոս՝ Թէոտորիքի 1172ի Ուղեգրութիւնը, ինչպէս վերև ալ ակնարկեցինք. յիշեալը հետևեալ տողերով գըրած է նոյն վանքի մասին. «... Դաւթի աշտարակին սկսեալ՝ հասայ քաղաքին արեւմտեան անկիւնը՝ ուր կայի եկեղեցի մը եւ ուրուկներու բնակարաններ, շատ մարմար եւ վայելուչ վիճակի մէջ» (Տե՛ս "Theodorich, Description of the Holy Places», էջ 43): Ուրեմն,

մինչև ԺԲ. դարու վերջերը, Դաւթի դրան մօտի եկեղեցին եւ ուրկանոցը գոյութիւն ունէին. անկէ յետոյ պատմական տեղեկութիւն կը պակսի. հաւանաբար քանդուած են Սալահէտտինի գրաւման ժամանակ, թէև աւերակաց վրայ չինուած խարխուլ սենեակներուն մէջ, ուրուկները բնակած են մինչև իրենց այլուր փոխադրութիւնն, ինչպէս կը վկայեն Աստուածատուր եպս. (Տե՛ս «Ժամանակագր. Պատմ. Երուսղի.» Ա. հտր. էջ 50, և Մկրտիչ վրդ. Արծրունեան, «Ստորագր. Երուսղի. էջ, 184), երկուքն ալ Ս. Յակոբայ միաբան:

4. Ի՞նչպէս կը մատակարարուէին վանքն եւ անոր Ուրկանոցը.

Այդ մասին յիշատակարան չունինք. բայց ազգային պատմութեան յուշիկները զայն կրնան մեզ լուսաբանել: Յայտնի է թէ Ս. Ներսէս Պարթև հայրապետի օրով, առաջին անգամ հիմնուեցան ուրկանոցները Հայաստանի մէջ. ինչպէս կը վկայէ Բիւզանդ Փաւստոս (Տե՛ս Պատմ. Հայոց, էջ 76): Աչտիշատի (365), Շահապիվանի (447), Դունի Դ. (648) ժողովներու կանոնները բացայայտօրէն կը պարզեն թէ ո՛րպիսի եկամուտներով պիտի մատակարարուէին Հայոց ուրկանոցները. անոնք կը կազմէին սահմանեալ տուրքերը, այր և կին դատապարտեալ սոսկականներուն՝ ուրկանոցներու կանոնական ծառայութեանց արդիւնքները. զըբամական արդիւնքները այն ազատանիին՝ որոնք չէին յօժարեր երթալ ուրկանոց, կամ այլ բառով՝ գողևոց. նաև ուրիշ հոգւային արդիւնքներ և բարեպաշտական նուէրներ:

Ռշտունեաց վանքի հիմնարկութենէն մինչև Ը. դար, Ռշտունեաց նախարարութիւնը կը մատակարարէր իր հիմնարկած նոյն վանքը ու անոր ուրկանոցը, ինչպէս ուրիշ նախարարութիւններ՝ թէ՛ Հայաստանի և թէ՛ Ս. Քաղաքի մէջ, իրենց հիմնարկած վանքերն ու եկեղեցիները կը հոգային: Ռշտունեաց մատակարարութիւնը տևած է մինչև Ը. դար, ինչպէս գրեցինք, այն պատճառաւ որ Ռշտունիք նոյն դարուն կը տկարանային ու անոնց հողերը կը դառնային Արծրունեաց աւատը: Շատ հաւանական է որ Ռշտունեաց անկումէն յետոյ Երուսաղէմի ուրկանոցը կը մատակարարուէր Հայաստանի ուրկանոցներուն ի վա-

զուց հաստատուած և վերև յիշուած ժողովական կանոններով և մանաւար հոգատարութեամբ հայ վանօրէից։

Ոչտունեաց վանքի ուրկանոցը Ս. Թադէոսն ամենէն հին և միակ հաստատութիւնն էր. միայն 1047 ին արաբ տիրապետութեան օրով, Ս.ին–Սելովամի մէջ հաստատուած էր ընդարձակ հիւանդանոց մը (Պիմարիստան), ուր կային թոշակաւոր բժիշկներ և կը դարմանէին ամէն կարգի բազմաթիւ հիւանդներ։ Նոյն Պիմարիստանի ծախքը կը հոգար Երուսաղէմ քաղաքը, ինչպէս կը ծանօթացնէ պարսիկ ուղեկիր Նասիրի Խոսրով (Տե՛ս Palestine Pilgrims, Text Society, Vol. IV. էջ 26)։ Աչակրաց ժամանակն ալ, քաղաքին հիւսիսային կողմը, Ս. Ստեփանոսի դրան մօտ, շինուած էր ուրկանոց մը, որ, 1171 ին, գլխաւորապէս կը հոգար ցուէր մեծագումար նուիրատուութեամբ Երուսաղէմի թագաւոր Ամորիի, որուն զաւակն ալ վարակուած էր բորոտութեամբ (Տե՛ս The Latin Kingdom of Jerusalem, էջ 196)։ Մելիսանդ թագուհին 1159ին, Երուսաղէմի վանօրէից բոլոր ուրկանոցներուն նուիրած էր հասութաբեր հողեր (Տե՛ս R. B. 1926, էջ 276)։ Մելիսանդ (✻ 1160) ի մօրէ հայ էր, դուստր Պաղտին Բ.ի և կլնը Երուսաղէմի Ֆուլք թագաւորին, բարեգործութիւններով նշանաւոր հանգիսացած և թաղուած է Գեթսեմանիի Ս. Կուսի տաճարի աստիճաններուն ալ կողմը, ըստ Պատմութեան Տիւրացի Կիլիոմի (XVII, 32)։

Ըստ այսմ, Երուսաղէմի օտար ուրկանոցները վերոգրեալ միջոցներով կը մատակարարուին. իսկ մեր Ոչտունեաց վանքն ուր անոր ուրկանոցը, սկիզբէն մինչև ԺԲ. դար, կը հոգացուէր այն եղանակաւ և միջոցներով զոր վերև նկարագրեցինք։ Աչակրաց հեռանալէն յետոյ (1187), անծանօթ կը մնան մեզ նոյն հաստատութեան մատակարարութեան միջոցները. բայց սա պարագան յայտնի է թէ հայկական վանքերուն մեծագոյն մասամբ քանդուելէն կամ բռնագրաւուելէն վերջ, նոյն ուրկանոցին հոգը ծանրացած է Ս. Յակոբայ վանքին միաբանութեան վրայ, և ա՛ն է որ մինչև 1875, քանդուած ուրկանոցին աւերակաց հողակոյտին վրայ փաստող և լքեալ ուրուկներուն օրական հացը կը հայթայթէր, մինչև որ անոնք այլուր փոխադրուեցան (Տե՛ս Ժամկգր. Պատմ. Երուսլ. Ս. հտր. էջ 90)։ Այս դժբախտներուն փոխադրութեան առիթով, կառավարական ուրկանոցներ շինուեցան պետական ծախքով Ռէմլէ և Նապլուս քաղաքներուն մէջ (Տե՛ս վերը, Dict. Bibl. էջ նոյն)։

ԺԳ

ՍԵԼՈՎԱՄԻ ԱԻԱԶԱՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՄՕՏ ԳՏՆՈՒՈՂ ՎԱՆՔԵՐԸ

1. Սելովամ բառին բացատրութիւնը.

Հին կտակարանի յունարէն թարգմանութեան և Նոր կտակարանի համաձայն, Սելովամը կը կոչուի երբայեցերէն Has-Siloah և Siloah, որ անունն է աղբիւրի մը, ջրանցքի մը և աւազանի մը և այն տեղին որ կը գտնուի Երուսաղէմի հարաւը, Թրէբէոնի հովտին մէջ, Ոփէլի, Մօրիայի և Սիոնի լերան միջև, մօտ այն տեղին, ուր կեդրոնը կը միանայ Ենոմի Ձորին։ Աւետարանչին կողմէն (Յովհ. Թ. 7) աւելցուած որ թարգմանի առաքեալ մեկնութիւնը կը հաստատէ թէ պատմական և աւանդական պարապայմ մը համաձայն, նոյն բառը կ'արտասանուի h ով և կ'ածանցուի salah արմատով, որ կը նշանակէ ղրկուած եր. յունական նոյն բառին և արտասանուած գիրը գործածուած է քաղցրաձայնութեան համար, եւ Siloan ձեւը Արաբները առած են Բիւզանդացիներէն։ Մեկնիչներուն մեծագոյն մասը այս մեկնաբանութեան մէջ կ'ուզեն տեսնել Աւետարանչին մտադրութիւնը մարգարէական և խորհրդական իմաստով մը կապելու այս անունը իր կողմէն պատմուելիք դէպքի մը։ Նոյն բառը տառապէս (ջրոյ) նշանակելով՝ համազօր է ջրանցքի և ջրմուղի, եւ այս անունը տրուած է անոնց ա՛յն ժամանակ՝ երբ անոնք չինուած էին աղբիւրին ջուրը ղրկելու թագաւորաց պարտէզները ոռոգելու կամ աւազանը լեցնելու։ Ջրմուղին անունը յետոյ տարածուած է աղբիւրին, աւազանին և տեղին վրայ։

1.— Սելովամի աղբիւրը.— Ընդհանուր ասացուածքով կը հասկցուի Սելովամի ջուրը. Եսայիի Ը. 6 համարին համաձայն, միևնոյն ժամանակ կը նշանակէ Սելովամի ջուրերուն ընթացքը։ Մարգարէն «զջուրն Սելովայ որ գնայ խաղաղ» լսելով կ'ուզէ հասկցնել Դաւթի տան պատկերը. իսկ «զջուր գետոյն զհզօրն

և գյորդ» ըսելով՝ Եփրատը, որ կը ներկայացնէ «Աստեհատանի թագաւորը և անոր զօրութիւնը»։ Սելովամը կոչուած է պարզապէս աղբիւր (Բ. Եզր. Գ. 15), վասն զի Երուսաղէմի միակ աղբիւրն էր. միւսները նշանակուած են քաղաքէն դուրս։ Առաջին դարու Հրէաներն ալ միևնոյն ձևով կը բացատրէին Յովսեպոսի բերնով. «Սելովամը ա՛յն անունն է զոր կու տանք աղբիւրին»։ Հրեայ պատմագիրը նոյնիսկ կը զանազանէ «Սելովամը և քաղաքէն դուրս գտնուած աղբիւրները»։ Ըստ նոյն պատմիչին, Սելովամ կամ «աղբիւրը» քաղաքին կամ Թրէբէնի հարաւային ծայրը գտնուելով՝ կը վազէ Տաճարին լերան և վերի քաղաքին միջև։ Պատմիչը այս կերպով կը սահմանէ Ղրանցքին բերանը՝ ուրկէ դուրս կ'ելնեն Ջուրերը։ Բ. Եզր. Գ. 15 համարին մէջ, աւազանի մերձակայ դրան անունը կը կոչուի «աղբիւրի դուռ», անտարակոյս այս դուռն ա՛յն է որ 1897ին Բրօֆ. Blissի հետազօտութեամբ գտնուեցաւ վերի լերան հարաւ–արևելեան կողմը։ Արաբները նոյն տեղը կը կոչեն Այն Սիտտան. միանգամայն նոյն անունը կու տան ա՛յն աղբիւրին, ուրկէ Ջուրերը կու գան։ Ցերոնիմոս իր Մատթիի Աւետարանի Մեկնութեան մէջ նոյն աղբիւրը կ'անուանէ «Սելովամի աղբիւր», և տեղը ցոյց կու տայ «յոտս Սիոնի լերան», այսինքն «ի ստորոտս Մօրէայ լերան»։

2.— *Սելովամի ջրմուղը.*— Աստուածաշունչը, չատ մը մեկնիչներու և հնախօսներու համաձայն, Սելովամի Ջուրերուն համար երկու հոսանք կը յիշատակէ.

ա. Բացօթեայ հոսանք մը, որ կեդրոնէն անցնելով՝ Երուսաղէմի կամ Ոփալի արևելեան բլուրը կը շրջապատէ։

բ. Միևնոյն բլուրին ժայռի մը մէջ փորուած անցքը, որ կը տանի նոյն Ջուրերը հարաւ–արևմուտք։ Առաջինը ջրմուղի պեղումէն յառաջ է, որուն կ'ակնարկէ Եսայի Սելովամի «խաղաղ ընթացքը» բացատրութեամբ (Ը. 6). երկրորդով կ'ակնարկուի այն աշխատանքին, որով եզեկիա չանցած է Ջուրի այս հոսանքը ծածկել թշնամիներէն։ Երկաթի գործիքներով ժայռերը փորուած և ջրմուղը չինուած է Գեհոնի Ջուրերը իրենց ընթացքէն դարձնելու համար։

3.— *Սելովամի աւազանը.*— Բ. Եզր. ԺԳ. 15 և Ծովհ. Թ. 7. կը յիշատակուի նոյն աւազանը որ Ղրանցքէն վազած Ջուրերը կը

հաւաքէ։ Սելովամի աւազանը մէկ անգամ միայն յիշուած է Հին Կտակարանին մէջ, իր յատուկ անունով։ Նեեմի Բ. 14. Գ. 15 համարներուն մէջ կը յիշուին Նեեմիի աղբիւրին դուռը եւ Սելովամի աւազանին պատը թագաւորին պարտէզէն եւ Դաւթի քաղաքէն իջնող աստիճաններու մօտ, 1896ին գտնուած դրան հիւսիս–արևելքէն 60 մէթր հեռի և որ Նեեմիի աղբիւրին դուռն ըլլալու երևոյթը ունի։ Այս նշանները ցոյց կու տան թէ աղբիւրը և աւազանը մեծ հնութիւն մը ունին։ Նոյն աւազանին հարաւային կողմը չինուած է անցարգել պատ մը, որ կը տարածուի Ոփալի բլուրին հարաւային ծայրէն մինչև Սիոնի արևմտեան լեռը, 90 մէթրի չափ։ Այս պատը երկու քառկէս մէթր թանձրութիւն ունի, վեց մէթր յայնութեամբ հիման վրայ։ Պատին մօտ գտնուած են ուրիշ հաստատիմն կառուցուածքներ՝ թումբին հաստատութեան ծառայելու համար։

Սելովամի այն աւազանը, ուր մեր Փրկչին կողմէ ի ծնէ կոյրը ղրկուեցաւ, աւանդութեան մը համաձայն, այն տեղն է, ուրկէ Ջրմուղը կը վազէ։ Հոն կը տեսնուի աւազան մը, որուն պատերը այժմ խարխլած են, երկայնութիւնն է տասնեւհինգ մէթր, լայնութիւնը հինգ. նոյն չափ ալ խորութիւնը։ Աւազանի մէջ կը տեսնուին սիւնի բեկորներ։ Բնիկները կը կոչեն զայն Birket-Siloan։ *Բրօֆ.* Bliss *1896ին իր պեղումներու առիթով հոն գտած է մեծ աւազանի մը մնացորդները, որուն մէկ մասն է վերև յիշուածը։ Գտնուած աւազանը քառակուսի է, հիւսիսէն հարաւ քսաներկու մէթր, արեւելքէն արեւմուտք քսաներեք, բարձրութիւնը հինգուկէս։ Հիւսիսային կողմը աւազանին մօտ կար մէկ կոնքով* (nef) *եկեղեցի մը։*

1880ին այս Ջրմուղին մէջ դիպուածով գտնուած է փիւնիկեան գիրով եբրայական արձանագրութիւն մը, որ կը պատմէ այս Ջրմուղին պեղումի մասին տեղեկութիւններ։ Այս արձանագրութիւնը քանդակուած է տասն մէթր հեռաւորութեամբ աբևելեան ներսակողման վրայ։ Հոս կը գնենք այդ արձանագրութիւնը, Joseph Derenbourgի *ֆրանսերէն* (R. J. N⁰. 6. նոյ. դեկտ. 1881) *թարգմանութեան համաձայն հայերէնի վերածելով զայն։*

«Պեղումին վերջ։ Եւ ահա՛ ինչ որ կը վերաբերի այս պեղումի մասին։ Երբ գործաւորները *fարհասը* (pic) կը շարժեին մին միւսին դիմաց, երբ տակաւին երեք կանգուն կը մնար ժայռը պատռելու, կը

ղաւեր ձայն մը՝ որով մին միւսը կը կոչեր, վասնզի ժայռին մէջ աչ ու ձախ դիպք մը? պատահած էր: Եւ պեղումին օրը, գործաւորները կը զարնէին մին միւսին դիմաց, խարիսխ խարիսխի դէմ: Ջուրերը այն աեեն աղբիւրին վազելին աւազանը, գրեթէ հազար երկու հարիւր կանգուն երկայնութենին: Գործաւորներու գլխուն վրայ ժայռին բարձրութիւնը մեկ կանգունի չափ էր:»

2. Սելովամը հրէսոնէական ուխտաւեղի, եւ ասոր եկեղեցին.

*Սելովամի մէջ կատարուած էր իծնէ կուրին բժշկութեան հրաշքը, ըստ Աւետարանի: Այն օրէն ժողովրդական դարձան նոյն աւազանի ջրերը և ստացան անոնք բուժիչ զօրութիւն մը՝ հաւատքով մօտեցողներուն համար: Քրիստոնէական առաջին դարերուն իսկ, հոն տակաւին եկեղեցի չհաստատուած, ա-չազուրկները ամէն կողմէ կը դիմէին բժշկութիւն գտնելու համար, մասնաւորապէս Եգիպտոսէն եկողներ կը վկայուի թէ Սելովամ կ'իջնէին նոյն նպատակաւ: Երուսաղէմի Սոփրոնիոս հայրապետը իր Կիւրոս և Յովհաննէս մարտիրոսներու վկայաբանութեան մէջ կը յիշատակէ թէ նոյն վկաները տեսիլքով մը թելադրած են Ս. Մինաս եգիպտացի զօրականը և վերին Եգիպտոսի վանականներէն մին որ Սելովամի ջուրերուն դիմեն աչաց բժշկութեան համար: Ժողովուրդը մեծ հաւատք ունէր այդ ջուրերու մասին, այնպէս որ Տնօրինական Ս. Տեղերը այցելող ուխտաւորներ երբեք զանց չէին ըներ Սելովամը: Ինչպէս որ Ս. Տեղերու վրայ կանուխէն եկեղեցիներ չինուեցան, հոս ալ հին դարերու մէջ կառուցուած կը տեսնուի հոյակապ եկեղեցի մը, որուն կամարներուն տակ կը պայծառանար Սելովամի աւազանը: Հնախօսներու կարծիքը կը տարբերի նոյն եկեղեցիի չինութեան թուականի մասին: Ոմանք կը կարծեն թէ Եւդոկիա թագուհին չինած է զայն երուսաղէմի պարիսպները չինելուն առթիւ. այլք աւելի կանուխ կը նկատեն նոյնին չինութիւնը. ուղեկիրներ որոշ չեն յիշատակեր հիմնադիրը: Երուսաղէմի տօնակարգը, որ վրացերէն ձեռագրի մը մէջ գտնուած և Goussen Գերմանացին հրատարակած է, ունի հետեւեալ յանօթութիւնը «17 Ապրիլ, ի Սելովամ յիշատակ Վաղենտիանոս կայսեր»: Յուլիանոս Ուրացողէն յետոյ պահակած էր Վաղենտիանոս: Բիւզանդացի հեղինակներ այս վերջինը կը նկատեն չերմեռանդ հաւատացեալ մը, որ առաջին անգամ հիմնադրած է եկեղեցի մը Սելովամի մէջ (364–375), թերևս իբր փոխադարձութիւն Յուլիանոսի հրէամիտ պարգիւն ձեռնարկներուն: Վաղենտիանոսի հիմնարկութենէն յետոյ է որ Յուստինիանոս կայսրը նորոգել տուած է նոյն եկեղեցին և գմբէթով մըն ալ զարդարել տուած է զայն: Շատ կանուխէն Սելովամի ուխտաւորները կը նկարագրեն միայն աւազանը ու անոր վրայ կառուցուած կամարները. 451ին է որ պատմականօրէն կը յիշատակուի այս եկեղեցին: Պետրոս վրացի եպիսկոպոսը, որ կ'ապրէր ե. դարու կիսուն, իր Անանուն կենսագրին ըսածին նայիլով՝ ուխտագնացութեան առթիւ կ'այցելէ ուրիշ ուխտատեղիներէ զատ, Սելովամի եկեղեցին. ուրեմն ա՛ն 451ին չինուած էր արդէն: 570ին ուրիշ ուղեգիր մը, Անտոնինոս վկայ, իր Ուղեգրութեան մէջ հետեւեալ կերպով կը նկարագրէ Սելովամի եկեղեցին. «Երբ իջանք կամարի մը մօտ, ուր կար քաղաքին մէկ հին դուռը: Հոն կար ապի ջուր մը որուն մէջ ձգած էին երեմիա մարգարէն: Շատ ասոիճաններէ իջանք Սելովամի աւազանը, ուր տեսանք գմբէթաւոր պազիլիկան, որուն տակէն կը բղխէր Սելովամի աղբիւրը. հոն չինուած էին մարմարիոնէ երկու լոպարաններ՝ պատով մը բաժնուած, մին տրանց և միւսն կանանց համար, որոնք կը լուացուէին բարեպաշտութեամբ: Այս ջուրերուն մէջ կային զանազան բուժիչ զօրութիւններ և շատ հիւանդներ կ'առողջանային: Անդաստակին առջև կար մարդոյմէ չինուած լայն աւազան մը, ուր ժողովուրդը յաճախակի կը լուացուէր: Շատ ժամանակ ջուրը աղբիւրէն կը վազէր առատօրէն և կ'երթար Գեթսեմանիի հովիտը՝ որ կը կոչուի նաև Յովսափատ ...»: Այս խօսքերը բոլորովին համաձայն են վերջին տարիներու մէջ կատարուած հնախօսական պեղումներուն: 614ին պարսկական յարձակումներու հետեւանքով՝ կործանուեցաւ Սելովամի եկեղեցին և այդ պատճառաւ Անտոնինոս վկայէն վերջ այցելող ուղեգիրները ո՛եւէ ծանօթութիւն չեն տար նոյն եկեղեցիի մասին: 1896ին միայն Բրօֆ. Bliss և Dickie իրենց հնագիտական պեղումներով երեան հանեցին Սելովամի եկեղեցին հիմնատրդներն և վերակազմեցին անոր վաղեմի յատակագիծը (Տե՛ս Excavation at Jerusalem, 1894–1897, by Bliss and Dickie: Մինչեւ դարու

արար մատենագիրներէն Խիւրիս կը յիշատակէ աւետարանական յիշատակը Սելովամի նկատմամբ, մինչ Մուպաստասի 985ին կը պատմէ թէ Սելովամը կ'ուռոգէ ընդարձակ պարտէզներ, որ քաղաքին աղքատներուն անունով վագֆ եղած են. իսկ 1047ին Նասիր-ի-Խոսրով պարսիկ բանաստեղծը՝ որ իր ճանրորդութիւնը մայրենի լեզուովը գրած է, կը հաստատէ որ՝ եթէ մէկը լուացուի Սելովամի մէջ կը բուժուի իր ախտերէն, և կ'աւելցնէ թէ Սելովամի մէջ հաստատուած են գթութեան զանազան յարկեր, ուր կը խնամուին հիւանդները երուսաղէմ քաղաքին ծախքովը. հոն չինուած է նաև հիւանդանոց մը՝ ուր կան թոշակաւոր բժիշկներ։

3. Սելովամի մօտ գտնուող հայկական վանքերը.

Հայաստանի նախարարութիւններէն ոմանք, ինչպէս Ս. Տեղերու այլևայլ կէտերուն վրայ, նոյնպէս Սելովամի մօտ, իբր նուիրական տեղ մը, վանքեր շինած են, հոն պատսպարելու համար այն բազմաթիւ հայ ուխտաւորները, որոնք իրենց հոգևոր և մարմնաւոր ցաւերուն դարմանումին համար կը դիմէին Սելովամի փրկարար ջուրերուն։ Հայք բիւզանդական տիրապետութեան ժամանակ ունէին չատ վանքեր Սելովամի շրջակայքը. տեղական պայմանները կը դիւրացնէին նոյն վանքերու շինութիւնները։ Պաղեստինագէտ Glermont-Ganneau կը դիտէ թէ Սելովամի մօտ գտնուող Ակեղդամայի բլուրներուն հին օրերէն մնացած յերուսաղէմական քարայրները վանականներուն կողմէն կը գործածուէին իբր բնակարան, հերիք է որ մէն մի վանական կարենար իրեն համար ճարել ջրհոր մը և փոքրիկ պարտէզ մը։ Վանականներու տեղական բազմաթիւ խմբաւորութիւններ կը կազմէին միաբանութիւն մը, որ չուտով կ'ունենար իր եկեղեցին. հաւանական է որ այս մասնաւորումը ճիշդ ըլլայ և այդ պատճառաւ է որ Անաստաս վրդ. իր վանօրէից ցուցակովը չատ վանքեր ցոյց կու տայ մեզ Սելովամի մէջ։ Հոս կը դնենք նոյն սրբավայրին մէջ որոշ կերպով յիշուած հետևեալ չորս վանքերը, որոնք են.

1.— Նորավանք, մերձ ի գերեզման Եսայեայ մարգարէին, ի ձոյլ կողմն Ջիրեհեաց ղերին, զոր այժմ հակառ են տաճիկք. Սելովամի մօտ էր Եսայի մարգարէին գերեզմանը, ինչպէս կը վկայեն Ոտոգիևս (P. G. XIII. 881. 1570. 1636) և Ցարոնիմոս իր Եսայեայ մեկնութեան մէջ (in Js. 10. P. L. XXIV. 33) թէ Եսայիի գերեզմանը Սելովամի մօտ էր. և Ցայտնաւորէն ալ կը հաստատէ պայն։ Բրիստոնէական հնախօսութիւնն ալ վերջին տարիներու մէջ Սելովամի մերձակայ քարայրներու մէջ գտած է յուշարէն արձանագրութիւն մը՝ նուիրուած Եսայի մարգարէին յիշատակին. ուրեմն ճշդութիւն մըն է յուցակագիր վարդապետին Սելովամի հայկական Նորավանքին տեղագրութիւնը։

Նորավանք անուամբ վանք մը ունեցեր ենք նաև Սիւնեաց աշխարհին վայոց Ձոր գաւառին Ամաղու գիւղին մօտ, նախ յանուն Ս. Փոկասու եւ յետոյ Ս. կարապետի եւ Ս. Ստեփաննոսի փոքր եկեղեցիով մը, որուն չուրջ չինուած է մեծ վանք մը Նորավանք կոչուած, ուր Օրպելեանց իշխաններուն և եպիսկոպոսներուն տապանատունը եղած է. և ան ընդհատներով տևած է մինչև ԺԶ. դար։ Այս վանքին հիմնարկութեան և վերաշինութեան համար պատմիչ Ստեփաննոս Օրպելեան ունի ընդարձակ տողեր, որոնցմէ կը հասկցուի թէ վերև յիշուած եկեղեցին մէջ չինուած էր գեղեցիկ աւազան մը այն ջուրէն, որ կը բղխէր սեղանին տակէն, եւ ամէն կողմէն կու գային ախտաժէտք եւ բորոտներ լուացուելու և բժշկուելու համար. (Սիսական, էջ 184–204)։ Այս պարագան ինձ կը թելադրէ ըսել թէ հին դարերուն Երուսաղէմ եկող Սիւնեաց գաւառի ուխտաւորները Սելովամ այցելած ու անոր ջրերէն օգտուած են և վերադառնալով հայրենիք Նորավանքի անունով վանք ու եկեղեցի չինած են ի յիշատակ Սելովամի աւազանի հայկական Նորավանքին։ Պատմութենէն յայտնի է որ ինչպէս տօներն ու ծիսական սովորութիւնները ուխտաւորաց միջոցաւ տարածուած են Երուսաղէմէն դուրս, նոյնպէս Տնօրինական Ս. Տեղերու յիշատակը նոյն միջոցաւ հաստատուած է գաւառաց մէջ։

2.— Խաղայ Երանելոյ վանքն, որ՝ ի Ջորն Ցովսափատու, մերձ ի Գեթսեմանի.

Խաղ կարնեցի եպիսկոպոսը, որ տեղապահն էր Մեծն Ներսէսին, կը յիշեն Բիւզանդ և Խորենացի պատմիչները, թէ ինչպէս Հայոց Սրբուհի թագաւորը չտոհաց Խաղին իրաւացի յանդիմանութիւններուն և հրամայեց որ քաշքշեն և քարկոծեն նոյն եպիսկոպոսը։ Բայց ըստ Խորենացւոյն, Խաղի աղջկան տագրերն,

որ Ապահունեաց նախաթարոութեան կը վերաբերէին, եպիսկոպոսը քարկոծողները սրով սպաննեցին և ապատելով Խադը փախան իրենց երկիրը: Ապահունիք կը բնակէին վանայ ծովին արևմտեան կողմը, Խադ եպիսկոպոս ինքն ալ կը վերաբերէր ազնուական տոհմի մը: Ապահունիք խնամեցած Խադ եպս.ի տանը որ ի յիշատակ կը չինեն վանք մը Սելովամի մօտ: Անաստասի Ծուցակին մէջ Ապահունեաց նախաթարոութեան անունով վանք չէ յիշատակուած, և անկարելի է որ նոյն վաղեմի նախաթարոութիւնը անմահն մնար Ս. Տեղերուն բարեպաշտական յիշատակներէն: մենք հաւանական կը նկատենք թէ Խադի անունով չինուած Սելովամի վանքը կը պատկանի Ապահունեաց նախաթարոութեան:

3.— Մոկաց վանք. 4.— Զորրորդ վանք Սիւնեաց ի Զորն Ծովասիաստու: Երուսաղէմի արևելքը կը գտնուէին Սիւնեաց մէս երեք վանքերը, իսկ Զորրորդը Սելովամի մօտ: Այս բոլոր վանքերը կործանուած են Պարսից և Արաբաց արշաւանքներուն ժամանակ և այլևս չեն վերաշինուած. բայց մինչև դարուն, ըստ վկայութեան արաբացի պատմիչներուն, որքան որ Սելովամի շրջակաները այլևս գոյութիւն չունէին բիւզանդական շրջանի կրօնական կեանքը ու վանականութիւնը, սակայն և այնպէս բոլորովին չէին ջնջուած կրօնաւորական միաբանութիւնները: Թ. դարու Commemoratorium Casis Dei կոչուած պաշտօնական յիշատակարանը արձանագրած է Ծովասփառու մէջ կոյսեր, վանականեցիներ և վանուորներ: 985ին Մուգատասի կը յիշէ թէ Սելովամի մէջ կային պարտէզներ, այգիներ և եկեղեցիներ, անապատականներ ու դերեզմաններ, և կը չեշտէ թէ բոլորովին չէ վերջացած կրօնաւորական կեանքը (Guy le Strange, Palestine under the Moslems, էջ 219): Մինչև ԺԲ. դար տևած է Սելովամի և շրջակայից վանական կեանքը, այնպէս որ նոյն ատեն ևս պակաս չէին հայ, յոյն և ասորի կրօնաւորներ նոյն տեղւոյն մէջ, ինչպէս որ կը վկայեն յիշատակարանք (R. B. 1919. էջ 493–495): Ուսոի կրնանք ըսել թէ այս կողմերու հայ վանականութիւնը, հուրի և սուրի մկրտութիւնը բազմիցս ընդունելէ վերջ, դարձեալ կարողացած է մնալ այս կողմերը, մինչև Խաչակրաց ժամանակ: Այս կերպով ԺԲ. դարը կը փակէ Սելովամի կրօնաւորական կեանքը, ու բացի աւազանին ջրոց պարզևներէն, կը տիրեն հոն ամայութիւն և կրօնական կեանքին բարգաւաճ վիճակի մը մնացորդները:

ԺԴ

Ս. ՊՈՂԻԿՏՈՍԻ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

1. Մելիտինէ Ս. Պողիկտոսէն առաջ եւ անոր ժամանակը.

Մելիտինէ (Մալաթիա) մեր այս գրուածքին բովանդակութեան հետ սերտօրէն կապակցութիւն ունենալուն համար, պէտք է պատմական համառօտ ծանօթութիւն մը տալ անոր մասին, Ս. Պողիկտոս վկայէն առաջ և անոր ժամանակը:

Մելիտինէ կը գտնուի Սեբաստիոյ հարաւը և Եփրատի արևմտեան կողմը. ան հիմնարկուած է Քրիստոսէ 800 տարի յառաջ, ինչպէս կը հաստատեն խալդիական նորագիւտ բևեռագիր յիշատակարաններ՝ որ կը գտնուին Հայաստանի զանազան կողմերը և գիտնոց մանրազնին քննութեանց առարկայ եղած են: Այս գիտական խուզարկութիւնք կը յայտնեն թէ Մելիտինէ կանուխէն բնակավայրը եղած է «Հատեանց», որոնք շատ պատերազմներ մղած են Ասորեստանցւոց դէմ, և Խալդեան թագաւորք երբեմն երբեմն յարձակելով Մելիտինէի վրայ, գերիներ տարած են իրենց երկիրը, գրաւած են զայն և երկար դարեր պահած են իրենց տիրապետութեան տակ: Մելիտինէ գրացի երկիր մըն է Ծոփից աշխարհին, ինչպէս վերջնոյս, նոյնպէս նահայերու հետ ան ունեցած է սերտ յարաբերութիւններ և ոչ բոնք չեն գագրած քրիստոնէական թուականներուն: Թէ՛ Մելիտինէ քաղաքին նախնական յարաբերութեանց և թէ՛ Մեծ Ծոփի և թէ՛ Շահունի Ծոփի անուանց ծագման մասին Խալդի արձանագրութեանց լուսաբանութեան համաձայն, Գերմանացի գիտնական մը, Տր. Վ. Բէյք, շատ լուրջ և շատ հիմնաւոր գրուածք մը ունի, (ընդարձակ տեղեկութեանց համար, ընթերցողը կրնայ դիմել Հանդես Ամսօրեայ, 1903. թ. 11. Նոյ. էջ, 321–325): Առանց նկատի առնելու Խալդի արձանագրութիւնները, ոմանք այնպէս կը կարծեն թէ Մելիտինէ հռոմէական հիմնարկութիւն մըն է. բացարձակ սխալ մըն է այս. միայն պէտք է

գիտնալ թէ՝ նոյն քաղաքը աւելի մեծ զարգացում ստացաւ շրջանի հռոմէական այն լեգէոնին, որ Քրիստոսի 70 թուականին, Երուսաղէմը պաշարող ուրիշ լեգէոններու մէջ գտնուելով՝ քաղաքին առումէն յետոյ, Տիտոսի ձեռքով հաստատուեցաւ ի Մելիտինէ, Եփրատի արեմտեան կողմը։ Ժ֊ի. լեգէոնն էր ան, Շանթաձիգ գունդը, որ իբր խորհրդանշան կը կրէր չանթազարդ վահան և գրօշակ, որ եփրատական ամրութեանց մէջ դարանակալ կը հսկէր հայկական և պարթեւական արշաւանքներուն դիմադրելու համար։ Ռազմական կայան մըն էր Մելիտինէ, և Հռովմայեցիք վիճեցան օգտագործել «Հատեանց» մնծամեծ ամրութիւնները։ Ժ֊ի. լեգէոնին ի Մելիտինէ բնակութեան և տեղական դիւրութեանց պատճառաւ քաղաքը քիչ առնէն մնծապէս զարգացաւ, ամէն կողմէն խուժեցին հոն և Հայոց բազմութիւն մը, Հռովմայեցւոց օրերէն մինչև Յուստինիանոս, հոն կարևոր տեղ մը գրաւած ըլլալով՝ քաղաքը լեգէոնական բանակավայրէն դուրս տարածուեցաւ, և մինչև 518, հռոմէական կայսերք կարևորութիւն ընծայեցին Մելիտինէին և զարգարեցին զայն հանրային մնծամեծ չէնքերով։ Զ. դարուն սկիզբը հարկ եղած էր քաղաքը պարսպել, Անաստաս կայսրը ձեռնարկեց գործի բայց չուտ մեռաւ. Յուստինիանոսի վերապահուած էր այդ գործը յանձնել տեղացի Հայոց, որ կատարեցին զայն, ինչպէս կ'իմանանք Պրոկոպիոսէն։

Քրիստոնէական կրօնը սկսած էր հետզհետէ տարածուիլ հռոմէական կայսրութեան մէջ։ Ժ֊ի. լեգէոնը կը մնար միշտ ի Մելիտինէ. ան՝ ինչպէս որ քաղաքին ընդարձակման կորիզը եղած էր, նոյնպէս արմատը եղաւ Մելիտինէի քրիստոնէացման. կանուխէն քարոզուեցաւ Աւետարանը Շանթաձիգ գնդին շարքերուն մէջ. բազմաթիւ զինուորներ ընդունեցին Աւետարանը. ոմանք կ'ըսեն թէ ամբողջ լեգէոնը քրիստոնեայ դարձաւ։ Անոնց մասին Գրիգոր Նիւսացի եպիսկոպոս մնծ գովեստներ չռայլած է, յարելով թէ անոնք ո՛րքան զինուորական կարգուսարքին խըստապահ, նո՛յնքան զօրաւոր էին իրենց նոր ընդգրկած հաւատքին մէջ ալ։ Քրիստոնեայ Մելիտինէն, Զ. դարուն, ըստ Պրոկոպիոսի, գուտ հայկական քաղաք մը կը նկատուէր։

2. Ս. Պողիկտոսի ճահատակութիւնը եւ ազգութիւնը.

Շանթաձիգ Ժ֊ի. լեգէոնին հարիւրապետներէն էր Պողիկտոս. իր զէնքի ընկերոջ Նէարքոսի յորդորներուն վրայ, ջերմեռանդօրէն չարեցաւ քրիստոնէութեան. խիստ էր անոր բնաւորութիւնը, որպէս զինուոր։ 260ին, Դեկոսի հրովարտակը ընդդէմ քրիստոնէից, Մելիտինէի պատերուն վրայ փակցուած էր. Պողիկտոս քաշեց պատռեց զայն, և փշրեց այն կուռքերը զորս քաղաքին քուրմերը ուսամբարձ կը կրէին տեղէ տեղ։ Պողիկտոսի այս արարքը տեսան պետական պաշտօնեայք, ձերբակալեցին ու բանտարկեցին. իր կինն ու անները չատ ազաչեցին որ ի սէր զաւակաց, ան ետ դառնայ իր ընտրած ճամբէն, բայց ան կը մնար անդողդողդ, և տրուած վճռին համաձայն, գլխատուեցաւ և թաղուեցաւ ի Մելիտինէ։ Ս. Պողիկտոսի վկայաբանութիւնը չի գըտնուիր թէև մեր Ճառընտիրներուն մէջ, բայց կա՛ն անոր յունարէն և լատիներէն վկայաբանութիւնները. անոնք սակայն ակատեսի գրութիւններ չեն, այլ Ե. դարու ներքողեանի մը քաղուածոյք։ Այդ վերջինը, 1882ին, գտնուած է Փարիզի Ազգային Մատենադարանին մէջ, Aubé֊ի ձեռքով։ Հելինակ մը կը կարծէ թէ այդ նորագիւտ ներքողեանին տողերը կը մատնեն թէ արդէ թէ այդ նորագիւտ ներքողեանին տողերը կը մատնեն թէ անատեսի մը այժմ կորուսած չիշատակարանէն չօրինուած է ան, որով բացայայտ կը հասկցուի թէ Պողիկտոսի պատմականութիւնը անառարկելի է։ Այս գրութեանց համաձայն Նէարքոս՝ Պողիկտոսի նահատակութեան պահուն, մաքուր կտաւի մը վրայ հաւաքած է անոր արիւնը և տարած Բանանէոդը, որ անձանօթ քաղաք մըն է։ Ոմանք Բանանէոդը կը նոյնացնեն, իբր բնակութեան տեղի կամ քաղաք, Հայաստանի քանանացի հրեայ գաղթականութեան նահապետ Բանանիտասի հետ, որ Յեսուի ժամանակ Հայաստան փախած և անկէ սերած են Գիբռնիիֆ. (Տե՛ս P. Allard, Hist. des Persécutions, էջ 538, Aubé, Polyeucte dans l'histoire, էջ 13, նաև Զամչ. Ս. Հայր. էջ 554–55)։ Սրտառուչ պատգայ մըն է նահատակեալ Պողիկտոսի արեան այս ձև փոխադրութիւնը Բանանէոդ քաղաքը՝ իր զէնքի ընկեր Նէարքոսի ձեռքով։ Բանանէոդ քաղաքը թերեւս Պողիկտոսի ծննդավայրն էր, ուր պիտի պահուէր մարմիրոսին արիւնը։ Այս զմայլելի պարագան նկատողութեան առնուելիք կէտ մըն է նահատակաց արեան պահպանութեան տեսակէտով։

Ո՞ր աղգութեան կը վերաբերէր Պողիկտոս, կարծիքները կը տարբերին. անմահ թատերգակն Փորնէյլ, որ 1643 ին բեմադրեց Պողիկտոսը և պանծացուց անոր յիշատակը, հայազգի կը համարի զայն և իշխանական ցեղէ, և կ'անուանէ Seigneur Arménien: Ալիշան ալ նոյն կարծիքն ունի (Տե՛ս Ծուշիկ, Բ. էջ 239): Շատ կանուխէն, ինչպէս տեսանք, Մելիտինէն հայաքաղաք մըն էր, որ յետոյ երորդ Հայք անունը ստացաւ. հաւանական է որ Պողիկտոս հայ ծագում ունէր, թերևս ազնուական գերդաստանէ սերած: Մելիտինէի հայ ազնուականութիւնը չատ վաղնջական պէտք է նկատել: Բևեռական արձանագրութեանց մէջ կը յիշուին Մելիտաւիֆ = Մելիտայ, Մելիտիևայֆ եւ Մելիտիևևաւիֆ (Տե՛ս Բաևասեր, Հայ Նախաարարութիւնները բևեռական արձանագրութեանց վրայ. 1901, էջ 249): Թերևս այդ ազնուականութեան համար էր որ՝ Պողիկտոս ամուսնացաւ Մելիտինէի հռոմայեցի կուսակալին աղջկանը հետ. սոսկական մը պիտի չկրնար ընել զայդ, ինչպէս կը կարծէ Ալիշան (Նոյն, Սևդ):

3. Պողիկտոս վկային պաշտամունքը.

Պողիկտոսի անունը նշանաւոր եղաւ Արևելքի և Արևմուտքի մէջ: Արևելեան վկայաբանութիւնը կը յիշատակէ 7 Յնվր. 14 Փետ. ի Մելիտինէ. 22 Յնվր. ի Նիկոմիդա. 21 կամ 22 Մայիս՝ ի Կեսարիա Կապադովկիոյ: Ասորական վկայաբանութիւնը՝ 19 Ապր. և 3 Մայիս, իսկ Հերոնիմեանը՝ միևնոյն թուականներուն, ինչպէս նաև 13 եւ 27 Ապր.: Հայ եկեղեցւոյ ասնելի սուրբերէն մին է Պողիկտոս: Ի պատիւ անոր եկեղեցիներ կառուցուած են Դ. դարու կիսուն, ի Մելիտինէ, սուրբին տապանին վրայ, որուն պարգևը կը նկատուի Եւդիմէոս՝ Պաղեստինի հռչակաւոր անապատականը. ի Կ. Պոլիս, Վաղենտիանոս կայսեր (364–375) աղջկան կողմէն հիմնուած եկեղեցին, որուն այցելած է Տուրացի Գրիգոր Եպս., բարեպաշտ տիկին մը, Ծուսթինիանոսի օրով, այդ եկեղեցւոյն ներքին կողմը ոսկեզօծ զարդարած է, իր ատացուածքը նոյն կայսրէն ազատելու համար. մարդիկ նոյն եկեղեցւոյն մէջ կը կատարէին իրենց ամէնէն հանդիսաւոր ուխտը: Ռավեննայի մէջ ալ Ս. Պողիկտոս ունեցած է եկեղեցի մը, որուն նաւակատիքը կը կատարուէր Ապր. 9 ին.

(Տե՛ս H. Delehaye, Les origines du Culte des Martyr, էջ 210): Եգիպտոսի մէջ ալ, Թերայիտի մօտ, յանուն Ս. Պողիկտոսի եկեղեցի մը կառուցուած պէտք է ըլլայ, այն պատճառով որ նոյն տեղը գտնուած հողէ կանթեղներէն ոմանք նուիրուած են ի յիշատակ նոյն սուրբին, ինչպէս յայտնի կ'ըլլայ Լուվրի թանգարանը պահուած նոյն կանթեղներուն արձանագրութիւններէն. (Տե՛ս Martigny, Dict. des Antiquités chrétiennes. Art. Lamps. էջ 408): Գրիգոր Եպս. Տուրացին, իր Հրաշից և Պատմութիւն Փոանկաց գիրքերուն մէջ Պողիկտոսի պաշտամունքի նկատմամբ փոանկ թագաւորաց և կ. Պոլսոյ միջովրդեան հին սովորութիւնները կը յիշատակէ և կը նկարագրէ այն ուխտագնացութիւնները, որ պատժուած կը համարուին Պողիկտոսի կողմէն: Ֆրանսացի հին թագաւորներն ալ յանուն Ս. Պողիկտոսի կը հաստատէին իրենց դաչնագրութիւնները (Տե՛ս Les Petits Bollandistes, Vies des Saints, էջ 484–85. նաև Ծուշիկ, Բ. էջ 239):

4. Հայոց Ս. Պողիկտոսի վանքը Երուսաղէմի մէջ.

Ինչպէս որ տեսանք վերև. Ս. Պողիկտոսի պաշտամունքը վաղուց տարածուած ըլլալով Արևելքի մէջ, կարելի չէր որ Հայք ևս մնային յարգելէ հայրենի վկային յիշատակը: Բուն Հայաստանի մէջ չենք հանդիպիր սուրբին անուամբ կառուցուած սրբավայրի մը: Ս. Քաղաքին մէջ է որ կը կառուցուի Ս. Պողիկտոսի անուամբ վանք մը, հայ նախարարներու բարեպաշտութեամբ հիմնարկուած վանօրէից չարքին մէջ: Այս պարագան հաստատելու համար դարձեալ պիտի դիմենք յիշատակաց արժանի Անաստաս վրդ. ի Ծուցակին, ուր կը կարդանք հետևեալը. «Սուրբ Պողիկտոսի վանքն, շինեալ Զորոդապետին Հայոց ի հիւսիսոյ կողմն»: Այս է միակ յիշատակագրութիւնը այս վանքին նկատմամբ: Ո՛չ օտարներուն և ո՛չ ալ մերայնոց քով ծանօթագրուած են պահներ Պողիկտոսի հայ վանքը՝ որ յԵրուսաղէմ, բայց պատմականօրէն ան գոյութիւն ունէր, և չատ կանուխէն քանդուած ըլլալուն ոչ ոքի ծանօթ էր: Անաստաս վրդ. ի այս հակիրճ տողերը երկու հարցում կը դնեն մեր առջև. ո՞վ չինել տուաւ այս վանքը, և ո՞ր չինուեցաւ: Ըստ կարելւոյն պիտի ջանանք տալ այս երկու հարցումներուն պատասխանը:

1. Ո՞վ շինել տուաւ այս վանքը.

Ալիշան՝ Անաստասի վերոգրեալ տողերուն մէջ Զորրորդապես բառով կը հասկնայ Զորրորդ Հայրը, որուն իշխանը Ս. Բաղաքին մէջ չինել կու տայ նոյն վանքը Դ. դարու առաջին քառորդին։ 1894ին, Դամասկոսի դրան մօտ մոզայիքի գիւտի ժամանակ, Աստուածատուր Եպս. յօդուածով մը (Տե՛ս Նոր Դար, Թ. 134) կարծիք կը յայտնէ թէ նոյն վանքը չինել տուողն է Ագգային պատմութենէ ծանօթ Ծոփաց նախարար Սրբեղայոս, որ Ս. Աբիսաակէս հայրապետը նահատակած է Ծոփաց աշխարհին մէջ, և յետոյ զղջալով երուսաղէմ եկած՝ և իբր ապաշխարութիւն չինել տուած է զայն եւայլն։ Ցիշեալ եպիսկոպոսին այս կարծիքը կրնայ հաւանական ըլլալ, բայց պատմականօրէն չենք կրնար հաստատել, քանի որ այդ մասին յիշատակարան չունինք։ Անաստաս վրդ.ի վերի տողերը սակայն ճշմարտութիւն մը կը բովանդակեն՝ թէ Ս. Պողիկտոսի վանքը Զորրորդ Հայոց սպարաքներէն մին չինել տուած է, և այս պարագան շատ բնական կը գտնենք, քանի որ Զորրորդ Հայք, ըստ բիւզանդական սահմանուժի, Մելիտինէի, Միջագետքի և Տարօնի մէջտեղի երկիրն էր (Տե՛ս L'Arménie entre Bysance et Islam, էջ 305), որ կը կոչուէր նաև Մեծ Ծոփք, հնոց Սօֆրանիկը, մօտը ունենալով Շահունի կամ Փոքր Ծոփքը, որոնց իշխանները մեծ դիրք կը վայելէին հայ նախարարութեանց շարքին մէջ, և կը մասնակցէին, ըստ պատմութեան, կրօնավարչական հանդիսութեանց։ Արդէն նախաքրիստոնէական շրջանին ալ, հայ թագաւորներ կը նստէին հոն, ըստ դրամագիտական յիշատակարանաց։ Բուն Հայաստանի մէջ չէր ընդհանրացած Պողիկտոսի պաշտամունքը, ինչպէս յայտնի է անոր հայերէն վկայաբանութեան չգոյութենէն. բայց Ծոփաց աշխարհին և Մելիտինէի մէջ մեծ պատուով կը կատարուէր Սուրբին պաշտամունքը, ուստի անկասկած է որ Ծոփաց աշխարհի իշխաններէն մին՝ Ս. Երկրին մէջ չինել տուած ըլլայ Պողիկտոսի այս հայկական վանքը։

2. Երուսաղէմի ո՞ր կողմը շինուած է այս վանքը.

Անաստաս վրդ.ի գրածին նայելով՝ Պողիկտոսի վանքը չինուած է քաղաքին հիւսիսային կողմը։ Մինչև 1894 կարելի չէր եղած յիշուած կողմը գտնել այդ վանքին հետքը. բայց նոյն թուականին Դամասկոսի դրան մօտ, Ս. Ստեփանոս եկեղեցիէն

քիչ հեռի, տան մը հիմերուն պեղումներու ժամանակ, գտնուեցաւ պեղակերտ մոզայիք մը, հայկական արձանագրութեամբ։ Տեղը ուր գտնուած են այս յիշատակարանը և ուրիշ հնութիւնք, ըստ հնագիտաց, եղրն է այն վաղնջական մեծ պողոտային որ կը տանէր Ծովային կեսարիա։ Նոյն տեղւոյն մօտերը կը բարձրանար յաղթական կամարը՝ ի պատիւ Սպրիանոս կայսեր՝ որ երուսաղէմը վերաշէն էր հռոմէական գաղթավայրի։ Ցիշեալ կամարին լատին արձանագրութեամբ բեկորները, ինչպէս նոյն կայսեր մարմարեայ պատկառելի գլուխը գտնուած են նոյն տեղերը։ Ինչպէս հռոմէական շրջանին, նոյնպէս քրիստոնէական առաջին դարերուն, մոզայիքներով և մեռելական մատուռներով զարդարուած էր այս յաղթական կամարին մօտ (Տե՛ս Jérusalem Nouvelle, T. II էջ 35–39)։ Երուսաղէմի հիւսիսային կողմի վերոգրեալ հայկական մոզայիքի երջանիկ գիւտը կը մղէ մեզ հաւանօրէն ընդունելու թէ Ս. Պողիկտոսի վանքը չինուած է քաղաքին լատին մէկ պողոտային գլուխը, հռոմէական և քրիստոնէական յիշատակարանաց մօտիկ։ Այս հրաշալի մոզայիքի գիւտին պատմութեան մանրամասնութեանց մէջ չեմ մտներ. այդ մասին ընդարձակ նկարագրութիւններ կան հայ և եւրոպական հրատարակութեանց մէջ. միայն պիտի յիշեմ քանի մը մասնաւոր կէտեր։ Պաղեստինի հնախօսութեանց վերաբերեալ պարբերականի մը մէջ կը կարդանք (Տե՛ս Palestine Exploration Fund, 1894–895) թէ հայկական մոզայիքի տեղւոյն պեղումները կատարել տալու գործը պետական որոշումով յանձնուած է ծանօթ հնագէտ Dr. Blissի, որուն անդեկագրէն, ինչպէս նաև գերմանացի գիտնական Herr Von Schickի մասնաւոր տեղեկատուութենէն կը հասկցուի թէ այս մոզայիքը չինուած է մարգկային ոսկորներով լեցուն քարայրի մը վրայ, ունեցած է մեռելական մատուռ մը, ինչպէս յայտնի եղած է փլատակ պատերու մնացորդներէն. նոյն տեղը գտնուած են նաև քանդակազարդ խոյակներ, հողէ կանթեղներ, ապակեայ շիշեր. բայց աստի մոզայիքէն 25 ոտք հեռի տեղ մը պեղումներու ժամանակ գտնուած է մարմարեայ խաչքար մը, որ պեղումներու ժամանակ կոտրտուած է. կտորտանքը իրար բերուած ու կարգադրուած են հայերէն գիրեր. խաչին ձևն ու քանդակները ալ հայկական են։ Վերոյիշեալ երկու պիտանականները կը պնդեն թէ այս հայկական մոզայիքը ունի միևնոյն արուեստը և յօրինուածքը,

ինչպէս Զիթենեաց լերան հայկական մոզայիքները, հետեւաբար միեւնոյն ժամանակի գործ. մէկ խօսքով Յուստինիանոսի օրով չինուած. վասն զի, ըստ պիտնոց, մոզայիքի արուեստին ամէնէն ծաղկեալ թուականը կը նկատուի Յուստինիանոսի դարը: Այս պարագան մեզ կը հաւաստէ թէ Դամասկոսի գրան մօտիկ հայկական այս գեղանկար մոզայիքն ալ Յուստինիանոսի ժամանակին կը պատկանի, վանքի մը կամ եկեղեցւոյ մը յարկին տակ չինուած, որով մոզայիքին հետ վանքն ալ կանգուն մնացած կ'ըլլայ մինչեւ Զ. դարու կէսը: Արդ, Անաստաս վրդ.ի նկարագրութեան համաձայն, Պողիկտոսի վանքը երուսաղէմի հիւսիսային կողմը չինուած ըլլալը պատմականօրէն յայտնի ըլլալով վերեւ յիշուած մոզայիքը պահպանող յարկին նոյն վանքին չէնքը ըլլալը հաւանական կը գտնենք: Ան մերձաւորապէս է. դարու սկիզբը կործանուած է. մոզայիքը դարերով հողի փլատակներուն տակ մնացած, եւ 1894ին, պատահական պեղումներէն երեւան հլած է:

Վերեւ յիշուած հայկական խաչքարին կտորները իրար բերուած եւ կարդացուած է հետեւեալ հայերէն արձանագրութիւնը.

«Յիշեայ Պետրոս որ արար եւ Յոհան որ եհաս առնել զիաչս զայս.» իսկ մոզայիքին վրայ արձանագրուած է Մեսրոպեան հնագոյն գրերով հետեւեալ յիշատակարանը.

«Վասն յիշատակի եւ փրկութեան աւհնայն Հայոց զորոց զանուանս Տէր գիտէ».

Այս երկրորդ յիշատակարանը անտարակոյս ակնարկութիւն մըն է ա՛յն Հայերուն, որոնց ասկերոտիքը մոզայիքին վիմափոր քարայրին մէջ պահուած կը մնային: Որո՞նք են այդ հայերը. այդ մասին յիշատակարան չունինք. անոնք հաւանաբար ա՛յն Մելիտինեցի հայ նահատակներն են որ կը յիշատակուին Մելիտինեցի Մեծն Եւդիմիոսի վարքին մէջ: Պատմագրներէ գիտենք որ վերջնոյս օրով մանաւանդ, յաճախակի երուսաղէմ ուխտի եկող Մելիտինեցի Հայեր կ'այցելէին նաեւ իրենց հայրենակցին, ի Սահէլ: Երուսաղէմի անապատին նոյն այցելուաց մէջ կը գըտնուէին հայ մեծ անձնաւորութիւններ: Հաւանական է որ յիշուած նահատակաց նոյն նշխարները Մելիտինեցի ուխտաւորներ չատ կանուխէն երուսաղէմ բերած եւ ամփոփած են դարձեալ Մելիտինեցի Ս. Պողիկտոսի վանքին մէջ, ուր յետոյ, ի պատիւ նոյն նահատակաց կառուցուած է այս աննման յիշատակարանը: Այսպիսի պարագայ մը աննախընթաց չէ Ս. Երկրին մէջ:

1925ին ալ, այս հայկական մոզայիքին մօտերը գտնուած է հայկազն Մօրիկ կայսեր, Արապիսոս ծնած քրոջը՝ Անաստոլիայի գերեզմանը՝ յուշարէն արձանագրութեամբ եւ մոզայիքով գեղազարդուած(*): Այս վերջին գիւտն ալ կ'ապացուցանէ թէ Ս. Պողիկտոսի վանքին մօտ կը թաղուէին Մելիտինէի եւ չրջակայից այն ուխտաւորները որ կը վախճանէին երուսաղէմի մէջ:

ԺԵ

ԳԱԶԱՒՈՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Կը փափաքինք գրի առնուլ խորագրուս նշանակուած հայկական վանքի մը պատմականութիւնը երուսաղէմի մէջ. ան կը գտնուէր Ս. Յարութեան Տաճարին մօտ, ինչպէս կը հաստատէ Անաստաս վրդ. իր Հայ Վանօրէից Ցուցակին մէջ. «Գազաւոնի վանքն որ յանուն սուրբ Հոիփսիմեի եւ Գայիանեի ի մէջ խաղաղի՝ դրանն Յարութեան»: Այս յիշատակութենէն զատ, գժբախտաբար ո՛եւէ տեղեկութիւն չունինք անոր մասին. բայց այս յիշատակարանը, ինչպէս անոր կիսաւեր չէնքը արդէն կը հաստատեն նոյն վանքին գոյութիւնը:

Որպէս զի կարենանք նոյն վանքին տեղը ճշդել, հարկ կ'ըլլայ բացատրել Անաստաս վրդ.ի վերոգրեալ փոքր յիշատակարանը. ան կ'ուզէ ըսել թէ Գազաւոնի Ս. Հոիփսիմէի եւ Գայիանոսի վանքը՝ քաղաքին ներսէն անուամբ կառուցուած հայկական վանքը՝ քաղաքին կողմն էր, եւ կը գտնուէր Ս. Յարութեան Տաճարին դրան

(*) Տե՛ս ԱՐԵՒ 1926. Թ. 2164, մեր յօդուածը Հայկազն Մօրիկ կայսեր հրոյ գերեզմանը Երուսաղէմայ մէջ խորագրով:

մօտ: Դուռն բառը զոր կը յիշէ ցուցակագիր վրդ.ը, պէտք չէ հասկնալ Տաճարին աւագ դուռը, այլ այն նախապրոնիը (propylées), որ Ս. Յարութեան Տաճարին անջատ մասն կը կազմէր, եւ նոյն Տաճարին պարսկական քանդումէն յետոյ (614 թուին) այլ եւս չի վերաշինուեցաւ. ա'ն յատուկ էր միայն Կոստանդինեան դեղեցկաչէն Պազիլիքային. նախադրունքին կործանուած մասերը երկար դարեր մնացին հողին տակ: Մենք անոր գոյութիւնը կը-նամք հաստատել երկու կերպով, պատմական և հնախօսական:

Ս. Պատմական.— Ինչպէս ծանօթ է, Ս. Յարութեան Տաճարը չինել տուած է Մեծն Կոստանդիանոս կայսրը. հոյակապ յիշատակարան մըն էր ան, կառուցուած մեր Փրկչի Ս. Գերեզմանին և Ս. Յարութեան ի պատիւ. ճարտարապետական գլուխ գործոց մը, ուր, ըստ վաղեմի ուղեգիր ուխտաւորաց, կը չողային ոսկին ու արծաթը սրբատաշ մարմարի ծաղկազարդ քանդակներով. բիւզանդական գեղարուեստի բոլոր նրբութիւնները կը փայլէին քրիստոնէական այս առաջին Տաճարին մէջ. որուն նաւակատիքը չքեղութեամբ կատարուեցաւ. Կեսարացի Եւսեբիոս եպիսկոպոսը խօսեցաւ իր նաւակատիքի ճառը կայսեր եւ բազմաթիւ եպիսկոպոսաց, ինչպէս նաև խուռներամ հաւատացելոց ներկայութեան:

Եւսեբիոս՝ իր «Վարք Կոստանդիանոսի» գրուածքին մէջ, Տաճարին ինչ ինչ մասերը կը նկարագրէ, թէև ոչ լրացուցիչ կերպով, և գաղափար մը կու տայ նախադրունքի մասին: Նոր-բակերտ նկեղեցւոյ մասին իր դրածները յիշել մեր նպատակէն դուրս կը մնայ, բայց նախադրունքի իր նկարագրութիւնը պէտք է որ իր տողերովը նշանակուի, մեր նպատակին հասնելու, այսինքն Գազաւոնի Հայոց վանքին տեղը ճշդելու համար: Եւսեբիոսի նկարագրութեան համառօտութիւնն է հետևեալը. «Տաճարին աւագ դրան մօտ էր անդաստակը (atrium), անոր գրաւած տեղը կը տանէր եկեղեցւոյ ճակատի դուռը: Նոյն տեղը կը գտնուէին նախ բակ մը, յետոյ անոր երկու կողմի սրահները, եւ ի վերջոյ բակին դուռները: Ասկէց յետոյ, հրապարակի մէջտեղը (հաւանաբար շուկայ ըսել կ'ուզէ) կային գլխաւոր դռները, ուր ներելի էր գործաւորներուն իրենց ապրանքները ցուցադրելու. եւ անցորդները առիթ կ'ունենային դուռներէն ներս նայիլ ու

զարմանալ գաւիթի ու Տաճարին չքեղութիւններուն վրայ» (Վարք Կոստանդիանոսի, Անգղ. թարգմ. էջ 530): Եւսեբիոսի այս տողերը թէև յստակ չեն, բայց կը յայտնեն թէ Ս. Յարութեան նախադրունքը կ'երկարէին մինչեւ այն ճանապարհը՝ չուկային մօտ, որ կը տանէր Ս.Ստեփանոսի դուռը:

Բ. Հնախօսական.— Նախադրունքի հնախօսական մասը աւելի որոշ կերպով կը պարզէ նախադրունքի տարածութիւնը, որ մեզի պիտի առաջնորդէ գտնելու մեր Գազաւոնի վանքին տեղը: Մեր առջեւն ունինք անգղ. փոքրիկ տետրակ մը, 1927ին Երուսաղէմ տպագրուած, որմէ պիտի քաղեմք նոյն տեղւոյն հնախօսական տեղեկութիւնները. նոյն տետրակին հեղինակ՝ B. Antipov‌ի համաձայն, 1844ին, Բրուսական հիւպատոս Schulz, Ս. Յարութեան Տաճարէն՝ դէպի արեւելք, հինգ հարիւր ոտք հեռի տարածութեան վրայ գտնուող տեղը (երբեմն Ռուսաց հիւրանոց, այժմ Մայրապետանոց և եկեղեցի չինուած), գտած է երկու սիւներ, որ ուշադրութիւն գրաւեցին Voguet, Tobler, Robinson, Sepp և Schick հնագէտներուն, և ասոնք ալ, իրենց կարգին պեղումներ կատարեցին նոյն տեղւոյն վրայ, գտնագան թուականներու մէջ, բայց աւերակաց ճչգութեան մասին եզրակացութեան մը չյանգեցան: 1883ին Երուսաղէմի Ռուսաց եկեղեցական Առաքելութեան նախագահ Անտոնինոս վարդապետ կը չարունակէ պեղումները և իր հետազօտութիւնները ու կը հաստի մինչև այն ժայռը՝ որուն վրայ հիմնուած էին աւերակներու զանազան մասերը, որ ցոյց կու տային թէ անոնք տարբեր ժամանակներու մէջ հաստատուած էին. հոն կը գտնուէին երկու սիւներ և կամար մը, սիւներէն մին հիւսիսայինը՝ կորնթեական և հարուածյինը՝ բիւզանդական ոճն ունէին, յետոյ, միւս գտնուած յիշատակներն էին պարիսպի երկու մասեր, որոնց ծագումը աւելի հին կ'երևնար: Հնախօսներու եզրակացութեան համաձայն, նոյն տեղւոյն մէջ, երբայական քանդուած պարսպի մը մասերուն վրայ կառուցուած է Կոստանդինեան տաճարին նախադրունքը, ուր, ըստ նկարագրութեան վաղեմի ուխտաւորաց, կը գտնուէր հինաւուրց չուկան. աւերակաց ուղղահայեաց պարսպի կտորները երուսաղէմ քաղաքի հին պարսպի բեկորներ են: Ցոլսեպոս հրեայ պատմիչը կը յիշատակէ նոյն տեղւոյն պարիսպը իր

աշտարակներով, ամրութիւններով և դուռներովը, ինչպէս նաև անոր դասատանի դրան սեամը: Բրիստոսի 70 թուականին էր որ քաղաքի պաշարման ժամանակ Տիտոս քանդեց այդ պարիսպը և ամրութիւնները: Յովսեպոսի յիշատակութիւնը Յիսուսի խաչելութենէն հազիւ 37 տարի վերջն է, և կրնամք համոզուիլ թէ դատաստանի դրան սեամ բառածը Խաչի Ձանապարհի ծայրը կը գտնուէր. մեր Տէրն Յիսուս՝ Խաչը ուսին վրայ կ'անցնէր այդ դուռնէն — քրիստոնէական նախագրունքի արևելեան մասը — և կը տարուէր Golgotha, քաղաքէն դուրս ուր պիտի կատարուէր իր խաչելութիւնը. ուստի այս գտնուած աւերակները անգամ մը եւս կ'ապացուցանեն թէ Golgotha եւ Բրիստոսի Ս. Գերեզմանը իրապէս կը գտնուին իրենց իսկական տեղերը. այդ տեսակէտով եւս գտնուած յիշատակարանները կը ներկայացնեն մեծ արժէք մը:

Ուրեմն Յիսուս, երբայական օրինաց համաձայն, քաղաքէն դուրս խաչուեցաւ: Նոր Կտակարանն ալ կը հաստատէ զայդ. «զի մօտ էր ի խաղաղանոր տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս» (Յովհ. ԺԹ. 20). «Վասն որոյ և Յիսուս, զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն, արտաքոյ դրանն չարչարեցաւ» (Եբր. ԺԳ. 12): Golgothային և Ս. Գերեզմանին պարսպէն դուրս ըլլալուն մէկ ապացոյցն ալ Բրօֆ. Schickի Խպտոց վանքին մէջ վերջերս գտած վաղեմի գերեզմանի մը գոյութիւնն է. յիշեալ վանքը Ս. Յարութեան Տաճարին գրեթէ յարակից է և նոր գտնուած պարսպին մէկ մասն ալ կը գտնուի նոյն վանքը երթալու ճանապարհին մօտ: Մենք ալ անձամբ տեսանք այս աւերակները, պարսպի մասերը, սիւները՝ իրենց կորնթական խոյակներով, և դատաստանի դրան սեամը՝ որուն քարայատակը անցուդարձէն մաշած ու խորացած էր. եզրակացնելով այս տողերը, ըսենք որ՝ Ս. Յարութեան Տաճարի մօտիկ Ռուսաց վերև յիշուած հաստատութեան արևելքը, ճանապարհին վրայ կար երբայական կլորկնակ պարիսպը, ըստ Յովսեպոսի, որուն կործանուած աւերակներուն վրայ էր որ Կոստանդիանոս կայսր շինել տուած էր Ս. Յարութեան աննման տաճարին սիւնազարդ և գեղեցկաչէն բացօթեայ նախագրունքը:

1. Ո՞ւր կը գտնուի Գազաւոնի հայոց վանքը.

Անաստաս վրդ.ի խօսքերը բացատրեցինք պատմական եւ հնախօսական տեսակէտով և հասկցանք թէ Ս. Յարութեան Տաճարին նախադրունքը ո՛ր տեղը կը վերջանային եւ ո՛ւր պէտք է փնտռել Գազաւոնի մեր վանքը: Երուսաղէմի պատմիչ Անաստաս վարդապետ իր Ժամանակագրական Պատմութեան մէջ կը յիշատակէ (Տե՛ս Ս. Հար. էջ 91–92) Անաստասի Հայ Վանօրէից Ցուցակը, ան այս վանքին նկատմամբ ծանօթագրութիւն մը ունի. բայց քառասուն տարի առաջուան այդ տեղագրութիւնը նոր չէնքերու յաւելումներով փոփոխուած ըլլալով՝ չէր կրնար առաջնորդել մեզ Ս. Հոփսիմէի և Գայիանէի հայկական վանքին տեղը. իսկ Ուղեցոյց Սրբազան Տեղեաց գրքին (էջ 166–67) մէջ բերած յիշատակութիւնը բոլորովին հարևանցի է և ոչ մի բացատրութիւն չունի նոյն վանքի պատմական ծագումի մասին, միայն կ'ընդունի թէ ան հայոց եօթանասուն վանքերէն մին է: Մենք ուզեցինք անձամբ ճշդել նոյն վանքին տեղը, ուստի ընկերակցութեամբ Ս. Յարութեան Տնօրէն Տ. Յակոբ վրդ. Թաչճեանի եւ Ժառ. վարժ.ի սրտերէնի ուսուցիչ Վարդան Մաթոսեանի այցելեցինք նախ նախադրունքի աւերակները որ, ինչպէս վերեւ նկարագրեցինք, կը գտնուին Ռուսաց չէնքին մէջ, յետոյ մեր ստացած ծանօթութեանց համաձայն, չէնքի արևելեան կողմի ճանապարհին վրայ գտնուած խանութպաններէն մէկ քանին հարցուփորձելով անոնցմէ միոյն կողմէն առաջնորդուեցանք, դէպ արևելք մերձակայ կողմնակի նեղ ճանապարհի մը վրայ բացուած դրան մը, որուն բացուելով մեր առջև պարզուեցաւ քարուկիր մուխ չէնք մը, չափազանց սեղան և աւերուած պատերով և որ հազիւ կը լուսաւորուէր առաստաղի բացուածքէն. առաջին առթիւ որ չէնքէն ներս մտանք, մենք համոզուեցանք թէ հայկական եկեղեցիի մը մէջ կը գտնուինք. վասն զի նոյն չէնքին գմբէթը՝ որ կիսակործան էր, եկեղեցիին ճիշդ մէջտեղը կը գտնուէր չորս սիւներու վրայ. եկեղեցին հողով լեցուն էր, գրեթէ մինչև կամարները, այնպէս որ բոլոր հնութիւնները ծածկուած էին. միայն հողէն վեր կ'երևէին եկեղեցիին տասներկու կարծրաքար սիւներու խոյակները. դուռը արևմտեան կողմը կ'երևար, վասն զի պատին կցուած երկու սիւներուն մէջ նեղ բա-

յուածք մը քարով հիւսուած էր: Այն դուռը որմէ մտանք, կը թուի թէ յետոյ բացուած էր. մոմի լուսով հազիւ կրցանք այսչափ տեղեկութիւն քաղել: Շէնքը այժմ վագի է և կը վերաբերի խալամայ: Աստուածատուր նպ.ի գրածին նայելով մինչև Սալահէտտին (ԺԲ. դար) այս եկեղեցին պոյութիւն ունեցած է եւ յետոյ խափանուած, և այս պարագան հաւանական կը նկատուի. վասն զի, ինչպէս պիտնք, Սալահէտտին Երուսաղէմի գըրաւումէն յետոյ չատ եկեղեցիներ մզկիթի եւ մէտրէսէի վերածեց, ինչպէս Ս. Յովակիմ և Աննայի հայոց վանքը և ուրիշներ. չատ եկեղեցիներ ու վանքեր ալ, իբր վարձատրութիւն պարգևեց այն յաղթական զօրավարներուն՝ որ իրեն հետ պատերազմի մասնակցած էին. հաւանական է որ Գազաւոնի վանքն ալ նոյն վիճակին հանդիպած է: Եկեղեցիին այս չէնքը առաջ խաւ է եղեր, յետոյ ձիթապտուղի չտմարան և ի վերջոյ օճառի գործարան. այժմ գրեթէ պարապ: Իսկ չէնքին կից արևմտեան ճանապարհին վրայ 35–40 տարի առաջ չինուած են վագիի կրպակներ, այնպէս որ եկեղեցիին չէնքը՝ ճանապարհի կողմէն անշմարելի կը մնայ:

2. Ո՞վ շինեց Գազաւոնի վանքը.

Երուսաղէմի հայոց հին վանօրայք ընդհանրապէս կը յիշատակուին իրենց հիմնադիրներուն անունով, չատ քիչեր են որ իրենց իսկական անունով կը յիշուին, այդ քիչերէն է Գազաւոնի վանքը որ կը կրէ թէ հիմնադիրին եւ թէ վանքին անունը: Գազաւոն կամսարական անուն մըն է. նոյն նախարարութիւնը ունեցած է Գազաւոն անուամբ երեք պատմական անձեր.

Ա. Գազաւոն, որդի Սպանդարատի, 386ին (Խորենացի Գ. ԽԲ).

Բ. Գազաւոն, որդի Հրահատի, 426ին (Խորենացի Գ. ԿԵ.).

Գ. Գազաւոն, հայր Զաւրակի, Զ. դար (Փիրք Պղրոց, էջ 74):

Պատմական պարագաները դիտելով՝ հաւանական չենք գըտներ որ Բ. և Գ. Կամսարական Գազաւոնները հիմնարկած ըլլան յիշատակուած վանքը, վասն զի անոնք հեռի կը գտնուէին յունական կայսրութեան սահմաններէն. աւելի չատ հաւանական է որ Ա. Գազաւոնը, նախ որ տղայութեան օրերուն քաղաքական պատճառներով իր մօրը հետ ապաստանած է յունական բաժինը, և ծանօթ էր նոյն աշխարհին մէջ: 386էն յետոյ հայոց թագաւորութեան կիսուած ժամանակ, Գազաւոն՝ Արշակ Գ. թագաւորին հետ մնկնելով պարսկական բաժնէն դարձեալ հաստատուեցաւ յունական բաժնին մէջ եւ հռչակաւոր գարձաւ իր քաջագործութիւններով: Երբ Արշակ մեռաւ, Յոյնք իրենց բաժնին հայկական թագաւորութեան վերջ տալով հաստատեցին յոյն կոմս մը, եւ սպարապետութիւնն ալ յանձնեցին Գազաւոնին, որ այս պարագային տակ հայ նախարարաց հետ դիմեց պարսկական բաժնի Հայոց Խոսրով թագաւորին և մնկնեցաւ անոր ծառայութեան մէջ մտնելու համար: Քաղաքական ծանր դէպքերու բերումով, Գազաւոն չղթայակապ Խոսրովի հետ տարուեցաւ Անյոյշ բերդը և հոն վախճանեցաւ:

Արդ, Սպանդարատի որդի Գազաւոնը յունաց աշխարհին հետ իր յաճախակի յարաբերութիւններովը և երկար ժամանակ բնակութեամբն ու զինուորական համբաւովը աւելի ծանօթացած էր յոյներուն, որ նոյն ժամանակ տիրապետող էին Պաղեստինի: Անոր սպարապետութեան պաշտօնը, դիրքը եւ ազդեցութիւնը պիտի օգնէին Ս. Երկրին մէջ յաւերժացնելու իր նախարարութեան անունը՝ կառուցանելով հոյակապ վանք մը, յանուն Ս. Կուսանաց՝ Հռիփսիմէի և Գայիանէի: Հայ Պատմութիւնը արձանագրած է բազմաթիւ կամսարական նախարարներու անուննները՝ որ վանքեր կամ եկեղեցիներ շինած են, մասնաւորապէս Շիրակի մէջ, Մրենի և Թալինի եկեղեցիները, որ մինչև հիմակ կանգուն կը մնան, անոնց չքմեռանդ կրօնասիրութեան արդիւնքն են: Կամսարականք մինչև ութերորդ դար անբաժանելի մնացին Մամիկոնեաններէն, վերջնոց հետ խնամութեամբ ալ զօրանալով մեծ ծառայութիւններ մատուցին եկեղեցւոյ եւ հայրենիքին: Կամսարականք՝ որքան բարեհամբաւ և հայրենասէր գործերով հռչակուած, նո՛յնքան կսկծալի դէպքերով լեցուն տարեգրութիւն մը թողած են, զոհ ըլլալով եղբայրական նախանձի և ատելութեան: Անոնք հայրենիքէն դուրս ալ, Արևմտեան աշխարհի ընծայած են հոյակապ դէմքեր՝ զարդարուած յիշատակելի գործերով. անոնք են դարձեալ որ Ս. Երկրին մէջ չինած են Համբարձման լերան վրայ, Շիրակացւոց վանքը, Բաւին և Ս. Լուսաւորիչ վանքերը, որոնց տեղերը տակաւին չենք կրցած ճշդել. մասնաւորապէս կը յիշուի Հառազատ կամսարական մը՝ որ երուսա-

ղէմ այցելած ու ապաստած է ա՛յն հայկական վանքերը որոնք գրաւուած էին յոյներէն, և որուն խնդրանքովը Անաստաս վրդ-պրի առած է Երուսաղէմի Հայ վանօրէից ծուցակը։

Ժ Զ

ԶԻՔԵՆԵԱՑ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ Ս.ՇՈ.ԿԵՐՏԱՒԱՆԻ ԵՒ ԲԼՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ ՎԱՆՔԵՐԸ

1. Որո՞նք են Զիքենեաց Լեռան հիսոնէական յիշատակները.

Զիքենեաց լեռը, որ երկք բլուրներ ունի, կը գտնուի Երուսաղէմի արևելեան կողմը։ Կեդրոնի հեղեղատը կը բաժնէ Երուսաղէմը Զիքենեաց լեռնէն, որ Երուսաղէմէն հեռի է, ըստ շաբաթու ճանապարհի (Գործ Առաքելոց, Ա. 12), այսինքն երկու հազար քայլ հեռաւորութիւն՝ ուրկէ պէտք չէր որ Հրեայք շաբաթ օրը անդին անցնէին։ Մեր Փրկիչը յաճախակի կ'այցելէր հոն աղօթելու համար։ Իր վերջին գիշերը, կը գտնուէր նոյն լերան վրայ։ Զիքենեաց լեռը, չատ կանուխէն, ձիթենիներու անտառներով խտացած էր, բայց այժմ մերկացած է անտառայնի գեղեցկութիւններէն. իր բլուրները ելևէջներով զառի վերներ կը կազմեն. առջևը կը տարածուի Երուսաղէմի համայնապատկերը՝ Մեհեալ Ծովը, Ցորդանանը և Մովաբի լեռները հեռուէն կ'ըծայեն զմայլելի տեսարաններ։ Ան Յիսուսի սիրած մեկ լեռն էր. հո՛ն հրաւանդեց իր աշակերտները՝ զօրացնելով զանոնք իրենց կոչումին մէջ։ Նոյն լերան վրայ կատարուած քրիստոնէական խորհուրդները կը պարփակուէին հետևեալ երկու յիշատակներուն մէջ. նախ, աշխարհի վերջին ժամանակաց պաղտնիքներուն՝ Քրիստոսի աշակերտաց խորհրդազգածութիւնը (initiation), ապա՝

Քրիստոսի յաղթականօրէն կատարած Համբարձման խորհուրդը. յիշատակները՝ որոնք ներքնապէս իրարու հետ կապուած են և տեղաւորուած իրարու մօտ. այս իսկ պատճառաւ, Զիքենեաց լերան այս յիշատակները, չատ կանուխէն, քրիստոնէից բարեպաշտութեան առարկայ եղած են։ Լերան ա՛յն վայրերը, ուր տեղի ունեցած էին յիշատակի այդ վեհագոյն խորհուրդները, սրբազան վայրեր դարձան. հաւատացեալք՝ բնիկ և օտար, յատկացեալ օրերու մէջ, ջերմեռանդն սիրով կ'ելլէին լերան ստորոտէն մինչև գագաթը չինուած քարէ պատմական աստիճաններէն և կը յայտնէին կրօնական սիրոյ ջերմագին զգացումներ, ծնրադրելով Քրիստոսի աչակերտաց հաւաքման այրը և Փրկչին Համբարձման տեղը, և կը գտնէին իրենց հոգեկան մխիթարութիւնը։ Փրկչին այդ յիշատակներով արդէն սուրբ նկատուած էր լեռը, և Երուսաղեմացին կիւրեղ, Ս. Տեղեաց մօտիկ ապրող այդ ժողովրդանուէր եպիսկոպոսը, երկրից կը յիշէ իր կոչուելի Ընծայուրեան գրքին մէջ, և սուրբ կ'անուանէ զայն. «ձեր ընդ ամն յեառնէ Զիքենեաց որ յարևելից կուսէդ ի՝ վերացաւ յերկինս ի ձայն Հոր...», Զիքենեաց որ յարևելից կուսէդ ուստի վերացաւ առ Հայրն իւր «... վկայի Սուրբ Լեառն Զիքենեաց ուստի վերացաւ առ Հայրն իւր յերկինս»։ Հոգևոր կեանքի ջերմեռանդութեամբ լեցուն մարդիկ չուշացան գալ բնակելու այդ լերան վրայ. միայնակեացներ մըշտապէս հո՛ն բնակելով՝ աղօթքով և սաղմոսերգութեամբ կ'անցընէին իրենց կեանքը. այդպիսիներ՝ ա՛յնքան հրապուրիչ դարձուցին իրենց կենցաղը որ հետզ հետէ աշխարհներէն Ս. Տեղիքը եւ Զիքենեաց լեռը փութացին գալ երկսեռ ուխտաւորական խումբեր, որոնց մասին կը փութայ տեղեկութիւններ տալ վերոյիշեալ կիւրեղ Երուսաղեմացին կոստանդ Թագաւորին ուղղեալ իր Թղթին մէջ. «Գողգոթայեն մինչեւ Զիքենեաց լեռը հրաշափառապէս երեւցաւ Ս. Խաչին առիթով, նոյն ուխտաւորներուն ոտանաւոր մը զարդարուած մշտապէս ննջացին այդ լերան վրայ»։ Պալլատիոսի Հարանց պատմութիւնը և Ս. Բարսեղի Նամակները անոնց մասին տեղեկութիւններով ճոխ են. ուխտագիր Քրիստոնէից բարեպաշտութիւնը պիտի չթողուր որ Զիքենեաց լերան խորհրդաւոր յիշատակաց այդ տեղերը մնային իրենց անչքացեալ վիճակին մէջ. լերան ուխտաւորները իրենց հաւատքին ներքին զեղումները պիտի չուշացնէին յայտնաբերելու նոյն յիշատակաց վայրերուն մէջ. և այդ զեղումները

պիսի մարմնանալին հոյակապ եկեղեցիներով. հաւատքի չերմեռանդութիւնը լեռը պիտի զարդարէր զանազան ազգայ եկեղեցիներով և վանքերով: Առաջին հիմնարկութիւնն էր Աշակերտարանը, ճիշդ ա՛յն այրին վրայ՝ ուր աշակերտք հաւաքուած էին Քրիստոսի վերջին գիշերը, և իրազեկ կ՚ըլլային աշխարհի և մարդոց նկատմամբ Քրիստոսի հաղորդած խորհրդաւոր գաղտնիքներուն և միանգամայն կ՚ուսանէին աղօթելու ստիպողականութիւնը. երկրորդ եկեղեցին կը բարձրանար ճիշդ այն բլրին վրայ՝ ուր կէ մեր Փրկիչը համբարձաւ յերկինս:

2. Պատմութիւն ժողովներ Աշակերտարանի եւ Բլրի եկեղեցեաց մէջ.

Այս երկու եկեղեցեաց չինութենէն յառաջ, Աշակերտաց այրին մէջ և Համբարձման տեղւոյն վրայ կը կատարուէին պաշտամունք, նախապէս Երուսաղէմի առաջին եպիսկոպոս Ս. Յակոբոս Տեառնեղբօր և ապա՝ Ս. Կիւրեղ Երուսաղեմացւոյն յօրինած ընթերցուածոց կանոնին համաձայն: Մենք այս իսկ պատճառաւ, նոյն երկու եկեղեցեաց հիմնարկութեան և զանազան փոփոխութեանց պատմութիւնը գրելէ յառաջ, յարմար կը նկատենք նոյն նուիրական վայրերու մէջ տեղի ունեցած պաշտամունքի ժողովներու նկարագրութիւնը ընել: Այդ կանոնական սովորութիւնը, որ նախնական դարերէն կը հասնի մեզ, չնութեան բոյր մը ունի. այդ տեսակէտով է որ նոյն կանոններն ուսանդող յիշատակարանները խիստ թանկագին են և չահեկան: Թէև մեր ձեռագիր Ճաշոցները մեծագոյն մասով անոնց տեղեակ կ՚ընեն մեզ, բայց աւելի հնագոյններն, ինչպէս Օքսֆորտի և Փարիզի Ազգային Մատենադարանի Ե. և Թ. դարու ձեռագիր Ճաշոցներն, աւելի յստակ և մանրամասն կը նկարագրեն մեզ: Մեր Ս. Աթոռն ալ ունի երկաթագիր Ճաշոց մը, որ Մաշկևոր վանքին մէջ ընդօրինակուած է, 1192ին, վարդան գրչի մը ձեռքով, և 1318ին ալ ի գործածութեան է մեր Ս. Հրեշտակապետի վանքին մէջ, Երուսաղէմ: Ցայտնի է թէ ան ընդօրինակուած է հնամենի Ճաշոցէ մը: Պաշտամունքի ժողովներու մասին հաղորդած տեղեկութիւնները կը հասնին Դ. կամ Ե. դարէն: Նոյն երկաթագիր Ճաշոցին կը քաղենք պաշտամունքի այն ժողովներուն նկարագրու-

թիւնը որ կը կատարուէին Զատիկէն առաջ: Զանց կ՚ընենք իւրաքանչիւր ժողովի համար նոյն Ճաշոցի մէջ նշանակուած Ս. Գրոց Ընթերցուածոց ազբիւրը:

Ս. Ծնունդեան հինգերորդ օրը. (մաս մը կարուած է հոս ձեռագիրը) «. . . Սուրբ լեառն Զիթենեաց և այս կանոն կատարի».

Ծաղկազարդին. «ի նմին աւուր ի յիններորդ ժամու ելանեն ի լեառն Զիթենեաց հանդերձ ճառովք արմաւենեաց և անդ սաղմոսեն և աղաւթեն մինչև մերձ ի մեռանելոցն ժամն, և այնուհետև իջանեն ի Սուրբ Յարութիւն սաղմոսելով . . .»:

Աւագ երեքշաբթի օրն. «երեքշաբթի աւր ժողովին ի լերինն Զիթենեաց ի տասներորդ ժամու և այս կանոն կատարի . . .»:

Աւագ հինգշաբթի օրն. «. . . նոյն ժամայն ելանեն ի լեառն Զիթենեաց և կատարեն զերեկոյեան պաշտաւնն. և յարեն ի սոյն և զնկուսն և ըստ երից սաղմոսաց գոթաղայ, և աղօթք հանդերձ ծունր դնելով կատարեն . . .» «ի սմին ժամու գիշերոյն ելանեն ի բլուրն և այս կանոն կատարի . . .» «ի նմին ժամու գիշերոյն ժողովին յաշակերտարանն և ընթեռնուն աւետարանն . . .» «ի նմին ժամու գիշերոյն խսկոյն իջանեն ի Սրբոյ լեռնէն Զիթենեաց ի Գեթսեմանի . . .»:

Զատկի օրը. «. . . ի նմին կիւրակէի Սրբոյ Զատկին ելանեն յիններորդ ժամու ի սուրբ լեառն Զիթենեաց և անդ վայր մի սաղմոսեալ իջանեն հանդերձ սաղմոսիւք ի Սուրբ Յարութիւնն . . .»:

Զատկի հինգշաբթի օրը. «Հինգշաբթի աւր ի Ս. լեառն Զիթենեաց և այս կանոն կատարի . . .»:

Զատկի ութօրեին. «. . . ի նմին աւուր կիւրակէին ելանեն ի լեառն Զիթենեաց ի տասներորդ ժամու և անդ սաղմոսեալ վայր մի՝ իջանեն սաղմոսիւք ի Սուրբ Յարութիւն . . .»:

Հոգեգալուստ. «. . . ի նմին աւուր կիւրակէին ի տասներորդ ժամուն ժողովին ի Սուրբ լեառն Զիթենեաց ի բլրին և այս կանոն կատարի . . .»:

Զորրորդ դարուն վերջերը, լատին կոյս մը, Etheria անուն, ուխտաւորութեան համար կ՚այցելէ Երուսաղէմ և իր տեղեկութիւններն ու Ս. Տեղեաց պաշտամունքին հաւաքումներն Օրագրութեան ձեով կը հաղորդէ կալլիցիոյ մէջ իր վանքին հաւատաւոր քոյրերուն. Etheriaի Օրագրութեան ձեռագիրը *1887ին գտնուած, և նոյն տարին հրատարակուելով՝ թարգմանուած է*

այլեայլ լեզուներու. մինչ անոր անգլերէն թարգմանութենէն կը քաղենք Հայ Ճաշոցին վերագրեալ մասերուն համապատասխանները, յանձնարարելով ընթերցողին որ բաղդատութեան համար հետևի ոտներու օրուան կարգին, ինչպէս նշանակած ենք վերև. «Չորրորդ օրը, (Հայ Ճաշոցը՝ հինգերորդ) միևնոյն հանդիսաւորութեամբ պաշտամունք կը կատարուի Զիթենեաց լերան խիստ գեղեցիկ եկեղեցւոյն Աշակերտարանին մէջ (Eléona).— «Կիրակի օրը, երբ Մատուռէն կ'արձակուին, սարկաւագի աղդարարութեան համաձայն, ժամը եօթնին, հաւատացեալք կ'երթան Զիթենեաց լեռը Աշակերտարանի եկեղեցին, ուր եպիսկոպոսը եւ ժողովուրդը օրուան և տեղւոյն յարմար սաղմոսներ կ'երգեն՝ ընթերցուածքներով: Ժամը լրնլին ալ, երգելով կ'երթան դէպի վեր Բրի եկեղեցին (Imbomon) այն տեղը, ուրկէ Փրկիչը համբարձաւ յերկինս. բոլոր ժողովուրդը նստած կ'աղօթէ. երբ եպիսկոպոսը ներկայ է՝ միայն սարկաւագները ոտքի վրայ կը մնան, տեղւոյն և օրուան յարմար երգեր կ'արտասանեն, հանդերձ ընթերցուածովք»: Ժամը տասն և մէկին, յետ Աւետարանի ընթերցման, մանուկները արմաւենիի ոստեր բռնելով՝ կերգեն «Օրհնեալ որ գալոց է անուամբ Տեառն», և յետոյ եպիսկոպոսին առաջնորդութեամբ, ժողովուրդը ձիթենիի և արմաւենիի ճիւղեր բռնած՝ լեռնէն կ'իջնէ յամրաքայլ, լերան գագաթէն մինչև Ս. Յարութիւն սաղմոսելով»: «. . . կէս գիշերին Ս. Յարութենէն արձակուելէ յետոյ, Զիթենեաց լերան Աշակերտարանի եկեղեցին կ'երթան. եպիսկոպոսը կը մտնէ այն այրը ուր մեր Տէրը իր աշակերտներուն աղօթք սովրեցուց. Աւետարանէն հատուած մը կը կարդայ (Մատթ. ԻԴ. 3), յետոյ կ'օրհնէ երախաներն ու հաւատացեալները. ապա, կէս գիշերին, լուրաքանչիւր ոք կը մեկնի իր տունը»: «. . . ըստ ազդարարութեան, երեկոյին, ժողովուրդը կ'երթայ Աշակերտարանի եկեղեցին, այն այրը ուր Փրկիչը իր աշակերտներուն հետ աղօթած էր. մինչև ժամը հինգ, ըստ յարմարութեան տեղւոյն և օրուան, երգեր և սաղմոսներ կ'արտասանեն, և կը կարգան Աւետարան. ժամը վեցին, կ'երթան Բրի եկեղեցին, ուրկէ Փրկիչը համբարձաւ յերկինս. յարմար երգերէ յետոյ, եպիսկոպոսին հետ կը մեկնին ի Գեթսեմանի»: «Զատկի ութ օրերուն, եպիսկոպոսը, ամէն օր, կղերին, մկրտեալ տղոց և ծոմապահ արանց և կանանց հետ կ'երթայ Աշակերտա-

րանի եկեղեցին այն այրը ուր Յիսուս իր աշակերտաց աղօթք սորվեցուց. յետոյ կ'երթան Բրի եկեղեցին ուրկէ Յիսուս համբարձաւ յերկինս. երբեմն և ընթերցուածքներէ յետոյ կը մեկնին ի Ս. Յարութիւն, «Լուսաւորեալի ժամուն»: «. . . Սարկաւագին ազդարարութեան համաձայն, ամէն ոք ժամը վեցին կ'երթայ Զիթենեաց լեռը, բայց առաջին անգամ կը մտնեն Բրի եկեղեցին, հո'ն եպիսկոպոսը, քահանայք և ժողովուրդք կը նստին, տեղւոյն և օրուան յարմար երգեր և աղօթքներ կ'ըլլան, կը կարդացուի Համբարձման Աւետարանը: Յետոյ կ'օրհնեն երախաները և հաւատացեալները, և երգելով կ'իջնեն, ժամը իննին, Աշակերտարանի եկեղեցիին այրը, աղօթելէ յետոյ կը մեկնին, ժամը տասնին: «40–50 եպիսկոպոսներ ներկայ կ'ըլլային Ս. Խաչի նաւակատիքին յԵրուսաղէմ. բազմաթիւ վանականք և ուխտաւորք կը հաւաքուէին Գ. օրը, Աշակերտարանի եկեղեցին» (Տե'ս "The Pilgrimage of Etheria"): Etheriaի տեղեկութիւններն աւելի պարզ են և յստակ, և անտարակուսելիօրէն կը հաստատեն Հայ Ճաշոցին տեղեկութիւնները: Խաչի նաւակատիքի մասին ծանօթութիւն չի տար Հայ Ճաշոցը:

Յայտնի է թէ՝ Հայ Ճաշոցին պաշտամունքի ժողովոց մասին տուած նկարագրութիւններն օտարէն թարգմանուած են. բայց ինչ որ ալ ըլլան, անոնց գոյութիւնը կ'ապացուցանէ թէ նախապէս անհրաժեշտ պետքի մը վրայ լուրացուած են և յետոյ, իրը անցելոյն յիշատակներ, կրկնուած են եկեղեցական գրեանց մէջ: Ըստ իմ կարծեաց, Երուսաղէմի մէջ, եկեղեցական բաժանումէն յառաջ, Հայք ևս միաձայնաբար կը մասնակցէին Ս. Տեղեաց պաշտամունքի ժողովներուն, մինչև վերջերորդ դարու կէսը. յայտնի է թէ նոյն ժամանակի դաւանական խնդիրները պահ մը պետք է ընդհատած ըլլան Հայոց մասնակցութիւնը. ինչպէս նոյն դարուն յիշատակարան մը՝ Երուսաղէմի Յովհաննէս Պատրիարքի՝ առ Աբաս Կաթողիկոսն Աղուանից՝ գրած թուղթը լուվին կը հաստկըցնէ. բայց նկատի առնելով Զաքարիա Պատրիարքին Պարսից ժողովին մէջ (614–15) ըրած արտայայտութիւնը, ի նպաստ Հայոց (Ասողիկ), և Մատեոսոսի՝ Երուսաղէմէն, Հայոց Կամիտաս կաթողիկոսին գրած չատ փաղաքչական նամակն և «ողորմութեան խնդրանքը», հայ ուխտաւորներու ձեռքով (Սեբեոս), Երուսաղէմի Հայ Միաբանութեան դէմ կատարուած հալածան-

քը, կը կարծենք թէ տեւական չէն կրցած ըլլալ, և Հայք անխափան չարունակած՝ պաշտամունքի իրենց ժողովները, մինչև Է. դար. իսկ արաբական տիրապետութեան տակ, Հայք կարողացան պահպանել իրենց դարաւոր իրաւունքը, որուն կը վկայեն սուլթաններու ֆէրմաններն և արձանագրութիւնք: Արաբական քաղաքականութիւնը ոչինչ ուներ արդելիչ Հայոց կրօնական սովորութեանց կիրարկութեան համար: Իսկ Մաչակիրք, գիտենք պատմութենէն, Երուսաղէմի մէջ աւելի նպաստաւոր դիրք բռնեցին Հայոց հանդէպ և ընդարձակեցին վերջինք իրենց իրաւասութիւնները Ս. Տեղեաց պաշտամունքներու նկատմամբ: Զանց կ'ընենք հոս Մաչակիրաց հետ Հայոց բարեկամական յարաբերութեանց մանրամասն յիշատակութիւնները, միայն մէջ կը բերենք Հայոց Փոքր Վկայասէր Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսին այցելութիւնը Երուսաղէմ 1143 ին, և այդ առթիւ նոյն կաթողիկոսին Սիոնի եկեղեցւոյն մէջ խօսած ատենաբանութիւնը, որ մեծ տպաւորութիւն գործեց լատին բարձրաստիճան կղերին և իշխանաւորաց վրայ, և Ս. Տեղեաց հայկական իրաւունքներուն վրայ իր կնիքը դրաւ, ու այլևս անոնք բիւրեղացած նկատուեցան: Հայրապետին լուսաւոր բացատրութիւնները՝ Հայոց դաւանանքի մասին, Մաչակիրներն աւելի մօտեցուցին Հայ Միաբանութեան՝ որ անարգել չարունակեց իր գործը: Այս մասին, ժամանակակից պատմիչներ, որոնց մէջ, Տիւրոյի Գուլիէլմոս (Զամչ. Հայր. Գ. էջ 53–54) և մերս Կիրակոս պարծանօք կը յիշատակեն Գահլաւունիին ձեռք բերած արդիւնքը. իսկ Սամուէլ Անեցիին խանդավառութիւնը չափ չունի. գեղեցիկ ներբողներ կը հիւսէ Հայրապետին լմաստուն ատենաբանութեան նկատմամբ. և հարկ կ'ըլլայ աւելցնել թէ Փոքր Վկայասէրին 1143 ի այցելութիւնը նոր դարագլուխ մը բացաւ Երուսաղէմի Հայ Միաբանութեան համար, Մաչակիրներէն վերջ, Հայոց իրաւունքները Սալահէտտինի և յաջորդներուն օրով աւելի հաստատուեցան, ինչպէս կը վկայեն հրովարտակները՝ զոր ապա վաւերացուցին Օսմանեան Սուլթանները:

Ուրեմն, զանազան տիրապետութեանց տակ, Ս. Տեղեաց պաշտամունքի ժողովներն անփոփոխ պահուած են, բացի այն մի քանի ուխտավայրերու ժողովներէն, որ կամ բոլորովին զանց առնուած են քանդումներու հետևանքով, ինչպէս Աշակերտարանի

եկեղեցւոյնը՝ դադրած ԺԴ. դարուն, և կամ կրճատեալ վիճակով մինչև ցայժմ չարունակուած, ինչպէս Բրի եկեղեցւոյնը:

3. Ինչպէս շինուեցան նոյն եկեղեցիները.

Կոստանդիանոսի օրով, երբ քրիստոնէութիւնը պետական կրօնք դարձաւ, այլևս կայսրութեան ամէն կողմեր եկեղեցիներ կը հիմնուէին ազատօրէն. նորադարձ կայսրն ալ, իր մայրը Հեղինէն Ս. Երկիրը ղրկեց գտնելու Փրկչին գերեզմանը և Ս. Խաչը: Կոստանդիանոսի կենսագիրը՝ Եւսեբիոս կը պատմէ այս դէպքերը, որ տեղի ունեցան Երուսաղէմ, Հեղինէի ներկայութեան: Կայսեր առատաձեռնութեամբ և նոյն իսկ իր մօրը հիմնարկութեամբ շինուեցան մեր Փրկչին Ս. Գերեզմանի Տաճարը, Բեթղեհէմի և Համբարձման եկեղեցիները. այս մասին Եւսեբիոսի հետ համաձայն է նաև Սոկրատ պատմագիրը (Տե՛ս Հայ. Թրգմ. էջ 9): Զորրորդ դարու վերջերը, սակայն, Զիթենեաց լերան վրայ կը գտնուէին երկու Մայր եկեղեցիներ. ասոնցմէ ո՞րն էր Հեղինէին շինածը: Սոկրատ և Սոզոմին անորոշ կը թողուն այդ կէտը, բայց Եւսեբիոս չատ որոշ կերպով կը վկայէ կոստանդիանոսի կամ անոր մօրը չինել տուած եկեղեցիին տեղը. (Տե՛ս Վարք Կոստանդիանոսի Գիրք Զ. 18. Թրգմ. Անգղ.). իր խօսքերն են. «. . . Հեղինէն երկու եկեղեցի չինեց, մին Բրիստոսի Ծննդեան տեղը, և միւսն Համբարձման տեղւոյն և միւսն ի լեռան Զիթենեաց: Կայսեր մայրը նոյն լերան վրայ կը յաւերժացնէր Փրկչին Համբարձման յիշատակը, հիմնելով գեղեցիկ տաճար մը, ի պատիւ Փրկչին, որ նոյն տեղը բնակած էր. վասն զի հո՛ն կը գտնուէր այն այրը ուր Ան, ըստ ճշմարիտ պատմութեան, իր աշակերտները տեղեակ ըրաւ ծածկեալ խորհրդոց...»: Եւսեբիոսի այս խօսքերէն յայտնի է ուրեմն որ Հեղինէն Զիթենեաց լերան առաջին տաճարը չինեց այրին վրայ, որ էր, ըստ հայ ձեռագիրներու, Աշակերտարանը և ըստ Etheriaի, Eleona անուն եկեղեցին, ճարտարապետութեամբ Բիւզանդացի Եւստաղիոսի, որուն կը վկայէ Յերոնիմոս իր ժամանակագրութեան մէջ: Այս եկեղեցին կը գտնուէր լերան արևմտեան կողմը, դառիվայրին վրայ, Բեթանիոյ մօտ, գրեթէ այժմու Հայր Մերի եկեղեցւոյն տեղը: Պարզ յիշատակութիւններէ զատ, անոր նկարագրութեան մասին տեղեկութիւններ կը պակսին նախնի դարուց մէջ, միայն Etheria

կը գրէ թէ ան խիստ կառուցուածք մը ունէր: Շատերը, որոնց մէջ յայտնի հնախօս De Vogué և Cabrol, այս եկեղեցին կը շփոթեն բուն իսկ Համբարձման եկեղեցւոյն (imbomon) հետ: Պորտոյի անանուն ուխտաւոր ուղեգիրը, որ 333ին, Հեղինէի այցելութենէն եօթն տարի վերջը, երուսաղէմ այցելած էր, իր ուղեգրութեան մէջ այս եկեղեցւոյ մասին չատ վճիտ կերպով կը գրէ. «. . . դուք երբ Զիթհնեաց լեռը կ'ելլէք, ա՛յն տեղը՝ ուր մեր Տէրը աշակերտները հրահանգից, իր չարչարանքներէն յառաջ, հիմնարկուած կը տեսնէք մայր եկեղեցի մը, Կոստանդիանոսի հրամանաւ: Բիչ հեռի կը գտնուի բլրակ մը, ուր մեր Տէրը կը յաճախէր աղօթելու . . .»: Այս տողերը բացայայտօրէն կը յայտնեն թէ նոյն թուականին տակաւին չէր չինուած Համբարձման եկեղեցին, որ է, ըստ հայ ձեռագրաց, Բլրի եկեղեցին: Այս վերջինը, Պետրոս վրացի եպիսկոպոսին ասորի կենսագրին համաձայն, կառուցուած է Դ. դարու վերջերը, նշանաւոր ծագումով, հարուստ և բարեպաշտօն Հռոմայեցի Տիկին մը, Բոմնիա անուն. «ան կը սիրէր բնակիլ Ս. Տեղեաց մէջ, անոր հետաւոր են մեծ և փոքր աղնուազգի Մելանիա բարեպաշտ երկու տիկինները: Բոմնիա չինած է Զիթհնեաց լերան Համբարձման եկեղեցին և յարակից չէնքերը»: Նոյն կենսագրին մէկ ուրիշ հատուածէն կը հասկցուի նաև լերան երկու եկեղեցեաց գոյութիւնը. «. . . Ան (Պետրոս վրացին) այն տեղէն գնաց Ս.Նիդաւադուծի եկեղեցին, և յետոյ Գեթսեմանի: Եւ երբ կը փափաքէր մերձակայ սրբավայրերն ալ այցելել՝ վեր ելաւ դէպի Աշակերտարանը և անկէց ալ է Ս. Համբարձում եւ ապա ի Դազարիոն». (Pierre L'Iberien, Raabe, էջ 30): Չորրորդ դարէն չինուած և 1913ին Հռոմի եկեղեցիներէն միոյն մէջ գտնուած գեղեցիկ մոզայիք մը Զիթհնեաց լերան այս երկու եկեղեցիներն որոշ կերպով կը պատկերացնէ. (R. B. 1913, էջ 513–39): Երբ այդ երկու եկեղեցիներն արքայավայել ճոխութեամբ չինուեցան իրենց բոլոր մասերով, անոնց չուրջը բազմացան մենակեացներ և հաւատաւորներ, որ իրենց կարգին հետզհետէ հիմնեցին վանքեր եւ կուսանոցներ: Աշակերտարանի եւ Բլրի եկեղեցիներն, է. դարէն սկսեալ՝ չինացին մինչեոյն վիճակի մէջ՝ այլեայլ դարուց մեծամեծ քանդումներուն հետեւանքով: Ի սորեւ կը պատկերացնենք անոնց վիճակը Թուականի կարգաւ, և համառօտ նկարագրութեամբ:

Նոյն եկեղեցիները 614–1099

Է. դարու սկիզբը տեղի ունեցաւ պարսիկներուն արշաւանքը Ս. Երկրին վրայ. վրէժխնդրութեան մը սարսափը քանդեց Ս. Քաղաքը իր բոլոր հաստատութիւններով: Զիթհնեաց լերան երկու եկեղեցիներն ալ, քաղաքէն դուրս ըլլալով ալ աւելի քանդումի ենթարկուեցան: Պարսիկները Զիթհնեաց լերան վրայ հաւաքած էին բոլոր փերինները, որոնց մէջ կը գտնուէր Զաքարիա պատրիարքը, որ լերան բարձունքէն հսկականօք և սարսափով կը դիտէր ամբողջ քաղաքին հրկիզումը: Սարսռի վանքէն անանուն վանական մը վերջերս գտնուած արաբերէն իր մէկ գրուածքովը, մանրամասն գրի առած է արշաւող բանակին սպանուածներուն մէկ ցուցակը, նշանակելով նաև ա՛ն տեղիքը, ուր գտնուած են սպանեալներուն դիակները: Նոյն ցուցակին մէջ կը յիշուին նաև Զիթհնեաց լերան վրայ սպաննուածներն ալ. անտարակոյս երկու եկեղեցիներն ալ ազատ չմնացին այդ անօրինակ քանդումներէն, որ յետոյ նորոգուեցան, նոր Զօրաբաբէլ՝ վանական Մատեստոսի ձեռքով եւ օժանդակութեամբ արեւելքի քրիստոնէից: Այս պարագան կը յիշատակէ Անաստաս վանական՝ Անկիւրիոյ Եւստաքիոսի գրած իր նամակին մէջ (Migne, P. G. LXXXIX): Այս վերանորոգութենէ յետոյ, նոյն եկեղեցիները կը նկարագրուին հետեւեալ կերպով.

Աշակերտարանը

Սոփրոնիոս վանականը, է. դարուն պատրիարք Երուսաղէմի, իր անակրէոնեան (anacréontique) տաղերուն մէջ, խորհրդաւոր ուղեւորութեամբ մը կը գրէ «Բլրի եկեղեցիեն եկայ Աշակերտարանը և կը գտնուէի այն տանիքին տակ, ուր Յիսուս նախակրթեց իր աշակերտները աստուածային լրաց, ցոյց տալով անոնց ծածկուած գաղտնիքները»: Կը թուի թէ ան Աշակերտարան մտած էր կողմնակի դռնէ մը, որ բացուած էր Բլրի եկեղեցւոյն կողմը, հիւսիսային պատին վրայ. յետոյ կը յառաջանայ դէպի արեւմուտք, դիտելու համար Երուսաղէմը, եկեղեցւոյն գլխաւոր գաւիթէն. «յետոյ մեծ դռնէ մը յառաջանալով դէպի աստիճանները, կը տեսնէի գեղեցկութիւնները Ս. Քաղաքին՝ որ կը պարզուին արևե-

մտեան կողմը». դիտելով քաղաքին համայնապատկերը կը դուչէ. «Ո՛ քաղաք Աստուծոյ, ո՛րքան քաղցր է դիտել քու փառքդ, Ջիթենեաց լեռնէն». (Migne, P. G. *87, 3812*): Այս խորհրդալից տողերը պայծառօրէն կը հաստատեն թէ՛ Ս. Քաղաքի գեղեցկութիւններն և թէ՛ Աշակերտարանի եկեղեցւոյն ներքին կառուցուածքը:

Բլուրը

Այս եկեղեցւոյն նկատմամբ մեր պատմիչներէն Մովսէս Կաղանկատուացին կը գրէ իր հետևեալ խոստ չահեկան տեղեկութիւններն. «. . . իսկ ի տեղւոջ Համբարձմանն՝ ըստ յարութեան եկեղեցւոյն ձևոյ գեղեցկահիւս՝ գմբէթաձև չինուած է, հարիւր կանգուն յերկայնն և հարիւր ի լայնն, անաի երևի Յորդանան գետ և Հովր լեառն և բազում դաւառք». (Պտմ. Աղուանց. Աշխարհի., էջ *226*): Աւելի վճիտ կերպով կը նկարագրէ Եպիփան վանականը. «Համբարձման եկեղեցին ունէր չրջանակաձև սիւնաչարք մը, մէջտեղը սեղան մը, սիւներէն դուրս կը գտնուէր մարմարիոնէ սալարկուած բոլորշի սրահ մը, սիւնաչարքին արևելեան կողմը, քիչ մը հեռի, կար կոզակը՝ ուր մասնաւոր սեղանի մը վրայ, Համբարձման տօնին կը պատարագէր պատրիարքը». (Migne, P. G. *120*): Ըստ Յերոնիմոսի, Բլրի եկեղեցին բոլորաշէն էր, (rotonde), չուրջանակի ծածկուած սրահներով: *670* ին, Arculfe եպիսկոպոս՝ իր ի Պաղեստին ուղևորութեան ժամանակ, գծած է եկեղեցւոյն յատակագիծը և հաղորդած մանրամասն տեղեկութիւններ, որոնց համաձայն, կը տեսնուի թէ եկեղեցւոյն ամենէն արտաքին սրահը կը գտնուէր նոյն բոլորաշէն եկեղեցւոյն պատին յեցած քառակուսի սիւներուն (pilastres) մէջ: Ուրիշ ուղևոր մը, Willibalde կը գրէ թէ եկեղեցւոյն հիւսիսային և հարաւային կողմերը կը գտնուէին երկու սիւներ՝ ի յիշատակ սպիտակազգեստ այն երկու մարգոց, որ աչակերտաց կ'ըսէին «Առք Գալիլեացիք» և այլն (Գործ Առիք. Ա. *10–11*): Դարձեալ վերոգրեալներէն Arculfe եպիսկոպոս և Եպիփան այս եկեղեցւոյն ներքին կառուցուածքին վրայ կը հաղորդեն կարևոր տեղեկութիւններ: Շէնքը տանիք ու կամար չէ ունեցած, կատարելապէս բացօթեայ էր, ամենուն նայուածքին տեսանելի ընելու համար երկինքէ ճանա-

պարհը, ճիշդ կեդրոնը կը գտնուէր մարդկային մեծութեամբ պըղնձէ փոքր աշտարակ մը, հն կը պահուէր ա՛յն նուիրական փոշին, զոր կը բաժնէին ուխտաւորաց և որուն վրայ Քրիստոսէ ոտքը կոխած էր: Այս մասունքները բաչխողը՝ արևմտեան կողմէն բացուած փոքր դռնէ մը այս չէնքը մտնելով կը բաժնէր զանոնք ա՛յն հաւատացեալոց, որ իրենց ձեռքը կ'երկարէին փոքր աչտարակին վերևի բացուածքէն: Նոյն աչտարակին վերև, ճարտարկայ դրութեամբ կախուած էր մշտավառ խոշոր լապտեր մը: Սեղանն ալ բացօթեայ էր և ունէր միայն փոքրիկ ծածկ մը և կը գտնուէր արևելք: Բլրի եկեղեցւոյն վերին մասը, արևմտեան կողմը, ճիշդ քաղաքին դէմ, ունէր իրարու չատ մօտիկ ուեան կողմը, ճիշդ քաղաքին դէմ, ունէր իրարու չատ մօտիկ ուեթը պատուհան: Այս պատուհաններէն իւրաքանչիւրին յարմարցուած էր մէկ մէկ լապտեր, զորս կը վառէին ամէն գիչեր: Այս ուեթը լապտերներէն արձակուած լոյսը կը տարածուէր լերան ո՛չ միայն արևմտեան զառիվայրին և Յովսափատի հովտէն բարձրացող երկար աստիճաններուն, այլ նաև Երուսաղէմի արևելեան թաղին վրայ: Համբարձման եկեղեցին, ըստ առաջնոյն, կառուցուած էր Ջիթենեաց լերան կատարը, կեդրոնէն մինչև լեռն երկարած մեծ սանդուղքին ծայրը:

Բիւզանդական կայսերք չկրցին պաչտպանել Ս. Երկիրը. *638* ին Օմար ամիրապետը խաղաղ կերպով գրաւեց Երուսաղէմը, հակառակ Սոփրոնիոս պատրիարքի չանքերուն: Օմարի օրով, Ս. Երկրի եկեղեցիներն ու վանքերը անվնաս մնացին: Օմարէն յետոյ, *972* ին Ֆաթիմեանք, *1076* ին Սելճուքեան Թուրքեր եւ *1095* ին Եգիպտական սուլթաններ յաջորդաբար իշխեցին Երուսաղէմի և չրջակայից. բայց դիտել արժան է թէ Օմարի տիրապետութենէն վերջ, քրիստոնէից վիճակը ծանրացաւ, Ս. Տեղւոյ պետութենէն վերջ, քրիստոնէից վիճակը ծանրացաւ, Ս. Տեղւոյ պաչտամունքը դժուարացաւ, ջնաւոչեցան ու փակուեցան չատ վանքեր ու եկեղեցիներ, այնպէս որ կեղեքուողներու տրտունջներն ու բողոքները հասան մինչև արևմուտք, և տեղի ունեցան Խաչակրաց արչաւանքը:

Նոյն եկեղեցիներն ժԲ. դարուն

Խաչակիրք երբ Երուսաղէմ մտան, նոյն երկու եկեղեցիներն արդէն քաղաքէն դուրս գտնուած եկեղեցիներուն վիճակն ստացած էին, երկուքն ալ գրեթէ քանդուած:

Ս.ՀԱԿԵՐՏԱՐԱՆԸ

Աշակերտարանի եկեղեցին նորոգուեցաւ Խաչակրաց կողմէն, 1102–1106, և փոքր ագօթարանի ձև տրուեցաւ և կոչուեցաւ Հայր մերի եկեղեցի: 1152 ին, Տանիմարքացի երկու եղբայրներ, մին ծովապետ և միւսն եպիսկոպոս, այցելեցին այս եկեղեցւոյն, որ փոքր և խղճալի չէնք մ'էր: Երկու եղբայրներն իրենց ծախքով վերանորոգեցին զայն և ըստ կտակի թագուհեցան հոն: Այս դարուն Աշակերտարանի նախկին աւանդութեան վրայ աւելցան նաև Առաքելոց Հանգստեանին և Հայր մերի նոր աւանդութիւնները:

ԲԼՈՒԶԸ

Խաչակիրք Բլրի Եկեղեցին 1099 ին վերանորոգեցին և յատկացուցին պաշտամունքի ժողովներու և վերածեցին իր նախնի պայծառութեան, ինչպէս միւս սրբավայրներն: Անոր յիշատակը երկար ատեն առաւելակշիռ մնաց Զլթենեաց լերան վրայ: Ժ.Ե. դարու ուխտաւոր ուղեգիրները հետևալ կերպով կը նկարագրեն նոյն եկեղեցին. քսան աստիճաններով սանդուղ մը կը դառնուէր անոր առջևը, որուն ծայրի սրահը կը ծառայէր իբր գաւիթ, եկեղեցին, առաջուան պէս, արտաքին բոլորչի պատով մը պահպանուած էր. ներսի կողմը կար մարմարիոնէ սալարկուած սրահ մը սիւներէ բռնուած կամարով մը: Գեղեցիկ նկարներով և քանդակներով զարդարուած էին որմերը: Աւանդական յատակագծին համաձայն, չէնքին կեդրոնը ո՛չ տանիք կար և ո՛չ ալ գմբէթ:

Իսկ գալով այն փոքր չէնքին, որ կը գտնուէր բացօթեայ մասին ճիշդ մէջտեղը, ոչ թէ Բլուզանդացւոց ժամանակի պղնձէ չինուած այն պարզ շրջափակն էր, որ կը պարունակէր ուխտաւորաց բաշխուելիք նուիրական փոշին, այլ կապուտագոյն երակով ճերմակ մարմարէ ծածկուած կլոր փոքր աշտարակ մը, որուն վրայ կար փոքրիկ գմբէթ մը, գագաթը բաց: Եկեղեցւոյն մէջ կար նաև ժայռի մը ցցուածքը, որմէ ուխտաւորք մասեր կ'առնէին և կը համբուրէին, մտածելով որ անոնք կը կրեն Փրկչին ոտքերուն հետքը: Ինչպէս երբեմն փոշին բովանդակող փոքր աշտարակը, նոյնպէս այս ժայռին ցցուածքը կը գտնուէր գմբէթին ճիշդ բացուածքին տակ. և անոր վրայ կար սեղան մը

մարմարով ծածկուած, բարեպաշտ ուխտաւորներու նախանձաւորութեան եռանդէն յառաջ գալիք ընծաներէն զերծ պահելու զայն:

ՆՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ 1137–1500

Խաչակիրք 88 տարիներէ աւելի չկրցան մնալ Ս. Երկրին մէջ, կառավարողներուն անընդունակութեան, մանաւանդ անոնցմէ ոմանց ընծաբեր անհեռատեսութեան պատճառաւ: Սալահէտտին ստիպուեցաւ կրօնական պատերազմ հրատարակել և չահել Հադդինի կոիւը, որով ան կարողացաւ փչրել Խաչակրաց ոյժը ու 1187 ին յաղթականօրէն մտնել Երուսաղէմ. սոյն յաղթանակը եղաւ Ս. Երկրի Լատին թագաւորութեան գերեզմանը: Այս ժամանակ այն երկու եկեղեցիներն ալ, ուրիշ սրբավայրերու նման կործանեցան:

Ս.ՀԱԿԵՐՏԱՐԱՆԸ

Այս եկեղեցին այլևս փոխած էր իր անունը և յիշատակը, յետագայ ուխտաւոր ուղեգիրներէն Jean Poloner *(1422)* և Fabri *(1480–83)* կը նկարագրեն անոր աւերեալ վիճակը և կ'ողբան անոր երբեմնի փառքը և գեղեցկութիւնը:

ԲԼՈՒԶԸ

Բլրի եկեղեցին թէև ծանր կերպով քանդուած, բայց անոր մեծ մասը և սիւները դեռ կանգուն կը մնային. ներքին փոքր չէնքը անմիջապէս նորոգուեցաւ. իսկ ամբողջ չէնքը կարելի եղաւ նորոգել 1229 ին: Այս կործանումներուն հետևանքով ներքին զարդերը ոչնչացած էին: Ժ.Դ. դարուն ան դեռ կը պահէր իր ամբողջութիւնը, բայց Ժ.Ե.ին վանտալութիւնը լրացուց իր ամբողջութիւնը, այնպէս որ սալարկուած մարմարներն ու սիւները պատերէն խլելով ուրիշ տեղեր տարուեցան ու չէնքը՝ իր արևելեան մասէն խոշոր պատով մը բաժնուած՝ կը ծառայէր գիւղացւոց բնակութեան և անասնոց պաշտպանութեան:

ՆՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ 1500Է ՆԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Աշակերտարանի եկեղեցին Ժ.Զ. դարէն յետոյ այլևս բոլորովին քանդուած էր, ինչպէս կը նկարագրեն ուղեգիրները: Ականա-

տես մը կը դրէ թէ «նոյն եկեղեցւոյն գետնին պեղումներէն եւ քանի եւս եղած էին ջրհոր մը, կրօնական շէնքի մը պատերը, որ անտարակոյս Հեղինէի չինած եկեղեցւոյն հիմերն էին։ Կօրնթական խոյակներու, պսակներու, հռոմէական ցցուակներով (moulures) զարդարուած սիւնաբուներուն կտորները տարակոյս չեն թողուր աւերեալ յիշատակարանին ծագման մասին։ Մարմարի ահագին բեկորները մեծ դժուարութեամբ սայլերով կը կրէին Ցովսափատի ձորը ու հոն կը ծախէին այլոց, որ կոտրտելով անոնցմէ կը շինէին գերեզմանաքարեր։ 1873–75ին, լատինք գնեցին այդ գետինը Սրաբներէն ու հոն հաստատուեցան Կարմելեան կրօնաւորուհիք։

Գալով Բլրի եկեղեցւոյն, անոր գետնին մէկ մասին վրայ չատ կանուխէն չինուած էր մզկիթ մը և հաստատուած էին Սրաբներ։ Ժ.Զ. դարէն յետոյ, անոր պատերուն և սիւներուն միայն հիմերը կ'երևնային։ Իսկ Ոտնատեղւոյն գմբէթաւոր մատուռը ազատ կը մնար քանդումներէն։

Դարուս գիտնական հնախօսները սոյն երկու եկեղեցիներուն աւերակաց մնացորդներուն համաձայն, չինած են անոնց յատակագծերն և պատկերացուցած գեղարուեստական զարդերն ու մոզայիքները։ Մարդ տեսնելով կ'ապշի անոնց ճարտար կառուցուածքին և յօրինուածքին վրայ։ Քրիստոնեան, ի տես անոնց, կ'ըմբռնէ նոյն եկեղեցիները չինողաց կրօնական զգացումները, գաղափարները ու այն ներշնչումները՝ որ անոնք ընդունելիօրէն գետեղուած էին անոնց հոգւոյն խորը, և գեղարուեստն էր՝ որ պիտի կարենար թոյլ տալու մեզ անոնց նկարներուն, քանդակներուն մէջէն ակնարկ մը ձգելու նոյն բարեպաշտ քրիստոնէից հոգեկան աշխարհին։ Քրիստոնեայք երկրի վրայ անմահացած էին եւ եւ եղեցող արուեստին մէջ։

4. Զիթենեաց լեռան վրայ կայի՞ն հայկական վանքեր.

Հայ մատենագրութիւնը Ս. Տեղեաց թէ՛ հայկական վանքերու թէ՛ օտար վանքերու մէջ ապրող հայ միաբանութեանց նկատմամբ դժբախտաբար բառ մը անգամ չէ արձանագրած, հակառակ որ նախնական դարերէ սկսեալ, մեր բնիկ աշխարհէն ուխտաւորական կարաւաններ չարունակ այցելած են Երուսա-

ղէմ, յատկ եւ երկրպագութիւն Քրիստոսի Տնօրինական Ս. Տեղեաց։ Հայոց Անաստաս վրդ.ը միայն, ինչպէս յիշած ենք այլուր, գրի առած է Ցուցակ մը Երուսաղէմի Հայ Վանօրէից մասին։ Ան թէեւ զերծ չէ քննադատութենէ և ձեռնմխութիւներէ, ինչ որ ալ ըլլայ սակայն, այդ Ցուցակը հայեցի կարևոր յիշատակարան մըն է, որուն համաձայն, Զիթենեաց լերան վրայ, բաւական թուով վանքեր կը յիշուին. բայց ցաւալի է ըսել որ նոյն յիշուած վանքերը, գոնէ առ այժմ, չէ կարելի վերագիրներով ճշդել, միայն անոնցմէ երեքը, ըստ կարելւոյն, պիտի կրնանք նկարագրել հնախօսութեան և պատմութեան հայիւ թայթած տուիքներու համաձայն։ Այդ երեք վանքերն են. 1. Ս. Ցովհաննէս Կարապետի վանքը. 2. Մժավանքը. 3. կանանց յատուկ Ս. Աւետման վանքը։

Ս. Ցովհաննէս Կարապետի վանքը.

Երբ Դ. դարուն Աշակերտարանի եւ Բլրի երկու մայր եկեղեցիները սկսան չինուիլ, բարերար իշխաններու և մեծահասատիկիններու օժանդակութեամբ, եւ Զիթենեաց լերան միայնակեացներու չերմեռանդութեամբը, նոյն եկեղեցեաց չուրջը չինուեցան մասնաւոր վանքեր և եկեղեցիներ. այդ մասին անհերքելի ապացոյցներ են հնախօսական ա՛յն թանկարժէք բեկորները՝ որ երևան եկած են վերջին տարիներու պեղումներէն։ Հայք Բլրի եկեղեցւոյն արևելեան կողմը, ունեցած են վանք մը Ս. Ցովհաննու Կարապետի անունով։ Անաստաս վրդ.ի Ցուցակին մէջ, հետևեալ կերպով կը յիշուի ան. «Պաւնայ վանքն, որ սուրբ Կարապետին է, որ յարևելից կողմանէ Զիթենեաց լերինն կայ, նոյնպէս արմուկի ծախիւ շինեալ, յանուն սուրբ Կարապետի որ ի Վաղարշապատ քաղաքի, զոր Աղուանք ունին մինչեւ ցայժմ»։ Մովսէս Կաղանկատուացին ալ կը յիշէ այսպէս. «Պանդայ վանքն, որ յարեւելից կողմանէ Զիթենեաց լերինն կայ Պանուն ումն ճգնաւոր յԱղուանից եղեալ նախաշինող, եւ այժմ պետրոս Աղուան քահանայ ունի» (Պատմութիւն Աղուանից Աշխարհի, էջ 227)։

Նկատի առնելով այս երկու յիշատակարանները, համոզում կը գոյանանք թէ Զիթենեաց լերան այս վանքին Աղուանք նահապէտ տիրացած էին, յանուն իրենց Տ. Պանդ կաթողիկոսին՝

որ մեր Ս. Գրիգոր Լուսաւորչի Թոռան Գրիգորիսէ սկսեալ, Աղուանից կաթողիկոսներուն վեցերորդն է կաղանկատուացւոյն վերի յիշատակարանին համաձայն (անդ, էջ 274)։ Ցետոյ Աղուան ճգնաւոր մը, Պաւնոն անուամբ, կը վերաչինէ նոյն վանքը. բայց ամէն պարագայի տակ, հայ արքունիքի ծախքով կը շինուի, յանուն Ս. կաթուղիկէին Վաղարշապատու, ինչպէս կը յարէ Անաստաս վրդ.։ Սակայն Դ. դարու յիշատակարան մը, Զիթենեաց լերան հայկական այս վանքին ծագումը տարբեր կերպով կ'աւանդէ մեզ։ Պալլատիոս կը գրէ թէ (Hist. Laus, Ch. XLIV), «Յուլիանոս Ուրացողէն յետոյ, Իննովկենտիոս քահանան սուրբ Լերան վրայ չինեց (385) մատուռ մը, ուր կը պահէր Սեբաստիոյ հեթանոսներուն վանատալութենէն զերծ մնացած սուրբ Յովհաննու կարապետի մասունքները»։ Պալլատիոս մէկ տարի ապրած էր Զիթենեաց լերան վրայ (412–13), հետևաբար իր ականատեսի վկայութիւնը արժէքաւոր կը նկատուի։ Այս մատրան նաւակատիքը կը կատարուէր Սեպտ. 29ին, վրացերէն Սաղիմական հնագոյն ծիսարանի համաձայն. (Տե՛ս R. B. 1924. էջ 611–623)։ Արդէն ուր կար սուրբի մը մասունքը կամ աւազանը, հոն եկեղեցի կամ վանք չինել ի հնումն կանոնական սովորութիւն մըն էր։ Կ'երևի պարագայից բերումով, արդէն հիմնարկուած վանքի մը միաստնաբար կը տիրանան Հայք և Աղուանք, և յանուն վաղարշապատի Ս. կաթուղիկէին արքունական ճոխութեամբ կը զարդարեն նոյն վանքը։ Պարսկական եւ արաբական տիրապետութեան շրջանին, այս վանքը անտարակոյս ենթարկուած է Զիթենեաց լերան միւս վանքերու ճակատագրին։ Սակայն նոյն վանքը Թ. դարու սկիզբները, վերանորոգուած կը գտնենք։ Նոյն միջոցին Մեծն Կարոլոսի և Պաղտատի խալիֆային միջեւ համաձայնութիւն մը կնքուած էր, որով՝ Մեծն Կարոլոս՝ Ս. Քաղաքին թեմարկութիւնը ստանձնելով՝ առատաձեռն գումարներով վերաշինել կու տար վանքերն ու եկեղեցիները ու կը հոգար վանականները. գրկած էր մասնաւոր պաշտօնեայ մը յերուսաղէմ, և անոր միջոցաւ նպաստի դրամ կը բաշխէր վանականց. նոյն պաշտօնէին գրի առած Ս. Տեղեաց ու կրօնաւորաց վիճակագրական ցուցակը ամփոփուած է յիշատակարանի մը մէջ, որ կը կոչուի *Commemeratorium de Casis Dei*։ Արդ այս յիշատակարանին համաձայն, կը հասկցուի որ Բղրի եկեղեցւոյն վանականց չարքին մէջ կը յիշուին նաև Հայեր։ Նոյն ցուցակին մէջ մասնաւորապէս կը յիշատակուի Հայոց Ս. Յովհաննու կարապետի վանքը, ուր կը բնակին վեց հայ կրօնաւորներ։ Անոնք անցելոյն բարգաւաճ վիճակի մը բեկորներն էին, որ անտարակոյս արևելքէն եկող յարձակողներուն խժդժութենէն ազատած՝ կը փափաքէին դարձեալ պայծառացնել Ս. կարապետի վանքը, նորոգելով աւերեալ մասերը։ Օտար յիշատակարանի մը այս անհերքելի վկայութիւնը՝ Հայոց Ս. Յովհ. կարապետի վանքին գոյութեան մեծ ապացոյց մըն է։ Հաւանական կ'երևի որ՝ նոյն վանքը մինչև ԺԲ. դար կանգուն մնացած է, և ի վերջոյ Սալահէտտինի յարձակումներէն դարձեալ քանդուած ու յիշատակներն ալ երկար դարեր հողի տակ ծածկուած են։ ԺԹ. դարու կիսուն էր որ Զիթենեաց լերան Հայոց Ս. Յովհաննու կարապետի վանքին նախկին պայծառութեան չքնաղ յիշատակարանները հողերու տակէն դուրս կու գային հիացումի ենթարկելով բոլոր տեսնողները. հայկական չորս արձանագրութիւններով գեղակերտ խճանկարներ (mosaïque) երբեմն կը զարդարէին Ս. կարապետի վանքին յատակը։ Այս յիշատակարանները կ'ապացուցանեն թէ՝ որպիսի պայծառութեան մը հասած էր նոյն վանքը։ 1868էն սկսեալ, զանազան գիրքերու և լրագրաց մէջ քանիցս հրատարակուած և լուսանկարուած են նոյն արձանագրութիւնները և խճանկարները։ Անցեալ տարի ալ, Գեր. Տ. Մեսրոպ Ս. Եպս. Նշանեան՝ երուսաղէմայ Դամասկոսի դրան մօտի հայկական խճանկարի մէկ մանրանկարը հրատարակելուն առթիւ, Զիթենեաց լերան հայ արձանագրութիւններն ալ ամփոփած էր, (Տե՛ս Տարեցոյց Թիոդիկի, 1927, էջ 399–406)։ Ս. Յովհ. կարապետի վանքին արձանագրութիւնները քաղելով նոյնէն կը դնենք հոս.

1.— «Բարեխաւս ունելով
առ Աստուած զսուրբ և
սպի եւ զհրաւէրն
հարաւ ես Վաղաւ ա
րարի վասն թողու
թեան վաղաց զյի
շատակարանս զայս»։

2.— «Ա.յս դիր հրաւիրեալոյ Շուշանիկա
վասրն Սրդաւանայ Հոոի ժը»։

3.— «Վասն աղաւթից եւ ի՛ր
կուրեսան Թեւայ Ս.
բասու եւ Մաւրկան»։
4.— «Ս.յս յիշատակս
ոսն Տն Յակոբայ
որ եղեւ ի ձեռն խնդրելոյ»։

Ս.յս արձանագրութիւններէն զատ, նոյն տեղը գտնուած են 16 գամգարաններ որոնցմէ երեքը անաղարտ մնացած են եւ իւրաքանչիւրին վրայ առանձին առանձին կը կարդացուին Զոջիկ, Շուշան, Մարիմ անունները։

Կը փափաքինք վերեւ յիշուած մոզայիքներու ծագման մասին պատմական տեղեկութիւն մը տալով՝ նոյն արձանագրութեանց մէջ յիշուած քանի մը անձերու ինքնութիւնը ճշդել, որքան որ կարելի է։ Ս.յս հնութիւններով շատ զբաղած է յայտնի հնախօս Glermont-Ganneau (Archaeological Researches in Palestine, *1873–74. էջ 329–337)*, *ուր յիշեալը շատ մը ենթադրութիւններէ յետոյ, կը կարծէ թէ թիւ 2 արձանագրութիւնը և մոզայիքը միաժամանակ չեն չինուած, քանի որ նոյն մոզայիքին արձանագրութիւնը առանձին մաս մը կը կազմէ եւ չի յարմարիր մոզայիքի ամբողջութեան չինուածքին և գոյներուն. թիւ 1 և 2 մոզայիքներուն չինութիւնը ժամանակակից կը համարի, դատելով երկուքին ալ կերտուածքին և նկարագրութեան նոյնութիւնէն, իսկ թիւ 3 և 4 մոզայիքները կը նկատէ յետին տարիներու չինուածք։ Պէտք է գիտնալ թէ Քրիստոնէութենէ շատ յառաջ, մոզայիքի գործածութիւնը տեսակ մը զարդարանքի ձև մըն էր, սակայն անոր գիտութիւնը տակաւին նոր է։ Զարդարանքի այդ եղանակը, ինչպէս կը տեսնուի, մարդիկ աւելի կը նախընտրէին քան օրմնանկարներն և մագաղաթներն որ շատ չէին կրնար տեւել, մինչ մոզայիքը գարերով հողին տակ կրնար մնալ, առանց աւերուելու։ Սև, կարմիր և սպիտակ գոյներով մոզայիքներ երբեմն կը զարդարէին Հռոմայեցւոց պարտէզները. իսկ բազմագունեանները կ'երևնային Պոմպէի և Սփրիկէի կղմերը։ Քրիստոնէական մոզայիքներու վրայ գաղափար մը կազմելու համար պէտք է այցելել Ռավեննա, Հռոմ և Թեսաղոնիկէ։ Քրիստոնեայք փոխ առնելով հեթանոսական մոզայիքները, անոնց տուին խորհրդաւոր մեկնութիւն մը։ Եկեղեցեաց որմերուն, յատակներուն եւ կոզակներուն մէջ չինուած մոզայիքները քրիստոնէից յատուկ թելադրիչ դասեր կը պարունակէին իրենց նկարէն պատկերներով. անոնք կը նկարէին նաև Փրկչին և Առաքելոց պատկերները։ Մոզայիքի արուեստաւորները՝ Փրկչին վտանքը պանծացնելու տենչով լեցուած՝ կը տեսնուի որ ընդհանրապէս կը խուսափէին նկարել Անոր խոնարհ ծագումը և չարչարանքը, Քրիստոսի մսուրը, ծնունդը, խաչելութիւնը՝ որ վերածնութեան դարուն նկարիչներուն սիրելի նիւթերն էին. առաջին եօթն դարերու մոզայիք չինողները չէին մօտենար անոնց, միւսոյն նպատակաւ. նահատակաց յաղթանակը ի մտի ունէին, քան թէ անոնց մարտիրոսութիւնը. (Ներածութիւն,* Les Mosaïques Chrétiennes du IVme au Xme siécle)։

Զիթենեաց լերան Հայոց Ս. Ցովհ. կարապետի վանքի այդ մոզայիքները յայտնի է թէ հեռաւոր թուականէ մը կը հասնին. այդ մոզայիքի վարպետներն ալ միեւնոյն ոգւով չարժած են՝ հեթանոսականը խառնելով քրիստոնէականին հետ, ինչպէս ցոյց կու տան անոնց լուսանկարուած մանրանկարները։

Գալով վերոյիշեալ չորս արձանագրութեանց մէջ յիշուած անձերուն ինքնութեան, պէտք է ըսել թէ չատ դժուար է ճշդել այդ պարագան։ Թիւ 3 եւ 4 արձանագրութեանց մէջ յիշուած անձերուն վրայ տեղեկութիւն մը չունինք, բայց թիւ 1 եւ 2 արձանագրութեանց մէջ յիշուածներուն մասին կարելի է հաւանական կարծիք մը յայտնել։ Glermont-Gannau *իր վերոյիշեալ գործին մէջ (էջ 332) կ'ընդունի թէ թիւ 2 արձանագրութեան Արտաւանը պարսկահայ մըն է, Ցուստինիանոսի օրով, կուսակալ և զօրապետ, համաձայն* De Muralt*ի* Chronographie Byzantine*ի տեղեկութեան (Հմր. 1. էջ 190 և 203)։ Մենք թիւ 1ի վաղանցիկ ուշադրական սխալ նկատելով՝ հաւանական կը համարինք որ ըլլայ Վահան. և եթէ ընդունինք այդպէս, այն ատեն Պաղեսթինցի Պրոկոպիոս պատմիչին դիմելով՝ կը տեղեկանանք թէ՝ Արտաւան և Վահան Արշակունի երկու եղբայրներ էին, և Պարսկաստանէն փախչելով ապաստանած էին Բիւզանդիոն։ Այս երկու եղբայրները մեծ ծառայութիւն մատուցած էին Բիւզանդական պետութեան։ Արտաւան եղաւ մեծ դուքս և Վահան մեռաւ պատերազմին մէջ։ Ցուստինիանոսի կայսրութեան յառաջդիմութեան և զարգացման սատարներ եղած են այս հայազգի երկու*

եղբայրները. մանրամասնութիւնները տեսնել (Զամչ. Բ. էջ 241, 250–55, 517–520)։ Այս պատմական տեղեկութիւնները ի մտի ունենալով հասանական չէ՞ որ Բիւզանդական այս հայ զօրակատարները Շուշանիկ երուսաղէմ ուխտի եկած եւ վախճանած ըլլայ հոն, և իբր մայրը երկու երախտաւոր գինուորականներուն, թաղուած է Հայոց Ս. կարապետի գաւիթը, յատկացուելով անոր գեղակերտ մոզայիքներով տապան մը Արտաւանի ձեռքով, և յանուն իր եղբօրը վահանին ալ կանգնելով Եգիպտացի անապատականին՝ Եսայիի եւ այլ Հարց համանման չիրիմ մը, հոն ամփոփելով անոնց նշխարները։

Մժավանիք

Անաստաս վրդ. իր Ցուցակին մէջ այս վանքը հետեւեալ կերպով կը ծանօթագրէ. «Մըժայ վանքն, որ յանուն սբ. Քառասնից, զոր այժմ Տաճիկք ունին». իսկ Կաղանկատուացին կ'ըսէ. «Մրուվայ վանք սուրբ Քառասունքն ի նոյն կողմն եւ մերձ ի նա, զոր այժմ տաճիկն ունի (նոյն, անդ)։ Ալիշան եւ Աստուածատուր եպս. կը կարծեն թէ Մժավանքը պիտի ըլլայ Մժժավանք. վասն զի Մեծ անուն չունինք. բայց մենք աւելի հաւանական կը նկատենք թէ Մժավանքը պիտի ըլլայ Մժժավանիք. Կաղանկատուացիին Մրուվայ վանք ըսածը բոլորովին անհասկանալի է։ Մեր պատմութեան մէջ երկու Մժեժ Գնունի ունինք, մին՝ 518ին, մարզպան Պարսից կողմէն, ի Դուին, 30 տարի մարզպանութիւն ըրած, չինարարութեամբ համբաւեալ և բազում Թրակացի Յուստինիանոս կայսեր (Զամչ. Ա. էջ 237–255), իսկ միւսը՝ նոյնին սերունդէն, Հերակլի օրով. Ցունաց բաժնին զօրավար, որ մինչեւ անգամ կայսր ընարուեցաւ, բայց իսկոյն սպանուեցաւ (անդ, էջ 528)։ Բայց մենք աւելի հաւանական կը նկատենք որ Մժժավանքը չինուած կամ նորոգուած է յանուն առաջնոյն։ Սակայն Պետրոս վրացիին կենսագիրը, զոր նախընթացով չյիշեցինք, կը պատմէ թէ՝ Հռոմայեցի կրասերն Տիկլին Մելանիա (* 439) Զիթենեաց լերան վրայ, Բղրի եկեղեցւոյն մօտիկ, երկու վանքեր կը չինէ, արանց ու կանանց, և հո՛ն կը գետեղէ Հայոց Սեբաստիայէն բերել տուած 40 վկաներու նըշխարները, որոնց վրայ կ'աւելցնէ նաև Պետրոս վրացիին բե-

րած պարսիկ երկու վկաներու մասունքներն ալ։ Մասանց նահատակութիւնը կը կատարէ Կիւրեղ Ալեքսանդրացի հայրապետը, որ նոյն ժամանակ Երուսաղէմ կը գտնուէր։ Ահա այս Մելանիայի գառասնից վանքն է, որուն յետոյ կը սիրանայ հայ Մժեժ Գնունի մը կամ մարզպանը, և կամ բիւզանդական զօրավարը. բայց թէ ի՛նչ պարագաներու տակ, պատմականօրէն անծանօթ կը մնայ մեզ։ Մժժավանքը շատ մօտ կը գտնուի վերև նկարագրուած Ս. Յովհ. կարապետի վանքին, և թէ չատ կանուխէն մասամբ գրաւուած էր արաբացիներէն, ինչպէս յայտնի կ'ըլլայ վերի յիշատակարաններէն։ Աստուածատուր եպս. հետեւեալ կերպով կը նկարագրէ Մժժավանքի աւերակը. «Այս վանք է հիւսիսային կողմն Ս. կարապետի իբրև քարընկէց մի. հիմունք, չրջապատ որմոց միայն երևին այժմ. ի կեդրոնի կանգնեալ են արաբացիք գմբէթ եւ կոչեն ըստ բարբառոյ իւրեանց Գուպպէր հլ արպային շուհատ, գմբէթ 40 մարտիրոսաց՝ ըստ առաջին անուան իւրոյ եւ մի մասն պերեզմանատուն գիւղականաց։ Ասա եւս գոն գերեզմանք նախնեաց մերոց, բայց ծածկեալ են արաբացիք» (Ժամնկարկի. Պատմութիւն Երուսաղէմի, Ա. հար. էջ 89)։

Ասեման վանիք հայոց

Այս վանքը կուսանաց յատուկ էր. գրաւոր մ'եւէ յիշատակարան չունինք։ 1892ին, Զիթենեաց լերան վրայ երեւան ելած յունարէն գրով տապանագրէ մը յայտնի կ'ըլլայ թէ Հայք ունեցած են Ասեման անուամբ վանք մը։ Այդ տապանագրին թարգմանութիւնը կը դնենք հոս. «Այս է տապան արքունից Խառադայի, մայր միանձնուհեաց Ասեման վանացն Հայոց» (R. B. 1892. էջ 571)։ Վանքին հայկական ըլլալուն տարակոյս չկայ. միայն դատելով վանքին մեծաւորուհին անունէն և հայ վանքի մը մէջ յունարէն լեզուի գործածութենէն՝ կը կարծենք թէ այս վանքը գոյութիւն ունէր հայերէն գրոց գիւտէն յառաջ, և թէ նոյն վանքի միանձունք անխտրաբար ամէն ազգէ կ'առնուէին, թէեւ սեպհականութիւնը ըլլար հայկական։ Կը թուի թէ մինչեւ է. դարու սկիզբը կանգուն էր Ասեման վանքը. յորմէհետէ կործանուած էր Պարսիկներուն յարձակմանց հետեւանքով։ Հաւանաբար նոյնն էր այս վանքը Հարանց Վարքի մէջ յիշուած (Բ. հար. էջ 461) կուսանոցին հետ, որ Զիթենեաց լերան վրայ զըտ-

նուելով՝ Փարախ անունը կը կրէր. հո՛ն կ'ապրէին չորս հարիւրի մօտ կոյսեր: Պարսիկները վանքը կործանեցին, կոյսերը դժնէաբար հոս հոն ցրուեցին: Հարանց Վարքի նոյն էջերուն մէջ կը պատմուի հալածուած կոյսերէն միոյն դիւցազնական առաքինութիւնը:

Զիթենեաց լերան Բլրի եկեղեցիին նկարագրութեան առթիւ, ուրէք յիշատակութիւն չըրինք նոյնին սեպհականութեան մասին: Ինչպէս կ'երեւի գրաւոր յիշատակարանաց հետքերէն, վաղեմի դարերէ սկսեալ, նոյն եկեղեցիին սեպհականութիւնը կը վերաբերէր Հայ Միաբանութեան: Այս մասին հայ ժամանակագիր մը կը գրէ թէ արաբ պատմագրաց մէջ գրուած է որ Համբարձման եկեղեցին կը վերաբերէր հայոց (Ստորագրութիւն Երուսաղէմի, էջ 308): Արդէն 1529ին, Յովհաննէս պարք. Ս. Համբարձման եկեղեցւոյն գմբէթը, որ երկրաշարժէն խարխլած էր, դառաւորին վճռով նորոգել կու տայ, եւ 1560ին, Անդրէաս պատրիարքը դարձեալ վաղեմի իրաւանց հիման վրայ եւ դառարանի վճռագրով, կը յաջողի ամբողջութեամբ նորոգել նոյն եկեղեցին. 1617ին ալ, Գրիգոր Պարոնեաէր, պաշտօնական վաւերագրոց ոյժով, կ'արգելու տեղւոյն մէկ դրացիին անտեղի ոտնձգութիւնները: Հայոց Միաբանութիւնը 1836ին, առանց հակառակելու ուրիշ Միաբանութեանց կողմէ նոյն եկեղեցիին մէջ կատարուած պաշտամունքին եւ արարողութեանց, կարեւոր նորոգութիւններ կը կատարէ նոյն եկեղեցւոյն մէջ, և կը կառուցանէ յարակից չէնքեր՝ համաձայն ա՛յն արտօնութեանց, զորս ձեռք բերած էր Հիճրէթի 1022ին, Սուլթան Ահմէտ Ա.ի օրով, որուն զօրութեամբ նաև ստացած էր Հիճ. 1250, 1251 և 1252 թուական հրովարտակները: 1838ին սակայն, Լատինք և Յոյնք կը հակառակին այս նորոգութեանց, կը ջանան բեկանել տալ ստացուած հրամանագրերը, և այլ և այլ ազդեցութիւններու միջոցաւ, ի մեծ վիշտ քրիստոնէութեան, 1839ին քանդել կու տան չինութիւնները, և հոն հիմակ աւերակներն են որ կ'իյնան: Մանրամասնութիւնները տեսնել (Սաւաղանիանց, Բ. տար. էջ 993–999. Ժամանակագրական Պատմութիւն Երուսաղէմի, տար. Ա. էջ 251, 271, 290, Բ. 439 եւայլն, «Բովանդակութիւն Սգգ. Սեի.» էջ 94–95):

ԺԷ

ՄԱՐԻԱՄԱՆՑ ԿԱՄ ԻՒՂԱԲԵՐԻՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

1.— Աւետարանի մէջ կը յիշատակուին Իւղաբեր կանայք որ Գալիլիայէն գալով կ'ընկերանային Յիսուսի և կ'ապաստաւորէին Անոր. անոնց գլխաւորն էր Մարիամ Մագդաղենացին. միւս Մարիամը՝ որ կ'ըսուի նաև Մարիամ Յակոբայ, Սողոմիի՝ մայր որդւոցն Զեբեդեայ, ըստ Ղուկասու նաև, Յովհաննա Հերովդէսի հազարապետ Բուզայի կինը՝ և ուրիշ կիներ, որոնց մէջ, դարձեալ Ղուկասու համաձայն, կը գտնուէր Շուշան. ահա ասոնք այն կիներն էին որ Տէրը կը հոգային և կը ծառայէին Անոր: Յիսուսի խաչելութեան ժամանակ հեռուէն կը դիտէին չատ կիներ, որոնց մէջ կային այս յիշուածներէն ոմանք: Յովսէփ Արիմաթացին «սուրբ կտաւներով» պատեց Յիսուսի մարմինը և թաղեց նոր գերեզմանի մը մէջ և այն գերեզմանին դուռը կափարիչ քարով մը փակել էտաղ մեկնեցաւ. նոյն միջոցին հոն կը գտնուէին Մարիամ Մագդաղենացին և միւս Մարիամն և կը նըստէին հանդէպ գերեզմանին (Մատ. իէ. 55–61): Իսկ Մարկոս (ԺԶ. 1–9) և Ղուկաս (իԳ. 55–56) կը գրեն թէ նոյն կանայք խնկեցին և օծեցին Յիսուսի մարմինը. միաշաբաթի օրը արեւագալին գերեզման գնացին, և տեսան որ գերեզմանի մեծ քարը մէկդի տռնուած էր. և երբ գերեզման մտան հրեշտակը աւետեց անոնց թէ Յիսուս յարութիւն առած է և թափուր գերեզմանը ցոյց տալով պատուիրեց անոնց որ լուր տան աշակերտներուն: Իւղաբեր կանայք երբ լսեցին այս լուրը վախցան ու փախան գերեզմանէն և մէկու մ'ալ խօսք մը չըրին: Յարուցեալ Յիսուսը առաւօտուն՝ առաջին միաշաբաթին՝ երեւցաւ Մարիամ Մագդաղենացիին և ան գնաց պատմեց անոնց՝ որ իրեն հետ էին, կուլային ու կը սգային (Տե՛ս նաև Յովհ. Ի. 1–2, 11–18): Իւղաբեր կանանցմէ ոմանք կը յիշատակուին նաև Յիսուսի խաչին մօտ, երբ անոնք Տիրամօր հետ արտասուաթոր աչքերով կը դի-

տէին խաչեալ Յիսուսը (Յովհ. ԺԹ. 25–27)։ Յարուցեալ Փրկիչը երեւցաւ նաև Իւղաբեր կանանց ու ըսաւ «ողջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նորա և երկիրպագին նմա» (Մատթ. ԻԸ. 9–10)։ Աւետարանի պատմութեան մէջ Իւղաբեր կանայք այսչափով միայն կը յիշատակուին, բայց ինչպէս յիշուեցաւ վերեւ, անոնք կատարեալ անձնուիրութեամբ կը վերաբերուէին հանդէպ Յիսուսի թէ՛ անոր քարոզութեան ժամանակ, ի կենդանութեան, և թէ թաղումին՝ երբ անոյշ իւղերու օծումով և խունկով պատեցին Անոր անապական մարմինը։ Իւղաբեր կանանց այս սրբատառուէ գործին զմայլած՝ մեր չարականի բանաստեղծները եւ գանձասացները՝ ինչպէս Նարեկացին, Շնորհալին, Սկեւռացին և Երզնկացին՝ կ'անուանեն զանոնք նաև խնկարեր և խնկազգեաց։ Իսկ Մարխանաիֆ բառը քանիցս գործածուած է Շարականին Ղազարու Յարութեան կանոնին, ինչպէս Տօնամակին մէջ և այլ տեղեր։ Հայ Եկեղեցին երկիցս կը տօնախմբէր Իւղաբեր կանանց տօնը, մին Յովակիմ և Աննայի և միւսն Ղազարու քոյրերուն՝ Մարիամու և Մարթայի հետ, ըստ հին տօնացոյցի, բայց այժմ երկրորդ տօնը զանց առնուած է։

Հոգեկիր Հայրեր՝ Իւղաբեր կանանց հանդէպ Յիսուսի ունեցած պաշտամի ու նուիրման համար ճոխացուցած են եկեղեցւոյ մէջ երգը ու իրենց հոգւոյն քաղցր արտայայտութիւնը։ Նախնի գարուն քրիստոնէական բարեպաշտութիւնը արդիօք յիշատակարանով մը չէ՞ պանծացուցած այն տեղը ուր պատահեցաւ Յիսուս յետ յարութեան և ողջունեց զանոնք ըսելով «ողջ էք. եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա, և երկիրպագին նմա»։ Պատմութիւնը կը լռէ այս մասին, բայց աւանդութիւնը կը խօսի, և ցոյց կու տայ Սիոնի ճանապարհին վրայ Դաւթի բերդին դիմաց, Հայոց Ս. Յակոբի վանքին խիստ մօտ սրբավայր մը՝ ուր հաւատացեալք և ուխտաւորք գարերով գունդ գունդ դիմած են ու յիշատակած են նոյն խնկաբեր կանանց աստուածահաճոյ գործը։ Ինչ որ ունին Ս. Երկրի մեծագոյն սրբավայրերը պատմական տեսակէտով, նոյնը կը պակսի Իւղաբեր կանանց տեղւոյն համար, բայց աւանդութեան մատնացոյց ըրած յիշատակարանը իրականութիւն մը եղած է գարերու ընթացքին մէջ, և որքան որ նոյն սրբավայրը ժամանակի բերումով չատ կանուխէն ձեւափոխութիւն ունեցած է և գադրած է ծառայելէ իր նպատակին,

բայց և այնպէս ճարտարապետական քննութիւնք և քրիստոնէական հնախօսութիւնը, ինչպէս նաև վաղեմի ուխտաւորաց ուղղութիւնները չատ ատոյգ կերպով կը հաստատեն թէ մատնանշուած սրբավայրը կամ ուխտատեղին եղած է Մարիամանց տունը և հոն ի հնուէն չինուած է եկեղեցի մը, յանուն Ս. Իւղաբեր կանանց։

2.— Մենք մեր ձեռքին տակ ունինք գերմանացի պաղեստինագէտ երկրաչափ ճարտարապետ Herr Baurath von Schick ի անգղիերէն թարգմանուած Տեղեկագիրը՝ որով, ի մէջ այլոց, կը նկարագրուի Իւղաբերից սրբավայրը, տան մը վերածուելով կրած փոփոխութիւնը, ուխտաւոր ուղեգիրներու կողմէն անոր նկատմամբ աւանդուած տեղեկութիւնները և այլ պատմական պարագաներ։ Նոյն չահեկան Տեղեկագիրը բաւական տարիներ յառաջ հրատարակուած է Palestine Exploration Fund պարբերականին մէջ, որմէ քաղելով կարեւոր մասերը կը դնենք հոս. «Տար Տիւբ կամ Տիւ ընտանիքին բնակարանը կը գտնուի Դաւթի Աչտարակի հարաւ–արեւելքը։ Երբեմն եկեղեցի էր ան. ո՛չ միայն ժողովուրդին աւանդութեամբը, այլ նաև չէնքին քննութեամբ ալ կը հաստատուի այդ պարագան։ Նոյն չէնքին պատերը թանձր են և կամարի այդ պարագան։ Նոյն չէնքին պատերը թանձր են և կամարմը կրնան կրել, գլխաւոր գեղեցիկ է և վայելուչ։ Ան ճշդօրէն կը նմանի Մուրխաթանի(*) Ս. Աստուածածնի եկեղեցիին։ Այս եկեղեցիին արեւելեան մասը, որ աւերակ դարձած է, տան մը վերածուած է, ուղիղ պատերով և կարեւոր պատուհաններով եւ երկյարկանի, այնպէս որ կարելի եղած է չէնքին տակը և վրան բնակութիւն հաստատել։ Արեւելեան պատին մօտ կը տեսնուին փոքր սենեակներ՝ կողակին մօտ։ Արեւմտեան պատուհանները միայն նախնական են։ Այս յիշատակներէն զատ՝ չէնքը ուրիշ փոփոխութիւններ և նորոգութեան նշաններ չի կրեր։ Քարերը սովորական մեծութեամբ չինուած են։ Շէնքը իր հին երեւոյթէն զատ կարկառուն բան մը չունի. քարերը վայելուչ կերպով չեն տաշուած այլ ընդհակառակն քիչ մ'ալ կոշտ են։ Կրնայ ըլլալ որ նոյն չէնքը ժամանակին սինակոգ մը եղած ըլլայ(?), եթէ այդպէս է, քրիստոնէական նախնի ժամանակներուն անոր վրայ աւելցուած է կողակ մը և դարձեալ կործանուած է ան, իսլամական տիրա-

(*) Երուսաղէմի Ս. Յովհաննու Ասպետներու չէնքերը։

պետութեան օրով։ Երբ Փիլիքս Յ. 1484ին այցելեց հոս, ամբողջութեամբ իսլամական տան մը վերածուած էր ան, բայց միևնոյն ժամանակ կը նկատուէր Իւղաբերից տեղը. Յ. Փիլիքսին խօսքերն են. «Երբ Ս. Յակոբի վանքէն դուրս ելանք, փողոցի երկարութեամբ գնացինք և մեր ճամբուն վրայ գտանք մեծ քար մը։ Հին քրիստոնեաները այդ տեղը ըրած էին այդ քարը, վասն զի այդ տեղւոյն վրայ երեւցած էր Տէրը Իւղաբեր կանանց՝ երբ ա-նոնք եւ կը դառնային գերեզմանէն. Տէրը ըսաւ անոնց «ողջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նորա և երկիրպագին նմա» (Մատթ. ԻՀ. 9)։ Հոն մենք ալ խոնարհեցանք և համբուրեցինք այն հողը՝ որուն վրայ Տէրը կոխած էր...։ Երբեմն չինուած էր հոն մեծ եկեղեցի մը, զոր Սարակինոսները քանդեցին, ինչպէս նաև ուրիշ եկեղեցիներ։ Այս քարին քովի ճանապարհը կը տանի դէպի Ս. Գերեզման. ուխտաւորք միշտ այս տեղէն կ'անցնին Գերեզման երթալու համար։ Ես ալ գրեթէ օրը վեց անգամ այս ճանապարհէն կ'անցնէի. ամէն անգամ որ կ'անցնէի նոյն քարը կը համբուրէի»։ Յիշատակուած քարը երկար ժամանակ ճանապարհին վրայ չէ մոռցած. մինչև 1517 թուականը, քիչ ժամանակ մ'ալ, մնացած է ճանապարհին վրայ։ Հարիւր տարի վերջ իսլամական «տունը» նկատուած է Իւղաբերից եկեղեցին, և նոյն տունը փողոցին վրայ ցցուած անկիւն մ'ունենալով ուխտաւորները կը համբուրէին զայն։ 1697ին Մանարկ կ'ակնարկէ Տար Տիւրին և կը յայտնէ թէ ան ի հնումն Իւղաբեր կանանց եկեղեցին եղած է. և հաւանական է որ ի սկզբան սինաքոկ մը եղած ըլլայ։ Նոյն տանը կից կը գտնուի գերեզմանատեղի մը ուր կան մէկ քանի իսլամական տապանաքարեր, որոնց վրայ գիշեր ժամանակ կանթեղներ կը վառուին և կայ նաև փոքր աղօթատեղի մը»։

Տեղեկագրին խօսքերը չատ որոշ են. ճարտարապետական քննութեամբ, և յիշեալ ուղեգրութիւններէն կը հասկցուի թէ ակնարկուած տունը Իւղաբեր կանանց եկեղեցին եղած է արաբական տիրապետութենէն առաջ։ Նոյն տեղւոյն իբր ուխտատեղի գոյութիւնը կը հաստատուի նաև մեր ձեռքը գտնուած ուխտավայրերու երկու ցուցակներէն. մին՝ Ակիւլմանցի Նիկողայոս եպս.ի, որ Փիլիքս Յ.էն մէկ տարի առաջ (1483ին) ուխտի եկած է և նոյն տեղը հետևեալ կերպով կը յիշատակէ իր ցուցակին մէջ. եւ երբ երթաս ի Յարութիւնն՝ դուռն

մի կողած կայ ի վերայ ճանապարհին, ուր Տէրն ասաց. ողջ էք, եւ նորա մատուցեալ կալան զոտս նորա եւ լային. միւսն է՝ հաւանաբար Խաչակրաց ժամանակ լատիներէնէ թարգմանուած ցուցակ մը, Մարկոս գրչին ընդօրինակութեամբ և անթուական, որ կը գտնուի մեր մատենադարանին (Թ. 1130) մէկ ձեռագրին մէջ. նոյն ցուցակը կը բովանդակէ նաև հետևեալ խօսքերը. «եւ ի սուրբ Սիոնի ճանապարհին է տեղի մի որ Քրիստոս երեւցաւ երեք Մարիամացւոց»։

3.— Այս բոլոր տուեալներով կը հաստատուի Իւղաբեր կանանց ուխտատեղին. կը մնայ հիմա գիտնալ թէ ո՞ր քրիստոնեայ համայնքին ձեռքը կը գտնուէր այս տեղը և ո՞ր ժամանակ չինուած էր տեղւոյս եկեղեցին։ Այս մասին յիշատակարան կը պակսի և անստոյգ կը մնայ ծագումը, բայց անտարակոյս քրիստոնէական հին դարերու մէջ հաստատուած կը թուի ան։ Որչափ անստոյգ ըլլայ անոր ծագումը, բայց մենք վստահ ունինք թէ ԺԲ. դարուն նոյն եկեղեցիին գործածութիւնը Հայոց ձեռքն էր ու Ս. Յակոբի Միաբանութիւնը պաշտամունք կը կատարէր հոն։ Ս. Երկրի հայ պատմութիւնը և մեր մատենադարանի ձեռագիրները ո՛եւէ յիշատակութիւն չունին այդ մասին. ուխտաւոր եպիսկոպոս մը՝ Յովհաննէս Վըրզպուրկցի, որ հաւանաբար 1160ին կամ 1170ին ուխտի եկած է երուսաղէմ, ա՛ն է որ կը յիշէ իր Ուղեգրութեան մէջ (Տե՛ս Descriptio terrae sanctae, Migne Patr. Lat. col. 1057), թէ Ս. Յակոբի Հայոց վանքին հարաւը կը գտնուի ուրիշ եկեղեցի մը՝ որ Հայոց ձեռքն է (անդ, էջ 21–22)։ Յիշեալ եպիսկոպոսը հիացումով կը խօսի Ս. Յակոբի Հայոց վանքին վրայ և կը յիշատակէ նաև այն փոքր ու վաղեմի սրբավայրերը որ կանգուն էին տակաւին Սիոնի ճանապարհին վրայ։ Երախտապարտ ենք այս Պաւերիացի Յովհաննէս եպիսկոպոսին որ իր այս հակիրճ տողերով լուսաբանած է Իւղաբեր կանանց եկեղեցին հայկական ծագումը և Հայոց սեպհականութիւնը մինչև Խաչակրաց Թուականը։ Մենք ուրախ ենք որ յիշեալ եկեղեցականը օգնեց մեզի երևան բերելու Հայ–Երուսաղէմի վանականութեան ու հայ բարեպաշտութեան ստեղծագործութիւններէն մին ալ։ Մեր քաղաքացի հայերուն կիրարկած արաբերէն մէկ բառը՝ Տարը Մարհաւաթ (Տե՛ս Ուղեցոյց Ս. Տեղաց, էջ 178), ինչպէս նաև վերև ակնարկուած տան Ս. Յակոբի վանքին կալուածոց խիստ մօտ

յարակցութիւնը անտարակոյս աւելի կը զօրացնեն Իւղաբերից եկեղեցին հայկական ծագման հաստատութիւնը: Այստեղ պէտք կ'ըլլայ աւելցնել թէ Հայք Ս. Ցարութեան տաճարին մէջ ևս ունին Իւղաբերից սեղան մը, որ Ուշարախևան տեղէն քանի մը ոտք աջ կողմը, կամարին տակ կը գտնուի: Դարձեալ Հայոց յատուկ է սեղանին կից մեծ սիւնը, որ կայսերական ըսուած կամարին հարաւային ոտքն է. նոյն սիւնին վրայ Հայք ունին Դազարոս Ցարութեան մեծ պատկեր մը:

Ս. Յակոբի հին մլութաններէն հանգուցեալ Մկրտիչ վրդ. Արծրունեան (✻ 1861) իր Ստորագրութիւն Երուսաղէմի գրքին մէջ (էջ 174) հետևեալ սխալ տեղեկութիւնը կու տայ Իւղաբերից եկեղեցիին տեղւոյն մասին. Ցաղագս Իւղաբերից եկեղեցւոյն, որ ասի ասպնատաճիք, զոր Աւրաքացիք կը կոչեն Տէյր ըլ Ասհս, խորագրով մը, որով հասկցնել կ'ուզէ թէ նոյն եկեղեցին կը գտնուէր Թարիքը Սիդդի Մարիամ փողոցին հիւսիսային կողմը քառասուն մէթր հեռու գտնուած տան տեղը, ուր կը գտնուի Ջաղանաց եկեղեցիին գէպ արևելքը տասն և հինգ քայլ հեռի: Նոյն տեղի գտնուած եկեղեցին Իւղաբերից եկեղեցին չէ, այլ Ասորւոց մէկ հնագոյն եկեղեցին է, որ կը կոչուի էլ Ասհսիհի, բայց կ'երևի որ յունարէն Ηερωδιϛ բառին աղաւաղութիւնն (*) արաբերէն խօսողներու բերանին մէջ էլ Ասհս բառին փոխուած է. ասհս կը նշանակէ ոսպ, այդ պատճառաւ Արծրունեան վրդ. հետևելով նոյն սխալին՝ տեղւոյն Ասորւոց վանքը Ոսպնատաճիք անուանած է. մինչ ըստ յիշատակարանաց, ան Հերովդէս Անտիպասի պալատին տեղը էր, Պիղատոսի տանեանին հիւսիսային արևելքը, ինչպէս յայտնի է վերև յիշուած յունարէն բառէն: Նայելով պատմութեան՝ Երուսաղէմի Ասորիները Խաչակիրներէն յառաջ նոյն տեղւոյն տիրացած են ու եկեղեցիի վերածած են զայն: 1902 ին ալ գտնուած են անոր փլատակները որ կ'երևան Ջաղանաց Եկեղեցիին արևելքը (Տե՛ս Nouveau guide de terre sainte P. B. Meistermann, էջ 150):

(*) ρ գիրը λ-ի փոխուած է:

Ժ Ը

ՔՐԻՍՏՈՍԻ ԸՄԲՌՆՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԳԵԹՍԵՄԱՆԻԻ ՄԷՋ

Աւետարանիչները կը պատմեն թէ (Մատթ. ԻԶ. 36–50, Մարկ. ԺԴ. 32–46, Ղուկ. ԻԲ. 37–50, Յովհ. ԺԸ. 1–3) մեր Տէրը իր վերջին ընթրիքէն յետոյ գնաց Գեթսեմանի գիւղը իր աշակերտներով, որոնց ըսաւ որ հսկեն հոն, մինչև որ ինքն երթայ աղօթքը ընելու, իր հետ առնելով Պետրոսը և Զեբեդեայ երկու որդիները: Ցիսուս սկսաւ տրտմիլ և հոգալ, և կ'ըսէ անոնց ալ թէ «տրտում է ոգի իմ մինչև ի մահ»: Ան քիչ մը առաջ կ'երթայ Գեթսեմանեայ պարտէզ ըսուած տեղը և հոն աղօթելով կ'ըսէ. «Հա՛յր, եթէ կամիս անցո զբաժակս զայս յինէն, բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցի». երեք անգամ Ցիսուս կու գայ աշակերտներուն մօտ և զանոնք քնացած կը գտնէ, երեք անգամ ալ կը յորդորէ որ արթուն մնան ու փորձութեան չենթարկուին, ու կ'ըսէ որ հոգին յօժար է, բայց մարմինս տկար». երկրորդ և երրորդ անգամ կատարուած աղօթքէն յետոյ կը խօսի անոնց համանման խօսքեր: Ի վերջոյ, կ'ըսէ աշակերտներուն թէ «ննջեցէք այսուհետև և հանգերուք պի ահա հասեալ է ժամ և որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց»: Տասներկուքներէն մին՝ Ցուդա Իսկարիովտացին Ցիսուսը կը մատնէ Քրնամիներուն, և անոնք ալ կալանաւորելով զայն կը տանին կայիափայի մօտ դատելու և դատապարտելու համար:

Գեթսեմանեայ պարտէզի մէջ այդ տագնապի պահուն, ինչպէս կը գրէ Աւետարանիչը, երկինքէն հրեշտակ մը երևցած էր Ցիսուսի և քաջալերած էր զայն, երբ «հոսէին ի նմանէ քրտունք սուսի և քաջալերած էր զայն, երբ «հոսէին ի նմանէ քրտունք սուսի և քաջալերած էր զայն, երբ «հոսէին ի նմանէ քրտունք իբրև կաթիլս արեան, որոն որոն հեղեալ յերկիր»:

Ցիսուսի՝ մեր Տիրոջ մահուան տագնապի ու Հօրը ուղղուած սրտառուչ աղօթքներուն՝ հանդիսավայրը եղող այս տեղերը, շատ կանուխէն բարեպաշտ քրիստոնեայք սրբացուցած և հոն ուխտատեղիներ շինած էին: Գեթսեմանիի մէջ քրիստոնէական առաջին դարերէն սկսեալ ցոյց կը տրուին վերջին վիշերը Փըրկ-

չին ընկերացող աշակերտներուն քնացած տեղը, որ Ս. Կուսի տաճարին մօտ, քարայր մըն է. ինչպէս նաև Ցիսուսի ազօթած ու քահանայապետներէն կալանաւորուած տեղը կը կոչուի «Զիրեվեանց Պարտիզ»ը, զոր կը յիշէ Աւետարանիչը և որուն մօտ կը գտնուէր Ցուդայի մատնութեան այն քարը, զոր Պօրտոյի անանուն ուխտաւոր ուղեգիրը 333 ին կը նկարագրէ իր գիրքին մէջ։

Զիթենեաց պարտէզին այս չրջանակը նուիրական վայր մը դարձած էր ընդհանուր քրիստոնէութեան համար. նոյն պարտէզին հինաւուրց ձիթենիները, որ ժողովրդեան լեզուով ողջունի ծառեր կը կոչուէին, հեռի երկիրներէ եկող գունդ գունդ ուխտաւորներու բարեպաշտական զգացմանց առարկայ կը դառնային ու պաշտումի այլ և այլ յիշատակներ անմահացուցած էին այդ քրիստոնէական սուրբ տեղերը. դարերու ընթացքին տեղական աւանդութիւնները այդ Ս. վայրերու պաշտումը ու քրիստոնէական սրտագրաւ վաղեմի դրուագները կը հրապուրէին քրիստոնեայ աշխարհը. բոլոր եկեղեցիներու ուշադրութիւնը կեդրոնացած էր այդ Զիթենեաց պարտէզին վրայ ու անոնք կ'ուզէին մէկը մէկէ խլել նոյն պարտէզը, մեծագոյն պարծանքի իւրացման զգացումով ուրախանալու համար։

Ցրանչիսկեանք ժէ. դարու կիսուն տիրացան նոյն տեղւոյն և պատով մը չրջապատեցին և ծաղկանոցի վերածեցին զայն։ 1892 ին մասնաւոր պեղումներով երևան հանուեցաւ Յակոբեաց օրէն կործանուած եկեղեցիի մը աւերակոյտը. այլ և այլ քանդակեալ մարմարի մնացորդ կտորներէն ու ճարտարապետական կառուցումէն յայտնի եղած է թէ լատին թագաւորութեան հիմնարկութեան ժամանակի եկեղեցիի մը բեկորներն էին երևան եկած հնութիւնները։ Ցրանչիսկեանք մտածեր էին նոյն տեղւոյն վրայ չինել եկեղեցի մը. ուստի 1920 ին չարունակեցին մաքրել գտնուած եկեղեցիին գետինը հիմնարկութիւն կատարելու համար և մինչ պեղումները կը խորանային՝ հնագոյն պատի մը մասերը մէջտեղ ելան և երբ աւելի խորացուցին հետախուզութիւնները նոր յատակներ բացուեցան և երևան եկան գեղեցիկ քանդակներով խոյակներ, մարմարեայ սիւներ, բազմապիսի և գունագեղ մոզայիքներ, ինչպէս նաև օրմանկարներու կտորներ որոնք ամենուն զարմանքը գրաւեցին. վասն զի անոնք կը ցոլացնէին վաղեմի ճարտարապետութեան և նկարչութեան մը զարգացեալ

վիճակը. նորագոյն չրջանի եկեղեցի մը կառուցուած էր վաղեմի սրբավայրի մը վրայ. մէջտեղ ելած հնութիւններուն մէջ կը գտնուէին յոյն, լատին և արաբական գիրերով արձանագրութիւններ, բիւզանդական և լատին տիրապետութեան վերաբերեալ գերեզմաններ և դրամներ։

Անակնկալ կիւտ մ'էր երևան ելածը. պեղումներու խորացումը մէջտեղ բերաւ երկու եկեղեցիներու աւերակներու իրարու վրայ կուտակումը. ատոնցմէ եկեղեցիին յատակագիծը կը նայէր հարաւային արևմուտքէն հիւսիսային արևելք, Երուսաղէմի հին տաճարին կողմը ուղղուած։ Բայց վրայի եկեղեցիին ուղղութիւնը կատարելապէս Արևելք կը նայէր, այնպէս որ նախապէս չինուած եկեղեցիին հետ ճշդիւ համադիր չէր։ Ցրանչիսկեանք այս պեղումներէն յետոյ նոյն աւերակներու տեղւոյն վրայ չինեցին նոր և չքեղ եկեղեցի մը։

Մենք այս տողերով պիտի չանանք նկարագրել մեր Փրկչին վերջին գիչերը Գեթսեմանիին մէջ ազօթած տեղւոյն վրայ, իր մատնութեան և ոտքն ոտքի թափած իր արիւն-քրտինքի կայլակներուն ի յիշատակ չինուած եկեղեցիներուն պատմական փոփոխութիւնները այլ և այլ դարերու մէջ, և ապա որոշ ապացոյցով մը պատմել թէ այն Ըմբռնման կամ Աղօթքի եկեղեցին ո՞ր դարուն Հայոց սեպհականութիւն դարձած է և մինչև ե՞րբ Հայք տիրացած են անոր։

1. Քրիստոսի Ըմբռնման եկեղեցին սկիզբէն մինչեւ 614.

Այս եկեղեցին օտար եկեղեցական մատենագրութեան մէջ կը կոչուի Օրհաի եկեղեցի, Աղօթքի եկեղեցի, Փրկչի եկեղեցի. իսկ մենք ընտրեցինք Ըմբռնման եկեղեցի անունը, նկատելով որ մեր Փրկիչը նոյն տեղին վրայ կալանաւորուած ու իբր մահապարտ տարած են դատաւորին, և սա պատճառաւ ալ որ մեր Հաննէ եպիսկոպոսը Քրիստոսի ըմբռնման տեղւոյն մօտ գտնուած այր մը իր Պատմութեան մէջ կը կոչէ Այր Ըմբռնման։

Մենք մեր առաջին վկայութիւնը կը բերենք կիւրեղ Երուսաղէմացիէն, որ 347 թուականին իր կոչումն ընծայութեան գիրքին մէջ (Ճառ ժ) աւետարանական ճշմարտութեան վկայ կը բե-

բէ կեդրոնի հովտին մէջ գանուած ա՛յն արմաւենին, որմէ տըղաքները ճիւղեր քաղած էին Յիսուսի յաղթանակաւ Երուսաղէմ մտած ժամանակ. յետոյ Երուսաղէմացին կը յիշէ Գեթսեմանին՝ ուր ցոյց կու տայ Յուդան ամէն անոնց որ կրնան հասկնալ. նոյն հեղինակը դարձեալ իր գրքէն նոր վկայութիւն մը կը բերէ «Գեթսեմանին՝ ուր կատարուած է մատնութիւնը»։ Այս վերջնոյն վրայ կ'աւելցնէ Աղօթքի տեղւոյն յիշատակութիւնը հետեւեալ կերպով. «առանց խօսելու Զիթենեաց լերան մասին ուր ներկայ աշակերտները կիշերը կ'աղօթէին, կը յիշի՞ս Գեթսեմանիի մէջ Յիսուսի դէմ ուղղուած սուրերը»։ Այս բացատրութեանց անորոշութիւնը և ճշդութեան փոքր թերութիւն մը երուսաղէմացիին յանկարծական պերճախօսութեան կը վերագրուի, եւ չ'արգիլեր այս վերջին հատուածին Գեթսեմանիի մէջ պատմուած յիշատակներու երկուութիւնը։

Եթէ Եւսեբիոս իր Եսայիի մեկնութեան մէջ կը յիշէ մատնութիւնը Գեթսեմանիի վրայ խօսած ժամանակ, իր 330 ին խմբագրած Onomasticonին մէջ, անոր կը յարէ Քրիստոսի աղօթքին յիշատակը։ Իր ծանօթագրութիւնը չատ հետաքրքրական է, վասն զի ան կը հաստատէ աւանդութիւն մը որ իրմէ չատ յառաջ գոյութիւն ունէր. «Գեթսեմանին, կը գրէ, այնպիսի տեղ մ'էր, ուր Քրիստոս իր չարչարանքէն առաջ աղօթեց, ան դէպի Զիթենեաց լեռը ելնելիք ճամբուն վրայ կը գտնուի։ Հոս այժմ հաւատացեալք կուգան աղօթելու»։ Կիւրեղի և Եւսեբիոսի բացատրութիւններէն կ'երևի որ տակաւին եկեղեցի չինուած էր Քրիստոսի աղօթած տեղւոյն վրայ։

Բայց երբ Յերոնիմոս Թարգմանեց (386–391) Եւսեբիոսի տեղագրական ճառը, կը փոխուի խնդիրը։ Իր ճշդրիտ և ամբողջական ծանօթագրութիւնը իր նախորդինն է «Գեթսեմանին, կ'ըսէ, այն տեղն է որ Փրկիչը իր չարչարանքէն առաջ աղօթեց, Զիթենեաց լերան ստորոտը կը գտնուի, այժմ հոն եկեղեցի մը կայ շինուած»։ Լատինը stomrոը բառերը կ'արգիլին մեզ լերան գառ ի վայրին վրայ փնտռելու նոյն սրբավայրը։ Գալով այժմ բառին, չատ յատկանշական է ան։ Թարգմանիչը Եւսեբիոսի բնագիրին դիմացը գտնուելով՝ կը տեսնէ որ կացութիւնը միևնոյնը չէ, հաւատացեալք այլևս չեն աղօթեր բացօթեայ դաշտի մը մէջ. բայց այն պահուն որ կը գրէր, քրիստոնէից կողմէն պատուուած այդ

դաշտը եկեղեցիով մը ծածկուած է. ուստի գանց չըներ կատարուած փոփոխութիւնը արձանագրելու։ Ուրեմն առ նուազն, այս սրբավայրին կառուցումը կրնանք դնել 330 ին և 390 ին և նոյն իսկ Կիւրեղի լռութեան պատճառաւ 347 ին և 390 ին։

Էթէրիայի Օրագրութիւնը մեծ առաւելութիւն ունի Գեթսեմանիի Ս. Տեղեաց դերը և իւրաքանչիւրին դիրքը հաստատելու սաղիմական արարողութեանց մէջ. ըստ նոյն Օրագրութեան, եկեղեցական թափօրը Զիթենեաց լեռնէն իջնելով՝ կու գայ այն տեղը ուր Փրկիչը աղօթեց և տագնապեցաւ։ Այս տեղ, կը ծանօթագրէ ուխտաւորուհին, թէ գեղեցիկ եկեղեցի մը կար, հոն կը կարդացուէին տեղւոյն յարմար աւետարանը՝ Փրկչին մատնութեան եւ կալանաւորութեան վերաբերութեամբ։ Այս ընթերցուածներու պահուն արտասուողներու հեկեկանքը մինչև անգամ քաղաքէն կը լսուէր։

Իր մեծ գիծերուն մէջ այս է սկզբնական աւանդութիւնը ու Ըմբռնման եկեղեցիին հիմնարկութեան մերձաւոր թուականը ու պատմութիւնը մինչև 614, որ ժամանակ պարսիկ հրոսակները երուսաղէմ արշաւելով առաջին անգամ աւերեցին քաղաքէն դուրս գտնուող Քրիստոսի Ըմբռնման գեղեցիկ եկեղեցին։

2. Քրիստոսի Ըմբռնման եկեղեցիին աւանդութիւնը. 614–1187

Ըմբռնման եկեղեցին, պարսիկներու արշաւանքին ժամանակ, ահարկու բոցերը լափեցին ու եկեղեցին դարերով մնաց մոխիրի տակ, որուն հետքերը երևան ելան 1920 ի պեղումներու առթիւ, ինչպէս յիշեցինք։ 614 թուականին եկեղեցին կործանուելէ յետոյ, Խաչակիրներէ չատ յառաջ վերաշինուա՞ծ է Մոդեստոսի ձեռքով, չենք կրնար հաստատել ճշդօրէն և բացարձակ կերպով ալ չենք կրնար հերքել. բայց եթէ ան վերականգնուած իսկ ըլլար թ. դարուն, Հաքէմի հակաքրիստոնէական հարուածներուն տակ և կամ Խաչակիրներուն՝ Ս. Քաղաքի մնձեցման պահուն, ներքին տագնապներուն հետևանքով ապահովաբար քանդուած կրնայ ըլլալ։ Ըմբռնման եկեղեցիին քանդումէն վերջ անոր մասին քրիստոնէից աւանդական պարագաները պատմականօրէն տեղափոխուած կը տեսնուին։ Զիթենեաց լերան ստորոտը կատարուած

Քրիստոսի Տնօրինական գործերու կատարումը կը դիտուի որ Զիթենեաց լերան վրայ կառուցուած Աշակերտարանի եկեղեցին մէջ տեղի կ'ունենայ: Աւագ հինգշաբթիի պիշերային թափօրին առաքեալ հա'ն կը կատարուին ու կ'երգուին Յիսուսի մատնութեան և այլ Տնօրինականաց Աւետարանները ու երգերը: Զիթենեաց պարտէզի աւետարանական աւանդութիւնը ժամանակ մը թէև լերան զառիվայրին վրայ փոխադրուած է, բայց քիչ վերջ իր սկզբնական ուղղութեան հետևելով Աւագ հինգշաբթիի պիշերուան նախնական ծրնակարգը սկսած է կատարուիլ Ընթրման եկեղեցիի աւերակներու տեղւոյն վրայ:

Յաչակրաց գալէն մինչև 1112–1120, այս եկեղեցին տակաւին վերաշինուած չէր, ինչպէս կը հասկցուի de Belardo d'Ascoli'ի նոյն ժամանակի Ուղեգրութենէն. ան տեսած էր միայն աւանդական տեղը: Հաւանաբար նոյն թուականէն վերջը վերաշինուած է Ըմբռնման եկեղեցին Ս. Փրկիչ անուամբ: Անանուն լատին հեղինակ մը հետևեալ կերպով կը նկարագրէ այս պարագան. «Այս եկեղեցիէն զատ, (Ս. Կուսի եկեղեցին) կը գտնուի այն տեղը՝ որ կը կոչուի Գեթսեմանի, և ուր կար քարայր մը, հոն Յուդան կատարեց մատնութիւնը, ալ կողմը, քարընկէց մը հեռաւորութեամբ շինուած էր այլ եկեղեցի՝ ուր Յիսուս աղօթեց իր չարչարանքի ժամանակ, և իր քրտինքը արեան կայլակներու նման գետին կը վազէր» (Տե'ս Les Eglises de terre sainte, de Voguë, էջ 414). Նոյնը կը վկայէն Jean de Wurzbourg 1165ին, 1172ին Theodoric, 1177ին յոյն վանական մը Յովհաննէս Փոկաս: Ժդ. դարու յիշատակարան մը "Les Assises de Jérusalem» (Ռ. հար. էջ 531) խորագրով՝ հետևեալը կը գրէ նոյն վանքի մասին. «Զիթենեաց լերան սոորոտը, վանք մը կար որ ժայռի մը վրայ հաստատուած էր և կը կոչուէր Գեթսեմանի. հոն Յիսուս Քրիստոս աղօթեց, մէկ կողմը ճանապարհ մը կայ ուրկէ կ'ելլեն Զիթենեաց լեռը, հոն կար նաև քար մը, որուն մօտ էր վանքը՝ որ կը կոչուէր Ս. Փրկիչ. հոն էր որ Յիսուս Քրիստոս պիշեր ժամանակ ժողովնապեցաւ ու աղօթեց, և հոն էր որ Յիսուսի մարմինը արտասուքն քրտնեցաւ»: Ըմբռնման եկեղեցին մեծ կարևորութիւն կ'ընծայեր Յաչակրաց ժամանակ և կ'ըլլայ հոգևոր կեդրոն Յովսափատի հիւանդանոցին, որուն անդամները իշխանաւորներ էին և ամէն չաբաթ նոյն եկեղեցիին մէջ պատարագ կ'ըլլար հիւանդանոցի բարերարներու հոգւոյն համար, և այս միջնադարեան եկեղեցին գաւիթը կը թաղուէին հիւանդանոցի մեծ բարերարները:

Այս եկեղեցիին հաստատեստ պատերուն կառուցուածքը կը յայտնէ թէ եկեղեցին չինուած էր ա'յն թուականին որ անհրաժեշտութիւն մը կը տիրէր Ս. Խաղաքին պարիսպներէն դուրս գտնուած չէնքերը ամրացնել, վախնալով արշաւանքներէն այն թշնամիներուն որ ժԲ. դարուն մօտեցան մինչև Ս. Խաղաքին դուռները: Բայց երբ իսլամները 1187ին երուսաղէմը գրաւեցին, Քրիստոսի Ըմբռնման եկեղեցիին չվնասեցին. յիշատակարան մը՝ որ գրուած է երուսաղէմի գրաւումէն յետոյ, հետևեալ կերպով կը գրէ այդ մասին. «Զիթենեաց լերան սոորոտը Գեթսեմանի ըսուած տեղը կար եկեղեցի մը, ուր Յիսուս Քրիստոս աղօթեց, եկեղեցիին անունն էր Ս. Փրկիչ. հոն կայանաւորեցին Յիսուսը և հոն էր որ ան արեան կայլակներու նման քրտինք թափեց» (de Voguë, les Eglises de la Terre Sainte, էջ 442):

3. Քրիստոսի Ըմբռնման եկեղեցին հայոց սեպհականութիւն.

Վերոգրեալ յիշատակարանը ցոյց կու տայ թէ Գեթսեմանիի Ըմբռնման եկեղեցին քաղաքին գրաւումէն յետոյ ալ կանգուն էր. մենք հոս ընդհատեցինք նոյն եկեղեցիին պատմութիւնը, վասն զի, 1187ին, Սալահէտտինի երուսաղէմի գրաւումովը ու լատիններուն վտարմամբ Ըմբռնման եկեղեցիին սեպհականութեան վիճակը կը փոխուի. մեծազոյն հաւանականութեամբ հայ միաբանութիւնը կը տիրանայ նոյն եկեղեցիին, յաղթականին հայոց հանդէպ համակրական վերաբերմունքին յայտնի հետևանքովը: Գողգոթայի, Քրիստոսի Գերեզմանին, Ս. Աստուածածնի եկեղեցիին և Ս. Յակոբի վանքին հայոց կողմէ տիրացումը Սալահէտտինի բարեացակամութեան արդիւնք կրնանք նկատել: Հետևաբար Ըմբռնման եկեղեցիին հայոց կողմէ սեպհականութիւնը կ'սկսի 1187էն և կը տեւէ մինչեւ անոր վերջնական կործանումը: Այս 1187էն եւ կը տեւէ մինչեւ անոր վերջնական կործանումը: Այս ենթադրութիւնը անտարակոյս ապացոյց մը չի կրնար ըլլալ ճշմարտութիւնը հաստատելու համար, սակայն մենք կը համարձակինք խոնարհաբար ըսել թէ ունինք այդ մասին պատմական

փաստ մը՝ որ կրնայ զօրացնել մեր վերի ենթադրութիւնը։ Դիժբախտաբար եկեղեց. հայ մատենագրութիւնը ու Երուսաղէմի արդի հայ պատմիչներէն ոչ մին տեղեկութիւն մը կու տան այդ մասին. օտար ուխտաւորներու ուղեգրական գրուածք մը ինձ փաստ կը հայթայթէ պնդելու իմ տեսակէտիս վրայ թէ Ըմբռնման եկեղեցին 1322ին հայոց սեպհականութիւնն էր. ուրախ եմ այդ մասին որ գոնէ քրիստոնեայ ուխտաւորներ յիշատակած են այդ պարագան և իրական փաստով մը երևան կու գայ իմ նախնեաց անծանօթ մնացած աշխատանքը ու Ըմբռնման եկեղեցիին հայկական սեպհականութեան պատմականութիւնը։ Ահա ապացոյցը. 1322ին Արակոնի Յակոբոս Բ. թագաւորը Ս. Երկիր կը ղրկէ տասներկու Դոմինիկեաններ, որոնք յետոյ կը գրեն իրենց Ուղեգրութիւնը գաթալան լեզուով. ահա այն հատուածը որ կը հաստատէ Ըմբռնման եկեղեցիին նոյն թուականին հայոց սեպհական ըլլալը. «Արևելեան դուռնէն սկսեալ, նեռընկէց մը հեռի, կայ տեղ մը ուր կը գտնուի Գեթսեմանիի եկեղեցին, այն տեղը ուր Յուդան մատնեց Յիսուս Քրիստոսը. և կայ հոն ժայռ մը՝ որուն վրայ Յիսուս գրոչմեց իր մատները երբ կալանաւորեցին զինքը։ Այս եկեղեցին տեղւոյն վրայ էր որ Յիսուս աղօթեց, հոն էր որ իր փառաւոր մարմինէն արեան կայլակներ ոլոռն ոլոռն թափեցան և ուր երկինքէն հրեշտակ մը գալով քաջալերեց զՅիսուս։ Կայ հոն սեղան մը՝ ուր Յիսուս Քրիստոսն ըսաւ երեք Առաքեալներուն՝ «արտում է ոգի իմ մինչև ի մահ»։ Այս երեք աշակերտներն էին Յովհաննէս, Յակոբոս եւ Պետրոս։ Այս տեղը կային ևս մեղաւոր եկեղեցի մը՝ ՈՐՈՒՆ ՏԻՐԱՑՈՒ ԷԻՆ ՀԱՅԵՐԸ (Տե՛ս Jérusalem Nouvelle. հտր. Բ., էջ 314–315)։ Եկեղեցին սակայն, 1323էն վերջ քիչ ժամանակ կանգուն կը մնայ։ 1335ին Jaques de Vérone չի յիշատակեր զայն իր Ուղեգրութեան մէջ, ուստի կը կարծենք թէ ԺԴ. դարու կիսուն եկեղեցին քանդուած ու աւերակ եղած էր, ու տեղւոյն աւանդութիւնը փոխադրուած էր Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցիի գաւիթի մօտիկ քարայրը, զոր արևմտեայք կը նկատէին Քրիստոսի մատնութեան և աղօթքի տեղը, մինչ արևելեայք՝ Հայք, Ռուսք և Յոյնք Ըմբռնման եկեղեցիի աւերակներուն վրայ կը շարունակէին կատարել իրենց ուխտը ի յիշատակ Քրիստոսի մատնութեան և աղօթից։ 1483ին Ականմանցի հայազգի Նիկողայոս եպիսկոպոսը այդ ոգւով է որ Ս. Քաղաքի ուխտատեղիներու իր Ցուցակին մէջ նոյն տեղը հետևեալ կերպով կը յիշատակէ. «Քառայրն ուր առաքեալքն ննջեին։ Ծնրադրութեան տեղիքն Քրիստոսի, որ ի քարընկից մի ի քարայրին». ըսել է թէ մինչև ԺԵ. դարու վերջերը Ըմբռնման եկեղեցին աւերակները կը նկատուէին Քրիստոսի մատնութեան վայրը ու վերջին գիշերուան աղօթատեղին։

Ուստի մենք կ'եզրակացնենք թէ Քրիստոսի մատնութեան ու աղօթքի տեղը չորրորդ դարէն յառաջ քրիստոնէից ուխտագնացութեան վայր մ'էր, չորրորդ դարուն չինուեցաւ հոն եկեղեցի մը բիւզանդական կայսրերէն, և ան 614ին կործանուեցաւ պարսիկ արշաւանքէն. Խաչակրաց ժամանակ ալ վերաչինուեցաւ, 1187ին, եւ հաւանաբար Սալահէտտին Երուսաղէմը գրաւեց Ըմբռնման եկեղեցին չնորհեց հայոց, այնպէս որ՝ 1322ին, գաթալանցի ուխտաւոր Դոմինիկեանց պատմական Ուղեգրութեան համաձայն, հայք կը չարունակէին սեպհականաւէրը եղած եկեղեցին որ կը քանդուի ԺԴ. դարու կիսուն, հակառակ նոյն եկեղեցին որ կը քանդուի ԺԴ. դարու կիսուն, որով հայք նոյն եկեղեցին բացարձակ սեպհականաւէրը եղած կ'ըլլան մինչ ու կիս դարէ առեղի։

ԺԹ

ԳԵԹՍԵՄԱՆԻԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Երուսաղէմի մեծ եկեղեցիներէն մին է Գեթսեմանիի հնադարեան եկեղեցին, ուր կայ Ս. Կուսին դամբարանը. նոյն եկեղեցիին սեպհականութիւնը կը վերաբերի Հայոց և Յունաց. բայց Ղպտիները և Ասորիները իբր Հայոց հետևակներ կրնան պաշտամունք կատարել հոն։ Այս տողերով պիտի չանանք բացատրել նոյն եկեղեցիին պատմական ծագումը, անոր զարգացումը, կրած փոփոխութիւնները այլևայլ ժամանակներու մէջ, և յետոյ նկարագրել անոր վերաբերեալ հայկական յիշատակները։

1. Ս. Կուսի ննջման աւանդութիւնը.

Ս. Կուսին մահուան ու թաղման պարագաները Աւետարանի մէջ պատմուած չեն. աւանդութիւնն է որ մեզի կը տեղեկացնէ Յիսուսի մօր մահուան ու թաղման առթիւ տեղի ունեցած յիշատակները: Գեթսեմանիի մէջ կը թաղուի Ս. Կոյսը ու անկէ մարմնով կը վերափոխուի երկինք, ինչպէս կ'ընդունի եկեղեցին. այս մասին որքան Աւետարանի պատմութիւնը ժլատ է, նոյնքան առատ են անվաւերական գրուածքներ, որոնք որքան որ նոր ժամանակներու գործ նկատուին, բայց դարձեալ անոնք հին աւանդութեանց արձագանգները կրնան համարուիլ: Ս. Կուսի ննջման և թաղման տեղւոյ մասին աւանդութիւնը կրկին է, մին Եփեսոսի և միւսը Երուսաղէմի. Եփեսոսի աւանդութեան գլխաւոր փաստը առաւելապէս կը ներկայանայ Եփեսոսի ժողովի (431) հայրերուն սինոդական նամակին մէկ պարբերութենէն, որով նոյն հայրերը կը գրեն Կ. Պոլսի կղերին թէ Նեստորիոսը դատապարտուած է Եփեսոսի մէջ, ուր (կայրին) Յովհաննէս Աստուածաբանը և Տիրամայր Ս. Կոյս Մարիամ...: Ասոնցմէ պարբերութիւնը առկախ ձգուած է և ունի դիտումնաւոր զնդման մը դարձուածքը. այս հատուածը չատ մութ կէտեր կը պարունակէ, և չի կրնար դիմանալ քննութեան: Շատ մը քննիչներուն նայելով՝ Եփեսոսի ժողովի հայրերը մեկնողական ըմբռնումի մը ազդեցութեան տակ հաղորդած են նոյն տեղեկութիւնը Պոլսի եկեղեցիներուն: Եփեսոսի չրջակաները գտնուած վերջին փիւտերը փաստ մը չեն կըրնար ըլլալ Եփեսոսեան կեղակարծ աւանդութեան. հաւանական է որ ան յերիւրուած ըլլայ հակառակ Երուսաղէմի բազմաթիւ և յայտնի աւանդութեանց որ կը պատմուին անվաւերական գրոց մէջ: Եփեսոսի ժողովէն վերջ երկար դարեր լուռ է Եփեսոսեան աւանդութիւնը. իսկ Երուսաղէմինը աւելի աճած ու զարգացած է և ճոխ գրականութիւն մը ունեցած է անվաւերականներու հրատարակութիւններով, որոնց եղրակացութիւնը, ինչպէս նաեւ ժամանակագրութիւնը, և Նոր Կտակարանի լինչ լինչ մասերը մեզ կը համոզեն թէ Ս. Կոյսը ծերացեալ տարիքին մէջ Երուսաղէմ մեռած է և թաղուած է Գեթսեմանիի մէջ և վերափոխուած ի իր գերեզմանէն, որուն վրայ չատ կանուխէն չինուած է եկեղեցի մը: Զեռագիրներու մէջ կը գտնուի անվաւեր գրութիւն մը Թուղթ Դիոնեսիոսի Արիսպագացւոյ առաջին եպիսկոպոսին Աթենացւոց ճառողիին, զոր գրեաց նա պատասխանի թղթոյն Տիտոսի եպիսկոպոսին Կրետացւոց, յաղագս ննջման Սրբոյ Աստուածածնին եւ կուսին խոբագրով. այս գրուածքը թանկագին յիշատակարան մ'է, որ կը գտնուի միայն հայ մատենագրութեան մէջ և կատարելապէս կը հաստատէ Երուսաղէմի աւանդութիւնը: Այս յիշատակարանը հիմը եղած է Մովսէս Խորենացիին անուամբ մեզ հասած «Պատմութեան Թղթոյն Սահակայ» անվաւերական գրութեան՝ որ Ս. Կուսի փոխման վաղնջական աւանդութեան վրայ խմբագրողը աւելցուցած է Բարթողիմէոս առաքելոյն չնորհուած Ս. Կուսի պատկերին պարագան:

2. Ս. Կուսի Գեթսեմանիի բիւզանդական եկեղեցին Երուսաղէմի մէջ.

Բիւզանդիոյ Եւթիմեան պատմութիւնը(*) չատ զրոյցներ կը պարունակէ այս եկեղեցիին չինութեան մասին, զրոյցներ՝ զոր Ը. դարուն Յովհաննէս Դամասկացին մէջ կը բերէ, և պատրիարք Յովնաղի կ'ընծայէ մեծագոյն դեր մը այս եկեղեցւոյ հիմնարկութեան մասին: Յովնաղ չենլով վաղեմի աւանդութիւններուն՝ կը պատասխանէ Մարկիանոս կայսեր բուռն փափաքին՝ որով կ'ուզեր Երուսաղէմէն Պոլիս փոխադրել Ս. Կուսին մարմինը և թաղել Երուսաղէմէն Պոլիս փոխադրել Ս. Կուսին մարմինը և թաղել իր չինած եկեղեցիին մէջ: Յովնաղի դէմքը ծանօթ է եկեղեցական պատմութեան մէջ. իր ժամանակակիցներէն չատերը հակառակ էին իր դաւանաբանական սկզբունքներուն զոր արտայայտած էր Քաղկեդոնի ժողովին մէջ. նոյն իսկ գահազուրկ ընելու պինքը և հալածեցին: Յովնաղ չի կրնար հիմնադիրը նկատուիլ Գեթսեմանիի Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցիին: Որոշ է թէ մինչև Ե. դարու կիսուն Ս. Կուսի Գերեզմանին վրայ եկեղեցի չէր չինուած և Օգոստոս 15ի ծոնին յիշատակութիւնը գոյութիւն չունէր: Վրացերէն սաղմոսական Ծիսարան–Տօնացոյցը որոշ կերպով կը վկայէ թէ Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցին Ը. դարուն արդէն գոյութիւն ունէր: Ասոր հետ կը համաձայնի նաեւ Եղիշէ Վարդապետ Պատմագիրը, որ կը գրէ թէ Վարդան Մամիկոնեան Երուսաղէմ կ'երթայ ուխտի և կը մասնակցի Ս. Կուսի Գերեզմանի տօնին: Ասոնցմէ կը հետեւի թէ Ը. դարուն Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցին կանգուն էր և տօնական հանդէսներ կը կատարուէին անոր մէջ:

(*) Դրած Ե. դարու, հեղինակն է, քանի մը քննիչներու համաձայն, Նիւբեղ Սկիւթոպոլսեցին (Տե՛ս Meistermann, Nouveau Guide de Terre Sainte, էջ 159):

պով հետևեալ ծանօթագրութիւնը կու տայ, Օգոստոս 15, Գեթսեմանիի մէջ, Մարկիանոս կայսեր արքայորը, յիշատակ Ս. Աստուածածնի: Այս տողերէն պարզօրէն կը հասկցուի թէ Գեթսեմանիի Ս. Կուսի եկեղեցին առաջին անգամ հիմնարկած է Մարկիանոս կայսրը. անոր առատաձեռնութեան արդիւնքն է այս սրբավայրը որ ունէր բիւզանդական ճարտարապետութեան ոճը. նոյն եկեղեցին՝ Մարկիանոսէն առաջ գոյութիւն չունենալը բացորոշ կերպով յայտնի է: Դ. դարուն լատին ուխտաւորուհին Էթէրիա երուսաղէմ գտնուելով՝ Ս. Ջատկին ներկայ եղած էր Սւագ Հինգշաբթիի կէս գիշերուան թափօրին, իր Ուղեգրութեան մէջ կը գրէ թէ թափօրը Զիթհնեաց լեռնէն իջնելով կանգ առաւ նախ Հայր մերի եւ յետոյ Բրիսոսի մատնութեան մատուռներուն մէջ, ուր կարդացուեցան պատշաճ ընթերցումներ Աւետարանին: Էթէրիա բնաւ չի յիշեր Ս. Կուսի Գերեզմանին եկեղեցին, Մարկիանոս մեռած էր 457 ին, հետևաբար ուսարտած էր նոյն եկեղեցիին շինութիւնը 453 ին. ուստի նոյն շինութենէն շատ վերջն էր որ՝ 481 ին Պետրոս վրացին կ'այցելէր Երուսաղէմի եկեղեցիները, բայց իր կենսագիրը չի մանրամասներ անոր այս այցելութեան պարագաները: Ե. Դարու այս երկրորդ կիսուն կը կապուի Պաղեստինի մէջ Ս. Կուսի Վերափոխման տօնին հաստատութեան պարագան. նոյն ժամանակին՝ տարակոյս չի կայ թէ անապատական Թէոդոսի բացատրութեան և վերև յիշուած սաղմոսական ծիսարանին համաձայն, Ս. Աստուածածնի յիշատակին հրապուրուած բազմամբոխ ուխտաւորներ Երուսաղէմ կու գային կատարելու համար այս տօնը: Յայտնի ըլլալով Երուսաղէմի ծանօթ Միաբանին առանձնական և տեղական հանգամանքը, պէտք է խոստովանիլ թէ Օգոստոս 15 ի տօնը սաղմոսական ծագում ունէր և կը վերաբերէր Գեթսեմանիի մէջ Մարկիանոսի չինած եկեղեցիին: Այս թուականը վերջնականապէս ընդունուելով Պոլսի մէջ, Մօրիկ կայսեր (582-601) հրովարտակովը պարտադրուեցաւ ուրիշ եկեղեցիներու, որպէս զի նոյն օրը կատարեն Ս. Կուսին Ննջման տօնը (Dormition)· ուրկից որոշապէս յայտնի կ'ըլլայ թէ Ե. դարուն արդէն հիմնուած էր Գեթսեմանիի Ս. Կուսի եկեղեցին:

Զ. դարու վկայութիւնները որքան այս եկեղեցիին կացութեան, նոյնքան Ս. Կուսին Գերեզմանին գոյութեան մասին չատ յստակ են. այդ վկայութիւնները կը քաղենք Théodosius ի, Breviarius ի, Plaisance ի անանուն Ուղեգրութիւններեն, որոնք, ինչպէս նաև Նիջոմեդի Ս. Կուսին անուամբ ծանօթ ասորական թարգմանութիւնները, կը հաստատեն թէ Ս. Կոյսը վախճանած է իր գերեզմանին մէջ. կ'ըսէին նաև թէ գերեզմանը կը բաղկանար երեք այրերէ, առաջինը չատ ընդարձակ, ուրկէ կը մտնէին միջին այրի մը մէջ, որ ունէր չատ փոքր սենեակ մը, որուն աբևելեան կողմը կը գտնուէր կաւէ նստարան մը: Բայց Նիջոմեդի Ս. Կուսին հայերէնը չունի այդ մանրամասնութիւնները և որչափս կը գրէ թէ Ս. Կոյսը իր տանը մէջ վախճանեցաւ, և յետոյ կը յիշէ անոր թաղման և վերափոխման պարագաները: Հընագոյն ուղեգիրները կը յայտնեն թէ այն տունը՝ ուր վախճանեցաւ Ս. Կոյսը, Ս. Սիոնն է. ան տեսակ մը կրօնական թանգարանի ձև առած էր: Մոտեստոսի և Սոփրոնիոսի օրով Ս. Կուսի Ննջման աւանդութիւնը աւելի ճոխացած է և անով աւելի հաստատուած է Երուսաղէմի աւանդութիւնը: Նոյն թուականներուն Սիոնի մէջ ցոյց կու տային ա՛յն վէմը՝ որուն վրայ տապածուած էր Ս. Կոյսը իր օրհասի պահուն. անոր կարծր խըշտեակն ալ հոն բերուած էր ուրիշ տեղէ, և է. դարուն արդէն Արգուլֆ եպս.ին գծած Սիոնի ընդարձակ եկեղեցիին յատակագիծը ցոյց կու տայ ա՛յն տեղը ուր Ս. Մարիամ վախճանած էր, և թէ նոյն եկեղեցիին իւրաքանչիւր անկիւնը նուիրագործուած էր ո՛ւևէ յիշատակով մը:

Գեթսեմանիի Ս. Կուսի այս եկեղեցին պարսիկները կործանեցին երբ յարձակեցան Պաղեստինի վրայ է. դարու սկիզբը: Կէս դար ետոյ, Արգուլֆ եպս.ի Ուղեգրական պատմութիւնը ցոյց կու տայ մեզ թէ եկեղեցին վերաշինուած է, և թանկագին տեղեկութիւններ կը հաղորդէ Ս. Կուսի Գերեզմանին և վերնայարկ տաճարին յօրինուածքի մասին: Ասորական հին ժամանակագրութեան մը համաձայն, Մուավիէ խալիֆան, երուսաղէմ այցելած ժամանակ, Թողգոթայի մէջ աղօթելէ յետոյ ուխտ ըրած է նաև Գեթսեմանիի Ս. Կուսի եկեղեցիին: Ապտիւլ Մէլիքը նպաստաւոր չի գտնուեցաւ: Երբ ան 690 ին Մէքքէի տիրանալով՝ իր ղօրապետը՝ Էլհաճաճ նորոգել սկսաւ Քեապէի նշանաւոր սրբավայրը, մտածեց անոր ղրկել «Ս. Գեթսեմանիի սիւները», բայց պաղեստինի երեւելի երկու քրիստոնեայ պաշտօնեաներ համոզեցին Ապտիւլ Մէլիքը եւ խոստացան անոր ղրկել Յուստինիանոս

Բ.էն ստացուած սիւները, փոխարէն անոնց՝ որոնց կը փափաքէր խալիֆան։ Թ. դարու սկիզբը այս եկեղեցին տակաւին չէր կործանուած։ 808ի Պաղեստինի մէջ կազմուած Commemoratorium de casis Dei անուամբ չիշատակարանին մէջ կը կարդացուի որ Յովսափատի այս եկեղեցիին մէջ կային, բացի վանականներէ, քսան և վեց կոյսեր։ Նոյն թուականին Եպիփան վանականն ալ կը գրէ թէ Գեթսեմանիի մէջ կը գտնուէին հարիւր կոյսեր, որոնց իր խցիկէն ուղղութիւն կու տար մենակեաց մը՝ իր պատուհանէն դիտելով։ Այս կոյսերուն յատուկ էր Գեթսեմանիի վերնայարկ եկեղեցին՝ ուր կը պահպանէին Տիրամօր Գերեզմանը։

3. Գեթսեմանիի Ս. Աստուածածին եկեղեցին Խաչակրաց ժամանակ.

Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցին ԺԱ. դարուն քանդուած էր, հաւանաբար Խաչակիրներուն կողմէն Երուսաղէմը պաշարուած ժամանակ. վասն զի նոյն դարու ժամանակագիրներէն յայտնի է թէ Խաչակիրները Երուսաղէմ մտնելէ յառաջ քանդուած էին քաղաքին պարսպէն դուրս մնացած սրբավայրերը, որոնցմէ մին էր Ս. Աստուածածնի եկեղեցին, որ թէև կործանուած էր, բայց Ս. Կուսի Գերեզմանը անպաշտպան կը մնար։ Լատին գրաւման առաջին տասը տարիներու մէջ նոյն տաճարը աւերակոյտ մ'էր։ 1106ին Դանիէլ վանահայր իր այցելութեան առթիւ կը նկարագրէ թէ «փայտեայ տանիքով մեծ եկեղեցի»ին աւերակներուն դիմացը կը գտնուէր։ Ֆրանկ յաղթականը՝ Godefroy de Bouillon Ս. Քաղաքին գրաւումէն յետոյ մտադրեց վերաշինել կործանեալ տաճարը. անոր հրաւէրին ընդ փոյթ առատաձեռնութեամբ պատասխանեցին իշխանազունները և կղերականք, և իսկոյն 1112ին գործի սկսան, Ս. Կուսի Գերեզմանի պահպանութիւնը կազմակերպութեան տակ առնուեցաւ, 1130ին ալ տաճարին վերաշինութիւնը աւարտեցաւ։ 1154ին Իտիրիս՝ Գեթսեմանիի մէջ այցելութիւն կու տար Սիրիոյ Մայրիանին նուիրուած մեծ և գեղեցիկ եկեղեցիին։ Կեդրոնի խորը մասնակի կերպով այժմս տեսնուած այս եկեղեցիին վերաշինութեան թուականը տարակոյսէ առարկայ չի կրնար ըլլալ։

Այս յիշատակարանին պահպանութիւնը կը դիւրացնէ միջին-դարեան նկարագրութիւններուն իմաստը։ Համեմատելով զանոնք այժմու վիճակին հետ, ընթերցողը պիտի տեսնէ թէ Ս. Կուսի դամբարանը չորգելով մէկտեղ, Խաչակիրներէ վերջ տեղի ունեցած քանդումները կատարուած են աւելի տաճարին ներքին զարդարանքներուն և ճակատի մէկ քանի կէտերուն վրայ։ Կը թուի թէ եկեղեցին իր առջևը ունէր դաւիթ մը, ուր՝ Խաչակրաց օրով, թաղուած են մէկ քանի անուանի իշխաններ. դաւիթին դոյութիւնը կը հաստատեն ոչ միայն նոյն ժամանակի կրօնական ճարտարապետութեան անհրաժեշտութիւնները, այլ նաև տաճարին արտաքին դրան արդի ձևը, վասն զի յայտնի կ'երևի որ հոյակապ և մեծղի դուռը այժմ կը տեսնուի և նոր վերհպումներով պզտիկցած ու այլանդակուած է։ Երուսաղէմի հին յատակագիծէն կամ 1178էն սկսեալ Յովսափատի մեծաւոր Յովհաննէսի կնիքէն կը հասկցուի թէ Ս. Կուսի տաճարին դաւիթը ունէր կոնաձև երկու տանիքներ կամ երկու փոքր գմբէթներ։ Այս պարագան կը հասկցուի նաև Theodoric ի Ուղեգրական պատմութենէն։

Միևնոյն ուխտաւորը կը նկարագրէ նաև վերնայարկ եկեղեցին՝ ուր վարէն կ'ելլէին այնքան սանդուխներէ՝ որքան որ կ'իջնէին Ս. Կուսին Գերեզմանը երթալու համար։ Նոյն եկեղեցիին վերև չինուած մեծաւորին կնիքին ներկայացուցած Ս. Կուսի տաճարին չինուածքը՝ Քրիստոսի Գերեզմանին զանգակատան նման բոլորածիր և ցցուն գմբէթ մը ունէր։ Հոն չինուած էր տեղացի քրիստոնեաներուն յատուկ սեղան մը։ Վերնայարկ եւ տեղացի քրիստոնեաներուն այս կերպ բաժանումը՝ որ արտօրնայարկ երկու եկեղեցիներու այս կերպ բաժանումը՝ որ արդէն աւանդութեամբ ալ կը հաստատուի, ինչպէս կը գրէ նաև մեր Երուսաղեմացի Հաննէ պատմագիրը (էջ 272), թոյլ կու տար որ զանազան դաւանութեամբ քրիստոնեաներ իրենց կրօնական պաշտամունքները կատարեն և անմասն չմնան Ս. Կուսի Գերեզմանէն։ Դաւիթին սեպաձև բարձր պատերը և ամրաչէն հզօր աշտարակները կը պաշտպանէին սրբավայրը և վանականաց խուցերը թշնամիներու յարձակմանց դէմ։

Ս. Կուսի Գերեզմանը բնական էր որ ամենէն աւելի կը գրաւէր ուշադրութիւնը ճանապարհորդին որ քառասուն աստիճան ընդարձակ սանդուխէն վար իջնելով կը հիանար այն որմաճան

նկարներուն՝ որ կը ծածկէին կամարները և պատերը, մանաւանդ պատկէս Ս. Կուսի Ննջման և յուղարկաւորութեան այն տեսարաններուն՝ որ գծուած էին նկարչութեան բիւզանդական Ուղեցոյցի կանոններուն համեմատ և ներշնչուած ըլլալով անվաւերական պատմութիւններով, կը ներկայացնէին թէ Յիսուս Տիրամօր հոգին իր բազկացը մէջ առած էր, արտասուաթոր աչքերով առաքեալք չըլսապատած էին դագաղը, Յեփոնիա հրեան (ըստ Յայտնութեան, Սոփոնիա քահանայ) իր երկու ծայրատեալ բազուկները (moignons) դէպ իր մարմինը կը քաշէր, մինչ իր երկու կտրուած ձեռքերը գետնին վրայ կ'երեւնային. հրեշտակն էր որ պատժած էր Յեփոնիայի յանդուգն սրբապղծութիւնը: Երկու դուռներ կը բացուէին վարի սրահներուն ներքնակողմը: Մին՝ արեւելեան կողմը, որ հաղորդակցութիւն ունէր Գեթսեմանիի այրին հետ, միւսը՝ արեւմտեան կողմը, կը ներկայացնէր ա՛յն մուտքը ուրկէ առաքեալք Ս. Կուսին մարմինը փոխադրեցին: Աւելի վարը, երկու փոքր մատուռներ կը պարունակէին իշխանական գերեզմաններ: Այ կողմինը՝ ամենէն նշանաւորն էր, վասն զի հոն թաղուած էր Մելիսանտ թագուհին, դուստր Պաղտին Բ.ի և կինը Foulques'ի՝ Երուսաղէմի երրորդ թագաւորին, մեռած 1161ին: Երկաթէ վանդակապատ մը կը պահպանէր ա՛նոր չիրիմը: Բաց ատոր, հաւանաբար ձախ կողմի մատրան մէջ թաղուեցաւ Մարիամ՝ Պաղտին Բ.ի կինը, Կոստանս՝ Անտիոքի իշխան Պոէմոնտ Գ.ի մայրը, իր եղբայրը՝ Ռընօ և քոյրը Յիլիպպա:

Կուսին Գերեզմանին մօտ կային մաղթողական երկու արձանագրութիւններ և Ցերոնիմոսի և Ս. Բարսեղի պատկերները, որ կը կրէին գրապանակներ՝ որոնց առաջնոյն վրայ կը կարդացուէին Ցերոնիմոսի նամակներէն մասեր՝ Ս. Կուսի Գերեզմանին վերաբերեալ, իսկ երկրորդին վրայ՝ ոտանաւոր հատուած մը՝ որով Ս. Բարսեղ կը հերքէ Ցուլիանոս կայսեր անբարյտութիւնը: Ստորերկրեայ եկեղեցիին դասը որուն կեդրոնը կը գտնուէր Ս. Կուսին Գերեզմանը, ցոյց կու տար վերափոխման տեսարանը Օգստ. 15ի տօնախմբութենէն առնուած բազմաթիւ համարներով:

Մարմարներ և մոզայիքներ կը զարդարէին Ս. Կուսին Գերեզմանը, որուն ներքին բաժանումը խնամքով նկարագրուած է Ռուսաղէմի Դանիէլ կրօնաւորին կողմէն, հետեւեալ տողերով. «Այս

Գերեզմանը, որ չինուած է հովտի մը մէջ, ժայռին մէջ փորուած փոքր այր մ'է. ունի այնպիսի ցած դուռ մը, ուրկէ մարդ մէջքը ծռելով հազիւ կարող կ'ըլլայ մտնել: Այրին խորը, դրան դէմ, ժայռին մէջ կը տեսնուի փոքր նստարան մը, որուն վրայ դրուած է երանեալ Կուսին և Տիրամօր մարմինը, և ուրկէ վերափոխեցաւ յերկինս: Այս այրը գրեթէ մարգու մը բարձրութիւն ունի, չորս կանգուն լայնութիւն և նոյնքան ալ երկայնութիւն. այրին ներսի կողմը մարմարեայ գեղեցիկ քարերով զարդարուած փոքրիկ մատուռ մը երեւոյթն ունի: Ճիշդ Քրիստոսի Գերեզմանին նման կամարներով և սիւներով զարդարուած էր Ս. Կուսին Գերեզմանը և պսակուած ոսկիէ և արծաթէ պատուական անօթներով: Ճոխագոյն պսակակալի մը նման՝ Ս. Կուսին Գերեզմանը չըլսապատող վերնախարսխին վրայ կային արձանագրութիւններ: Բայց Ս. Աստուածածնի եկեղեցիին այս բոլոր նշխարները տեսական չեղան. 1187ին Սալահէտտինի յաղթութենէն յետոյ, տեղւոյն եկեղեցական բոլոր մասերը, հիւանդանոցը, վերնայարկ եկեղեցին քանդուեցան և անոնց բոլոր նիւթերը գործածուեցան քաղաքին պարիսպներու խրամատները նորոգելու համար: Ս. Կուսին Գերեզմանը և անոր մուտքը՝ մերկացած ու կապտուած ամրաշէն աշտարակներէն եւ ընդարձակ գաւիթէն, քանդումէն ազատ մնացին, բայց ջնջուեցան Գերեզմանի չուրջը և պատերուն վրայ գտնուած զարդերը: Ինչ յետոյ եկեղեցիին բոլոր դուռները քարով հիւսեցին, բացի հարաւի մեծ դուռնէն, որպէս զի ուխտաւորներու մուտքի տուրքը ղեւրուդ

անոր գեղեցիկ զարդերը ու նկարները խափան ջնջուեցան, եկեղեցին հոյակապ գաւիթը ու դրան աշտարակները ու ամրութիւնները վար առնուեցան և չէնքը մնաց իր մերկ ու անշուք պատերովը. պատուհանները հողի տակ մնացին և այն լուսաւոր եկեղեցին մնաց մութի մէջ. կեդրոնի Զորին հեղեղները հողի տակ թաղեցին եկեղեցիին ստորին մասը: Ահա՛ Տիրամօր Գերեզմանի եկեղեցիին այժմու վիճակը: Բայց այս եկեղեցիին վրայ գործուած յաջորդական բոլոր քանդումներու ժամանակ անաղարտ մնացած է Ս. Կուսի Գերեզմանը, որ կը մնայ իբր սրբազան խորհրդանշան մը քրիստոնէական եկեղեցւոյ հաստատութեան:

4. Գեթսեմանիի Ս. Աստուածածնի Գերեզմանի եկեղեցւոյ հայկական յիշատակները.

Վերեւ Ս. Աստուածածնի Գերեզմանի եկեղեցիին ծագումը, զարգացումը և այլեւայլ փոփոխութիւնները չանցինք բացատրել. այժմ կը փափաքինք նկարագրել անոր վերաբերեալ հայկական յիշատակները:

Մեր եկեղեցական մատենագրութիւնը Սուրբ Տեղեաց եկեղեցիներու պատմական մանրամասնութեանց մասին յայտնի է թէ խիստ ժլատ է: Գեթսեմանիի Ս. Աստուածածնի եկեղեցիի վերաբերութեամբ ալ գրեթէ չունի մեզ տալու ճոխ ու լիագոյն յիշատակներ: Գտնուածները հոս պիտի չանանք ամփոփել: Մենք վերեւ յիշեցինք և հաստատեցինք թէ Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցին չորրորդ դարուն տակաւին հիմնարկուած չէր, ինչպէս յայտնի կ'ըլլայ Էթէրիայի Ուղեգրութեան բովանդակութենէն: Քրիստոնեայք Աստուածածնի գերեզմանին ուխտագնացութիւն կ'ընէին, և թերեւս փոքրիկ աղօթարան մըն ալ չինուած ըլլայ հոն, բայց տակաւին չինուած չէր հոյակապ մայր եկեղեցին. ան հինգերորդ դարու չինութիւն մըն էր. այս պարագան յայտնի կ՚ընէ մեր Խորենացիին ընծայուած «Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց» գիրքէն (էջ 299): Դայիանէի առաջնորդութեամբ Հռիփսիմեանք Հռոմէն փախչելով կը հասնին Աղեքսանդրիա, ուրկէ կը ճամբորդեն Երուսաղէմ Ս. Տեղեաց երկրպագութեան համար, «և երթեալք ի յայրն, աղօթս և պաղատանս մատուցանէին առաջի Սրբուհւոյն, օգնել կուսին վտանգելոյ և փախուցելոյ, որ եղեւ նորա աղախին ի մանկութենէ: Եւ գնացեալ անտի ի Գեթսեմանի ի Գերեզման Աստուածածնին և անդ աղօթելով . . .: Եւ երկրպագելով Աստուածածնին և բազում արտասուս հեղեալ, մնալով անդ ամսօրեայ ժամանակաւ»: Այս տողերէն կը հասկըցուի որոշապէս թէ Հռիփսիմեանց ուխտագնացութեան ժամանակ տակաւին չէր չինուած Գեթսեմանիի եկեղեցին:

Մեր պատմագիրներէն Մովսէս Կաղանկատուացին (Է. դար) Երուսաղէմի եկեղեցիներու չինութեանց մասին ունի հատուած մը (էջ 420–23) հետեւեալ վերնագրով. «Վասն որ ի Սուրբն Երուսաղէմ եկեղեցւոյ շինուածի թուով եւ հիմնադրելով, եւ ստոյգն գտցես անդանօր»: Այս գրուածքը թանկագին յիշատակարան մըն է չորրորդ դարու Կոստանդինեան արքայավայել եկեղեցական շինութեանց: Աւսոր հեղինակը հինգերորդ դարու հայ ուխտաւոր մըն է և ժամանակակից լատին կուսան Էթէրիայի և կրտսերն Մելանիայի: Կաղանկատուացին մեծ ծառայութիւն մը մատուցած է Ս. Տեղեաց հոյակապ սրբավայրերու պատմութեան՝ իր գիրքին մէջ պահելով այս պատուական յիշատակարանը, որ նոր լոյս մը կը սփռէ Կոստանդինեան կայսեր չինած եկեղեցիներու հիմնարկութեան մասին, կ'ամբողջացնէ լինչ որ Եւսեբիոս և Էթէրիա մեզ կը պատմեն այդ շինուածքներու, մասնաւորապէս Ս. Յարութեան Տաճարին և Մատրան կամ Գողգոթայի վերաբերութեամբ. միայն թէ սկզբնական յիշատակարանը կրած է յետոյ երկու ձեռնմխութիւններ, կամ լաւ ևս, երկու յաւելուածներ:

Մենք արդէն յիշեցինք Ս. Կուսի յուղարկաւորութեան ժամանակ հրեայ Յեփոնիա (կամ Սեփոնիա) քահանային արարքը ու Գեթսեմանիի եկեղեցւոյն որմանկարներուն մէջ տեսնուած նկարչական տեսարանները. այդ մասին վերեւ յիշուած յիշատակարանը կը գրէ հետեւեալը. «Եւ յայնմ տեղւոջ ուր զսուրբ կուսին դագաղն կալաւ հրեայն արտաքոյ խաղաքին չեղաւ բաղել՝ գնդիր կապեալ՝ ի չորից սեւացն, եւ սեւաց սրինձի խաչ ըզգեցուցեալ, որ եւ մարեալ՝ ի չորից սեւացն, եւ անտի ցվայր 250 քառակ աստիճանիւ մինչեւ ցսուրբ գերեզման կուսին որ ի ձորն Գեթսեմանի, եւ անտի մինչեւ ի վեհան Զիթենեաց ուստի վերացաւ Քրիստոս 800 աստիճանիւ»: Այս հատուածին մէջ ակնարկուած քառասուն չէնքէն մինչեւ Գեթսեմանիի ձորն չինուած քարէ աստիճանները կը յիշուին, բայց չի յիշատակ-

ուր Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցին, փաստ մը որ կ'ապացուցանէ յիշատակարանի հինգերորդ դարու գործ մը ըլլալը ու այն եկեղեցիին չինուելեան հինգերորդ դարու կիսուն կատարուած ըլլալը: Յիշատակարանիս նշանակած այս չէնքը բնականաբար կործանուած է Պարսից յարձակումներու ժամանակ: 723ին Willibald ուխտաւորը կը գրէ թէ «տեսած է մեծ սիւն մը՝ որ իր վրայ կը կրէր խաչ մը և ցոյց կու տար ա՛յն տեղը ուր Հրէայք ուզեցին յափշտակել Ս. Կուսին մարմինը» (Տե՛ս Nouveau Guide de Terre Sainte, էջ 115): Այս սիւնը կը մնար այն ճամբուն վրայ որ կ'երկարէր Ս. Կուսի տունէն մինչև Գեթսեմանիի պարտէզը և յիշատակ մըն էր պատահած դէպքին:

Ս. Աստուածածնի տանը մասին մեր Երուսաղիմացի Յովհաննէս եպս. (Հաննէ, ✠ 1733) իր Պատմ. Երուսաղէմի գործին մէջ (էջ 250) կը գրէ. «Աստի (Գեթսեմանիի) ի վայր դէպ յարեւելս գոյ ատ մի, եւ ի ծայր անկեան ատին գոյր սիւն մի նշանագրեալ յաղագս հրաշից եւ այժմ աւերեալ են ուր հանդիպեցան Հրեայքն». այս տողերն ալ կը հաստատեն վերոգրեալ յիշատակարանը, որ այժմ անյայտ է:

Գեթսեմանիի եկեղեցիին հայկական յիշատակարանաց կարգին կարելի է դասել Ձեռագիր Ցայսմաւուրքի մէկ հատուածը (Տաշեան Ցուցակ, էջ 566), ուր կը կարդանք. «Մեծի եւ փառաւորեալ նիջման աննմանելի սուրբ Կուսին Մարիամու Աստուածածնին: Պատ եւ արժան է գիտել զգրեալ զսքանչելին՝ որ եղեն ի նիջման աննմանարքունւոյ Աստուածածնի, զոր գրեաց Յովհաննէս առաքեալ եւ աւետարանիչն, եւ հետնուածող հետեւիկոսք պղպղեցին»: Այս ձեռագիրը, որ 1591ին ընդօրինակուած է Յովհաննէս գրչին ձեռքով Սուաքել եպս.ին համար և տեղը յայտնի չէ, ունի հետաքրքրական ներածութիւն մը, որուն մէջ կը կարդանք. «Զոր սուրբ Հարք և կաթողիկէ եկեղեցի զնաարդախութիւնն (— այլայլեալ Ննջումը —) անփոյթ սրարին, և որպէս ճշմարիտ լեալ ընդունէին և ընթեռնուին: Եւ յետ ժամանակաց սրբասնեալ եպիսկոպոսապետան Թեսաղոնիկոյ գնաց յԵրուսաղէմ, և մըտեալ ի Գեթսեմանի՝ եգիտ ի վաղնջուց ժամանակաց ի գիրս նշանագրով զպատմութիւն նիջման ամենասրբուհւոյ Աստուածածնին...»: Նեռածութեան մէջ յիշուած Թեսաղոնիկոյ եպիսկոպոսապետին անունը չի յիշուիր ո՛չ թարգմանչին և ո՛չ ալ ընդօրինակողին կողմէն, և ո՛չ ալ յայտնի է այս Նիջումն ըսուած ճառին թարգմանութիւն ըլլալը:

M. Jugie կը լուսաբանէ մեզ (Տե՛ս Echos d'Orient, 1922, էջ 293–307, 1923, էջ 385–397) իր ընդարձակ ուսումնասիրութեան մէջ գրելով Յովհաննէս եպս. Թեսաղոնիկեցիին կենսագրութիւնը. կը վերլուծէ նաև անոր Նիջումն Ս. Կուսի անունով ճառը: Այդ տողերէն կը հասկցուի թէ Յովհաննէս Թեսաղոնիկեցին կ'ապրէր է. դարուն և եպիսկոպոսն էր Թեսաղոնիկէի եկեղեցիին. ան տեսնելով որ իր նախորդները զանց ըրած էին Ս. Աստուածածնի տօնին հաստատութիւնը Թեսաղոնիկէի մէջ, մինչ ուրիշ տեղեր առ հասարակ կը կատարէին նոյն տօնը, կը փափաքի որ Թեսաղոնիկէի մէջ ալ կատարուի տօնը, ուստի նկատի կ'առնու Նիջումն Ս. Կուսի ճառը զոր Յովհաննէս Աւետարանիչը գրած էր, և կը տեսնէ որ հերետիկոսներ այլայլած են զայն և խարդախած, չայլայլուած կտորները հանելով կը վերահաստատէ աւանդական պատմութիւնը ու կը հաստատէ տօնը: Յովհաննէս եպս.ին յուշարէն ձեռագիրը գտնուած է Ժ. դարուն Պատմոսի մատենադարանին մէջ և վերջին տարիներուն ալ հրատարակուած է. բայց մենք չենք գիտեր թէ ե՞րբ հայերէն թարգմանուած է եւ ո՞վ է թարգմանիչը. բայց ներածութեան հայերէն թարգմանութեան մէջ տեղեկութիւն մը կայ որ կը պակսի յունարէնին մէջ եւ չի յիշուիր թէ Նիջումն Ս. Կուսին հարազատ ճառը գտնելու համար Թեսաղոնիկեցւոց եպս.ը Երուսաղէմ եկած եւ Գեթսեմանիի մտնելով գտած է հին ժամանակներէ գրուած ՆՆՋՈՒՄՆ Ս. ԿՈՒՍԻ Պատմութիւնը, ինչ որ կ'ապացուցանէ հայ թարգմանչին առաւելագոյն հմտութիւնը այս մասին:

M. Jugieի յիշեալ յօդուածէն կը հասկցուի թէ Յովհաննէս եպս. Թեսաղոնիկեցին ո՛ր աղբիւրներէն կազմած է իր այդ ճառը. մեր նպատակէն դուրս է հոս մանրամասնել այդ պարագան բայց պէտք է յիշենք թէ Թեսաղոնիկեցւոց եպիսկոպոսը իր մատենագրական ճոխ արդիւնքներով ու եկեղեցական գործերով մեծ համբաւ մը չահած է իր դարուն, և այդ պատճառաւ է որ մեր նախնիք, հաւանաբար Ժ. դարէն վերջ, հայերէնի վերածած են իր այդ ճառը, թէև անոր անունը անծանօթ թողուցած են ճառին նեռածութեան մէջ. բայց M. Jugieի ուսումնասիրութեան չնորհիւ այլևս յայտնի կը նկատուի այդ ճառին հեղինակին անունը:

Ինչպէս յիշուեցաւ, Ս. Աստուածածնի եկեղեցին մէջ, թէ՛ բիւզանդական և թէ՛ Խաչակրաց չրջաններուն Երուսաղէմի բոլոր քրիստոնեայ համայքները պաշտամունք կը կատարէին. ա-բաբական տիրապետութեան տակ ևս նոյնը կը չարունակուէր. թէև Սալահէտտինի յաղթութենէն յետոյ, 1187ին լատին պատրիարքը իր բոլոր կղերովը ստիպուեցաւ Երուսաղէմէն հեռանալ, բայց ժամանակ վերջը դարձեալ Ս. Տեղեաց մէջ հաստատուելով նոյն սրբավայրին մէջ, ինչպէս կը յիշէ պատմութիւնը, ղրկուած չէր կրօնական պաշտամունքներէ: Նոյն տաճարին սեպհականատիրութիւնը մեր ձեռագրաց յիշատակարաններէն յայտնի կ'ըլլայ որ, մանաւանդ Սալահէտտինի յաղթութենէն վերջ, պարզապէս Հայոց ձեռքը մնացած է. թէև այդ մասին ալ վէճեր չեն պակսած. հետևեալ պատմական պարագաները կը հաստատեն դայդ.

1. կարապետ վրդ. Երուսաղիմացին՝ 1230ին տեսնելով որ Գեթսեմանիի եկեղեցին անձրևները խիճերով, քարերով և հողով լեցուցած են, այնպէս որ մէյայն Ս. Կուսին Դերեզմանը կ'երևէր, մաքրել կու տայ մշակներուն, փակել կու տայ տեղւոյն խորշերը և բաւիղները, զոր ամիլիկները դրուիլ դժոխոց կը կոչէին:

2. Մարտիրոս Պատրիարք Եգիպտացի՝ 1421ին կը նորոգէ Գեթսեմանիի Ս. Աստուածածնին եկեղեցին, անոր յատակը ու տանիքը կը յարդարէ սալով. ըստ Հաննէ վրդ.ի պատմութեան (էջ 272), անոր յիշատակարանը գրուած է եկեղեցիին գրսի մեծ դրան աջակողմը, հետևեալ կերպով. «Ի Հայոց թուականին ՃՃՀ (= 1421), ես Տր. Մարտիրոս Արեպիսկոպոս Երուսաղէմի, վասն բազում ջուրցն որ լցուէր յեկեղեցին, սաղ կապեցի, գմիջն և զսենիրն շինեցի: Ծիշտն առնիմ զիս արժանի, և յիշողացդ տրն. ողորմի»: Բայց այդ արձանագրութիւնը չ'երևիր այժմ, վասն զի տաճարի դրան վտառաւոր կամարը քարերով հիւսուած է և մուտքը նեղացուցած են, ուստի նոյն արձանագրութիւնը կամ չընդունեցաւ և կամ քարերու տակ ծածկուեցաւ: Այս առթիւ պէտք է յիշել թէ Հաննէ (էջ 272) սա տեղեկութիւնն ալ կու տայ. «Այս փառաւոր Ս. Եկեղեցիս՝ յաւուրկ էր ազգիս Հայոց, որպես ի յորմէն եկեղեցւոյն երևին յիշատակարանիք նորոգողացն և թուականիք երկաթագիրք, որ յաթին չուառար գչարեցաւ յայսմ պատճառի, եւ կռանաւ եղծեաց զաղտ յուսիկ զգիրսն»: Մարտիրոս պատրիարքին նախորդը, Պողոս Պռաֆնեցին (յետոյ կաթողիկոս), 1413ին կը գնէ Գեթսեմանիի ձիթենեաց պարտէզը, որ ցայժմ սեպհականութիւնն է Ս. Յակոբայ:

3. Անդրեաս Պատրիարք Մերտինցի՝ 1549ին կը մաքրէ Գեթսեմանիի եկեղեցին ու գատաւորին հրամանովը մարմարիոն քարերով կը նորոգէ Ս. Կուսին Դերեզմանը:

4. Տեղացիք 1584ին արգելք կը յարուցանեն Հայոց Գեթսեմանիի եկեղեցիին մէջ պաշտամունք կատարելու. Խաչատուր և Փիլիպպոս եպիսկոպոսները մայրաքաղաքին մէջ կը գիմեն կայսեր և կ'ստանան հրովարտակ՝ ըստ առաջնոյն չարունակելու եկեղեցական պաշտամունքը:

5. 1650ին ալ դարձեալ նոյն եկեղեցին ջրով կը լեցուի, այս անգամ Հայք, Յոյնք և Լատինք կը մաքրեն եկեղեցին, ուր ջուրը մինչև սեղանները բարձրացած էր և գաւթին մէջ դիզուած հողը կը պարպեն:

Վերև յիշուած ցուցումներէն չորսը յայտնի կը վկայեն թէ Ս. Աստուածածնի Դերեզմանի եկեղեցին հայկական սեպհականութիւն մըն էր. հաւանական կը թուի որ Հայոց չնորհուեցաւ նոյն եկեղեցին 1187էն սկսեալ, երբ Սալահէտտին Երուսաղէմը գրաւեց և Լատինք մերժուեցան քաղաքէն ու Ս. Տեղերէն: Քրիստոսի Ս. Դերեզմանին՝ Սալահէտտինի կողմէն Հայոց չնորհուելու պատմական պարագան (Տե՛ս Սիոն 1929, էջ 172) կը քաջալերէ մեզ որ ճշդութիւն մը նկատենք Գեթսեմանիի եկեղեցիին Հայոց սեպհական ըլլալը, մանաւանդ որ նոյնը կը հաստատեն վերև նշանակուած պատմական արձանագրութիւնները, որով սա եզրակացութեան կու գանք թէ Ս. Աստուածածնի տաճարը ԺԲ-ԺԶ դար Հայոց ձեռքը կը գտնուէր:

Քաղաքական ազդեցութիւններու հետևանքով սակայն, յետոյ Յոյներն ու Լատիններն ևս միջամտեցին և Հայոց հետ սեպհականատէր դարձան նոյն տաճարին: 1758ին Յոյները համարձակեցան հրովարտակով տաճարին սեպհականութեան մասնակցութենէն դուրս հանել Հայերը և Լատինները, բայց Հայք մէկ տարի աշխատեցան Յունաց անիրաւութիւնները հերքելու և յաջողեցան ձեռք բերել իրենց կորուսած իրաւունքը. իսկ Լատինք չյաջողեցան: Հիճրէթի 1228 թուականին Սուլթան Մահմուտ չնորհած կրկին հրովարտակներով Հայք և Յոյնք սեպհականատէր եղած են Ս. Կուսի նոյն տաճարին, իսկ Հայոց հետևակ Ղպտիները և Աստիները հոն կրնան պաշտամունք կատարել, ինչպէս յիշած ենք:

Ս. Աստուածածնի տաճարին մէջ Հայոց սեպհական տեղերն են. 1.— Ս. Յովհաննէս Կարապետը. 2.— Տեսի սեմեակը. 3.— Եկեղեցիին արեւմտեան թեւը. 4.— Աւազ սեղանը զոր շինել տուած է Հեթում Բ. 1300ին. 5.— Ս. Բարթողիմեոսի եւ Թադեոսի սեղանը. 6.— Ընծայման սեղանը. 7.— Լուսարարի ննջասենեակը։

Ընկերովի սեպհականութիւններն են. 1.— Արտաքին գաւիթը, զոր Հաննէ (էջ 264) կ'անուանէ Գրունի. 2.— Տաճարին արտաքին դուռը. 3.— Ս. Աստուածածնի Կարեզմանը. 4.— Զգեստաւորելու տեղը. 5.— Ջրհորը, թէեւ առաջ Հայոց կը պատկաներ։ Այս ընկերովի սեպհականութիւններուն մէջ Հայք ունէին նաեւ որոշ իրաւունքներ, որ չատ կանուխէն համաձայնութեամբ կանոնադրուած են։

Հոս զանց կ'ընենք նկարագրել այն հայկական իրաւունքները որ կը վերաբերին կանթեղներու, չարաններու և ջահերու, պատարագելու կարգին և հանդէսներու, նաեւ աւելածութեան մասին։ Անոնց մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ ընկերովի սեպհականութեանց կանոնագրեալ որոշ իրաւունքները տեսնել Բուլանդակուրիւն Ազգ. Սեմինարանուրեանց, ընկերովի իրաւանց, ա-ռարաղուրեանց եւ սովորուրեանց ի Տեօրհնական Ս. Տեղիս» գիրքին մէջ (էջ 73–93)։

Ի

ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Դաւթի աշտարակին դիմացը, Սիոն երթալու ճանապարհին վրայ Անգլիքան բողոքականաց եկեղեցւոյն եռակը կը գտնուի Եպիսկոպոսի անունով մզկիթ մը, որ ժամանակին քրիստոնէական եկեղեցի ըլլալով՝ իսլամ աղօթատեղիի փոխարկուած է։ Նոյն չէնքը՝ հակառակ որ բանուկ պողոտայի մը վրայ կը գտնուի, աննշմար կը մնայ անցորդներէն, վասն զի ան բոլոր կողմերովը

ծածկուած է նոր չէնքերով և կարելի չ'ըլլար տեսնել զայն մեծ պողոտայէն։

Մենք Եպուպիէի մասին պատմական տեղեկութիւններ տալէ առաջ հոս պիտի նչանակենք ձեռնհաս գիտուններու կողմէն գրի առնուած ճարտարապետական քննութեանց երկու տեղեկագիրները. յետոյ պիտի յիշենք Եպուպիէի նախկին հիմնարկութիւնը իր պարագաներով, նոյն հիմնարկութեան յարակցութիւնները, և պիտի պարզենք թէ Եպուպիէն մին եղած է ա՛յն հայկական վանքերէն՝ որ հին ժամանակները գոյութիւն ունէին Ս. Քաղաքին մէջ, ըստ մեր յիշատակարանաց։

1.— Նոյն չէնքին առաջին ճարտարապետական քննութիւնը գրի առած է Բրօֆ. Herr Baurath von Schick, որուն գրուածքէն կը հասկցուի թէ «Եպուպիէն դուն ուրեք կը գործածուի եւ քիչ անգամ նորոգուած է և թէ լաւ պայմաններու մէջ պահպանուած է. ո՛չ նորոգութեան և ո՛չ ալ փոփոխութեան նչան կը կրէ և կը թուի թէ իրօք իր չինութենէն ի վեր անփոփոխ մնացած է։ Կը կարծուի որ Խաչակրաց ժամանակի չինուածք մ'է և վանքի մը նմանութիւնը ունի, թէև իրը բնակարան ալ գործածուած իսկ կրնայ ըլլալ։ Ժամանակ մը Դաւթի բերդին մէջ բնակող զինուորներուն աղօթատեղին եղած է ան, բայց յիսուն տարուան ընթացքին՝ չատ քիչ անգամ գործածած են զայն. վասն զի Միջնաբերդին մէջ կար աղօթքի համար ուրիչ տեղ մը։ Խրիմի պատերազմին՝ կարճ ժամանակի մը համար գործածուած է իրը տաղաւար։ Նոյն չէնքին արեւմուտքը կը գտնուի փոքր գաւիթ մը։ Ուզեգիրներէ յիշուած եօթն սինակոկներէն մին չէ մայր եկեղեցին։ Կողակին մօտ փոքր սենեակներ չունի, բայց ծածկուած է կիսաշրջանակային կամարով մը։ Ինչպէս իր անունը ցոյց կուտայ՝ նուիրուած էր ան Ս. Յակոբ Առաքելոյն անուան»։

2.— Եպուպիէի ճարտարապետական երկրորդ քննութիւնը կատարած են Hugues Vincent et F. M. Abel Դոմինիկեան Հայրերը որոնց Jérusalem Nouvelle խորագրով երկասիրութեան մէջ (Բ. Հատոր, էջ 558–561) հետեւեալը կը կարդանք։

«Ժե. դարու վերջերը Մուճիր էտ-տին ժամանակագիրը իր պատմութեան մէջ կը յիշատակէ Եպուպիէն։ Այդ ժամանակ նոյն չէնքը կը ճանչցուէր իրը Զավիէ Պաղտատցի Շեյխ Շէմս էտ-

տինի. բայց հմուտ պատմաբանին ծանօթ էր որ սոյն տեղը յիշուած յարգելի անձին բնակարանը ըլլալէ շատ առաջ, այս յիշատակարանը կառուցուած էր ի յիշատակ պարսիկ վկայ Յակովկի որ կը կոչուէր Շէյխ Եագուպ հ–Սահակի, և թէ այս հիմնարկութիւնը Բուլներու ժամանակ տեղի ունեցած է։

Միւճիր էտ–տինի սովորական բառագիտութեան մէջ րուխ բառը կը նշանակէ բիւզանդական թուականի յոյները. այսպէս է ընդհանրապէս իր թանկագին ճշդաբանութիւնը որով Clermont-Ganneau՝ համաձայն այս տեղեկութեան՝ կ'եզրակացնէ Եագուպիէի բիւզանդական ծագումը։ Եւ որովհետև Բրօֆ. Schick նոյն շինութեան ամբողջական յատակագիծը հրատարակելով՝ սա կարծիքը կը յայտնէր թէ՝ «ան խիստ հաւանականութեամբ Խաչակրաց թուականին կը պատկանէր». գիտնական վարպետը չէր վարաներ եզրակացնել թէ՝ «այս կարծիքը չատ ընդունելի չէր կրնար ըլալ՝ Միւճիր էտ–տինի վճռական հաւաստումին հանդէպ»։ Ո՛չ ինքը և ոչ ալ Schick չէին կրցած քննութեան առնել բիւզանդական և միջնադարեան ճարտարապետական նկարագրու մէջ աւելի քան այն խիստ դատաւորը որ 1860ին՝ կը գրէր թէ «Այս փոքր եկեղեցին Խաչակրաց ժամանակին կը վերաբերէր»։ Շէնքը երբ մեր առջևը կը գտնուի՝ դժուարին է այսպէս վճռաբար արժեցնել Միւճիր էտ–տինի հաւաստիքը De Vogué ի խիստ գնահատելի ճարտարապետական կարծիքին և Schick ի համակարծիք տպաւորութեան դէմ։ Ի բաց առնելով նախնական հիմնարկութիւնը, Միջին դարու լատին դրոշմը կարելի չէ տարակուսի տակ ձգել։

Յատակագիծը շատ պարզ է. Պաղեստինի մէջ ֆրանկ ժամանակաշրջանին բազմաթիւ եկեղեցիներու յատակագծին կը նմանի. այսինքն երկայնչի փոքրիկ գաւիթ մը ունի, արեւելքի կողմը նեղցուած է և թեթևակի խորացած՝ կէսաշրջանակի ձևով կոզակին առջեւ տեսակ մը դասի վերնատուն հաստատելու համար։ Այս կոզակը խնամեալ շինուածքի մը մէջ կրկնակոր (cul-de-four) կամար մը ունի։ Բոլորաձեւ անկանոն ցած կամար մը այժմ կը ծածկէ եկեղեցիին մնացորդը, բայց չատ տարակուսական չէ որ ան աւելի կամ նուազ ուշ կերպով յաջորդած է աւելի բարձր, բոլորաձև կամ օրթանաձև կամարի մը։ Այս կարծիքին ապացոյցը պիտի գտնուի ան յարաբերութեան մէջ զոր

ան ունի պատուհաններուն եւ ի մասնաւորի հիւսիսային պատուհանին հետ։ Խիստ հաստ պատի մը մէջ բացուած և գեղեցկօրէն շինուած այս որմածակը ներքնապէս ազատուած է այժմ թագատուած լայն կամարով մը. արդի կամարը անհատապար բարձրութեամբ իր կիսաւեր սիւներովը կը յենու սովորական քարի կտորուանքներով շինուածքի մը (blocage) վրայ և բաւական ձախող կերպով աղեղնաձև փորուած վիճակով մը իբր թէ պահպանելու համար այն ձևը որ ունէր հին պատուհանը։ Նմանօրինակ լեցուածքներ շինուած են ուրիշ որմածակերուն առջև. և եթէ այս մասը ինքն ըստ ինքեան ստուգապէս անկանոն բան մը չունի, կրնայ կազմուած ըլլալ ընտիր շինուածքով, բայց ինչ որ անկանոն է հոս և փոփոխութիւնը կը մատնէ՝ չափակապութեան անյաջողութիւնն է։

Խիստ չափաւոր կտրածով (profil) ընթացիկ պսակ մը (corniche) շինուածքին ամբողջ շրջանը կ'ընէ և այս արձանագրութեան արժանի պարագան, որ է պսակին բոլորակութեան և գեղեցկութեան համեմատութիւնը (modenature), նկատելի միակ մանրամասնութիւնն է՝ և այնպիսի աննչան կերպով ալ շինուած է որ՝ իր միջնադարեան որոշ նկարագրին հակառակ, պիտի վրանէինք ընդունիլ զայն իբր հաստատութիւն «Ֆրանկներու» գործին, եթէ իր վկայութիւնը չատ աւելի յստակ նշաններով գործին, եթէ իր վկայութիւնը չատ աւելի յստակ նշաններով լծորդուած չըլլար. կոզակին և պատուհաններուն գիծերը, մանաւանդ կոզակին մէջ գործածուած նիւթերուն շինութիւնը, կամարապորտներու ճարտար կարարուեսար (découpage) բացարձակ կերպով յատկանշական են Խաչակրաց աշխատանքին մէջ։ «... Այսպիսի համեստ շէնքի մը միայն պատերուն հաստութիւնը նկատի առնելով՝ կրնանք կարծել թէ շէնքը իր վրայ կը կրէր ուրիշ անհետացած մասեր, թերևս պարզ աշտարակիկներ, բայց ոևէ թիֆինիֆ մանրամասնութիւն չէր հաստատեր զայս։

Ի մի բան, անուրանալի է որ սոյն շէնքը իր էական մասերովը Խաչակիրներուն գործն է։ Հաւանական է որ բիւզանդական շրջանին հոս կար մատուռ մը զոր շինած էր ուրիշ քրիստոնեայ համայնք մը, յանուն Ս. Յակոբ Ալփեանի, յետոյ պարսիկ Ս. Յակովկի փոխուած. նախանձախնդրութեան Ս. Յակոբ Զեբեդեան առաքեալին վկայարանին՝ որ տարբեր համայնքի մը կողմէն իր մօտիկը բարձրացած ու պայծառացած էր նոյն թուականին...»

3.— Եագուպիէի այս երկու ճարտարապետական քննութիւններէն կը հասկցուի թէ նոյն վանքը Աչակրաց չինութեան ըրշմը կը կրէ. թէեւ երկրորդ քննութիւնը գոնէ հարեւանցի կը ծանօթագրէ թէ աւելի հին ժամանակներու մէջ նախնական հին մատուռ մը կար և յետոյ Աչակիրք նորոգեցին և չէնքին տուին միջնադարեան ոճ մը: Այս երկրորդ բացատրութիւնը պատմականօրէն ճիշդ է, վասն զի Պետրոս եպս. վրացիին անանուն կենսագիրը, ինչպէս ուրիշներ, կը հաստատեն թէ նոյն եպիսկոպոսը դեռ մինակեաց երբ Պոլսէն երուսաղէմ այցելեց 430ին վանականութեան փափաքով, Դաւթի աշտարակին դիմացը, ճըշդօրէն Եագուպիէին տեղը, իր մէկ բարեկամին հետ հաստատեց վանք մը և որ կոչուեցաւ Վրացւոց Վանք: Եկեղեցական պատմութենէն ծանօթ է քաղկեդոնական խնդրոց համար Յովնաղի պայքարը ընդդէմ հակաքաղկեդոնիկներու, որոնց մէջ կը զետնուէր Պետրոս վրացին: Վերջինս Յովնաղի հետապնդումներէն ազատ մնալու համար երուսաղէմէն մեկնեցաւ, ինչպէս կը հաստատէ իր աշակերտը Յովհաննէս Ռուփինոս իր Նախատեսութիւնք Սրբոց (Plérophories) գրուածքին մէջ:

Պետրոսի մեկնումէն վերջ դարձեալ վանքը պահեց իր գոյութիւնը: Յուստինիանոս յետոյ նորոգեց զայն, ըստ Պրոկոպիոսի: Արեւելեան վկայաբանութիւններէն կը հասկցուի որ 422ին վառամ Ե. նահատակած էր քրիստոնեայ պալատական Յակովիկը և ուզած էր ոչնչացնել անոր նշխարները. Յակովիկ իր կրած բազմազան չարչարանքներուն համար, ըստ մեր վկայաբանութեան, կոչուած է քաղվահաս. Սորոց մէկ վկայաբանութիւնը կը ծանօթագրէ թէ Պետրոս վրացին երբ Երուսաղէմ կը հասնի իր հետ կը բերէ երկու պարսիկ վկաներու նշխարները, թէև անոնց անունը յայտնի չէ: Պետրոս երբ «միաբնակութեան» խընդրով կը թողու Երուսաղէմը իր հետ կը տանի այն նշխարները, որուն կ'ակնարկէ նաև «բազմահատ»ին հայերէն վկայաբանութիւնը: Մասունքներու փոխադրութեան պարագան պատմական ըլլալով հանդերձ, թէեւ մանրամասնութեանց մէջ անորոշութիւններ կը դիտուին, բայց Goussenի հրատարակած վրացական ծիսարանը՝ որուն ձեռագրաց երկու օրինակները ան գտած է մին Երուսաղէմի Ս. Խաչ վանքին և միւսը՝ Սադպէրտի մէջ, ունի հետեւեալ ծանօթագրութիւնը. «Պետրոսի վաճիին մէջ Նոյ. 27ին

յիշատակութիւն Յակովիկ բազմահաս վկային»: Իսկ մի ուրիշ ասոր ծիսարան ունի հետեւեալը, դարձեալ նոյն վանքին մէջ. «27 Նոյ. Պետրոս վրացի եպս. Մայումայի (Դազա) եւ Յակովիկ բազմահաս եւ աբբայ Եսայի»: Երրորդ ծիսարան մ'ալ ունի «27 Նոյ.— Պետրոս եպս. Մայումայի եւ Յակովիկ պարսիկ»: Ահա թէ ինչ պատճառով Պետրոսի վանքը կոչուեր է Եագուպ իլ Սճհի, կամ Եագուպիհի. պարզապէս յայտնի է թէ պարսիկ վկային յիշատակութենէն յառաջ եկած է նոյն անունը, ինչպէս յայտնի կ'ըլլայ նաև Միւճիր էտ-տինի վկայութենէն որմէ կը հասկցուի թէ եկեղեցին չինուած է Րումիներէն (բիւզանդական Յոյներէն): Ծուսատինիանոսի կողմէն կատարուած նորոգութիւնն ալ կ'արդարացնէ այս ապացոյցը:

4.— Պետրոսի վանքի մասին ճշդումներ և պատմական տեղեկութիւններ տալէ յետոյ պիտի փորձենք պարզել նոյն վանքին՝ եթէ ոչ աւելի յառաջ, գոնէ Ը. դարէն սկսեալ հայոց սեպհականութեան տակ մնալը: Վանքին հիմնադիրը Պետրոս վրացին դաւանական վէճերու հետեւանքով, ինչպէս վերև ակնարկեցինք, երուսաղէմը թողլով զնոյց հաստատուելու Գազայի կողմերը եւ հո'ն ալ չինեց վանք մը: 431էն յետոյ նոյն կողմերը եկած էր նաև Աբբայ Եսայի՝ Եգիպտացի և Իսկիտէի վանականներէն մին: Պետրոսի բնակութիւնը միայն չորս մղոն հեռի էր Եսայիի վանքէն՝ որուն այժմու տեղւոյն անունը կը կոչուի Թէլ Հ–Շուպանա: Եսայի և Պետրոս կապուած էին ոչ միայն «միաբնակ» դասակցութեամբ այլ նաև սրտակից բարեկամութեամբ, իրենց դասնակցութեամբ այլ նաև սրտակից բարեկամութեամբ, իրենց դասնութեան վէճերը կը վարէին միասնաբար և կը պահպանէին անապատի կեանքի կանոնները, զորս կ'ուսուցանէին ընտրեալ աշակերտներու: Աբբայ Եսայի 31 Օգոստոս 488ին վախճանեցաւ և իր մարմինը ամփոփուեցաւ Զիթենեաց լերան Հայոց սեպհականն Ս. Յովհաննէս Մկրտչի վանքին մէջ ու անոր գերեզմանը զարդարուեցաւ գեղեցիկ մոզայիքներով և հայկական արձանագրութիւններով: Աբբայ Եսայիի Հայոց հետ դաւանակցութեան պարագան էր որ Ս. Երկրի հայ իշխանները այդ յարգանքը ընծայեին Եսայի անապատականին: Պետրոս վրացին ալ ապրեցաւ 80 տարեկան, և վախճանեցաւ նոյն տարին Դեկտ. 1ին, ըստ իր անանուն կենսագրին: Ան իր դաւանակցութեան պատճառաւ Հայոցմէ կը վայելէր յարգանք և պատիւ. ինք է որ կը

գրէ Հայոց (Տե՛ս Միխայէլ Ասորի, էջ 174–5) և երանի կը կարդայ որ Հայք ներկայ չէն գտնուած Բաղկեդոնի ժողովին եւ յայտնապէս կ'աւելցնէ սա տողերը. «Ի Բաղկեդոն ուրացան զԲրիստոս դուք պինդ կացէք ի հայրենի հաւատդ որ շնորհեցաւ ձեզ ի Տեառնէ եւ աշխարհիդ ձեր, զի որպէս երբեմն սերմն մարդկութեանս այդուհետեւ ընդ աշխարհ, նոյնպէս առ ձեզ պահեցաւ սերմն ուղղափառ հաւատոյ, եւ ի ձենջ տարածելոց է ընդ բազումս։ Ողջ լերուք յանապատի վերին Բրիստոս, որդեակք իմ»։ Այս երկու վանականներուն Հայոց հետ այսքան մերձաւոր կապակցութեան նայելով՝ յայտ յանդիման իմացողութեամբ (intuition) չէ՞ կարելի մտածել թէ երբ վրացիք իրենց մէկ գաւառին յիշատակը ջնջեցին իրենց եկեղեցւոյն ծիսարանէն, Հայք գաւառնակցութեան հետեւանքով կրնային տիրանալ ա՛յն վանքին՝ որուն հիմնադիրը եղաւ Պետրոս վրացին, ինչպէս Ցոյները նոյն նպատակաւ գրաւեցին վանքերը և եկեղեցիները այն վրաց և Սերպերու որոնք այլ եւ այլ պատճառներով լքեցին իրենց սեպհականութիւնները։ Թերևս պիտի առարկուի թէ պատմական ճշմարտութեան հաւաստումին ազբիւրը յիշատակարաններն են. բայց մենք որքան որ ի ձեռին չունինք այդ մասին կարկառուն յիշատակարաններ, սակայն ունինք ժամանակի սուրբ ժանրիքներէն ապատուած քանի մը տողերէ բաղկացեալ պատմական փաստ մը։ Ը. դարու գրի առնուած ծածօթ Հայ վանօրէից Ցուցակը կը գրէ սա տողերը. «Բաստոյ վանին որ յանուն Սուրբ Աստուածածնի, որ առ աշտարակին Դաւթի է». որ կը համապատասխանէ ճշդիւ Դաւթի աշտարակին դիմացը չինուած Պետրոսի վանքի տեղագրութեան։ Հ. Ալիշան նոյն Ցուցակին գաղիերէն թարգմանութեան մէջ կը յարէ թէ Բաստոյ կամ Բաստուր անձ գոյութիւն չունի, և կը կարծէ թէ Բակուր պէտք է կարդալ. ո՛չ մին և ո՛չ միւսը, ճշդօրէն պէտք է կարդալ Պետրոսի վանք, ինչպէս ուրիշ արևելեան եկեղեցեաց ծիսարաններն ալ նոյնը կը յայտնեն։ Անտատաս վրդ.ի այս համեստ յիշատակարանէն որոշ կը հասկցուի թէ վանքը Ս. Աստուածածնի անուան նուիրուած էր և ոչ թէ Ս. Յակոբ Առաքելոյն. վանքին Եագուպիհի անունէն կը հետևցնեն Ս. Երկրի ուղեցոյց չինողները թէ վանքը նուիրուած էր Ս. Յակոբ Առաքելոյն. Եագուպիհ անունը, ինչպէս տեսնուեցաւ վերեւ, յառաջ եկած է պարսիկ Յակովիկ վկային նշխարաց փոխադրութենէն այս վանքին մէջ։

Եագուպիհի մասին օտար նոր ուղեգիրներէն տեղեկութիւն մը չունինք. բայց չեմ կրնար անտես ընել Վըրզպըրկի Յովհաննէս եպիսկոպոսի մէկ ծանօթագրութիւնը (Tobler, էջ 160). յիշեալ եպիսկոպոսը Դաւթի աշտարակին դիմացը Métochion(*) կ'այցելէ ու կը գրէ 1160ին թէ նոյն հաստատութիւնը Հայոց կը վերաբերի. Մար-Սաբայի վանքի նոյն սեպհականութիւնը որ յուշագ կը վերաբերէր, չատ մօտ էր Եագուպիհի վանքին, չէ՞ կարելի կարծել թէ Եագուպիհի վանքը Հայոց կը վերաբերի ըսելու տեղ պրլի վրիպումով մը կամ չիոթմամբ Métochionը կը յիշատակէ իբր հայկական սեպհականութիւն, ինչ որ սխալ մ'է։ Khitrowo ռուսագիրն իր թարգմանած ճանապարհորդութեան մը մէջ կը գրէ թէ (էջ 325) 1558ին Պազիլ Պոռնիաքով անուն ուխտաւոր մը Մար-Սաբայի վանականները պատապարուած կը գտնէ Ս. Միքայէլի Սերպ վանքին մէջ, Ֆրանչիսկեանց վանքին մօտ, այն պատճառաւ որ Métochionը գրաւուած էր նոյն ժամանակ։ Այս ծանօթագրութիւններէն կը հասկցուի որ ԺԶ. դարու յունական վանքին հետ գրաւուած էր Եագուպիհէն ալ, ինչպէս կ'ակնարկէ Միւճիր էտ-տին (※ 1521) ևս իր Պատմութեան մէջ։ Ցուշ նական նոյն վանքին տեղը այժմ անյայտ է, իսկ Եագուպիհէն կը մնայ իբր մզկիթ։

(*) Métochion չինուած էր Մար-Սաբայի վանքին իբր մէկ ճիւղը, վտանգի ժամանակ Մար-Սաբայի վանականները կու գային հոն ապաստանիլ, ան ունէր ուխտաւորաց համար ընդարձակ հիւրանոց մը։

ԻԱ

Ս· ՍԱՐԳԻՍ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ ԴՈՒՐՍ

Այս վանքին պատմական ծագումը գրելէ յառաջ պէտք է որ ծանօթանանք այն պատմիչին՝ որ գրած է անոր մասին, եւ հասկնանք այն չարժառիթները, որոնց համաձայն վանքին հիմնադիրը մեկնեցաւ իր երկրէն ու եկաւ հաստատուիլ Պաղեստին։

1. Աբուսահլ Հայ·

Ս· Սարգիս վանքին ու եկեղեցիին վրայ մեզ տեղեկացնողն է Աբուսահլ Հայ պատմիչը (ابو سهل الارمنى تاريخ الشيخ)· ան ժԲ· դարուն կ'ապրէր Եգիպտոսի մէջ· գրած է արաբերէն լեզուով պատմութիւն մը Եգիպտոսի և շրջակայից վանքերուն ու եկեղեցիներուն վրայ· ինչպէս նաև Նուպիոյ և Եթովպիոյ կողմերը կը յիշատակէ, չմոռնալով հայկական վանքերու և եկեղեցիներու նը-կարագրութիւնը· նոյն այդ պատմութեան ձեռագիրը զոր Vanslip գնած էր ԺԷ, դարուն, կը գտնուի Փարիզի Ազգ· Մատենադարանին մէջ· այդ ձեռագիրը Աբուսահլի մահուանէն երկու հարիւր տարի վերջ ԺԴ· դարուն, ընդօրինակուած է Ղպտիի մը ղեկութիւններ տուած ըլլայ ձեռագրին սկիզբը· բայց դժբախտաբար կը պակսի այդ մասը· հաւանական է որ հակառակորդ մը կտրած հանած է զայն· արդէն Evetts՝ որ 1895ին թէ արտագրած և թէ անգլիերէնի թարգմանած է զայն՝ դիտած է որ ձեռագրին առաջին քսան երկու էջերը կը պակսին· Ուրիշ իրողութիւն մ'ալ որ պէտք չէ աչքէ վրիպեցնել, այն է թէ վերև յիշուած ձեռագիրը, չի կրնար ըլլալ առաջին բնագրին հարազատ օրինակը, վասն զի նոյն ինքն ընդօրինակողը իր ընդօրինակութեան վերջը կը յայտարարէ թէ ուզած էր գիրքը համառօտել առանց չեղելու բնագրէն· բայց չէ կրցած իր խոստումը պահել· Ցայտնի ըլլալով որ Ղպտիները զանազան պատճառներով հաչտ աչօք

չէին նայեր Եգիպտոս հաստատուած քրիստոնեաներուն վրայ, հաւանական է որ կամ ընդօրինակողը և կամ ուրիշ մը համարձակած է ջնջել այն մասը՝ որ Հայոց նպաստաւոր էր։

Ապուսահլ Հայ իր դարուն կարևոր մատենագիր մ'էր և գիտնական մը· ան յարաբերութիւն կը մշակէր պետական երևելի մեծ անձնաւորութեանց հետ, ինչպէս կ'երևի իր պատմութեան ընթացքէն։ P. Alexis Mallon *իր մէկ գիրքին մէջ կը վկայէ թէ «մինչև մեր օրերը հասած զպտի բանասիրութեան բոլոր գործերը կը վերաբերին Ժ· դարերու շրջանին։ Այս շրջանին Եգիպտոսի քրիստոնեայ մեծ մատենագիրները ասոնք են, Սևերոսէն և Եւտիքիոսէն վերջ, Աբուսահլ Հայ, էլ Մաքուն, Իպն էլ Ասսալ, Իպն Րահէպ, Ասպուլ Պարաքաթ։ Այս թուականը արաբ քրիստոնեայ գրականութեան յետակէտն էր»* (Տե'ս Une école de Savants Egyptiens au Moyen Age, *էջ 110)։*

Աբուսահլի պատմածները շատ ճիշդ են, միայն թէ չէ պահուած ժամանակագրական կարգը· անոր գիրքը ունի տեղագրական և պատմական ճոխ մթերք մը· իր աղբիւրներն են՝ Աբուլ-Հասան Շաբուշտի (Ժ–ԺԱ· դար) որ գրած է Վաliorհից անուամբ գիրք մը (Քիթապ էլ–Տիարաթ), Սևերոս եպս·, հեղինակը Աղեքսանդրիոյ պատրիարքաց պատմութեան (Թ· դար), Եւտիքիոս, այլ անուամբ Սայիտ Իպն էլ–Պատրիկ (940) որ ունի Տարեգիրք կոչուած պատմութիւնը։ Աբուսահլ հմուտ կը թուի մահմետական օրինաց պատմութիւնը։ Աբուսահլ հմուտ կը թուի մահմետական օրինաց և պատմութեանց· ան աւելի Ղպտիներուն մէջ մեծցած ու սնած ըլլալուն յարեալ կ'երևի այս ազգին։

Արաբագէտները և բանասէր արևելագէտները, ինչպէս Գադրըմէր և մանաւանդ Բլնոտոյ Ժ·Բ· դարու սկիզբը չատ բանաքաղութիւններ ըրած են այս պատմիչէս· և որոնցմէ օգտուած է Հ· Ղ· Ալիշան իր Ս· Ներսես Շնորհալի և պարագայ իւր գրքին խմբագրութեան առթիւ։ Հ· Ալիշան Անգլիացի գիտնական Evetts *ի հրատարակութենէն քաղելով թարգմանած է Աբուսահլի պատմութեան հայկական մասերը և փոքր տետրակի մը մէջ ամփոփելով՝ 1895ին հրատարակած է, որմէ, և ուրիշ տեղերէ, մենք ևս օգտուեցանք։*

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

2. ԺԲ. դարուն Եգիպտոսի քաղաքական վիճակը եւ Հայերը.

Ֆաթիմեանք, Եգիպտոսի կայսրութեան տէրերը յառաջ եկան շիա ըսուած կրօնական չարժումէ մը, եւ կը պատկանէին շիա իսլամութեան. 909ին Ափրիկէի հիւսիս–արեւելքը կազմակերպուեցան եւ 969ին Ֆաթիմեան Մուիզզի զօրապետ Կոհարի առաջնորդութեամբ կը գրաւեն Եգիպտոսը եւ կը հիմնեն նոր մայրաքաղաքը՝ Գահիրէն ուր 973ին կը հաստատուի Մուիզզ (* 975):

Ֆաթիմեան էլ Մուսթանսըր սուլթանին ժամանակէն սկսեալ սուլթանութիւնը կ'սկսի տկարանալ, այնպէս որ անոնց իշխանութեան միջոցը կը սահմանափակուի միայն Եգիպտոսի մէջ. մէկ դարու ժամանակամիջոցի մէջ Եգիպտոս փոյլուն եւ ազդեցիկ դիրք մը կ'ունենայ, չնորհիւ այն հզօր եւ կարող հայ վզրուկներուն՝ որոնք Եգիպտոսի ժողովուրդը կը կառավարէին երկաթի բազուկներով. 1067–1138 չրջանին էր որ Ֆաթիմեան սուլթանները իրենց կառավարութեան ղեկը յանձնած էին Պասր ալ Ճեմալի, Ալ Աֆդալ Շահնշահի, Շաւարի, Ճաֆար Ալ Մուզաֆֆարի, Գուրդիֆադի, Եաննախ, Վահրամի, Տհրի եւ այլոց. ասոնք իսլամացած էին, բայց ի վահրամէն որ քրիստոնեայ մնալով հանդերձ չատ կարող կառավարիչ մը եղած է Եգիպտոսի մէջ. ասոնք որքան որ իսլամացած էին, բայց եւ այնպէս նպաստաւոր եղանակաւ մը կը վարուէին հանդէպ Հայոց: Ասոնցմէ առաջին երկուքը մեծ ազդեցութիւն ունէին պետական գործերու մէջ, անձամբ կը վարէին բանակը եւ կը մտնէին պատերազմի մէջ. խաղաղ ժամանակներուն մէջ չէին մոռնար երկրագործութեան ու վաճառականութեան զարգացման գործը. մեր վերև թուած հայ պաշտօնատարներէն ոմանք ալ կարճ ժամանակի մը համար պաշտօն վարած են. իսկ Վահրամ ու անոր եղբայրը Վասակ մեծ գովեստներով կը յիշուին արաբ պատմագիրներու կողմէն: Եգիպտական պատմութեան համար յիշատակելի թուական մը պիտի մնայ հայ վզրուկներու իշխանութեան այդ ժամանակամիջոցը: Իր Usին Ֆաթիմեան վերջին սուլթանը 1160 ին գահ բարձրացած էր. քսան տարիէ աւելի կը պակսէր հայ վզրուկի մը հզօր ձեռքն ու ազդեցութիւնը կառավարելու երկիրը. հետզհետէ կը տկարանար սուլթանին իշխանութիւնը ու սարսած էր իր գահը. պալատին

ու վեզիրներուն մէջ սկսած էր պառակտումը: Շաւհր և Տարխամ կը պայքարէին վեզիրութեան համար. Շաւէր դիմեց Հալէպի Ա–թապէկ Նուրէտտինի որ օգնէ իր յաջողութեան՝ իր տիրապետութիւնը Եգիպտոսի վրայ դիւրացնելու փոխարէն:

ԺԱ. դարուն, առաջաւոր Ասիոյ մէջ ծագում առած էին թուրք իշխանութիւններ՝ որոնց պետերը կը կոչուէին Աթապէկ. ասոնք գերիներ էին, ազատագրուած կամ ոչ, որոնց կը յանձնուէր իշխանազուններու խնամածութիւնը կամ կրթութիւնը: Ա–թապէկ տիտղոսով ասոնք իրենց ծառայութեանց փոխարէն առանձնաչնորհում կ'ստանային չատ անգամ վարել զօրաց հրամանատարութիւնը, գաւառներու կառավարչութիւնը, ու երբեմն ալ անոնց կը յանձնուէր ամենէն փչոտ և փափուկ խնդիրներու կարգադրութիւնը. իրենց կարգին ասոնք ալ իշխանազուններու համակրանաց ու երախտագիտութեան վրայ կռթնելով՝ կը կազմէին անկախ իշխանութիւններ:

Թուրք մը Ագ–Սոնքոր («սպիտակ բազէ») անոյ տիտղոսով, այս դարուն, Հալէպի և Սիւրիոյ չատ մը քաղաքներուն կառավարիչ ընտրուած էր և Ասպասեան Խալիֆայէն Բահիր–ks–soղա (իշխանութեան բաժնեկից) տիտղոսը ստացած էր: Այս տիտղոսը, մինչեւոյն ժամանակ իր իշխանութիւնը ժառանգեց իր որդին Ասլու–Սայիտ Զէնկի, որ ստացաւ Էմատ–էտ–տին պատուակալ անունը և ասիկա հայրն էր Ա–թապէկ Նուրէտտին Զէնկիի, որուն բուն անունն էր Մահմուտ, և ան երբեմն ալ կը կոչուէր Իպն–էլ–Քասիմ, համաձայն այն տիտղոսին՝ զոր ստացած էին իր հայրը և մեծ հայրը: Նուրէտտին յաջորդեց իր հօրը 1146ին. ինքը բարեպաշտ իսլամ մ'էր. ան նուիրուեցաւ սուրբ պատերազմի. ֆրանկներէն գրաւեց Մարաշը, Պանիասը և ուրիշ քարդեր. որթոտօքս իսլամ էր և ուզեց Հալէպէն անհետացնել շիիդ վարդապետութիւնները, զոր Ֆաթիմեանք հոն հաստատած էին: Հիւանդանոցներու և Գուրանի ուսուցիչներուն վագֆներ հիմնարկեց, և հրամաններ արձակեց Պաղեստինցիներուն որ ուխտագնացութեան արգելք չըլլան. չինել տուաւ Մեհմէնէի պարիսպը. ճաթ

հայրը Նէճմ–էտ–տին Էյուպ՝ այն ատեն Պաալպէքի կառավարիչ, եկաւ դիմելու Շերքուհի՝ իր հօրեղբօր, որ իր կարգին ներկայացուց զանիկա Նուրէտտինի որ զրկաբաց ընդունեց Սալահէտտինը: Եգիպտոսէն Շավերի դիմումին վրայ Նուրէտտին՝ իր կողմէն իբր պատուիրակութիւն Եգիպտոս ղրկեց Շերքուհը և Սալահէտտինը Շավէրը հաստատելու իր պաշտօնին մէջ: Շերքուհ քաւրտերու և թուրքերու բանակով մը Եգիպտոս անցնելով յաջողցաւ Շավէրը պաշտօնի վրայ դնել. սակայն Շավէր տեսնելով որ Շերքուհ իր տիրոջ տիրապետութեան համար ձկտումներ ունի, կը բանակցի Խաչակրաց հետ: Շերքուհ՝ Սալահէտտինի հետ 1169 ին վերջնականապէս յաղթանակ կը տանի անոնց վրայ և Սուլթանը Շավէրի բռնապետութենէն միանգամ ընդ միշտ ազատելու համար պաշտօնանկ կ'ընէ զանիկա և Շերքուհ՝ Սալահէտտինի ձեռքով կը կալանաւորէ պաշտօնանկ վէզիրը, երբ ան Ասուոց բանակին մէջ կը գտնուէր արարողութեան մը համար: Յալիֆան այս յաջողութեանց վրայ կը հրամայէ մահուամբ պատժել Շավէրը, և ժողովուրդն ալ կը կողոպտէ անոր պալատը: Մէլիք–էլ–Մանսուր տիտղոսով՝ Շերքուհ կ'ստանձնէ բանակին հրամանատարութիւնը (Էմիր–էլ–Ճուեուչ), բայց երկու ամիս հինգ օր յետոյ կը հիւանդանայ և կը վախճանի 1169 Մարտ 22ին: Սիւրիացի զօրավարներուն հակառակ, Սուլթանը Շերքուհին տեղ ընտրեց Սալահէտտինը՝ եղբօրորդին վախճանելոյն, թերևս զանուղներուն ամենէն խելացին ու կարողագոյնը ըլլալուն: Սալահէտտին էլ–Մէլիք–ան–Նասըր տիտղոսը ստանալով ճարտարութեամբ կարողացաւ իր կողմը գրաւել հակառակորդները և արագօրէն Եգիպտոսի բացարձակ տէրը եղաւ իրեն նախորդներուն նման: Եգիպտոսի քաղաքական իրաց վիճակը իմանալով՝ Խաչակիրք ստգնապի մատնուեցան և հռոպական պետութեանց ու Բիւզանդացւոց դիմումներ ըրին վտանգաւոր կացութեան դարման տանելու. դիմումներն անհետևանք մնացին. ու Խաչակիրք որքան որ եգիպտոսի ծովեզերեայ սահմաններուն մօտենալով յարձակում գործել ուզեցին, բայց չյաջողեցան ու ետ դարձան: Սալահէտտինը երբ Տամիէտ գնաց՝ Խաչակիրք արդէն թողած էին Եգիպտոսը. հոն կռուող թշնամիներ չգտաւ: Այս յաջողութիւնները լսելով Նուրէտտին հրաման ղրկեց Սալահէտտինի որ Ֆաթիմեան սուլթանին անունը ուրբաթի հրապարակային աղօթքի ատեն դադրեցնելով անոր տեղ հաստատէ Ապպասեան խալիֆային անունը. Սալահէտտին չուզեց անմիջապէս այս յանդուգն ձեռնարկը ընել. իր զօրապետներուն խորհուրդին ենթարկեց զայն, և անոնք թեր ու դէմ խօսքերէ յետոյ որոշեցին համակերպիլ Նուրէտտինի հրամանին: 1171ին Ապպասեան սուլթանին անունը յիշատակուեցաւ ուրբաթի աղօթքի ժամանակ. ասիկա յեղափոխութիւն մ'էր. սակայն ժողովուրդը՝ հակառակ մտավախութեանց, կատարեալ անտարբերութեամբ ընդունեցաւ այս որոշումը: Ֆաթիմեան սուլթանը անտեղեակ էր այս իրադարձութեանց. ան հիւանդ, եւ փակուած էր պալատին սենեակներէն միոյն մէջ. ոչ մէկը անոր տեղեկութիւն տուաւ եղած փոփոխութեան և իր գահընկեցութեան մասին. եւ խալիֆան քիչ ժամանակէն մեռաւ: Ֆաթիմեանց հարստութիւնը եգիպտոսի մէջ տևած էր 207 տարի: 1174ին ալ Նուրէտտին կը վախճանէր Դամասկոսի մէջ և անոր կը յաջորդէր իր որդին էլ–Մէլիք–էս–Սալիհ Իսմայէլ, և Սալահէտտին զերծ մնալով Նուրէտտինի համար տածած մտավախութիւններէն, պատեհ առիթի մը կ'սպասէր իր նպատակը իրականացնելու: Նուրէտտինի մահուամբ էմիրները խլրտեցան և սկսան ուրոյն ուրոյն տիրապետել. այդ պատճառաւ տկարացաւ Աթապէկին պետական կազմը և Սալահէտտին դիւրութեամբ տիրապետեց Սիւրիոյ և միացուց զանիկա Եգիպտոսի և ինքզինք սուլթան հռչակեց 1175ին (Տե՛ս Huart, Histoire des Arabes, Հատ. Բ. էջ 14–24):

Քաղաքական այս բոլոր իրադարձութեանց ժամանակ չիսլամները պարապ չմնացին. առաջին առթիւ, Ֆաթիմեան կուսակիցները զաղտնի ընկերութիւններով կազմակերպուեցան և հանդուգնեալ խալիֆային իրր յաջորդ ընտրեցին Եէմէնի գիտնական Օմարան. բայց վերջինս զգալով Սալահէտտինի զօրաւոր դիրքը կամովին հրաժարեցաւ առաջարկուած պատիւէն:

Սալահէտտին պայքարելու համար քարոզութեան մը դէմ՝ որ երկու դարէ ի վեր կը պաշտպանէր պետական բոլոր այժերը, որոշեց գործադրել միևնոյն դրութիւնը, որ է Սիւննի վարդապետութիւնները ժողովրդականացնել: Շաֆէական ծէսերու համար Հին–Գահիրէի մէջ իմամ Շաֆէի գերեզմանին մօտ հիմնեց վարժարան մը, և միսթիք տերվիշներ բերել տուաւ, որոնց բնակութեան համար չինեց խանգիահ մը:

Սալահէտտին Սիւնիի իսլամ էր, այսինքն ուղղափառ. Ֆաթիմեանք շիիս իսլամութեան կը վերաբերէին: Շիիտներուն ազանդը ի սկզբան քաղաքական էր. յետոյ անոր խառնուեցան կրօնական սկզբունքներ: Սիւննիներուն համար շիիտները հերետիկոս և հերձուածող էին. անոնք մեծ տարբերութիւններ ունէին ծիսական, վարդապետական և Ղուրանի մեկնաբանական տեսակէտներէ դիտելով. միևնոյն ժամանակ սիւննիները շիիտներուն ամուսնական կանոնի վերաբերեալ ինչ ինչ կէտերը դատապարտելի կը գտնէին: Ֆաթիմեանց երկու դարու տիրապետութիւնը տարածած էր շիիական իսլամութիւնը թէ՛ Եգիպտոսի և թէ՛ Սիւրիոյ մէջ. այս երկիրներուն ժողովուրդներուն մէջ շիիա մեծագոյն մաս մը կար: Սալահէտտին վերջ տալ ուզեց այդ ոչ–ուղղափառ իսլամութեան, և այդ մասին լուրջ ձեռնարկներու դիմեց. ջրուեց Ֆաթիմեանց խառնուրդ նկարագրով բանակը, եւ վերակազմեց զանիկա քուրտ եւ թուրք տարրերէ, որոնց հաւատարմութեան վրայ վստահ էր. պալատը մաքրագործեց, արգելափակեց Ֆաթիմեան իշխանները ու զանոնք դրաւ անգործութեան վիճակի մէջ: Ֆաթիմեանց այս ջրուեալ բանակին մէջ կը գտնուէին նաև հայ զօրապետներ և զինուորներ:

Սալահէտտինի այս քաղաքական ու զինուորական արմատական կարգադրութիւնները հինգ անգամ ոտք հանեցին Ֆաթիմեանները. վերջիններս իրենց կուսակից նիւպիական և պալատական սեւամորթներէն մեծ բանակներ կազմելով դաւադրութիւններ կը սարքէին տապալելու համար Սալահէտտինի իշխանութիւնը: Ֆաթիմեան մեծ ռազմավար մը գլուխը անցած նոյն բանակներուն, կ'ուզէր վերահաստատել Ֆաթիմեան գահը՝ անոր վերայ բազմեցնելով վախճանած Սուլթանին Էլ–Համիտ–Պիլլահ որդին. Ֆաթիմեանց այս դաւադրական ապստամբութիւնները չէին յաջողեր. Սալահէտտինի և իրեններուն այժը անընկճելի մնացած է. նոյնիսկ Ֆաթիմեանք Գահիրէի փողոցներուն մէջ չարունակած են իրենց ընդդիմութիւնները, որ քանիցս կրկնուած են. անոնք դիւրաւ տեղի չտուին Էյուպեանց: Ինչպէս յիշեցինք վերև, Ֆաթիմեանց մէջ սպանած էին նուպիական սեւամորթները, որոնցմէ բազմաթիւ անձեր պալատականներ էին արդէն Ֆաթիմեանց ժամանակ. Շամար և Իպն–ի–Սրհիր պատմագիրներուն ըստ ածին նայելով (Տե՛ս Սիռն, 1930, էջ 340–41) Ֆաթիմեանց մեծ

ցած էին նաեւ Եգիպտահայերը, որոնք Ֆաթիմեան սուլթաններուն երախտաւորեալներն ըլլալով՝ պարտք մը համարեցան նախանձախնդրութեամբ միացած են անոնց ապստամբական չարժումներուն: Շամարի Նուրէտտինի ուղղեալ տեղեկագրին մէջ պարզօրէն կը յիշատակէ Հայերն ալ իբր մասնակից այդ ընդդիմադիր չարժումներուն:

1168–69էն սկսեալ քուրտերու և թուրքերու կողմէն Հայոց դէմ կատարուած չարգերը, կրօնափոխութիւնները և հալածանքները, զոր կը յիշէ նոյն իսկ Աբուսահլ, արդիւնք պէտք է նկատել Հայոց Ֆաթիմեանց հետ միացման, որու մասին յիշատակութիւն չունի նոյն պատմիչը. թերևս քաղաքական պատճառներու հարկադրանքով, քանի որ ինք ալ ժամանակակից է չատ մը դէպքերու:

Հայոց դէմ սարքուած այդ քաոսեալի արարքներն ու դէպքումները չենք կրնար վերագրել ոչ Աթապէկ Նուրէտտինի՝ որ Ռուբինեանց պայազատները՝ Ստեփանէն և Մլեհը իր մօտը պահպանեց, և դիւրացուց Թորոսի իշխանութիւնը և նոյնիսկ օգնեց Գրիգոր Տղայի կաթողիկոսական ընտրութեան (Վարդան, էջ 129). ոչ ալ Սալահէտտինի՝ Դուննեյի էյուպի որդւոյն՝ (Տե՛ս ան դ, էջ 131) որ Հայոց մօտ մեծցած էր եւ ծանօթ էր Հայաստանի. եւ ան իր կատարեալ հայասիրութիւնը յայտնեց, երբ 1187ին Երուսաղէմի գրաւման ժամանակ մեծագոյն մասամբ անաղարտ պահեց հայկական արքավայրերը. ո՛չ ալ Եգիպտացի շիիական իսլամ ժողովրդեան, վասն զի վերջինս Ֆաթիմեան գահուն եւ շիիական վարդապետութեան վերականգնումին աշխատելով՝ կ'ուզէր սիրաշահիլ դրացի հայ ժողովուրդը. հետեւաբար մենք կ'ենթադրենք թէ՝ սոյն չրջանին Հայոց ենթարկուած այս հարուածները՝ զոր պատճառեցին քուրտք եւ թուրք (թուրք) հաւանաբար յառաջ եկան Հայոց կամայ ակամայ միացումէն ընդդիմադրութեան տեղական հոսանքին հետ:

Եգիպտոսի Հայոց Պատրիարքը Երուսաղէմ կու գայ եւ կը հիմնէ Ս. Սարգսի վանքը.

Աբուսահլ՝ առանց յիշելու պատճառը, մէջ կը բերէ քուրաներու և ղուզերու հալածանքը Հայոց դէմ, և այդ առթիւ կը յիշէ թէ Հայոց եկեղեցիներուն չատերը գրաւուեցան և Դպտի-

ներուն տրուեցան. վատրուեցաւ Հայոց պատրիարքը իր աթոռանիստ եկեղեցիէն, ու հայ կրօնաւորները ցրուեցան. նոյն հալածանքը ո՛րքան սաստիկ եղած է որ պատրիարքը կը թողու Եգիպտոսը և կը մեկնի Երուսաղէմ:

Պատրիարքին տարագրութեան առթիւ չահեկան է նոյնիսկ Աբուսահլի խօսքերը գնել հոս Հ. Ալիշանի թարգմանութեամբ, զոր կատարած է անդլերէնի վրայէն:

«Երբ ղուզք և քուրտք տիրեցին Եգիպտոսի (1169), գունդ մի քրիստոնեայ Հայոց՝ վրայ հասան այս սևերուն, և չատերը սպաննելով՝ մնացեալները վռնտեցին. և անոնց բնակած թաղն որ մօտ էր Ալ–Համրայի (թաղ) անբնակ մնալով՝ Հատալպա Դուզի մականուանեալ Գահիրէի վալին գնեց, և մշակութեան երկիր դարձուց տեղը»:

«Հայոց պատրիարքն.— Այս պատրիարքս նախ Եգիպտոս էր Իթֆիհի (որ հիմայ Աթֆիհ إطفيح կոչուի, և փոքր քաղաք մ'է ի հարաւակողմ Գահիրէի, իբր 2800 բնակչօք), յետոյ Ալ–Հաֆիզի խալիֆայութեան ատեն՝ (1130–49) մտածեց պատրիարք ըլլալ, կաշառք տալով: Դաչինք դրաւ ամիրապետին հետ, անոր պատմական գիտութիւններ հաղորդելու. և սա՝ հաճելով՝ թոյլ տալու անոր՝ որ չաբաթն երկու անգամ՝ երկուշաբթի և հինգշաբթի, գայ ի պալատ, էմիրներու և պաշտօնէից հետ. նաև տօնական օրեր, վինքը բարևելու, և նոր գտած տեղեկութիւններ տալու: Այս կերպով երբ պատրիարքն այցելութեան գար ի Զըմբըխտեայ պալատն, կու հաղորդէր ինչ որ գտեր էր ի կենսագրութիւնս, ի պատմութիւնս պատերազմաց, ի ժամանակագրութիւնս և ի տարեգիրս առաջին սիրապետաց. և այս կերպով զբուցակից կ'ըլլար Ալ–Հաֆիզի հետ, մինչեւ ան սոր մահը, որ հանդիպեցաւ Երկրորդ Ճումատա ամսոյն 544 տարւոյ» (Հիճր. որ է Փրկչին 1149):

«Վերոյիշեալ վանքէն դուրս՝ բայց ոչ հեռի բրտարանէն, (հողէ ամաններու գործարան) զատ փոքր եկեղեցի մի կար, Ալ–Ամիր պի–Ահքամ'լլահ խալիֆային ատեն չինուած (որ է նախորդ Հաֆիզի), ի պէտս Մելքիտաց, փոխանակ Հարա Զաւիլայի մէջ եղած եկեղեցւոյն, որ և աւերուած էր անոր ատեն, և Հաֆըզի ատեն ի մզկիթ փոխուեցաւ...: Կամարներու վրայ չինուած էր եկեղեցին. ներքևն ալ մեռելոց համար դերեզմանատուն մը

կար: Երբ ղուզք և քուրտք Հայոց վրայ հարուած բերին, պատրիարքն Թողուց զԵգիպտոս և եկաւ գնաց յԵրուսաղէմ, հետը տանելով 75 Սուրբ Գիրք, որոց մէջ կար և օրինակ մի չորից Աւետարանաց պէսպէս գոյներով և ոսկւով՝ պայծառազարդ պատկերօք հրաշագործութեանց Քրիստոսի, որ փառաւորեալ ըլլայ»:

«Պատրիարքին ճամբորդութիւնն սկսաւ չաբաթ օր Հատուր ամսոյ 15ին (Նոյեմբեր), Մարտիրոսաց 888 թուին (1172 Քրիստոսի), որ համեմատի Հիճր. 569 տարւոյ Ռապի Էվվել ամսոյ 23ին: Կ'ըսուի, թէ Երուսաղէմէն դուրս վանք մը չինեց. եկեղեցի մ'այլ յանուն Ս. Սարգսի, كيس سرجس ابو որ է նոյն Ապու Սիրճա կոչուածն. և այս եկեղեցւոյս փոխադրեց բոլոր սեղանոյ սպասքն և ոսկի դահեկանք. կ'ըսուի այլ թէ 20 միանձունք կային այս վանաց մէջ»:

«Պատրիարքն իրեն փոխանորդ քահանայ մի թողուց ի Գահիրէ, անոր որդւոյն հետ, որ ժամասացութիւն և պատարագ կատարեն ըստ պատշաճ ժամանակի, Յովհ. Մկրտչի եկեղեցւոյն մէջ, որ ի Հարա Զաւիլա՝ անարատ Տիրամօր մատրան (եկեղեցւոյ) վրայ չինուած է, ինչպէս առաջ ըսինք. այս եկեղեցւոյ մէջ ժողովէին ընկերութիւն մի Հայոց՝ արանց և կանանց: Իսկ մեջ ժողովէին ընկերութիւն մի Հայոց՝ արանց և կանանց: Իսկ ասոնց ունեցած վանքն եկեղեցիներով մէկտեղ՝ ամայի թողուեցան, և դռներն այլ փակուեցան: — Երբ լուր եղաւ որ պատրիարքն յԵրուսաղէմ եկաւ հասաւ անվտանգ, բոլոր քրիստոնեայք ընդ առաջ գնացին իրեն ուրախութեամբ և խնդութեամբ, հանդերձ սաղմոսերգութեամբ, և առջևնէն խաչեր և վառած ջահեր տանելով և բուրվառներով խնկելով: — Ասկէ վերջը պատրիարքն հանգիստ ապրեցաւ քիչ մ'ատեն, և ապա հանգաւ ի չնորհն Աստուծոյ, որ գովեալ ըլլայ, Տուրի ամսոյ հինգին (որ համեմատի Դեկտ. 27–յունուար. 25). ի նոյն վերոյիշեալ տարին, և թաղուեցաւ ի վանս Ս. Յակովբայ Զերեդեան յԵրուսաղէմ: — Սա աղնուաբարոյ անձ մի էր, գեղեցիկ տեսքով, վայելուչ հասակաւ. երեսքն մօրուօք մռուզօք պատած, որ ալևորած էին, և տարւօքն այլ իբրև ութսունամեայ էր»:

«Կ'ըսուի թէ յԵրուսաղէմ նստող հայ եպիսկոպոսն՝ տեսնելով որ ամենքն կ'երթան տեսնուելու այս սուրբ պատրիարքին հետ, իր աղնուական բարուց համար, նախանձելով վրան՝ թոյն խմցուց, եւ մահը պատճառեց: Բայց Աստուած յաջողութիւն

չտուաւ այդ եպիսկոպոսին՝ պատրիարքին մեռնելէն վերջը, և ոչ երջանիկ կեանք. վասն զի քսան օրէն ետև ինքն այլ մեռաւ: Աստուած իր ծածուկ իմաստութեամբ գիտէ թէ որչափ ատոյգ էր այդ եպիսկոպոսին համար ըսուածն: Իսկ պատրիարքն՝ որոյ համար էր խօսքերնիս, դիտուն քահանայ մ'էր, լաւ տեղեակ Սրոց և զանոնք յաջող բացատրող: Բայց կային նախանձոտք իր բարի համբաւոյն տարածմանն համար, և կ'ըսէին թէ յանցաւոր եղած էր ոչ բարոյական վարքով: Այս զրոյցս հանեցին իրեն անմեղութեան ամենէն ուժգին նախանձոտքն: Գրոյս հեղինակն (ինքն Աբուսահլ) վկայէ, թէ հանդիպեցաւ Ասկալոնացի Ապուլ Գասիմ Խալիլ փիլիսոփայ բժշկի, որ կ'ըսէր, թէ տեսեր էր զպատրիարքը՝ Ազ-Զուհրիի վանքում եղած ատեն, իր խըցկան մէջ, և անարատ գտեր է: Այս զրոյցս իր Ասորիս (Եգիպտոսէ յերուսաղէմ) երթալէն և իր մահուանէն վերջը տարածուեցաւ: Մսրայ զատիներուն գլխաւորին (որ էր Ալ-Ազզ Հասան իպն Սալամա՝ Պախիլանի մականուանելոյ) տանը մէջ՝ ես այս գրոց խեղճ հեղինակս՝ հանդիպեցայ (վերոյիշեալ) Ապուլ Գասիմի, Շավվալ ամսոյ 27ին, յամին 568» (Հիճր. իսկ Քրիստոսի 1173)»:

Աբուսահլի այս խօսքերու մասին քանի մը դիտողութիւններ ընելէ յետոյ պիտի ծանօթագրենք եգիպտոսի պատրիարքին երուսաղէմէ դուրս հիմնարկած Ս. Սարգսի վանքը, ցոյց տալով նաև անոր հիմնարկուած հաւանական տեղը:

Ըստ Աբուսահլի, պատրիարքը իր աթոռանիստ Ս. Յակոբ եկեղեցիէն 1168–69ին կը վտարուի ու կը հաստատուի Հարա Զաւիլա Թաղին Ս. Յովհաննէս Մկրտչի եկեղեցին:

Ուրիշ արաբական պատմական աղբիւրներէ հասկնանք թէ նուպիական սևերը՝ Ֆաթիմեանց կողմը ըլլալով՝ պալատական իրենց ցեղակիցներուն՝ Էյուպեանց դէմ կազմակերպուած ապըստամբութեան առթիւ, մեռցած էին Սալահէտտինի իշխանութիւնը տապալելու դաւադրական չարժուձևերուն. արդ գիտենք թէ Հայերն ալ Ֆաթիմեանց ինպաստ կը գործէին, և այդ պատճառաւ քուրտերը և զուզերը կը յարձակէին Հայոց վրայ ու կը վտարէին զանոնք իրենց տեղերէ. ուրեմն լ՞նչպէս կ'ըլլայ որ մի և նոյն նպատակի ծառայող սևերուն դէմ «գունդ մի քրիստոնեայ Հայոց» վրայ կը հասնին. անոնցմէ չատերը կ'սպաննեն և անոնց Ալ-Համրայ թաղը անբնակ մնալով՝ մշակութեան երկիր կը դառ-

նայ, եւայլն: Այս պարագան մեզ համար անհասկնալի կը մնայ:

Պատրիարքը եգիպտոսէն երուսաղէմ գալուն իր հետը կը բերէ 75 ձեռագիր Սուրբ Գիրք, որոնց մին՝ օրինակ մը չորս Աւետարաններու՝ «պէսպէս գոյներով և ոսկւով՝ պայծառազարդ պատկերօք»: Այս ձեռագիրները, ըստ Հ. Ալիշանի, հաւանական կը թուի թէ Գր. Վկայասէր հետը բերած էր, երբ եգիպտոս եկաւ. վասն զի յիշուած է մեր պատմիչներէն թէ Վկայասէր հետը ձեռագիրներ բերած ու եգիպտոս թողած էր:

Աբուսահլի վերև գրուածքէն կ'իմանանք նաև ծանրակչիռ դէպք մը, իրր թէ երուսաղէմ նստող եպիսկոպոսին կողմէն՝ առ նախանձու, եգիպտոսի պատրիարքը թունաւորուած է. այս դէպքին առասպել ու զրպարտութիւն ըլլալը հաստատել աւելորդ է. վասն զի նոյն իսկ Աբուսահլ ինքն է որ՝ կը գրէ «Աստուած իր ծածուկ իմաստութեամբ գիտէ թէ որչափ ատոյգ էր այդ եպիսկոպոսին համար ըսուածը»: Իսկ պատրիարքին վարուց մասին գրուածը լոկ զրպարտութիւն է և Աբուսահլ ինքնին կը հերքէ զայն:

Գալով երուսաղէմէ դուրս պատրիարքին կողմէն Ս. Սարգիսի վանքին ու եկեղեցւոյն հիմնարկութեան՝ անոր վրայ կարելի չէ տարակուսիլ. քանի որ Աբուսահլ որոշ կը գրէ թէ «այս եկեղեցւոյս փոխադրեց բոլոր սեղանոյ սպասքն և ոսկի գանձերը». կ'ըսուի նաեւ թէ այս նորահաստատ վանքին մէջ կը բնակէին 20 մլեանձունք: Համեմատաբար նոր, այսինքն 1172 թուականին, հիմնարկուած վանք մը զարմանալի է որ չունի ոևէ յիշատակարան թուղթի վրայ՝ գրով կամ քարի վրայ՝ քանդակուած. և ոչ մի աւանդութիւն մնացած է երուսաղէմէն դուրս Ս. Սարգսի վանքին գոյութեանը: Վանքին հիմնարկութեան պատմականութիւնը գիտնալով՝ անշուշտ պիտի ուզենք գիտնալ նաեւ թէ ո՛ւր չհնուած էր ան: Հակառակ մեր պրպտումներուն չկրցինք ո՛ևէ տեղեկութիւն մը ձեռք բերել այդ մասին: Մենք կ'ըմբռնենք թէ «երուսաղէմէն դուրս» բացատրութեամբ պէտք է հասկնանք «երուսաղէմի մօտ», քանի որ հիմնադիր պատրիարքը՝ «երբ կը վախճանի՝ կը թաղուի Ս. Յակոբի մէջ», իրր մերձակայ վանք մը: Ս. Սարգսի վանքին տեղւոյ մասին պիտի յայտնեմ կարծիք մը որ հիմնուած չէ ո՛եւէ ազգ. յիշատակարանի մը վրայ, և է հետևեալը. երուսաղէմի մօտ, Յունաց Սրբանի մը վրայ, և

Եղիայի վանքին դիմացը՝ այժմու Թանթուր կոչուած բլուրին վրայ Ջ. դարուն կար Ս. Սարգիս անուամբ վանք մը, ուր, ըստ Պրոկոպիոսի, Յուստինիանոս կայսրն ալ ջրհոր մը փորել տուած էր։ Յովհաննէս Մոսքոս ալ կը յիշէ զայն իր «Մարգ Հոգեւոր» կոչուած գիրքին մէջ (Գլ. 182). նոյն վանքին կողմէն, 536ին ալ, Մինաս պատրիարքի օրով, Կ. Պոլսի ժողովին պատուիրակները զրկուած են (Revue de l'Orient Chretien, 1900, էջ 279)։ Commemoratorium de Casis Dei յիշատակարանն ալ Երուսաղէմէն երկու փարսախ հեռի վանքերու մասին խօսած ատեն կը գրէ. «Ս. Կարապետի վանքը (Ս.յնքեարիմ) կը գտնուին երկու ֆահանայ. Ս. Թէոդոսի մէջ՝ երկու. Ս. Սարգսի մէջ՝ մէկ։

1620ին Բուաբէզմիոս լատին պատմագիրը նոյն տեղւոյն վրայ տեսած է եկեղեցի մը և վանքի մը աւերակները (Տե՛ս Meistermann, Nouveau Guide de Terre Sainte էջ 208)։ Տեղւոյն դիրքը, ինչպէս նաև Երուսաղէմի և Բեթղեհէմի մերձաւորութիւնը հաւանական կը դարձնեն հոն տեղ վանքի մը հաստատութիւնը։ Պատմականօրէն ճիշդ է որ, ինչպէս վերի տողերէն տեսանք, հոն Ս. Սարգիս անուամբ վանք մը գոյութիւն ունեցած է. բայց թէ Եգիպտոսի պատրիարքին 1172 թուականին հիմնադրած վանքը նոյն Ս. Սարգիս վանքի տեղո՞ւն վրայ էր. չգիտենք. բայց կը կարծենք թէ տեղւոյն յարմարութիւնը և գեղեցկութիւնը, անուան նոյնութիւնը, և թերևս կիսափուլ չէնքերու գոյութիւնը, Երուսաղէմի և շրջակայ վանքերու մերձաւորութիւնը, ազգակները եղած ըլլան եգիպտահայ պատրիարքին հին Ս. Սարգսի վանքին տեղւոյն վրայ հիմնելու նոր Ս. Սարգսի հայկական վանքը. և արդէն վանօրէից պատմութեան մէջ աննախընթաց չէ հին վանքի մը վրայ նոր վանք մը կառուցանելու սովորութիւնը, թէև ըլլայ ան ուրիշի մը կողմէն. ինչպէս է Դաթիզմայի Ս. Աստուածածնի վանքը, նոյնպէս Բեթղեհէմի ճանապարհին վրայ։ Պատրիարքին հիմնարկած Ս. Սարգսի վանքը հաւանաբար 1187ին Կործանուած է Սալահէտտինի յարձակմանց ժամանակ։

ԻԲ

ՔՐԻՍՏՈՍԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԷՋ

Երկու Աւետարանիչները՝ Մատթէոս (Բ) եւ Ղուկաս (Բ) կը պատմեն Փրկչին Ս. Ծնունդը Բեթղեհէմի մէջ։ Ըստ գրաւոր յիշատակարանաց և աւանդութեան, Քրիստոս ծնաւ այրի մը մէջ, թէև այր բառը Աւետարանիչները որոշապէս չեն յիշեր. բայց Աւետարանին մէջ յիշուած մանր բառին գոյութենէն յայտնի է թէ Փրկչին ծննդեան տեղը բնակութեան կամ տան վերածուած այրի մը մէջ էր. բաց աստի, չենք կրնար ալ ըսել թէ այրը Աւետարանին մէջ չէ յիշատակուած. քանի՝որ Լազարեան Ճեմարանին ծանօթ հայ ձեռագիր (Թ. դար) Աւետարանը կը յիշատակէ այր բառը. «Եւ նոքա իբրև լուան թագաւորէն՝ գնացին, և ահա աստղն զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց՝ ի վերայ այրին ուր էր մանուկն (Մատթ. Բ. 9)։ Այս տարբերակը առաւելապէս կը հաստատուի մեր Շարակնոցին Աստուածայայտնութեան կանոնով, ուր բազմիցս կը յիշատակուի այրը (*)։

Քրիստոսի ծննդեան աւետարանական մանրամասնութիւնները հոս չենք յիշեր, Աւետարանները կը պատմեն զանոնք։ Մենք միայն պիտի չանանք նկարագրել Քրիստոսի Ս. Ծննդեան այրը, անոր վրայ կառուցուած եկեղեցին ու դարէ դար կրած

(*) Ս. Ներսէս Շնորհալին կ'ըսէ.— «Եւ ո՞ւր արդեօք ունէին տուն. քանզի վասն աշխարհագրին որ ժողովեալ էին բազումք, չէր հնար ուրանդի մեք տուն գտանել՝ որպէս պատմէ Ղուկաս թէ ո՛չ գոյր նոցա տեղի յիջևանին։ Եւ ի ծննդեան տեղւոջէ փոխել նոցա յայլ ինն տուն՝ անմարթ էր կարծել, զի մոգքն ի մսուր անդ տեսին զնա։ Բայց քանի թէ զայրն կոչէ տուն, որպէս սովոր են մարդիկ ղարկ օթևանի տո՛ւն ասել»։ (Մեկն. Մտթ.ի էջ 44)։ Շնորհալիի բնագրին մէջ չկայ այր բառը, բայց կա՛յ մեկնութեանը մէջ։

գլխաւոր փոփոխութիւնները և յետոյ պիտի յիշատակենք Ս. Ծննդեան մօտ կառուցուած հայոց վանքը ու անոր վերաբերեալ հայկական յիշատակները։

1. Քրիստոսի Ս. Ծննդեան այրը Կոստանդիանոսէ յառաջ

Յայտնի է որ Ս. Ծննդեան այրը կը գտնուի Բեթղեհէմի ա-րևելքը, քաղաքէն դուրս։ Յուստինոսի եւ Որոգինէսի բացատրութեանց նայելով Բեթղեհէմը կ'երեւի թէ բաւական հեռի էր այրէն, և ան հետզհետէ ընդարձակուելով կը մօտենար այրին։ Եկեղեցւոյ այս երկու հայրերու կողմէն այրին նկատմամբ տրուած վկայութիւնները պէտք է ընդունիլ թէ պատմական մեծ արժէք մը կը ներկայացնեն, և համոզում կը գոյացնենք թէ նոյն իսկ առաջին դարերէ սկսեալ տեղացի և եկուոր քրիստոնեայք կը պատուէին Փրկչին ծնած այրը ու ան առարկայ էր արդէն բարեպաշտական սովորութեանց։

Հոս մէջ կը բերենք նոյն երկու հայրերու վկայութիւնները։ Յուստինոս 155 ին իր Տրուախաստութեան մէջ (78. 5) կը գրէ Մատթէոսի Բ. 1, յիշելէ յետոյ, «եւ տղան ծնաւ այն տեղն Բեթղեհէմի մէջ, որովհետև Յովսէփ չէր գիտեր թէ ո՛ւր պիտի բնակէր, Բեթղեհէմի մօտ այրի մը մէջ հաստատուեցաւ. և մինչ հոն կը գտնուէր՝ Մարիամ ծնաւ զՔրիստոս եւ դրաւ զԱնիկա մսուրի մը մէջ. երբ Արաբիոյ մոգերը հասան՝ հոն գտան մանուկը»։ Որոգինէս 215 ին արդէն ճամբորդած էր Պաղեստին և անտարակոյս տեսած էր Քրիստոսի Ս. Ծննդեան այրը։ Իսկ 248 ին իրեն հակառակորդ Կելսոսի կը գրէ հետեւեալը. «Քրիստոսի Բեթղեհէմի մէջ ծնած ըլլալու մասին, Միքիայի մարգարէութենէն, Յիսուսի աշակերտներուն կողմէն պատմուած Աւետարանէն յետոյ, եթէ մէկը ուրիշ ապացոյցներ ալ ուզէ, թող գիտնայ թէ անոր ծննդեան նկատմամբ Աւետարանի մէջ պատմուածին նման, Բեթղեհէմի մէջ ցոյց պիտի տրուի ա՛յն այրը, որուն մէջ ան ծնած է, և այս այրին մէջ այն մսուրը, ուր խանձարապատեցաւ։ Եւ ինչ որ ցոյց կը տրուի ծանօթ է ամէնուն, նոյն իսկ հեթանոսներուն, այսինքն քրիստոնէից կողմէն երկրը պագեալ և հիացեալ Յիսուսը ծնած է այս այրին մէջ»։ Զանց

կ'ընենք Ս. Եպիփանի վկայութիւնը, որ համիմաստ կը խօսի Որոգինէսի. ինչպէս նաև Յիսուսի մանկութեան անվաւեր Աւետարանին յիշատակութիւնը, որոնցմով կը հաստատի թէ այրին գոյութիւնը ո՛չ միայն աւանդութեամբ, այլ նաև Աւետարանով և Ս. Հարց միաձայն վկայութեամբ կը հաստատուի Բ. դարէն մինչև Դ. դար։

Քրիստոսի ծննդեան այրը սակայն, Բ. դարու առաջին քառորդին, յայտնի վկայութեամբ մը, փոփոխութիւն մը կրած է առանց ջնջելու Քրիստոսի ծննդեան աւետարանական պատմութեան եւ անոր հիասքանչ դէպքերու յիշատակները։ 132 ին Պարքոզիպայի ապստամբութենէն վերջ Ադրիանոս կայսրը իր Յուլիոս Սևերոս մեծ զօրապետին հրամանատարութեամբ միանգամ ընդ միշտ երուսաղէմի մէջ հրէական ոյժերը ջախջախելով՝ քաղաքին հին դիմագիծը կը փոխէր, վերածելով զայն հռոմէական քաղաքի մը, իր բոլոր հաստատութիւններով։ Սն քարուքանդ ըրաւ երուսաղէմը, և նոյն իսկ անոր անունը փոխելով կոչեց, Էլիա Գաբիտոլինա. և վերահաստատեց հո՛ն հեթանոսութիւնը, ինչպէս Սողոմոնեան Տաճարին մէջ, նոյնպէս Գողգոթայի մէջ և այլուր զետեղեց հռովմէական կուռքեր, և Տնօրինական Ս. Տեղիք վերածուեցան հեթանոսական մեհեաններու։ Բեթղեհէմի Ս. Ծննդեան այրին մէջ ալ Ադրիանոս հաստատեց Ադոնիսի կամ Թամմուզի կուռքը, այրին չորս կողմը վերածելով մայրաստանի մը։ Այս մասին կիւրեղ Երուսաղէմացին իր Կնճայուրեան գիրքին մէջ (Ճառ ԺԲ.) Բեթղեհէմի այրին վրայ խօսած ժամանակ, յայտնապէս կը գրէ 347 ին, ըսելով թէ «Չի յառաջ քան զսակաւ մի ամաց, մայրի ուներ զտեղին»։ Նուիրական այրին չուրջը հաստատուած էր այս անտառը և նուիրուած էր Ադոնիսի, որպէս զի եգիպտոսէն և սիւրիական ափունքներէն Երուսաղէմ և Բեթղեհէմ հաստատուող նորեկները գային նչանաւոր օրերու մէջ վայելելու Ադոնիսի նկատմամբ իրենց բուռն յուզումները, զոր ճաշակած էին Ալեքսանդրիոյ, Պիպլոսի և այլ տեղեաց հեթանոսական սրբավայրերու մէջ։

Բայց վերի պարագան աւելի լաւ կը բացատրէ Բեթղեհէմի մեծ մենակեացը Յերոնիմոս Դ. դարուն գրուած իր մէկ նամակին մէջ. «Ադրիանոսէն մինչև Կոստանդիանոս, գրեթէ 180 տարիներ, Յարութեան տեղւոյն վրայ պաչտուեցաւ Սրամազդի

կուռքը, Գիւտ Խաչի ժայռին վրայ Աստղիկի մարմարէ արձանը, զոր հեթանոսները հոն զետեղած էին, կարծելով որ յարութեան և խաչի նկատմամբ մեր ունեցած հաւատքը պիտի կարենային յափշտակել՝ եթէ Ս. Տեղերը կուռքերով աղարտէին: Բեթղեհէմը որ այժմ մեզ կը վերաբերի, եւ աշխարհի ամէնէն օգուտաւէտ տեղն է, եւ որուն համար սաղմոսերգուն կ'երգէ ըսելով՝ Ճըշմարտութիւն յերկրէ բուսաւ, Թամմուզի, այսինքն Ադոնիսի նուիրական անտառովը հովանաւորուած էր, և այրին մէջ, ուր երբեմն մանուկ Քրիստոս բազմած էր, կ'ողբային Աստղիկի տարփուհին»:

Բայց պէտք է դիտել որ եթէ պատմութեան լուսով պիտի առաջնորդուինք, հարկ կ'ըլլայ աւելցնել թէ Թամմուզի կամ Ադոնիսի հեթանոսական պաշտամունքը քրիստոնէութենէ Ը. դար առաջ մտած էր Պաղեստինի մէջ, ինչպէս յայտնի է Եզեկիէլի (Ը. 14) և Եսայիի (ԺԷ. 10) գիրքերէն: Ադրիանոս կայսրը որքան հրէութեան նայնքան եւ քրիստոնէութեան թշնամի էր, այդ պատճառաւ ուղեց Ս. Տեղերը խափանել կռապաշտութիւն հաստատելով: Ադոնիսի հեթանոսական պաշտամունքը չկարողացաւ խափանել Ս. Ծննդեան այրին մէջ մեր Փրկչին համար կատարուած քրիստոնէից երկրպագութիւնը, Խաչը յաղթեց և Ադոնիսի արձանը վտարուեցաւ Ս. Ծննդեան այրէն:

2. Ս. Ծննդեան եկեղեցին Կոստանդիանոսէն մինչեւ Յուստինիանոս.

Կոստանդիանոսի տիրապետութեամբ քրիստոնէական կրօնի յաղթական պսակը կ'ամբողջանար: Նիկիոյ ժողովին մէջ (325) կայսրը Պաղեստինի եպիսկոպոսներուն հետ կը խորհրդակցէր Ս. Տեղեաց մէջ հինուելիք եկեղեցիներուն ծրագրին վրայ. ժայռին մէջ փորուած գերեզմանը, ուրկէ Փրկիչը յարութիւն առաւ, ա՛յն այրը, ուրկէ համբարձաւ ան, և Ս. Ծննդեան այրը ուր ծնաւ. այս երեք նուիրական այրերը խանդավառած էին իր հոգին՝ անոնց վրայ վաղընդհոյթ բարձրացնելու համար հոյակապ տաճարներ: Մէկ կողմէն կայսրը կը պատրաստուէր այդ նուիրական նպատակին համար, և միւս կողմէն իր մայրը, Հե-

ղինէն, երուսաղէմ կը ղրկէր անձամբ հսկելու համար Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցիին չինութեան: Թէեւ այրին վրայ չինուած եկեղեցիին հսկողն էր Հեղինէ, բայց Եւսեբիոս, իր Նահապետական Կոստանդիանոսի գիրքին մէջ, չինութեան գործը ամբողջովին կը վերագրէ Կոստանդիանոսի. սակայն Կոստանդիանոսի Կենսագրութեան գրուածքին մէջ, անսալով իր ճշմարիտ պատմագրի կոչումին, չ'ուզեր զանց ընել Հեղինէի մասնակցութիւնը Ս. Ծննդեան եկեղեցիի չինութեան մէջ: Կը թուի թէ թագուհին մասնաւոր բարեպաշտութիւն մը կը սնուցանէր նկատմամբ այրին, ուր Ս. Կոյսը ճաչակած էր աստուածային մայրութեան ուրախութիւնները: Հեղինէի նկատմամբ Եւսեբիոսի խօսքերը կը դնենք հոս. «Հեղինէ անմիջապէս երկու տաճարներ կանգնեց, մին Ս. Ծննդեան այրին վրայ, միւսն Համբարձման լերան վրայ»: Թագուհին պատշաճ զարդարանքներով օժտեց Ծննդեան այրը ու անոր վրայ նորոգ կառուցուած եկեղեցին, որ սկսած էր 326 ին դեռ գործը չէր աւարտած, 329ին, Հեղինէ արդէն վախճանած էր:

Մենք Եթերիա ուխտաւորուհիին խօսքերէն գտնելով կը դիտենք որ Բեթղեհէմի նորոգ չինուած եկեղեցին չունէր կառուցուածքի այն չքեղութիւնը, զոր ունէին միւս սրբավայրերը, ինչպէս որ կը նկատէ Պորտոյլ անանուն ուխտաւորը. երկուքն ալ սաղմոսական նորակառոյց տաճարներու մասին կը չռայլեն իրենց գովաբանութիւնը. բայց Բեթղեհէմի եկեղեցին կը նկատեն սովորական տաճար մը, եւ կը գովաբանեն միայն անոր ոսկեայ, արծաթի եւ դիպակի տօնական ճոխ զարդերը. սակայն ամենէն ճիշդ գաղափարը կու տայ նոյն եկեղեցիին կառուցուածքի մասին, վերջին տարիներս գտնուած Մատապայի եկեղեցւոյն մոզայիք քարտէսը: Մատապա սուրբգրական քաղաք մ'է Անդրմորդանանու մէջ, և անոր եկեղեցւոյն մոզայիքը, որ հաւանաբար Ջ. դարու գործ է, կը ներկայացնէ Երուսաղէմի յատակագիծը որ ճշգրտօրէն ցոյց կու տայ Երուսաղէմի պարիսպները, փողոցները և զանազան եկեղեցիները, և կը դիտուի որ Պողոթայի և այլ հոյակապ եկեղեցիներու հետ բաղդատելով Ս. Ծննդեան եկեղեցին սովորական չէնքով մը պատկերացուած է նոյն մոզայիք-քարտէսին վրայ, որով կը հաստատուի հնագոյն դարերու ուխտաւոր ուղեգիրներու ճանաչութիւնը զոր վերև մէջ բերինք:

Եւսեբիոսի և անոր չարունակողներուն խօսքերէն կը հասկըցուի որ Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին և Զիթենեաց Լեռան Աչակերտարանը համանմանութիւններ ունին։ Անոնք միևնոյն ներշնչումէն ծնած են, միևնոյն խնամոց առարկայ եղած են և չինուած են միևնոյն ժամանակ։ Մին և միւսն ալ տարբեր նպատակով նշանաւոր բնական երկու այրերու փառաւորութեան նպատակը ունեցած են. ուխտաւորները իրենք իսկ ըմբռնած են նոյն երկու չէնքերու զուգութիւնը։ Ասոնք տանք Պաւտոյի անանուն ուխտաւորին, որ 330 ին այցելեց Երուսաղէմ, երբ հազիւ աւարտած էին շինութիւնները.— «Դուք կ'ելնէք Զիթենեաց Լեռը, ուր մեր Տէրը աչակերտներուն իր վարդապետութիւնը սորվեցուց չարչարանքէն առաջ։ Հոն եկեղեցի մը չինուած է Կոստանդիանոսի հրամանաւ».— «Անկէց (Հռաքելի գերեզմանը) երկու մղոն դէպ ի ձախ Բեթղեհեմն է. ուր Տէրն մեր Յիսուս Քրիստոս ծնաւ։ Հոն չինուեցաւ եկեղեցի մը Կոստանդիանոսի հրամանաւ»։ Լսենք այժմ Էթէրիան.— «Կ'աղօթեն այն եկեղեցիին մէջ որ կը կոչուի Աչակերտարան. հոն կը գտնուի այն այրը, ուր Յիսուս աչակերտաց սորվեցուց իր վարդապետութիւնը».— «Բեթղեհէմի եկեղեցիին մէջ արարողութիւններ կը կատարէին, նոյն եկեղեցիին մէջ է այն այրը ուր Տէրն մեր ծնաւ»։

Եկեղեցիին չափ այրն ու մսուրքն ալ գեղեցկօրէն կը զարդարէին։ Ցերոնիմոս իր նամակներուն մէջ ամենէն սրտառուչ և խանդավառ տողերը նուիրած է թէ' այրին և թէ' մսուրին փառաւորութեանը համար։ Յիշեցնենք արդէն թէ Որոփինէսի օրերէն ցոյց կու տային այրը և մսուրը։ Ցերոնիմոս Ծննդեան տօնին Բեթղեհէմի մէջ տուած իր մէկ քարոզին մէջ հետևեալ կերպով կը խօսի մսուրի մասին. «Ա՜հ, երանի թէ տեսնէի ա՛յն մսուրը ուր Տէրն մեր բազմեցաւ։ Մենք Քրիստոսը պատուելու պատճառով հողէ մսուրը վերցուցինք անոր տեղ արծաթէ չինուած մսուր մը դնելու համար։ Վերցուած մսուրը ինձ համար աւելի թանկագին էր։ Ոսկին և արծաթը հեթանոսութեան համար են, բայց քրիստոնէական հաւատքը այս հողէ մսուրին արժանի է։ Անիկա որ ծնաւ հոն, կը դատապարտէ ոսկին և արծաթը։ Ես չեմ դատապարտեր սակայն զանոնք որ բարեպաշտութեամբ այդպէս վարուած են. բայց կը հիանամ Տիրոջը վրայ, որ թէպէտև աշխարհի արարիչը, կը ծնի ոչ թէ ոսկիին և արծաթին մէջ, այլ

հողէ մսուրին մէջ»։ Ահա այս տողերով կ'ողբար անուանի մենակեացը զանցառութեանը վրայ ա՛յն պարզութեան՝ որ Բեթղեհէմի հրապոյրն էր։ Արծաթէ մսուրը այն «զարմանալի խորհրդանշաններէն» էր, զոր Ս. Հելինէ Ս. Ծննդեան այրին մէջ զետեղեց կուսական որդեծնութիւնը պատուելու համար։

Շատ կանուխէն Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ այլ և այլ քրիստոնեայ ժողովուրդներ ու վանականներ իրենց լեզուով կը կատարէին սաղմոսերգութիւն և պաշտամունք։ Երուսաղէմի կլերները նոյնպէս տօնակատարութիւններ ունէր Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ։ Էթէրիա իր Ուղեգրութեան մէջ կը նկարագրէ թէ' Ս. Գերեզմանի և թէ' Ս. Ծննդեան եկեղեցիներու մէջ մասնայատուկ տօները և արարողութիւնները. նոյն ուխտաւորուհիին խօսքերէն կը հասկցուի որ Ս. Զատկէն քառասուն օր վերջը հինգշաբթի օրը Երուսաղէմացիք Բեթղեհէմ կ'երթային և հո՛ն կը կատարէին տեղւոյն և օրուան յարմար պաշտամունք և կը յիշատակէին Քրիստոսի Ս. Ծնունդը, և պարզ է դիտել այս յիշատակութենէն որ Դ. դարուն տակաւին հաստատուած չէր Համբարձման տօնը. վասն զի եթէ ան գոյութիւն ունենար՝ փոխանակ Բեթղեհէմի, Համբարձման եկեղեցին հարկ կ'ըլլար երթալ, ինչպէս յետոյ կ'ընէին և այժմ ալ կ'ընենք, Համբարձման եկեղեցին երթալով։ Այս տօնակատարութենէն զատ, Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ հանդիսաւորապէս կը կատարուէր Քրիստոսի Ս. Ծննդեան և Աստուածայայտնութեան տօնը Յունուար 6ին, ինչպէս կը յիշատակէ դարձեալ նոյն ուխտաւորուհին։ Նոյն օրը Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ կանոնական պաշտամունք կատարելէ յետոյ կղերականք թափօրով կ'երթային Հովուանոցի եկեղեցին և հոն ալ կը կատարէին պատշաճ արարողութիւններ. այս մասին կը վկայէ 690 ին նաև մեր Գրիգոր Աբշարունի վարդապետը իր «Ընթերցուածոց Մեկնութեան» գիրքին մէջ։

3. Ս. Ծննդեան եկեղեցին Յուստինիանոսէն մինչեւ Խաչակիրները.

Ժ. դարուն, Աղեքսանդրիոյ պատրիարք Եւտիքիոս թողած է մեզ Տարեգիրք մը, որ բիւզանդական և արաբական չրջաննե-

րու պատմութեան վերաբերմամբ Թանկապին բովք մըն է և ա-նոր տեղեկութիւնները հնախօսական և մատենագրական յետնա-գոյն գիւտերու մէջ քանիցս ստացած են փայլուն հաստատու-թիւններ: Ս. Ծննդեան եկեղեցւոյ վիճակի մասին ան կը պատմէ արտավէպ մը (anectode) Զ. դարու, զոր պէտք չէ զանց ընել, ցորչափ անով կը հաստատուին նոյն եկեղեցիին ուսում ունասիրու-թեան եղրակացութիւնները: Սամարացիներուն կողմէն երուսա-ղէմի այրուած եկեղեցիներուն և հիւրանոցներուն վերաշինու-թեան առթիւ Աղիքսանդրեան Տարեգիրը կը շարունակէ.— «Թա-գաւորը պատուիրեց պատուիրակին քանդել Բեթղեհէմի եկեղե-ցին, վասն զի ան փոքր էր, և չինել զայն աւելի հոյակապ, ըն-դարձակ և փառաւոր, այնպէս որ երուսաղէմի մէջ անոր նմանը չգտնուի: Պատուիրակը երուսաղէմ հասնելով՝ ուխտաւորաց հա-մար չինեց հիւրանոց մը, նորոգեց այն եկեղեցիները զոր այրած էին Սամարացիները. բազմաթիւ վանքեր վերականգնեց, վեր-ջապէս Բեթղեհէմի եկեղեցին փլցուց և վերաշինեց, ինչ որ այ-սօր կը տեսնուի: Երբ ամէն բան վերջացաւ, ան եկաւ թագա-ւորին մօտ, որ ըսաւ անոր. «Նկարագրէ ինձ թէ ի՛նչպէս չինե-ցիր Բեթղեհէմի եկեղեցին»: Երբ ան նկարագրեց զայն, թագա-ւորը անոր նկարագրութիւնը վայելուչ չգտաւ և չհաւնեցաւ ա-նոր նկարագրած ձևին: Այն ատեն բարկացաւ անոր և ըսաւ. «Ցափշտակեցիր դրամները և ողջար: Դուն չինեցիր չէնք մը որ շատ փոքր է և մթին: Իմ ուզածիս պէս չինած չես եկեղեցին և ինձ խորհուրդ չես հարցուցած»: Այս խօսակցութենէն յետոյ թա-գաւորը զանիկա պլխատել տուաւ:

Մէկ կողմ դնելով զարդարանքի մասերը, այս պատմութեան հիմը կարևոր կը դանենք՝ Ս. Ծննդեան եկեղեցին յուստինիա-նոսեան վերանորոգութեան առթիւ:

Նախ ճչգնենք Յուստինիանոսի մտադրութիւնը և իր նպա-տակին գործադրութիւնը: Յուստինիանոսի նման մեծ չինարար կայսր մը ծրագիր մը ունեցած է Բեթղեհէմի կոստանդիննեան ե-կեղեցիին տեղ չինել աւելի բարձր, աւելի հոյակապ, իր ժամա-նակին յարմար չքեղ չէնք մը, կասկած չկայ ասոր: Կայսրը սի-րահար չքեղ և մեծակառոյց չէնքերու, իր յիշատակը յաւերժա-ցընելու համար կայսրութիւնը կործանելու ատիճան իր անձնա-կան փառքին խանդավառուած՝ առիթ չէր փախցնէր կոստանդ-դինեան եկեղեցիներուն պարզութիւնն ու միաձևութիւնը փո-խանակել չքեղութիւններով և նոր ոճի յանդուգն համեմատու-թիւններով: Բիւզանդիոնի մէջ այլ և այլ առիթներով փլցուած ու վերաշինուած եկեղեցիներուն մէջ կայսեր հրամանով կը հաս-տատուէին նոր ոճեր՝ որ երբեք նմանութիւն չունէին փլցուած կամ կործանուած հին եկեղեցիներուն: Բեթղեհէմի եկեղեցին ալ, 529 ին Սամարացւոց ապստամբութեան առթիւ, վնասուած էր: Այս մասին ո՛ևէ բացայայտ տեղեկութիւն չունինք: Միայն զայն կարելի է հետևցնել այն յիշատակութենէն, զոր Եւտիքիոս իր պատմութեան հետ կը խառնէ Սամարացիներուն կողմէն հրդեհ-ուած սրբավայրերու վերաշինութիւնը և Բեթղեհէմի պարիսպ-ներուն նորոգութիւնը, զոր Պրոկոպիոս ցոյց կու տայ Յուստի-նիանոսի գործերուն մէջ: Նոյն իսկ անկարելի է աւելի հաւաս-տատել թէ Ս. Ծննդեան եկեղեցին, որ այն ատեն եր-կու հարիւր տարուան հնութիւն ունէր, այն աստիճան փլփլած էր որ կարևոր նորոգութիւններու պէտք ունենայ, թէպէտև ըլլայ որ կարևոր նորոգութիւններու պէտք ունենայ, ընդունելի ըլլայ այս կարծիքը ըստ ինքեան հաւանական, ընդունելի ըլլայ օրի-նակովը Ս. Առաքելոց եկեղեցւոյն, որ Բեթղեհէմի կոստանդին-եան եկեղեցիին ժամանակակից էր, և սակայն Զ. դարուն աւե-րակ դարձած էր լոկ իր հնութեամբը, ըստ Պրոկոպիոսի:

Ստոյգ է որ Զ. դարուն, խորհրդանշանական և ծիսական պատճառով մը նախընթաց դարերուն հիմնարկուած քրիստոնէա-կան եկեղեցիները փոփոխութիւններու ենթարկուեցան: Նախնի դարերու մէջ քիչ գործածուած խաչաձև յատակագիծը կը ձկտէր նոր ծաւալ մը ստանալ, քրիստոնէական գաղափարին յարմար-նոր ձև մը: Բայց ատի, նոյն ձևը կը համապատասխանէր ծիսական նորութեան մը, որ էր Խորհրդանոց (Prothèse) ունենալ և Մեծ Մուտք (Grande Entrée) կատարել (*): Ս. Հաղորդութեան ընծա-ներուն պատրաստութիւնը այս ժամանակէն վերջ սեղանէն դուրս

(*) Հոգելոյս Տ. Եղիշէ Դուրեան Սրբազան դիտել տուաւ մեզ թէ մեր խորհրդատետրին մէջ Ս. Պատարագի թափօրէն յետոյ, ձաչու շարա-կանին ժամանակ, ծածուկ կարդացուած «Ճէր Աստուած մեր» աղօթքին մէջ «Աւա՛ այժմ ընդ **մուսս** մեր մտանել...» նախադասութեան **մուտ** բա-ռով՝ կը հասկցուի, ըստ Ոսկեբերանի պատարագամատոյցին, պատարա-գի խնկարկութեան թափօրը կամ Փոքր Մուտքը, որու մասն է Աւետարանի վերաբերումը. իսկ Մեծ Մուտքը կը կատարուի սկիհին վերաբերումով:

կատարուելով՝ տեղի կ'ունենար երկրորդական կողակի մը մէջ. այն տեղէն է որ այս ընծաները կը փոխադրուէին գլխաւոր կողակին մէջ հաստատուած սեղանը: Խորհրդանոցին հակառակ կողմէն բացուած երրորդ կողակ մը կը կոչուէր սարկաւագատուն՝ մեծ աւանդատան հետ ունեցած մերձաւորութեան պատճառաւ: Ցոյներէն ոմանք կը կարծեն թէ Ցուստինիանոս հրեշտակներուն պատուէրին համաձայն որոշած էր Ս. Սոփիայի մէջ երրեակ կոնք մը սեղծել: Պէտք կ'ըլլայ ըսել թէ Կ. Պոլսի և նոյն իսկ կայսրութեան մէջ այդպիսի մասնայատկութիւն մը այդ թուականէն յառաջ չատ քիչ տարածուած էր: Այդ ձեռնարկին մէջ կը տեսնուէր Ս. Երրորդութեան խորհրդանշանը, ինչպէս նաև խաչին պատկերը: Սակայն պէտք է գիտնալ որ «խաչաձև» բառը ի հարկէ չ'ենթադրեր խաչի բազուկներուն հաւասարութիւնը. ան կը յարմարի նմանապէս եկեղեցիի մը, որուն երկար կոնքերը (nefs) կը յենուն սրբավայրի մը՝ օժտուած երեք կողակներով որ բացուած են միևնոյն գիծին վրայ, բայց անոնց երկարքը, հիւսիսայինը և հարաւայինը, իրարու երես կը նային սրեւելեան կողակին հետ կազմելով տեսակ մը առուոյտ, ինչպէս են օրինակի համար Շնուտիի եգիպտական վանքերու եկեղեցիները: Անոնց, որ եղջերաւաքաղ կը նկատեն գոյութիւն ունեցող եկեղեցիներուն ծիսական և ճարտարապետական նոր պահանջներուն յարմարումը, թանձրացեալ օրինակ մը յառաջ կը բերենք, այն է Կ. Պոլսի Վլաչէրնի Ս. Աստուածածին եկեղեցին: Այս տաճարը որ 450էն յետոյ Մարկիանոսէն և Պուլքերիայէն չինուած էր, մինչև Ցուստինոս Բ. (565–578) պահեց միակ կողակ մը, զոր ունէր իր հիմնարկութեան ժամանակ: Բայց այս կայսրը, յարգելով իր նախորդներուն դէմ հաստատուն մնացած գործը, պարտք կը համարի այս եկեղեցիին խաչի մը ձևը տալ՝ աւելցնել տալով կողակ մը հիւսիսային կողմը և կողակ մըն ալ հարաւային կողմը: Արդեօք նմանապէս չե՞ն օգտուած Երուսաղէմի մէջ Ս. Յարութեան Կոստանդինեան բոլորշի եկեղեցին օժտելու նոյն եղանակով, 614ի պարսկական արշաւանքին առիթով:

Քրիստոնէական չէնքերու նոր բաժանման ուրիշ մէկ տարր մը, այսինքն գաւիթ (narthex) չինելը Զ. դարուն խիստ տարածուն սովորութիւն մը եղած է: Ցիշատակարաններէն դատելով, Երուսաղէմի մէջ գաւիթ ունեցող առաջին եկեղեցին էր Ս. Աստուածածինը, որ չինուած էր 543ին Ցուստինիանոսի առատաձեռնութիւններով: Գաւիթը գրաւեց անդաստակը (atrium) սրահին տեղը, որ նախապէս կը տարածուէր եկեղեցիին ճակատը: Բայց այս սրահը միշտ չէր ջնջուեր: Երբեմն զայն գաւիթին առջև բերելով գոհ կ'ըլլային, և չորս սիւներով անդաստակին հետ միաժամանակ ան գոյութիւն կ'ունենար:

Այսպէս Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին վերաշինելու ծրագիրը, ինչպէս որ յղացաւ Ցուստինիանոս, կրնար ծնունդը ըլլալ, ինչպէս ծիսական կարգի, նոյնպէս արուեստական դիտումներու հետևանքով: Եկեղեցիներու շինութեան մէջ կղերի մասնակցութիւնը կը վկայէ թէ ծիսական պահանջներու հոգը երբեք մեկ կողմ թողուած չէր: Եթէ Ս. Գերեզմանի աշխատանքներու ձեռնարկը Կոստանդիանոսի կողմէն Բիւզանդացի քահանայի մը՝ Եւստաթիոսի յանձնեցաւ, Պարագոս եպիսկոպոսին հսկողութեան տակ, Ցուստինիանոսի ճարտարապետ Թէոտորի պաշտօն տրուեցաւ երուսաղէմի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շինութիւնը: Կայսրը երկու եպիսկոպոսներու՝ Սակաղոնցի Անտոնի և Բելլացի Զաքարիայի յանձնարարեց Սամարիացիներէ հրդեհուած եկեղեցիները քննել և անոնց վերաշինութեան ծախքերը ճշդել: Պետական գանձը կամ Սամարացիներուն հարստութիւնները պիտի հոգային այս ծախքերը: Այս վերջիններուն աւերները կը տարածուին, ինչպէս առաջին Պաղեստին, որուն կը վերաբերէր Բեթղեհէմը, նոյնպէս երկրորդ Պաղեստինը որ կը բովանդակէր Սկիւթոպոլիսը և Դեկապոլիսը:

Որո՞նք են Ցուստինիանոսի մեծ ծրագիրը և Ս. Ծննդեան եկեղեցւոյ վիճակը երբ սկսուեցան փոփոխութիւնները որ կը պարզուին յիշատակարանին պարզ քննութեամբ մը, որմէ անտարակոյս կը հասկցուի թէ ծիսական զարգացմամբ ստեղծուած պահանջին գոհացում տրուած է: Բազմաթիւ եկեղեցիներու վերաբերութեամբ Բիւզանդիոնի մէջ կատարուածին նման, կայսեր ճարտարապետական փառասիրութիւններու համապատասխան նոր սրբավայր մը ստեղծելու համար Բեթղեհէմի եկեղեցին ամբողջ չէնքը չէ քանդուած, հակառակ Եւթիքիոսի պատմութեան: Բայց և այնպէս անճիշդ պիտի ըլլայ կարծել թէ նախնական չէնքը բացարձակ կերպով անվթար մնացած ըլլայ, վասն զի ամէն վերյարդարում ոևէ կանխահաս քանդում կրնայ ունենալ: Ցուստինի-

անոսի ճարտարապետին կողմէն Բեթղեհէմի մէջ կատարուած աշխատանքը կը նմանի Յուստինոս Բ.ի Վլաչերնի եկեղեցիին և Մոտեստոսի Ս. Յարութեան մէջ կատարած աշխատանքներուն: Եւտիքիոսի պատմութեան համաձայն, Յուստինիանոս իր ճարտարապետը կը յանդիմանէ երկու կէտերու մասին, առաջինը սա է՝ թէ ան Բեթղեհէմի եկեղեցիին սիւնազարդ և հոյակապ անդաստակը քանդած է և եկեղեցին ձեղցուցած է և անոր տեղ չինած է սովորական և փակ գաւիթ մը. երկրորդը սա է՝ թէ նախնական ներդաշնակաւոր եկեղեցիին պատերուն մէջ կոչտ ծակեր բացած է հոն կողակներ դնելու համար:

Ճարտարապետը կը թուի թէ փոխանակ իր ծրագիրները կայսեր հաւանութեան ենթարկելու, փութացած է գոհացում տալու կղերին տեսութիւններուն: Սակէց զատ, կը կարծուի այս նպատակին տրամադրուելիք դրամները անբաւական էին կայսեր մեծ փափաքին համապատասխան նպատակին հասնելու համար:

Այս վերյարդարումներէն հազիւ մէկ դար վերջ, Ս. Ծննդեան եկեղեցին նոր վերանորոգութիւն մը պիտի պահանջէր, եթէ 614ի Երուսաղէմի սրբավայրերուն դժբախտ ճակատագիրներուն վիճակակից ըլլար: Բայց ան Պարսից արշաւանքներէն ղերծ մնաց: Նոյն եկեղեցին իր պահպանութիւնը կը պարտի մանաւոր պատգամի մը, որ իր տարօրինակութեան հակառակ, խիստ հաւանական է: Եկեղեցիին ճակատը կամ անդաստակին վերին սրահը զարդարող մոզայիք մը կը ներկայացնէր Մոգերուն երկրպագութիւնը, այնպիսի ձեւի մը տակ որ խիստ տարածուած էր քրիստոնէական թուականի առաջին դարերուն և որմէ խիստ յստականշական օրինակներ պահած են Գետնազամբաններու նշխարաց սրճաւակներու նկարչութիւնները եւ բիւզանդական պատկերագրութիւնը: Մինչ կոյսը՝ գահու մը վրայ նստած և Յիսուս Մանուկը գրկած է, աստղը կը փայլի իր գլխուն վրայ, մոգերը բազկատարած կը մօտենան, պարսիկ տարազ հագած, փռիւգական գդակը գլուխնին, ուռուցիկ պատմուճանը սեղմող գօտին և վրայէն ալ կարճ վերարկու մը ձախ ուսին վրայ ճարմանդուած և որուն ծալքերը յետ կոյս կը ծածանէին: Պարսիկ արշաւողները այս տարազը դիւրութեամբ ճանչցան: Այս արտաքինով չէ՞ որ իրենց Միթրա աստուածը ամէն տեղ կը ներկայանար: Փռիւգական գդակը անոնց աչքին մխիթիք նշանակութիւն

մը չունի՞: Այն ճառագայթները որոնցմով կը չրջանակուէին գդակին (pileus) պատկերը, կը վկայէին իրենց յարգանքը աստուածային խորհրդանշանին հանդէպ: Մոգերը որ սովորաբար կը գրգռէին Յոսրովի հրեաները քրիստոնեայ տաճարները քանդելու, պարտք զգացին հանդարտիլ ի տես այս անձնաւորութիւններու, որ հագած էին իրենց և իրենց աստուածոյն զգեստը: Սրբավայր մը զոր կը պաշտպանեն պատկառելի խորհրդանշաններ եւ իրենց նախորդներուն պատկերը, սրբապղծութիւն մը պիտի ըլլար կրակի տալը:

Այս հետաքրքրական արտավէպը հասած է մեզ պատկերամարտութեան վերաբերեալ Թ. դարու սինոդական նամակի մը մէջ, որուն բնագիրը բղխած է Երուսաղէմի 836ի ժողովին մէջ և առաջին անգամ տպագրուած է 1874ին:

634ին Սարաքներու արշաւանքին պատճառաւ Երուսաղէմի քրիստոնեաները արգիլուեցան Բեթղեհէմ երթալ Ս. Ծնունդը տօնելու համար: Նոյն ժամանակը Սոփրոնիոս պատրիարքը իր ծննդեան քարոզին մէջ կ'ակնարկէ ըսելով թէ Բեթղեհէմը պաշարուած է և այժմ անմերձենալի է, անկարելի է տեսնել նուիրական Մսուրը և Այրը: Նոր արշաւողները եկեղեցիին և այրին զարդերը և կարասիները աւերեցին, բայց եկեղեցին անաղարտ թողուցին: 638էն սկսեալ Ս. Երկիրը արաբական իշխանութեան տակ մը մնաց, ինչպէս նաև Բեթղեհէմը:

Օմար ամիրապետին Երուսաղէմի գրաւած ժամանակ, Ս. Ծննդեան եկեղեցիին քանդումէ զերծ մնալուն պարագան խալամ պատմագիր Եագուբ (ԺԹ. դար) հետեւեալ կերպով կը նկարագրէ, (Տե՛ս Palestine under the Moslems, էջ 300) «Բեթղեհէմն է այն տեղը ուր Յիսուս ծնաւ. ան մօտ է Երուսաղէմի: Հոն կան չատ գեղեցիկ չուկաներ: Հոն կը գտնուէր այն արմաւենիի ծառը՝ զոր կը յիշատակէ Գուրանը: Այս տեղերը արմաւ չի հասուննար. բայց այս մէկ ծառը բացառութիւն է: Ան յիշուած է Գուրանին մէջ, և Մարիամին կը տրուի նոյն արմաւէն եգիպտոս փախած ժամանակ. ասիկա եղաւ հրաշք մը պաշտպանելու համար զանիկա. զրոյցը այսպէս կ'ըսէ. եկեղեցի մը, որուն նմանը չրջակայքը չի գտնուիր: Երբ Օմար ամիրապետը Երուսաղէմ եկաւ, Բեթղեհէմցի վանական մը անոր մօտեցաւ և ըսաւ. քեզմէ չնորհք մը պիտի խնդրեմ Բեթղեհէմի համար. Օմարը ըսաւ. այդ տեղը չեմ

գիտեր, բայց կը սիրեմ տեսնել զայն: Երբ Օմար հոն գնաց, ըսաւ ժողովուրդին, դուք չնորհք պիտի գտնէք եւ ապահովութիւն, բայց մեզ համար անհրաժեշտ է որ այն ամէն տեղեր ուր քրիստոնեաները կը գտնուին, մզկիթ մը կառուցանենք: Վանականը պատասխանեց, Բեթղեհէմի մէջ կը գտնուի կամարակապ չէնք մը՝ այնպէս մը չինուած է, որով կարելի կ'ըլլայ գառնալ դէպի ձեր Քիպլէն, ա՛ռ զայն և չինէ՛ իսլամներուն համար մզկիթ մը, և եկեղեցին մի՛ քանդեր: Օմար այս կերպով կը խնայէ տաճարին և իր աղօթքը կը կատարէ կամարակապ չէնքին մէջ, եւ կը վերածէ զայն մզկիթի, քրիստոնեաները պարտադրելով կանթեղներով լուսաւորել զայն և անոր մաքրութեան ու նորոգութեան հսկել: Իսլամները սերունդէ սերունդ մնաւ չեն գադրած այցելելէ Բեթղեհէմ և իրենց աղօթքները կատարելէ այս կամարակապ չէնքին մէջ, որ Օմարի չէնքն է: Մինչև հիմակ ալ նոյն չէնքը ծանօթ է այս անունով. վասն զի ֆրանկները (Խաչակիրները) բան մը չփոխեցին՝ երբ անոնք երկրին տիրեցին: Կ'ըսեն թէ հոն կը գտնուին Դաւթի և Սողոմոնի գերեզմանները»:

Յուստինիանոսի աշխատանքներէն անմիջապէս յետոյ Բեթղեհէմի եկեղեցին և այրին ձևին և դիրքին վերաբերմամբ տեղեկութիւնները աւելի ճոխ են: Այցելու մը որ առաջին անգամ տաճար կը մտնէ առաջին նայուածքով կը տեսնէ աջէն ու ձախէն կրկնակ սիւնաշարք մը, որ եկեղեցին կը բաժնէ երեք կոնքերու (nefs) և երբեակ կողակներու որ անոր կու տան խաչի ձև մը: Սիւներու թուոյն նկատմամբ յիշատակարանները կը տարբերին, բայց Ժ. դարուն անոնց թիւը կը համրուի յիսուն: Այս եկեղեցին ունէր առանձնայատկութիւն մը, որուն յիշատակութիւնը ի զուր կը փնտռենք Յուստինիանոսէ յառաջ. այսինքն եռադասեան ձևը (trichorale) և խաչաձև յատակագիծը, զոր կը ձևացնէր Ս. Ծննդեան եկեղեցին: Եկեղեցին աւելի պայծառացած էր խոյակներու ոսկեզօծումով, քովէքարներու (architrades) քանդակներով և որմերու մոզայիքներով: Այս հրաշալիքներու մնածումը միայն գմայլանքի կը մղէ Սոփրոնիոս բանաստեղծը. «Ի տես ոսկեճաճանչ սիւներու և գեղակերտ մոզայիքներու, իմ վիշտերուս ամպը կը ցրուէր: Աստղերու նման փայլող պըշակները կը նչմարէի, չնորհիւ արուեստաւորին ճարտարութեան, հո՛ն է որ երկինքի փառքը կը պարզուի»:

Ըստ Արգիւլֆի, Ք. դարուն Բեթղեհէմի եկեղեցին կը կոչուէր Ս. Աստուածածին: 870ին Բեռնարդոս վանականին համաձայն, այրին մուտքը կը բացուէր հարաւային կողմը, մինչ ելքը կը գտնուէր արևելք: Լատինական տիրապետութեան սկիզբը, այս արևելեան դուռը նշանակուած կը գտնենք Դանիէլ կրօնաւորի Ուղեգրութեան մէջ. «Արևելեան դռնէն Ս. Այրը մտնելով՝ հողին վրայ ձախին կ'ուենանք այն տեղը ուր ծնաւ մեր Տէրը, վրան կը գտնուի սեղան մը, ուր պատարագ կ'ըլլայ»: Այցելու մը այսօր հիւսիսային սանդուխէն պիտի իջնէ, այլապէս պիտի չը կարենայ արտայայտուիլ: Շատերը կը պնդեն սակայն, արևելեան կողմի մուտքն է որ կսթծել կու տայ մեզ թէ՝ Ժ. դարուն, Այրը իջնելիք սանդուղին ուղղութիւնը քանի մը փոփոխութիւններ կրած է:

Այս երկրորդ չրջանին ուխտաւորները համաձայն են Մսուրէն զանազանել Քրիստոսի ծննդեան տեղը: Ծննդեան տեղը Այրին արևելեան կողմն է, առաջին տեղն է այն՝ որուն կը հանդիպի ուխտաւորը, երբ ներս մտած է: Անոր վրայ չինուած է սեղան մը հանդիսաւոր պատարագներու համար: Դուրսը կը դրուի չարժուն սեղան մը, մանաւորներու արարողութիւններու յատուկ: Անատոլիոս կը հիայ թէ արդեօք փոքր կողակի մէջ հաստատուած սեղան կա՞ր, ինչպէս այսօր կայ: Կը կարծենք թէ այս չրջանին գոյութիւն ունէր չորս սիւներով սեղան մը, ինչպէս կ'երևի Ժ. դարուն: Պատմիչներուն և ուղևորներուն ըսածին նայելով Այրը ունէր ոսկեզօծումներ և լաւ պահպանուած նկարներ:

Այս չրջանին յիշատակարանները նուազ բացայայտ են Մսուրքի մասին. որոշ բան մը չէ կարելի ըսել թէ Ս. Հեղինէի արծաթ Մսուրքը ի՛նչ եղած է Պարսից և Արաբաց ալչաւանքին ժամանակ: Հաւանական է որ ան ուրիշ սրբութիւններու հետ Պոլիս փոխադրուած ըլլայ, պատերազմներու հետևանքով: 1157 ին Պոլսի եկեղեցիներէն միոյն գանձատան մէջ էր «ա՛յն Մսուրը որուն մէջ բազմեցաւ Փրկիչը»: Յուստինիանոսի կատարած վերանորոգութեան ժամանակ Ս. Այրին բաշխումին մէջ ուէ փոփոխութիւն կատարուեցա՞ւ: կարելի է և նոյն իսկ հաւանական, ա՛յն փոփոխութիւններու հետեւանքով զոր կրեց վերնայարկի սրբավայրը: Օրինակի համար, այս երկրորդ չրջանին, կը հաս-

տատանք թէ Ա.յրին սեղանը Մասուրին մօտ չէր գտնուեր, ինչպէս Ցերոնիմոսի օրով, այլ այն տեղը որ Փրկչին Ծննդեան տեղը կը համարուէր: Ա.յրին հիւսիսային կողմն ալ ցոյց կու տային ջրոր մը՝ ուր լուացած էր մոգերուն աստղը, ըստ Եպիփանի:

Ցիշատակարան մը Commemoratorium de Casis Dei խորագրով կը գրէ թէ Բեթղեհէմի եկեղեցին Թ. դարուն ունէր տասն և հինգ կղերներ՝ քահանայ եւ վանական, ինչպէս նաեւ երկու մենաստեացներ: Բայց Երուսաղէմի կղերը կը չարունակէր Բեթղեհէմի մէջ կատարել Ս. Ծննդեան տօնը և նոյն եկեղեցին յատուկ տօները, ինչպէս կը հասկցուի Սոփրոնիոսի վերոյիշեալ խօսքերէն: Հաքէմ Խալիֆայի (1009) քանդումէն զերծ մնաց նաև Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին բարեբախտ պատճառներու հետևանքով, այնպէս որ 1029ին և 1047ին ուղեկից ուխտաւորները հիացումով կը յիշեն ուխտական մեծ տօները և հանդիսութիւնները, զոր կը կատարէին քրիստոնեայք Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին մէջ:

4. Ս. Ծննդեան եկեղեցին Խաչակիրներէն մինչեւ Սալահէտտին.

Խաչակիրները գալէն յառաջ Պաղեստինի գրեթէ բոլոր եկեղեցիները Արաբներուն ձեռքով կործանուեցան, միայն Բեթղեհէմի Ս. Կուսի եկեղեցին ազատ մնաց կործանումէ: Բեթղեհէմցիները Ս. Ծննդեան տաճարին պահպանումին համար, երբ լսեցին թէ Խաչակիրները Էմմաուս հասած են ու պիտի յարձակին Երուսաղէմի վրայ, խաչակիր բանակին ընդառաջելով դիմեցին դուքս Կոտֆրուայի որ փութայ օգնութիւն ղրկել. նկատի առնուեցաւ Բեթղեհէմցիներու խնդրանքը և Դուքսը՝ Թանկրէտի և Պուրկի Պաղտինի առաջնորդութեամբ Բեթղեհէմ փութացուց հարիւր ընտիր ասպետներու գունդ մը, որ առաւօտուն կանուխ Բեթղեհէմ հասնելով ցնծութեան աղաղակներով ընդունուեցաւ և առաջնորդուեցաւ դէպի Ս. Ծննդեան եկեղեցին: Տեղացի կղերը մասնակցեցաւ այս խանդավառ թափօրին, որուն երաժշտական երգերուն խառնուեցան ուրախութեան արցունքները: Դոհաբանութեան երգերէն ու Ս. Ա.յրին այցելութենէն յետոյ, Թանկրէտ ի նշան յաղթութեան դրօշակ մը բարձրացուց Ս. Ծննդեան

եկեղեցիին վրայ, յետոյ գնաց ասպետներու գունդը՝ միանալու բանակին՝ մասնակցելու համար Երուսաղէմի գրաւման:

Ս. Տեղերու յաղթութեան հետևանքով Կոտֆրուայի կողմէն հիմնուած լատին թագաւորութիւնը յանձնուեցաւ անոր եղբօրը՝ Պաղտինի, որ փառասէր մրցակիցներու դէմ իր վեհապետական իրաւունքները ապահովելու համար պարտք համարեց թագաւոր պսակուիլ: Յայտնի է ա՛յն կրօնական զգացումը՝ որ ստիպած էր Կոտֆրուայի դուքսը հրաժարելու թագաւորական տիտղոսէն: Պաղտին նոյնանման մտածումով մը առաջնորդուեցաւ թագադրութեան համար նախամեծար համարիլ Բեթղեհէմը Երուսաղէմէն: Պատմիչ մը կ'ըսէ թէ «ան յատկինութիւն չունեցաւ թագ դնելու, ոսկիով և պատուական քարերով զարդարուելու և թագաւոր հռչակուելու Երուսաղէմի մէջ, ուր մեր Փրկիչը, թագաւորաց թագաւորը մինչև ի մահ խոնարհած է աշխարհի փրկութեան համար կրելով փշեղէն պսակը»: Այս ընտրութեան պատճառներուն մէջ պէտք է նկատել նաև Դաւթի օծման յիշատակն ի Բեթղեհէմ, որ անոր հայրենական վիւղն էր: Պաղտին Ա.ի թագադրութիւնը հանդիսաւորապէս տեղի ունեցաւ 1101 Ծննդեան տօնին օրը: Քսան տարի վերջը դարձեալ Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ Պաղտին Բ. և իր կինը ընդունեցին թագաւորական օծումը: Այդպիսի առանձնաշնորհում մը պիտի բարձրացնէր Բեթղեհէմի եկեղեցիին գերընտրութիւնը և իր վրայ պիտի հրաւիրէր իշխաններու նպաստը: Բեթղեհէմի եկեղեցին 1101ին ժողովրդապետութիւն էր, 1101–1110ին վանահայրութիւն. այս վերջին թուականին, Պաղտին Ս.ի խնդրանքին վրայ՝ եպիսկոպոսութեան բարձրացաւ: Ասկաղոն, որուն ի վնաս հաստատուեցաւ եպիսկոպոսական նոր աթոռը, իրր ժողովրդապետութիւն հպատակեցաւ Բեթղեհէմի: Այսպէս էր նաև Նազարէթը, որ ի վնաս Սկիւթուպոլսի, եպիսկոպոսութեան բարձրացաւ: Իրր մայրաքաղաք՝ շատ հին աւանդութիւններուն և մերձաւորութեանը պատճառաւ Երուսաղէմի կատարած ոտնձգութիւններէն Բեթղեհէմի եկեղեցին պաշտպանելու համար, վեհապետները մեծամեծ նպաստներ հաստատեցին հոգալու համար ո՛չ միայն կղերին սպրուստը, այլ նաև, գոնէ մասամբ, այն նորոգութիւնները զոր կը պահանջէր հնամենի եկեղեցին: Աշխատաւորներն ալ առատօրէն մասնակցեցան թագաւորներուն հետ:

Ստոյգ է որ ժԲ. դարուն սկիզբը Ս. Ծննդեան եկեղեցին իր նախնական գեղեցկութիւնը կորնչուցած էր: Կոստանդիանոսէն ի վեր անցնող ութ դարերը Ս. Սլրը բերած էին միլիոնաւոր ուխտաւորներ, և չատ անգամ ալ բարբարոս հրոսակներ: Ամենէն հաստատուն և լաւագոյն կերպով չինուած սալայատակ մը կրնա՞ր այնքան երկար ժամանակամիջոցի մը մէջ անվնաս մնալ ուխտաւորներու խոշոր ու կոշտ կօշիկներուն անդադրում չփումներէն: Պէտք է նաեւ նկատի առնել հեռուէն եկող այնքան հաւատացեալներուն այն բարեպաշտիկ վանտալականութիւնը՝ որով կ'ուզէին իրենց մօտ ունենալ ո՛նէէ Ս. Տեղի մը մասունքը, ժայռի մը կամ մոզայիքի մը բեկորը, մարմարի կամ ծեփի կտոր մը, այն ալ ընդհանրապէս չատ գէշ կերպով ձեռք բերուած: Մոմերու և խունկերու ծուխը, ինչպէս նաեւ զարաւոր փոշիներու համաբարդութիւնը աղօտացուցած էին մոզայիքներու պայծառութիւնը: Եթէ ժԲ. դարու մոզայիքները սկսած կ'երեւնային 1461ին ուխտաւորի մը, ի՞նչ վիճակի մէջ կրնային գտնուիլ 1100ին, Դ. կամ Զ. դարու մոզայիքները: Այդ պատճառաւ է որ Մաչակիրները չանացին հաստատել եկեղեցիին վաղեմի բարեզարդութիւնը: Իրենց աշխատանքները մէկ օրէն միւսը չաւարտեցան, ամենէն կարեւորներէն սկսան, այսինքն՝ չէնքին, տանիքին կամ յատակին վերաբերեալ մասերէն սկսելով աւարտեցին պատերուն զարդարանքովը:

Մաչակրաց տիրապետութենէն յետոյ Ս. Ծննդեան եկեղեցիին այլ և այլ փոփոխութեանց ծանօթութեամբ կարող կ'ըլլանք ըմբռնել թէ Մաչակիրք ի՛նչպիսի բազմաթիւ անհրաժեշտութիւններով յարդարեցին եկեղեցին, չորս դարու արաբական գրաւումէն յետոյ:

Ուշեգիր ուխտաւորներ այս չրջանին մէջ բաւական ծանօթութիւններ տուած են այս եկեղեցւոյ մասին. անոնց նկարագրութիւններէն կը քաղենք ինչ որ պիտի գրենք: Մանաւանդ գետնինը իրաւամբ կը նմանեցնեն այս եկեղեցին հռովմէական պազիլիքաներուն և կը սահմանեն գաւիթը իբր կամարակապ սրահ մը՝ որ իր առջեւը ունի չէնքին դուռները: Այս դուռները, որ երեք են, կը բացուին ընդարձակ և երկար միջավայրի մը մէջ, ուր կան իւրաքանչիւր տասնըմէկ սիւներով չորս կարգեր, «սիւներ չատ գեղեցիկ, չորս ձողաչափ բարձր, միակտուր եւ հաստ, տեսնելու արժանի»: Ձերմակով երակաւոր այս կարմիր միապաղաղ սիւնաբուները իւղով այնքան չփուած եւ յղկուած են որ մարդ հայելին նայածի պէս կրնայ իր դէմքը տեսնել անոնց մէջ: Պատերուն ստորին կողմերը ծածկուած են ճերմակ մարմարի տախտակներով, որ կը ցոլացնեն ինչ որ կը գտնուի և կ'անցնի եկեղեցիին մէջ: Սրբավայրին խաչաձև յատակագիծը և երեք կողակներու մասնայատկութիւնը չատ ուղեւորներ նօթագրած են. տեղեկութիւններ տուած են նաև դասին, սիւներուն և յատակի ու տանիքի մասին: Տանիքը անփուտ փայտէ չինուած էր և կը տեսնուէր ներսէն, և ծածկուած էր կապարով: Եկեղեցիին կատարին վրայ երկաթէ ձողով մը հաստատուած էր ոսկեզօծ պղնձէ աստղ մը ի յիշատակ Մոգերու առաջնորդող աստղին:

Ս. Ծննդեան եկեղեցիին ճոխ զարդարանքի նկարագրութիւնը աւելի չահագրգռական է, վասն զի նոյն զարդարանքներու տակ կը չողային մեծ գաւիթին պատերը: Ներկայիս գրեթէ անհետացած այս արուեստին նկարագրութիւնը իր յատուկ տեղը ունի մինագրութեան մը մէջ, որուն նպատակն է ո՛չ թէ միայն անցելոյն մէջ գտնել ի՛նչ որ այսօր կայ, այլ նաև ընթերցողին ներկայացնել այն վեհութիւնը զոր կը պարզէր Ս. Ծննդեան եկեղեցին իր փառքի հին օրերուն: Եթէ եկեղեցւոյ զարդարանքին ու մոզայիքներուն նկարագրութիւնը աւելի հին եւ կամ միջին դարու ուղեւորներու յիշատակարանաց վրայ յենլով պիտի գրենք, չատ քիչ բանով մը միայն կարելի է գոհանալ. վասն զի նոյն ծանօթագրութիւնները չատ կցկտուր են և չատ համառօտ, նոյն իսկ հակասական և անճիշդ. նոյն զարդարանքներուն ամբողջական նկարագրութիւն մը ընելու համար պէտք կ'ըլլայ իջնել մինչև 1626 թուականը, ուր Գուարէզմիոս ֆրանչիսկեան մեծաւոր գիտնականը, իբր ականատես վկայ և տեսականագէտ, կրնայ տալ մեզ այն տեղեկութիւնները որոնք կարևոր են մեզ, թէև անկատար ա՛յն մեծ ընդհատներուն (lacunes) համար, զոր կրծող ժամանակը և արշաւողները պատճառած են: Գուարէզմիոսի տուած տեղեկութիւններուն կցելով Մարքիզ Տը Վոկէի դասական գործած մեկնութիւնները, պիտի կրնանք ակնարկ մը նետել Ս. Ծննդեան եկեղեցիին կեդրոնական գաւիթին և դասին այսօրուան ճերմկցած

պատերուն վրայ, պատմութեան աչքերով դիտելու համար այն հրաշալիքները որ անյայտացած են: Այժմ գոյութիւն ունեցող բեկորներուն հանդելով պիտի կրնանք հաստատել հնախօսներու կողմէն տրուած տեղեկութիւններուն ճշդութիւնը:

Ս. Ծննդեան եկեղեցիին ներքին զարդարանքները ճոխագոյն եղանակով մը կատարուած են Յաչակրաց ժամանակ: Այդ զարդարանքները երկու տեսակ են, մոզայիք եւ նկար, որ չքեղագոյն փայլ մը կու տային եկեղեցւոյն: Մոզայիքներէն ամենէն խորհրդաւորն էր արեւմտեան կողմը ճակատի ներքին դրան վրայ Ցեսսէի ծառը, քնացող Ցեսսէի կողերէն երեք չառաւիղներ կը բուսնէին և կը բաժնուէին ճիւղերու, որոնց իւրաքանչիւրը կը կրէր Քրիստոսի նախնիքներէն մին: Նոյն ծառին վրայ ժէ. դարուն տակաւին կ'երեւնային Յովել, Սամուէլ, Միքիա, Եզեկիէլ, Եսայի և Բաղաամ՝ Մեսիայի նկատմամբ իրենց մարգարէական լատիներէն գրուածքներով: Տաճարին արեւելքը կը գտնուէին հետեւեալ մոզայիքները, որոնց համառօտութիւնը կու տանք հոս. 1. Նիկիոյ ժողովը (325), նոյն մոզայիքին մէկ կտորը տակաւին գոյութիւն ունի, 2. Կոստանդնուպոլսի Ա. ժողովը (381), որ մինչ յայժմ ամբողջութեամբ կը գտնուի, 3. Եփեսոսի ժողովը (431), որուն երկրորդ մասը միայն կայ այժմ, բնագրին առաջին մասին բովանդակութիւնը պահած է Դուարէզմիոս, 4. Քաղկեդոնի ժողովը (451) որ, բացի կամարաշէն և գրականներու ատորին մասէն, գոյութիւն ունի այժմ, 5. Բ. ժողով Կ. Պոլսի (553), ամբողջովին ջնջուած, 6. Գ. ժողով Կ. Պոլսի (680), որմէ կը մնայ միայն կրկնակ աղեղնակամարը եւ արձանագրութեան վերի մասը, գրեթէ եօթ տող, չորսը մէկ կողմը և երեքը միւս կողմը, 7. Բ. ժողով Նիկիոյ (787), ամբողջապէս ջնջուած: Մինչ միւս ժողովներուն բովանդակութիւնները յունարէն արձանագրուած էին, այս ժողովին արձանագրութիւնը լատիներէն է. Դուարէզմիոս ընդհանուրով ընդօրինակած է և Տը Վոկէի կողմէն գիտնօրէն վերահաստատուած: Ժողովներու չարքին գլուխը պահող ծոփորները (frises), ինչպէս նաև պատուհաններուն անջրպետը բռնող հրեշտակները ամբողջովին քանդուած են:

Տաճարին հիւսիսային պատին վրայ ժէ. դարուն կը տեսնուէին հետեւեալ ժողովները իրենց բովանդակութեամբ. 1. Անկիւրիոյ ժողովը (314), այժմ բոլորովին ջնջուած, 2. Անտիոքի ժողովը (272), այժմ գոյութիւն ունի, բացի վարի մասէն ուր քանի մը գիրեր ջնջուած են, 3. Սարդիկէի ժողովը (347), տակաւին այժմ տեսանելի, բացի վարի կողմէն լինկած քանի մը գիրերէն, 4. Փանգրայ ժողովը (Դ. դար), բոլորովին ջնջուած, բովանդակութիւնը պահած է Դուարէզմիոս, 5. Լաւոդիկէի ժողովը (Դ. դար), բոլորովին ջնջուած, 6. Կարթագինէի ժողովը (254), բոլորովին անյայտ: Իւրաքանչիւր տիեզերական և մասնաւոր ժողովներուն համառօտութիւնը նշանակուած էր մոզայիքներուն մէջ:

Այցելուն որչափ կը մօտենայ Ս. Այրին՝ կրօնական ծանօթութեանց չրջանակը կը կատարելագործուի: Հարաւային կողակին մէջ այցելուն կը տեսնէր Փրկչին ծնունդեան մոզայիքը որ չինուած էր բիւզանդական ոճով: Դուարէզմիոս դեռ իր օրով կը տեսնէր այս պատկերին մէկ կտորը, որուն վրայ չինուած էր նորածինը լուացող մանկաբարձին պատկերը ու անոր ամբողջ արձանագրութիւնը: Նոյնին մէկ կողմը կը գտնուէին Մոգերու երկրպագութիւնը և Մոգերուն վերադարձը հրեշտակին առաջնորդութեամբ: Հարաւային կողմը կային նաև Յիսուսի Զարչարանաց, Յարութեան և Համբարձման մոզայիք պատկերները: Դասին կեդրոնական մասին հարաւը կար Ընծայումն ի Տաճար, հիւսիսը՝ Պենտեկոստեի և Ս. Կուսին թաղումը, արեւելեան կողակին մէջ Աւետումը, Մարիամը ձախին և հրեշտակապետը աջին՝ Ս. Գաբրիէլ անունով: Մեծ կամարին կեդրոնը կը գտնուէր Տիրամօր մէկ պատկերը, և անկիւնակալներուն մէջ՝ Աբրահամու և Դաւիթ Մարգարէի պատկերները: Մինչեւնոյն տեղւոյն մէջ պատմական այս մոզայիքներուն տակը կան մին լատիներէն և միւսը յունարէն երկու արձանագրութիւններ, որոնք կը հաստատեն թէ այս մոզայիքներ եւ նկարներ ե՞րբ չինուած են եւ որո՞նք չինած են: Հոս կը դնենք անոնց թարգմանութիւնը:

«Ամօրի Թագաւոր, պահապան առաքինութեան, բարեկամ առատաձեռն, ընկեր համեստութեան եւ թշնամի ամբարշտութեան, սիրող արդարութեան և բարեպաշտութեան, վրէժխնդիր մեղաց, կ'իշխեր իբրև հինգերորդ Թագաւոր. Էմմանուէլ՝ վեհանձն նուիրատու և կայսր բարեպաշտ, հրամանատար Յունաց. հոս կ'ապրէր եւ եկեղեցին կը կառավարէր բարեպաշտն

Ռաուլ՝ արժանաւոր եպիսկոպոս, երբ Եփրեմի ձեռքը կը չինէր այս գեղեցիկ (նկարը)...»:

Յունական արձանագրութիւնը, որ մեծ մասով տակաւին կը տեսնուի, ամբողջութեամբ կարելի է վերահաստատել շնորհիւ ԺԴ. դարու յոյն ուխտաւորի մը եւ Տը Վոկէի կողմէն ամբողջացած և ուղղուած Դուարէզմիոսի օրինակներուն: Տարբեր քառերով այս արձանագրութիւնը կը հաստատուի լատիներէն տեղեկութիւններով, որ է հետեւեալը. «Ներկայ գործը աւարտած է նկարիչ և մոզայիք չինող վանական Եփրեմին ձեռքով, Մանուէլ Կոմնենոս մեծ կայսեր եւ Երուսաղէմի մեծ թագաւոր Ամոլրիի եւ Բեթղեհէմի եպիսկոպոս Ռաուլի օրով, 6677 տարւոյն, Ընդիկտիոն Բ. կամ աւելի շատ 6673, Ընդիկտիոն ԺԲ.»: Առաջին թուականը ըստ Պոլսի տումարահաշուին, որ ժամանակ Մարմնաւորութեան առաջին տարին կ'իյնայ աշխարհի ստեղծագործութեան 5509ին և կը համապատասխանէ 1169 քրիստոնէական թուականին: Այս ժամանակ կը թագաւորէր Մանուէլ Կոմնենոս Բիւզանդիոնի մէջ (1143 - 1180), Երուսաղէմի մէջ Ամոլրի (18 Փետր. 1162 — 11 Յուլիս 1173), և Ռաուլ եպս. Բեթղեհէմի եպիսկոպոսական աթոռը կը գրաւէր: Երկրորդ թուականը ԺԴ. դարու յոյն անանունէ մը ընդունուած՝ կը համապատասխանէ 1165 փրկչական թուականին:

Այժմ ներկայացնենք մեծ գաւիթին հիւսիսային սիւնաշարքի սրբոց նկարները. 1. Ս. Մակար, որ կը բռնէ խաչ մը և հագած է արմաւենիէ հիւսուած վերարկու. 2. Ս. Անտոն, դէմքին վարի մասը կը մնայ, հագած է կնգղաւոր երկայն վերարկու մը. 3. Ս. Եւթիմիոս, հագած է յունական չուրջառ մը, աջ ձեռքովը կ'օրհնէ և ձախովը բռնած է գրուածք մը. 4. Ս. Գիորգ, աջը կը գտնուի գեղարդ մը եւ առջեւը սուր մը՝ որուն կոթը խաչաձեւ է: Ս. կողմն է վահանը. 5. Ս. Լիոնարդոս, հագած է սեւ վերարկու մը եւ կոթնած է գաւազանի մը վրայ. 6. Ս. Կոզմա, հագած է կարմիր վերարկու. 7. Ս. Դամիանոս, կարմիր վերարկու հագած է. 8. Ս. Կարապետոս, հաւանաբար Իւանոացի, Երուսաղէմ այցելած է. 9. Ս. Յովհաննիկոս Աւետարանիչ, սուրբը իր ձեռաց մէջ ունի իր Աւետարանը:

Մեծ գաւիթին հարաւային սիւնաշարքին վրայ 1. Ս. Թեոդոսիոս, հագած է ճերմակ վերարկու մը. 2. Ս. Սաբա, հագած

է դեղին վերարկու մը և բռնած է գրուածք մը. 3. Ս. Ստեփաննոս, կը կրէ լատին լայն չուրջառ մը, ձախ բազուկին վրայ կապուած է բազպանը, միւս ձեռքովը բռնած է աւետարան մը. 4. Ս. Կանուտ՝ թագաւոր Տանիմարքայի (✠ 1086), թագը գլխին նկարուած է, աջ բազուկը յեցած է գեղարդի մը վրայ եւ ձախովը բռնած է խաչով զարդարուած վահան մը. 5. Ս. Օլաֆ, (1015–1030) թագաւոր Նորվեկիոյ որ կը կրէ կապոյտ վահան մը ոսկեզօծ խաչով, իր մասին չատ մը զրոյցներ չրջան կ'ընեն. 6. Ս. Վենսան, մարտիրոս, լատին սարկաւագի զգեստ հագած է. 7. Ս. Յովհաննիկոս Մկրտիչ, հագած է իր աւանդական կաշիէ զգեստը, որուն տակ կը տեսնուի արեւէն սեւցած սրունքները, ձեռքն ունի գրուածք մը. 8. Ս. Եղիա, որ մտախոհ դիրքով մը նստած է, Միքէլ-Անժէլ Մովսէսին նման ձեռքը մօրուքին երկարած է: Սուրբին վրայ թռչող երկու ագռաւներ անոր հաց կը բերեն. 9. Ս. Ոնոփրիոս, կը կրէ երկար սրածայր մօրուք մը եւ սպածանկի մը:

Միւս սիւնաշարքերուն վրայ ցանցառ կերպով կը գտնուին առաքելոց և այլ սրբոց նկարներ: Ս. Ծննդեան եկեղեցիին այս բազմաթիւ մոզայիքներուն և նկարներուն չինութիւնը արդիւնք կը նկատուի Բիւզանդիոնի և լատին թագաւորութեանց խնամիական կապակցութեանց եւ մասնաւորապէս ԺԲ. դարուն յոյն եւ լատին եկեղեցեաց միութեան գաղափարի ձգտումներուն: Այդ ըմբռնման հետեւանքով է որ այս համազգային քրիստոնէական մեծ եկեղեցիին մէջ այլ եւ այլ ազգաց սուրբերը նկարուած են ու արձանագրութիւններ ունին յոյն և լատին եկեղեցեաց և ժողովուրդներու ներկայացուցիչները:

1187ին Սալահէտտին, գրաւելով Պաղեստինը, պահպանեց Ս. Ծննդեան եկեղեցին և յաջորդներն ալ այդ մտօք չարժեցան: ԺԵ. դարուն եկեղեցւոյ մոզայիքները եւ մարմարները կամաց կամաց սկսան քանդել ու տանիքը մեծապէս վնասուած էր. նոյն իսկ տեղացի քրիստոնեաները իրենց աղքատութիւնը դարմանելու մտքով տաճարին մարմարները հանել տանելու սրբապղծութիւնը գործած են և եղած են մարդիկ որ Ս. Այրին մէջ գանձ փնտռելու դիտումով յատակին մարմարները տեղէն հանած ու կոտրած են: ԺԶ. դարուն տաճարին բոլոր գեղեցկութիւնները այլ եւս խոխարուած էին, ու մինչև մեր օրերը չէ կատարուած

ոեւէ աչքառու նորոգութիւն մը: Դժբախտութիւն է որ այսօր Ս. Ծննդեան եկեղեցին կապուած է իր անձման զարդերէն, և տեսնելով զայն, չի կրնար համեմատել Կոստանդինեան, Յուստինիանոսեան եւ Բիւզանդական շրջաններու այն գեղակերտ զարդարանքներուն հետ որ պճնած էին Բեթղեհէմի եկեղեցին:

Օգտուած ենք հետեւեալ կիրքէն. Bethléem, le sanctuaire de la Nativité. P. P. H. Vincent et P. M. Abel. 1904:

5. Քրիստոսի Ս. Ծննդեան եկեղեցիին հայկական յիշատակները եւ Հայոց Վանքը Բեթղեհէմի մէջ.

1.— Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին կը յիշատակուի Մովսէս Կաղանկատուացիին (Է. դար) Պատմութիւն Աղուանից խորագրով գրքին մէջ (էջ 422). Իսկ Բեթղեհէմ հեռագոյն է ի Յարութենէն 220 հրաւասխ յարեւմից կողմանց: Զոր մեծութեան եկեղեցոյն 200 կանգուն յերկայնութիւնն եւ 100 ի լայն սեամբ մարմարիոնով, քառակ կամարակապ եւ ի ներս է կրկին այրն զոր Աբրահամ գնեաց ի կաղուածս շիրմացն: Եւ ի ներոյ բեմին սուրբ այրն եւ մնուրն, ուր սեղան է եւ պատարագ մատչի: Եւ յայսմ եկեղեցոյն մատուռն, յորում մանկանցն ապաստեցան ի Հերովդէէ նշխարք պահին:

Կաղանկատուացիին մէջբերած այս յիշատակարանը համաբար Դ. կամ Ե. դարու ուխտաւորի մը Օրագրութիւնն է, գրուածքին հիմը թէեւ չատ հին, բայց կը թուի որ ընդօրինակողը ինչ ինչ ձեռնմխութիւններ կամ յաւելումներ ըրած է. եւ ի ներս է կրկին այրն զոր Աբրահամ գնեաց ի կաղուածս շիրմացն խօսքը կ'ակնարկէ Մակփելայի (*) այրին (Ծննդ. ԻԳ. 9) որ հին յիշատակարաններու մէջ Բեթղեհէմի այրին յիշատակութեանն կտոր կը դասակարգուի: Յիշատակարանիս նկարագրութիւնը ժամանակագրական տեսակէտով կը վերաբերի Ս. Ծննդեան եկեղեցոյն Կոստանդինեան շինութեան:

Մեր մատենագրութեան մէջ այս վկայութենէն զատ ուրիշ վկայութիւն մը չունինք նոյն եկեղեցոյ նկատմամբ, ունինք միայն, 1500–1524ին եղնովիա ընդօրինակուած Ոսկեփորիկ-Հա-

(*) Մակփելա Եբրայեցերէն կը նշանակէ կրկին:

ւամածոյի մը յիշատակագրութիւնը, (Տե՛ս Տաշեան Յուցակ, էջ 485) որուն համաձայն գրիչը կը յիշատակէ թէ Բեթղեհէմի տաճարին մէջ կը գտնուի «Ս. սիւն մարմարեայ եւ մի սիւն խաչ նկարեալ ձեռամբ Լուսաւորչին Գրիգորի, զոր Լուսաւորչի սիւն կոչեն»: Ուստի բուն իսկ եկեղեցւոյ մէջ պէտք է մտնենք հայերի յիշատակութիւններ գտնելու համար: Սիւնազարդ գաւիթը երթալու համար կը մտնենք գաւթի փայտեայ աւազ դուռնէն, որ արաբական ոճով և գեղարուեստական մեծ արժէքով ունի խաչազարդ և քանդակազարդ ու գեղակերտ երկու փեղկեր որոնց մին կը կրէ հայերէն արձանագրութիւն մը հետեւեալ բովանդակութեամբ. «Թվ. ՈՀՋ. կազմեցաւ դուռս Ս. Աստուածածնի ձեռամբ Տէր Աբրահամայ եւ Տէր Առաքելի ի թագաւորութեանս Հայոց Հեթումոյ որդւոյ Կոստանդինի, Քրիստոս Աստուած ողորմի աշխատաւորաց»: Իսկ միւս փեղկը կը կրէ հետեւեալ արաբերէն արձանագրութիւնը.

كل هذا الباب بعون الله تعالى فى ايام مولانا السلطان الملك المعظم فى تاريخ الهجرة سنه اربعة وعشرين وستماية

Թարգմանութիւնն է հետեւեալը.

«Կատարեցաւ դուռս օգնականութեամբ բարձրելոյն Աստուծոյ յաւուրս տէրութեան մեծատուր արքային մերոյ ի թուին Տաճկաց 624»: Հայերէն արձանագրութեան մէջ յիշատակուած եկեղեցականները եպիսկոպոսներ են և 1227ին կը վարէին Ս. Աթոռոյ վարչական գործերը, անոնց մասին մանրամասնութիւն չունինք՝ բայց մեր Ս. Աթոռոյ պատմիչներէն ոմանք անոնց անունները կը գտնեն պատրիարքաց գաւազանագիրքին մէջ: Հերովդոյ որդւոյ Կոստանդինի խօսքով պէտք է հասկնալ Հայոց Հեթում Ա. թագաւորը (1224–1269):

Գալով արաբերէն արձանագրութեան թարգմանութեան՝ Բովանդակութիւն Ազգային Սեփականութեանց գրքուկին հեղինակը հս սուրբան հրմհիմ հլ Մուազզամ խօսքը կը թարգմանէ Տէրութեան մեծատուր արքային մերոյ, մինչդեռ հլ Մուազզամ Դամասկոսի սուլթանին անունն է որ կը կոչուէր հլ մհիմ հլ Մուազզամ Շերֆ-ըս-տին Իսա (615–1218—624–1227). նոյն միջոցներուն երուսաղէմի կ'իշխէին Դամասկոսի սուլթանները և դրան չինութեան տարին (1227) կը մեռնի մէլիք էլ-Մուազզամը:

Դրան հայկական արձանագրութիւնները սակայն, պիտի կըրնաւն մեզ համոզել թէ ԺԳ. դարուն Ս. Ծննդեան եկեղեցին Հայոց սեպհականութիւնն էր. մենք տեղեկացանք թէ նոյն եկե-

ղեցւոյ առաջին շինութենէն սկսեալ մինչև Խաչակրաց դարը համազգային էր նոյն եկեղեցին եւ է այսօր ալ. հզօր մրցակիցները պիտի ներէին որ հայերը իրենց սեպհականութիւն դարձնէին զայն: Երուսաղէմի պատմիչ հանգուցեալ Աստուածատուր եպիսկոպոս Տէր Ցովհաննէսեան իր գրքին ծանօթագրութեան մէջ (էջ 182, Ա. Հար.) կը գրէ. Երբ յոյները Ծննդեան եկեղեցիին արձանագրութիւնները չատրիճի կամ չծածկիճի, ակներեւ պիտի տեսնուէր Հերոմէ թագաւորին գործը, վասն զի խաչակիրներուն ներառնալովը Ս. Տեղիքը մնացին հայ կրօնաւորներու ձեռքը, նկարակերտ դրան հետ շինուեցաւ նաեւ Հերոմէ թագաւորին ծախքով տաճարին պայտակերտ առաստաղը, որուն պայտերը Տարոնի մէջ տաշել տուած է եւ որուն կը վկայեն ոչ միայն ազգային աւանդութիւնը, այլ նաեւ գերաձուց ձեւը, եւ անիուս պայտի աստղներու շինուածքը կը հաստատեն թէ անոնք Տարոնի ճարտարներուն գործերն են: Հանգուցեալ պատմիչ Սրբազանին այս խօսքերը կրնան հաւանական ըլլալ, բայց գրաւոր յիշատակարանի մը պակասութեան պատճառաւ բացարձակ կերպով համոզական չեն կրնար ըլլալ նոյն խօսքերը. և Խաչակրաց մեկնումէն յետոյ Ս. Ծննդեան եկեղեցին ազգային սեպհականութիւն նկատել միմիայն քանդակազարդ դրան վերայիչեալ արձանագրութեամբ հնարաւոր չէ, քանի որ դրան սեպհականութիւնը եկեղեցիին սեպհականութիւն չ'ենթադրեր, թէեւ միևնոյն ատեն Աստուածատուր Սրբազան կը յաւելու (Տե'ս անդ Բ. Հար. էջ 516) թէ սիւնազարդ գաւիթին մէջ կային հայերէն արձանագրութիւններ և խաչքարեր որ ուրիշներու կողմէն 1842ին ծածկուած են կամ ջնջուած:

Նոյն դրան շինութիւնը կը հանդիպի 1227ին, որ ատեն Կիրմանիոյ Ցրէտէրիկ Բ. կայսրն ամուսնանալով Երուսաղէմի Ցովհաննէս թագաւորին աղջկան Եօլանտի հետ, ժառանգ կը դառնար Երուսաղէմի լատին թագաւորութեան գահուն: Հակառակ պապէն բանադրուած ըլլալուն՝ Ցրէտէրիկ բանակով մը կը գրաւէ Երուսաղէմը, կղերն ու ասպետները թէև ցուրտ ընդունելութիւն մը կ'ընեն կայսեր, բայց ան Ս. Կիրեզմանի եկեղեցւոյն մէջ Երուսաղէմի թագաւոր–կայսր կը պսակուի ու Եգիպտոսի էլ–Քամիլ սուլթանին հետ բանակցութեան մտնելով տասն տարուան դաշնագրութիւն մը կը յաջողի կնքել, օգտուելով սուլթանին և Դամասկոսի իշխողներու անհաշտութենէն:

Ցրէտէրիկի եւրոպական բանակին չարժման տարին՝ երբ տակաւ առ տակաւ խաղաղութիւն կը հաստատուի Երուսաղէմի մէջ, Աբրահամ և Առաքել եպիսկոպոսները ազատութեամբ կը տիրանան այն իրաւունքին զոր ունէին վաղուց հետէ և կը չինեն նկարակերտ դուռը, որ մշտական յիշատակարան մ'է Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ հայկական իրաւունքներուն եւ Հայոց վանքի ճանապարհի ապահովութեան:

Բեթղեհէմի Ս. Ծննդեան ամբողջ եկեղեցիին Հայոց ընկերովի իրաւունքը հրովարտակներով հաստատուած է. սիւնազարդ գաւիթին կից հիւսիսային դասը կը պատկանի Հայոց որ հոն կը կատարեն սովորական ժամերգութիւնները: Հայոց սեպհական այս մասը ունի երկու խորան, սնտուկ և պահարաններ: Ս. Ծննդեան այրը Ցունաց աւագ խորանին տակը կը գտնուի, ունի երկու պղնձէ դռներ՝ մին Ցունաց հարաւային դասին մէջ և անոնց յատուկ, ուրկէ 13 աստիճանով վար կ'իջնուի. միւսն՝ Հայոց հիւսիսային կողմը 16 աստիճանով՝ զոր կը գործածեն Հայք և Ցոյնք, իսկ Լատինք որ այժմ նոյն դրան ընկեր են. յայտնի չէ թէ ո՛ր թուականին այդ իրաւանց տիրացած են: Քրիստոսի ճիշդ ծննդեան տեղւոյն վրայ կը գտնուի պատարագամատոյց սեղան մը, որուն վրայ Հայք և Ցոյնք կը պատարագեն, սեղանին մարմարեայ յատակը կիսաբոլորակ ձեւով է և մէջտեղը փոսիկ մը կայ արծաթեայ ճաճանչ մը ագուցուած եւ բոլորտիքը հետեւեալ լատիներէն արձանագրութեամբ. Hus ծնաւ Քրիստոս ի Մարեհայ կուսեն: Այս սեղանէն երեք մէթր դէպի հարաւային արեւմտեան կողմը երեք աստիճանով վար կ'իջնուի Մատուռը, ուր Լատինք կը պատարագեն, ինչպէս նաև անոր արեւելեան կողմի երից մոգուց կոչուած սեղանին վրայ, ուր ըստ աւանդութեան մոգերը կանգնած էին իրենց ընծաները Մանուկ Թագաւորին մատուցած ժամանակ: Այս վերջին սեղանին համար՝ կ'ըսուի թէ՝ Հայոց սեպհական էր, որուն կանթեղին մշտավառ տակաւին կը տեսնուի (Տե'ս Հանիճ, Պատմ. Երուսաղէմի. էջ 288): Այրին արեւմտեան դուռը Լատինաց կը պատկանի, ուրկէ իրենց եկեղեցին կ'երթան, ստորերկրեայ գերեզմաններէն անցնելով: Ս. Ծննդեան եկեղեցւոյն մէջ կատարուած ժամերգութեան, Ս. Պատարագի, հանդէսներու եւ այլ սովորութեանց, ինչպէս նաև կանթեղներու և պատկերներու մասին տեղեկանալու և

աստնց վերաբերմամբ տեղի ունեցած դատերու մանրամասնութեանց համար տեսնել Աստուածատուր եպս. Տէր Յովհաննէսեանի Պատմ. Երուսաղէմի երկհատոր գիրքը, և Ս. Աթոռոյ տպարանէն հրատարակուած Բովանդակութիւն ազգային ձեռակալութեանց խորագրով տետրակը։

2.— Յովհաննիկ արհեպս. Տուեցի կամ Տայեցի Բեթղեհէմի մէջ.— Ս. Ծննդեան եկեղեցիին նկարագրութիւնը աւարտելով պարտք կը զգամ յիշատակել Գարդմանի արքեպս. Տայեցիին Բեթղեհէմի եկեղեցւոյն այցելութիւնը, քաղելով Վարդան վրդ. Բարձրբերդցիին Տիեզերական Պատմութեան գրքէն (էջ 201–204). սոյն արքեպիսկոպոսը՝ ճգնաւոն եկեղեցական մը՝ (※ 1263) բոկոտն ուխտի կու գայ Երուսաղէմ, և Ս. Յարութեան տաճարին մէջ երեք յիսնակներ կը մնայ անհաց և անջուր, յոտին կեցած և լուռ. իր վարքովը կը զարմացնէ ֆռանկները և կը տարածուի անոր համբաւը իբր հրաշագործ։ Ս. Յարութեան տաճարին մէջ Գարդմանի արքեպիսկոպոսին Ս. Գերեզմանին վրայ կատարած հրաշալի լուսավառութեան առթիւ Բարձրբերդցիին պատմուածքը զանց ընելով՝ բառ առ բառ աշխարհաբարի կը վերածեմ միայն նոյն եպիսկոպոսին Բեթղեհէմի ուխտաւորութեան ժամանակ տեղի ունեցած պատմական մէկ դրուագը զոր կը յիշատակէ գարձեալ Բարձրբերդցին։ . . . . . «Երբ Ս. Բեթղեհէմ գացի եւ տեսայ որ Սուրբ Առաքելոց պատկերները հոն՝ եկեղեցիին պարիսպին վրայ նկարուած հին, եւ բշնաւիները անուագութեան պատճառով անոնց աչքերը փորած հին, շատ տրտմեցայ, եւ աղօթեցի Ս. Առաքելոց եւ աղաչեցի որ ինձ յայտնեն թէ իրենց համա՞յ է ատեն տեղ իրենց պատկերը նկարել։ Եւ երբ Երուսաղէմ դարձայ, նոյն գիշերը տեսիլի մը մէջ տեսայ երկու փառաւոր մարդիկ՝ որ ինծի կու գային եւ ես անոնց աղջերը նշնելով ըսի թէ՝ ո՞վ էք դուք, Աստուծոյ սուրբեր, եւ անոնք կ'ըսեն. Պետրոս եւ Յովհաննէս, դու գիր որ մեզի աղաչեցիր՝ որպէս զի հրամանագիրով՝ մեզի ձեռակերպելու կամ նկարելու մասին մեր կարգը յայտնենք. այդ բանը ընաւ մեզի համար չէ. ձանձրացած ենք եւ տեղ տեղ ալ կը յայտնենք, բայց մտիկ չեն ըներ մեզի։

1169 թուականին էր որ, ինչպէս տեսանք վերև, Յոյնք և Լատինք համաձայնելով Ս. Ծննդեան եկեղեցիին պատերը և պարիսպները զարդարելին նկարներու և մոզայիքներու անօրինակ ճոխութեամբ մը, ինչպէս պարզեցինք, թէ ուխտաւորք

հիացմամբ և զմայլանքով կը խօսին այդ նկարակերտ գաւիթներուն և կամարներուն վրայ։ Ս. Երկրէն նոր մեկնած էին Լատինք և անոնց թագաւորութիւնը այլևս վերջացած էր Երուսաղէմէն։ Կ'իշխէին Արաբները, որոնք յայտնի է թէ չպիտի ախորժէին Ս. Կուսի տաճարին ճոխ պատկերագրութենէն, և անպատկաս պիտի ըլլային քանդող ձեռքեր, ինչպէս կ'երևի Գարդմանի արքեպիսկոպոսին նկարագրութենէն։ Անոր այցելութենէն յառաջ 30 տարիներ անցած էին երբ նոյն նկարները ու մոզայիքները չնորհած էին արդէն, և Տայեցին պատահութիւն կ'ունենար իր այցելութեան՝ դիտելու այդ չափազանցօրէն ցուցադրուած պատկերներու ճոխութիւնը։ Նոյն նկարներու տպաւորութեան տակ իր առջև պարզուած տեսիլը կը ցոլացնէ թէ Տայեցիին միտքը այնքան հաչտ չէր նկարուած այլազան պատկերներու առատութենէն։ Անոր պատահած տեսիլը մեզ կը պարզէ իր հայրենիքին՝ Գարդմանի (Գանձակ) մէջ է. գարուն տեղի ունեցած պատկերամարտութեան հետևեալ դէպքը (Տե՛ս Մ. Կաղանկատուացի, Պատմ. Աղուանից, էջ 401–5)։ Եղիվարդեցի Մովսէս կաթողիկոսի օրով՝ երբ Ազատ գետին անդիի կողմը յունահայ կեդրոններու մէջ ծագում առած էին բիւզանդական պատկերամարտ չարժումներ՝ նոյն ոգիով վարակուած երեք հայ կրօնաւորներ Յեսու Հահևևայ, Թադիոս և Գրիգոր Գարգման ապաստանելով պատկերամարտութիւն կը քարոզեն եւ կ'ուզեն ջնջել պատկերները։ Եղիվարդեցի կաթողիկոս կ'իմանայ անոնց արարքը և Գարդմանի իշխանին միջոցաւ բռնի կերպով անոնք կը զրկուին Հայոց կաթողիկոսին։ Այս տողերը առնուած են այն պատասխանագրէն զոր Յովհան Մայրագոմեցի հռչակաւոր վարդապետը գրած է նոյն կողմերու Դաւիթ եպիսկոպոսի խնդրանքովը։ Մայրագոմեցիէն մինչեւ Գարդմանի արքեպիսկոպոսը հինգ ու կէս դարեր անցած էին, բայց պատկերամարտ հայ կրօնաւորներու ցանած սերմերը գուցէ Գարդմանի երկրին մէջ գաղտնօրէն բողբոջած ու անոնք հետևողներ ունեցած են. և կրնայ հաւանական նկատուիլ որ Գարդմանի ուխտաւոր արքեպիսկոպոսը, թէեւ խստակրօն ճգնաւոր մը, բայց ներքնապէս տհամ էր Բեթղեհէմի եկեղեցիին մէջ նկարուած պատկերներու առատութեան, և այդ պատճառաւ կ'ունենայ յիշուած տեսիլը։

3.— Քանի մը խօսք ալ Բեթղեհէմի Հայոց վանքին վրայ։

Մեր պատմութեան մէջ կը յիշատակուին այլ եւ այլ դարերու ընթացքին թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական ուխտաւորներ, շատ անգամ բազմութեամբ կը լեցուէին անոնք։ Վանքերը Ս. Երկրին մէջ կեդրոններ էին ոչ միայն աղօթքի և բարեպաշտական գործերու, այլ նաեւ կը ծառայէին ուխտաւորներու իրը իջևան։ Բեթղեհէմի մէջ Ս. Ծննդեան եկեղեցին կից ունեցած ենք վանք մը, ուր կարելի էր մանել տաճարի Հայոց դռնէն՝ որուն վրայ վերագոյն գրեցինք, և արտաքին փոքր երկաթեայ դռնէն՝ որուն բանալին շատ հին ժամանակ Հայոց քով կը մնար, եւ յետոյ ուրիշներ սեպհականեցին զայն։ Որքան հին էր Հայոց ուխտաւորութիւնը՝ այնքան հին էր Բեթղեհէմի վանքը։ Առաջին վկայութիւնը կը հասկցուի Լատին եկեղեցւոյ Հայրերէն Ս. Ցերոնիմոսի (331–420) խօսքերէն զոր կը յիշատակէ իր նամակներէն մէյոյն մէջ։ Ցերոնիմոս Հռովմէն եկած ու իբր մենակեաց հաստատուած էր Բեթղեհէմի Ս. Ծննդեան այրին մօտ. իր խօսքերն ասոնք են. «Ի՞նչ ըսել Հայոց, Պարսից, Հնդիկասանի եւ Երուսաղէմ եւ նոյն իսկ Եգիպտոսի, Պոնտոսի, Կապադովկիոյ եւ Միջագետքի եւ արեւելեան երկիրներու ժողովրդոց, որոնց վանականներու բազմութիւններն առհասարակ ամէն օր մեր մօտ կը հասնին։ Հայը բողած է իր կապարձը. Հոնիք Սաղմոսարանը կ'ուսանին, իրենց հատուածի չափութեամբ տաղերով սկիզբնական եղանակը կամ ձիւնը»։ Հայոց վանականները քանի որ Դ. դարուն գունդագունդ կը հասնէին Բեթղեհէմի մէջ ուխտի համար, կը նշանակէ թէ Ցերոնիմոսի օրերէն արդէն հիմնարկուած և հաստատուած էր Հայոց վանքը ու ժամանակի ընթացքին ընդարձակուած էր։ Նայելով այժմու կառուցուածքին կը դիտուի որ ի սկզբան ան չատ փոքր էր, բայց 1621ին Դրիպոր Պարոնեէր պարիսպքը ընդարձակած է զայն գնելով մերձակայ խաւը եւ չէնքերն ու կցելով զանոնք վանքին։ Ան հաստատած է ուխտաւորաց յատուկ իջեւանները, հացի փուռ և սեղանատուն, պարիսպի խուց մը, պարտէզներ և ջրհորներ. ասոնցմէ զատ չինած է Ս. Աստուածածնին անուամբ գեղեցիկ եկեղեցի մը, որուն ճակատը զետեղուած է հետեւեալ յիշատակարանը. «Ես Դրիգոր Եպս. որ եմ առաջնորդ Ս. Երուսաղեմայ. նորոգեցի ի Սբ. Ծնունդն զվիճակ ագգիս մերոյ ՌՀ. թվին (= 1621). յիշատակ հոգւոյ իմոյ եւ ծնողացս, ի վայելումն եւ ի պարծանս Հայոց. որ տեսանիք զի արդի ասացիք Աստուած ողորմի,

եւ Տէր ձեզ ողորմացի, ամէն»։ Այս եկեղեցին ու վանքը Շղթայակիր պարիսպքի օրով ալ կարեւոր նորոգութիւններ ունեցած են, ու վերջին երկրաշարժին ալ նորոգուեցան դարձեալ թէ՛ եկեղեցին և թէ՛ վանքը։

Ձանց կ'ընենք յիշատակել վանքին այլ և այլ մասնակի նորոգութիւնները և յարդարութիւնները։ Վանքը ունի միաբանութիւն մը և ժամարարներ, տեսուչ վարդապետ մը որ կը հսկէ եկեղեցական արարողութեանց ու վանքին մատակարարութեան. կաթնախէն եպիսկոպոսի մը կը յանձնուէր նոյն պաշտօնը, Ցունաց նման։ 1860է սկսեալ մինչեւ մեր օրերը տեսուչներու ցուցակը կազմուած է. իսկ նախորդները կանոնաւոր ցուցակ մը դժբախտաբար չեն ունեցած։ Վերեւ յիշեցինք լատին նշանաւոր գիտնական և մեկնիչ Ցերոնիմոսը, որ Ս. Ծննդեան այրին մօտ վանք հաստատած էր, ինչպէս նաեւ ունէր դպրատուն մը կամ հանապարան մը, չինուած մարմարեայ սիւներու վրայ։ Լատին մատենագիրները ու մեր միաբանաց աւանդութիւնը կը վկայեն թէ նոյն համալսարանը կը գտնուէր մեր վանքի սեղանատան ներքեւը։ Ցերոնիմոսի այդ համալսարանը 1706 թուականէն յառաջ եկեղեցիի վերածուած է և Ս. Երորդութեան նուիրուած. Ռեմլէի Ս. Գէորգ եկեղեցիին մկրտութեան աւազանին մէջ երեք միատեսակ խաչքարեր կը գտնուին իրարու նման արձանագրութեամբ, որոնց մէկուն օրինակը կը դնենք հոս. «կանգնեցաւ սուրբ խաչս քարեիսս առ Աստուած վասն հոգւոյ բազմաշխատ ծառային Աստուծոյ կեսարացի մհի. Ղուկասի եւ ծնողացն, եղաւ ի սուրբ ծնունդն, Սուրբ Երորդութիւնն, թվ. ՌՃՃԵ. (= 1706)»։ Վանուց 1733ին տպուած Ցայսմաւուրքի մէկ յիշատակագրութենէն կը հասկցուի թէ աւազանին նորոգութեան ժամանակ Զէյթունցի Աթանաս վրդ. այս երեք խաչքարերը հանելով Բեթղեհէմի Սուրբ Երրորդութեան եկեղեցիէն (այժմ սեղանատուն) փոխադրած է Ռեմլէ։ Արծաթեպատ աւետարանի մը վրայ կը գտնուի նաեւ հետեւեալ յիշատակարանը. «Ձիշատակ է սբ. աւետարանիս մհի. Աստուածատուրին եւ կողակցոյն Դոմարին եւ հանգուցեալ որդւոյն իւրոյ Աբրահամին եւ ամ. զաւիցն նորա ի սբ. յեղեմ. ի սբ. ծնեդ. սբ. Երորդութիւն տաճարին ի թվ. ՌՃՁԴ (= 1735)»։ Նոյն եկեղեցին յետոյ խափանուած ու հողով լեցուած էր։ Երկու երեք տարի յառաջ հոգեյոյս Դուբեան Ս. Պատրիարքի հրամանաւ լեցուած

հողերը պարպուեցան ու քանդակազարդ մարմարեայ սիւները մէջտեղ հանուեցան։

Մեծապէս բաղձալի էր որ Բեթղեհէմցի հայերը յիշէին Յեռնիմոսի պանծալի համալսարանը ու ջանադիր ըլլային իրենց փոքրիկ դպրոցը հոգալ ու իրենց տղոցը սորվեցնել կրօնք եւ ուսուցմն, որպէս զի կարողանային հոգեւոր ծառայութիւն մը մատուցանել Քրիստոսի Ս. Ծննդեան եկեղեցիին։

ԻԳ

Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՔՆ ՈՒ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Երուսաղէմի հարաւակողմը գտնուող Սիոնի քաղաքամասին մէջ չինուած է Ս. Յակոբեանց վանքը։ Այդ քաղաքամասին Հայոց թաղ անունը կը տրուի, որ իր ամբողջութեամբը Ս. Յակոբեանց ստացութիւնն է. և անոր մէջ են քաղաքացի Հայոց բնակութեան տուները, որոնք թէև վանքապատկան կալուածներ են, այլ տեղացի Հայերը ձրիաբար կը բնակին։ Թաղին բոլոր շինութիւնները և գետինները, հիւսիսէն հարաւ, այսինքն Ս. Փրկչի գերեզմանատան եւեւ դուռէն մինչև Աստուծոյ վանքը իբր 450 մէթր երկայնութիւն և արևելքէն արևմուտք, այսինքն պարտէզներու եւեւ պարապէն մինչև արևելակողման տուներուն ծայրը, իբր 300 մէթր լայնութիւն ունեցող, անկանոն քառանկիւն մը կը կազմեն, մերձաւորապէս 150,000 քառակուսի մէթր տարածութեամբ, որուն մէկ մասը բուն վանական չէնքերն են, մաս մըն ալ քաղաքացւոց բնակարաններ և մաս մ'ալ պարտէզներ։ Հայոց քաղաքամասը, և մանաւանդ մայրավանքին դիրքը, եզակի ըսուելու չափ նշանաւոր է, և հարևան ազգու-

թեանց նախանձելի գարձած է, ոչ միայն Սիոնի պատմական և նուիրական նշանակութեամբը, այլ և բաց հորիզոնովը, մաքուր օդովը և հովասուն դիրքովը։ Զի թէպէտ բնակութեանց մօտ, բայց խճողուածներէ և քաղաքամիջի խտացած մթնոլորտէն ազատ է։ Ս. Յակոբեանց Աթոռին գրաւած տարածութիւնը մեծապաղաղ ստացութիւն մը կը կազմէ։

Թէ Մայրավանական և թէ ուխտաւորական բնակարանները և թէ քաղաքացւոց բնակութեան մասերը հետզհետէ ստացուած կամ չինուած կտորներ են, ինչպէս պատմական յիշատակներ ալ կը հաւաստեն։ Շինութեան ոճը ընդհանրապէս հինն է, հաստ պատերով, ցած դուռներով, պզտիկ պատուհաններով և կամարակապ առաստաղներով։ Շինուածանիւթն է քարը որ առատ է Երուսաղէմի ամեն կողմերը։

Վանականաց և ուխտաւորաց սահմանեալ միւս բոլոր շինութիւնք կեդրոնական մասը կը գրաւեն, և իբր 175 մէթր երկայն և 100 մէթր լայն, այսինքն իբր 18,000 մէթր քառակուսի տարածութիւն ունին, եւ այս մասին մէջ են Ս. Յակոբեանց Մայր տաճարը և Ս. Թէոդորոս եկեղեցին. ինքնուրոյն մասեր կը կազմեն Ջամ թաղը, ժառանգաւորաց Վարժարանին յատկացեալ, գմբեթայարկ ճեմարանը՝ որ վարժարանին մաս կը կազմէ, Ս. Հրեշտակապետաց եկեղեցին ու վանքը, կեդրոնական շինուածը մէջէմէջ բաւիղանման անցքերով միացած է, եւ չատ մը թաղերու կը բաժնուի։ Վանքին մեծ դուռը կը բացուի առջեւի հրապարակի վրայ։ Դրան վրայ երեւցող ճակատի մասը հին աբեղաթաղն է, կէս կամար անցքին վրայ բարձրացող շէնքը սեղանատունն է, իսկ միւս կողմի մեծ կամարին վրայ կը բարձրանայ Պատրիարքարանը։ Ս. Յակոբեանց վանքին, եկեղեցւոյն եւ այլ շինուածոց տարածութեան մասին գաղափար մը տալէ վերջ կ'անցնինք մեր բուն նիւթին. նախ դրել թէ որո՛նց յիշատակին կառուցուած է հայկական այս վանքն ու եկեղեցին, ապա եկեղեցիին ու անոր սրբավայրերուն պատմական ծագումը յիշել ու նկարագրել, մէջբերելով ամենէն հին յիշատակարանները. պատմել ու յիշատակել վանքին այն ամեն գլխաւոր ու կարևոր շէնքերը որ պատմականօրէն բազմադիմի օգուտներ ընծայած են Ս. Յակոբեանց վանքին։

1.— Ս. Յակոբեանց վանքը ու եկեղեցին կառուցուած են Յակոբոս Զեբեդեան և Յակոբոս Տեառնեղբայր առաքելոց յիշատակին, այդ պատճառաւ վանքն ու եկեղեցին կը կոչուին յաննուն Ս. Յակոբեանց:

Յակոբոս Զեբեդեան.— Որդի Զեբեդիայի, եղբայր Յովհաննու և տասներկու առաքեալներէն մին: Ան ձկնորսութիւնը թողլով հետևեցաւ Յիսուսի, եւ իր եղբօրը հետ կոչուեցաւ յաւերհագս, կամ որդիքն որոտման (Մարկ. Ա. 19. Գ. 17): Յովհաննէսի նման, ան կ'ուզէր երկինքէն կրակ իջեցնել Սամարիոյ գիւղերէն մէոյն վրայ (Ղուկ. Թ. 54) և պատուոյ տեղ մը ընդունիլ երկնից արքայութեան մէջ (Մարկ. Ժ. 35–41): Պետրոսի և Յովհաննէսի հետ Յիսուսի հետ մտերմանալով անոր Աչլակերպութեան եւ այլ տնօրինական գործերու վկան հանդիսացաւ. ինչպէս նաեւ Յայրոսի աղջկան յարութեան (Մատթ. ԺԱ. 1–9, Մարկ. Ե. 37, ԺԴ. 33): Հերովդէս Ագրիպպասէն նահատակուեցաւ 44ին (Գործ Առաքելոց. ԺԲ. 2) և ան եղաւ առաքելոց առաջին նահատակը: Ըստ աւանդութեան, Յակոբոս երուսաղէմէն դուրս նահատակուած ըլլալով հրեշտակի միջոցաւ անոր գլուխը բերուեցաւ Ս. Աստուածածնի՝ որ Յովհաննու Աւետարանչի եւ Տեառնեղբայր Յակոբ արդար առաքելոյն հետ նստած կը սգար անոր մահը. դարձեալ, ըստ աւանդութեան, Ս. Յակոբայ տաճարին մէջ՝ աջակողմը առաջին սիւնին տակ ցոյց կը տրուի Ս. Աստուածածնի նստած տեղը, ուրկէ Տիրամայրը հրամայեց որ Յակոբոսի գլուխը թաղուի տաճարին մէջ այն տեղը որ մինչեւ հիմայ կը կոչուի Ս. Գլխապիր:

Յակոբոս Տեառնեղբայր Առաքեալ.— Ազգական էր Յիսուսի մօրը եւ հօրը կողմանէ. Տեառնեղբար Յակոբոսը կը կոչուի նաեւ փոքր, որոշելու համար երկոտասանից երկու Յակոբոսներէն. կը կոչուէր նաեւ արդար: Ասոր եղբայրներն էին Յովսէ, Սիմոն եւ Յուդա՝ որ առհասարակ կը կոչուէին եղբարք Յիսուսի:

Տեառնեղբայր Յակոբոս Քրիստոսի Համբարձումէն վերջ կարգուեցաւ եպիսկոպոսապետ Երուսաղէմի, և Գործք Առաքելոցէն յայտնի է թէ Յակոբոս մին էր գլխաւոր առաքեալներէն որ սիւն կոչուեցան Պօղոսէն. ան էր որ նախագահեց Երուսաղէմի ժողովին: Անոր կ'ընծայուի Յակոբոս անուանով Ս. Գրոց

կանոնին կաթուղիկեայց թուղթը: Նահատակուած է 60ին, իր եպիսկոպոսութեան երեսներորդ տարին: Անոր նահատակութեան մանրամասն պարագաները կը հաղորդեն մեզ Եւսեբիոս՝ Հեգեսիպպոսէն առնելով և Կղեմես Աղեքսանդրացին:

Ըստ աւանդութեան, Ս. Յակոբեանց տաճարը կը նկատուի տան տեղը Տեառնեղբօր Յակոբոս, որուն մարմինը նախապէս թաղուած է Ս. Սիոնի տակ եւ յետոյ փոխադրուած է աւագ սեղանին ներքև:

2. Ս. Յակոբայ տաճարն եւ անոր սրբավայրերը.

Ս. Յակոբայ տաճարին պատմութեան եւ նկարագրութեան չկասած՝ յայտնենք թէ վանքին ու տաճարին հիմնարկութեան մասին ոեւէ յիշատակարան չունինք եւ չենք գիտեր թէ ո՛ր թուականին ան հիմնարկուած է. աւանդութիւնը կը տանի մինչեւ Տրդատ և Ս. Գրիգոր Լուսաւորիչ ու անոնց կ'ընծայէ վանքին և տաճարին հիմնարկութիւնը. այս աւանդական պարագայէն զատ ամէն ինչ մթութեան մէջ է. թերեւս օր մը յիշատակարան մը անակնկալօրէն լուսաբանէ հաստատութեանս հիմնարկութիւնը. բայց մենք Ս. Յակոբայ տաճարին սրբավայրերու նկարագրութեան ժամանակ առիթ պիտի ունենանք պարզելու թէ Ս. Յակոբայ տաճարին մասնաւոր մէկ սրբավայրը հաստատուած է ե. դարուն. պատմութիւնը եւ չէնքին ճարտարապետական ձեւը կը հաստատեն այդ վարկածը: Մենք սա համոզումը ունինք թէ տաճարի սրբավայրերը միաժամանակ չենինուած. գլխաւոր սրբավայրերը Ս. Գլխապիր եւ Ս. Միհապի մատուռներն գոնէ ե. դարէն սկսեալ գոյութիւն ունէին. ատոնց և ուրիշ մատուռներուն, իբր լրացուցիչ, շինուած կը թուի Ս. Յակոբեանց գեղեցիկ և հոյակապ տաճարը. բայց աստի, որոշ է նաեւ, եւ պատմականօրէն կը հաստատուի թէ Ս. Յակոբեանց վանքը ու եկեղեցին Խաչակիրներէն չատ յառաջ արդէն շինուած էր. վանքին արեւմտեան պարսպին ճակատը խաչքար մը կայ հին ու կիսամաշ, որուն թեւերուն անկիւնները չորս ուրիշ խաչեր քանդակուած են, շրջանակին վերեւի երկու խորշերուն մէջ երկաթագիր՝ ՏՐ. ԱՅ. և խաչի պատուանդանին տակ՝ թվ. Նե.

(= 956) թուերը կան. այս խաչքարը մերձաւորապէս Աչա-
կիրներէն 150 տարիէ աւելի յառաջ դոյութիւն ունենալով ա-
գուցուած է վանքի արտաքին պարսպին ճակատը: Երկու խաչ-
քարեր կան նաեւ Վերնատան արեւմտեան արտաքին պատին
վրայ «ի թուին Հայոց Ո» (= 1151), ինչպէս նաեւ հնագոյն խաչ-
քար մը Վերնատան հիւսիսային արտաքին պատին վրայ ագու-
ցուած «ՈՒ» (= 1153) թուականաւ, այս խաչքարերը, երեւան
եկած են չինութեանց առթիւ հին պատերու քանդուած ժամա-
նակ. երեսցած յիշատակարաններու մէջ ամենէն հինները ասոնք
են: Ս. Յակոբայ տաճարը իր ճարտարապետական ձեւովը ցոյց կու
տայ թէ հայկական է. եկեղեցիին ճիշդ մէջ տեղը կը դտնուին
քառակուսի չորս լայնանիստ ոտքեր կամ սիւներ որ կը կրեն
գմբէթի մը. այս իսկ է գլխաւոր ապացոյցը չէնքին հայկականու-
թեան. ան ճիշդ նմանն է հնագոյն հայ եկեղեցիներուն եւ կա-
ռուցուած է Մայր Մաշտոցի հրահանգաց համաձայն, և կատար-
եալ նման ձեւեր ունի, ինչպէս էջմիածնի, Բագրեւանդայ, Գլա-
կայ եւ ուրիշ հին մայր տաճարներու: Տաճարը թէ արեւելքէն
արեւմուտք և թէ հարաւէն հիւսիս երեք մասերու կը բաժնուի:
Ամբողջ տաճարին երկայնութիւնը 22 մէթր է, աւագ դուռնէն
մինչեւ աւագ սեղանին եռանի կիսաբոլորակը, իսկ լայնութիւնը
հարաւէն հիւսիս մինչեւ հաչուով 16 մէթր, որ կու տայ իբր 350
քառակուսի մէթր տարածութիւն: Տաճարի արեւելեան կողմի
սեղանները դէպի ետ քաշուած են չատ կանուխ թուականներու
մէջ, Կիլիկեցի հայ թագաւորաց օրով, պարզապէս բեմը և դասը
լայնցնելու համար. այս մասին յիշատակութիւն մը չունինք,
բայց արտաքին կողմէն արեւելեան երկու կողման պատերուն
վերջաւորութիւնը ճարտարապետական կառուցուածքէն դիտելով
կը տեղեկանամք թէ արեւելքի վերջացող մասերը հին պատերուն
նոր ագուցուածի ձեւը առած են. իսկ արեւմտեան կողմի մասը
նորոգուած կը թուի 1835–36ին, երբ կանանց վերնատունը չին-
ուած է:

Տաճարին սրբավայրերը նկարագրելէ յառաջ եկեղեցւոյ զար-
դերը պէտք է նկատի առնունք. եկեղեցւոյ, դասի, աւագ սեղանի
պատերը մէկ մարգալափ բարձրութեամբ հուտինական ընտիր
յիներով զարդարուած են Գրիգոր Շղթայակիր պատրիարքի
օրով. դասին մէջը ու բեմին վրան երփներանգ մարմարներով

գորգանման գործուած են, եւ սրբազան պաշտամանց պահանջ-
ներուն համեմատ տեղեր ալ զատուած են: Այդ գեղեցիկ ձեռա-
կերտը, որուն նման ուրիշ տեղ տեսնուած չէ, արդիւնք է Փի-
լիպպոս Աղթակեցի կաթուղիկոսին նախաձեռնութեան, երբ 1652
թուին երուսաղէմ կը գտնուէր Կիլիկիոյ գործերով: Յատկապէս
կը յիշուի բեմին բարձրացումն ալ Փիլիպպոսի կարգադրութեամբ:
Իսկ բեմին ճակատը քանդակուած ու ներկուած մարմարէ, պարս-
կական ճաշակով գործուած եւ Սեդրոս ամիրայի առատաձեռ-
նութեամբ չինուած է 1730 թուականին:

Տաճարին եկեղեցական զարդերուն մէջ ամենէն նշանաւորն
է աւագ սեղանին խաչկալը, բայց պարզ խաչկալ մը չէ: Զի սե-
ղանին բուն խաչկալը ետեւօք կը մնայ և սեղանին քովերը ու
վրան ամբողջ ճակատը մը կը կազմեն, մինչեւ մեծ կամարին բե-
բանը, համակ գեղեցկաքանդակ և ոսկեզօծուած փայտէ, տեղ
տեղ պատկերներով, որոնք կը գտնուին մինչեւ իսկ ներքին խաչ-
կալին աստիճաններուն երեսները: Կրիգոր Շղթայակիր և Յով-
հաննես Կոլոտ պատրիարքներու անունով չինուած է խաչկալը
1723 թուին, ի յիշատակ իրենց պարագայից եւ միաբանից եւ
նուիրատուաց: Ամբողջ ճակատը փառայեղ յաղթական կամարի
մը կերպարանը ունի, մէկ մեծ ու երկու փոքրագոյն կամարա-
ձեւ բացուածքներով, իսկ վերեւը կը զարդարեն երեք փոքր
գմբէթներ կամ կաթուղիկէներ: Ոսկեզօծը նորոգուած է Կիրա-
կոս Երուսաղեմացի պատրիարքին օրով 1847 թուին:

Նշանաւոր է նաեւ Տեառնեղբօր Աթոռը, վրան բարձր գմբէթով,
համակ ընտիր փայտէ չինուած, և սատափեայ ագուցիկ կտոր-
ներով արհեստակերտ զարդարուած: Սովորական գործածելի
աթոռ մը չէ. պատրիարքը տարին մէկ անգամ միայն, Տեառն-
եղբօր տօնին օրը, այդ աթոռը կը բարձրանայ, մէյ մըն ալ
պատրիարքները իրենց առաջին գահակալութիւնը այդ աթոռին
վրայ կը կատարեն: Պատրիարքներու սովորական աթոռը, Տեառն
եղբօր աթոռին քովն է դրուած, դէպի դասին դուռը: Հաստա-
տուն աթոռ մ'ալ կը մնայ Գլխաւիրի ատեանին անկիւնը, որ
Ս. Մակարի գերեզմանին և մատուռին մօտ ըլլալուն Մակարի ա-
թոռ է կոչուած: Տեառնեղբօր նուիրական աթոռը արձանագրու-
թեան մէջ եպիսկոպոսարան է ըսուած և չինուած ու զարդար-
ուած է 1680 թուին Եղիազար Սչնթապցի պատրիարքին ձեռ-

քով և Տարսխախցի Մելիտոն ամիրայի ծախքով, և նորոգուած է 1812 թուին Թէոդորոս Վանեցի պատրիարքին օրով։

Սկսինք այժմ սրբավայրերու նկարագրութեան. եկեղեցւոյն ձախակողմը, հարաւային պատին մէջտեղը, Գլխադիրի մատուռին դէմ, ընդարձակ և զարդարուն դուռ մը կայ։ Ասկէ կը մըտցուի Ս. Էջմիածին եկեղեցին, որ կը տարածուի մայր տաճարի երկայնութեամբ. մեծ դուռը աւելի զարդարուն է դէպի մայր տաճար մտնելուն կողմը, իբր զի այս է եղեր նախապէս Գլխադիրի աւագ դուռը, ասկէց ուխտաւորք եւ ժողովուրդք տաճար կը մտնեն եղեր։ Ինչ որ այժմ Ս. Էջմիածին եկեղեցի է, առաջ ժամանակներ երեսը բաց գաւիթ է եղեր, որուն կամարները հիւսելով եւ ներքն ալ յարդարելով եկեղեցի ձեւակերպուած է Եղիազար Ա.յնթապցի պատրիարքէն. երբ ան կ'ուզէր հակաթոռ կաթուղիկոսութիւն մը ստեղծել Երուսաղէմի մէջ, օգտուելով պարագաներէն։ Ս. Էջմիածին եկեղեցիին զարդերը աւելի յառաջ տարուած են Շղթայակիրին օրով, երկու եկեղեցիներու միջեւ եղող դրան փեղկերը կեսարացի Ղանտիլ վարպետին եւ իր աշակերտին Տ. Յովակիմեան Սարգիս վարպետին յիշատակներն են, նուիրուած 1711ին։ Հաննէ կը վկայէ թէ Շղթայակիրը վիզէն անուրը հանելուն ի յիշատակ 1726ին կազմեց Ս. Սինայի սեղանը Էջմիածնի եկեղեցւոյն հարաւային պատին ներքեւ. այն երեք մեծ քարերուն վրայ, որոնք յիշատակ բերուած էին Սինա և Թաբոր լեռներէն և Յորդանանի գետէն. և ուխտաւորներուն համար այդ հեռաւոր սրբավայրերուն կարօտը կը յագեցնէին։ Այդ քարերը այժմ ալ կը տեսնուին երկաթեայ թելէ հիւսկէներով պատած։ Սինայի սեղանը չատ փոքր է եւ միասիւն. եւ այդ միակ սիւնին խոյակին ներքեւ տեսնուած երկաթեայ մեծ օղակը Շղթայակիրին անուրն է անշուշտ, բայց մենք տարբեր ազբիւրէ մը կը ծանօթանանք թէ, ըստ Սարգիս վրդ.ի Երուսաղեմայ *Նորագիւտ պատմութիւն (1683, ձեռ. Ց. Բիւրտեանի)* Շղթայակիրէն յառաջ նոյն տեղը գոյութիւն ունէր Ս. Սինայի սեղանը ի յիշատակ այն սրբազան երեք քարերուն զոր հրեշտակը բերած էր Ս. Աստուածածնի մօտ, ի գոհացումն նոյն վայրերու կարօտին։ Շղթայակիրը 1733ին նոյն տաճարին գեղակերտ խաչկալը, և 1742ին ալ մարմարեայ բեմը չինել տուաւ, երկուքն ալ Սեդբոս ամիրային ծախքով։ Ս. Էջմիածնի տաճարին պատերն եւս

զարդարուած են կաւտինայի թանկարժէք չինիներով 1794ին, Եւդոկիացի նորապսակ Պետրոս պատրիարքի գահակալութեան ժամանակ և կեսարացի Պաշպազիրկանեան Յովհաննէս ամիրային ծախքով։

Ս. Էջմիածին եկեղեցիին մեծ դրան աջակողմը պատկերներու կարգին դուռ մը կայ վեց ոտք չարժական սանդուխով։ Արտաքին սատափազարդ դուռնէն ներս, երկրորդ դուռ մ'ալ կայ, գեղեցիկ քանդակներով զարդարուած, որ հին արհեստի հազուագիւտ նմոյշ մը կը նկատուի, նոյն դրան երկու փեղկերուն վրայ հետեւեալ արձանագրութիւնները կը կարդացուին.

Ա. փեղկ.

«կազմ. դուռն սուրբ տաճարի,
որ է յանուն Սուրբ Պաւղոսի,
Առաքելոց մեծաց գլխի».

Բ. փեղկ.

«սա յիշատակ անջնջելի
հնգահոգոյն Յովհաննիսի,
եւ որում ... թվ. ՊԻ» (= 1371)։

Տաճարին մայր պատին մէջէն բացուած 25 ոտք նեղ սանդուխով մը բարձր, ճիշդ ներքեւի Ս. Աստուածածնի խորանին վրայ չինուած է Ս. Պողոսի վաստուղը, որուն տարածութիւնն է մերձաւորապար 4 ական մէթր երկայն ու լայն։ Մատուռն ամբողջ յախճապակիով զարդարուած է, մինչեւ իսկ կոզակին վրայի կիսապտոյտ կամարը։ Սարգիս վրդ. իր «Երուսաղէմի պատմութեան» մէջ 25 ոտք սանդուխին մէջտեղը կը յիշատակէ Ս. Սիոնի վերնատան անուամբ սեղան մը, որ այսօր գոյութիւն չունի։ Մատուռին միւս կողմէն 12 ոտք սանդուխով բարձրութեամբ աւագ սեղանին եւեէն դարձեալ 12 ոտք իջնելով՝ ներքեւի Ս. Կարապետի խորանին վրայ կը գտնուի Ս. Պետրոսի վաստուղը, միւս մատուռին կատարելապէս չար և նման։ Պողոս Պետրոսի տօնին այս երկու սեղաններուն վրայ ալ միեւնոյն ժամուն պատարագ կը մատուցուէր. հայ ուխտաւոր քահանայ մը՝ Զուար Ճիլէրճի Օղլու անուամբ, իր Ուղեգրութեան մէջ (*Տե'ս Բազմավէպ, 1867, էջ 207*) հետեւեալ կերպով կը նկարագրէ երկու ժամարարներու պատարագելու կերպը. «գամ ի տօնի սուրբ ժամարարն երկու. սպասաւորն ուրը չորսն մի կողմն, եւ չորսն մի կողմն. մին Պողոս

ալուն, եւ մեկ Պետրոս ալուն. մեկ մեկ խորան կու կանգնեն, որ աւետարան համբուրելու համար. դպիրք վարն կու կանգնին. երկու ժամադարն ձայնաւորն ճօպերով կ'ասեն. մինն ձայնով ասէ եւ միւսն խորհրդաբար, նոյնպէս միւսն. եւ դպիրք երկուսին այդ դպրութիւն կ'անեն». Նոյն ձամբով կ'իջնուի տաճար ուղիղ հանդիպակաց կողմի Ս. Ստեփանոսի մատուռը նկարագրելու համար։

Ս. Ստեփանոսի մատուռը տաճարին աւանդատունն է. Հաննէ վրդ.՝ իր Պատմութեան մէջ (էջ 88) այս մասին համար կը գրէ. «ի կարգի արդոյ Գլխադրի հետեւի եկեղեցին արդոյն Ստեփանոսի, շինեալ ի վերոց բազաւորաց Կիլիկեցւոց ի վերայ հիւսիսային մեծ դրան արդոյ եկեղեցւոյն, որ կու դուռն միայնակ անպիտանի տեսանի...»։ Տարածութիւնը մերձաւորապար տասնական մէթր երկայն ու լայն է, և մէջտեղը երկու քառակուսի սիւներ՝ կամարներուն իբր յենարան կը ծառայեն. երեք սեղաններ կան, մէջինը Ս. Ստեփանոսի, աջակողմինը Ս. Լուսաւորչի եւ ձախակողմինը Ս. Կիւրեղ Երուսաղեմացւոյ անուններն։ Այս վերջինը Ս. Կիւրեղի աւազան ալ կ'ըսուի, վասն զի սեղանին ներքև կը գտնուի աւազան մը, որուն մէջ Ս. Կիւրեղ խաչի երեման օրը դարձի եկողները մկրտած է։ Մէթր մը տրամագիծով և երկք քառորդ մէթր խորութեամբ մարմարեայ կոնք մըն է, եւ չափահասները ընկղմամբ մկրտելու բաւական է։ Հիւսիսակողմը կը գտնուի մկրտութեան աւազան մը որ կը գործածուի ուխտաւորներու եւ բացառիկ պարագաներու համար։ Հիւսիս արեւմտեան անկիւնը յատուկ սանդուխով կը բարձրացուի դեղաքանդակ ամպիոնը՝ ոսկեզօծ ամպհովանաւորեալ, ուրկէ կը կարդացուի Ցայսմաւուրք և ինչ ինչ օրեր ալ աւետարան և քարոզ կը խօսուի։ Ս. Ստեփանոսի մատուռի պատերը և խորաններնը չինիով զարդարուած են մարդաչափ աւելի բարձրութեամբ։

Ս. Ստեփանոսի դրան փեղկերուն վրայ գրուած արձանագրութենէն կը հասկցուի, անոր սատափեայ դուռը 1733ին չինած են Տարսխախցի մահտեսի Մելիտոն և կենակիցը մահտեսի Նազլու։

Ս. Ստեփանոսի դրան արեւմտեան կողմը պատին վրայ եղած Տէրունական պատկերը Ս. Յակոբ Առաքելոյն գլխատումը կը ներկայացնէ, այս պատկերին ալ կողմն է Գլխադիր Ս. Յակոբոյ մատուռը, դուռն սատափազարդ է և ամենագեղեցիկ յօրինուած։ Այս մատուռը մէկ ու կէս մէթր երկայնք ունի, երկու

մէկ քառորդ լայնքի վրայ. արեւելակողմը սեղան մը կայ, որուն ներքև բաց է կիսաբոլորակ ձեւով, և մէթր ու կէս տրամագիծով։ Մէջտեղը բոլորակ գունաւոր մարմարիոն մը, յատակէն աւելի ցած, Առաքելոյն գլխոյն թաղուած տեղը կը մատնանշէ, որուն չուրջը և սեղանին ներքև վեց մշտավառ կանթեղներ կախուած են։ Ամբողջը քանդակագործ ճերմակ մարմարէ. իսկ մատուռին պատերը նոյնպէս քանդակագործ մարմարներ են. բայց երփնեբանդ գունաւորուած, իսկ վերևի մասը չինիով պատած է։ Մատուռին վրայ զարդարուն գմբէթ մը կը բարձրանայ, եւ դրան վրայ գեղաքանդակ և ոսկեզօծուած կէս մէթրի չափ գուրս ցցուած բարաւոր մը։ 1731ին չինուած է Ս. Գլխադիրի սատափեայ գուռը Յակոբ անուն վարպետէ մը, ի յիշատակ կամարակապի Նազարի որդւոյ. Շղթայակիրի օրով։

Սարգիս վրդ.՝ գրիչ Երուսաղեմայ նորագիւտ պատմութեան, 1683ին հետևեալ կերպով կը նկարագրէ Ս. Գլխադիրի մատուռը. «... վասն որոյ զգեղեկցութենէ, և պայծառ զարմանակերտութենէ դամբարանի սուրբ գլխոյ առաքելոյն ոչ ոք լեզու կարէ պատմել և ճառել, զի միջի եղեալ սեղանն, արդարև՝ ձեւով և տեսլեամբ է յար և նման եօթնասեղեան խորանին։ Նմանապէս և դամբարան սրբազան գլխոյն, որ ի ներքոյ սեղանոյն՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ շնորհազեղ և կենսաբուխ վտակ մի, լցեալ անմահական փառօք, զոր ճաճանչեամբ մարմարոնեայ փորուածովք և մանրաշար բազմագոյն քարամբ զարդարեալ. ունելով զ. կանթեղս մշտավառ չուրջանակի, եւ բ. դրունս, մինն դէպ յարևմուտս, երկայնութիւն յարևելից յարևմուտս թ. թզաչափ, և լայնութիւն հիւսիսոյ հարաւ է. թզաչափ»։

Քանի որ Գլխադիրի նկարագրութիւնը կատարեցինք պէտք է հոս յիշել որ ըստ յիշատակարանաց, կ'աւանդուի թէ Ս. Գլխադիրի առջև և տաճարին սիւներն ներքև թաղուած են Լևոն Զ.ի կինը Մարիուն և աղջիկը Փեննա՝ որ Լևոնի ազատութենէն յետոյ 1382ին, Եգիպտոսէն Երուսաղէմ կ'ուղևորին, և ժամանակ մը բարեպաշտութեամբ կ'ապրին Ս. Յակոբեանց վանքին մէջ և երբ կը վախճանին, անոնք կը թաղուին տաճարին յիշեալ տեղւոյն մէջ. այս պարագան ձեռագիր յիշատակարանները մասնաւորապէս Ս. Աթոռոյ պատրիարք Մարտիրոս Ղրիմցին՝ կը վկայեն, նաեւ Միաբանական աւանդութիւն մը եղած է եւ տե-

ած է մինչեւ ցայսօր. միայն յիշեալներուն թաղուած տեղի մասին անստուգութիւն կը տիրէր: Սաւալանեանցի Երուսաղիմի Պատմութեան թարգմանիչը Գեր. Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան կը ծանօթագրէ թէ «1897 տարւոյ Նոյեմբեր ամսուն երբ Ս. Գլխադրի մատուռին առջեւը նոր քարերով կը սալարկուէր՝ գետինը փորուած ատեն մատուռին դրան եւ դիմացի սիւներն մէջտեղը քով քովի երկու ամբողջական կմախքներ երեւան ելան՝ մէկը մեծ և միւս քիչ մը փոքր: Ամենայն հաւանականութեամբ ասոնք ըլլալու են Մարիամ Թագուհիին եւ իր փեսայ աղջկան նշխարները»:

Ըստ մեր հետազօտութեան, այս ծանօթութեան վրայ, կ'ա-ւելցնենք թէ Լեւոն Զ.ի կինն էր Մարգարիտ որ, Տարտելի համաձայն, Լեւոնի հետ ամուսնացած ու յետոյ գերի տարուած է Եգիպտոս, և հաւանաբար հոն մեռած. իսկ Մարիուն որ կոստանդին Դ.ի այրին էր ու անոր աղգականուհին Փեննա, նմանապէս գերի տարուած էին. այս վերջին երկուքը, հաւանաբար Լեւոնն ալ, Երուսաղէմ կու գան ուխտի, Լեւոն կ'ուզեւորի Եւրոպա, իսկ Մարիուն եւ Փեննա երբ կը վախճանին, Ս. Գլխադրի առջեւ, սիւնին ներքեւ կը թաղուին. եւ այս բացատրութիւնը հակառակ չէ յիշատակարանաց, վասն զի Մարիուն ալ հայոց թագուհի մ'էր, բայց ոչ Լեւոն Զ.ի, ինչպէս չատերը կը կարծեն:

Ս. Գլխադիրը դուռ մը եւս ունի արեւմտեան կողմը, որուն առջեւը կայ փոքր գաւիթ մը, որ է նաեւ մուտքը Ս. Միհնաի մատուռին. հիւսիսի կողմէն դուռ մը կը տանի Ս. Մինասի մատուռը, ուր կան երկու սեղաններ, մին՝ Ս. Միհնաս Աղեքսանդրացիին, եւ միւսն՝ Ս. Սարգիս զօրավարի անուններուն նուիրուած: Զորս մէթր թեւերով քառակուսի մ'է ամբողջը, պատերը չիւիազարդ, մատրանս պատերէն չարուած են վարդապետական և եպիսկոպոսական գաւազաններ, հետաքրքրական գլուխներով: Մատուռը հասարակութեան կը բացուի նոյն երկու սրբոց տօներուն և բացառիկ պարագաներուն: Այս մատուռին յարակից է մայր տաճարին գանձարանը, կամ աւանդատունը զանազան բաժանմունքներով, պարունակութեանց տեսակին ու արժէքին համաձայն: Ս. Յակոբայ գանձատունը նշանաւոր է իր մեծահարուստ և բազմաթիւ զարդերով ու սպասներով: Աստնց չատը Պարոնտէր և Շղթայակիր պատրիարքներու ժամանակներէն պա-

տրաստուած կամ հետզհետէ բարեպաշտներէն նուիրուած են: Գանձատան մուտքը միշտ վերապահեալ եղած է, և այնպէս ալ կը չարունակուի ցարդ: Ս. Մինասի արտաքին դրան վրայ Ս. Տեառնեղբօր արձանի չրջանակի մէջ առնուած մէկ պատկերը կայ, որուն վարի անկիւնը ծունկի եկած է «Հաննա աբեղան» եւ ձօնն ալ գրուած է «Յովհան Հաննայի» կողմէն, 1714: Այս պատկերը Յովհ. Հաննէ Եպս.ին կենդանագիրն է Շղթայակիրին գործակից և Երուսաղեմացի:

Ս. Մինասի երկաթեայ դուռը 1733ին յիշատակ տուած է մհտ. Սարգիս խալֆան. իսկ նոյն մատրան սատափեայ դուռը յիշատակած է 1737ին Տարսխախցի մհտ. Մելիտոն և կողակիցը հաճի Նազլու:

Յաջորդ սրբավայրին նկարագրութիւնը ընելէ յառաջ պէտք է յիշել Ս. Մինասի մատրան ծագումը և գլուխոց պատմական տեղեկութիւնը: Ե. դարուն Կիւրեղ Սկիւթուպոլսեցին իր Երիմիոսի Վարքին մէջ կը յիշէ այս սրբավայրը, որ հիմնարկուած է Եւդոկսիա Թագուհիին մէկ մերձաւորին կողմէն: Եւդոկսիա և իրենները այն ատեն ունէին միաբնակ հաւատքը: Սկիւթուպոլսեցին կը յիշէ նաև թէ Ս. Մինասի մատրան քով հաստատուած էր կուսանոց մը հովանաւորութեան տակ Թէոդոս պատրիարքին՝ որ հակառակ Քաղկեդոնիկ Յունաղի գահակալած էր Երուսաղէմի Աթոռին. նոյն դարուն այս սրբավայրին, անտարակոյս Ս. Գլխադրին ալ, վանահայր կարգուած էր հայազգի Մելիտենցի Անդրեաս, որ եղբայրն էր այն երկու եպիսկոպոսներուն՝ որ կ'ապրէին Եւթիմիոսի վանքին մէջ, և որ ապա կոչուեցան բարձր աթոռներու (Génier, Vie de Saint Euthyme le Grand, էջ 284), և որոնց վրայ պիտի գրենք գիրքիս յետագայ մասերուն մէջ: Եթէ ուշի ուշով քննենք Ս. Մինասի մատրան կառուցուածքը ու անոր վերնայարկ Ս. Առաքելոց մատրան արեւելեան ճակատը՝ պիտի համոզուինք թէ արդարև նոյն մատուռն չատ հին դարերէն մեզ կը հասնի, և մատրան կառուցուածքին մէջ Սինայի եկեղեցիին հետ մեծ նմանութիւն կը տեսնուի, արեւելեան ճարտարապետութեան տեսակէտով:

Ս. Մինասի անուամբ այս մատուռը իբր կրօնական հին չէնք Երուսաղէմի մէջ միակն է եւ հիւսիսի կողմէն կցուած է Ս. Յակոբայ եկեղեցւոյն: Մեր համոզումով թէ այս մատուռն և

անտարակոյս Ս. Գլխադիրը Ե. դարուն կը պայծառանան եւ Հայոց համար կ'ըլլան սկիզբը Ս. Յակոբեանց վանական բոլոր հաստատութեանց այն թաղին մէջ, ուր ապա հաստատուեցաւ հայկական գաղութ մը, որուն սկզբնական բարգաւաճանքը առաջին Յաչակիրներէն յառաջ եղած է, Գրիգոր Վկայասէրի ժամանակ: Այս գաղութը մեր գրիչներէն զատ կը յիշեն նաեւ արեւմտեանք. եւ Ասսիզիի Երուսաղէմի, որ ցոյց կու տան թէ Հայք հոն բազմաթիւ էին. եւ ԺԲ. դարու կիսուն հիւրանոցներ ունէին եւ իրենց անունով ամբողջ թաղ մը, Ruga Armenorum, որ 1222ին կը յիշուի դիւանական գրուածոց մէջ (Տե'ս Սիսուան, էջ 482):

Ս. Մինասի մատրան կիսը կը գտնուի Ս. Մակարի մատուռը, որուն արեւելակողմն է սեղանը, եւ հիւսիսակողմը Ս. Մակարի գերեզմանը: Յատակը երկու մէթր երկայն ու լայն է. գերեզմանաքարը սպիտակ մարմար է, չինուած 1751ին եաղուպ Ամիրային ծախքով: Մակարի գերեզմանին վրայ կը գտնուի նոյն հայրապետի մահուան հնօրեայ պատկեր մը 1731 թուականաւ: Այս մատուռը Մակարէ զատ Ս. Լուսաւորչի պատուոյն ալ յատկացուած կը նկատուի իբր թէ նախապէս այստեղ կը պահուի եղեր Լուսաւորչի նշանաւոր մասունքը: Այս մատրան դուրսն է Գլխադիրի աստիճանը: Մատուռին պատերն ու կամարաձեւ առաստաղը չինիով պատած է: Ս. Մակարի սատափեայ դուռը չինած է Տէր Մինաս:

Գլխադիրի դասին անկիւնը դրուած պատրիարքական աթոռին քովէն նեղ դուռ մը, իբր 30 ոտք նեղ ու վայտեայ սանդուխ մը կը տանի տաճարին հարաւակողմին վերի մատուռները, որոնց կ'երթացուի վերնատունէն ալ կամրջակերպ անցքով մը: Առաջին մատուռը կը կոչուի Ս. Նշան, իբր թէ այստեղ կը պահուէր երբեմն Յաչափայտի մեծ մասունքը, որ արուեստակերտ պատուանդանով մանուատուփ մը ունի: Իսկ Յաչափայտի մասունքը ստացուեր է հին ժամանակներէ յոյն պատրիարք մը որ իսլամութեան յարեր է և մասունքը վաճառեր է Հայոց պատրիարքին: Այս պատմութեան մէկ տարբերակը կը պատմէ Զուար Ճիյէրճի Օղլու քահանան և իր Ուղեգրութեան մէջ և կը գրէ թէ (անդ, 1867, 203–204) Կիբիսի առման ժամանակ յոյն լուսարարը կենաց Փայտը հետը կ'առնու ու կը բերէ Երուսաղէմ. կը դնէ Ցու-

նաց՝ բայց վերջիններս կը հակառակին անոր. լուսարարը կը դիմէ Ս. Յարութեան մօտ բնակող Շէյխ Մէֆա անուն մէկուն՝ որուն մօտ դռնապան կ'ըլլայ, և կտակ կ'ընէ որ երբ մեռնի Շէյխ Մէֆան իր մօտ գտնուած կենաց Փայտի մասունքը յանձնէ Հայոց վանքին. կը վախճանի յիշեալը և Շէյխ Մէֆա նոյն մասունքը կը բերէ կը յանձնէ եղիազար պատրիարքին: Մատուռը իբր մէկ մէթր լայնք, ու մէկուքառորդ մէթր երկայնք ունի, չուրջանակի չիլիով պատած. յատակը աւազ խորանի բեմին պէս երփնեղանգ մարմարներով արուեստագործուած: Մատուռին երեսը քաց է մայր տաճարին վրայ, և այնտեղ կայ արուեստագործ և ոսկեզօծ պատչգամ մը:

Ս. Նշանի մատուռէն դուրս բացօթեայ պզտիկ բակ մը կայ որուն վրայ կը բացուի Ս. Առաքելոց մատուռը, կոկիկ փոքր եկեղեցի մը 25 քառակուսի մէթր տարածութեամբ, ուր կը պահուին Շղթայակիրի և Կոլոտի ուսուցիչ Բաղիշեցի Վարդան վարդապետի պատկերները և ուրիշներ: Այս եկեղեցիի մասին Հաննէ վրդ. իր Պատմութեան մէջ (էջ 91) հետեւեալ տողերը կը գրէ. «... եւ է հնագոյն եւ սագաչին. որպես եւ յուշալ եւմ թէ ընդ մեծի սկսողեցւոյն շինեցաւ յատուկ աղօթարան թագաւորաց, զի դուռն ի տանեաց է, եւ այժմ է գրեթատուն: Նորոգեալ ի մեծ Վարդապետին ի ՌՃՀԳ (= 1734) թուին»: Ս. Առաքելոց բակին քովը և քիչ մը բարձր երկրորդ փոքրիկ բակ մըն ալ կայ, որուն վրայ կը բացուի Հաւքարձեան մատուռը, երկայնքը մէկ ու քառորդ, իսկ լայնքը երեքուկէս մէթր սեղանով մը:

Ս. Յակոբայ տաճարին աւազ դրան երկու կողմերը մանր խորշերու մէջ երկու սեղաններ կան Ս. Գեորգայ զօրավարին եւ Ս. Նիկողայոսի հայրապետին, պղնձէ վանդակներով փակուած: Կը թուի որ Ս. Նիկողայոսինը աւելի ուշ չինուած է քանի որ չի յիշուիր հիներէն: Աւանդութիւն է թէ երբ Սալահէտտին 1187–1194 ետքը տարիներու մէջ կնիքի ներքեւ պահեց Ս. Յակոբի տաճարին մուտքը, Միաբանութիւնը արտաքին գաւիթին մէջ և այս սեղաններուն առջև կատարած է արբազան պաշտամունքը: Հաննէ վրդ.՝ իր Պատմութեան մէջ (էջ 80–87) Սալահէտտինի կողմէն Ս. Յակոբայ տաճարին գրաւման և վերստին Հայոց չնորհուման մասին կը պատմէ յատկանշական զրոյց մը, իսկ Թագէոս Միհրդատեանց իր Դասաւանդութիւն Դասաւանդութեանց գիրքին մէջ

(էջ 48–49) Յակոբ քհյ. Ամասիացին ձեռագիր պատմութենէն (այժմ կորսուած) առնելով կը յիշէ Սալահէտտինի կողմէն Ս. Յակոբայ եկեղեցիին գրաւման, և վերստին չնորհման պարագաները զոր մէջ կը բերենք հեղինակին գրչութեան ոճովը. «Արդ՝ երբ ժամանակ որ Սալահէտտին Սուլթանը երուսաղէմ կը մտնայ, դեռ քաղաք չի մտած հեռուէն մեր Սուրբ Յակոբայ տաճարին փառաւոր գմբէթը եւ անոր հսկայաշինութիւնը տեսնելով՝ կը կարծէ թէ Էօմէրին մզկիթն է, և իսկոյն երկրպագութիւն մատուցանելով փառք կու տայ Աբարչին՝ որ իր ձեռքը յաղթութիւն տուաւ և արժանացաւ Սուրբ Երկրին տիրապետելու եւ Սէյրէթուլլահը տեսնելու։ (Ըստ որում մինչեւ ցայսօր քաղաքը չի մտած ի հեռուած կ'երեւի մեր հսկայաշէն վանքը. քանզի ոչ միայն մնձ է դրան եաֆայի եւ աշտարակին Դաւթի, այլ չի կայ քաղաքին մէջ անոր պէս մեծակառոյց եւ մեծագիրք շէնք մը. նա մանաւանդ գետնի բարձր դիրքովն ալ երեւելի ձեւացուցած է տաճարը, որովհետեւ Սիոն լերան վրայ կառուցուած է)։ Իսկ երբ ժամանակ որ քաղաքէն ներս կը մտնէ՝ կը տեսնէ որ խարուած է՝ և իր կարծիքը պարապ. ուստի անոր երկրպագութիւն մատուցանելով աղօթելուն (նամազի կայնելուն) համար, զայրանալով կը հրամայէ նոյն ժամանակի Հայոց հայրապետին՝ (որ Երուսաղէմի Աբրահամ պատրիարքն էր) որ կամ վանքը ձգեն ու դուրս ելնեն որ մզկիթ դարձնէ Մարեագուպը, և կամ եթէ յանձնառու չըլլան՝ հինայատակ պիտի ընէ մանասթըրը։ Յայնժամ երանելի հայրապետը իր բոլոր միաբանութեամբը ու ժողովրդովը ճիչ կը բառնան և աղիողորմ արտասուօք Սուլթանին ոտքը կը փարին գոչելով և պաղատելով՝ որ ողորմի եւ խնայէ վանքը ու իրենց պարգեւէ։ Նոյնժամայն բարկութենէն փոքրով զիջանելով՝ վերստին կը հրամայէ որ գոնէ հրամանը տեղը գտնելու համար տաճարին գմբէթը լլջեցնեն ի խոնարհ, իսկոյն զիջանելով այս որոշմանը՝ կը քակեն կաթողիկէն (կամ նոյն է գագաթն կամ սկաւառակն Ս. Յակոբայ տաճարին), որով և կը հանդարտի փոքր ինչ յաղթողին սիրտը։ Եւ կը պատուիրէ որ մէյ մ'ալ գմբէթը չի բարձրացնեն. ըստ որում կ'ըսէ ինձմէ ետքը եկողները, կամ եղելութիւնը իմանալով, կամ տաճարին փառքը տեսնելով՝ յայնժամ կամ ձեռնուդ կը յափշտակեն եւ կամ հինայատակ կ'ընեն. այս ըսելով

Ս. Յակոբայ վանքը կը թողու ու կ'երթայ հայրապետին հետ մեկտեղ քաղաքը շրջիլ ու Սէյրէթուլլահը (Էօմէրին մզկիթը) տեսնել»։ Կ'երեւի որ Ս. Յակոբայ գմբէթին վար առնուած գագաթը կամ սկաւառակը բաց էր մինչև 1610, վասն զի Levaillant գաղղիացի ճանապարհորդը "le Pélérin Veritable», Paris, 1613, էջ 508, 509 դիրքին մէջ կը գրէ թէ այս գմբէթը կոր ծակ մը ունէր, ուրկէ անձրեւը կը թափանցէր, ինչպէս Ս. Յարութեան եկեղեցիին գմբէթը։ Այս ծակէն սակայն թռչունները չեն կրնար անցնիլ, վասն զի անոր վրայ չինուած էր երկաթէ ցանցկէն մը, որուն արուեստական աշխատանքը հիացուցած էր ուխտաւորը։ (Տե'ս Camille Enlart, les Monument des Croisés dans le Royaume de Jérusalem. էջ 238)։ Զուար ձիյէրճի Օղլու քահանան ալ իր Ուղեգրութեան մէջ (Տե'ս անդ, էջ 202–203), կը պատմէ զրոյց մը իբր թէ Սալահէտտին երբ եկեղեցւոյ իր կնքած դուռը կը բանար՝ հրեք անձեր չապիկ հագած և մոմ ի ձեռին կը ներկայանան եկեղեցւոյ դրան առջևը կեցած. նոյն անձերն են Յակոբոս Տեառնեղբայր, Յակոբոս Զեբեդեան և Մակար հայրապետ, որոնց պատկերները ցոյց կը տրուին Սալահէտտինի, որ կը յարէ թէ այդ անձերն էին որ երեւցած են իրեն չապիկ հագած ու մոմ ի ձեռին, և այլն։

Հաննէ Սալահէտտինի կողմէն Ս. Յակոբայ գրաւման և չընորհման զրուցագիրն իր պատմուածքէն յետոյ կը յարէ (էջ 81) «. . . եւ վերստին չնորհեաց զվանքն բոլորովիմբ. եւ գրեաց ի վերայ դրան վանից արապերէն անէծք ըստ օրինաց իւրեանց, թէ մի ոք առցէ զսա ի ձեռաց հայոց. և կայ մինչև ցայսօր»։ Նոյն իմաստ է նաև Զուար ձիյէրճի Օղլու քահանային գրածը. բայց վանքին դրան վրայ քանդակուած արաբերէն արձանագրութիւնը Սալահէտտինի կողմէ չէ, այլ եգիպտոսի սուլթան Մէլէք Զահըր Զախմախն է (1438–1453) որ եգիպտացի Մարտիրոս պատրիարքին հիճրեթի 954 (= 1450)ին կը չնորհէ հրովարտակ մը որուն մէկ օրինակը կը քանդակուի վանքի արտաքին դրան կամարին տակ, միւս օրինակն ալ դնէն ներս գիմացի պատին մէջ զետեղուած չրի Զեպիլին վրայ։ Արձանագրութեան իմաստը հետևեալն է՝ թէ ոչ ոք բռնութեամբ վանք մտնելով անիրաւ տուրքեր պահանջէ վանականներէն. ու կը յարէ թէ ա-նոնք որ հակառակը կը գործեն ու կ'անսաստեն այս հրամանին

անիծեալ ըլլան։ Արձանագրութեան օրինակը հետևեալն է.

برز مرسوم مولانا السلطان الملك الظاهر ابو سعيد محمد چقمق عز نصره بابطال ما احدثه ابو الخير ابن النحاس من ضمان مار يعقوب دير الارمن بالقدس الشريف عاما رده سيف الدين المقر الشرفى الانصارى وسأل فى ابطال ذلك ليسطر فى الصحايف الشريفه بتاريخ اربع وخمسين وثمانمائة من الهجرة الشريفه ملعون ابن ملعون وعليه لعنة الله تعالى كل من احدث ضمانا او جدد مظلمة

Սոյն արձանագրութիւնը կը մնայ մինչև յայսօր։

Ս. Թեոդորոս եկեղեցին մայր տաճարէն բոլորովին անջատ է. անոր հիւսիս արևելեան կողմը և ուխտաւորաց թաղերուն մօտ։ Ըստ տեղական աւանդութեան նոյն եկեղեցին չինուած կ'ըլլայ Հեթում Ա. թագաւորին կողմէն յիշատակ իր որդւոյն Թորոսի, որ սպաննուեցաւ Մառիի ճակատամարտին մէջ 1266ին, Եգիպտացւոց դէմ պատերազմելով։ Ըստ պատմութեան, Հեթում Ա.ին մահը տեղի ունեցաւ 1270ին, միջանկեալ չորս տարիներու մէջ Հեթում Ա.ի երուսաղէմ այցելութիւնը չի յիշատակուիր։ Մինչև յայսօր Ս. Թէոդորոսի եկեղեցւոյն մօտերը սենեակ մը ցոյց կը տրուի իբր Հեթում Ա.ի բնակարան. բայց քանի որ պատմութենէ յայտնի է թէ Հեթում Բ. երուսաղէմ եկած ու մնացած է և յիշատակներ ալ ունի, հաւանական կը դանենք որ Հեթում անուամբ ցոյց արուած սենեակը բնակարանը եղած է Հեթում Բ.ի։

Ս. Թէոդորոսի եկեղեցիին չինութեան մասին կը գրեն Հաննէ (էջ 98) և Սարգիս վրդ. իրենց պատմութիւններուն մէջ, ըստ Հաննէի «շինեցեալ ի Լեւոն թագաւորեն մերմէ ի Պէյ թուին Հայոց։ Յորժամ Թորոս որդին իւր մեռաւ՝ աստ թաղելով զնա և յիշատակ որդւոյն իւրոյ շինեաց զեկեղեցիս զայս. և գերեզման յանկիւնս հիւսիսոյ երևի»։ Բայց պէտք է որդին ուղղել և եղբայր ըսել. զի Թորոս Հեթումի որդին էր, և Թուականն ալ ուրիշ տեղ գրուածին համեմատ Ըճվէ=ՉԼԵ 1286 կարդալ (էջ 82), ինչպէս որ Ս. Յակոբի ձախակողմեան եռեկ սիւնին վրայ ալ կը կարդացուի։ Բայց այս պարագային Ս. Թէոդորոսի եկեղեցիին չինութիւնը անպատճառ կատարուած կ'ըլլայ, Լեւոնի թագաւորութեան վերջին տարիները, որ 1270ին թագաւորեց և 1289ին վախճանեցաւ։

Իսկ Սարգիս վրդ. հետևեալ կերպով կ'արտայայտուի եկե-

ղեցւոյս հիմնարկութեան համար. «ուստի զի թոկոս հիմնարկութիւն ի Հերում թագաւորէ Հայոց արկեցեալ է յառաջագոյն, զի յորժամ եկն ի խաղաղ Երուսաղէմ. պատերազմի պատճառաւ ընդ ազգին Թաթարաց որդին իւր Թոդորոս անուն աստ վախճանեցաւ. ուստի որոյ թագաւորն վասն առաւել սիրոյ որդւոյն իւրոյ հրամայեաց ի մէջ վանիցս թաղել զնարմին որդւոյն, և շինեաց ի յիշատակ հոգւոյն զայս եկեղեցիս. բայց փոխեցաւ»։ Սարգիս վրդ.ի յիշած Հեթում Բ.ը՝ որ Երուսաղէմ եկաւ և Թաթարաց հետ պատերազմեցաւ՝ ամուրի էր և զաւակ չունէր, ուստի իր պատմուածքը անհիմն է. ամենէն հաւանականն է, ինչպէս վերև տեսանք, Լեւոն Գ. կամ Եգիպտոսէն ուխտի եկած ժամանակ, իբր զահաժառանգ, ինչպէս կը յիշէ Վահրամ Բաբունին, և կամ Կիլիկիա վերադարձէն յետոյ իբր թագաւոր, իր եղբօրը Թորոսի յիշատակին չինել տուած է այս եկեղեցին, և Թորոսի գերեզմանը նոյն եկեղեցիին «յանկիւնս հիւսիսոյ երևի» խօսքը հաւանական չենք գտներ, քանի որ անոր մարմինը Մառիի պատերազմի դաշտէն Երուսաղէմ փոխադրել դժուարութիւններ ունէր։

Ս. Թորոս եկեղեցին 9 մէթր լայնութեան վրայ 18 մէթր երկայնութիւն ունի. այժմու չէնքը Լեւոնի չինել տուածը չի կրնար ըլլալ. վասն զի յետոյ Շղթայակիր Նորագած ու ամէն կրնար ըլլալ. վասն զի յետոյ Շղթայակիր Նորագած ու ամէն կողմն չինիներով զարդարել տուած է։ Մատրութեան արժանի է աւագ սեղանին Տիրամօր պատկերը, որ ընտիր արուեստի արտադրութիւն մըն է։ Աւելորդ քանդակագործ և ոսկեզօծ է։ Եկեղեցին ունի հետևեալ մատուռները՝ Ս. Կարապետի՝ որ եկեղեցիին աւանդատունն է, իսկ ձախակողմը՝ բեմին վրայ՝ Ս. Մերկերիոսի կերիոսինը. Ս. Թէոդորոսի, Ս. Կարապետի եւ Ս. Մերկերիոսի սեղաններէն զատ չորրորդ մ'ալ կայ, եկեղեցիին դուռնէն դուրս, 4 քառակուսի մէթր տարածութեամբ բակին վրայ Ս. Թադեոսի և Ս. Սանդխտոյ նուիրուած սեղանը։ Ս. Յակոբեանց չէլափակին մէջ 40ի չափ պատարագամատոյց սեղաններ կան, և անոնցմէ մին է Հոգւոյն Սրբոյ նուիրեալ մատուռը, տանիքին վրայ, Ս. Թէոդորոսի մօտ, և ներքին պատուհանով մը անոր մէջը նայող, 12 քառակուսի մէթր տարածութեամբ, սովորական չինուածքով եւ սեղանով։

Ս. Թորոս եկեղեցին տասնչները ուրոյն տեսչութիւն ունէր. այժմ ոչ. վեհապետեան Ցարութիւն պատրիարքի կարգադրու-

թեամբ, 1897ին, և իր անձնական ծախքով չինուած 16 գրադարաններու մէջ նոյն եկեղեցիին մէջ ամփոփուած են վանքին դրեթէ բոլոր ձեռագիրները՝ ցեցակերութենէ և խոնաւութենէ աղատ պահելու դանոնք։ Տիգրան Սաւալանեանց 1865–67 ցուցակագրած է 1742 ձեռագիր, բայց վանքին ունեցած ձեռագիրներուն թիւը այժմ 3000է աւելի է, որով Ս. Յակոբեանց Աթոռին պատկանող գրչագրաց թիւը՝ Մայր Աթոռի մատենադարանէն ետքը առաջին տեղը կը գրաւէ։ Ս. Յակոբայ վանքին գրչագրաց գիտական և լիակատար ցուցակագրութիւն մը այլևս անհրաժեշտ պէտք մ'է գրականութեան և պատմութեան ծառայութեան համար. ուստի յուսալի է որ Ս. Աթոռոյ վարչութիւնը պատեհ ժամու ի մտի կ'ունենայ կատարելու զայն յոգուտ բանասիրութեան, ի մասնաւորի Ս. Աթոռի պատմութեան։

3. Ս. Յակոբեանց վանքին գլխաւոր հաստատութիւնները։

Ս. Յակոբեանց վանքին բոլոր հաստատութիւններն ու շէնքերը նկարագրել Ս. Յակոբայ վանքին մենագրութիւնը պիտի ըլլար. ինչ որ մեր նպատակէն դուրս է. վասն զի մենք կէտ նըպատակի ունինք սրբավայրերը նկարագրել, ինչ որ կատարեցինք. ուստի զանոնք կ'ընենք նկարագրել միաբանական և ուխտաւորական թաղերը, երկրորդական շէնքերը, ինչպէս նաեւ վանքին մէջ գտնուած պարտէզներն ու հրապարակները, այլ միայն կը նկարագրենք գլխաւոր հաստատութիւնները, որոնք են 1. Պատրիարքարան, 2. Տպարան, 3. Մատենադարան, 4. Ժառ. Վարժարան կամ Ճեմարան, 5. Նորաչէն Ս. Թարգմանչաց Նախակրթարան, ինչ ինչ տեղագրական մասերուն համար օգտուելով հոգելոյս Տ. Մաղաքիա Արքեպս. Սրմանեանի Տեղագիր Հայ–Երուսաղէմի ձեռագրէն։

Ա. Պատրիարքարան

Մայր Տաճարէն յետոյ իրը հոյակապ շէնք կը ներկայանայ Պատրիարքարանը, զոր 1853ին կառուցած է Զմիւռնիացի Յովհաննէս պատրիարքը, որուն ճաշակին և մեծագործութեան արդիւնքն է այս հսկայ ու հոյակապ չինուածքը, որ իրաւամբ կըրնայ մրցիլ նմաններու հետ։ Շէնքը բոլորովին քարուկիր է եւ

գմբէթաւոր. իր ճարտարապետական ձևը հիացում կ'առթէ բոլոր այցելուաց, մանաւանդ իր դահլիճը՝ որ այժմ ելեքտրականութեամբ ալ կը լուսաւորուի, շէնքին ամենէն չքնաղ ու աչաց հաճոյ մասը կը կազմէ, և արժանի է կոչել զայն Վեհարան։ Անոր երկայնութիւնը 21 մէթր է և լայնութիւնը 7,5 մէթր. 158 քառակուսի մէթր տարածութիւնը ունի. բարձր կամարակապ և գմբէթայարկ է, յատակը մարմարեայ սալարկուած, պատերը վայելուչ գծագրուած։ Յովհաննէս պատրիարք այս Պատրիարքարանին չինութեամբ ևնթարկուած է մեծ ծախսերու և մեծ ճիգերու։ Դահլիճին երկու կողմերը կը գտնուին պատրիարքին բնակութեան յատկացեալ սենեակները. հարաւային կողմը, զատ դուռով կը մտցուի յարկաբաժին մը, որուն մէջ կը գըտնուի ճաշասենեակը իր մասերով. գետնայարկին մէջ են բաղնիքը, խոհանոցը և սենեակներ։ Դահլիճը զարդարուած է գորգերով և կը գործածուի պաշտօնական անձանց իրր ընդունելութեան սրահ, և միանգամայն իրր միաբանական ժողովներու և ընդհանուր համախմբութիւններու պաշտօնատեղի։ Դահլիճին մէջ կը գտնուի նաև երեք ապակափեղկ դարաններ՝ որ կը պարունակեն յախճապակեայ արուեստակերտ և հնօրեայ նմոյշներ։ Պատերը զարդարուած են կենդանագիրերով և նկարներով, որոնք մեծաւ մասամբ յիշատակի նուէրներ են, որոնց գլխաւորները կը յիշենք, ինչպէս Աւստրիոյ Ֆրանց Ժոզէֆ կայսեր և կայսրուհւոյն պատկերները անձամբ այցելութենէն տարի մը յառաջ ղրկուած։ Գերմանիոյ Վիլհելմ Ա. կայսեր և կայսրուհւոյն կենդանագիրը, արքայազուններու այցելութեան առթիւ նուիրուած. վերջնոյս ժառանգներուն՝ Ֆրէդերիք և Վիլհելմ կայսրներու պատկերներն ալ իրենց ստորագրութեամբ յիշատակ թողուած են։ Ռուսիոյ Ալեքսանդր Գ. կայսեր և կայսրուհւոյն պատկերները նմանապէս արքայազուններու այցելութեան առթիւ տրուած են։

Ս. Աթոռոյս Պատրիարքարանի դահլիճին մէջ, ի չարս թագաւոր և թագուհիներու պատկերներուն, կը գտնուին Մեծն–Բրիտանիոյ Վիքթորիա Թագուհիին, Բրէնս Ալպէրթին և այն ատենուան գահաժառանգ Եդուարդ է. Թագաւորին լինքնատիպ պատկերները։ Առանք, 1869ին Վիքթորիա Թագուհիին կողմէ նուիրուած են Տ. Եսայի Ս. Պատրիարքին հետևեալ պարագաներու տակ։

1867ին անգլիացիները խնդիր ունենալով Հապէշիստանի Թէոդորոս Բասին հետ, վերջինս բանտարկել տուած էր Հապէշիստան գտնուող անգլիացիները, և ասոնց կարգին՝ տեղւոյն անգլիական հիւպատոսը: Անգլիոյ կառավարութիւնը վախնալով որ ասոնք սպաննուին, նախ քան տեղւոյն վրայ պինուորական միջոցներ ձեռք առնելը՝ դիմած էր Տ. Եսայի պատրիարքին, որպէս զի առաքելութիւն մը ղրկելով Հապէշիստան՝ ամէն ջանք ի գործ դրուի այդ անգլիացիներուն ազատ արձակումը ձեռք բերուելու և կամ գոնէ կեանքերնին խնայուելու համար:

Սոյն առաքելութիւնը, որ կազմուած էր Տ. Սահակ արքեպիսկոպոսէ, Տ. Տիմոթէոս վարդապետէ և Եզեկիէլ անուն միաբանէ, մեկնեցաւ Երուսաղէմէն 13 Ապրիլ 1867ին: Առաքելութիւնը երկու տարի մնաց Հապէշիստանի մէջ և ենթարկուեցաւ ամենամեծ դժուարութիւններու և տառապանաց՝ պատերազմի մէջ գտնուող այս երկրին մէջ: Եզեկիէլ միաբանը չը կարենալով առկալ այդ տառապանքներուն՝ վախճանեցաւ: Իսկ Սահակ արքեպս. և Տիմոթէոս վրդ., անգլիական բանակի Հապէշիստան մտնելովը յաջողեցան ազատիլ ադկից և վերադառնալ Երուսաղէմ: Բանտարկուած անգլիացիներուն կեանքը փըրկուած էր:

Իբրև չնորհակալութիւն մատուցուած սոյն ծառայութեան, Անգլիոյ թագուհին 1869 Դեկտեմբերին Եսայի պատրիարքին ղրկած էր վերոյիշեալ պատկերները, որոնք այդ թուականէն ցայսօր կը զարդարեն Պատրիարքարանիս դահլիճը:

Անգլիոյ Վ.Կ. Ճօրճ Թագաւորին գուստրը Մարի Իշխանուհին երբ անցեալ 1929 Յունկին Ս. Բաղաքս կը գտնուէր, պատրիարքարանս այցելած և ներկայ գտնուած էր Աւագ-Հինգշաբթի Ոտնլուայի արարողութեան: Օգտուելով Նորին Բարձրապատուութեան Պատրիարքարանիս հանդէպ ցոյց տուած համակրական զգացումներէն, յայտնուեցաւ իրեն, իր Վեհափառ Հօր Մեծ-Մօր և Մեծ-Հօրը, ինչպէս նաև իր Մեծ-Հօրը պատկերները չնորհուած ըլլալու պարագաները, և խնդրուեցաւ որ հաճի բարեխօսել իր Վեհափառ Հօր մօտ, որպէս զի Ն. Վ. Ճօրճ Ե. Թագաւորին և Ն. Վ. Մէրի Թագուհիին պատկերներն ալ չնորհուին Պատրիարքարանիս:

Վեհափառ Թագաւորը ընդունելով սոյն խնդրանքը, բարեհաճեցաւ 1930ին ղրկել իր և Թագուհիին ինքնատիպ պատկերները, փառաւոր շրջանակներու մէջ զետեղուած:

Դահլիճին մէջ կը գտնուին նաև Գէորգ Ե. կաթողիկոսի պատկերը: Իսկ Ս. Աթոռոյ գահակալներէն պատկեր ունին Ցովհաննէս, Եսայի, Յարութիւն և Դուրեան եղիչէ պատրիարքները: Կան նաև մի քանի եկեղեցականաց և երևելի ազգայնոց կենդանագիրները:

Դիւանատունը իր բոլոր ճիւղերով կը գտնուի Պատրիարքարանի մօտ:

Բ. Տպարան.— Վանքին Տպարանը սկսած է 1833ին Զաքարիա Կոփեցիի նախաձեռնութեամբ, Պօղոս Ադրիանուպոլսեցիի հովանաւորութեամբ և Կիրակոս Երուսաղէմացիի տեսչութեամբ: Առաջին Տպարանը զետեղուած էր վանքին հիւսիս-արևելեան կողմը քանի մը սենեակներու մէջ, որ այժմ ուխտաւորաց յատկացուած են Հին Տպարանի բաղ անունով: Այդ սենեակներուն յարմարութիւնը նուազ էր և գործիքներն ալ հին ոճով էին. այսու հանդերձ բաւական թուով և կարևոր նիւթով հրատարակութիւններ ելած են անկէ: Թէև Տպարանի նոր շէնք մը չինելու գաղափարը կար, բայց Եսայի պատրիարք 1865ին մտադրութիւն կը դարձնէ ընդարձակ գետնի մը վրայ, որ կը գտնուի մեծ բակին հարաւակողմը, Էջմիածնի տաճարին հարաւային պատին դէմ, և որուն վերևը կը գտնուի ուխտաւորաց Թօքաթ և Պէքեար թաղերը: Այս ընդարձակ գետինը իր վերնայարկ թաղերուն հետ կառուցուած է 1675ին Ամենապցի եղիազար պատրիարքէն, իբր ախոռ ուխտաւորաց գրաստներուն: Այս գետնայարկը 34 մէթր երկայնութիւն և 22 մէթր լայնութիւն ունի, որ կու տայ 750 քառակուսի մէթր տարածութիւն: Նոյն տեղը կամարակապ է հաստակառոյց: Եսայի Տպարանը փոխադրած է այս տեղւոյն վրայ, մէկ մասը միայն գործածելով, իսկ միւս մասը քանի մը տարի յետոյ կցած է նորաշէն Տպարանին: Տպարանական չինութեանց ծախուց մասնակցած է կեսարացի Յակոբ Ա. չըգեան, ինչպէս կը հասկցուի յիշատակարանէ մը: Տպարանին հանդերձանքը հետզհետէ կատարելագործուած է, և կարող է տպագրել և հրատարակել կարևոր աշխատասիրութիւններ. ունի լաւ արագատիպ մը, թէև բազուկի ոյժով կը շարժի. ձեռքի մա-

մուլներ, վիմագրական մամուլներ. նաև ջրաչարժական մը, գըլանաձև մամուլ, կարիչ գործիքներ, կազմարարութեան և ձուլարանի գործիքներ, և հայերէն տառերու և հայկական խազերու 29 տնսակ մայրեր, զանազան մեծութեամբ տառեր, ոչ միայն հայերէն, այլ և եւրոպական աթուրթայով զարդագիրեր, չրջանակի և անկիւնի զարդեր: Ըստ այսմ Ս. Յակոբեանց Տպարանը սովորական տպարան մը ըլլալէ աւելի, ձուլարանով և կազմատունով ու վաճառանոցով լրացած՝ հրատարակչական հաստատութիւն մը կը դառնայ:

Միւսական գիրքերու ճիւղը կրնայ այդ Տպարանին իբր յատկանշական նկատուիլ. ոչ միայն ղի հեղինակաւոր հրատարակութեան կնիքը կը կրէ, այլ և այնպիսի ճիւղ մ'է որ սովորական հրատարակիչներու առևտրական ուղղութեան չհամապատասխաներ: Տպագրուած են գրեթէ բոլոր ծիսական գիրքերը, և անոնցմէ չատեր քանիցս տպագրուած են: Բացի ծիսական գիրքերէն, որ վանքին կողմէն կը հրատարակուին զոհողութեամբ, հրատարակուած են նաև մեծահատոր կարևոր գիրքեր, դասագիրքեր և վէպեր, ՍԻՈՆ ամսագիրը և նախնեաց գործերէն ոմանք: Ս. Յակոբեանց Տպարանը հարիւր տարուայ ընթացքին հրատարակած է չորս հարիւրէ աւելի գիրքեր երկու հարիւր տեսակներով: Աւելի մանրամասնութեանց համար դիմել Գեր. Տ. Մեսրոպ վրդ. Նշանեանի (այժմ եպս.) 1914ի Երուսաղէմայ Օրացոյցին մէջ իբր յաւելուած հրատարակած «Ակնարկ մը Երուսաղէմի սրբոց Յակոբեանց Տպարանին վրայ» խորագրով, հայկական տպագրութեան 400ամեակին առթիւ գրած յօդուածին:

Գ. Նորատեղ Մատենադարան.— Ս. Յակոբի վանքին հնօրեայ տպագրութեան աւելորդ օրինակները քանի մը տասնեակներով կը պահուին տանիքին վրայ Մայր տաճարին Ս. Համբարձման սեղանին մօտ կոկիկ և փոքրիկ չէնքի մը մէջ, որուն դրան վրայ դրուած արձանագրութենէն կը տեսնուի որ 1727ին Շղթայակիրը չինած է զայն Յովհաննէս Կոլոտ պատրիարքի բնակութեան համար. որ սակայն չէ կրցած գալ իր մահուան պատճառաւ: Այս մատենադարանը կրնանք իբր պահեստի չտեսնել: Տպագիրներ ու միւս մատենադարանը զետեղուած է Ս. Թէոդորոսի մօտերը, Տէլիրմէն և Տէմիր Թաղերու մէջտեղը,

Հնթուս թագաւորի անուամբ ծանօթ սենեակներուն մէջ, որ երկուք են եղեր, և միացուելով մէկի վերածուած են. և $8\frac{1}{2}$ ու $5\frac{1}{4}$ թևերով բաւական սրահ մը կը կազմեն, 44 քառակուսի մէթր տարածութեամբ: Այս մատենադարան սովորաբար ընդհանուր անունով ճանճցուած է, և բացուած է 1901ին: Գիրքերը յատուկ գրադարաններու և դարակներու և դարաններու մէջ զետեղուած են. հոն կը գտնուին նաև լրագրաց հաւաքածոներ: Կազմուած մանրահատոր եւ բազմահատոր գիրքերը հաչուելով 2000 թիւը կ'անցնի, չատ գիրքեր ալ կը մնան մատենադարանին սեղանին եւ այլ տեղերու մէջ, այնպէս որ մատենադարանի նոր չէնք մը ունենալու անհրաժեշտութիւնը զգալի էր:

1929 Հոկտ. 25–28ին մեծ չքեղութեամբ տօնուեցաւ Ս. Աթոռոյ հոգելոյս գահակալ Սմեն. Տ. Եղիշէ Դուրեան Ս. Պատրիարքին Ցիսնամեայ Քահանայութեան Յոբելեանը. այս նպատակաւ կազմուած Յոբելինական Կեդր. Յանձնաժողովը որոշեց որ վաստակաւոր Յոբելեարին յիշատակը Ս. Աթոռոյ մէջ յաւերժացնելու համար ընդհանուր հանգանակութեամբ մը վանքին մէջ Մատենադարան մը չինուի. եւ այս մտօք յայտարարութիւններ կատարուեցան, և ամեն կողմ հանգանակութեան մասնակցութիւնը կը չարունակուէր, փարիզէն Վսեմ. Գալուստ պէյ Կիւլպէնկեան 7000 ոսկւոյ յանձնառութեամբ սիրայօժար ստանձնեց վանքին մէջ նոր Մատենադարանի մը չինութեան կաթողիկոսական Պատուիրակ Գեր. Տ. Թորգոմ Սրբազանի միջոցաւ ի յիշատակ իր ծնողաց, և ի յարգանս Յոբելեար Սրբազանին: Այս իշխանական նուիրատուութիւնը սիրով ընդունուեցաւ Յոբելեար Սրբազանէն և կեդր. Յանձնաժողովոյ կողմէն, և միւս կողմէն որոշուեցաւ որ ժողովրդական հանգանակութեան արդիւնքով, Յոբելեարին փափաքին համաձայն կազմուի հիմնադրամ մը՝ որուն տակոսով պիտի հրատարակուին հայերէն կարևոր գիրքեր, թէ՛ նախնեաց գործերէն և թէ՛ նորերէն, Դուրեան Մատենադարան տիտղոսին տակ: Յոբելեար Սրբազանը յետոյ սակայն, ի կենդանութեան փափաք յայտնած էր և կեդր. Յանձնաժողովն ալ յարմար գտած էր որ հանգանակուած գումարը՝ 3554 անգղ. ոսկի և մէկ շիլին փոխանակ ունէ ղրամատան մէջ թողլով տոկոսն ստանալու, հասութաբեր կալուած մը չինել ու անոր վարձքովը հրատարակել Դուրեան Մատենադարանի գիրքեր: Ս. Յա-

կոթեանց Միաբանութիւնը Ս. Աթոռոյ Գահակալին Ցոթևեանին իր մասնակցութիւնը բերելու համար որոշմամբ Տնօրէն Ժողովոյ Մեծ–Արտի գետնէն բանուկ պողոտայի մը վրայ տրամադրեց գետին մը հանգանակուած վերոյիշեալ գումարով շինելու կալուած մը՝ արդիւնքը իր նպատակին յատկացուելու պայմանաւ։ Շինութեան հոգը ու հսկողութիւնը Ցանձնաժողովի մը յանձնուած է և այժմ սկսուած է շէնքը Դուրեանաշէն անունով։

Գալով Մատենադարանի շինութեան՝ անոր հիմնաւորիւիը տեղի ունեցաւ 1929 Հոկտ. 26ին, չաբաթ օրը, Թարգմանչաց տօնին, Ցոթևեան Սրբազանին նախագահութեամբ. ներկայութեամբ եպիսկոպոսաց, Միաբանութեան և ժողովրդեան։ Հիմնարկէքի օրհնութիւնն էր աս, այլ չորս անկիւններէն փորուած հիմերուն վրայ օրհնութիւն մը, Մատենադարանի շինութեան ծրագրին գործադրութեան իբր սկսուած։ Բուն հիմնարկութիւնը կատարուած է 28 Օգոստոս 1930 հինգշաբթի, Ցոթևեան Սրբազանին մահուանէն վերջ։ Պատրիարքական Տեղապահ Դեր. Տ. Մեսրոպ սրբազան կատարած է աւարտած հիմերու վրայ դրուելիք առաջին անկիւնաքարի օրհնութիւնը։ Պատշաճ կրօնական արարողութենէ մը վերջ Սրբազանը իր իսկ ձեռքով զետեղած է առաջին անկիւնաքարը, որուն մէջ յետ ընթերցման դրուեցաւ բիւրեղեայ ընդունարանով մագաղաթէ յիշատակարան մը։ Նորաշէն Մատենադարանը այժմ գրեթէ աւարտած է. ան չինուած է Տպարանին ու ժառ. Վարժարանի մէջտեղի պարտէզին մէջ. երկյարկանի հոյակապ շէնք մ'է. դուռը կը բացուի ժառ. Վարժարանէ ու Ս. Հրեշտակապետ երթալիք ճանապարհին վրայ. իր մօտը կը գտնուի միաբանաց Պաղչէ թաղը և նորաշէն Նախակրթարանը։ Ունի 18 մէթր ճակատ։ Շէնքին խորութիւնն է 25 մէթր։ Զեղչելով շէնքին ետևի երկու կողմերուն ներս քաշուած մասերը՝ ընդհանուր տարածութիւնն է 418 և կէս մէթր։

Շէնքը ունի երկու յարկեր և վերը թէռաս մը։

Գետնայարկին վրայ մուտքէն վերջ կը գտնուի մեծ ընթերցասրահը 100 քառակուսի մէթր տարածութեամբ։

Ըլլայ գետնայարկը, ըլլայ վերի յարկը՝ երկու կողմերը կ'երկարին գրադարաններու քօրիտօրները, իւրաքանչիւրը 48 քառ. մէթր տարածութեամբ։

Երկրորդ յարկը յաւելուածաբար ունի Մատենադարանի ճա-

կատի մաս մը 40 մէթր տարածութեամբ։ Մատենադարանը ունի նաև 50ական մէթրնոց երկու մեծ սենեակներ։ Իր փառաւոր մուտքէն զատ, սոյն մուտքին երկու կողմերը կան երկու սենեակներ։ Միւզէի մասը ունի, շէնքին գետնայարկին մէջ 70 քառ. մէթր տարածութեամբ սենեակ մը, և վերնայարկը ունի թէ նման տարածութեամբ սենեակ մը՝ 70 քառ. մէթր տարածութեամբ և թէ անոր կից յաւելուածական սենեակ մը՝ 24 քառ. մէթր տարածութեամբ։ Մատենադարանը ունի տանիքին վրայ տեփօյի սենեակ մը։ Երկրորդ յարկին մէջտեղի մասը բաց է, որպէս զի գետնայարկի ընթերցասրահի ձեղունը մինչև տանիք բարձրանայ։ Այս տանիքը ունի ապակեայ լուսամուտներ։

Մատենադարանի շէնքին բարձրութիւնն է, երկու յարկերուն համար 9 մէթր։ Եթէ այս բարձրութիւն հաշուուի տանիքի վրայի սենեակէն՝ կ'ըլլայ 13 մէթր։

Նպատակի յարմար հոյակապ և հանգստաւէտ շէնք մը եղած է նորաշէն Մատենադարանը, որուն ճակատը՝ դրսի կողմէն՝ զետեղուած է հետևեալ յիշատակարանը.

«Գաղտուս Կիւլպհիկեան կառոյց զՄատենադարան Առաքելական Սրբոյ Աթոռոյս, վասն անմոռաց յիշատակի հօր իւրոյ եւ մօր Սարգսի եւ Տիրուհւոյ Կիւլպհիկեան. ի մեծարանս Ցոթևլինի Ցիսնամեայ Թահանայութեան Տեառն Եղիշեայ Ս. Արքեպիսկոպոսի Դուրեան, Պատրիարքին Հայոց Սրբոյ Երուսաղէմի. ՌՑՀԹ=1929»։

Ի մօտոյ այս նորաշէն Մատենադարանը պիտի փոխադրուին Պատրիարքարանի մէջ մթերուած այն 5000ի մօտ այլ և այլ ձիւղերու վերաբերեալ հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն և գերմաներէն արժէքաւոր գիրքերը որոնց մէկ մասը հոգելոյս պատրիարքը իրր իր անձնական գիրքերը Պոլսէն Երուսաղէմ Ս. Ցարքը իրր իր անձնական գիրքերը Պոլսէն Երուսաղէմ Ս. Ցոթևեանց փոխադրած էր, և միւս մասն ալ իր միջոցաւն ու խնամքովը իր պատրիարքութեան շրջանին մօտը հաւաքած էր։

Գ. ժառ. վարժարան. — Նորահաս աշակերտներու պատրաստութիւնը երբեք պակաս չէ կրցած ըլլալ Ս. Աթոռին մէջ, թէպէտև վարժարանի յատկացեալ մասնաւոր շինութեան մը հին յիշատակը չենք գտներ աւանդութեանց մէջ։ Այդ պակասը կը վերագրենք հին ատիններ սովորական եղող ձևին, երբ կըրթութիւնը ոչ թէ դասարանական համախումբ ձևի ներքեւ կը

տրուէը, այլ ընծայեալներ և ընծայացուներ առ nsu այս կամ այն վարդապետի մը կը մնային փոքրաւորի դերին մէջ, նկեղեցական սպասարկութեանց կը վարժուէին, և կարևորագոյն սեպուած ուսմունքներու կը հետեւէին: Վերջին ԺԹ. դարու առաջին քառորդին մէջ կ'սկսին Ժառ. Վարժարան կազմելու կամ հիմնելու մտադրութիւնները. եւ իբր նախաձեռնարկներ պիտի յիշուին Պօղոս Ադրիանուպոլսեցի կառավարիչը եւ Զաքարիա Կոփեցի ու Կիրակոս Երուսաղեմացի պատրիարքները: Զաքարիա առինչն աւելի գործին հետամուտ եղած է, Կ. Պոլիս եւ Վենետիկ տեսածներուն ազդեցութեամբ. ուստի իր պատրիարքութեան երկրորդ տարւոյն մէջ 1843ին առաջին վարժարանը բացած է Ռէմլէի վանքին մէջ, զոր տարիուկէս նաքը, 1845ին փոխադրած է Երուսաղէմի մէջ մասնաւոր տուն մը: Կիրակոս որ 1847ին յաջորդեց, վարժարանին աւելի զարկ տալու համար փոխադրած է վանքին մէջ, նոյն այն սրահը զոր Շղթայակիր չինած էր Կոլոտին համար: Այս տեղը բաւարար չէր կրնար ըսուիլ, ուստի Կիրակոս ուզեց յատուկ շէնք մը կառուցանել, բայց չյաջողեցաւ: Յովհաննէս պատրիարք, պատրիարքարանի շէնքը աւարտելէ յետոյ, չինեց նաեւ Զամ Թաղը (այդ անունը կ'առնու մօտի մայրի ծառերէն) զոր հիմնած էր Կիրակոս, իբրև ուխտաւորաց թաղ: Յովհաննէս չուտով ձեռնարկեց վարժարան մ'ալ չինել, որ է այժմեան Ճեմարանը. և որ լրացաւ 1857ին, սակայն զանազան պարագաներ և իր վերահաս մահը 1860ին եւ Սիմոոյ պարապութիւնը մինչեւ 1865, չներեցին վարժարանի գործը կարգադրել և նոյն պատրիարքի մնաց հին նպատակը գլուխ հանել: Վարժարանը բացաւ Ճեմարանին մէջ, Զամ Թաղն ալ անոր յարակցելով, գիշերօթիկ վարժարանի մը պէտք եղած բաժինները լրացնելով:

Ժառ. Վարժարանը կը գտնուի նորաչէն Մատենադարանին ալ կողմը, պարտէզներով չրջապատուած, օդասուն և գեղեցիկ վայր մը: Վարժարանի շէնքը կանոնաւոր քառանկիւն մը կը կազմէ. 51 մէթր երկայն և 29 լայն թեւերով, որ կու տայ 1480 քառակուսի մէթր տարածութիւն: Շէնքը երկյարկանի է և մէջտեղը բաց: Գետնայարկին վրայ դէմ դիմաց իննական չափաւոր սենեակներ կան, արևելեան և արևմտեան թեւերուն վրայ. այդ սենեակները այժմ յատկացուած են Ընծայարանի աշակերտ-

սարկաւագներուն: Վարժարանը ունի հանդերձատուն, խոհանոց և լուացարան. վերի յարկը կը գտնուի տեսչարանը, աշակերտաց ննջարանները եւ մէկ երկու ուսուցչաց սենեակները, կրկին գրադարանները կայն: Ճեմարան ըսուած չէնքը արտաքնապէս ունի գեղեցիկ ճարտարապետութիւն մը, ընդարձակ սրահը սերտարանի վերածուած է, չորս սենեակներէն երեքը՝ դասարանի, իսկ մէկը՝ բնագիտական գործիքներու պահարանի: Շէնքը դուրսէն 21 մէթր թեւերով և 240 քառակուսի մէթր տարածութեամբ կանոնաւոր քառակուսի մ'է, վայելուչ ճակատ մը ունի: Ներքինը խաչաձև է, կեդրոնը գմբէթայարկ է, վայելուչ և բարձր, որուն գագաթը գոնէ 15 մէթր բարձր ըլլալու է յատակէն վեր: Պատերուն ներսերը դարաններ գործուած են, 8 հատ մեծ հիւսիսէ հարաւ թեւերուն մէջ. և 4 փոքր միայն միւս թեւերուն վրայ: Բոլոր դարանները լեցուած են հնագիտական, պատմական, ազգաբանական եւայլն եւայլն և ուրիշ հետաքրքրական առարկաներով, որոնք ապագային պիտի կրնան կազմել Ս. Յակոբեանց վանքին թանգարանին կորիզը: Ճեմարանի չինուածքին ներքնայարկը երբեմն ծառայած է քաղաքացի մանչերու իբր վարժարան Մեսրոպեան անուամբ, երբեմն ալ, իբր գծագրութեան դասարան:

Ժառ. Վարժարանը կը պահէ առ առաւելն 30 աշակերտներով երեք դասարան՝ որ կ'ստանան կրօնական ուսումն, գիտութիւն, կը սորվին կարևոր լեզուները, և որոշ ծրագրով մը կը պատրաստուին Ընծայարան մտնել: Ժառ. Վարժարանի և Ընծայարանի երկու դասարանները կը կոչուին Մելխոնեան Դասարան, Սզգ. բարերար Մելքոնեան բարեպաշտ հարազատներուն՝ յանուն Ժառ. Վարժարանի վերհանձնօրէն յատկացուցած նպաստին պատճառաւ: Ընծայարանի դասարանները կը հետեւին յատկապէս պատրաստուած ծրագրի մը, ստանալով կրօնական բարձր ուսում, եւ չարունակելով ուսումը այն կարևոր լեզուներու զոր կ'ուսանէին Ժառ. Վարժարանին մէջ: Ընծայարանի ընթացքը բոլորելէ յետոյ ընծայացուք կը կոչուին կուսակրօն եկեղեցականութեան և ի ծառայութիւն Ս. Սիմոոյ: Ընծայարանը ունէր նաև դասարան մը ուր սարկաւագներով՝ որ կը կոչուէին Կիւպհինկեան սաներ, որոնք անցեալ տարի իրենց չրջանը

դասարանին հինգ տարուան ծախքը՝ 5000 ոսկի, վեհանձն ու սիրայօժար նուիրատուութեամբ հոգաց ողբացեալ Տիար Պատրիկ Կիւլպէնկեան, Ազգ. բարերարը, որուն Հայ Եկեղեցիին ու ազգին հանդէպ ունեցած սէրն ու հայրենանուէրը զգացումներն ամենուն յայտնի են։

Ե. Նորաշէն Նախակրթարան.— Նախակրթարանի ու Մանկապարտէզի սաներն են քաղաքացւոց և Ս. Ցակոբեանց վանքին մէջ բնակողներուն պզտիկներն. առաջիններն անոնք են որ հինէն ի վեր ձրիաբար կը բնակին այն տուներուն մէջ որ իրենց յատկացուած են, իսկ վերջինները տարագրութեան առթիւ երուսաղէմ մնալով կը պատսպարուին Ս. Ցակոբեանց մօտի ուխտաւորական թաղերը։ Վանքը կու տայ ձրի կրթութիւն, ինքը կը հոգայ վարժարանի բոլոր ծախքերը և որոշ ծրագրով մը այժ կու տայ կրօնի ուսման, հայերէն լեզուի, անգլիերէնի, գծագրութեան, ձեռագործի եւայլն։ Շնորհիւ վանքին կողմէն տրուած նախակրթութեան աշակերտները կը պահեն հայերէն լեզուն և հայերէն կրնան խօսիլ իրենց տուներուն մէջ, վասն զի քաղաքը արաբախօս ըլլալով՝ նոյնպէս քաղաքացի հայ ընտանիքներն ալ սովորաբար արաբերէն կը խօսին, բայց պէտք է գիտնալ թէ շնորհիւ նախակրթարանի հայերէնն ալ սորված են ու կրնան խօսիլ։

Մանչերու Մեսրոպեան հին դպրոցի մասին վերև ծանօթութիւն մը տուինք. կը մնայ այժմ նկարագրել աղջիկներու հին նախակրթարանը որ կը կոչուէր Գայիանեան, եւ յարակից ունէր մանկապարտէզ մը։ Գայիանեան դպրոցը Ս. Հրեշտակապետ տանող ճանապարհին վրայ, պաղչէ թաղին մօտ ինքնուրոյն շինուածք մ'էր որ կառուցուած էր 1862ին Նոր Նախիջեւանցի Շուլտովեանց կարապետի ծախքով։

1927ի Պաղեստինի ահռելի երկրաշարժը մեծ վնասներ պատճառեց, ինչպէս քաղաքին և շրջակայից, նոյնպէս մեր Ս. Ցակոբեանց, Բեթղեհէմի, Ռէմլէի վանքերուն, կալուածներուն եւ այլ հաստատութեանց. այդ վնասուած շէնքերէն մին էր աղջկանց նախակրթարանը իր մանկապարտէզով, որ վտանգաւոր կերպով խարխլած էր եւ կարելի չէր աշակերտուհիներուն ու մանկապարտէզի փոքրիկներուն յաճախել, եւ անոնց համար

յատկացուեցաւ առժամանակեայ շէնք մը, ժառ. Վարժարանի մէկ քանի սենեակներուն մէջ։

Տնօրէն ժողովը նախագահութեամբ Ս. Պատրիարքին, նկատի առնելով արդէն անբաւական ու վտանգաւոր կերպով խարխլած աղջկանց վարժարանին վիճակը, անոր փոխարէն երկսեռ նախակրթարանի մը և մանկապարտէզի մը պէտքը չեշտելով որոշեց նոյն տեղւոյն վրայ և վանքին սեպհական յարակից սենեակներն ալ միացնելով նոր նախակրթարան մը կառուցանել արդիական պայմաններով։ Ըստ այսմ կառավարութեան նոր օրէնքին համաձայն ճարտարապետին կողմէն յատակագիծ մը պատրաստուելով Պատրիարքարանի կողմէն մատուցուեցաւ կառավարութեան՝ կրթական և Առողջապահական վարչութեանց և Քաղաքապետութեան կողմէն վաւերացուելու համար։ Նախակրթարանը պիտի չինուէր 37 մէթր երկար և 9 մէթր լայն գետնի մը վրայ, պիտի ըլլար եռայարկ և պիտի պարունակէր 250–300 աշակերտներ։ Շինութեան հրամանը տրուեցաւ պատկան իշխանութեան կողմէն և հիմերը սկսան փորուիլ. ժայռը և կոյս հողը գտնելու համար արտաքոյ կարգի աշխատանքի և ծախքի դուռ բացուեցաւ և չատ ժամանակ վատնուեցաւ, որովհետեւ հարկ եղաւ սպասել որ ներքին հիմերը դրուէին և բարձրանային հողէն դուրս, պաշտօնական հիմնարկէք կատարելու համար։ Հիմերը բաղձացուած բարձրութեան հասած ըլլալով 1928 Ապրիլ 26, ԵԵ. երեկոյ ժամ 5ին կատարուեցաւ Աղջային Երկսեռ Նախակրթարանի եւ Մանկապարտէզի հիմնարկէքի արարողութիւնը նախագահութեամբ Ս. Պատրիարքին։ Հիմքին արեւելեան հիւսիսային անկիւնը կատարուեցաւ հիմնաքարը. և փորուած անկիւնաքարին մէջ դրուեցաւ յիշատակարան մը, զոր չաղախով լեցուցին Ս. Պատրիարքը և եպիսկոպոսները։ Երկու տարիէն լրացաւ շէնքը. թէեւ բազմածախս՝ բայց ան եղաւ չէնք մը բարձրադիր, հոյակապ, օգաւոր, առողջապահիկ եւ պետական օրինաց եւ գիտութեան պահանջներուն համաձայն։ Շէնքին հիմերը և պատերը շինուած են պերճուով և երկաթի կապերով հաստատուած են. ամբողջ ճակատը յղկուած քարերով հիւսուած է։ Նախակրթարանին մուտքը բացուած է Ս. Հրեշտակապետ տանող ճանապարհին վրայ կողմնակի երկու քարէ սանդուխներով։ Նախակրթարանը ունի երեք յարկ, ամենէն վերինը յատկացուած է ձեռագործի համար։ Նախակրթա-

բանի և Մանկապարտէզի բոլոր բաժանումներն ունին իրենց սրահներն ու դասարանները. ատորին յարկին մէջ կը գտնուին խաղավայրը և ճաշարանը։ Նախակրթարան ու Մանկապարտէզ այժմ կը յաճախեն իբր 400 աշակերտներ։

Ի Դ

ԳՈՂԳՈԹԱՅԻ ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՄ ՄԱՏՈՒՌԸ

Երկու հնագոյն տպբիւրներու, 1192 ի Մայիսեան վանքին մէջ ընդօրինակուած Ճաշոցի մը և Դ. դարու ուղեգիրը օտար Ուխտաւորուհիի մը Օրագրութեան վրայ յենլով, ասկից յառաջ ներկայացուցած ենք Երուսաղէմի Համբարձման լերան Աշակերտաranի և Բիւրի եկեղեցիներուն մէջ կատարուած կրօնական պաշտամունքի ժողովները, և յետոյ նկարագրած ենք այդ երկու եկեղեցիներուն պատմական ծագումը և զանազան փոփոխութիւնները։ Այս անգամ ալ կը փափաքինք մեր ընթերցողներուն ծանօթացնել, գարձեալ նոյն երկու յիշատակարանաց վրայ յենլով, Գողգոթայի մեծ եկեղեցին մէջ կատարուած առաջին պաշտամունքի ժողովները և յետոյ բացատրել այդ մեծ եկեղեցին կամ մատուռին հիմնարկութիւնը և ժամանակի ընթացքին անոր կրած պատմական փոփոխութիւնները։

Նոյն եկեղեցին կամ մատրան մէջ կատարուած երկու աղբիւրներու յիշած պաշտամունքի ժողովներու յիշատակութեան ցուցակը հոս կը դնենք, զանց ընելով օրուան ընթերցուածներուն մանրամասնութիւնները.

(Ըստ Ճաշոցի).— Հինգշաբթի առաւօտ (Ծննդեան) ժողովէն է առաջ Գողգոթա և այս կանոն կատարէ . . . ։

— Երկուշաբթի առ է Զատիկն պահոցի ժողովէն է առաջ մատրան է տալուէն է պատարագը ժամու և այս կանոն կատարէ . . . ։

— Զորեքշաբթի առ է պատարագը ժամու ժողովէն է առաջ մատրան է տալուէն և այս կանոն կատարէ . . . ։

— Ի Հինգշաբթի առ է հին Զատիկն վասն որոյ առաջ Ցնծասց ցաշաներան իւր ցանկութեամբ ցանկացայ զԶատիկս ըստ ոտից ընդ յեր և ժողովէն յեօթներորդ ժամէ է առաջ մատրան է տալուէն եւ այս կանոն կատարէ . . . ։

— Ի ընթրհանգստեան նորին. աբդակին երեխայն և յեօթ աբդական երեխայիցն և այս կանոն կատարէ . . . ։ — Եւ ապա պատարագ մատչի է առաջ մատրանն և առաջէ Սբբոյ Խաչին և նոյն ժամայն երթան է առաջն Սիոն և այս կանոն կատարէ . . . ։

— Այգուան Ուրբաթուան գնէ պատարագի գայք խաչին առաջէ սբբոյ Գողգոթային և ժողովէնայն երկրպագեն, գնալ է վէց ժամ կատարէ երկերորդ պատարագին և է վեցերորդ ժամն ժողովէն է առաջն Գողգոթա և ասէն . . . ։

— Իսկոյն մտանէն է առաջ մատուռն է պատնէրորդ ժամու և այս կանոն կատարէ . . . ։

— Եւ գնէլեա Օրհնութենան առ ղնէ բերէրուան, մտանէն քաղմուածքին նորակնէցան և այս կանոն կատարէ . . . ։ — Եւ անկնէն պատարագ ընէն նորակնէցան և այս կանոն կատարէ . . . ։ — Եւ անկնէն պատարագ ընէն նորակնէցան և յեօ անդէ աբդակնէցայ է նորն ժամու երեքերոյն է առաջ Յատարացանէն

— Յերէյրդոճ առաջ *(Նաւակատիք Ս. Տէղեաց, Սկսա. 14)* ժողովէն է առաջ մարդան և դայն կանոն կապարի . . . :

(Ըստ Օրագրութեան Էթէրիա ուխտաւորուհիին).

— Ս. Յարութեան պաշտօնէն կ'երթան դէպ ի Golgotha որ կը կոչուի Մաքսոս. որ և կը գտնուի Գողգոթայի վրայ և խաչն ալ հոն կորսուած: ԵՒ հոն ըստ սովորութեան ամէն կիրակի կը կատարուի ապրէտ և պաշտամունք:

— Առաջ շաբթուան երբ ըստ սովորութեան պաշտամունք պիտի կ'ունենան, նայ հաստիօսին դնելէ առաջօտ, ժողովուրդը կը խռնուի Ս. Յարութեան վրայ և Ս. խաչին առջև. այս կիրակի առաջօտան ըստ կանոնի կ'երթան դէպ ի Golgotha որ կը կոչուի մաքսոս. այսպէս կը կոչուի այն պատճառաս որ մաքսոսը Գողգոթայի վրայ կը գտնուի և խաչին մէկ կողմը, ուր որ Տէրը չարչարուեցաւ:

— Ժամը իննին կը հաստիօսին դէպ եկեղեցին՝ որ է մաքսոսը, ուր շարունակաբար կ'երգեն սաղմոսներ և երգել, մինչև գիշերուան ժամը մէկին, կը կարդան օրուան ընթերցուածները ապրէտներու ընդմէջնեներով: Երբ ժամանակը կը մօտենայ կը կարդան Օրհնութեան ծրագրոյը. արշալոյսն ժամանակ բուլորվին գիշեր կ'ըլլայ, երբ ժողովուրդը մաքսոսին կը մնին և եպիսկոպոսն ալ կ'երթայ Ս. Յարութեան մէնդան հանդիսով:

— Առաջ երկուշաբթի և Առաջ երեքշաբթի օրերն ալ կ'երթան մաքսոսը ու կ'աղօթեն:

— Առաջ հինգշաբթի օրը ժամը ութին ժողովուրդը Ս. Յարութեան ժամերգութենէն յետոյ ըստ սովորութեան կը հաստատի մաքսոսը, սովորականէն աւելի կանոն. վասն զի արշալոյսը աւելի կանոն պիտի կ'ունենայ. այդ օրը պատրաստ կը մաքսոցանեն մաքսան մէջ, ժամը տասնին ժողովուրդը կ'արշաւի: Մաքսոսին արշալուսնելին յետոյ կոչան խաչին առջև և ուր եպիսկոպոսը կը պատրաստէ և ամէնէն ալ կը հաղորդուին: Տարուան մէջ խաչին առջև երբեք չեն պատրաստեր, բայց միայն այս օրը: Արշալոյսին յետոյ Ս. Յարութեան կ'երթան և կ'աղօթեն, ըստ սովորութեան երեսանները և հաստատուելները կ'օրհնուին և յետոյ կ'արշաւին:

— Առաջ ուրբաթ երեկոյեան՝ խաչին երկրպագութենէն յետոյ ամէնէն ալ կ'երթան դէպ եկեղեցին ուր է մաքսոսը. ուր, ըստ կանոնի, այս շաբթուան մինչև վերջը կը ծառ ու կ'աղօթեն: Արշալոյսին յետոյ Ս. Յարութեան կ'երթան ու կը կարդան ա՛յն աւետարանը ուրան մէջ Յովհէփ Պիղատոսին կը թաղէ Տէրոջը մարմինը՝ լուսցնելու համար: Այս ընթերցուածն յետոյ Երեսանները կ'օրհնուին և կ'արշաւին:

— Ինչպես Ասորեստանեայց ուսի ուրբաթին, նոյնպես Զատկի ուրբաթին կը հաստատին գիշեր եկեղեցին ուր է մաքսոսը, Ս. Յարութեան, խաչին առջև. Համբարձման, Բնդունելեան և Վաղարշեան, վասն զի ուրբաթը պատկան օրեր են. առաջին կիրակին կը հաստատին գիշեր եկեղեցին՝ ուր է մաքսոսը:

— Զատկին Պենտեկոստէի կիրակի օրերը Ս. Յարութեան երկուշ առաջ ժամը վեցին ըստ կանոնի ընթերցուածը կը կարդացուին գիշեր եկեղեցին, այսինքն մաքսան մէջ, և յետոյ է ուր երգելով կ'երթան Ս. Յարութեան եկեղեցին:

— Հոգեգալստեան առաւօտան ըստ կանոնի կը հաստատին մաքսոսը. կը տարուին տեղացիները, և յետոյ եպիսկոպոսը. երբ ամէն ինչ պատրաստ է, պատրաստ կը մաքսոցանեն. և երբորդ ժամին առաջ արշալոյսը պիտի կ'ունենայ:

— Պենտեկոստէին գիշերը ժողովուրդը եպիսկոպոսին և կղերին հետ Զիոնեանց լեռը կ'երթան ջուններով և կանթեղներով և հոն կ'աղօթեն. յետոյ հետ գիշերուն ընթերցուածները, տալոյին պատրաստուելը կը բացուին և առաջնակի կ'երթան մաքսոսը եպիսկոպոսին հետ. հոն կ'երգեն ու կ'աղօթեն, երանութիւնները և հաստատուելները կ'օրհնուին և յետոյ կ'երթան Ս. Յարութիւն դիւնդան ընթերցուածով:

— Երբ Քառասնորդական պահէն կ'սկսի, տեղացիները մկրտուելու պատրաստուողներուն անունները կ'արձանագրեն հեղինակ կերպով. Քառասնորդաց մէջ առաջ կիրակի օրուան մօտ, երբ ուրբ շաբաթները կ'սկսին հետ եկեղեցին՝ մաքսոսին՝ ծէզը մէջտեղը պիտ կը դրուի եպիսկոպոսին համար և տեղացիները ալ անոր երկու կողմերը կը նստին պիտ վրայ. և կղերիկոսները կը ծառ ոտի վրայ: Երեքշաբթը յառաջ կոչան ու առ ու, ապ և ները կը ծառ ոտի վրայ: Երեքշաբթը յառաջ կոչան ու առ ու, ապ և կանայք կարգաս կը նկրկայանան ու եպիսկոպոսը մկրտուելու պատրաստուողները իր յետով կ'արձանագրէ:

— Քառասնորդաց օրերուն՝ երեքշաբթ մկրտուելու կանոնը հետևեալն է. կղերականները երեքշաբթ վրայ կը կարդացուին երդեցողութիւնն ապրտոնքը. Ս. Յարութեան պատրան պիտ կ'սկսի, անկէ առաջ եպիսկոպոսին ետքը կողմը կը նստին մկրտուելու վերջ. և եպ. կ'սկսի տալոյին ընդ

— Եկեղեցեաց նահապետն ոչինչ ըսի հանդիսաւորութեամբ կը կատարէ այս մարդան մէջ։

Մեր ձաշոցին վերոգրեալ տողերէն, ինչպէս նաև Դ. դարու Էթէրիա կոյսի ուղեգրական այս մանրամասն ծանօթութիւններէն որոշ կը հասկցուի թէ Գողգոթայէն տարբեր և զատ հիմնարկութիւն մըն էր այս Դեր Եկեղեցին կամ մատուռը, ուր տեղի կ'ունենային տարւոյն որոշ օրերուն մէջ վերոյիշեալ պաշտամունքներն ու արարողութիւնները։

Մեր Ջեռագիր ձաշոցներուն մէջ յիշատակուած մատուռ բառը Ուխտաւորուհին յատկապէս կ'անուանէ Դեր Եկեղեցի։ Տեղագրական այս նիւթերով հետաքրքրուողները չատ անգամ չեն կրնար ըմբռնել թէ ո՛ւր կը գտնուի այս մատուռ ըսուածը և ի՛նչ յիշատակներու յատկացուած է։ Պիտի ջանանք մեր այս տողերով բացատրել այս պարագան և յետոյ նկարագրել նոյն եկեղեցիին պատմականը։ Մեր բացատրութիւնները տալէ յառաջ կարևոր կը համարինք տեղագրական ճշդում մը ընել։

Մեր ձաշոցի վերի տողերուն մէջ Հոդվէն է ասոր մատրան է փաղփէն բառերը, թէև քիչ մը տարտամօրէն պարզուած, կը նշանակեն թէ տարւոյն որոշ օրերուն մէջ հաւատացեալք կը հաւաքուին Երուսաղէմացի ժողովրդեան յատուկ Դեր Եկեղեցին, այսինքն մատրան մէջ. այդ եկեղեցին էր քաղաքացւոց մատուռը, ուր կիրակի օրերը մանաւանդ պաշտամունք կը կատարուէր, քարոզ կը խօսուէր և Ս. Պատարագ կը մատուցուէր. ի մի բան, կը կատարուէին այն ամէն արարողութիւնները, զորս Ս. Կիւրեղ Երուսաղէմացին իր ԻԱ. ճառախօսական դասերուն մէջ կը պարզէ։ Աւագ շաբաթի գիշերային բոլոր հանդիսները հո՛ն կը կատարուէին։ Այս իրողութիւնները ըստ բաւականի ցոյց կու տան թէ մատուռ ըսուածը սաղիմական ժողովրդապետութեան կրօնական կեանքի կեդրոնն էր։ Ահա այս է պատճառը որ Ջեռագիր ձաշոցը կ'ըսէ Հոդվէն է ասոր մատրան է փաղփէն։

Այս մեծ եկեղեցին կամ մատուռը Գողգոթային ճիշդ ետևի կողմը (post crucem) կը գտնուէր. և Էթէրիայի համաձայն, մեծ կը կոչուէր այն պատճառաւ որ մերձակայ չէնքերէն աւելի մեծ էր։ Բուն Գողգոթան ժայռի կտոր մըն էր, որուն վրայ Յիսուս խաչուեցաւ. այդ ժայռին վրայ հաստատուած էր պատուական քա-

րերով զարդարուած արգաւիր խոշոր խաչ մը, որ միշտ կը մնար հոն. հաւատացեալները և ուխտաւորները հոն կը կատարէին իրենց ուխտը. և երբեմն Խաչին առջև (ante crucem) տեղի կ'ունենային հոյակապ տօնական հանդիսութիւնները, որոշ օրերու մէջ, ինչպէս որ տեսանք վերև։ Գողգոթան տանիք չունէր. բացօթեայ էր. երկու կողմը միայն կային կամարակապ սրահներ, և ժողովուրդը պաշտամունքի ժամանակ կը կենար այն տեղը և վերջնոյս անբաւականութեան պարագային՝ քովի հրապարակը կը տեղաւորուէր։ Ինչպէս մեր ձաշոցը, նոյնպէս Ուխտաւորուհին՝ մատուռ անունը կու տան Գողգոթայի ետևը չինուած եկեղեցիին։ Այս մատուռը ունէր երկու դուռներ, որ թոյլ կու տային ժողովուրդին արարողութեան ժամանակ անարգել կատարելու իր երթևեկը. տեղի անձկութեան պատճառաւ հաւատացեալները կը խնդրէին հարաւի կողմէն մատրան կից կողմնակի սրահներուն մէջ. մինչ կղերը կրնար մնալ մատրան մէջ։ Մատրան մասնակի երկու արարողութիւններն էին Աւագ հինգշաբթի երեկոյեան պատարագը և Աւագ ուրբաթ առաւօտեան խաչի երկրպագութիւնը։ Խաչէն զատ հաւատացեալներու յարգանքին համար ի տես կը դրուէին խաչի արձանագրութեան տախտակը, Իսրայէլի թագաւորաց օծման եղջիւրը և Սողոմոնի կնիքը, ինչպէս կը կարդանք Էթէրիայի Օրագրութեան մէջ։

Սակայն Եւսեբիոս մատուռ անունը կը գործածէ Քրիստոսի Գերեզմանին վրայ կառուցուած բուն իսկ Ս. Յարութեան տաճարին համար, յենլով ա՛յն պատճառին թէ գերեզմանի մը վրայ հիմնուած նուիրական չէնքը պէտք է կոչել մատուռ կամ վկայարան։ Բայց այս մասին Եւսեբիոսի հատուածը չատ վճիտ չէ. միևնոյնը կը հասկցնեն Աթանաս և Յերոնիմոս, ինչպէս նաև Կիւրեղ Երուսաղէմացին՝ յենլով Սոփռնիայի մարգարէութեան վրայ (Գ. 8)։ Բայց Էթէրիայի հետ կը միանայ Սոզոմենոս և կ'ըսէ թէ «մեծ մատուռն է այն տաճարը, որ չինուած է Երուսաղէմի մէջ, Գողգոթայի վրայ»։

Զորրորդ դարու վախճանին սակայն, ամէն ինչ յստակ է։ Կ'որոշուին երկու տաճարները, «Ս. Եկեղեցին, որ Գողգոթայի վրայ չինուած է և զոր կը կոչեն մատուռ», և «այն Ս. Եկեղեցին՝ որ է Անաստասիս», այսինքն «ա՛յն տեղը ուր մեր Տէրը իր յարութեան՝ որ է Անաստասիս» և «ասոնք այն երկու չարչարանքներէն յետոյ յարեաւ ի մեռելոց». ասոնք

եկեղեցիներն են որ մինչեւոյն օրը սրբագործուած են, ըստ ուղեգիր Ուխտաւորուհիին:

Գողգոթայի բլուրը իբր եկեղեցի չէր նկատուած. վասն զի ան գրաւած էր մեծ անդաստակին մէկ անկիւնը, գուցէ Ներքող Կոստանդիանոսի անուն գրուածքին մէջ երեւնայ յիշատակարանները երկուութիւն մը, անո՛ր համար որ Եւսեբիոս կը խօսի Փրկչին մատրան նուիրուած աղօթքի «աղօթքի տան», այսինքն «անկորնչելի յիշատակարանով մը զեղուն գերեզմանին», և Փրկչին Նշանին նուիրուած տաճարին, նոյն իսկ մահուան վրայ Փրկչին տարած յաղթանշանի (trophée) մասին: Ընդհանուր գրուածքին մէջ Նշան և Քրիստոսի յաղթանշան բառերը կը նշանակեն խաչը և հաւանաբար չարչարանաց ուրիշ գործիքներն, ինչպէս բեւեռները, որ կը յիշատակուին Ամբրոսիոսի օրհրէն: Ուրեմն ներելի է եզրակացնել թէ սկիզբէն խիստ բնական բաժանում մը կատարուած էր կոստանդիանոսեան շինուածքներուն մէջ, այնպէս որ կարելի կ'ըլլար զատ զատ հաստատութիւնները նկատել Քրիստոսի Յարութեան և Անոր Չարչարանաց սրբավայրերը: Չորրորդ դարու վախճանին՝ Մատթ. ըսելով կը հասկցուէր չարչարանաց եւ մարտիրոսութեան նշանակութիւնը. վասն զի այս անունը կը տրուէր Գողգոթայի եկեղեցիին. մինչ Ս. Յարեզմանին բոլորաշէնը (rotonde) կը պահէր միայն Anastasisի տիտղոսը: Ուխտաւորուհին իր Օրագրութեան մէջ մատրան յիշատակութեան առթիւ ըստ կարգ, կ'աւելցնէ հետեւեալ բացատրութիւնը, որ շինուեցաւ Կոստանդիանոս կայսրէն: Ք. դարէն վերջ հիմնադրին այս յիշատակը այնպէս մը կ'ամրանայ որ մատուռին տիտղոսը կ'անկայսրանայ Մայր Եկեղեցի Կոստանդիանոսի, Ս. Կոստանդիանոս Եկեղեցի անուններուն պատճառաւ: Ան կը կոչուի միեւնոյն ժամանակ Գլուխ Եկեղեցի: Ժամանակակից ուղեգիր ուխտաւոր մը կը գրէ. «Դուք կը մտնէք ա՛յն եկեղեցին, ուր գտնուեցան երեք խաչերը որ հոն թաղուած էին»:

Հեղինակներ և ուղեգիրներ կ'ըսեն թէ մատրան մէջ զետեղուած էին խաչը, ինչպէս նաև Չարչարանաց միւս գործիքները՝ որ Ե. եւ Ք. դարերուն աւելցան միակ նուիրական մասունքին քով: Հաւանական չի թուիր որ ճշմարիտ խաչին մասունքը խաչն եղէ գահլիճին (exèdre) մէջ սովորական եղանակաւ մը պահուած ըլլայ: Այս եկեղեցիին մէջ Աւագ ուրբաթ օրը

կատարուած խաչի երկրպագութեան առթիւ կը բերուէր մասնատուփը (reliquaire), ուր կը գտնուէր կեանց փայտը: Ուրեմն ան ուրիշ տեղ մը կը պահուէր, ինչպէս նաեւ խաչին արձանագրութեան տախտակը: Իսկապէս ան կը պահուէր կոստանդինեան մայր եկեղեցիին, այսինքն մատրան անդաստակին աւանդատան մէջ: Հին յուշագրութիւն մը (Տե՛ս Brévarius) կ'ըսէ թէ «այս եկեղեցիին դրան ձախ կողմը կը գտնուէր ա՛յն աւանդատունը, ուր պահուած էր մեր Փրկչին խաչը»: Կ'երեւի թէ աւանդատունը Սողոմոնի կնիքը, Դաւթի օձանը մօտ էր մատրան գաւիթին: Սողոմոնի կնիքը, Դաւթի օձանման եղջիւրը, սկուտեղը, որուն վրայ դրուեցաւ Յովհաննէս Մկրտչի գլուխը՝ կը տեսնուէին Գողգոթայի մէջ, հաւանաբար խաչին ետեւը (post crucem): Բայց մատրան մի ուրիշ աւանդատան մէջ էր որ ուխտաւորները կը յարգէին եղեգը, սպունգը, եղնգնաքար բաժակը, զոր Յիսուս զործածեց վերջին ընթրեաց ժամանակ, եւ շատ մը ուրիշ մասունքներ: Ի մխիթարութիւն ուխտաւորաց կը խմցնէին պահուած սպունգէն քամուած ջուրը: Ս. Յերեզմանին երկրորդ ժամանակաշրջանին ճչգրիտ տեղեկութիւնները կը թոյլատրեն մեզ այս աւանդատունը դնել նոյն Բաթիւններէն կը թոյլատրեն մեզ այս աւանդատունը դնել նոյն Բասիլիքայի վերնայարկը: Մատրան մինչև հարաւային արեւելեան անկիւնը նուիրուած էր Յիսուս Քրիստոսի մասունքներուն. հիւսիսային արեւելքը ընծայուած էր Ս. Կուսին: Հոն կը պահուէին իրեն վերաբերեալ գօտին և վարսակալը: Վերնայարկին մէջ Չարչարանաց գործիքները աւանդատան մէջ կախուած ժամանակ Ս. Աստուածածնի մեծ նկարը կը ցուցադրուէր հոն ա՛յնպիսի կերպով մը որ արեւելեան անդաստակը մտնող հաւատացեալները կարենային վարէն տեսնելու զայն: Մարիամ Եգիպտացիին պատմութեան մէջ այս նկարը ստացած է տիեզերական համբաւ մը: Յայտնի է այն դերը, զոր ան կատարեց մեղաւորուհիին ղղջումին մէջ: Այս պատկերը ըստ մեզ կը կոչուի Երաշխաւոր Ս. Աստուածածին:

Ս. Յերեզմանի չէնքերուն բուն կոստանդիանոսեան չրջանը կը փակուի 4 Մայիս 614ին, այն օրը երբ Պարսիկները Ս. Քաղաքը արշաւեցին, սրբավայրերը հրդեհեցին և սրէ անցուցին այն անձերը որոնք հոն ապաստանած էին: Երբ պարսիկ բանակին զօրապետը հրամայեց կոտորածը և հրդեհը դադրեցնել, Ս. Ծառայութեան եկեղեցիին մէջ գտնուեցան 212 դիակները, 83 բոլորէ

բաշխնի կանանց կողմը, 80 Գողգոթայի անդաստակի մէջ։ Տաբուեցան չատ գերիներ, որոնց գլուխը կը գտնուէր Զաքարիա պատրիարքը։ Միևնոյն ժամանակ արշաւողները իրր յաղթանշան հետերնին տարին աւանդատան մէջ պահուած Խաչը և եկեղեցիներու հարուստ կարասիները։ Այս բոլորը կատարուեցան քանի մը օրուան մէջ։ Պարսկական այս անգթի քանդումները և աւերածները երևակայել կու տան թէ Ս. Յարութեան տաճարը, Գողգոթան և Մատուռը որչափ խղճալի վիճակ մը կը ներկայացնէին կիրի վերածուած իրենց պատերով, փլփլած տանիքներով և քանդուած զարդարանքներով։ Ո՞վ պիտի տար այս աւերակոյտին իր երբեմնի պայծառութիւնը։ Այլ ևս հեռի էր Կոստանդիանոսի ճոխութեան թուականը։ Կայսերական գանձը հազիւ կը բաւէր հողային պաշտպանութեան անհրաժեշտութիւններուն։ Բայց չէ՞ն կրնար արդեօք փորձ մը ընել՝ վերականգնելու համար քրիստոնէութեան այս ամենապատուական սրբավայրերը։ Առանց յաւակնութիւն ունենալու նախկին շինուածքին մեծվայելչութեան, կրնային ընդ հոյթ յարդարել կամ կանոնաւորել գանոնք։ Շէնքերուն մեծագոյն մասերը, այսինքն պատերը, սիւնաշարքը, գրանց բարաւորները և փեղկերը, առանց խօսելու ժայռուտ մասերուն վրայ, ինչպէս Քրիստոսի Գերեզմանը և Գողգոթան, հրդեհէն վերջը կը պահէին իրենց գոյութիւնը. անգամ մը փլածներուն աւերակոյտը մաքրելէ յետոյ, կը մնար չատ տեղեր վերանորոգել, ինչպէս պատերուն չիրիչակը (revêtement), ճլաստած սալայատակները, վերաչինել տանիքները և բոցերէն լափուած չէնքերը։ Ս. Թէոդոսի վանքի մեծաւոր Մոտեստոսը ձեռք զարկաւ այս գործին։ Նոր Զորաբաբելը նոր սրբավայրը այն կերպով մը սկսաւ վերաչինել որ կարելի եղաւ պահել կոստանդիանոսեան շինուածքին էական մեծ գիծերը։

Մոտեստոսի վերանորոգած սրբավայրերուն մէջ կը գտնուէր նաև կոստանդիանոսեան մեծ եկեղեցին կամ Մատուռը։ Մատուռ անունը վերանորոգութենէն վերջ ընդ հոյթ անհետացաւ. բայց Ե. դարու ուխտաւորները կը յիշեն նոյն անունը։ Այնպիսի համոզում մը կար թէ բոլոր այս յիշատակարանները կը պահէին իրենց նախնական յատակագիծը և իրենց նախնի ժամանակներուն վիճակը, թէ անոնք կը պահէին ոչ միայն իրենց անունը՝ այլ նաև վերանորոգչին գործը բոլորովին մնացած է

յուութեան մէջ։ Մինչ Արգուլֆ եպս. կը յիշէ Մատուռը իբր կոստանդիանոսի մէկ աշխատութիւնը. Փոտիոս մը Գերեզմանի իր նկարագրութեան մէջ միտքը սեւեռած է միայն Ս. Հեղինէի։ Արդէն յիշեցինք թէ Գողգոթայի մեծ եկեղեցիին նշանակութեան մասին Զ. դարէն մրցում մը կար կոստանդիանոսի անուան և Մատուռ յորջորջումին մէջ։ Թ. դարէն սկսեալ հիմնադիրին անուանակոչութիւնը կը զօրանայ։ Երբ կը կարդացուի Ս. Կոստանդինոս, պէտք է հասկնալ Մատուռը։ Երկու տիտղոսներն ալ՝ որ անցելոյն կը նկատուին իրր միութեան գիծ մը, կը նշանակեն կաթողիկէ, որ համազօր է էթերիայի մեծ եկեղեցիին, և կը յիշեցնէ կոստանդիանոսէ առ Մակար գրուած նամակին բառագիտութիւնը։ Ինչ անունով ալ մկրտենք, Մատուռը ամէնուն համար Գիւտ Խաչի սրբավայրն է։ Գեղեցիկ սանդուխէ մը կ'իջնէր Սոփրոնիոս պատրիարք այն տեղը «ուր պատկառելի Հեղինէ թագուհին գտաւ կենաց փայտը», ինչպէս կը գրէր ան իր Անակրէոնեան տաղերուն մէջ։ Եպիփան վանականը Յովհէի Արիմաթացիի տան տեղւոյն տակը ցոյց կու տայ քառասիւն յիշատակարան մը, ուր թագուհին աղջկան մը վրայ կատարեց երեք խաչ։ Նոյն վանականին այս հատուածը պէտք է նըչերուն փորձը։ Նոյն վանականին այս հատուածը պէտք է նըկատել Ս. Հեղինէի ստորերկրեայ մատրան (crypte) ճարտարապետական ձևին հնագոյն յիշատակութիւնը. ձև մը որ հետագայ վերանորոգութիւններու ժամանակ խղճմտօրէն յարգուած է։ Մեծ եկեղեցիին կամ Մատրան մէկ դեռնափոր տեղւոյն մէջ է ուր կը թագուէին երուսաղէմի պատրիարքները։ Խաչի գիւտին ժողովրդային պատմութիւնները Գողգոթայի տեղւոյն նախնական իմաստը ընդարձակած՝ այս անունը կու տային նաև Գիւտի տեղւոյն համար։ Այս պատճառաւ է որ երբեմն Մատուռը տեղականացած է Գողգոթայի մէջ, ինչպէս Դ. դարուն։

Ս. Կոստանդինոսի եկեղեցին միշտ այն ընդարձակ պալիքան է որուն մեծավայելչութիւնը նախնի հեղինակները կը փառաբանէին 614էն յառաջ։ Մոտեստոսի աշխատութիւններուն առաջին 614էն յետոյ, 630ին, Սոփրոնիոս զոր յիշեցինք վերտուռմէն քիչ յետոյ, 630ին, Սոփրոնիոս զոր յիշեցինք վերբեւ, չատ կը հիանայ անոր նոր պայծառութեանը համար։ Անոնէր 65 կամ 75 սիւներ՝ վարի և վերի չարքերուն բաժնուած։ Բնակելի սենեակները կը բացուէին վերի սրահներու վրայ, որ Մոտեստոսի ժամանակ կը կոչուէին վերի դասատեղիներ։ Շէնքին

բաժանումը կատարուած էր տեղական ծէսերու համաձայն, ինչպէս նոյն ժամանակի միւս եկեղեցիները. կողակը կը պարունակէր եպիսկոպոսին աթոռը և քահանայից նստարանը, կիսաշրջանակային պատին դէմ յարմարցուած. սեղանը յարդարուած էր այն մեծ կամարին տակ որ կը բանար կողակի կոնքը (conque); արևելեան կողմը բարձրը չկնուած էր ամպիոնը, դասին մէջ կային երգեցիկներու նստարանները, վերջապէս ատհանը (naos) ուր կը հաւաքուէին պարզ հաւատացեալները: Ինչպէս ամէն տեղ, հոս ալ գլխաւոր դուռը կը կոչուէր Թագաւորական Դուռն. այս դրան երկու կողմը, դահլիճին մէջ կը պահուէին մասունքները: Հարաւային տաղաւարը, ինչպէս նախընթաց շրջանին, յատկացուած էր Փրկչին յիշատակներուն և հիւսիսայինը՝ Ս. Կուսին:

21 Մարտ 628ին Հերակլ յաղթականօրէն երուսաղէմ կը բերէր Խաչին նշանաւոր մասունքը զոր Պարսիկները 614ին յափշտակած էին: Փղշտացւոց մօտ պաշտպանուած տապանակին նման մասունքը կը վերադարձնեն տակաւին կնքուած մնացած անտուկովն. և բանաստեղծն Սոփրոնիոս որ իր քերթուածներուն մէջ անոր փառաշուք վերադարձը ներբողած էր, խանդավառութեամբ կը փութայ երթալու Մատուռը, մեծարելու համար զայն: Ս. Քաղաքը խոկոյն կը զրկուի այս գանձէն, եթէ պէտք է հաւատալ ժամանակագիր Թէոփանէսի, 633ին, կը գրէ ան. Հերակլ արաբական արշաւանքներու ենթարկուելով՝ կեանց փայտը Պոլիս փոխադրեց, վերջնականապէս լքելով Սիւրիան: Այս տեղեկութիւնը կը թուի հաստատել Երուսաղէմի մէջ Խաչին ներկայութեան վրայ Արգուլֆ եպս.ին լուսաբերը և Բիւզանդիոնի մէջ ճշմարիտ Խաչին երեք մասունքներուն յիշատակութիւնը: Մինչ հոն կը պահուէր Կոստանդիանոսի օրերէն, երկրորդը 374ին Ակամիայէն ստացուած, երրորդն էր Երուսաղէմինը: Այս թուականէն յետոյ Ս. Քաղաքը կ'օժտուի դարձեալ նշանաւոր մասունքով մը. և այս ըստ բաւականի կ'ապացուցուի վերացման Խաչին արարողութեամբ, իններորդ դարուն Խաչի պահպանիչ մը գոյութեամբ, Աւագ ուրբաթ օրը, թանկագին Խաչին պաշտամունքով: Հերակլի մեկնումէն յետոյ, կը թուի թէ Խաչին մասունքը չէր ցուցադրուէր հաւատացելոց մասնաւոր երկրպագութեան: Մատուռին վերի յարկին մէջ կը պահուէին եղէգը, Ս. Գեղարդը, յետոյ աւելի ուշ, քացախին և լեղւոյն բաժակը,

ոտնլուայի կոնքը, սպունգը, փշեայ պսակը և վարչամակը որ ցոյց կը տրուէին ուխտաւորներուն: Ս. Հեղինէին գիւտը յաւերժացնելու համար երեք խաչեր հաստատած էին Մատուռին ճակատին դիմաց, անդաստակին դռնաքիւին (auvent) տակ: Է. դարուն այս խաչերէն միոյն վրայ հաստատուեցաւ Ս. Գեղարդը:

Ժ. Դարուն, արաբական յաճախակի արշաւանքներուն հետևանքով, Մատուռին արևելեան անդաստակը ծանր փոփոխութիւններու ենթարկուեցաւ: 935ին կոստանդիանոսեան պազիլիքային դահլիճին կէսը մզկիթի փոխարկուած էր, այն պատրուակով որ 638ին երուսաղէմը գրաւուած ժամանակ, Օմար Խալիֆան ազօթած էր «այն սանդուխին վրայ որ կը դառնար Ս. Կոստանդիանոսի եկեղեցիին դրան մօտ, արևելեան կողմէն»: Անդաստակին մնացեալ կէսը որ իսլամներէն ազատ ձգուած էր, 966ին եղաւ տխուր և ահաբեկիչ տեսարանի մը թատրը՝ որ գուշակել կու տար 1009ին պատահելիք մեծ աղէտը: Եկեղեցիին թշնամիները հաւաքուեցան Ս. Կոստանդիանոսի դռներուն առջև և հրդեհային զանոնք և պազիլիքային տանիքը և Բոլորաշէնի գմբէթը այրեցան: Ցուվհաննէս պատրիարքը, որ Ս. Յարութեան տաճարին իւղի նկուղին մէջ ապաստանած էր, բռնեցաւ և այրեցին Ս. Կոստանդիանոսի դաւիթին մէջ: Այս յարադէպերը Մայն Ս. Կոստանդիանոսի դաւիթին մէջ: Այս յարադէպերը Մատուռի չէնքի մասին ա՛յնքան չհաղորդուիլն կ'ընծայեն որքան պատմական տեղեկութիւնները: Անոնք թոյլ կու տան մեզ հաստատել թէ մեծ եկեղեցիին մէջ ոչինչ փոխուած է, ինչպէս Մատուռին անդաստակը, արևելեան մեծ դռները, փողոցը ածող սանդուխները, և առաջին չինութեան բոլոր տարրերը վերստին կ'երևին հոն:

Թ. դարու երկրաշարժը, Ժ. դարու հրդեհները և աւարառութիւնները Մոտեստոսի կողմէն վերանորոգուած կոստանդիանոսեան հնագոյն վերաշինութեանց ոչ է դժբախտութիւն մը չէին խնայած: Ցաւալին այն է որ դարուն տիրող հալածանքներուն պատճառով ընտրուած չէնքերուն կատարեալ նորոգութեան համար դրամ կը պակսէր: 966ի յարձակումներու ընթացքին քանդուած տեղերու վերաշինութեան համար երուսաղէմի եկեղեցին երկար սպասեց: Ս. Յարութեան տաճարը եթէ տասը տարի վերջը կարողացաւ իր նոր գմբէթը կառուցանել, Մատուռին կամ Ս. Կոստանդիանոսի եկեղեցին քանի տարիէն աւելի

ապահեց նոր տանիք մը ունենալու համար, «վասն զի, կ'ըսէ Եահնա ժամանակագիրը, չատ ընդարձակ էր»: Բայց և այնպէս, այս դժուարին կացութիւնը ո՛եւէ խոչընդոտ չը բերաւ ա՛յն ուխտաւորութիւններուն որ ընդհակառակը չատցած էին այն հուրի եւ սուրի դարերու մէջ: Քրիստոնէութեան թշնամիները, պատմիչներուն ըսածին նայելով՝ չահագործեցին ուխտաւորական այս չարժումները և գրգռեցին Հաքէմ խալիֆային երևակայական կասկածոտութիւնը, և սուլթանին միտքը նախապաշարեցին ըսելով թէ «եթէ ինքը չփութար կործանելու քրիստոնէից վհատոյն տաճարը, անոնք չպիտի յապաղէին յարձակելու իր իշխանութեան վրայ և կապտելու զայն իր բոլոր պատիւներէն»: Կեդրենոս աւելի ճշմարտանման է անոտի պատճառներու վերապրելով քրիստոնէից դէմ ուղղուած հալածանքը իշխանի մը՝ որուն անգութ արարքները առասպելի ձև ստացած են արաբ հեղինակներու մօտ: Հաքէմ սկսաւ իր հալածանքներու չարքը 1008ին հրատարակած այն հրամանով որ կ'արգիլէր Մաղկազարդի Թափօրը Երուսաղէմի և իր բոլոր խալիֆայութեան մէջ: Անոր բռնապետական գործերուն լրումը եղաւ երբ հրամայեց քանդել Ս. Յարեզմանը: Այս յանդգնութեան պատրուակը եղաւ, ըստ իսլամ պատմագիր Մուճիր էտ–տինի որ կը ջանայ արդարացնել, «Սուլթանին տրուած տեղեկագիր մը ի մասին այն սովորութեան զոր ունէին քրիստոնեայք Զատիկի օրը խարէութեամբ լոյս հանելով, այնպէս որ պարզամիտները կ'երևակայեն թէ երկինքէն լոյս կ'իջնէր», բայց խալիֆան այնքան նախանձաւոր մէկը չէր որ վերաւորուէր այդպիսի արարողութենէ մը: Ուստի այս վերջին տեղեկութիւնը վստահելի չէր կրնար ըլլալ: Ինչ որ ալ ըլլայ, Հաքէմը՝ Եգիպտոսի Ֆաթիմեան երրորդ խալիֆան՝ Փրկչին Գերեզմանը քանդելու խորհուրդը յղացաւ, գրեց իր փոխանորդին Պարուքի որ Ռեմլէ կը գտնուէր նոյն օրերը, քանդել Ս. Յարութեան տաճարը, մինչև անգամ անհետացնել հետքերը, հիմնայատակ կործաննելով զայն: Պարուք ղրկեց իր մարդերը որ եկան յարձակեցան եկեղեցիին եւ յարակից չէնքերուն վրայ եւ ամբողջութեամբ կործանեցին, բացի անոնցմէ՝ որոնց քանդումը դժուար էր: Կործանեցին Գողգոթան եւ Ս. Կոստանդիանոսը իրենց բովանդակութիւններով և նոյն իսկ նուիրական հիմերը անհետացուցին: Իպն Ալի Տահէրը՝ յարձակող-

նելէն մին՝ կործանեց Ս. Գերեզմանը (Մագպերհ հ–Մագդասսասահ) եւ ջնջից հետքը: Քանդումը սկսաւ երեքշաբթի, 400ին Սէֆէր ամսուն վաճանէն հինգ օր յառաջ. գրաւեցին բոլոր միւղերը եւ վագխները, վերցուցին տարին կարասինները ոսկեզէն եւ արծաթեղէն անօթներով:

Այս քանի մը տողերով է որ Եահնա Իպն Սայիտ կը պատմէ անհետացումը կոստանդիանեան կառուցուածքներուն՝ որ հակառակ բազմաթիւ փոփոխութիւններուն, տակաւին հպարտօրէն կանգուն կը մնային Ժ.Ա. դարու աբչալոյսին: Պատմիչին այս կարևոր հատուածին տարերքը արժանի են որ մի առ մի կշռադատուին: Եթէ այս վանտալական արարքը համեմատութեան դնենք 614ին Պարսից կողմէն ի գործ դրուած հրդեհումին, պէտք կ'ըլլայ խոստովանիլ թէ վերջին քանդումը աւելի արմատական էր: Այս վերջինը չէր նմաններ կրակի մը՝ որ այրեց ինչ որ փայտ էր և կերպաս, առանց խորտակելու չինուածքները. այլ քանդումի ձեռնարկ մըն էր ան պաղարիւնութեամբ հաշուուած եւ կանոնաւորութեամբ գործադրուած: Սակայն պէտք է մտածել թէ քանդիչներուն գործը դիւրաձիկ բերդի մը հետ չէր, այլ հռովմէական հզօր չինուածքի մը՝ որ ընծայից դիմադրութիւնը մը, որու մասին գուցէ չէին անդրադարձած: Տանիքները փլցուցին, պատերը թաղատեցին իրենց վերի վիմաշարքերէն: Բայց երբ պատերուն աւելի վարը իջան, գործը այնքան դժուարացաւ, որ լքեցին զայն: Հրաժարեցան քակելէ Բողրաշհի ժայռին յեցած խոշոր քարերը, ինչպէս նաև ուրիշ չէնքերու վարի մասերը: Ժամանակագիրին ըսածին նայելով ամէն ինչ քանդեցին մինչեւ հիմերը, բացի այն մասին՝ որուն համար դժուարին էր: Մուճիր էտ–տին յետոյ միւնոյնը պիտի ըսէ արբավայրին հետագայ վիճակին մասին. «Կ'երևի թէ, կ'ենթադրենք, քանդումը բաւարար չէր, սակայն մեծագոյն մասը կործանուած էր. ամբողջական չէր, սակայն մեծագոյն մասը կործանուած էր. Աստուած գիտէ ճշմարտութիւնը»:

Գիտնալով որ Քրիստոսի Գերեզմանն էր որ պատճառ կ'ըլլար այս գեղեցիկ չէնքերուն կառուցման եւ թէ քրիստոնէից բարեպաշտութիւնը արուեստին բոլոր գեղեցկութիւններէն վեր կը դասէր զայն. քանդողները մասնաւոր մասնագիտութեամբ յարձակեցան: Անոնք երկաթէ գործիքներով խորտակեցին անոր ժայռուտ պատերը: Արաբ ժամանակագիրը այս գործողութիւնը

կը բացատրէ նմար բայով, որ կը համապատասխանէ քարահատի աշխատանքին։ Իսկ Եահեա պատմագիրը ապահովաբար աւելի ճշմարիտ կ'երևնայ երբ կ'ըսէ թէ Գերեզմանին քարերուն մեծագոյն մասը խորտակեցին և կտորներն ալ վերցուցին։ Այս խօսքը կը նշանակէ թէ Գերեզմանէն ուրիշ բան չմնաց, բայց միայն անոր պատերուն ստորին մասը և Գերեզմանին տեղը, ինչպէս կը տեղեկացուի յետոյ վկայութիւններէն։

Հաքէմի այս ընդհանուր քանդումներուն մէջ կործանեցան Ս. Յարութեան տաճարը, Գողգոթան եւ Մատուռը. վերջինը այլևս չվերաշինուեցաւ, եւ բոլոր ուղեկիրները կը հաստատեն այս պարագան։ Ս. Յարութեան վերանորոգութենէն վերջ երուսաղէմի ժողովրդապետական եկեղեցին նկատուեցաւ ան. որպէս իշխանութեան օրով երուսաղէմի մէջ նուաղած էր քրիստոնէից թիւը և պէտք ալ չէր մնար կառուցանելու նոյն ժողովրդապետական եկեղեցին որ հազիւ կը բաւէր քրիստոնեական դարերու հաւատացեալներու բազմութեան, և եթէ կառուցանելու պէտք ալ զգացուէր, դարձեալ կարելի չէր, քանի որ Ս. Կոստանդիանոսի անդաստակին մէջ ժ. դարուն կառուցուած էր մկիթ մը, որուն ճակատին վրայ քանդակուած էր նշանակալից ազդարարութիւն մը։

Գրուածքիս խմբագրութեան առթիւ առաւելապէս օգտուած ենք հետևեալներէն. 1.— JÉRUSALEM NOUVELE, par les P. P. Hugues Vincent et F. M. Abel. T. Second. 2.— THE PILGRIMAGE OF ETHERIA.

Գողգոթայի եկեղեցիին հայկական յիշատակները.

Հաքէմի քանդած սրբավայրերը երկար տարի մնացին նոյն վիճակի մէջ, մինչև որ Կոստանդին Մոնամախոս գահ բարձրացաւ և ան 1042ին պատեհութիւն գտաւ վերականգնելու զանոնք։ Որքան որ երուսաղէմի քրիստոնեաները մեծ ուրախութիւն ունեցան այս վերանորոգութեանց համար, բայց դարձեալ տիրող կացութեան հետևանքով կը մնային երկիւղի և սարսափի մէջ։ Քիչ մնաց որ 1070ին վերստին քանդուէր Քրիստոսի Գերեզմանը. բարեբախտաբար Սելճուքք զգուշ վտանգը և Մոնա-

մախոսի կառուցած չէնքերը 15 Յուլիս 1099ին յաղթապանծ խաչակիրներու ուրախութեան արցունքները և յաղթանակի երգերը ընդունեցին։

Քրիստոսի Յարչարանաց և Յարութեան սրբավայրերը տրամաբանօրէն երկու դասակարգ չէնքերու կը բաժնուէին. Ս. Գերեզմանը և անոր յարամասերը, Գողգոթան և յարակից մասերը։

Մենք՝ ըստ մեր նիւթին, նախ պիտի բացատրենք այս թէ՛ւականին վերանորոգուած Գողգոթայի եկեղեցին և յետոյ պիտի նկարագրենք հայկական յիշատակները նոյն եկեղեցիի վերաբերութեամբ։ Գողգոթան միշտ ցոյց կը տրուի Ս. Յարութեան եկեղեցիին արևելքը, համաձայն միևնոյն մերձաւոր հաստատութեան՝ որ սրբավայրերու պատմութեան նախընթաց շրջաններուն մէջ յիշատակուած է։ Ան Ս. Գերեզմանի մեծ եկեղեցիէն դուրս առանձին փոքրիկ չէնք մըն էր։ Վերնայարկ աղօթարանը, որ կը ծածկէր Խաչելութեան ժայռը, զարդարուած էր գեղեցիկ մոզայիքներով որ կը ներկայացնէին Խաչեալ Քրիստոսը իր ձախը ու աննալով իր մայրը և աջը՝ Ս. Յովհաննէսը։ Մէկ կողմէն հարիւրապետը իր գեղարդովը կը ծակէ Քրիստոսի կողը, մինչ ուրիշ կողմէն զինուոր մը եղէգի մը ծայրը անցուցած և քացախով լեցուած սպունգը կը ներկայացնէ։ Ժայռին գագաթը բաց թողուած էր, որպէս զի հրաշալի պատուհածքները երևնային։ Ստորնայարկ մատուռը մասամբ մը փորուած էր լերան ժայռին մէջ և Արևմուտքէն ցինները կը կոչէին զայն Գողգոթա, իսկ Արևելքցիները նախամեծարութեամբ Տեղի կատարելոյ (Cranion) կ'անուանէին զայն, որպէս զի վերնայարկ եկեղեցիին վերապահեն Գողգոթա անունը։

Խաչակրաց պատմիչ Տիւրոսի արքեպս., կիսեմ Տիւրացի, հետևեալ կերպով կը նկարագրէ Գողգոթայի մասին Խաչակիրներու կատարած փոփոխութիւնները. «Լատիններու գրաւումէն առաջ Գողգոթան, կենդանատար Խաչափայտին գիւտին տեղը, Պատանատեղին, Հրէից սովորութեան համաձայն, Ս. Յարութեան եկեղեցիին չրջաբակէն դուրս կը մնային, բայց երբ մերինները (Խաչակիրք), ողորմութեամբ Աստուծոյ քաղաքը գրաւեցին զօրաւոր բազկաւ (in manu forti), նոյն չէնքը իրենց խիստ նեղ երեսցաւ։ Նախկին եկեղեցիին վրայ ուղղուցին հաստատուն եւ խիստ բարձր չինուածք մը, որ հին մասերը ամփոփելով միևնոյն չէնքին մէջ կը բովանդակէր խնդրոյ նիւթ եղող տեղերը»։ Պատ-

միչին այս խօսքերէն կը հասկցուի թէ ԺՍ. դարուն Լատինները Բոլորաչէնը գեղեցկացուցին, առանց էական փոփոխութեան. ապահովքէն անոր կցեցին ճոխապէս զարդարուն հռոմէական եկեղեցի մը, Գողգոթան, Պատանատեղին, Գիւտխաչի մատուռը եւ Ս. Պարտէզին արեւկքը գտնուող նոյն իսկ փոքր արդուդիր աղօթարանները մէկ յարկի տակ առին, կանգնեցին զանգակատուն մը. Խաչակրաց գործը մեծագոյն մասամբ այս կերպով կատարուեցաւ, այնպէս որ մինչեւ հիմակ նոյնը մնացած է, թէև քիչ մը կերպարանափոխուած: Խաչակրաց ժամանակ այլևս Գողգոթան ուրոյն չէնք մը չէր, այլ միացած էր իր յարակից մասերով Ս. Յարութեան տաճարին. ուղեգիրներու նկարագրութենէն կը հասկցուի թէ Գողգոթայի մատուռը ունէր չորս կամարներ լայնչի սիւներու վրայ հաստատուած. կեդրոնի սիւնը՝ առանցքը բոլոր կառուցուածքին, չէնքը կը բաժնէր երկու որոշ մասերու: Գողգոթայի սիւներուն, պատերուն և կամարներուն զարդարանքները միշտ աչքի կը զարնէին, ինչպէս առաստաղին, նոյնպէս յատակին վրայ գեղեցիկ նկարներ ուխտաւորաց ուշադրութեան առարկայ եղած են:

1187 ին երբ Խաչակիրները ստիպուեցան թողուլ Երուսաղէմը և Սալահէտտինի յաղթական բանակները գրաւեցին Ս. Երկիրը, Գողգոթայի եկեղեցին էր այն ինչ որ մենք կը տեսնենք այսօր, քիչ փոփոխութեամբ: Որպէս զի կարենանք մէջ բերել Գողգոթայի եկեղեցիին հայկական յիշատակները, հարկ կ'ըլլայ ճչդել նոյն եկեղեցիին սեպհականութիւնը: Յայտնի կ'երևի թէ ասկէ կանուխէն, ինչպէս արաբական տիրապետութեան, նոյնպէս Խաչակրաց ժամանակ տէրունական սրբավայրերը ընդհանուր քրիստոնէութեան պատկանող վայրեր էին. պաշտամունք և արարողութիւնք ամէն քրիստոնեայ ազգեր ընկերակցաբար կամ առանձնաբար կը կատարէին որոշ ժամանակներու մէջ, ինչպէս յայտնի կ'ըլլայ հին դարերէ ժառանգուած սաղմոսական տօնացոյցներէ և ծիսարաններէ: Բայց պատմական ապացոյցներ մեզ կը վստահեն Դրւնեցի իսլամ յաղթականին տիրապետութեան օրերէն Տնօրինական ինչ ինչ սրբավայրեր մասնաւոր ազգերու սեպհականութիւն կը դառնան, որպիսին է Գողգոթան՝ որ հայ ազգին օրինական և դարաւոր մէկ հաստատութիւնն էր, ինչպէս ստորև պիտի կարողանանք պարզել: Նախկին դարերու մեր մատենագիրներէն Ասողիկ, Մովսէս Կաղանկատուացի, Սմբատ սպասլագրի թարգմանիչը, ինչպէս նաև Դաշտեցի Թուղրի հեղինակը Գողգոթայի մասին ակնարկութիւններ ունին, բայց անոնց տողերը չեն կրնար բացարձակօրէն պատմական արժէք ներկայացնել, յայտնի ըլլալով անոնց կարգ մը տեղեկութիւններուն տարտամ և ժամանակավրէպ բնութիւնը, սակայն և այնպէս յիշեալ պատմիչներուն նոյն տողերը կարելի է նկատել վաղնջական աւանդութեան մը նուաղկոտ արձագանգները:

Ինչ որ ալ ըլլան ԺԲ. և ԺԳ. դարերու Գողգոթայի սեպհականութեան մասին տիրող պետութեան ապօրէն և անիրաւ ոչնչումները, Գողգոթայի եկեղեցիին սեպհականութիւնը պատմականօրէն հիմնաւոր է. ուստի մենք նախ այս հիմնաւորութիւնը պիտի հաստատենք և յետոյ պիտի ներկայացնենք նոյն դէպքերն ու անցքերը որ հայ ազգը զրկեցին իր նոյն գարաւոր եկեղեցիէն. և ի վերջոյ պիտի նկարագրենք Երկրորդ Գողգոթայի հաստատութիւնը, իսկական Գողգոթայի դիմացը:

Առաջին ապացոյցը զոր մեզ կը հայթայթէ 1867ին, օտար բական մըն է, Ս. Երկրին Ֆրանսական նամակատան մէկ պաշտօնեան՝ Գարլօ Կիւրմանի, որ իր Question sur la propriété du couvent de St Jacques à Jérusalem տետրակին վերջին տողերուն մէջ կը յիշէ թէ Հայերը Սալահէտտինէն գնեցին Քրիստոսի Ս. Գերեզմանը, համաձայն այն անկողմնակալ վկայութեան, զոր կը հայթայթէ մեզ Անչէնի աբբայարանի տարեգիրքը: Անչէնի բենեդիկտեան աբբայարանը հիմնուած է ԺԱ. դարուն Սքարբի (Ֆրանսա) կղզիներէն միոյն մէջ. նոյն լատիներէն յիշատակարանը կը դնենք հոս նոյնութեամբ. "Armeni christieni, magno dato censi pretio. Sepulchrum dominicum sua ecclesia et domini templum a Salahadino redemerunt»: Այս թանկագին յիշատակարանը կը յիշեն նաև մեր Երուսաղէմի պատմիչներէն Սաւարան և Ասողիկ, առանց յիշատակելու աղբիւրը: Նոյն յիշատակարանը ոչ եպս. Ս. Գերեզմանին ճչդութիւնը մեր խնդրանաց վրայ կատարած է Դոմինիկեան գիտնական հայրերէն մին և յայտարարած է թէ այդ թանկագին յիշատակարանը իսկապէս մինչև այսօր գոյութիւն ունի Անչէնի աբբայարանին մէջ: Մենք վերև գրեցինք թէ Խաչակիրները Ս. Յարութեան բոլոր սրբավայրերը մէկ յարկի տակ ամփոփեցին, այնպէս որ Տնօրինական տեղերու յարակից մասերը ամբողջու-

թիւն մը կը կազմէին, կեդրոնը ըլլալով Քրիստոսի Ս. Գերեզմանը։ Կասկած չկայ թէ Հայք Սալահէտտինէն ստանալով Քրիստոսի Ս. Գերեզմանը, սեպհականատէր կ'ըլլային տեղւոյն կառուցուածքներուն. բայց կ'երևի որ Հայերը քրիստոնէական հզբայրասիրութեամբ առլցուն՝ Ս. Յարութեան տաճարին համբողջութեան չուզեցին տիրանալ, այլ միայն նախընտրեցին Գողգոթան իրենց պահել, թոյլ տալով միևնոյն ժամանակ միւս քրիստոնէից իրենց ուխտը եւ արարողութիւնները կատարելու։ Հայեր որոշապէս սեպհականատէր դարձած են Գողգոթայի եկեղեցին. և երեք հարիւր տարիներ յետոյ նոյն արքավայրը անիրաւաբար կը յափշտակուի Վրացիներէն։ Երկար կ'ըլլայ հոս մէջ բերել յիշատակարանները այն գրչագրողներուն որ Գողգոթայի հայ եկեղեցին մէջ ընդօրինակութիւններ կատարած են. միայն հետաքրքրութեան համար ձեռագրաց յիշատակարաններէ քաղելով կը դնենք ցանկը անոնց որ այդ կերպ աշխատանք ունեցած են հոն.

1.— Վարդան վրդ. Բարերդցի. 12 տարի կը մնայ Երուսաղէմ և Գողգոթայի համար կ'ընդօրինակէ ճաշու գիրք մը. 1365ին յիշեալը յետոյ կը դառնայ Կիլիկիա և եպիսկոպոս կը ձեռնադրուի Կոստանդին կաթողիկոսէն։

2.— Յովհաննէս Կրօնաւոր՝ 1416ին Ս. Գողգոթայի եկեղեցիին մէջ Աւետարան մը կ'ընդօրինակէ Քաջբերունեաց Խառաբաստի վանահայր Կարապետ վրդ.ի համար, որ ուխտի եկած էր նոյն միջոցին։

3.— Մկրտիչ արևոլայ՝ լուսաբար Ս. Յարութեան և Գողգոթայի, 1427ին ստացողը կ'ըլլայ Կարողիկեայց թղթոց վերնուրեան մէկ ձեռագրին։

4.— Ներսես Երեց՝ Երուսաղէմի Մեսրոպ և Սբրահամ պատրիարքներու օրով (1445–1461) Երուսաղէմի մէջ կ'ընդօրինակէ Գաւմարան մը (անթուական) և իր յիշատակարանին մէջ կը յիշատակէ Գողգոթայի եկեղեցին։

Սյս և ուրիշ յիշատակարաններէն, ինչպէս նաև հրովարտակներէն կը հասկցուի թէ Գողգոթայի եկեղեցին մինչև ԺԵ. դարու կիսուն, թերևս քիչ մըն ալ աւելի, կը մնար Հայոց Միաբանութեան սեպհականութիւնը։

Վրացիք քրիստոնեայ ըլլալէ գրեթէ չիսուն տարի վերջ քազմութեամբ կու գային հաստատուիլ Ս. Երկրին մէջ. անոնցմէ մին՝ Պետրոս վրացին, եպիսկոպոսանալէ յառաջ, Երուսաղէմ եկած էր ու հաստատած էր վանքեր, որոնցմէ մին Երուսաղէմի մէջ և միւսները Յորդանանու ափերուն վրայ կը գտնուէին։ Պրոկոպիոսի համաձայն, Յուստինիանոս ալ վրացիները չհանելու համար Երուսաղէմի մէջ կառուցած է Խաչավանքը, որ բերդանման հաստատութիւն մըն է։ Ժամանակի ընթացքին Ս. Քաղաքին մէջ ունեցան նաև ուրիշ վանքեր ալ և տեղական քրիստոնէից մէջ գրաւեցին ազդեցիկ դիրք մը։ Արաբական իշխանութեան և Խաչակրաց ժամանակ թէև նուազեցաւ անոնց թիւը, բայց Մէմլուքներու իշխանութեան օրով Երուսաղէմի վրացիները սկսած էին վարուիլ տիրաբար. յայտնի ըլլալով նոյն կովկասցի իշխանաւորներուն դրացնական սերտ կապակցութիւնը վրացի ժողովրդեան հետ ու անոնց չահու և այլ նիւթական յարաբերութեանց վիճակը, ինչպէս նաև վրացական թագաւորութեան դաշնակցութիւնը Եգիպտոսի Մէմլուք սուլթանութեան հետ։ Վրացիք Ժդ. և Ժդ. դարերուն Ս. Երկրին մէջ ստացան առանձնաշնորհեալ կացութիւն մը և անոնք չափազանցօրէն բազմացան, վանական հաստատութիւնները աւելի ճոխացան, անոնց ուխտաւորները երուսաղէմ կը մտնէին մեծահանդէս և դրօշակ պարզած, տրք և կանայք գինեալ վիճակով, եւ չէին վճարեր այն հողատուրքը զոր կը վճարէին ուրիշ ազգաց ուխտաւորները։ 1240ին ժագ տը վիթրիի գրած տողերը խիստ նշանակալից են. Վրացիք տակաւ տակաւ Յունաց դիրքը կը գրաւեն Ս. Քաղաքին մէջ, վասն զի Մէմլուքները՝ ինչպէս Յոյները, նմանապէս միւս քրիստոնեաները հանգիստ չէին թողուր։ Իշխանութեամբ և դիրքով զօրացած վրացիք՝ նախանձու ոգւով լցուած՝ կ'ուզէին յափշտակել Գողգոթայի հայկական եկեղեցին պարզապէս չհաւատարմելով մէմլուք իշխանութեան իրենց նկատմամբ ունեցած եւ վերեւ պարզուած կապակցութիւնները։ Մեր պատրիարքարանի արձանագրութիւններու պարունակութենէն յայտնի կ'ըլլայ որ Վրացիք 1316ին խլրտեցան յափշտակելու Գողգոթան. նոյնը կրկնեցին 1395ին. երկից կատարուած այս ապօրէն ձեռնարկները անհետևանք մնացին Հայոց Միաբանութեան՝ Մէմլուք իշխանութեան մօտ կատարած ազդու դիմումներուն հետևանքով. քայց Մէմլուքներու այդ չփոցած գաշնակիցները առիթ կը փընտրէին

տէրին իւրացնելու թէ՛ Ս. Յակոբի վանքը և թէ՛ Գողգոթայի Հայոց եկեղեցին. առաջնի մասին բոլորովին մերժուեցան. իսկ երկրորդի համար թէև անիրաւ, բայց ամէն ապօրէն միջոցները գործադրեցին։ Երուսաղէմացի Յովհաննէս եպս., այլ անուամբ Հանիւկ, իր Երուսաղէմի Պատմութեան մէջ ամիսուի կերպով կը պատմէ այս դէպքը առնելով ձեռագիր Ցայտաւուրքի մը յիշատակարանէն և Ս. Յարութեան Վերնատան եկեղեցին պատին վրայ գրուած արձանագրութենէն, որ իր ժամանակ գոյութիւն ունէր, բայց այժմ ոչ։ Հանիւկի պատմութեան համաձայն՝ հետևեալ կերպով տեղի ունեցած է այս դէպքը. 1439ին Եգիպտացի Մարտիրոս պատրիարքին օրով, Եգիպտացի մեծ վաճառական մը Ղայիպի անուն՝ վաճառականութեան համար Վրաստան կ'երթայ. ան չատ բարեկամ էր Եգիպտոսի սուլթանին. այս պարագան իմանալով Վրաց թագաւորը, ամէն ապօրէն միջոցներով կը սիրաշահի զանիկա և միջնորդ կը բռնէ սուլթանին մօտ, որպէս զի Գողգոթան Հայերէն առնու և տայ Վրացիներուն. Ղայիպի վրացի ծառաներ և աղախիններ իրը ընծայ կը բերէ սուլթանին, հանդերձ բազմագանձ հարստութեամբ, որ մեծապէս կը գիւրացնեն յափըշտակութեան գործը. ու այս կերպով միայն Վրացիք կը տիրանան Գողգոթայի։ Մարտիրոս Եգիպտացի պատրիարքը կը գիմէ սուլթանին որպէս զի ան ետ առնու այդ հրամանը ու Գողգոթան վերադարձնէ Հայ Միաբանութեան. իր ջանքերը կը յաջողին եւ կրկին հրովարտակ կ'ստանայ, բայց դարձեալ վրացի ոսկիներով կուրացած Ղայիպին կը թեքէ սուլթանին միտքը և կրկին Վրացիք Գողգոթան կը յափշտակեն. ըստ պատմութեան, ծերունի պատրիարքը հինգ անգամ Եգիպտոս կը ճամբորդէ արդարութիւն գտնելու համար, բայց ոսկիներուն փայլը և ընչաքաղցութիւնը պաշտօնական անձերը կը հեռացնէին արդարութենէ։ Եւ Գողգոթան կը յափշտակուի։ Այս խնդրոյն նկատմամբ գոյութիւն ունեցող սուլթանական հրովարտակները ստուգապատում վկայնեն և ճշդագոյն պատկերացումը կու տան նոյն ժամանակի վարչական և հանրային կեանքին։

Անուղիղ ճանապարհով ստացուած յաղթանակները տևական չեն կրնար ըլլալ։ Վրացիներուն կողմէն Գողգոթայի յափշտակութեան համար ձեռք բերուած վճռագիրը Ս. Երկրին մէջ անոնց համար կը բանայ անկումի և բարոյական խեղճութեան թուական մը։

1516ին Սելիմի բանակները չուտով յաղթահարեցին Մէմլուքները և Վրացիք ալ Երուսաղէմի մէջ քաղաքականապէս կորուսին իրենց ազդեցութիւնը։ Վրացի կղերին և ժողովրդեան անկեալ վիճակը ազդեց անոնց պատկանեալ հարստութիւններուն վրայ։ Վրաստան դադրեցուց իր նպաստները, ուխտաւորները պակսեցան և վանքերը մնացին մեծամեծ պարտքերու տակ, և չկրցին մատակարարել իրենց եկեղեցիները. 1642ին վրացի վանականները Գողգոթայէն քաշուեցան ու յանձնելով զայն կրօնակից Յոյներուն, ժամանակ մը մնացին Աչափանքին մէջ. հոն ալ չկրցին տեղաւորուիլ և 1685ին բոլորովին լքեցին Երուսաղէմը, իրենց բերդանման հաստատութիւնները կամ ծախելով և կամ Յոյներուն յանձնելով. և ահա անոնք Սերպերու և Թրակացիներու նման չկարողացան պաշտպանել իրենց կրօնական հաստատութիւնները. աղգային յոխորտանքին վախճանն էր այս։ Մարտիրոս պատրիարք երբ հակառակ իր ջանքերուն և տաժանակիր ճամբորդութեանց՝ չկրցաւ տիրանալ Գողգոթային, Եգիպտոսի սուլթանէն ծախու կ'առնու Ս. Յարութեան տաճարին մէջ գըտնուած Թագաւորաց Աղօթատեղի ըսուած վերնատունը որ սանդուխով մը կապուած էր վարի յարկերուն հետ. և եկեղեցւոյ վերածելով զայն կ'անուանէ Երկրորդ Գողգոթա։ Նոյն Վերնատունը ունէր երեք կամար և երկու մեծ լուսամուտներ, որ կը նային Ս. Յարութեան դրան վրայ. Գողգոթայի փոխարէն Վերնատան եկեղեցին դրան վրայ. Գողգոթայի փոխարէն Վերնատան եկեղեցին պաշտօնական որոշումով և վաւերացին արքունի հրամանաւ և պետական որոշումով և վաւերացին Թուղթերով սեպհականութիւն եղաւ Հայոց Միաբանութեան, որ մինչև այսօր իր յատուկ առօրեայ պաշտամունքներուն և հանդիսական արարողութեանց համար կը գործածէ զայն։ Նոյն Վերնատան եկեղեցիին մէջ նորոգութիւն ըրած է նախ Գրիգոր Պարոնտէր պատրիարքը, որ լատիններէն երեք կամար ևս առած և փոխարէն տուած է Պարսկ ըսուած տեղւոյն վրայի կանթեղն ու այն խուցը որ կը գտնուէր լատիններուն երգեհոնին մօտ. և Պարոնտէր այս կերպով կ'ընդարձակէ նոյն եկեղեցին։ Ապա Յովհաննէս վրդ. Երուսաղէմացին (յետոյ եպս.) օգնութեամբ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքին, որ տակաւին Պոլիս կը գտնուէր, նոյն տեղւոյն մէջ աւագ սեղանին դիմացը գտնուած և առաստաղէն կը գոցէր սեղանը, մեծ աշխատութիւններով մէջտեղէն վերցնել

կու տայ, կամարներով կ'ամրացնէ պատերը և աւելի ևս կ'ընդարձակէ եկեղեցին, միաբաններու և ժամարարներու համար ալ յատուկ սենեակներ աւելցնելով (Տե'ս Հանիճ, Պատմ. Երուսաղէմի, էջ 170–171)։

ԻԵ

Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՎԱՆՔԸ ՅՈՊՊԷԻ ՄԷՋ

Յոպպէն՝ որուն եբրայեցերէնն է Եաֆօ, Պաղեստինի ծովային մէկ քաղաքն է, որ կրնայ նկատուիլ Երուսաղէմի սովորական նաւահանգիստը։ Յոպպէն հիմակ կը կոչուի Եաֆա։

Այս անունը Քարնաքի մեհեանի նախադրան աշխարհագրական ցանկերուն մէջ կը կարդացուի Իարու կամ Իօքու։ Ասորեստանեայց արձանագրութեանց մէջ կը յիշուի Իա–ափ–բի–ի, համաձայն Իաբբիյի։ Այս անուան հաւանական նշանակութիւնն է գեղեցկուհի, որ կը ծագի եաֆահ արմատէն, եւ կը նշանակէ գեղեցիկ ըլլալ։ Յոպպէն չինուած է ժայռոտ բլուրի մը վրայ, որ կը բարձրանայ գրեթէ երեսուն մէթր այն դաշտէն՝ որ կը տարածուի դէպի արեւելք. և յիսուն մէթր բարձր Միջերկրականէն՝ որ կը թրջէ իր ստորոտը և աղեղնաձև կը տարածուի հարաւէն հիւսիսային արեւելք։ Քաղաքին տուները բլուրին բոլոր զառիվայրերը ծածկելով՝ չատերը այժմ, ինչպէս երբեմն, տափարակ տանիքներ ունին (Գործ Առաք. Ժ. 9)։ Կարմիր կղմինտրով տանիքները սակայն, հետզհետէ արդիական տեսք մը կու տան։ Այն պարիսպներէն՝ որով անցեալին մէջ ան միշտ շրջապատուած էր, ծովեզրին երկայնքին վրայ և հարաւային կողմը կը մնան աւերակ պատերու մասեր և մարտկոցներ, որոնց ստորոտը կը մնան անպտղածածկի հրանօթներ։ Բլուրին գագաթը քիչ տարիներ յառաջ կը տեսնուէր ամրացեալ դղեակ մը աշտարակով, շինուած բնակորներովն այն հին միջնաբերդերուն՝ որոնք կառուցուած էին նոյն տեղերը։

Յոպպէի հռչակաւոր նաւահանգիստը բնական կանթ մ'է դէպի հիւսիս բացուած, երկք հարիւր մէթր երկայնութեամբ և հարիւր մէթր լայնութեամբ։ կանթը կազմուած է ժայռերու շերտով մը՝ հազիւ մին մէսէն հինգ մէթր հեռի՝ երկու յառաջակարկառ ժայռերու մէջ սեղմուած արեւմտեան կողմի անցքով միասին, ուր ալիքներ «ելանեն լեռնեանան և իջանեն դաշտանան» Սաղմոսերգուին ըսածին նման (Սղմ. ՃԳ. 8)։ Այս այն մուտքն է՝ ուրկէ սովորաբար կ'անցնին, ոչ անվտանգ, բայերը կեցող նաւերէ ուխտաւորներ բերող նաւակները. քիչ մը աւելի մեծ տարողութեամբ նաւերը մուտք կը գործեն հիւսիսէն։ Այս աւազանը անտարակոյս բաւական ընդարձակ և խոր էր պահանակելու համար հին տաճնուան փոքր նաւերը. բայց մեծագոյն նաւերը և արդի չոգենաւերը հեռուն պարտաւոր էն խարխսել. այսօր ան կիսով մը աւազով լեցուած է, հոն կ'ապահանին միայն սովորական նաւակները և քիչ տարողութեամբ առագաստանաւերը։

Յոպպէն՝ Հրէաստանի և Սամարիոյ հեռաւոր լեռներու մանիշակագոյն կապոյտի վրայ իր ճերմակ տուներով պաղեստինեան կապոյտ դեղին բլուրի մը վրայ բարձրանալով՝ և յանան ափանց գորշ դեղին բլուրի մը վրայ բարձրանալով՝ և յառաջանալով դէպի ծով, հեռուէն նկող ուղեւորին կը ներկայանայ նման բարեկամի մը՝ որ իր ձեռքը կ'երկարէ ընդունելու զայն այս ցանկալի Աւետեաց երկրին մէջ։ Այն փառքը որուն արժանի էր Եաֆոի անունը, իր մրգաստաններուն փառքն է։ Փարաւոնի ամն զօրապետը որ մեզ թողած է Ուղեւորութեան հետաքրքրական պատմութիւնը, և Թամսէս Բ. Մէնէֆթահի ժամանակ Պաղեստինէն կ'անցնէր, արդէն կը փառաբանէ իրենց բարգաւաճման մէջ գտնուող Յոպպէի կանաչազարդ ցանկապատները, և հրապուրուած է անոնց հասունցած և հլութիւն պտուղներով։ Քաղաքին վերեւէն աչքը կ'ընդգրկէ ընդարձակ տարածութիւն մը՝ զոր աւելի նպաստաւորեալ բնակիչներուն ճարտարարուեստը տակաւին պիտի կրնայ զարգացնել կազմելով միակ անտառակ մը, այսինքն թաւուտք մը թզենիներու, նռենիներու, ձիրանիի, դեղձի, հակայական ժանտաթզենիներու, թթենիներու, կիտրոնի ծառերով բեռնաւորեալ իրենց բոյրը հեռուն տարածող ծաղիկներով և պտուղներով. նարնջենիներու՝ որոնց ճիւղերը կը հակին իրենց ոսկեզոյն խոշոր պտուղներու ծանրութեան

տակ, փայլուն ծաղիկներով նռնենիներու, լայն տերևներով պա-
նաններու, որոնց վրայ բարձրացող արմաւենին կը չարժէ իր
գարգմանական ձևը։ Այս թանձրախիտ կանաչութենէն հոս
եւ հոն կը վերացայտեն սիրուն հովոցներ, որոնց մօտ անդադ-
րում անձրևներու ջուրերը ամէն կողմ տարածուելով կը պահ-
պանեն հողին արգասաւորութիւնը և կ'ոռոգեն ծառերուն մէջ
պահուրտած ամէն տեսակ բանջարեղէնները։

Ցոպպէի այս համառօտ նկարագրութենէն վերջ պիտի գրենք
անոր քրիստոնէական կեանքը, Խաչակրաց ժամանակը և իր ե-
կեղեցիները, Սիմոն Խտպախտդի և Տաբիթայի առները, ինչպէս
նաև Ս. Պետրոսի եկեղեցւոյն գիւտը. յետ այնու պիտի գրենք
մեր Ս. Նիկողայոս վանքին ծագումը, կատարուած չինարարու-
թիւնները և այն դէպքերը՝ որ տեղի ունեցան նոյն վանքին մէջ։
Մենք ծրագրէն դուրս կը մնայ ծանօթագրել այն դէպքերը որ
տեղի ունեցած են Ցոպպէի մէջ Իսրայէլացիներէն առաջ կամ
անոնց ժամանակ. գերութենէ առաջ կամ վերջը։

1. Քրիստոնէական կեանքը Ցոպպէի մէջ.

Առաքելական դարուն սկիզբը Ս. Պետրոս կը քարոզէր Պա-
ղեստինի ծովեզերայ կողմերը. Գործք Առաքելոցին մէջ կը կար-
դանք (Թ. 36–43) որ Առաքեալը Լիւդդայէն Ցոպպէ կը հրաւիր-
ուի նորադարձ քրիստոնեաներու կողմէն, վասն զի բարեպաշտ
կին մը Տաբիթա անուն, այլ անուամբ Սյծեմիկ, որ հիւանդա-
նալով վախճանած էր. կին մ'էր ան «գործովք բարեօք և ողոր-
մութեամբք զոր առնէր»։ Պետրոսի աղօթքով Սյծեմիկ կ'ոդ-
ջանայ. անոր կենդանութեամբը այրիները կը մխիթարուին եւ
Ցոպպէի մէջ շատերը քրիստոնեայ կը դառնան։ Պետրոս շատ
ժամանակ կը մնայ Ցոպպէի մէջ, Սիմոն անուն խաղախորդի մը
տունը։ Ցոպպէի մէջ Պետրոս ունեցաւ տեսիլ մը կամ, ըստ Գործք
Առաքելոցի, զարմացում մը (Թ. 10), նոյն միջոցին ան կը տես-
նէ երկինքը բացուած «եւ ղէորեցունց ատենոց կախեալ անօթ
ինչ իբրեւ կտաւոյ մեծի լչկեալ նստեալ ի վերայ երկրի, յորում
էր ամենայն չորքոտանիք եւ սողունք երկրի եւ թռչունք երկ-
նից եւայլն» (Թ. 11–3)։ Այս տեսիլը երկնային նշան մ'էր հրա-

ւիրելու հեթանոսները որ ընդունին քրիստոնէական կրօնը, եւ
աթաօնութիւն մը առաքելոց՝ քարոզելու Աւետարանը հեթանո-
սաց մէջ ալ։ Վեսպասիանոսի և Տիտոսի արշաւանքները տարած-
ուեցան նաև Ցոպպէի վրայ. քաղաքը հիմնայատակ կործանուե-
ցաւ, քրիստոնէից հետ հրեայք ալ ցրուեցան, և երկու դար հոն
կ'իշխէր միայն աւերակաց կոյտ մը։ Ցոպպէ յետոյ վերաշինուե-
ցաւ և բնակչութիւնը վերանորոգուեցաւ և քրիստոնէութիւնը
հոն վերստին ծաղկեցաւ. կանուխէն հաստատուած էր հոն եպիս-
կոպոսական աթոռ մը։ Ե. դարէն մինչեւ Ի. դար ժողովներու
շատ մը ստորագրութեանց մէջ կը տեսնուին Ցոպպէի արքեպիս-
կոպոսներուն անունները։ Ուխտաւորները Ցոպպէի աւերքզբա-
կան յիշատակներէն հրապուրուած՝ շատ անգամ կնաբրիայէն
Երուսաղէմ ուղղակի ճանապարհէն չեղելով Ցոպպէ այցելու-
թեան կու գային. Հռովմայեցի Բաւլա և իր աղջիկը Եւստոքիա
ընկերակցութեամբ Երոնիմոսի փափաքեցան տեսնել այն նա-
հանգիստը՝ ուրկէ Յովնան նաւ նստած է։ 500ին Վիրգիլիոս
քահանան, և 530ին Թէոտոսիոս Ս. Պետրոսի յիշատակին և Տա-
բիթայի յարութեան համար կ'այցելեն Ցոպպէ։ 570ին Բէզանսի
Անտոնինոս Ցոպպէի մէջ կը փնտռէր նոյն կնոջ գերեզմանը։ 637
ին Սարակինները Ցոպպէն այս թուականէն սկսեալ ուր հասարակ
կը կոչեն Եաֆահ, որ Ս. Երկրին գլխաւոր նաւահանգիստը կ'ըլ-
լայ։ Վիլլիպալտ (723–6) հոն այցելեց եւ տեսաւ «այն Ս. Պետ-
րոս առաքեալի եկեղեցին՝ ուր յարութիւն առաւ այրի Սյծեմիկը,
Պետրոսի աղօթքով»։ Թէեւ այն ատեն քաղաքը շատ փոքր էր,
սակայն ան եղաւ Պաղեստինի եւ Ռեմլէի մայրաքաղաքին մեծ
մրցակիցը, մինչեւ Պաղեստինի եւ Ռեմլէի մայրաքաղաքին մեծ
չուկան, ինչպէս կը նկարագրեն Եաղուպի (891) և Էլ–Մուգադ-
տասի (985)։

2. Ցոպպէն Խաչակրաց ժամանակ եւ անոր եկեղեցիները.

Խաչակիրները Ցոպպէն գրաւելին առանց կռուելու. բայց
քաղաքը քանդուած էր. 1100էն սկսեալ Կոտըֆրայ Տը Պույեան՝
Բիղայի ծովային զինուորներուն օգնութեամբ վերաշինեց Ցոպ-
պէի պարիսպները։ Ցոպպէն դարձաւ եպիսկոպոսական քաղաք

մը եւ կոմսութեան մը մայրաքաղաքը. եւ անոր նախ մէկ քառորդը, և յետոյ ամբողջութեամբ յանձնացուեցաւ Ս. Գերեզմանի: Կոտրփրայ արշաւանքի մը ժամանակ հիւանդանալով՝ փոխադրուեցաւ Յոպպէ և բնակեցաւ ուխտաւորներու հիւրանոցին մէջ, բայց այս բնակարանին մէջ հանգիստ չէր, նաւահանգիստի ծովային զինուորները այնքան աղմուկ կը հանէին որ՝ կոտրփրայ անհանգիստ մնալով՝ սոխպուեցաւ փոխադրուիլ Երուսաղէմ, ուր իսկոյն մեռաւ:

1102ին Պաղտին Ա.ի կինը պաշարուեցաւ Յոպպէի մէջ, 1103ին, 1106ին, 1108ին նոր պաշարումներ տեղի ունեցան, բայց անոնք վերցան ծովէն եկած օգնութիւններուն շնորհիւ:

Յոպպէն՝ 1187ին Սարակինոսներէն գրաւուած եւ քանդուած ըլլալով՝ 1192ին քրիստոնէից յանձնուեցաւ Սալահէտտինի եւ Ռիչարդ Թագաւորին միջեւ կնքուած զինադադարին գօրութեամբ:

1197ին Հենրիկոս Շանբանեցի ողբերգական վախճանին շնորհիւ Իսլամները դարձեալ գրաւեցին զայն. 1228ին Քրիստոնեաները վերստացան քաղաքը և հոն կառուցին զօրաւոր ամրոց մը:

1251ին Ս. Լուդովիկոս հոն բնակեցաւ Թագուհիին հետ, որ հոն ծնաւ Պլանշ Տը Ֆրանսը, մինչ Թագաւորը կ'զբաղէր 24 աշտարակներով նոր պարիսպներ շինելով:

Այս պարիսպներ չկրցին ազատել քաղաքը. 1268ին Պիպարս յարձակեցաւ անոր վրայ. կոտորեց բնակիչները, քանդեց չէնքերը, բայց անվնաս թողուց փայտակերտները և մարմարները Փահիրէի Հասանլէհ թաղին Տահէրի մզկիթին զարդարանքին համար:

Յոպպէի ամենագեղեցիկ յիշատակարանաց մէջ նշանաւոր էր Ս. Պետրոսի հին պազիլիքան զոր Պաղտին Թագաւոր և Էվրարմար պատրիարքը Ս. Գերեզմանին ընծայեցին: 1268ին իր կարգին Ամորի Թագաւորը Ս. Նիկողայոսի եկեղեցին ընծայեց Ս. Գերեզմանին: Վաւերագիրները կը յիշեն նաև Ս. Աստուածածնի և Ս. Յովհաննի եկեղեցիները: Ս. Լուդովիկոս իր ծախքովը գեղեցիկ եկեղեցի մը շինել տուաւ Լատինաց համար:

1600ին հին քաղաքէն միայն երկու աշտարակ մնացած էին ծովեզերքի բարձրութեանց վրայ:

Ժ.Ր. դարուն Յոպպէի աւերակները Եաֆայի արդի քաղաքին շինութեան գործածուած են:

Ալտըրսըն 1843ին չհնեց անոր յատակագիծը: Clermont-Ganneau Եաֆայի մէջ գտած է բազմաթիւ կարեւոր արձանագրութիւններ: Այս վերջիններէն մին է եպիսկոպոսի քանդակազարդ ճերմակ մարմարէ տապանաքարը. որմէ կը մնայ գլուխը և գաւազանը առուոյտի ձեւով աղեղի մը մէջ ագուցուած կեռճանաւոր (à crochets) խոյակներու վրայ դրուած: Խիստ գեղեցիկ հրեշտակ մը կը խնկարկէ հանգուցեալը. և տապանաքարին մնացորդը 1258 թուականը պահած է, բայց ոչ, դժբախտաբար, եպիսկոպոսին անունը:

Ուրիշ կոտրած յիշատակարան մը. ըստ երեւոյթին, կը յիշէ Ֆրէտէրիկ Բ. կայսրը որ Եաֆայի մէջ բնակած է:

Այս քաղաքին մէջ, մինչև ԺԹ. դար ցոյց կը տրուէր աւերակները Ս. Պետրոս եկեղեցիին զոր կը յիշեն ուխտաւորները որ կը թուէր թէ, կիսաթոլոր պատուհաններով բոմանական չինուածք մ'էր, տեսանելի Ժ.Ս. դարու վիմագրութեան մը վրայ:

Ստոյգ սխալ մը հետեւանքով է որ Clermont-Ganneau իբր Եաֆայի մէջ ուրուագծուած հրատարակած է ուս մը (console) որ՝ իրականին մէջ, Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարին ճակատի կողմէն Գողգոթայի գաւիթին զարդարանքներուն մասը կը կազմէ (Տե՛ս Camille Enlart. Les Monuments des Croisés dans le Royaume de Jérusalem, Հտր. Բ. էջ 134–6):

3. Սիմոն խաղախորդի տունը, Ս. Պետրոսի եկեղեցիին աւերակներուն գիւտը եւ Տաբիդայի տունը.

Այն քրիստոնեաները որ պատեհութիւն կ'ունենան այցելելու այս քաղաքը, ցոյց կը տրուի անոնց՝ հարաւային պարսպին մնացորդէն և փարոսէն ոչ հեռի փոքր մզկիթ մը՝ որուն համար կ'ըսուի թէ Սիմոն խաղախորդին տան տեղն է: Միջին դարու յիշատակարանները ցոյց կու տան թէ Ս. Պետրոսի եկեղեցին կը պտնուէր քաղաքին հարաւային կողմը եւ հարաւ–արեւմուտքի անկիւնը: Վերջին ժամանակներս փոքր մզկիթին յարակից չէնքի մը պատը, հարաւի կողմէն, փլչելով՝ երեցան եկեղեցիի մը երկու կողակները և քանի մը պատերու մասեր, միջին դարու շինուածքով. այս գիւտը կը հաստատէ թէ սոյն եկեղեցիին ա-

ձանդուխթիւնը չարունակութիւնն է ժ-ի. դարու աւանդութեան։ Այլ Այծմնիկին տան տեղը, եթէ երբեք ծանօթ էր, այժմ մոռցուած կը թուի։ Սակայն 3–4 դար յառաջ, քաղաքէն մէկ ու կէս քիլոմէթր հեռի, պարտէզներուն մէջ, դէպի արեւելք, Սպուն Նապպուտ ըսուած աղբիւրէն կէս քիլոմէթր հեռի, ցոյց կը տրուէր այն զրեզմանական այրը՝ուր թաղուած էր այս բարեպաշտ կինը։ Այս այրը հողաքարի մէջ փորուած սենեակ մ'է, ուր կարելի է իջնել վեց կամ եօթը աստիճան սանդուխով մը։ Ան զարդարուած է մոզայիքով և երեք կողմերէն զրեզմանատեղիներ բացուած են։ Այս զրեզմանին սեպհականատէր Ռուսերը մատուռի վերածած են զայն փոքրիկ գմբէթով մը։ Նոյն զրեզմաններուն իսկութիւնը երաշխաւորելու և անոնց վաւերականութեան վստահելու համար տեղապրական ստոյգ տուիքները շատ տակաւ են և վաւերագիրները շատ հաղուագիւտ։ Այծմնիկին նուիրուած եկեղեցի մը կառուցուած է անոր զրեզմանէն ոչ հեռի։ Ոմանք կը կարծեն, բայց առանց ապացոյցի, թէ այս կնոջ բնակարանը կը գտնուէր միևնոյն տեղը։ (Տե՛ս Vigouroux, Dict. de la Bible, բառն Joppé, էջ *1640*)։

4. Ս. Նիկողայոս վանքի ծագումը.

Քրիստոնեայ հաւատացեալները՝ շատ հին դարերէ սկսեալ բարեպաշտ սովորութիւն մը ունեցած են, և մինչև հիմակ ալ ունին, ուխտաւորութեամբ երուսաղէմ այցելել Տնօրինական Ս. Տեղեաց երկրպագելու և պատուելու Փրկչին յիշատակները։ Ուխտաւորները յաճախ շատ հեռի տեղերէ կու գային՝ արհամարհելով ծովու և ցամաքի վտանգները. հին ժամանակները, մանաւանդ պատերազմի միջոցին, ծովահէնները կը յարձակէին ուխտաւորական նաւերու վրայ, կը կողոպտէին զանոնք, շատ անգամ կռուի բռնուելով՝ անոնց մէջ մահեր ալ կը պատահէին. այս վտանգներէն զատ երթեւեկի ալեկոծութիւններու պատճառաւ ծովամոյն եղողներ ալ կը գտնուէին. այդ երկու վտանգներուն մասին մեր ձեռագրաց մէջ յիշատակութիւններ չեն պակսիր, նոյն իսկ քարի վրայ քանդակուած յիշատակարաններ մինչև ցայսօր պահուած կը մնան Ս. Յակոբեանց վանքին մէջ. լինչպէս Գրիգոր Շղթայակիր պատրիարքին ձեռքով պատրաստուածը։ Նոյն ցաւալի դէպքերուն առանց մանրամասնութիւնները յիշելու, միայն դաղափար մը տալու համար, մէջ կը բերենք ժ-ի. դարուն Անկլո–Սաքսոն վաճառականի մը՝ Saewulfի Ուղեգրութենէն հակիրճ հատուած մը՝ որ կը նկարագրէ ուխտաւորներու Եաֆայի առջև պատահած սոսկալի մէկ ալեկոծութիւնը և նոյն քաղաքէն Երուսաղէմ երթևեկող ուխտաւորներուն կրած տառապանքները։ . . . . Saewulf Պրէնտիզիէն 13 չարաթի մէջ կը հասնի Եաֆա. այն դիշերը՝ որ ցամաք ելնել կը պատրաստուէր, Եաֆայի առջև սոսկալի ալեկոծութեան մը կը բռնուի. աննկարագրելի էր փոթորիկին սաստկութիւնը. ալիքները լեռան պէս կը բարձրանան և կը տարածուին ամէն կողմ, 30 նաւերէն 27 նաւերը սաստիկ հովէն իրար զարնուելով կը փշրուին և կը խորտակուին. 1000 է աւելի անձեր ծովամոյն կ'ըլլան, և միւս օրը ալիքները ծովամոյն սրանց և կանանց դիակները ցամաք կը նետեն. Saewulf շատ դժուարութեամբ մահուանէ կ'ազատի և երբ ցամաք կ'ելնէ գոհութիւն կը մատուցանէ Աստուծոյ։ Ան հետևեալ օրը ուխտաւորական խումբի մը հետ միացած Եաֆայէն ճամբայ կ'ելլէ դէպի Երուսաղէմ, վտանգաւոր և ժայռոտ լեռներէ կ'անցնի. Սակաղոն տակաւին եգիպտացւոց ձեռքն էր. Աշակերք թէև կ'իշխէին Երուսաղէմի և շրջակայից, բայց լատին իշխանութիւնները չէին կրցած ուխտաւորաց ճանապարհները ապահովել և փրկել զանոնք կողոպուտէ և սպանութիւններէ. լեռնոտ ճանապարհներուն եղերքները աւազակները գիշեր ցերեկ դարանակալ կ'սպասէին պահուըտելով քարայրներու մէջ. այնպէս որ յայտնի չէր ըլլար անոնց ներկայութիւնը. կողոպտածնին կ'սպաննէին. այնպէս որ ճամբու եղերքներուն վրայ դիակները ցիրուցան անթաղ կը մնային. կային որ ծարաւէ եւ տանջաւոր ճանապարհէն և ողջամբ կը հասնի Երուսաղէմ։ Saewulf ի վերաբերեալ այս խօսքերը ճշմարիտ պատկերն են ուխտաւորներուն պարբերաբար պատահած ծովու և ցամաքի վտանգներուն. և այս վիճակը տևած է ժ-ի. դարէն շատ աւելի կանուխ ժամանակներէ սկսեալ մինչև ժ-ի. դարու վերջերը, երբ կ'սպահովուին ցամաքի ճանապարհները Եաֆայէն – Երուսաղէմ երկաթուղային գիծերու շինութեամբ (*1892*). ծովահէններու արշաւանքներ ալ շատ նուազած են։

գելքով և չոգենաւներու կատարելագործութեամբ. պատմութեան նայելով՝ ուխտաւորական կեանքը շատ անգամ տաժանք մ'էր և լուրջ վտանգ մը: Ս. Յակոբեանց Միաբանութիւնը բան կարելւոյն ուխտաւորաց նեղութիւնները մեղմացնելու համար ճանապարհորդութեան դիւրութիւններ առած է, յետոյ ցամաքի ճանապարհին վրայ, ինչպէս նաև Պաղեստինի ծովեզերեայ քաղաքներու մէջ ուր ուխտաւորք ցամաք կ'ելլէին, Հոգեառն անունով կայաններ հաստատած է հանգստաւէտ սենեակներով ու կարասիներով: Այդ կարգի կայաններ կային Հալէպ, Դամասկոս, Գազա, Ռեմլէ և ուրիշ տեղեր: Եաֆայի Հոգեառնը կարևոր կայաններէն էր. ան՝ կը թուի ուխտաւորական նախնի թուականներէն սկսեալ հաստատուած պէտք է ըլլայ, քանի որ ուխտաւորաց մեծագոյն մասը ծովի ճանապարհով կը հասնէր Երուսաղէմ:

Ս. Նիկողայոս վանքին հիմնարկութեան թուականը մութի մէջ է. յայտնի է թէ ան հին է, բայց պատմութիւնը կը լռէ անոր ծագման մասին: Ս. Աթոռոյ միաբան Բառնաբաս վրդ. Դանձակեցի իր «Յաջորդութիւն Պատրիարգաց Երուսաղեմի» գիրքին մէջ (էջ 32) Աբրահամ Ս. Պատրիարքի համար հետևեալ տողերը ունի. «զսա յիշէ ևս այլ պատմիչ արաբացի Շէյխ իւլ Համպալի ասացեալ, որ ի ճանապարհորդութեան Շէյխի ուրուն Մէքքէցւոյ գրէ այսպէս. «Եկեալ Շէյխին ի Յոպպէ, և իջևանեալ ի վանս Հայոց յաւուրս պատրիարքի նոցա Աբրահամու. զի վանքն Յոպպէու ընդ իշխանութեամբ նորին Աբրահամու էր»: Այս Աբրահամ Ս. այն պատրիարքն է որ Իօմէր և Ալի ամիրապետներէն հրովարտակ ստացած էր և կ'ապրէր 637ին Իօմէրի Երուսաղէմը գրաւման ժամանակ. Բառնաբաս վրդ. ի վերև նշանակուած Շէյխ Համպալի հատուածին մէջ կը յիշատակուի Աբրահամ առաջինը. ո՞վ էր Համպալի պատմիչը որուն նոյն հատուածին իմաստէն կը հասկցուի Յոպպէի վանքին հնութիւնը որ կը բարձրանայ մինչև Ի. դար: Համպալի անունն է այն իսլամ աւանդապաշտ գրողին զոր հիմնած էր Ահմեդ Իպն Համպալ (* 855) և որուն հետևողները կը կոչուէին Համպալի. պատմիչին անունն է Միւճիր էտ-տին էլ Համպալի (* 1521), որ ունի էլ իւնս ել ճեհիլ անուամբ, Երուսաղէմի և Քեփրոնի վրայ պատմական գիրք մը. ահա նոյն հեղինակն է որ Ի. դարուն Մէքքէցի Շէյխի մը ճամբորդութեան վրայ գրած ժամանակ կը յիշէ նոյն Շէյխին

Յոպպէի վանքին մէջ հիւրընկալուիլը և նոյն վանքին Աբրահամու իշխանութեան տակ ըլլալը: Բառնաբաս վրդ. նոյն հատուածին աղբիւրը յ. յիշատակարան կոչած է այն գրուածքը որ կը պարունակէ Երուսաղէմացի ազգային մը ձեռքով հաւաքուած արաբական յիշատակարանները և պատմութիւնները զոր օգտագործած է իր գիրքին մէջ. նոյն յիշատակարանը այժմ մէջտեղ չէ. կը կարծուի որ Միւճիր էտ-տին էլ Համպալիի գրած Մէքքէցի Շէյխին ճանապարհորդութեան վերաբերեալ հատուածը առնուած է նոյն յիշատակարանէն: Շատ աւելի վերջ, 1694ին, ուրիշ վկայութիւն մը Յոպպէի վանքի նկարագրութեան համար: Սրբացի պատմիչ և բանաստեղծ մը Ասյս իւլ Ղանի Նապլուսի կ'ուղևորի Դամասկոս, Եգիպտոս և Արաբիա և ապա 1694ին կը հասնի Յոպպէ և կ'իջևանի Հայոց վանքը, ուր ինքը և իր ընկերները մեծ ընդունելութիւն կը գտնեն Հայոց միաբանութենէն. ան մեծ գովութեամբ կը նկարագրէ Յոպպէի վանքը իր պատմութեան մէջ. կը յիշէ յետոյ վանքին հաստատուն չինուածքը, կը յարէ թէ ան ամուր բերդի մը նման պարիսպներով ամրացած է և ունի աշտարակներ ևս. Յոպպէի մէջ ամենէն ամրացեալ տեղը Հայոց վանքն է: Իրեն և ընկերաց համար արուած հիւրընկալութիւնը ու պատիւը մեծ ուրախութիւն պատճառած է: Ան յետոյ կը գրէ ոտանաւոր քերթուած մը Յոպպէի վանքը մաքսատան դէմ չինուած ծովահայեաց և բարձրադիր քարուկիր չէնք մ'է, հաստակառոյց պատերով և առուն կառուցուածքով. այժմ չէնքը երկյարկանի է. ստորին յարկը կը բովանդակէ Տեսչարանը տեսչին ննջարանով, միւս յարկը կը բովանդակէ բանաց սենեակները, սեղանատունը եւ խոհանոցը ու ջրհոր մը. իսկ վերի յարկն ունի ընդարձակ եւ կահաւորեալ սրահ մը՝ Պատրիարքարան անուամբ, յարակից ճաշարանով և ննջարանով: Վանքը ունի փոքր եւ վայելուչ եկեղեցի մը յանուն Ս. Նիկողայոսի. կան 20է աւելի ուխտաւորաց սենեակներ, եւ փոքրիկ դպրոց մը:

5. Ս. Նիկողայոս վանքի ձիճարարութիւնները.

Այս վանքին մէջ աւելի կանուխ կատարուած չինարարութիւնները մեզ անծանօթ կը մնան: Եղիազար պատրիարք 1663ին Ծոպպէի մէջ ուրիշ տուներու եւ տեղերու հետ կը գնէ Դազայի կառավարիչին չորս մթերանոցները, որ մօտ էին այն տեղւոյն, ուր Ս. Պետրոս առաքեալ չորս ծայրերէն կախուած կտաւին տեսիլը ունեցաւ. այս տեղ կը գտնուէր նաեւ Սիմոն խաղախոդին տան մէկ մասը, որ ի հնումն եկեղեցիի վերածուած էր. այս մթերանոցներուն տեղը կանուխէն հայոց գերեզմանատուն էր; ինչպէս ցոյց կու տան հնձանիները. եկեղեցիին մէկ մասը մզկիթ եղած է: Այս չինութեան մասին աւելի որոշ կը գրէ Հաննէ (Պատմ. Երուսաղէմի, էջ 66) «Աստ գոյ վանք մի ազգիս Հայոց, գեղեցիկ իշխան տէրունական ուխտաւորաց, եւ ունի հոգեւոր մի պայծառ լուսամտօք, և է մեծ մխիթարութիւն մեզ: Ի միջի սորա չինեալ էին փայտաչէն կամարք ցածք յեղիւազար Հոգեւոր տիրէն հեղինակէ այսմ վանից, և էին յոյժ հնացեալք»:

1717ին Գրիգոր Շղթայակիր և Յովհաննէս Կոլոտ պատրիարքները ազգայիններէ հաւաքուած գումարով Ծոպպէի մէջ կը գնեն երեք մթերանոցներ և անոնց վրայի սենեակները զոր կը կցեն վանքին. կը գնեն նաեւ ծովեզերքը, վանքին դիմաց գտնուած հացի փուռն զոր յետոյ ուրիշներ կը յափշտակեն:

1727ին ժամանակին երևելիներէն Սեղբեսարոս կամ Սեղբոս ամիրա Երևանեցի, Ակնցի (1754 փետր. 5) ուխտի կու գայ Երուսաղէմ և չատ մը կարևոր յիշատակներ կը թողու Ս. Յակոբեանց վանքին մէջ եւ Սուրբ Տեղերուն. ամիրան Ծոպպէի մէջ ծախու կ'առնէ նաեւ պարտէզ մը հայոց գերեզմանատան մօտիկ. քաղաքին մէջ ալ իշխան մը կը չինէ, ու անոր տարեկան վարձքը վանքին պէտքերուն կը յատկացնէ, ինչպէս կը ցուցնէ նոյն իշխանի բարեւորին վրայի հետեւեալ արձանագրութիւնը (Տե'ս Սաւալանեանց, Ք. Հար. էջ 710). «Ծիշատակ է խաւսիոգի Իմիւնէ որդի մահտեսի Սեղբեստրոսին, որ յիւր արդեանցն արար զսուսա յիշատակ Ս. Յակոբայ, Ս. Յարութեան, Ս. Ծննդեան, Ս. Աստուածածնի, Ս. Փրկչի, Ս. Հրեշտակապետու վանքերուն, այսու պայմանաւ որ զիւր հին եւ նոր ննջեցեալս ամեն օր անուան արդի*

պատարագին յիշատակեն, եւ եկած վարձեն ա. ա. փարա ժամուց ժամատարներուն, ա. ա. փարա եւս իղոգին վանքերուն, իսկ զաւետորդն՝ խանին եւ սպասաւորին մհերամերիի խարճին եւ Ս. Յակոբայ միաբանիցն հացագին տան: Ոյ որ զայս իւր կամաւոր յիշատակս ջրէ՝ Աստուած զինքն ի կենաց զրոց ջնջէ: Ռճ (= 1651)». այս թուականը սխալ գրուած է, պէտք է ըլլայ 1727: Ցիշեալ պարտէզը ու իշխանը մինչև այսօր մնացած են անեղծ ու անոնց եկամուտները յատկացուած են իրենց նպատակին:

Հաննէ (անդ, էջ 66) Գրիգոր Շղթայակիրի 1727ի մէկ չինարարութիւնը կը յիշատակէ «... հարաւային կողմն վանից որ է ի ներքոյ բերդին՝ ի փուլ եկեալ կործանեցաւ (1725) եւ փլոյց զփայտեայ փտեալ կամարան եւ եղեւ մեծ նեղութիւն ազգիս մերոյ: Որ եւ ողորմութեամբն Աստուծոյ ի նոյն թուին երջանիկ պատրիարքն սրբոյ քաղաքիս Երուսաղէմի Գրիգոր Աստուածատուրն վարդապետն՝ մեծ աշխատանօք հրաման առեալ ի քաղաքապետաց եւ ի դատաւորաց եւ ի մեծամեծաց քաղաքիս, նոր ի հիմանէ չինեաց զուռթ կամարս սրբատաշ քարիւ բարձր, լայն եւ պայծառ: Որ եւ ի վերայ տանեաց այսց կամարաց կառոյց փայտեայ կամարս ըստ առաջին հին չինուածոյն եւ ա'յլ գեղեցիկ: Կանգնեաց եւս սեղան յանուն սրբոյն Նիկողայոսի: Ի ՌճՀԶ թուին գնալով ինքեան անդ՝ հրաւիրեաւ ի միւս ազգաց ի պատիւ իւրոյ սրբութեան: Ուստի եւ նուաստս ընդ նմա գոլով հանդերձ միաբան եղբարբք, ականատես եղէ օրհնութեան նորա կերա եկեղեցւոյն եւ օծման սուրբ սեղանոյն»: Հաննէի այս վերջին տողերը հարկ կ'ըլլայ լուսաբանել թէ Ս. Նիկողայոս եկեղեցին արդէն գոյութիւն ունէր նախ քան Շղթայակիր, հետեւաբար կատարուածը լոկ նորոգութիւն մ'էր, որուն օրհնութիւնը և օծումն ալ անհրաժեշտ էր. 1683ի Սարգիս վրդ.ի երուսաղէմի ձեռագիր պատմութիւնը ոչ միայն կը յիշատակէ Ս. Նիկողայոսի եկեղեցւոյն գոյութիւնը, այլ նաև աւագ սեղանէն զատ կը ծանօթագրէ անոր երկու կողմի փոքր սեղանները՝ Ս. Պետրոս և Ս. Յակոբ անուամբ:

1765ին Գանձակեցի կարապետ պատրիարք Ծոպպէի մէջ 5000 դահեկանով կը գնէ Սեղբեսարոս ամիրային սեպհական կալուածները՝ երկու տուն, երեք վաճառանոց և երկու հրապարակ, որոնց վարձքերը կ'ստանար Սեղբեսարոսի Մերկեր որդին-

քայց որովհետեւ այս պատճառաւ խնդիրներ եւ վէճեր պակաս չէին ըլլար իր և Ս. Աթոռին մէջև, ուստի Կ. Պոլսի պատրիարքին (Գրիգոր վրդ. Պասմաճեանի) մէջնորդութեամբ յետոյ Մերկերէն ծախու կ'առնուին յիշեալ կալուածները (Տե'ս անդ, Բ. Հատ. էջ 783)։

1824ին Զմիւռնիացի Մուրատ Աղա և կինը Հեղինէ յիշատակներ կը հաստատեն Ս. Աթոռոյ մէջ. թէեւ Սաւալանեանց իր Պատմութեան մէջ (էջ 948) հակառակը կ'արձանագրէ յիշելով թէ՝ Մուրատ վնասակար եղած է Ս. Աթոռոյ, բայց անոր գործին պատուական թարգմանիչը արդարութեան պարտք մը հատուցանելու համար ծանօթութեամբ մը մէջ կը բերէ անոր յիշատակները, որոնց մէջ Յոպպէի վանքին ի նպաստ յիշեալը նուիրած է 1°. Մեծ պարտէզ մը Յոպպէէն դուրս, մէջի պղեղիկ տուներով, ջրհորներով, ծառատունկերով և ընդարձակ գետինով մը. (այս պարտէզը յետոյ Զմիւռնիացի Յովհաննէս պատրիարք իսրխիսեալի օրէնքով փոխանակած է ուրիշ տուներու եւ կրպակներու հետ Երուսաղէմի մէջ). 2°. Հայոց Յոպպէի գերեզմանատունը յարակից ընդարձակ պարտէզով ու ծառատունկերով. 3°. Տուն մը նաև Յոպպէի մէջ, որ կը կոչուէր Ջրաւիի տուն (անդ, էջ 958-9)։

1838ին Յոպպէի և շրջակայից մէջ կը ճարակի ժանտախտի հիւանդութիւնը. սուլթան Մահմուտ հիւանդութեան առաջքը առնելու համար իր տէրութեան բոլոր սահմաններուն մէջ արգելանոցներ հաստատել կը հրամայէ, ըստ այսմ արգելանոց մ'ալ կը պատրաստուի Յոպպէի մէջ քրիստոնեաներու հին գերեզմանատան տեղին վրայ, սակայն ուխտաւորներն ու ճամբորդները կը դժկամակին մտնել հոն. ասոր վրայ առողջապահական տեսուչը կ'առաջարկէ երեք աղգերուն՝ որ ամէն մէկը իր գերեզմանատան մէջ մէյ մէկ արգելանոց շինէ և իր ծախքով կառավարէ զայն։ Այն ժամանակ Յոպպէի մեր վանքին տեսուչն էր Մեսրոպ վրդ. Տիգրանակերտցի որ նորոգել կու տայ արդէն շինուած արգելանոցը (3 օգոստ. 1838) և այնուհետեւ ուխտաւորները փոխանակ Պէյրութի, Յոպպէի ազգային արգելանոցին մէջ կ'անցընեն զգուշութեան քառասուն օրերը։ Երբ իսպառ կը դադրի մահացու ախտը, Օսմանեան տէրութիւնը պատրուակով մը կը գրաւէ Հայոց Յոպպէի արգելանոցը։ Թէև տէրութիւնը կը հաւանի արգելանոցը ազգին դարձնել, սակայն հակառակ դիմումներու Յովհաննէս պատրիարքի կողմէն ու վաւերագիրներու եւ հրովարտակներու, պետական պաշտօնեաներէն ոմանց յարուցած արգելքներուն պատճառաւ անկատար կը մնայ խնդիրը (անդ, էջ 1006)։ 1840ին Մեսրոպ վրդ. նորոգած է նաև Յոպպէի վանքը և շինած է տեսչարանի վրայի յարկը՝ որ այժմ կը կոչուի պատրիարքարան. այս մասին կը գտնուի հետեւեալ յիշատակարանը սանդուխներու վերի աստիճանի կամարին վրայ. «Ի պատրիարքութեան Տ. Գաբրիէլ արքեպիսկոպոսին, ի վայելումն և յիշատակ ազգիս Հայոց. Յոպպէի Ս. Նիկողայոսի վանքն նորոգեցաւ և դրանէ մինչեւ ցվեր պղեղիկ սենեկօք. ձեռամբ եւ աշխատութեամբ Տիգրանակերտցի Մեսրոբ վրդ. ըէխիէին, յամի Տեառն 1840»։

Յոպպէի վանքին գլխաւոր շինարարութիւնները յիշելէ յետոյ պարտք կ'ըզգամ յիշատակել հոս ամբողջ Յոպպէ քաղաքին նաև բնակչի պարտէզներուն օգտակար մէկ գործը, զոր կատարած է անուն անյայտ Ս. Յակոբեանց միաբան մը, որ Ժէ. դարու ընկերը Հնդկաստանի և Չինաստանի Ս. Աթոռոյ նուիրակ կարգուած ըլլալով՝ վերադարձին իրեն հետ բերած է «Շամմութի» կոչուած խոշոր նարինջի պատուաստը։ Հայ նուիրակին այդ պատուաստին շնորհիւ է որ աղնուացած եւ հիւթեղցած է Յոպպէի նարինջը։ Անոր պարտէզները կ'արտադրեն խոշոր և համեղ այն պտուղը՝ որմէ ամէն տարի հազարաւոր անտուկներով կ'արտադրուի արտասահման եւ երկրին ամէն կողմերը։ Այս ծանօթութիւնը ինձ հաղորդած է Յոպպէաբնակ գիտնական Տիար Ֆրէթիւնը։

Մուրատ՝ որ իր հանգուցեալ հօրեղբօրմէ լսած է այս տէրութիւնը, զոր հաւանաբար ան քաղած է արաբերէն տեսակէտ մը։

6. Դէպքեր՝ որ տեղի ունեցած են Ս. Նիկողայոս վանքին մէջ.

1772ի ժամանակ Օսմ. պետութիւնը պատերազմ ունէր Ռուսաց դէմ. նոյն ժամանակ Եգիպտոսի Մէմլուքներէն մին՝ Ալի Պէկ կ'ապստամբի ու կը տիրէ Եգիպտոսի, Ասորւքի և Արաբիոյ և յետոյ միանալով Աքքայի Շեյխ Դահիր Օմարի հետ կը յարձա-

կի Պաղեստինի վրայ. կը գրաւէ Գազան, Ռեմլէն և Լիւդը (1772). կը պաշարէ Ջոպպէն եօթն ամիս և վեց օրը մինչև որ յուսահատելով անձնատուր կ'ըլլան բնակիչները: Ալի Պէկ ուզեց երուսաղէմի ալ տիրել, բայց չյաջողեցաւ. անոր բանակը կը խորտակուի իր քեռայրին՝ Մէհմէտ Պէկ Ապու Տահապի դաւադրութեամբ. ինք ալ կը վիրաւորուի ու կը մեռնի, և Եգիպտոսի իշխանութիւնը կ'անցնի Մէհմէտ Պէկին: Վերջինս իր կարգին 1775ին կը յարձակի Ջոպպէի վրայ ու կարճ պաշարումէ մը յետոյ կը գրաւէ քաղաքը ու բնակիչներէն չատերը կը կոտորէ և կը կողոպտէ վանքերը: Ս. Նիկողայոսի վանքն ալ զերծ չի մնար անոր ու Մղրըպի զինուորաց խժդժութենէն, և կը պարտաւորուի երկու հարիւր քսակէն աւելի տուգանք վճարել: Իսկ տեղացի հայ ժողովուրդն ու միաբանները և ուխտաւորները նչաւակ կ'ըլլան Մղրըպի զօրքերուն անգթութեան: Անգամ մը քաղաքէն դուրս տասնը հինգ, կամ, ըստ Երուսաղէմայի տիրացու Սիրաքի, տասն և ինը հայեր կ'սպաննուին, որոնց մէջ յանուանէ կը յիշատակուին Ս. Աթոռի թարգմանները մհտ. Մկրտիչ և մհտ. Աւադ, Վարդան, Սահակ և Գէորգ վարդապետներ. և Ս. Յակորի միաբաններէն մհտ. Գէորգ և մհտ. Նիկողայոս, և քանի մը ուխտաւորներ: Ջոպպէցի հայ մանուկներ գերի ինկած ըլլալով՝ զանոնք պատրիարքը դրամով կ'ազատէ (Սաւալան, Բ. Հտր. 791–95): Կ. Պոլսեցի Գալուստ սարկաւագ նոյն ժամանակ ուխտի եկած ու Ապու Տահապի արարքներուն ականատես եղած էր. ձեռագիր յիշատակարաններուն մէջ ան հետեւեալը կը հաղորդէ. «Ապու Տահապ 1775ին գրաւելով Ջոպպէն կը յարձակի ժողովուրդին և վանքերուն վրայ. կը կոտորէ բնակիչներն ու կրօնաւորները, և կը թալանէ վանքերը: Ջոպպէի ծերունիները աւանդաբար կը պատմեն թէ նոյն դէպքերուն միջոցին Մինասվրդ. պատարագած ժամանակ սեղանին առջև կը գլխատեն եւ սեղանը կը կործանեն. վանքին տեսուչը թէև ջրհորին մէջ պահուըտած է, բայց մահուանէ զերծ չէ մնացած, վասն զի հոն սպաննեցին զանիկա: Կ'աւանդուի նաև թէ այս դէպքէն տասն օր յետոյ Ապու Տահապ կը մեռնի Ջոպպէի մէջ»: Ջեռագիրները կը գրեն նաև թէ եգիպտացւոց զինուորները Ջոպպէն աւերակ դարձուցին, և քաղաքէն դուրս վեց միաբան և վեց ուխտաւոր նահատակեցին (Ա. եպս. Ջոլհանճեան, Բ. Հտր. էջ 106–7):

Պատմութենէն յայտնի է Նաբոլէոն Պոնապարտի արշաւանքը դէպի Եգիպտոս, որուն գրաւումէն յետոյ ան յարձակեցաւ Սիւրիոյ կողմերը. էլ–Արիշ և Գազայի տիրելէ վերջ պաշարեց Եաֆան և յարձակմամբ առաւ քաղաքը. երեսուն ժամ կողոպուտի մատնեց զայն, և վեց հազար թուրք բանտարկեալներ կոտորել տուաւ, և քաղաքի մթերանոցներուն մէջ գտնուած պաշարով պարէնաւորեց իր բանակը՝ որ ժանտախտով վարակուեցաւ: Նաբոլէոն քալեց Ակքեայի վրայ, ուր կ'իշխէր հին Մէմլուք մը՝ Ճէզար Փաչա, անգթութեամբը անուանի կառավարիչ մը. ան ներքուստ և արտաքուստ զօրացուց քաղաքը. և Նաբոլէոնի բուռն և բազմիցս յարձակումները չկրցին տկարացնել պաշարեալներու ընդդիմութիւնը. ծովէն կը պաշտպանուէր անգղիացիներէն և Թուրքերէն. ցամաքի կողմէն ալ Թրքական նոր ոյժեր հասնելով Ճէզար սաստկացուց իր ընդդիմութիւնը. Նաբոլէոն սաիպուեցաւ եգիպտոս քաշուիլ ու քարուքանդ ըրաւ Ակքեան. ան կորնչուց իր զօրաց կարևոր մէկ մասը պատերազմի մէջ և ժանտախտին վարակումով: Ակքեայէ վերադարձին կործանեց Ջոպպէի պարիսպը, բնակիչները ենթարկեց զանազան նեղութիւններու և հարիւր քսակ արծաթ Հայոց վանքէն տուգանք պահանջեց. մոխիրի վերածեց բոլոր երևելի շէնքերը, որոնց մէջ կը գտնուէին Հայոց վանքին տուները և մթերանոցները: Նաբոլէոն Ջոպպէ գտնուած ժամանակ իր ժանտախտաւոր զինուորներուն համար վանքերը գործածեց իբր հիւանդանոց, ինչպէս նաև Հայոց վանքը: Աւանդութեամբ մինչև ցայսօր կը ցուցուի այն տեղը՝ ուր Նաբոլէոն կը հանգչէր երբ կ'այցելէր իր ժանտաւոր զինուորներուն: Գաղղիացի ուղևորք միշտ կ'այցելեն այդ տեղւոյն:

Գաղղիական բանակին մեկնումէն յետոյ, մեծ վեզիր Քէօր Եուսուֆ Փաչա հետապնդած է մեկնող բանակը, բայց ընդհարման ժամանակ պարտուած՝ ան վերադարձած է Ջոպպէ:

1800ին Պետրոս պատրիարք Ջոպպէ գնաց վանքին և ժողովրդեան թչուառութեան դարման գտնելու համար մեծ վեզիրէն՝ որուն սեղանաւորն էր և բանակին կ'ընկերանար Ակնցի Ջոփենց մհտ. Անտոն ամիրան, որուն միջամտութեան կը դիմէր պատրիարքը նպատակին հասնելու համար: Պատրիարքը այդ յուսով Ջոպպէ կ'սպասէր, բայց հիւանդանալով վախճանեցաւ և

մարմինը ամփոփուեցաւ հասարակաց գերեզմանատան մէջ. 1837 ին ալ անոր ոսկերոտին Ս. Նիկողայոս եկեղեցւոյն գաւիթը փոխադրուած է և տապանաքարին վրայ գրուած է հետեւեալը.

«Եւղոկիացի Սրբազան Պետրոս Պատրիարքն Երուսաղէմի ի ժամանակս պատերազմի Ֆրանսըզաց, յորժամ բանակն օսմանեան էր ի Յոպպէ. յառաւել նեղութենէն եկն առ հպարքոսն գըտանել այցելութիւն. որոյ հասեալ անդէն վախճանն հանգեաւ ի Տէր. որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ. ի թուին ՌՄԽԹ (= 1800) Յունիսի ԻԱ»:

Նոյն ժամանակները Յոպպէի և շրջակայից կառավարիչն էր Ասլ Մհրագ կոչուած անձը, որուն բռնութեանց և անիրաւութեանց նկատմամբ միշտ գանգատներ կ'ըլլային, ան չարունակ վանքերէն դրամ կը պահանջէր և 1800ին էր որ Հայոց վանքէն քառասուն քսակ արծաթ պահանջեց և ստացաւ. միւս կողմէն մեծ վէզիրը իր Պոլիս մեկնելուն առթիւ Հայոց վանքէն դրամ կը պահանջէր Անտոն Ամիրային միջոցաւ. վերջինս՝ որ կը հաստատէր վանքին չքաւոր ու կարօտ վիճակը. բայց ան կը պնդէր 50,000 դահեկանի վճարումը. վանքի վարիչները հազիւ կարողացան ծանր ոսկոսով վճարել պահանջուած գումարը:

Ապու Մէրագի անիրաւ պահանջներուն չափը այլևս անցած էր. ամբաստանութիւնները եղան թէ՛ կայսեր և թէ ձէզար փաշային՝ որ յԱքքա. Ապու Մէրագ որջացած էր ի Յոպպէ, ձէզարի կողմէն Իսմայիլ փաշա Յոպպէն պաշարեց և երկուատեք հրանօթի կռիւներով կը դղրդէին Սարոնի դաշտը: Այդ միջոցին էր որ Ապու Մէրագ վանքի տեսուչները իր մօտ կանչելով դրամ կը պահանջէր, մերժողները կը գանակոծէր ձեռքը գտնուած կացինով և մուրճով, այս կերպով Յոպպէի տեսուչ Ղազար վարդապետէն 120 քսակ արծաթ ստացաւ. այս բռնութիւնները աւելի ասստիկ էին քան Դաղղիացւոց բանակին տուած բռնութիւնները:

Յոպպէի այս պաշարման ժամանակ ասստկացաւ սովը. այնպէս որ քաղաքին բնակիչները ստիպուած էին ուտել դրաստի և անսուրբ կենդանիներու միսը. իսկ Ապու Մէրագ փոքր նաւակով մը իրեններով Բերիա հասաւ և անկէ ալ Տիբերիական:
Այս կերպով պաշարումը վերցաւ և ժողովուրդն ու վանքերն ալ ազատուեցան: Ապու Մէրագ Հայոց վանքէն 300 քսակէն աւելի արծաթ ստացած էր բռնութեամբ:

1804ին Ապու Մէրագ կը վերադառնայ Յոպպէ և ամէն ոք սարսափահար կը մնայ. ան դարձեալ կ'սկսի իր անիրաւ պահանջները. 200 քսակի փոխանակագիր մը կ'ստանայ Ղազար վրդ. էն Պոլսի փոխանորդին անուան. այս գումարը անբաւական համարելով՝ 100 քսակ ևս կ'աւելցնէ, ընդ ամէնն 300 քսակ. պատրիարքին ծանրագին ընծաներէն ու պարգևներէն զատ, 150 քսակ պատրաստ դրամ կ'ստանայ. և սպառնալիքով կ'ազդարարէ՝ որոնց որ պէտք է, չուտով Պոլիս գրել՝ վերոյիշեալ գումարը վաղընդվաղ վճարելու համար. հակառակ պարագային կը յոխորտայ քանդել վանքերը ու նեղել ժողովուրդը. միևնոյն խստութեամբ կը կողոպտէ ուխտաւորները: Բայց 1805ին, երբ Ապու Մէրագի փոխանակագիրները Պոլսէն անվճար ետ կը դառնան՝ այդքան դրամներու վճարումը անկարելի ըլլալուն համար, կ'սկսի չարչարել Յոպպէի վանականները ու դրամ կը պահանջէ անոնցմէ, միևնոյն կերպով կը վարուի նաև ուխտաւորներուն հետ: Վանքերու բոլոր տեսուչները փախան. միայն Յոպպէի տեսուչ Ղազար վարդապետ փախուստի հնարք չգտնելով՝ մատնուեցաւ բռնաւորին ձեռքը. ան գանակոծելէ ու խոչտանգելէ յետոյ 25,000 դահեկանի ծախեց զանիկա Տհի կոչուած զինուորներուն. Թէոդորոս պատրիարք այս ցաւալի լուրը առնելով փրկանաւորեց զանիկա. Ղազար վրդ. ալ պահապան զինուորներուն կաշառք տալով հազիւ կարողացաւ Երուսաղէմ փախչիլ:
Ապու Մէրագ ժամանակ մը ևս իր բռնութիւնները չարունակած է և փախած է Դամասկոսի կողմերը: Նամակագիր մը կ'ըսէ այս ղազրելի Ապու Մէրագի համար. «զի ոչ եթող տեղիս զոր ոչ աւերեաց՝ և ոչ զոք՝ զոր ոչ մատնեաց ի տուգանս, մինչև զկանայս և զմայրն իւր իսկ գլխովին»:

Հայ–Երուսաղէմի պատմիչներուն կողմէն Յոպպէի Ս. Նիկողայոս վանքին մէջ 1772–1805 պատահած վերոգրեալ քամիներէն դէպքերը համառօտելով՝ կը դիտենք որ՝ մասնաւորապէս 33 տարիներու այս չրջանին՝ նոյն վանքին տեսուչներն ու վանականները կատարեալ մարտիրոսութեան մը ենթարկուած՝ արիաբար կուրծք տուած են փրկել վանքն ու եկեղեցին տիրող բռնակուրծք տուած են փրկել վանքն ու եկեղեցին տիրող բռնաւորներու բզքտող ճիրաններէն՝ անտարակոյս աջակցութեամբ պատ. Միաբանութեան:

ԻԶ

Ս. ԳԷՈՐԳԻ ՎԱՆՔԸ ՌԵՄԼԷԻ ՄԷՋ

1. Ռեմլէն Արիմաթիան չէ.

Գիտենք թէ Յովսէփ Արիմաթացին կը յիշուի Աւետարանին մէջ, Մարկ. ԺԵ. 43. Ղուկ. ԻԳ. 51, և աշակերտ էր Յիսուսի, Յովհ. ԺԹ. 38, և ան էր որ մեր Տէրը Թաղեց իրեն յատուկ գերեզմանին մէջ։ Աւանդութիւնը և Հաչակիրներէն սկսեալ ուխտաւորներն և ճամբորդները կ'ըսեն թէ՝ Ռեմլէն՝ Յովսէփ Արիմաթացիին ծննդեան տեղն է։ Արիմաթեան, ըստ Ղուկասու, կոչուած է քաղաք Հրեից. Ռամահ կամ Ռամադան երբայեցերէնին յունարէնն է Արիմաթեան։ Եօթանասնից սովորաբար կը թարգմանէ զայն Ռամաթայիմ։ Արիմաթեան չատ գիտուններ կը նոյնացնեն Ռեմլէի հետ, որ Լիւդի հարաւային կողմը երեք քիլոմէթր է։

Ռեմլէն Յոպպէէն դէպի Երուսաղէմ և Եգիպտոսէն դէպի Դամասկոս տանող ճամբուն վրայ չինուած է և փոքր գիւղ մ'է։ Ինչպէս ակնարկեցինք վերև, կ'ըսուի թէ Ռեմլէն չինուած է հին Արիմաթեայ քաղաքին տեղը, և Յովսէփ Արիմաթացիին անունով ալ հաստատուած են սրբավայրեր և մատուռներ. բայց եթէ հաւատանք տրաբ մատենագիրներուն, մանաւորապէս Ալուլ Ֆէտային, ան հիմնուած է 716 ին Ալպ էլ–Մէլէքի որդի Սիւլէյմանի կողմէն, ինչպէս ասոնք ալ պիտի գրենք. և այս տեղեկութիւնը կը հաստատեն Տիւրացի Կիյեօմ և Մարինոս Սանուդոս։ Գիտուն մը՝ Ռոպինսըն կը հերքէ Ռեմլէի նոյնացումը Արիմաթայի հետ. անոր ըսածին նայելով հին յիշատակարանները ցոյց կու տան տեղ մը աւելի Լիւդի հիւսիսային–արեւելքը կամ արեւելքը քան թէ հարաւը։ Բաց ասոնք, կ'ըսէ ան. 1.— Ռեմլէի Արիմաթեայ աւանդութիւնը Թ. դարու ծագում ունի, աւելի հին ուխտաւորները, առանց անոր վրայ խօսելու, կը յիշեն Հրէական քաղաքները։ 2.— Ռեմլէն, ինչպէս վերև ըսինք, հին քա-

ղաքի մը չէ յաջորդած, այլ ըստ արաբ աչխարհագիրներուն Ը. դարուն հիմնուած է Ալպ էլ–Մէլէքի որդւոյն Սիւլէյմանէն։ 3.— Ռամահ և Ռեմլէհ բառերը ստուգաբանօրէն խօսելով՝ բոլորովին տարբեր են. Ռեմլէհ կը նշանակէ աւազ, և Ռամահ բարձրութիւն։ Այս առարկութիւնը ոմանք կը մերժեն։

Երուսաղէմի Աստուածաշնչական Դպրոցի ուսուցչապետ L. Heydet *Արիմաթիան կը նոյնացնէ* Rentis*ին հետ, որ Լիւդի հիւսիսային արեւելքը կը գտնուի. այս մասին գրած է իր մէկ անտիպ գործին մէջ, որուն համառօտութիւնը հետեւեալն է։ Եւսեբիոս Արիմաթիան կը նոյնացնէ Ռամաթայի կամ Ռամաթայիմ–Սոֆիմի, Սամուէլի հայրենիքը, Լիւդի մօտ։ Ցերոնիմոս կ'աւելցնէ թէ՝ ան Թոմնա գաւառին մէջ էր։ Այս երկու հեղինակները մեզ կը վստահացնեն թէ Արիմաթիան իրենց ժամանակ կը կոչուէր* Remphis *(Եւսեբիոս) կամ* Remphtis *(Ցերոնիմոս)։ Ո՞ւր կառուցուած էր Ռեմփթիս–Արիմաթիան։ Այս Ռեմլէն չի կրնար ըլլալ, այն պատճառներուն համար զոր մէջ բերաւ Րոպինսըն։* L. Heydet *կը յարէ թէ անկարելի է չճանչնալ այս անունը (Արիմաթիա)* Rentis*ի արդի տեզւոյն մէջ. ph քաղցրաձայնութեան համար է. ուրեմն ճիչտ բառն է* Remtis*. Եւսեբիոսի բնագրին մէջ t գիրին չընդունիլը ընդօրինակողներուն գործը կրնայ ըլլալ, եթէ քաղցրաձայնութեան համար չէ ընդունած։ M գիրին n ի փոփոխութիւնը սովորական է արաբներուն մօտ։* Rentis *գիւղ մ'է ուր կը գտնուին բազմաթիւ աւերակներ, ջրհորներ և հին գերեզմաններ։ Մասնաւորապէս կը նչմարուին միևնոյն գիւղին մէջ եկեղեցիի մը բեկորները և գիւղէն դուրս, քիչ հեռի, բնակիչները ցոյց կու տան մեծ և գեղեցիկ մոզայիքի մը մնացորդները, և կ'ըսեն թէ՝ ուրիչ եկեղեցիի մը մնացորդներն են։ Գիւղը բարձրութեան մը վրայ է և Միջերկրականէն 220 մէթր բարձր է, և կը նայի ՀՀջականները և ընդարձակ դաշտին վրայ։* Rentis *Լիւդի հիւսիսային–արեւելքը երեք մղոն է։ Ռամադայիմի յատուկ բոլոր նկատի–արեւելքը կը պատշաճին։ Ս. Երկրի Հաչակիրներուն համար պաշտօնական յիշատակարան մը կը վկայէ թէ* Rentis *Արիմաթիան էր, Յովսէփի հայրենիքը.* Assises de Jérusalem *ի մէկ գլուխին մէջ կը կարդացուի «Լիւդի Ս. Գէորգի քորեպիսկոպոսները որո՞նք են. — . . . Արիմաթայի Ս. Յովսէփի արքան, որ հիմակ* Rentis *կը կոչուի . . .»։ Այս չորանի ուրիչ յիշատակ-*

բաններ հազուագիւտ են։ 1130ի անանուն ուխտաւոր մը՝ Արիմաթիան Լիւդէն չորս մղոն կը հաշուէ։ 1160ի երկու հրովարտակներ կը յիշեն Ս. Յովսէփի Հերպերդ արբան։ Տիւրայի կիւեօմ կը յիշէ Ամալրիք անուամբ ուրիշ արբա մը Ս. Յովսէփ Արիմաթիացի եկեղեցիին (Պաւմ., էջ. 26)։ Անտարակոյս այս վկայութիւնները Rentisի համար պէտք է ընդունիլ։ Rentisի դիրքը ուխտաւորներու ճանապարհէն հեռի ըլլալով կը բացատրուի անոնց, ինչպէս նաև առաջին խաչակրաց լռութիւնը Արիմաթիայի մասին։ Տարակուսելի չէ որ ոչ միայն խաչակիրները կը բացատրեն աւանդութիւն մը զոր երկրին քրիստոնեաներուն մօտ գըտած են, և թէ այդ աւանդութիւնը կը բարձրանայ մինչեւ Դարդար։ Rentis ուրիմն, բնիկ տեղեկութիւններէն դուրս, ունի նաև սեբիոսի և Յերոնիմոսի, իրենց ժամանակին, ինչպէս նաև երուսաղէմի լատին թագաւորութեան վկայութիւնները։ Այս է հին և վաւերական աւանդութիւնը (Տե՛ս Dict. de la Bible, յառն Arimathie)։

2. Ռեմլէի հիմնարկութիւնը եւ նկարագրութիւնը ըստ արաբ պատմագիրներու.

Հոս մէջ կը բերենք արաբ մէկ քանի պատմագիրներու նկարագրութիւնները Ռեմլէի հիմնարկութեան ու նկարագրութեան մասին։

874ին Եագուպի կը գրէ թէ «Պաղեստին գաւառին մայրաքաղաքն է Ռեմլէ. ան հիմնարկուած է Սիւլէյման խալիֆային։ Լիւդը առաջին մայրաքաղաքն էր, որուն բնակիչները գաղթեցին անկէ. և Լիւդը ամայացաւ։ Ան ունէր փոքր գետակ մը, ուրկէ կը խմէր ժողովուրդը. Ապու Ֆուգրուս գետակը 12 մղոն հեռի էր։ Ռեմլէի ժողովուրդը իր խմելիք ջուրը կը հայթայթէր թէ՛ ջրհորներէն և թէ՛ ջրամբարներէն, ուր կը հաւաքուէին անձրեւի ջրերը։ Ռեմլէի ժողովուրդը կը բաղկանար արաբներէ, յոյներէ և սամարացիներէ»։

869ին Պիլաձուրի կը գրէ. «Էլ-Վալիտ խալիֆան իր Սիւլէյման եղբայրը կառավարիչ կը կարգէ Պաղեստինի գաւառին, որ իր բնակարանը կ'ընտրէ Լիւդի մէջ։ Յետոյ Սիւլէյման հիմնեց Ռեմլէ քաղաքը և հոն փոխադրեց իր մայրաքաղաքը։ Ան չինեց առաջին անգամ իր պալատը որ կոչուեցաւ Տար էս Սապպաղ (Նկարչաց տուն)։ Ասկէ վերջ Սիւլէյման չինեց խորունկ ջրհոր մը ջուր հաւաքելու համար։ Սիւլէյման մզկիթի մը յատակագիծը պատրաստեց և սկսաւ չինել զայն, սակայն ամբողջանալէն առաջ՝ բարձրացաւ խալիֆայութեան։

Ուրիշ խալիֆաներ անկէ վերջ չարունակեցին չինութիւնը։ Խալիֆ Օմար Իպն Ապտ էլ Ազիզ աւարտեց զայն, բայց միայն սկզբնական յատակագիծը փոփոխելէ յետոյ, և ըսաւ. «Ռեմլէի ժողովուրդը դոհ պիտի մնայ այս փոքրացած տարածութեամբ։ Երբ Սիւլէյման՝ իր սեպհական պալատները չինեց լմնցուց՝ թոյլ տուաւ ժողովուրդին չինելու իրենց բնակարանները։ Ռեմլէի ժողովրդեան համար փորել տուաւ Պարաւահ կոչուած ջրանցքները. փորել տուաւ նաև անուշ ջուրի հորեր։

Սիւլէյման իր քարտուղարին պաշտօն տուաւ Ռեմլէի իր շինութեանց վրայ հսկելու, ինչպէս նաև Պաթրիք Իպն էն Նաքահ (կամ էլ Պաքահ) կոչուած Լիւդացի քրիստոնեայի մը մզկիթին չինութեան հսկողի պաշտօնը յանձնեց։ Սիւլէյմանէն առաջ Ռեմլէն գոյութիւն չունէր. և տեղը բոլորովին աւազ էր (ինչպէս որ էր–Ռեմլէ անունը ցոյց կու տայ)։ Տար էս Սապպաղը յետոյ ժառանգութեամբ կը վիճակուէր Ապպասեան Սալիհ Իպն Ալի Ապտուլլահ Իպն էլ Ապպասի, այդ պատճառաւ ուրիշ ստացուածքներու հետ Պէնի Օմիահէն ստացաւ զայն։ Պէնի Օմիահ՝ Սիւլէյմաններու հետ Պէնի Օմիահէն ստացաւ զայն։ Պէնի Օմիահ՝ Սիւլէյմաններու հետ պատերազմեցաւ Ռեմլէի ջրհորներուն և ջրանցքներուն համար. և երբ Ապպասեանները տիրեցին, անոնք ալ հոն շատ գումարներ ծախսեցին, և այսպէս մէկ խալիֆայէն միւսը։ Փորձերը այսպէս կը չարունակուէին մինչև Միւթասըմ–Պիլլահ խալիֆային ժամանակ. վերոյիշեալ ծախքերուն համար ան չըներհաց մշտնջենական հրովարտակ մը, որով կը չնորհէր տարեկան նուիրատուութիւն մը, բոլոր երկրագործները տարեկան տուրքի մը ենթարկելով՝ որպէս զի հաւաքուած գումարով նոյն ծախքերը վճարուին»։

985ին Մուգատտէսի կ'ըսէ. «Ռեմլէն Պաղեստինի մայրաքաղաքն է։ Ան շատ գեղեցիկ քաղաք մ'է, և լաւ չինուած. անոր ջուրը լաւ և առատ է, նմանապէս պտուղները։ Շատ մը առուներ ունի. չինուած է ան գեղեցիկ գիւղերու և մեծ ելեւմուտներ ունի.

քաղաքներու մէջտեղը. մօտ է սուրբ տեղերուն և հաճելի աւանները: Վաճառականութիւնը հոն ծաղկած է, և չուկաները առաջնակարգ են: Գեղակերտ մզկիթներ չկան հոն, բացի մէկէն: Հայը լաւ է և ճերմակ. ուրիշ տեղերու նայելով՝ տեղւոյն հողը չատ արգաւանդ է, և պտուղներն ալ հիւթեղ: Այս մայրաքաղաքը կը գտնուի պղտաւէտ դաշտերու, պարսպապատ քաղաքներու մէջտեղը: Ան ունի հոյակապ հիւրանոցներ և հաճելի բաղնիքներ, ընտիր սննդեղէններ եւ զանազան չաքարեղէններ, ընդարձակ տուներ, գեղեցիկ մզկիթներ և լայնարձակ պողոտաներ: Իրը մայրաքաղաք՝ ան ունի չատ մը դառաւելութիւններ: Շինուած է դաշտի մը վրայ և մօտ է թէ՛ լեռներուն և թէ՛ ծովուն: Հոն կ'ածին թէ՛ թզենիներ և թէ՛ արմաւենիներ. իր դաչտերը ոռոգումի պէտք չունին, և ի բնէ պղտաւէտ են և հարուստ: Այս առաւելութիւններուն հակառակ Ռեմլէն ձմեռը ցեխոտ է և ամառն ալ աւազի փոչիով լեցուն. հոն վազուն ջուր չկայ, ոչ ալ կանաչութիւն. հողը խոնաւութիւն չունի, և ոչ ալ ձիւն կու գայ: Ջրհորները խոր են և աղի. անձրևի ջուրը կը հաւաքուի փակ ջրամբարներուն մէջ, — այնպէս որ աղքատը ծարաւ կը մնայ և օտարականները ի զուր ջուր կը փնտռեն: Քաղաքը մէկ քառակուսի մղոն տեղ զբաւած է: Տուները չինուած են յղկուած գեղեցիկ քարերով: Իր դուռներն են Ջինուորաց Ջրհորին դուռը (Տարպը Պիր էլ Ասքար), Սննապահ մզկիթին դուռը, Երուսաղէմի դուռը, Պլլահի դուռը, Լիւդի դուռը (Տարպը Լիւդ), Եաֆայի դուռը (Տարպը Եաֆա), Եգիպտոսի դուռը (Տարպը Մըսըր) և Տաճուն դուռը. Ռեմլէի մօտ է Տաճուն քաղաքը իր մզկիթով: Հոն կը բնակին առաւելապէս Սամարացիները:

Ռեմլէի գլխաւոր մզկիթը չուկային մէջ է. և աւելի գեղեցիկ է և սիրուն քան Դամասկոսինը: Ան կը կոչուի էլ Ասիյաս (Սպիտակ Մզկիթ), և հոն կը գտնուի գեղեցիկ միհրապ մը եւ անոր բեմը գեղատեսիլ է Երուսաղէմինէն յետոյ. մինարէն չինած է Խալիֆա Հիւշամ Իպն Ապտ էլ Մէլէք: Հօրդրօրմէս լսած եմ թէ երբ այս Խալիֆան մինարէն կը չինէր, տեղեկութիւն առաւ թէ քրիստոնեաները այս ժամանակ մարմարէ սիւներ ունենալով՝ թաղած էին զանոնք աւազի տակ և պատրաստած էին Պալիահի եկեղեցիին համար: Նոյն առեն Հիւշամ խալիֆան կ'ազդարարէ քրիստոնէից թէ՝ եթէ ցոյց չտան պահուած սիւները, պիտի կործանէ Լիւդի եկեղեցին և սիւները պիտի գործածէ մզկիթի չինութեան: Քրիստոնեաները դուրս կը հանեն պահուած սիւները: Անոնք չատ նուրբ, բարձրադիր և գեղեցիկ էին:

Մզկիթին յատակը սալարկուած է մարմարով և բակը՝ ուրիշ քարով: Դուռները չինուած են կիպարիս փայտէ և մայրիէ. քանդակազարդ էին և ըստ երևութին՝ չատ գեղեցիկ (Տե՛ս Palestine under the Moslems, էջ 303–305)»:

Այս անուանի երեք պատմիչներուն Ռեմլէի նկարագրութիւնները, զոր կը հաւաստեն Տիւրացի Կիյեօմ և Մարինոս Սանուդոս՝ կը հաստատեն թէ Ռեմլէի հիմնարկութիւնը արաբական է, եւ թէ հինէն ո՛ևէ քաղաքի հետք չկար: Ուստի Ռեմլէն ոչ Արիմաթիան կրնար ըլլալ, և ոչ ալ Յովսէփ Արիմաթիացիին հայրենիքը. և այսպէս Արիմաթիացիին անուամբ, Ռեմլէի մէջ ո՛ևէ սրբավայրի կառուցումը պատմականօրէն ճշդութենէ զուրկ կ'ըլլար. այս պատճառով կրնանք ըսել թէ Լատինք վաւերական աղբիւրի մը վրայ չհենլով չէ որ Ս. Յովսէփ Արիմաթիացիի անունով եկեղեցի կառուցած են Ռեմլէի մէջ և աւանդավէպ յօրինած Արիմաթիացիին և Նիկոդիմոսի չուրջ:

3. Խաչակրաց եկեղեցիները Ռեմլէի մէջ.

Խաչակիրները 28 Մայիս 1099ին Ռեմլէ և Լիւդ հասան. բոլոր մերձաւոր գրացիները և տեղւոյն բնակիչները փախուստ տուին. վասն զի անոնք չէին կրնար պաշտպանուիլ: Լիւդի մէջ (Լիւդդա, Դիոսպոլիս) Յուստինիանոս հոյակապ եկեղեցի մը չինել տուած էր Ս. Գէորգի գերեզմանին վրայ. թշնամին քանդած նել տուած էր զայն այրելով տանիքին մեծ գերանները. նոյն եկեղեցիին չինութեան աշխատած էին ընտիր քարահատներ: Անապատացեալ երկու քաղաքները գրաւուեցան. նախ կողոպտեցին զանոնք, յետոյ հոն հաստատեցին Ռուէնի բնիկ Րոպէրտ լատին եպիսկոպոսը: Ռամլէն, կ'ըսեն Gestes des Ciprois, մեծ և հարուստ եպիսկոպոսութիւն մ'էր. անոր ժողովուրդը Երուսաղէմէն աւելի բարգաւաճ վիճակ մը ստացած էր մշակութեան և հիւսուածեղէնի պատրաստութեան: Ի փոխարէն ռազմական դիրքը չատ վտանգաւոր էր, և Պաղտին Բ. 1102ին անոր փորձը առաւ. եթէ իսլամ էմիրներ

բէն միոյն օգնութիւնը չըլլար՝ քիչ մնաց հոն պիտի պարտուէր։ Քաղաքը այնատեն յարձակումով գրաւուեցաւ և աւարի տրուեցաւ։ Ի լրումն դժբախտութեանց, Ռեմլէն 1177ին հրդեհի մը պատճառաւ սերտակ դարձաւ(*)։ 1187ին Սալահէտտին գրաւեց զայն։ 1204ին ան քրիստոնէից ձեռքը անցաւ և անոնք հոն իշխեցին կէս դարու չափ։ 1214ին Ռաուլ եպս.ը գերի ինկաւ։ 1266ին Պիպարսը գրաւեց թէ Ռեմլէն և թէ Լիւդը։

Լիւդի մայր եկեղեցին աւերեցաւ, իսկ Ռեմլէինը՝ մզկիթի վերածեցին։ Հիւսիսային դրան վրայ գետեղուած արաբերէն արձանագրութիւն մը կ'ըսէ թէ ան չինուած է Փրկչական 1298ին։ Այս բացատրութիւնը չափազանցուած է։ Կատարուածը վերաշինութիւն չէր, այլ նորոգութիւն և իսլամական պաշտամունքի յարմարեցում։ Շէնքին այս բաժանումէն ծանր փոփոխութիւններ յառաջ եկան, բայց ոչ արմատական։

1613ին Levaillant, Փիլիպպոս Գեղեցիկէն (1285–1314) չինուած փոքր հիւրանոցը յիշելէ յետոյ, Le Pélerin Véritable ի մէջ կը նկարագրէ «երկու գեղեցիկ եկեղեցիներ խիստ ամբողջական, բայց մզկիթի վերածուած են, մին դուրսը, միւսը քաղաքին մէջ. մին նուիրուած էր Ս. Յովհաննէս Մկրտչի, միւսը՝ Քառասուն Վկաներու, որոնց մասունքը Հայաստանի Սեբաստիայէն փոխադրուելով՝ ծանօթ է թէ ստուգիւ գետեղուած են այս եկեղեցիին սեղանին ներքև»։

Քառասուն Վկաներու մզկիթը աւերակ է։ Գալով Ս. Յովհաննու հին մայր եկեղեցիին՝ իր մուտքը երկար ատեն արգիլուած էր քրիստոնէից և տակաւին դժուար է ներս մտնելը։ Սպետ Arvieux մեզ կը պատմէ թէ 1659ին դրան սեմէն կրցաւ ներսը նայուածք մը նետել և հոն տեսաւ «չորս կարգ սիւներ, իւրաքանչիւրը տասներկու սիւն, որ կը բռնեն կամարները»։ Ան կ'աւելցնէ «այնքան կարողացայ տեսնել, ա՛յն ալ չատ նեղութեամբ»։

(*) 1047ին (Հիճ. 425) Եգիպտոսի և Սիւրիոյ մէջ սոսկալի երկրաշարժներ պատահելով բազմաթիւ տուներ քանդուեցան և չատ մարդիկ մեռան փլատակներու տակ։ Ռեմլէի մէկ երրորդը փճացաւ. տեղւոյն մզկիթը ջարդ ու փշուր եղաւ։ Երուսաղէմի պարիսպներուն մէկ մասը կործանեցաւ. Դաւթի բերդէն ինկաւ խոշոր կտոր մը. Էլ-Խալիլի մզկիթը ծանրապէս վնասուեցաւ (Տե՛ս Միւհիր-էտ-տին, թարգմ. Sauvaire ի, հրտ. 1876, էջ 69)։

Ուրիշ ուղեւորներ մզկիթը միայն տեսան։ Մարքիզ De Vogüé պարտաւորուեցաւ հեռու կենալ։ Max Van Berchem դրսի կողմէն կրցաւ տեսնել և լուսանկարել։ Clermont Ganneau երկրորդական ծանօթութիւններ միայն կրցաւ առնել։ Սակայն 1885ին Conder կարողացաւ Survey of Western Palestine աշխատասիրութեան մէջ Ռեմլէի մայր եկեղեցիին մասին հրատարակել երկու նկարագրութիւններ, յատակագիծ մը և ստուերագիրներ աւելի մեծ մանրամասնութիւնով։ 1922ին Camille Enlart կը յաջողի յատակագիծը հանել և լուսանկարել (Տե՛ս Les Monuments des Croisés dans le Royaume de Jérusalem, Հատ. Բ. 329–331)։

Քառասուն Վկաներու աչտարակ ըսուածը և Տաճարականաց հին վանքը Ռեմլէի արեւմուտքը կը գտնուին։ Աչտարակը լաւ պահպանուած է և ճարտարապետական գեղեցիկ ոճ մը ունի հարիւր քսան աստիճաններով։ Անոր պատին վրայ գետեղուած արձանագրութիւն մը կ'ըսէ թէ՝ ան չինուած է 1318ին Սպուլ Ֆէտա–Մուհամմէտ սուլթանէն. այս արձանագրութիւնը վերջէն պրուած է, քանի մը նորոգութիւններու առթիւ։ Աչտարակին մէկ կողմը Տաճարականաց վանքին խիստ տարածուն աւերակները կան. հոն կ'երեւնան եկեղեցիի մը հիմերը, և երեսուն աստիճաններէ իջնելով՝ երկու նաւով ստորերկրեայ եկեղեցի մը կը գտնենք։ Տաճարականները վանքին յարակից չէնքերը ընդարձակած և յատկացուցած են ի պաշտպանութիւն Երուսաղէմ գացող ուխտաւորներուն (Տե՛ս Mislin, Les Saints Lieux, Հատ. Բ. էջ 163)։ Բայց, ըստ արաբերէն արձանագրութեան, աչտարակին կամ մինարէին նորոգիչն է Քալաւուն էս–Սալիհ սուլթանը, ոչ թէ Սպուլ Ֆէտա–Մուհամմէտ սուլթանը, ինչպէս կը գրէ Mislin։ Իսկ մզկիթին նորոգիչն է Սուլթան Պիպարս պին Աբտիւլլահ Գասիմ, համաձայն նոյն մզկիթին արաբերէն արձանագրութեան։ Աչտարակը չինուած է, թերևս վանքն ալ, Խաչակրութեան։ Աչտարակը կրաց ժամանակ, և այս պարագան յայտնի կերպով կը հաստատուի վերջին տարիներս Երուսաղէմի մօտ Լեռնակողման լատին վանքին ժողովրդապետին կողմէն գտնուած և նոյն աչտարակին պատին չաղախին մէջ ագուցուած Խաչակրաց ժամանակի մէկ դրամովը։ Աչտարակին վրայ գետեղուած արաբերէն արձանագրութիւնէն կը հասկցուի թէ ան չինուած է 1318ին Քալաւուն էս–Սալիհի կողմէն (Տե՛ս Guide-Indicateur, Ս. Մաս. էջ 144)։

կամ մինարէին ու մզկիթին պատին մէջ զետեղուած երկու արձանագրութիւններուն ընդօրինակութիւնը տեսնել Ա. հպ. Տ. Յովհաննէսեանի (Պատմ. Երուսաղէմի, Ս. Հատ. էջ 199)։

4. Հայոց Ս. Գէորգի վանքը.

Անծանօթ կը մնայ մեզ Ռեմլէի վանքին ծագումը. բայց կ'երեւի որ չատ հին չէ. յայտնի ըլլալով քաղաքին արաբական հիմնարկութիւն մը ըլլալը և Աբբասեանց տիրապետութեան ժամանակ տեղացի քրիստոնէից հանդէպ անոնց ունեցած ատելութիւնը. բայց չատ ալ հաւանական չենք գտներ կարծիքն այն պատմագիրներուն՝ որ կը գրեն իբր թէ եղիազար պատրիարք ըլլայ հիմնադիրը նոյն վանքին. բայց ինձ կը թուի թէ Յոպպէէն Երուսաղէմ և փոխադարձաբար մեկնող ուխտաւորներուն համար կայան մը անհրաժեշտ էր նոյն ճանապարհին վրայ, և հետեւաբար եղիազարէն չատ կանուխ պէտք էր հիմնարկուած ըլլար Ռեմլէի վանքը, թէև այդ մասին ի ձեռին յիշատակարան չունինք։ Եղիազար Ռեմլէի մէջ քանի մը տուներ կը գնէ և զանոնք միացնելով ուխտաւորաց իջևանատեղի մը կը շինէ. կը կառուցանէ եկեղեցի մը, յանուն Ս. Գէորգայ, որուն նուիրուած եկեղեցիներ հինէն կան Ռեմլէի մօտ, Լիւդի մէջ. եկեղեցիին լայնքն է 9 մ. 15, երկայնքը՝ 12 մ. 55. ան միասիւն է. Յոպպէի ճանապարհին վրայ ալ կը յատկացնէ գերեզմանատուն մը։ Վանքին չինութեան պատճառաւ որպէս զի տեղւոյն իսլամները չզայրանան՝ անոնց սիրտը չինելու համար տեղւոյն մզկիթը՝ զոր վերև յիշեցինք արդէն, թէ ան կանուխէն եկեղեցի էր, նորոգեց և սահմանեց տարուէ տարի 17 դահեկան իւզագին տալ Ս. Գէորգի կալուածներէն, ինչպէս մինչև հիմակ ալ կը տրուի։

Հաննէ (էջ 69) կը գրէ. «գոյ աստ վանք մի ազգիս մերոյ յանուն սրբոյն Գէորգայ զօրավարին, և երանեալ մեծ մարտիրոսին, զփոքրիկ և զդեղեցիկ ուսնելով զեկեղեցի՝ հանդերձ բարձրաբերձ դարպասօք և խցերովք։ Եւ ունի տնտեսատուն, փուռ, սեղանատուն, գինետուն և պարտէզ իլիման ծառօք։ Բնակին աստ միաբանք, և աստ իջևանին տէրունական ուխտաւորքն, զի լայն և ընդարձակ ունի տեղան. որոց չինողաց և պատճառ

լինողաց՝ մանաւանդ եղիազար կաթուղիկոսին՝ և այժմ չէն պահողաց, Տէր Քրիստոս ողորմեսցի. ամէն»։

Յետագայ տողերէն պիտի տեսնուի որ Ս. Աթոռոյ գահակալները մասնաւոր հոգածութիւն ունեցած են Ռեմլէի Ս. Գէորգ վանքին նկատմամբ. հոն կը մնար տեսուչ մը, իբր պաշտօնեայ ուխտաւորաց հոգևոր մխիթարութեան և հսկող վանքապատկան կալուածոց։ Եղիազարէն յետոյ Շղթայակիր ևս 1728ին տուն մը գնած է իբր վանքին կալուած։ 1764ին կարապետ պատրիարք Գանձակեցին նորոգած է նոյն վանքը, ինչպէս կը հասկցուի հետեւեալ յիշատակարանէն՝ որ կը գտնուի եկեղեցիին միակ սիւնին վրայ. «Ավ. վանքս Սրբոյն Գէորգայ որ ի Ռեմլէ բազում ծախիւք և նեղութեամբ նորոգեցաւ նորակերտ մեծ դրամբն, ի պատրիարքութեան Սրբոյն Երուսաղէմի Տեառն Կարապետի, աչխատութեամբ Գաբրիէլ և Գէորգ վարդապետաց և բոլոր միաբանից. ի ՌՄԺԴ (=1764) թվին, որ հանդիպիք տուք զողորմիս»։

1806 ին վանեցի Թէոդորոս պատրիարք կը յիշատակէ Ս. Գէորգի խաչկալը եւ անոր պատկերը ի յիշատակ իր հոգևոր եւ մարմնաւոր ծնողաց. ինչպէս կը հասկցուի աւանդատան սեղանի պատկերին յիշատակարանէն։

1814 ին Թէոդորոս պատրիարքին և տեսուչ Մանալըճցի Յակոբ վարդապետի օրով Էվգարացի Թուղլաճի մէկ. Մարտիրոս և Համասփիւռ կողակիցը կը յիշատակեն Ս. Գէորգ եկեղեցիի Ս. Կարապետ խորանի խաչկալը հանդերձ եալտըզով, ինչպէս կը տեղեկանանք աւանդատան յիշատակարանէն։

1833 ին Աժտէրխանի եւ Հնդկաց նուիրակ կարապետ արքեպիսկոպոս Եւդոկիացի (※ 1849 դեկտ. 16) Ռեմլէի Ս. Գէորգ վանքին կը նուիրէ վանքէն դուրս մեծագոյն պարտէզ մը և ձիթենեաց մը (Տե՛ս Usnrագրութիւն Երուսաղէմի, էջ 33)։ 1867 ին Թաստան մը (Տե՛ս Usnrագրութիւն Երուսաղէմի, էջ 33)։ 1867 ին Եսայի պատրիարք Աթանաս վրդ. ի ձեռամբ գնած է ուրիշ մաս մը և կցած է այս պարտէզին. 1880–1882 ին Ռեմլէի տեսուչ Բարթուղիմէոս վրդ. Սատաղեան գնած է երկու մասեր ևս և ըստ առաջնոյն կցուած է վերնոյն. այժմ պարտէզին չափը 200 արտաւար (դէնլ-) է։ Այս տարածութիւնը մերձաւորապէս 200 արտաւար (դէնլ-) է։ Այս տարածութիւնը մերձաւորապէս պարտէզին Հաշիշիէ անունը կը տրուի. իսկ Ռեմլէցիք կ'ըսեն Պայարա։

1843 յուլիս 25 ին Զաքարիա պատրիարք Կոփեցի Ռեմլէի

վանքին մէջ առաջին անգամ կը բանայ ժառ. վարժարանը և հայերէն լեզուի ուսուցիչ կը կարգէ Աչառուր քահանայ Տաբռնեցին և հոգաբարձու՝ Ստեփան վարդապետ Տիգրանակերտցին: Եւ որպէս զի բարեկարգ ընթանայ վարժարանը՝ իր յանձնարարութեամբ փոխանորդ կիրակոս եպս. և քանի մը առաջաւոր վարդապետներ տասը յոդուածներէ բաղկացեալ կանոնագիր մը կը պատրաստեն՝ ուսմանց աստիճաններու եւ ուսուցիչներու և ուսանողներու պարտականութեանց վերաբերեալ: Իբր մէկ ուրկէս տարի յետոյ Զաքարիա պատրիարք վարժարանը կը փոխադրէ Երուսաղէմ առանձին տան մը մէջ, և ուսուցիչ կը կարգէ Արմաշի վանքին Մուրատ վարժապետը (✻ 1848), որ հմուտ եւ եռանդուն աշխարհական մըն էր ու այն տարին ուխտի եկած էր Երուսաղէմ:

1876–1907 թուականին Ռեմլէի Ս. Դէորգ վանքին տեսուչն էր Մալաթիայի Բարթուղիմէոս վրդ. Սատաղեան՝ որ նոյն վանքին կտակած է տուն մը, խանութներ եւ պարտէզ մը հազար ոսկւոյ արժողութեամբ: Բրձազգեաց միաբան մը Սարգիս Պաղտասարեան Տիգրանակերտցի (✻ 1930) բայի իր միւս յիշատակներէն, Ռեմլէի մէջ յիշատակ թողած է վեց մթերանոցներ:

Մինչև վերջին տարիներս Ռեմլէի Ս. Դէորգ վանքը իր յարկաբաժիններով կանգուն էր, Հաննէ պատմագիրին վերեւ նկարագրուածին համաձայն. բայց 1927 յուլիս 11ին տեղի ունեցած առկալի երկրաշարժին հետեւանքով, ինչպէս Երուսաղէմի և շրջակայից, նոյնպէս Ռեմլէի մէջ բազմաթիւ տուներ եւ չէնքեր կործանեցան, ու շատ մարդեր վիրատակներու տակ մնացին. Ռեմլէի Ս. Դէորգ վանքն ալ վերծ չմնաց երկրաշարժէն, բայի եկեղեցիէն որ անվնաս մնաց, ամբողջովին քանդուեցան տեսչարանը իր մասերով, ուխտաւորաց սենեակները և քանի մը վանքապատկան կալուածներ: Սա այժմ վիրատակները մաքրելով առ ժամանակեայ նորոգութիւն մը կատարուած է, ապագային վերապահելով վանքին ամբողջական նորոգութիւնը, որ անհրաժեշտ է:

ԻԷ

ՄԵԼԻՏԻՆԷՑԻ ՀԱՅԵՐ ԵՒԹԻՄԻՈՍԻ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

1. Ո՞վ էր Եւթիմիոս.

Մեր նախընթաց տողերու մէջ հարեւանցի կերպով գրած էինք Մելիտինեցի Եւթիմիոսի մասին. այս անգամ կը փափաքինք պատմական տեղեկութիւններ տալ այն հայերու մասին որ կ'ապրէին Երուսաղէմի մօտ գտնուած Եւթիմիոսի վանքին մէջ: Բայց նախ քան զայս պէտք է գիտնալ Եւթիմիոսի ինքնութիւնը ու անոր հիմնարկած վանքին պատմութիւնը: Մանրամասնութիւնները զանց պիտի ընենք, կիւրեղ Սկիւթուպոլսեցին արդէն գրի առած է զանոնք:

Մեծն Եւթիմիոս՝ այդ հայազգի և ազնուական անապատակոնը 377 ին ծնած է Մելիտինէի մէջ. հայազգի և ազնուական ըսինք, վասնզի անոր հայրը Պօղոս և մայրը Դեւնիա Մելիտինէի ամենէն նշանաւոր և ազնուական չառաւիղներէն ըլլալով՝ բիւզանդական կայսրութեան մէջ կը վայելէին բարձրագոյն դիրք մը. Մելիտինէի հայ ազնուականութիւնը ծագմամբ չատ հին էր, և կը նկատուէր հայ նախարարութիւններէն մին, Մելիտենեաց կամ Մելիտինեանց անուամբ, որոնք կը յիշուին Հայաստանի բեւեռագիր արձանագրութեանց մէջ, ինչպէս նկարագրեցինք, երբ Մելիտինեցի Պողիկտոս Հայկազն վկային վրայ գրեցինք (էջ 132): Մելիտինէի ազնուականութիւնը գաղթած էր Հայաստանէն. Եւթիմիոսի ընտանիքը կը վերաբերէր մեծ հարանականութեամբ նոյն հայ ազնուականութեան. մենք թէև չունինք ի ձեռին որոշ յիշատակութիւն մը այս պարագան հաստատող, բայց նկատի առնելով անոր կենսագիրին տողերը, որով չարունակ կը չեշտէ անոր և ծնողաց մեծ ազնուականութիւնը: Դարձեալ նոյն ազնուականութիւնը Թեկլէն կը սերէին հայազգի Սիդոնիոս՝ Եւթիմիոսի ուսուցիչը, և անոր երեք եղբօրորդիները՝ որոնք յետոյ պիտի գային Երուսաղէմ, Եւթիմիոսի իրենց ազգակցին մօտ, և պիտի գրաւէին նշանաւոր

դիրք մը, ինչպէս պիտի գրենք ստորև: Բաց աստի, նչանակութենէ զուրկ չէ որ՝ չորս հարիւր հայ ուխտաւորները չեն մոռնար իրենց աղգակիցը՝ որ ի Սահել, և կարօտի ու հիացման ըզգացումներով կը փութան անոր մօտ, և կ'արժանանան անոր խանդավառ սիրոյն ու հայրական խնամոց, ինչպէս պիտի պատմենք: Ահա այս պատճառներով էր որ ըսինք թէ հայազգի եւ ազնուական էր, եւ ան պարզեւն էր Հայկազն Պողիկտոսի վկայարանին մէջ տեղի ունեցած սրտառուչ ուխտաւորութեան մը, որուն համաձայն, մանուկը փոքր հասակին յանձնուեցաւ Մելիտինէի եպիսկոպոս Օարէի, որ խնամից եւ պաշտպանից զանիկա, մինչև որ աւարտեց իր ուսումը: Պատանին Եւթիմիոս ընդունուեցաւ եպիսկոպոսարանին կից ընծայարանին մէջ. նոյն դարու սովորութեան համաձայն, ամէն գաւառի եպիսկոպոս իր մօտ կը պահէր ընծայարան մը աչակերտելոց ուսման եւ կրթութեան համար: Օարէ մէկն էր ա'յն եպիսկոպոսներէն, որ գիտէին յարգ ընծայել ուսման եւ կրօնական կրթութեան. իր ընծայարանը ունէր լաւագոյն եւ օգտակար ծրագիր մը: Ինչպէս յայտնի է պատմութենէն, Մելիտինէն վաղուց քրիստոնէացած էր ու քրիստոնէական քաղաքակրթութեամբ կը պայծառանար, հայաչատ կեդրոն մըն էր. այնպէս որ եպիսկոպոսական ընծայարանին մէջ, կ'ուսուցանէին յունարէն լեզուն, քերականութենէ մինչև ճարտասանութիւն, հո'ն կ'աւանդէին Աստուածարանութիւն և պարտաւորիչ էին ուրտաքին գիտութիւններն: Եւթիմիոս հասակաւ եւ լմաստութեամբ կը զարգանար ու իր աչակերտակիցներուն մէջ ան առարկայ կ'ըլլար հիացման: Նոյն ժամանակի նչանաւոր Մելիտինեցի երկու ուսուցիչներ, Ակակիոս և Սիսինիոս, մասնաւոր խնամքով մը կը հսկէին Աստուծոյ նուիրեալ պատանիին դաստիարակութեան վրայ. անոնց չունչը կ'ուժաւորէր ուսանողին ամբողջ էութիւնը: Դարուն այդ մեծ հոգիները, որ յետոյ ճարտարութեամբ վարեցին Մելիտինէի եպիսկոպոսութեան գործերը, ռահվիրաններն եղան այն պատրաստութեան, որով Եւթիմիոս կը կոչուէր հզօր դեր մը կատարելու եկեղեցիին կեանքին մէջ: Տասնեւինն տարեկան հասակին ան աւարտեց դպրոցը և արժանացաւ քահանայական կարգին՝ Օարէ եպիսկոպոսին յաջորդէն: Իր կենսագիրը կը յարէ թէ Եւթիմիոս ի ծննդենէ վանական մըն

էր, և իր այս կեանքին սկզբնաւորութիւնը կը բանար իր առջևը վաթսունհօթը տարիներու անապատական կեանքին արդիւնաւորութիւնը: Հաւատքը, զոր կը կրէր ան, բղխումն էր Ս. Պողիկտոսի հայկազն վկային դամբարանէն. իր ծնողաց ուխտը և յիշատակը՝ նոյն սուրբին մատրան մէջ կը մղէին նուիրեալը յաճախակի երթալ հսկելու Պողիկտոսի դամբարանին մօտ, տարիներով ծառայեց հայկազն վկային, զանց չընելով նաև ա'յն վանքերը, որ կը գտնուէին Մելիտինէի դուրսը: Բայց տեղական այս պաշտօնները ու նուիրութիւնները կարծես արգելք կ'ըլլային Եւթիմիոսի բարձրագոյն առաքինութեանց նկրտումին եւ մարմնոյ ճնչողական միջոցներու գործադրութեանց. ուստի երիտասարդական իր ոյժեղ և կայտառ վիճակովը թողուց իր սիրելի Մելիտինէն ու եկաւ հաստատուելու Երուսաղէմի անապատին մէջ. ան նոր թևակոխած էր քսան և ինն տարեկան հասակը 405ին:

2. Եւթիմիոսի վանքը.

Եւթիմիոս Ս. Տեղերու մէջ իր ուխտը կատարելէ յետոյ, մեկնեցաւ Երուսաղէմի մօտերը գտնուած անապատականներուն քով: Ամէնէն հին անապատները կը նկատուէին Փառան, Տուքա և Սուքա. ժամանակ մը Փառան մնաց և ուսանելով նոյն կեանքի պահանջները ու տեղական սովորութիւնները՝ հպատակեցաւ ճնչողական կենցաղի բոլոր կանոններուն, իր հոգևոր կենցաղավարութիւնը, որ իր հայրենիքին մէջ զմայլում յառաջ բերած էր, իր զենիթին կը բարձրանայ և իր համբաւը կը տարածուի Պաղեստինի ամէն կողմը. նոյն իսկ իրեն կը դիմեն Իրաքի խառըերէն եկող արաբներ, որոնց կը քարոզէ Աւետարանը, կ'աչխատի մեղմացնել անոնց բարքերը, կը խրատէ, կը յորդորէ և քրիստոնեայ հաւատացեալներ դարձնելով՝ կը մկրտէ զանոնք: Անոր լեզուն քաղցր էր և խնամքները հայրական. անոր անունին համբաւը մանաւանդ կը տարածուէր Երուսաղէմի սահմաններէն մինչև Մեռեալ Ծով, աւելի հեռու, մինչև Արաբիոյ խորերը: Սկիւթուպոլսեցին բացայայտօրէն կը գրէ թէ Աքարեան կամ Իսմայիլեան արաբ ցեղի մը քրիստոնէացումը կատարուած է Եւթիմիոսի ձեռքով: Նորակնիք արաբները միշտ կը փափաքէին

մնալ իրենց հոգևոր հօրը մօտ. այնպէս որ անոնց բազմաթիւնը խճողուած կառաջ կը բերէր այն վանքին մէջ ուր ինքը այն ատեն կը բնակէր, ուստի որոշեց Վրանաքաղաք մը հաստատել (Parembole) իր եկեղեցիով և անակներով. հիմնարկեց եպիսկոպոսական աթոռ մը Վրանաքաղաքին համար և եպիսկոպոս ձեռնադրել տուաւ նորակնիքներուն գլխաւորը, որ կոչուեցաւ Պետրոս եպս., որ յետոյ մասնակցեցաւ Եփեսոսի տիեզերական ժողովին: Վրանաքաղաքը, մինչև 502 թուականը, ունեցաւ քրիստոնէական կեանք մը՝ ընդունելով հոգևոր խնամքը Եւթիմիոսի ու անոր յաջորդներուն. սակայն յետոյ հարաւէն արշաւող բանակներուն յարձակումները քանդեցին Վրանաքաղաքը և ցրուեցին նոյն արաբ քրիստոնեաները այն սահմաններէն:

Եւթիմիոս վերջնականապէս հաստատուեցաւ Սահէլ. ա՛ն չուզեց վանք շինել. կը գոհանար պարզ աղօթարանով մը, ուր կարենար աղօթել և մտածականներ ունենալ. բայց երբ տեսաւ որ աշակերտներով կը լեցուի իր բնակարանը, ան ստիպուեցաւ խըցճիթներ շինել տալ. մինչդոյն ժամանակ ունենալ եկեղեցի մը, որուն նաւակատիքը կատարեց Երուսաղէմի եպիսկոպոսը: Չէ կարելի այս հակիրճ տողերուն մէջ պատկերացնել այս մեծ անապատականին արդիւնաւոր կեանքը, ինչպէս նաև գործունէութիւնը անոր հասցուցած բազմաթիւ աշակերտներուն, որ պաղեստինեան քրիստոնէութեան առաջնորդող ոյժերը հանդիսացան. այդ մասին Սկիւթուպոլսեցին կը մնայ միշտ կենդանի նկարիչը Երուսաղէմի Անապատին, մասնաւորապէս Եւթիմիոսի հիմնարկած հաստատութեան: Մեծ Անապատականը ալևորեալ տարիներու պտղալից արդիւնքով 473ին կը վախճանի՝ չրջապատուած իր աշակերտներէն և կը թաղուի վանքին մէջ. իր գերեզմանը կը դառնայ մշտական ուխտատեղի մը, առ հասարակ բոլոր ազգաց:

Եւթիմիոսի մահուանէն հօթը տարի վերջը, 480ին, վանքի սարկաւագներէն, Փիտոս, խորհրդաւոր տեսիլքի մը ազդեցութեամբ, մեծամեծ կառուցուածքներով կը չէնցնէ վանքը Սահէլի մէջ, որ այժմ կը կոչուի Խան էլ–Ահմար. սարկաւագին կ'ալակոծի Երուսաղէմի օրուան պատրիարքը: Խան էլ–Ահմար Երուսաղէմէն տասներկու մղոն հեռի կը գտնուէր, Ս. Քաղաքէն դէպի Երիքով տանող արդի ճանապարհին հարաւը և Նէպի Մուսայի ուխտաւորական ճանապարհին մօտ: Սարկաւագը տեղւոյն հին

և նոր բոլոր չէնքերը բարձր պարսպով մը կը չրջապատէ. այնպէս որ վանքին չէնքերը հեռուէն կ'երևնային ձուաձև (éllipse) դիրքով, ինչպէս կը նկարագրէ Սկիւթուպոլսեցին: Այս վիճակին մէջ տեսած էր նաև ռուսաղգի Դանիէլ կրօնաւորը ԺԲ. դարուն (1106), ահա իր խօսքերը. «Մար–Սաբայի վանքին արեւելքը, լերան մը ետևը, տասն մղոն հեռի կը գտնուի Ս. Եւթիմիոսի վանքը...: Ան չինուած է հովիտի մը մէջ. բաւական հեռուէն չրջապատուած կը տեսնուի քարէ լեռներէ եւ եկեղեցին չինուած էր բարձր տեղի մը վրայ»:

Ջուաձևի առանցքին հիւսիսային ծայրը Փիտոս սարկաւագը չինել տուաւ աշտարակ մը, իբր միջնաբերդ եւ ամրութիւն բոլոր անապատին. նոյն աշտարակին տակը կը գտնուէր վանքին դուռը. հասարակաց գերեզմանատունն ալ վանքին և աշտարակին մէջ տեղն էր:

Շէնքերու ամբողջութիւնը կ'երեւնար բերդի մը տեսքով. հետագայ դարերը արդարացուցին պաշտպանողական այս միջոցները, երբ Թալապիտները յարձակեցան վանքին այս միջնաբերդին վրայ: Վանքին ու եկեղեցիին այս չինութիւնները երեք տարիէն աւարտեցան. Երուսաղէմի Մարտիրոս պատրիարքը հանդիսաւոր կերպով կատարեց նաւակատիքը և Փիտոսն ալ կոչուեցաւ Տօրայի (ծովեզերեայ քաղաք Պաղեստինի) եպիսկոպոսուԹեան: Նոր վանքը բլուրի մը վրայ չինուած՝ կը ժպտէր սպիտակ քարերու չքնաղ զարդարանքովը. դրան աշտարակը հպարտօրէն՝ իբր տիրապետող դաշտին, ամէն կողմէն կ'երևնար. Սկիւթուպոլսեցին, որ շատ տարիներ Սահէլի այս վանքին մէջ ապրած էր, շատ դեղեցիկ կերպով կը նկարագրէ եւ կը նկատէ զայն միայնութեան ժպիտը: Փիտոսի այս վերաչինութիւնը կը մնայ մինչև ժ. դար, իսկ ըստ Փոկասի և վանական Եպիփանի՝ մինչև ԺԲ. դար. յետոյ կ'սկսի քանդումը. հարաւէն եկող ոյժերը տաճարի առ տակաւ աւերակոյտի մը կը վերածեն այս բերդանման կառոյցը և դարերէ ի վեր Խան էլ–Ահմարի աւերակները միայն կ'երևային:

Քանի մը տարիէ ի վեր պեղումներով կը հետազօտուին Եւթիմիոսի վանքին վիճակարի աւերակները Երուսաղէմի Բրիտանական հնախօսական վարժարանին հաշուոյն. պեղումները յառաջ տարուած են և երևան եկած են վանքին եկեղեցին ու այլ

տեղերը։ Գիտուն մը A. Barrois անցեալ տարի հոն այցելած ու քննած է պեղումներու արդիւնքը, մասնաւորապէս Եւթիմիոսի և իր վանականաց մեհելամատուռը և նկարագրութիւնը հրատարակած է (Տե՛ս Revue Biblique, 1er Avril 1930, N°. 2). Նոյնին թարգմանութիւնը կու տանք ստորև։

3. Եւթիմիոսի վաճիին նորագիւս մեհելամատուռը.

«Երկու տարիէ ի վեր Պ. Շիքթի Խան էլ-Ահմարի Եւթիմիոսի վանքին աւերակները երևան հանելու ձեռնարկած է. նոյն վանքը, ինչպէս յայտնի է, կը գտնուի Հրէաստանի անապատին մէջ, Երուսաղէմի և Նէպի Մուսայի միջև, կէս ճանապարհին։ Այժմ հոն ինքնաշարժով կարելի է երթալ առանց մեծ դժուարութեան, բռնելով հին ճանապարհը Նէպի Մուսայի որ կը բաժնուի Երիքովի մեծ պողոտայէն 13 քիլոմէդրէն քիչ յետոյ։ Պ. Շիքթի՝ աւերակաց հարաւը գտնուող երկաթ նաւով եկեղեցին իր գեղազարդ մոզայիք յատակներով և յարակից ստորերկրեայ սեղանովը երեւան հանելէ յետոյ սկսած է զբաղիլ աւերակներուն գլխաւոր մասովը, որ կը տարածուի հարաւի մեծ եկեղեցիէն մինչեւ այն հոյակապ պարիսպը որ հիւսիսէն կը փակէ վանքը և կու տայ անոր բերդի մը տեսքը։ Գրեթէ աւերակաց դաշտին կեդրոնը գտած է ստորերկրեայ փոքրիկ մատուռ մը խոշոր որմաքարերով շինուած և ծածկուած է կամարով մը՝ որ ստուգապէս վանքին գլխաւորներուն իբր մեհելամատուռի դեր կատարած է։ Պեղումներուն տեսչին հաճելի հրաւիրանաց վրայ երկու օր հոն մնալով առիթ ունեցայ գծելու երևան հանուած տեղերուն յատակագիծը։ Մատուռը 4մ. 75 (արեւելք–արեւմուտք) × 5մ. 90 (հիւսիս–հարաւ) եռանկիւնի մը ձեւը ունի։ Մատուռը կ'երթուի 12 աստիճան սանդուխով մը որ մատրան հիւսիսային պատին կցուած է։ Սանդուխին քառակուսի նախամուտքէն մինչև սանդուխին ըստորոտը դուռ մը կը բացուի մատրան հիւսիս–արեւելեան անկիւնը։ Հիւսիս–արեւմտեան անկեան մօտ, հիւսիսային պատը ունի ուղղանկիւն բացուածք մը որ կը նայի սանդուխին և լեցուած է որմաքարերու կտորուանքներով։ Մատուռը իր լոյսը կ'առնու քարձր լուսամուտէ մը՝ հարաւային պատին մէջ տեղէն ծակուած

ու բացուած վանքին ներքին մէկ բակին վրայ։ Ներս խոշոր քարերու կոյտեր կ'իջնեն հիւսիսային պատին երկայնքին, երկու բացուածքներու միջև, և գրեթէ հարաւային պատին ամբողջութեան վրայ։ Արեւելքի և արեւմուտքի պատերը, հաստատուն՝ բայց մաշածոյ կառուցուածքով մը, ուղղահայեացօրէն կը բարձրանան մինչեւ 1մ., 58։ 2մ. 372 չառաւիղով կիսաբոլոր կամար մը, հիւսիսէն-հարաւ երկարաձիգ առանցքով կը ծակէ ծածկելու համար մատուռին մակերեւոյթը, և կեդրոնէն մինչև վեր կ'ունենայ 3.; 95 բարձրութիւն։ Կամարին մէջ չինուած կարգ մը ուղղանկիւն բացուածքներ կ'ապահովեն ստորերկրեայ սեղանին օդաւորումը։ Այժմ անոնք փակուած են և պեղումները տակաւին թոյլ չեն տար մեզ ստուգապէս գիտնալ թէ ինչ տեսակ չէնքեր երբեմն կը բարձրանային մեհելամատարան վրայ, որոնցմէ այսօր միայն կոչտ փլատակներ գոյութիւն ունին։ Արեւելեան պատին կեդրոնը և անոր չնած կը տեսնուի որմախարիսխը փոքր սեղանի մը։ Սեղանին երկու կողմերը պատին մէջ չինուած են երկու որմախորշեր որբանաձեւ կամարին սկսուածքին վրայ, անոնց ծահմանումը տարակուսական չէ. ասոնք մեհելամատարան խորհրդանոցն և սարկաւագատունն են։ Այս վերջնոյն եռակը անյաջող կերպով չարուած կոչտ քարերը ցոյց կու տային խոռոչ մը՝ որուն հնամազօտութեամբը գտնուեցաւ պատով հիւսուած մատնաւորի մը գերեզմանը։ Նման բան մը կարելի էր ենթադրել նաեւ խորհրդանոցին եռակը, եւ իրաւ ալ գուշակութիւնը լրականացաւ, կրկնակ գերեզմանի դիմաց կը տեսնուէր նեղ նրբանցք մը։ Ուրիշ գերեզմաններ գտնուորուած էին նոյն նեղ նրբանցք մը։ Ուրիշ գերեզմաններ գտնուորուած էին նոյն նեղ նրբանցքի մէջ. նեղ և երկայն փոս մ'էր ան, հասկ ստորերկրեայ հողին մէջ. նեղ և երկայն փոս մ'էր ան, հաճայն մատրան առանցքին։ Նոյն գերեզմանը թափուր էր՝ երբ գտնուեցաւ։ Հողերը մեծ սալաքարերով պաշտպանուած էին, բացի արեւելքէն, ուր ցեխի չաղախով չինուած քարէ միջնորմ մը այս փոսը կը բաժնէր աւելի լայն և աւելի խոր ուղղանկիւնի մը այս փոսը կը բաժնէր աւելի լայն և աւելի խոր ուղղանկիւնի մը որ կը տարածուէր սեղանին առջև մինչև դէպի հարաւ։ Այս խոռոչը կը պարունակէր ամեն տեսակ նիւթեր, չորաւ։ Այս խոռոչը կը պարունակէր ամեն տեսակ նիւթեր, չորացած ոսկորներ և թրծուն փոքր կանթեղներ։ Հիւսիսային պատին անսովոր հնչականութիւնը կասկածիլ կու տար մերձակայ քանի մը գերեզմաններու գոյութեան. դէպքը հաստատեց այս ենթադրութիւնը, եւ բարակ միջնորմը փլցնելէ յետոյ երեւան

ելաւ երկայն և նեղ երրորդ փոս մը, միւսներէն սա տարբերութեամբ որ բռնաբարուած չէր: Հինգ չափահասներու մարմինները հոն կուտակուած էին: Դերեզմաններու այս ամբողջութիւնը ծածկուած էր սալաքարերով որ ասոնք իսկ ծածկուած էին կէս մէթր միջակ թանձրութեամբ փլածքներով:

Այս գլուխին նշանակութիւնը ոչ ոքի մտքէն պիտի վրիպի: վանքին ննջեցեալոց գերեզմանին վերապահուած մեհեանատարան ներկայութեան առջեւ կը գտնուինք անտարակոյս. եւ Պ. Շիթթի այս մատուռը կը նկատէ 473 ին Փիտոս սարկաւագին կողմէ շինուածը որ պիտի ընդունէր վանքին հիմնադիրին ոսկերոտիքը: Իրապէս կիւրեղ Սկիւթուպոլսեցիին նկարագրութեան քանի մը մանրամասնութիւնները ըստ բաւականի կը համապատասխանեն պեզուններու արդիւնքին, մասնաւորապէս մատուռին մէջտեղի փոսին, ինչպէս նաև սեղանին առջեւ առանձնաշնորհեալ դիրքը: Երկայնաձև մեծ գերեզմանը կրնայ ըլլալ վանքին վանահայրերուն և քահանաներուն վերապահուած մին այն գերեզմաններէն որոնց համար պատմագիրը մեզ կ'ըսէ թէ բաժնուած են սուրբին (Եւթիմիոսի) չիրմին երկու կողմերը: Սակայն հաւաւի կողմը գերեզմանի բացակայութիւնը քիչ մը մեզ կը չփոթեցնէ, ինչպէս նաև սեղանին առջեւ մեծ խոռոչին ներկայութիւնը ու մատրան արեւելեան պատով ծածկուած երկու չիրմները: Միւս կողմէն կատարելապէս չենք բաժներ մատենագիրին խանդավառութիւնը չինուածքի մը համար զոր ան կ'որակէ խիստ գեղեցիկ և խիստ մեծ: Նոյնպէս ո՛եւէ հետք մնացած չէ այն տապանաքարէն՝ որ կը ծածկէր գերեզմանը, ոչ ալ արձաթեայ սափորէն և այն վանդակապատէն զոր Երուսաղէմի պատրիարքը նուէր ուղարկած էր սուրբին մարմնոյն յուղարկաւորութեան առիթով: Բայց այն ծայրայեղ աւերեալ վիճակը՝ որուն մէջ գըտնուած է մատուռը Ը. դարու երկրորդ կիսուն, հետեւանքովը վանքին կործանումին և հետագայ աւարառութեանց՝ որ ըստ բաւականի լաւ կը բացատրեն աւերակներու կողոպտիչներէն յափշտակուած թանկագին առարկաներու անհետութեացումը: Դուշխ լ նախատեսութիւն տապնապներու, վանականները բացած են գերեզմանը և ապահով տեղ մը պահած են իրենց հօր նըշխարները: Վերջապէս, անտարակոյս պէտք է նկատել կիւրեղ Սկիւթուպոլսեցիին Պատմութեան մէջ չափազանցութեան բա-

ժինը. անոր ճոռոմ նկարագրութիւնը մասամբ մը մեղի համաձակութիւն կու տայ: Ասկէց զատ, ինչ որ ալ ըլլան մեր դըժուարութիւնները, լաւ պիտի չհասկցուի թէ ինչ կրնայ ըլլալ Պ. Շիթթիի կողմէն փութաջան խնամքներով քիչ յառաջ յարդարուած մատուռը, եթէ ան Եւթիմիոսի վանքին մեհեանատուռը չէ: Մաղթենք որ աւելի կատարեալ հետազօտութիւն մը՝ հասկնալի դարձնելով մեղի ընդհանուր կարգը վանքին՝ որ տակաւին քաոսական է՝ ասկէ յետոյ լոյս սփռէ դեռ մութ մնացած կէտերու վրայ»:

4. Հայերը Եւթիմիոսի վանքին մէջ.

Եւթիմիոսի համբաւը հետզհետէ տարածուեցաւ Երուսաղէմի Անապատին մէջ և շրջակաները, ինչպէս գրեցինք. անոր անունը համայք մը եղաւ եւ բազմաթիւ աշակերտներ սկսան դիմել դէպի Սահէլ. մասնաւորապէս բարձր դասակարգէ երիտասարդներ՝ հոգեւոր կեանքի եւ կրօնական ուսման փափաքողներ կը դիմէին անոր. Կապադովկիայէն և Արաբիոյ խորերէն եկող աշակերտները Մեծ Անապատականին յուրջ կրթութեան չնորհիւ տիրացան բարձր դիրքերու, ոմանք բազմեցան Երուսաղէմի ու Անտիոքի պատրիարքական աթոռները, այլք Պաղեստինի եպիսկոպոսութիւններուն զարդերը եղան. Ս. Երկրի քրիստոնէութիւնը ա՛լ աւելի ծաղկեցաւ շնորհիւ Եւթիմիոսի աշակերտաց եռանդագին ջանքերուն:

Նոյն աշակերտներուն մէջ մեծ տեղ մը կը գրաւէին Հայերը: Եւթիմիոսի անունը սիրելի էր Մելիտինեցի հայերուն. անոր հոգեւոր գործունէութեան արդիւնքները առաջին անգամ տեսնուեցան հայկազն Ս. Պողիկտոսի գամբարանին չուրջը. ան հո՛ն ըստացած էր Աստուծոյ հոգիին ներշնչումը. հայ նահատակին գերեզմանէն արձագանգող ձայնը ծնունդ տուած էր այդ Մեծ Անապատականին, որուն անունը երկար ժամանակ պաշտումի առարկայ եղաւ Մելիտինեցիներուն սրտին մէջ: Անոր ուսուցիչներէն մին Սիդոնիոս հայ մ'էր, ուսեալ եւ բարձր լմաստասիրութեան տէր, որ կարողացաւ երկար տարիներ վարել Մելիտինէի ընծայարանը եւ եպիսկոպոսութիւնը: Ուսուցչին եւ

աշակերտին մէջ կանուխէն զոյացած սէրը ներշնչած էր ուսուցչին զալ անապատին խորը ու տեսնել փառքը իր աշակերտին, որ այլ եւս կը նկատուէր երփներանգ եւ հոտաւէտ ծաղիկ մը՝ Անապատի հոգեւոր բուրաստանին մէջ։

430ին Սիդոնիոս Մելիտինէէն այցելութեան կու գար Սահէլ, Եւթիմիոսի մօտ. ան կը տեսնէր Անապատականին մեծ յաջողութիւնները, թէեւ վերջինս կը ջանար ծածկել զայնս իր համեստութեան պատմուճանին տակ։ Ինչ ժամանակ յետոյ, Մելիտինէէն ժամանակին Սիդոնիոսի եղբօրորդիները, երեք համարիւն եղբայրներ, Ստեփանոս, Անդրեաս և Դայիանոս, որոնք անատրամկոյս իրենց հօրեղբօր աշակերտած էին Մելիտինէի ընծայարանին մէջ և ուսած էին այն ուսումները, զոր արդէն Եւթիմիոս ստացած էր նոյն դպրոցին մէջ։ Հայրենակցութեան կը միանար համանման ուսման մը եղբայրակցութիւնը. այդ պատճառաւ Մեծ Անապատականին սէրն ու գորովը աւելի օգտակար պիտի ըլլային հայազգի նորեկ Մելիտինեցիներուն նկատմամբ։ Այս երեք եղբայրներուն անդրանիկը Յաճինիայի (ծովեզերեայ քաղաք Յոպպէի եւ Գազայի մէջ տեղ) եպիսկոպոս կը ձեռնադրուի, երկու տարի սարկաւագ մնալէ յետոյ. կրտսերը՝ Գայիանոս կը գրաւէ Սչաբիոյ մէջ, Մատապայի եպիսկոպոսական աթոռը. իսկ երկրորդ եղբայրը՝ Անդրէաս՝ վանահայր կը նշանակուի Երուսաղէմի Ս. Մինաս վկային մատրան. ինչպէս կը հաւաստէ Սկիւթոպոլսոյն. երեք եղբայրներուն պաշտօնն ու դիրքը չատ կարեւոր էին. մանաւանդ հայազգի Անդրէաս կրօնաւորին Ս. Մինասի մատրան վանահայրութիւնը ե. դարու կիսուն, կ'ապացուցանէ Հայոց Ս. Մինաս մատրան գոյութիւնը Ս. Յակոբի եկեղեցւոյն մէջ, ուր կը մնայ ան մինչեւ ցայսօր, իր ճարտարապետական հնամենի կառուցուածքովն. ուրեմն արժանի է դիտել թէ որ Թէոդոսիոս Ա. Յակոբի ուխտին յարակից Ս. Գևորգին եւ Ս. Մինասի դամբարանայ յիշատակը։ Եւթիմիոսի վանքին մէջ հայ ուսուցչի մը և երեք հայազգի եղբայրներուն ներկայութիւնը չէ միայն որ մեզ խանդավառութիւն կը պատճառէ. հոն տեղի ունեցած է նաեւ ոչ նուազ պատմական իրողութիւն մը, որ կրնայ նկատուիլ ազգային փառք մը կամ պարծանք մը։ Հինգերորդ դարու կիսուն Մելիտինեցի չորս հարիւր ուխտաւոր Հայեր կ'այցելեն Երուսաղէմի Ս. Տեղերը, կը յիշեն Մելիտինեցի

իրենց հայրենակիցը ու կ'իջնեն Յորդանան. այս ճամբորդները երիքովի ճամբուն վրայ Յան էլ–Ահմարէն կը տեսնուին 8–10 քիլոմէթր հեռաւորութեամբ. անոնք ուղիղ կ'երթային Սահէլ՝ տեսնելու իրենց հայրենակիցը. Եւթիմիոս հեռուէն կը տեսնէր հայ ուխտաւորները ու կ'ըսէր վանուց մատակարարին որպէս զի եկողներուն համար ուտելիք պատրաստէ, մատակարարը կը պատասխանէ. Հա՛յր, հազիւ տասն անձերու ուտելիք ունիմ, ի՞նչպէս կրնամ այսքան բազմութեան հաց պատրաստել. Եւթիմիոս մարգարէական ոգւով մը լեցուած կ'ըսէ անոր. գնա՛, ինչպէս քեզ հրամայեցի, վասն զի Ս. Հոգին ըսած է, կարիլ աւելեւրեան եւ յագեցան. մատակարարը գնաց այն փոքր մառանը, ուր քանի մը հացեր կային, և ան չկրցաւ դուռը բանալ. աստուածային օրհնութիւնը հացով լեցուցած էր մառանը, քանի մը վանականներու օգնութեամբ մատակարարը դուռը բացաւ և հացերը դուրս թափեցան մառանէն։ Մեհենոյն օրհնութիւնը տարածուած էր գինիին եւ իւղին վրայ։ Ուխտաւոր հայերը կերան եւ կշտացան, եւ երեք ամիս անկարելի եղաւ մառանին դուռը գոցել։ Մատակարարը Եւթիմիոսի ոտքը լնկաւ եւ ներողութիւն խնդրեց. Սուրբը ըսաւ անոր. «Զաւակս, այն որ օրհնութեանց մէջ կը հնձէ»։ Մելիտինէէն կը ցանէ, նմանապէս օրհնութեանց մէջ կը հնձէ։ Մելիտինեցի հայոց այս ուխտաւորութիւնը անտարակոյս այս առաջին անգամը չէր, եւ ոչ ալ վերջինը։ Ս. Քաղաքին մէջ հիմնուած Ս. Պողիկտոսի գեղաշուք դամբարանը ու դարձեալ Մելիտինեցի Մեծ Անապատականին վանքը հայ քրիստոնէութեան նախնական դարերուն հայ ուխտաւորութեան համար մխիթարութեան եւ հոգեւոր զօրաթութեան կեդրոններ էին. մանաւանդ որ առաջինը հայկական հաստատութիւն մըն էր, և երկրորդը քրիստոնէական սրբավայր մը և կը պարունակէր իր մէջ սուրբ հաւատքին ու կրօնաւորութեան ծառայող բարձր իմացականութեամբ օժտուած հայ եկեղեցականներ։

Այս տողերուն խմբագրութեան առթիւ օգտուած ենք Fr. Raymond Génierի Vie de Saint Euthyme le Grand 377–473 գիրքէն։

Ի Ը

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

---

1. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Երուսաղէմ, ըստ աւանդութեան.

Ս. Լուսաւորչի ուխտաւորութեամբ Երուսաղէմի այցելութիւն տուած ըլլալու մասին 1439 թուականաւ ձեռագիր Բայսնաւորք մը հետեւեալ կերպով կը գրէ «... բնակեցաւ ի լեառն Սկոպոն, որ եւ այժմ կոչի սուրբ Գրիգորի, ուսի եւ սակն կամեցաւ գնալ ի վերայ ծնգաց յԵրուսաղէմ. եւ այնպես իջեալ ի լեռնին եւ անցեալ ի ձորակ մի, առաջի տիրն Հորա Բրիսոս Բ. Սերովբէս... եւ ի տեղւոջն խաչս կանգնեաց եւ Սերովբէս անուանեաց եւ այժմ գեղակ է տեղին որ խաչին կան հրաշագործ, եւ անուն գեղջն կոչի Սերովբէ»: «... Սակն դարձեալ բի երկու ինքնակալին... եկին ի Հռոմէայ յԵրուսաղէմ, եւ վիճակաւ բաժանեցին զՏնաւարհնական տեղիսն, եւ Հայոց անկաւ Սնարին՝ Ս. Գողգոթան եւ Ս. Կարապետն եւ Ս. Յակոբ՝ եւ Ս. Գրիգոր կանգեղ կախեաց, ի Սնարան, եւ խնդրեաց զիջումն յուսոյն յԱստուծոյ... եւ յաղագս այնորիկ Լուսաւորիչ կոչեցաւ» (Տաշեան Յուցակ, էջ 47): Կիրակոս պատմիչն ալ կը կրկնէ վերի խօսքերը, «եւ սակն կախեաց կանգեղ մի սուրբ Գրիգոր ի վերայ գերեզմանին Բրիսոսի, եւ խնդրեաց յԱստուծոյ աղօթիւ, առանց զգալի լուսոյ յուցանել ի Սուրբ Պասեքի տօնին, որ չինի մինչեւ ցայսօր նշանին»: Գրիգոր վարդապետ Տաթեւացին հետեւեալ կերպով կ'արտայայտուի. «... ի սբ. խաղալի Երուսաղէմ յաւուր շաբաթու մեծ ի խնդրոյ նորա վառեցաւ լոյսն 'ի սբ. Յարութիւնն» (Ձեռագիր Հաստր, էջ 444). Գարձեալ նոյնը կը գրէ «Զորորդ վկայ՝ լոյսն զգալի որ չինի ժամու ծագէ ի գերեզմանին ակնհարտ առնելոյն մարդկան զոր ոչ կարեն զայս ուրանալ ազգն Ժիսողաց, զի տես աչացն հաստատ խնդ-

գուր չնչեցան, եւ այս ի խնդրոյ սբ. Լուսաւորչին մերոյ՝ ի պատիւ ազգիս Հայոց» (Անդ, էջ 605): Իսկ Յովհաննէս եպս. Երուսաղէմացի իր Պատմութեան մէջ (էջ 181–2) Ս. Լուսաւորչի մասին հետեւեալը կը գրէ. «Լուսաւորիչն մեր սքն. Գրիգոր սիրէ զգնիր ի Սկոպոն լեառն՝ կամեցաւ գալ յերկրպագութիւն առնելոյ սրբոյ գերեզմանին Բրիսոսի, բայց ոչ հնտիոս, այլ երեսաւոր եւ ի վերայ ծրնկացն: Զոր երեւեալ Սերովբէին ոչ թոյլ եւ նմա հրամանաւն Աստուծոյ այնպիսի տաժանելի կերպիւ գալ, այլ ոտնաթաղ ընթացմամբ հրաւիրեր զնա գնալ: Եւ այսպես երանելի հայրս մեր եկն ի սբ. քաղաքս Երուսաղէմ, եւ անարժան համարեր զինքն մտանել ի սբ. գերեզմանն ածրնկալ: Վասն որոյ ասի թէ ի Հայգիւտն զգնիր վիճեալ գնացի եւ վասն այնորիկ կոչեցին զնկեղեցին յանուն նորին սբ. Լուսաւորիչ: Եւ ապա յաւուր մեծի շաբաթի հրազարուցին ի մտանելն ի սբ. գերեզմանն, ի պատիւ արժանաւորութեան երանելոյն վառեցան առնելոյն կանթեղն որ կայրն ի սբ. գերեզմանն: Եւ ասաց. Լոյս զուարթ...»: Այս աւանդութիւններէն կը բղխի անտարակոյս Ս. Գերեզմանի արտաքին գրան Հայոց պատկերին քով Ս. Լուսաւորիչ անուամբ կախուած կանթեղին աւանդութիւնն ալ:

2. Ս. Լուսաւորչի եկեղեցին.

Ս. Յարութեան տաճարին մէջ Ս. Ղազկիանոսի սեղանէն երկու մէթր հեռաւորութեամբ կը գտնուի Հանդերձից բաժանուան սեղանը՝ որ հայոց սեպհական է. նոյն ուղղութեամբ քիչ մը յառաջ երթալով դէպ ի արեւմուտք անփեղկ դուռ մը կը տեսնուի, ուրկէ 29 աստիճանաւ կ'իջնուի Ս. Լուսաւորիչ եկեղեցին: Հանննէ (էջ 191–93) հետեւեալ կերպով կը նկարագրէ նոյն եկեղեցին «... ունեցող չորս մարմարեայ սիւնս ազնիւս, որոց վերայ կառուցեալ կաթողիկէ մի փառաւոր. վեց պայծառ լուսամոտ, եւ յարեւելս առագ խորանին հրաշալի սեղանիւ եւ դասիւ. եւ յաջակողմն եւս գոյ սեղան մի ազնիւ: Այդ այս սուրբ եկեղեցիս է շինեալ 'ի Հեղինէի յանուն կենսունակ սրբոյ Խաչին: Զմեծ առագ սեղանն եւ զաջակողմեան միւս սեղանն՝ նուիրեաց յանուն քարի առագաստին Դեսպասյ: Իսկ յորժամ Լուսաւորիչն մեր եկեալ առս ձգնեցաւ է ամ. որ ուներ ընդ իմն զնասն զնասն ինչ 'ի նշխարաց սրբոյ կարապետին Բրիսոսի որ առ իմն

կրհր. վերակոչեցաւ սբ. եկեղեցիս յանուն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ միւս խորանն յանուն սրբոյն Յովհաննու Կարապետին միմեանց ցայսօր ժառանգակից: Իսկ միւս ազգին անգիտացեալ կոչեն զեկեղեցիս յանուն Հեղինէ թագուհւոյն, որ եւ ի յոյժ անպատշաճ, զի Հեղինեի իբրն ի շինող եկեղեցւոյս, եւ զիա՞րդ կոչեացի յանուն իւր ի կենդանութեան զեկեղեցիս. որ յաւելուածոյ խոնարհակերպ եւ աստուածասէր էր. զի խաղաղ եւ կամ զիւղ իցէր՝ աւատպատի էր կոչիլ յանուն շինողին. իսկ զեկեղեցին որ տուն է Աստուծոյ զիարդ ժարեի ոք յիւր անուանն մականագրել: Ուրեմն չէ յանուն Հեղինեին. այլ յանուն սրբոյ խաչին սկիզբն անուանակոչեալ, եւ ապա ի վենջ յանուն լուսատուին մերոյ նուիրեցաւ սուրբ եկեղեցիս եւ է ի ձեռս մեր: Որ եւ ի ՌՃԿԸ (= 1719) թուին՝ մերձ ասիմանիի զերկու կամարն որ ղեկաղ հին հողով եւ քարացեալ էր աղբիւրն յառաստաղէ կամարացն մինչեւ ցյատակն՝ Աստուծով յատակեալ ի դուրս հանաք զհողն զանենայն: Եւ յամի շինութեան սրբոյ Յարութեան՝ զեղին զայն նորոգեալ կատարիմս (երկու փայտաչէն սենեակներ?) շինեցին յերկուց կողմանց, եւ կարուղիկի զվեց յուսամուտն որ բնաւին փակեալ հին քարիւ եւ ծեփով՝ նոր բացաք, եւ երկաթիւ ամրացուցաք ի փառս սրբոյ խաչին Քրիստոսի: Եկեղեցւոյս երկայնութիւնն ՃԵ ոսգ է, եւ չայնութիւն ՃՄ. ոսգ է:

Գոյ մերձ խորանին պատուհան մի որ հայի ի յայր Խաչգիւտին, ուր ասի թէ՝ աս նստեր դժխոյն Հեղինե եւ տայր սեղել զհոգն որ եր ի վերայ խաչափայտին Քրիստոսի: Յանեկէ եկեղեցւոյ սրբոյ Լուսաւորչին մերոյ՝ գոյ ասիմանի մի ԺՄ. ոսգ եւ է բառասիոր կոյածեալ. եւ իջեալ այնու տո տեղի իւր կայր կենդանատու խաչն Քրիստոսի, ընդ երկուց խաչեարացն աւազակաց: . . . Ուստի ի վերին խնամոցն՝ դժխոյն Հեղինե գտաւ զիաչն ածրնկալ. ձեռամբ Յուդայի Կիւրղի»:

Հանդէպ այս տողերը կը ցոլացնեն գլխաւոր երկու տեսակ աւանդութիւններ, Գիւտխաչի և Ս. Լուսաւորչի. աւանդութեան համաձայն Հեղինէի գտած խաչին տեղը Ս. Լուսաւորչի եկեղեցիին ներքև է, ուր կ'երթուի սանդուխով մը և կ'երևի որ եկեղեցին ի սկզբան, ինչպես կը գրէ Հաննէ, Ս. Խաչի անուան նուիրուած էր և յետոյ է որ Ս. Լուսաւորչին նոյն տեղւոյն մէջ հօթը տարի ճգնողութեան համար Հայք վերակոչած են զայն Ս. Լուսաւորիչ: Այս եկեղեցին կը վերաբերի Հայոց. ան կը յիշատակուի Սալահէտտինի Հայոց պատրիարքին տուած հրովար-

տակին մէջ: Օտարները սակայն՝ մանաւանդ եւրոպացիները Ս. Հեղինէին անունով կը ճանչնան զայն, անտարակոյս վերև պարզուած պատճառով. վերջապէս աւանդութիւնը Ս. Լուսաւորչի եկեղեցին ու Գիւտխաչի այրը իրարու կապած է փրկչական խաչի յիշատակներով:

Եկեղեցին այժմ թէև հինցած ու անշուք, բայց յայտնի է թէ ունեցած էր և ունի ճարտարապետական գեղեցկութիւն. անոր չորս սիւներու խոյակները կը կրեն բիւզանդական քանդակադործութեան հետքեր. չէնքին հայկականութիւնը կը չեշտուի եկեղեցիին ճիշտ մէջ տեղը չորս սիւներու վրայ սիրուն կաթողիկէի մը կառուցումով. եկեղեցիին արևմտեան կողմի յատակը աւելի բարձր է և յանկարծ կը ցածնայ և կը հաւասարի ատեաններին. երկու կողմի մեծ պատերը շեղակի կը միանան արևմուտք գտնուած միջին դարու երկու փոքր կողակներու հիման: Կ'երևի որ հայ եկեղեցիները անխոտոր պահած են այս եկեղեցիին հին կառուցուածքը, միայն մեծ յարգանքով մը նորոգութիւններ կատարած են անոր մէջ: Շատ զարմանալի երեւոյթներ կը ներկայացնէ այս եկեղեցին, գեղաքանդակ խոյակներով սիւները՝ կը տեսնուի որ՝ հաստատուած են պարզ քարերով հիւսուած պատուանդանի վրայ. ճարտարապետութեան եւ գեղարուեստի տեսակէտով չէնքը իր ամէն կողմերովը համեմատական չէ:

Ուղեգիրները կը յանիշատակեն թէ (Տե՛ս Hanauer՝ "Walks in and Around Jerusalem", էջ 101–3), ըստ ժողովրդային զրոյցներու, այս եկեղեցիին հիւսիսային պատին վրայ, աջակողմեան սեղանին մօտ, նախապէս կար բացուածք մը ուրկէ յատակ կերպով լսել թէ դժոխքէն կը լսուէին պատիժի ենթարկուած տապով լցր

3. Քրիստոսի Խաչին գիւտը.

Նկատի առնելով Ս. Յարութեան Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցիին նախնական անունը որ կ'ըսուի Ս. Խաչ, ինչպէս նաև նոյն եկեղեցիին ու Գիւտ Խաչի այրին տեղագրութիւնը ու թէ եկեղեցիին ու նոյն այրին սերտ յարակցութիւնը՝ մեր գրուածքին ամբողջութեան համար՝ պէտք կը տեսնենք հակիրճ առնրով ծանօթագրել խաչի գիւտին վկայութիւններէը ու անոնց եզրակացութիւնը գիտական արդի քննութեանց համաձայն:

Գիւտ խաչի նկատմամբ ճոխ է աւանդութիւնը և եկեղեցական մատենագրութիւնը: Մենք այս տողերով պիտի չանանք համառօտել գիւտ խաչի նկատմամբ գրուած հին հեղինակութիւններու ստուգութիւնը, քաղելով Dictionary of Christian Biography and Litterature գիրքին մէջ M. F. A.ի յօդուածէն (էջ 439–441):

(1) 333ին Պորտոյի Սնանուն ուխտաւորը որ գիւտ խաչի թուականէն հօթը տարի յետոյ Երուսաղէմ կ'այցելէ: Ցիշեալը կը նկարագրէ քաղաքը և կը յիշատակէ աւանդական Ս. Տեղերը: Նոյն նկարագրութեան մէջ կը գտնուին կայւափայի տունը եւ Զաքէոսի սիւնը որուն կապկային մեր Տէրը, Պիղատոսի պալատը, Դողգոթայի բլուրը, Ս. Յարութեան այրը, որուն վրայ Կոստանդիանոս չինեց գեղեցիկ եկեղեցի մը, ինչպէս երկու եկեղեցիներ՝ մին Ձիթենեաց լերան, և միւսը՝ Համբարձման լերան վրայ: Սակայն խաչին ակնարկութիւն չկայ և ոչ իսկ կը յիշուի Հեղինէի անունը:

(2) Եւսեբիոս Վարիր Կոստանդիանոսի գիրքը գրած է հաւանաբար 338ին, Պորտոյի ուխտաւորէն հինգ տարի վերջ: Ան կը պատմէ Հեղինէի Երուսաղէմ այցելութիւնը, բայց անոր անունը չի կապեր Խաչելութեան և Ս. Գերեզմանի տեղերուն հետ: Ան կը յարէ թէ Կոստանդիանոս եկեղեցի մը չինեց Յարութեան տեղւոյն վրայ, գեղեցկացնելով Ս. Ծննդեան և Ս. Համբարձման այրերը, և իր մօրը յիշատակին երկու եկեղեցիներ՝ մին Բեթղեհէմի մէջ, միւսը Ձիթենեաց լերան վրայ. Եւսեբիոս՝ Հեղինէին և Ս. Յարութեան այրին հետ կապակցութիւն մը չի դներ, այլ միայն միւս երկուքին: Ան կը գրէ թէ կայսեր մօր ճամբորդութեան շարժառիթը ժողովրդեան վիճակին վրայ տեղեկութիւն մը քաղել էր, և Հեղինէի ձեռօք խաչի գիւտի մասին ակնարկութիւն մը չունի:

(3) Կիւրեղ Երուսաղէմացին՝ որ գրած է նախապատրաստական ընթերցուածքներ, կը յիշէ այն տեղը ուր մեր Տէրը խաչուած էր. և յիշուած գիւտէն վերջ ոչ աւելի քան քսան տարի, Խաչափայտի մասին ունի երեք ակնարկութիւններ (Դ. 10, ժ. 19, ԺԳ. 4): Ամէնէն որոշը գրուած է ժ. 19, ուր ան կը նկարագրէ թէ «խաչը մինչև հիմակ կը տեսնուի մեր մէջ»(*):

Կիւրեղ խաչի երևման առթիւ իր կոստանդ կայսեր գրած նամակին մէջ որոշապէս կը գրէ թէ խաչը գտնուած էր իր հօրը՝ Կոստանդիանոսի օրով(**):

Կիւրեղ իր առաջին վկայութեան մէջ կ'ապացուցանէ որ իր օրը կը հաւատային թէ Տիրոջը իրական խաչափայտը գտնուած էր. բայց հաւատքի հոգը կը պակսէր: Ան երբ խաչին վրայ կը խօսի, չի յիշեր Հեղինէն: Այս երեք հին հեղինակութիւնները ցոյց չեն տար Հեղինէն իբր գտնողը խաչին:

Սիւլբիկոս Սեւերոս (395), Ամբրոսիոս (395), Ռուֆինոս (400), Կիւրեղ Ալեքսանդրացի (420), Սոկրատ (430), Սոզոմենոս (430), Թէոդորէտ (448), Տուրացի Գրիգոր (595). ասոնք են հիներէն գլխաւոր հեղինակները որ բաւական մանրամասն կը պատմեն խաչի գիւտը Հեղինէի ձեռքով, ասոնցմէ ոմանք կը յիշեն թէ խաչին հետ գտնուած են նաև խաչին բևեռները եւ Պիղատոսի տախտակը: Կիւրեղ Ալեքսանդրացին սակայն, յատկանշական պարագայ մը կը հաղորդէ մեզ Ջամարիա վարգարիին վեհկնուրեան մէջ, ըսելով թէ խաչափայտը տարբեր ժամանակներու մէջ գտնուած է խաչին վրայ գամուած բևեռներով(***):

(*) Հայերէն թարգմանութիւն կը գրէ.
«Վկայէ եւ փայտ խաչին մինչեւ ցայսօր առ մեզ երեւեալ, եւ ի բազում հաւատացեալք սփռեալ ասի ընդ ամենայն տիեզերս (ժ. Գիրք)։ «Եւ փայտիւն խաչին արդ ամենայն տիեզերք լցեալ իսկ են»։

(**) «Քանզի առ աստուածասիրաւն և առ երջանիկն յիշատակաւ Կոստանդեաւ հարքըն քով՝ փրկական փայտ խաչին՝ յերուսաղէմ եղեւ գտեալ յաստուածայնոցն չնորհաց. այնմ՝ որ զգեղեցիկն խնդրեաց զբարեպաշտութիւն, զծածկելոցն առըր Տեղիքս մատուցին զգիւտ»։ (Տե՛ս, ձառագ.)

(***) Կիւրեղ Ալեքսանդրացին այս բացատրութեան վերաբերմամբ Դաւիթ Անյաղթի Բառարացուցեաց խաչի ճառին մեկնիչը կը յիշատակէ

Թէոդորէտ ալ խաչը գտնուած տեղւոյ մասին տարբերակ մը ունի և կ'ըսէ թէ «խաչը գտնուած է տիրոջ գերեզմանին մօտ։ Իսկ Գրիգոր Տուրացին խաչի գիւտի մասին կը գրէ այնպիսի մանրամասնութիւններ՝ զոր չունին ուրիշները։

Օքսֆորտի Ս. Ստեփանոս գպրոցի նախորդ մեծաւոր Argles՝ որուն յօդուածէն քաղեցինք մեր վերոգրեալ համառօտ տողերը, մէկ խօսքով, կանխագոյն հեղինակներու վկայութեանց վրայ յենլով հաւանական չի գտներ որ Հեղինէ մասն ունեցած ըլլայ խաչի գիւտին մէջ։

Ստոյգ է թէ Հեղինէի երուսաղէմ այցելութեան առթիւ չափազանցուած պատմութիւններ չինուած են և անոր նկատմամբ ստեղծուած զրոյցները դարէ դար զարգացում գտած են, և նոյն իսկ պատմիչ մը՝ Նիկոփորոս իր Եկեղեցական Պատմութեան մէջ (Գիրք Է, 30) Հեղինէի կ'ընծայէ բազմաթիւ եկեղեցիներու հիմնարկութիւնը, թէ՛ Երուսաղէմի և թէ՛ Գալիլիոյ մէջ, ինչ որ պատմականօրէն ստոյգ չէ, վասն զի Հեղինէ ութսունամեայ կին մը շատ քիչ մնացած է Երուսաղէմի մէջ և իր վերադարձէն քիչ յետոյ վախճանած է։ Կիւրեղ Երուսաղէմացին իր Կոչումն Ընծայութեան գիրքին մէջ թէև կը յիշատակէ խաչին ներկայութիւնը ու անոր մասանց աշխարհի ամէն կողմն ցրուումը, բայց չի-տակ է թէ չի յիշատակեր Հեղինէի միջոցաւ խաչին գիւտը, նոյն-

---

դէպք մը որ կապակցութիւն ունի Գիւտ խաչին հետ, «Յայսոսիկ աւուրս հաւատաց Պատրոնիկէ կինն կղզեայ՝ բանիւ սուրբ առաքելոյն Պետրոսի, և մեծաւ յուսով գնաց ի Հռոմէ ընդ ուսերօք և դնաց տերօք։ Եւ խնդրէ ման ինչ յառաքելոցն ի կեցուցիչ խաչէն, եւ առեալ գնաց ի Հռոմ։ Եւ ըստ պայազատութեան քրիստոնէութեանն ժառանգեն Հռիփսիմէ եւ Գայիանէ, որք էին յազգէ Պատրոնիկեայ երկոքինն»։ Խորենացին Հռիփսիմեանց նահապարհորդութեան նաւին մէջ կը վկայէ այսպէս. «... խաչ ոս. Յակոբայ՝ զմածեալն տէրունական արեամբն, ի կենաց փայտէն հատեալ վասն խնդրոյն Պատրոնիկեայ տիկնոջ»։ Այս աւանդութեան իբր հնագոյն վկայութիւն Ս. Սահակի անուամբ հին տօնացոյցին մէջ կը գրուի «(ժ. Մարերի, 17 Մայիսի) Գիւտ խաչին, յԱբգարու թուղթն Պատրոնիկէն գիտ և ընթերցիր»։ Ձեռագիր ճառընտիրներու մէջ առանձին գրուած է Պատրոնիկէի խաչին գիւտը հետևեալ խորագրով. «Սրբոյ առաքելոյն Թադէոսի պատմութիւն յաղագս առաջին գիւտի սուրբ խաչին, որ յաւուրս Յակոբոս առաքելոյն, ի ձեռն Թագուհւոյն Պատրոնիկեայ, որ էր կին կղաւդեայ կայսեր Հռոմայ»։
(տե՛ս Լաբուբնեայ, էջ 11-12)

պէս Եւսեբիոս Վարք Կոստանդիանոսի գիրքին մէջ Հեղինէին երուսաղէմ այցելութիւնը կը յիշատակէ, բայց ան ալ կը լռէ խաչի գիւտին վրայ. սակայն պէտք է նկատի առնել որ Կիւրեղ Երուսաղէմացին որքան որ իր վերև յիշուած գիրքին մէջ չի յիշեր խաչին գիւտը, բայց ան շատ բացայայտ կը յիշատակէ խաչի երեւման առթիւ Կոստանդ կայսեր զրած նամակին մէջ, — այդ նամակին վաւերականութիւնը անհերքելի է — թէ խաչը գտնուած է իր հօրը՝ Կոստանդիանոսի օրով, ինչպէս յիշեցինք. իսկ գալով Եւսեբիոսի՝ ան ալ խաչի գիւտը կը յիշէ իր Բոնիիկոն գիրքին մէջ։ Այս պատմիչները Հեղինէի ժամանակակից ըլլալով՝ կը տարուինք մտածել թէ խաչի գիւտին մէջ Հեղինէն հեռուէն կամ մօտէն դեր մը ունեցած պէտք է ըլլայ, մանաւանդ որ Դ. դարէն սկսեալ խիստ տարածուած է աւանդութիւնը քրիստոնեայ ժողովուրդներու մէջ, եւ մատենագրութիւնը ու եկեղեցական երգերը աւելի կը շեշտեն այս գաղափարը, որուն մեծապէս կը սատարէ Գիւտ խաչի տեղին վրայ կառուցուած Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցին աւագ սեղանին մօտ, պատուհանաձեւ այն բացուածքը՝ որուն համար աւանդութիւնը կ'ըսէ թէ ան Հեղինէ թագուհիին նստած տեղն էր, եւ ուրկէ խաչին ծածկուած տեղին մէջ աշխատողներուն ան առատօրէն դրամ կը հասցնէր՝ աւելի արագ յառաջ տանելու պեղումները։ Աւանդութիւնը երբեմն կը փոխուի կամ չափազանցութեան կ'ենթարկուի, բայց խորքը կը մնայ անայլայլ։ Հայաստանեայց Եկեղեցին այդ մասին ալ կը հետեւի քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ ճամբուն, Ս. Յարութեան մէջ ունեցած իր եկեղեցիովը, տօնակարգովը եւ իր խաչի հին ներբողներովն ու երգերովը։ Այս տողերուն իբր կնիք կը դնենք մեր Խորենացիին հետևեալ խօսքերը (Բ. Գիրք, էջ 173) «... Ցեւս այնորիկ առաքեաց զՀեղինէ զայրն իւր յերուսաղէմ ի խնդիր պատուական խաչին, զոր եւ եգիտ իսկ զիրևրական փայտն, հանդերձ հինգ քեւռոֆն»։

Ի Թ

ՀԱՅ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԸ ԾԱԳՈՒՄԸ ՄԱՐ-ՍԱԲԱՅԻ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

---

1. Մար-Սաբայի վանքին տեղագրութիւնը.

Մեր պատմագրական աշխատանքներուն առիթով ծանօթացած էինք որ, ի հնումն, Մար-Սաբայի վանքին մէջ գոյութիւն ունեցած է Հայ Միաբանութիւն մը: Այս մասին մեր պատմական տեղեկութիւններն ու յիշատակարանները հաղորդելէ յառաջ, փափաքեցանք գաղափար մը կազմել այդ վանքին մասին, տեղագրական և պատմական տեսակէտով. ուստի, այս նպատակաւ օգոստ. 23ին, Բեթղեհէմի մեր տեսուչ Տ. Աշոտ վրդ.ի (այժմ հանգուցեալ) և տեղւոյն ուսուցիչ Պ. Յակոբի հետ, դէպ ի Մար-Սաբա ճամբորդութիւն մը ուզեցինք կատարել: Բեթղեհէմէն երկուքուկէս ժամ պէտք էր ձիով ճամբորդել դժուարին ճանապարհէ մը, որուն անընդհատ ելեւէջները մինչեւ Մար-Սաբա, ճամբորդի մը համար բաւական յոգնեցուցիչ էին: Մար-Սաբա, Բեթղեհէմէն դէպ ի արեւելք, 2.30 ժամ հեռաւորութեան ունի, Մեռեալ Ծովէն ալ, դէպ ի արեւմուտք 1.30 ժամ: Որոշեալ ժամուն հասանք Մար-Սաբա, որուն համառօտ տեղագրականը ընելէ յառաջ, պէտք է որ անոր հիմնադրին նկատմամբ քանի մը պատմական տեղեկութիւններ տանք: Մար-Սաբա կապադովկիացի էր, ծնած է 439ին, եւ Երուսաղէմ եկած է 456ին, երիտասարդութեան սկիզբը. քիչ ժամանակ ետքը կը ներկայանայ համբաւաւոր անապատական Եւթիմիոսի եւ անոր յանձնարարութեամբ կը մտնէ Թէոկտիստոսի մերձակայ վանքը եւ կը հաստատուի հոն: Մար-Սաբայի կենսագրութիւնը 556ին գրած է իր աշակերտը, Սկիւթուպոլսեցի Կիւրեղ կրօնաւոր: Սկիւթուպոլսեցին ստուգապատում պատմիչն է Երուսաղէմի Մեծ-Անապատին այն հոյակապ վանականաց, որ Դ. եւ Ե. դարերուն

կարեւոր դեր մը կատարեցին Երուսաղէմի եւ շրջակայից կրօնական եւ եկեղեցական կեանքին մէջ. ան ո՛չ միայն Եւթիմիոսի եւ Մար-Սաբայի նման մեծ դէմքերու կեանքը ուրուագծած է, այլ նաեւ պատկերացուցած է իր ապրած դարուն դաւանաբանական վէճերը եւ վանական յարաբերութիւնները, չհեկեան տեսութիւններով. այդ պատճառաւ ձեռնհասներ Սկիւթուպոլսեցին նմանցուցած են Պլուտարքոսին: Այս սիւնակները չեն ներեր կիւրեղի գրած կենսագրութեան բոլոր մասերը ծանօթացնելու, որուն յուշարէն բնագրէն զատ կը գտնուի նաեւ լատիներէն թարգմանութիւնը, հին տպագրութեամբ: Սկիւթուպոլսեցիին համաձայն, Մար-Սաբա վերջապէս իր դաստիարակութիւնը կ'ընդունի Եւթիմիոսի վանքին մէջ, և մեծ համբաւ կ'ըստանայ իր սրբակեաց վարքին, բնական ուշիմութեան եւ անխոնջ գործունէութեան պատճառաւ. տարիքին կատարելուն՝ ան կ'ըլլայ մեծ կազմակերպիչ մը Երուսաղէմի Անապատներուն եւ ղեկավար մը հազարաւոր անապատականաց: Ս. Քահանայապետին պատրիարքները մանաւանդ համակրանք մը կը տածեն ապագի պատրիարքները մանաւանդ համակրանք մը կը տածեն անոր հանդէպ և կը յանձնեն անոր զանազան առաքելութիւններ: Բայց ի իր մանաւանդ վանքէն, զոր հինած է 483ին, քառասուն եւ հինգ տարեկանին, կը հիմնէ նաեւ ուրիշ եկեղեցիներ, այլ եւ այլ առիթներով, ինչպէս կը վկայեն մեր Յայսմաւուրքը և պատմանաւանդ նպաստները կը յատկացնէր մխիթարեան աղքատաց և եկեղեցիներու շինութեան. անոր հրաշակերտ մեծ վանքը, որ մինչև այժմ գոյութիւն ունի, կը մնայ իբր հոյակապ կոթող մը՝ հիմնադրին եկեղեցանուէր կեանքին և անխոնջ գործունէութեան, ինչպէս նաև անոր արտակարգ ազդեցութեան, որ կը տարածուէր մինչև բիւզանդական արքունիքը:

Բախտն ունեցանք նոյն անապատասուն ձորունկին հինաւուրց վանքին այցելութիւն մը տալու. հիացումով դիտեցինք և քննեցինք նոյն փառաւոր հաստատութեան ամէն կողմերը. վանքը՝ հոյակապօրէն՝ և լայնանիստ բերդի մը նման նստած է մեծ ծաղանգուած ժայռի մը գագաթը, լայնչի մասերով իբր աշտարակ կը բարձրանայ կեդրոնի Ձորին վրայ: Վանքին երկաթեայ դուռը չմտած հանդիպակաց կողմը կը տեսնուի կամարաց Աշտարակ ըսուած բերդանման շէնքը, ուր կը հիւրընկալուին կին ուխտաւորները, որոնց համար ներքին սենեակներ չեն բացուիր:

տաւորները, վասն զի Մար–Սաբայի վանքը հինէն ի վեր արգիլուած է ընդունիլ կին ուխտաւորները: Երկաթեայ գրան քովը ի վեր չինուած է Եւդոկիայ Աշտարակը, ի յիշատակ Եւդոկիա թագուհիին՝ Եւթիմիոսի տուած այցելութեան. ունի եկեղեցի մը յանուն Ս. Սիմէոն Սիւնակեացին և կը ծառայէ իբր դիտանոց մը վանքի դռնապանին համար: Երկաթեայ դռնէն՝ կրկնակի աստիճաններով կը հասնին գաւիթ մը, ուր կայ ուխանկիւնի գմբէթաւոր փոքրիկ չէնք մը: Այս չէնքին ներքին մասը գեղեցիկ զարդարանքներ ունի եւ նորակերտ պատկերներ. հո՛ս է Մար–Սաբայի գերեզմանը եւ տապանը, որուն վրայ քանդակուած է յիշատակարան մը. այժմ սրբոյն մարմինը հոն չի գտնուիր, վասն զի փոխադրուած է Վենետիկ, ինչպէս կը վկայէ Պարոնիոս իր Յայտմաւուրքին մէջ: Մար–Սաբայի գերեզմանին հիւսիսային արեւելեան կողմն է Ս. Նիկողայոսի մատուռը, ժայռի մը մէջ փորուած եւ յատակը մոզայիք. երկաթաթել վանդակի մը ետեւը, ինչպէս նաեւ մատնաւոր երկու փայտէ անտուկներու մէջ, հոս ցուցադրուած էին կոստակուած գանկերն ա՛յն վանական քառասուն վկաներուն, որ նահատակուած են Ք. գարուն, Պարսից արշաւանքին ժամանակ: Նոյն մատրան աջ կողմը կայ չափահասներու յատուկ մարմարեայ մեծ աւազան մը: Մեզ առաջնորդող փոխ տեսչին բացատրութեան համաձայն, Մար–Սաբան այս մատուռը յատկացուցած էր Հայ միաբաններուն՝ ժամերգութեան եւ պատարագի համար: Գաւիթին արեւելեան կողմը կը բարձրանայ վանքին խաչաձեւ եկեղեցին, որուն գմբէթը հաստատուած է մեծազանգուած կամարներու վրայ. գմբէթը սիւներ չունի. միայն հարաւային եւ հիւսիսային պատերուն մէջ չինուած են կամարներուն իբր յենարան՝ հնգական սիւներ, որ եկեղեցւոյ արտաքին կողմէն ալ կ'երեւան լայնանիստ չինուածքներով: Այս գեղատեսիլ եկեղեցին, որուն երկարութիւնն է 24 մէթր և լայնութիւնը 9 մէթր, ծածկուած է որմանկարներով, որոնցմէ ոմանք շատ հին, ոմանք ալ չինուած 1865ին: Դասը կոնքէն (nef) բաժնող մասը ունի ոսկեզօծ փայտէ ճարտար քանդակագործութիւններ. եկեղեցւոյն ճարտարապետական կառուցուածքը արժանի է գնահատութեան: Այս եկեղեցիին հիւսիսային դռնէն դուրս ելնելով աստիճանէ մը վեր ելլանք դէպ ի տանիք, որ 150 մէթրէ աւելի բարձրութիւն ունեցող կիրճի մը չորցած հեղեղատին վրայ

կը ծռի: Ջորին միւս կողմը քարաժայռին մէջ կը տեսնուին Ե. և Զ. դարուց ճգնաւորներու բնակած բազմաթիւ այրերուն բացուածքները: Այցելեցինք նաև Ցովհաննէս Դամասկացի նշանաւոր վարդապետին գմբէթազարդ և յատակը մոզայիք մատուռը, նախապէս քարայր մը, ուր ան ապրած էր Ք. դարուն, և հոն ցոյց տուին մեզ անոր գերեզմանը: Ոմանց ըսածին նայելով՝ Դամասկացիին մարմինը փոխադրուած է Մոսկուա: Յետոյ երկու հարիւր աստիճաններէ վար իջանք, դէպ ի հեղեղատը, ուր Մար–Սաբա սուրբորակ ջուր մը բղխեցուցած է. ջուրի ահագին ապառաժէ մը կաթկթելով այլ եւ այլ տեղերէն՝ կը լեցնէ երկու փոքր աւազաններն և աւելորդը դուրս կը հոսի ճամբորդներուն համար: Ձախէն կը տեսնուի ա՛յն հնամենի արմաւենին զոր Մար–Սաբան իր ձեռքով տնկած է ժայռի մը պատռուածքին մէջ, անկորիզ են անոր արմաւները. աւանդաբար կը պատմուի թէ երբ ծառը կը չորնար ուրիշ մը կը ձլէր անոր արմատէն: Փաքեցանք այցելել Մար–Սաբայի բուն իսկ ճգնարանը. կեդրոնական գաւիթէն աստիճանով մը իջանք փոքրիկ պարտէզ մը, ուրկէ բարձրանալով տանիք՝ հասանք Մար–Սաբայի մատուռը, ամբողջութեամբ փորուած ժայռի մը մէջ: Դուռ մը որ կը բացուի մատրան անջրպետին մէջ, հաղորդակցութիւն ունի այն քարայրին հետ, ուր Մար–Սաբան կէս դարու միջոց անցուցած է իր ժամանակը աղօթքով և մեծ խստակրօնութեամբ: Այս քարայրին հետ կապակցութիւն ունի սիրուն աւանդավէպը ա՛յն առիւծին, որ երկար տարիներ բնակակից եղած է Մար–Սաբայի, որուն մէկ մեծադիր նկարը՝ առիւծին հետ միասին, ճգնարանին դրան վրայ պատկերուած է: Ճգնարանին իբր առաստաղ կը ծառայեն իրարու վրայ դրուած վիթխարի քարեր, յատակն ալ ամբողջութեամբ մոզայիք: Աւարտելով մեր այցելութիւնը, չնորհակալութիւն յայտնեցինք մեզ առաջնորդող տեսչին և ասպնջականութիւն վանականներուն, և երեք ժամ միայն մնալով, Տէր Ցովի վանքն ալ հանդիպելէ յետոյ, վերադարձանք Բեթղեհէմ: Մեր առած տեղեկութեան նայելով Մար–Սաբայի միաբանութիւնը պատերազմէն առաջ կը բաղկանար 70 վանականներէ, ներկայիս անոնց թիւն է 30: Իրենց տարեկան ծախքն է 500 ոսկի, որ կը հայթայթուի վանքին ձեռնատուներէն եւ այլներէն: Իրենք սակաւապէտ են և աշխատասէր. բնաւ միս չեն ուտեր,

կը գոհանան ձկնեղէնով եւ բանջարեղէնով. հացը իրենք կը պատրաստեն ղուտ ցորենէ: Վանքին 700 հատորի չափ ձեռագրերը փոխադրուած են Ցունաց Երուսաղէմի պատրիարքարանի մատենադարանը:

2. Նշանաւոր դէմքեր Մար–Սաբայի.

Գրական և հոգևոր կեանքով այս վանքին մէջ նշանաւոր հանդիսացած է, Յովհաննիկս Լուսաւոր որ ծնած է Հայաստան 454ին. եպիսկոպոս Նիկոպոլսի (Սեբաստիա) 481ին, 28 տարիկան. 491ին փախչելով Մար–Սաբա եկած է եւ մէկու մը չէ յայտնած իր եպիսկոպոս ըլլալը, մինչև 498 ծառայական աշխատութիւն ունեցած է վանքին մէջ: Մար–Սաբա երբ եղիա պատրիարքին տարաւ զայն եպիսկոպոս ձեռնադրել տալու, Յովհաննէս յայտնեց դաղտնիքը ու պատրիարքը պատճառով մը ետ թողուց ձեռնադրութիւնը, ժամանակ մը ևս ծառայեց վանքին և վախճանեցաւ 13 մայիս 558ին: Յովհաննիկս Նեսուձն (Hésychaste), կիւրեղ Սկիւրուպոլսեցի, Յովհաննիկս Մոսկոս (Mosch), Յովհաննիկս Դամասկացի (* 4 դեկտ. 748), Սաբացի Ստեփանոս (եղբօրորդի Յովհաննէս Դամասկացիին) նոյն վանքին մէջ զարգացում ունեցան և պաշտօններ վարեցին դուրսը, ինչպէս նաև Կոզմա Երգիչող (Le Mélode), Անդրեաս Կրետացի, Թոմիս Բժիշկ, յետոյ պատրիարք 811ին. Ղեւոնդ՝ կենսագիր Սաբացի Ստեփանոսի, Թեոդոր Եղեսացի, այս անձը (Թ. դար) կ'ըսուի Ասիկրետա, որ Հայոց Աչոտ Մսակերին քովը դնաց դաւանական վիճաբանութեան համար ընդդէմ Նանա ասորի սարկաւագին, որմէ պարտուելով վտարուեցաւ իշխանին պալատէն: Եղեսացին կատարած է նաև Մուսվիէ խալիֆային կողմէն պատուիրակութիւն մը Միքայէլ Գ. Արքային կայսեր և անոր մօրը մօտ: Թէոդոր մնացած է Մար–Սաբայի վանքին մէջ: Եղեսացին ունի գրական գործեր:

Անուանի եղաւ Անտիոքոս՝ մեծաւորը Մար–Սաբայի վանքին, որ հեղինակն է երկու դրուածքներու, Նաւակի մը՝ զոր գրած է Անկիւրիոյ Ագգալին վանքի վանականներէն Եւստաթիոսի, և Պարսից կողմէն Երուսաղէմի արչաւանքի Պատմութեան:

Թ. դարուն նոյն վանքը ունեցած է Միքայէլ անուամբ նահատակ մը, որուն վկայաբանութիւնը գրուած է անոր ազգականն և ուսուցիչը Եղեսացի Թէոդորի վարքին մէջ:

3. Մար–Սաբայի վանքին պատմութիւնը.

Ըստ Մարինոսի, կիւրեղ Սկիւթուպոլսեցիին նայելով՝ Մար–Սաբա այս վանքը չինած է Յուստինիանոս կայսեր նիւթական օժանդակութեամբը, ինչպէս որ կը հաստցուի նոյն կայսեր գրած մէկ նամակէն՝ ուղղեալ առ եպիսկոպոսն գաւառին. չըլլակայ թէ նամակէն վերջ մնալու համար, վանքը չինուած է բերդի մը նման, ըստ յանձնարարութեան կայսեր: Նոյն իսկ Մար-Սաբայի օրով այս վանքին մէջ կ'ապրէին բազմաթիւ անապատականներ, որոնց գլխաւոր բնակարաններն էին մերձակայ ձորակին փապարները. երկաթի մը ծայրով չատ դիւրին էր փխրել ժայռը և չինել բնակարաններն, որ մինչև ցայսօր կը մնան, ինչպէս ըսինք: Կ'ըսուի թէ այստեղ բնակած են մինչև 10,000 վանականներ, որ կ'ապրէին իրենց ձեռակառ աշխատութեամբ: Դարձեալ, ըստ Մարինոսի, այս վանքին մէջ ընձիւղած են Սաբայիֆ, կիւրեղացիֆ, Եւսեբեանիֆ և Դամասկացիֆ, նոյն իսկ Ոսկերերան, որ իբր թէ իր մէկ պիրքին մէջ նշանակած է այս պարագան: Սաբայի վանքը՝ իսկզբանէ ենթակայ էր դրացիներուն յարձակմանց: Ի. դարու սկիզբն ալ Պարսիկները հիմնայատակ կործանեցին զայն: Ցիշատակութիւն մը չունինք թէ Խաչակիրք ժամանակ ունեցան վերականգնելու այս վանքը: Մեր Երուսաղէմացի Յովհաննէս Պիսկոպոսը (Հաննէ) իր Պատմութեան մէջ (էջ 282) կը գրէ թէ կիւ Մանուէլ թագաւորը վերանորոգած է զայն պարիսպներով, աշտարակներով և խուցերով, և ան կը թուէ ութը եկեղեցիներ նոյն վանքին մէջ: Պատմութենէ յայտնի է թէ կիւ Մանուէլ (1143–1180) քաղաքական նկատումներով սերտ յարաբերութեան մէջ էր Երուսաղէմի լատին թագաւորին և կղերին հետ, և թէ անոնց կ'ընծայէր նիւթական եւ բարոյական օժանդակութիւն: Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցւոյն վերանորոգութեան առթիւ, ինչպէս կը վկայէ նոյն եկեղեցւոյն մէջ գտնուած լատիներէն չատակարան մը. այս պատճառով, հաւանական է որ նոյն կայսրը վերաշինած ըլլայ Մար–Սաբայի վանքը: Դարձեալ, ըստ Մարինոսի, Կիւրեղ Սկիւթուպոլսեցի ինքն ալ վանքին մէջ ապրած է եւ մեռած:

բինոսի, կը հասկցուի թէ ժամանակ մը Մար–Սաբա վանքը սեպհականութիւնը եղած է յունադաւան վրացւոց, որոնք ԺԲ. դարուն վերջերը, դրացիներուն յարձակումներէն ձանձրանալով՝ ծախեցին զայն Սերպերուն, և վերջիններս ալ աւերեալ տեղերը նորոգեցին և կը պահպանէին վանքը, բայց Սերպ տէրութեան անկման հետեւանքով չկրցին մշտապէս դիմադրել դրացիներու թշնամութեանց: Սուլթան Սէլիմի գրաւումէն յետոյ, ինչպէս կը գրեն պատմիչք, 1570ին նոր կուսակալ մը կը հասնի Երուսաղէմ, Մար–Սաբայի հազարի չափ կրօնաւորները՝ ընծաներով կը նորհաւորութեան կուգան կուսակալին և կը խնդրեն անոր պաշտպանութիւնը. կուսակալը կ'ընդունի ընծաները, բայց այդ բազմաթիւ կրօնաւորներուն՝ Մար–Սաբայի բերդանման վանքին մէջ բնակութիւնը տէրութեան չահուց իբր թէ հակառակ գտնելով՝ կը հրամայէ եէնիչէրիներուն որ անոնց միայն երեսունը վերադարձնեն և մնացեալները մահացնեն: Մինչև 1639 Սերպք որոշ իրաւունքներ ունէին Ս. Տեղեաց մէջ, և տակաւին իրենց ձեռք կը մնար Մար–Սաբայի վանքը: Նոյն թուականէն քանի մը տարի առաջ անոնք չատ աշխատեցան ի հոգևորս անկախ ըլլալ յոյն պատրիարքարանէն. 1634ին, թէև ձեռք բերին կրօնական անկախութիւն, բայց իրենց վանքերը 54,000 դահեկանի պարտքի տակ ինկած և գրաւի դրուած էին. և Մար–Սաբան ալ աւերեալ վիճակ մը ունէր: Սերպերը ճարահատեալ ուզեցին ծախել իրենց գրաւի դրուած վանքերը և պարտքերնին հատուցանել: Քրիստոնեայ ազգերը իմանալով Սերպերուն նպատակը՝ ուզեցին ծախու առնուլ անոնց վանքերը: Յունաց պատրիարքարանը սակայն, ինչպէս որ կը պատմէ Աստուածատուր եպիսկոպոս՝ արաբացի պատմիչէ առնելով, ամէն գնով աշխատեցաւ Սերպերուն վանքերը սեպհականել՝ վճարելով պարտուց ամբողջ գումարը պետական անվճար տրոց հետ միասին: Այս գումարին հայթայթումը ձեռք բերուած է գլխաւորապէս ի Ռումանիա և յեգիպտոս, եւ ահա այս կերպով յոյն պատրիարքարանը տէր եղած է Մար–Սաբայի վանքին (Տե՛ս Ժամանակագրական Պատմութիւն Երուսաղէմի, Հար. Ա. էջ 322–4):

4. Հայ Միաբանութեան ծագումը.

Ա. Սկիւթուպոլսեցիին խօսքերը այդ մասին.

Հայ Միաբանութեան ծագման պատմութիւնը գրելու համար մեր ձեռքը չունինք հին օրերէն մնացած հայերէն յիշատակարան մը. այդ մասին դարձեալ մեզ իրազեկ ընողն է Սկիւթուպոլսեցին, այն անզուգական պատմիչը՝ որ ստոյգ գիծերով կը ներկայացնէ Դ. և Ե. դարուց Երուսաղէմի Անապատին մ'ըն Հայերը՝ որ եկած էին Հայաստանէն և յարած անապատի զանազան վանքերու եղբայրութեանց, պահելով իրենց լեզուն և կրօնական ինքնուրոյն կեանքը. Ղուզիպայի, Եւթիմիոսի, Թէոդոսի (Տէյր Տօղի) և Մար–Սաբայի գլխաւոր վանքերուն եղբայրութիւննէրն, ըստ Սկիւթուպոլսեցւոյն, միևնոյն ազգութիւններէ կազմուած չէին: Այս վանքերու եղբայրութիւնները Ասու Տիզի, Ղազարիոնի և Փարանի կամ պաղեստինեան ոեւէ գիւղի տեղացիներէն չէին կազմուեր: Պէտք է խոստովանիլ թէ այդ վանուց եղբայրներն եկած էին Յունաստանէն, Փոքր–Ասիայէն և Հայաստանէն. անոնցմէ ոմանք Յոյն էին, ոմանք Կապադովկիացի եւ այլք Հայաստանցի. և այս նորեկներ ընդհանրապէս բարձր իմացականութեան տէր անձեր էին (Տե՛ս Raymond Génierի Vie de St. Euthyme le Grand, *էջ 49):*

Կը փափաքինք առ այժմ միայն գրել Մար–Սաբայի հայ վանականութեան ծագումը: Ինչպէս կը հասկցուի Սկիւթուպոլսեցիին խօսքերէն, նոյն իսկ Մար–Սաբայի օրով ծագում առած է նոյն վանքին Հայ Միաբանութիւնը: Մար–Սաբայի յունարէն կենսագրութեան քանի մը հատուածները, զոր մեր խնդրանքով, բարեհաճեցաւ թարգմանել մեր հոգելոյս Դուրեան Ս. Պատրիարք Հայրը, Սաբայի վանքին հայ միաբանութեան պատմական ծագման տեսակէտով թանկարժէք տողեր են. ա'չ մի Հայ պատմիչ երբեք յիշատակութիւն չունի Երուսաղէմի Անապատին վանականութեան մէջ ապրող վաղնջական հայ միաբանութեանց վերաբերմամբ. Սկիւթուպոլսեցին կ'աւանդէ մեզ հին գարու հայկական վանական կեանքէն նորութիւններ, որոնց համար Հայ Եկեղեցական Մատենագրութիւնը չնորհակալեօք կ'արձանագրէ անոր այս պատմական չքնաղ տողերը:

Ահա նոյն հատուածներուն թարգմանութիւնը.

«Անաստասի դահակալութեան և Զենոնի մահուան տարին՝ հոգևոր չնորհներով պայծառացած աստուածարեալ մարդ մը Երեմիա անուն ազգաւ Հայ՝ այցելեց մենաստանը, հետն էին իր երկու աշակերտները՝ Պետրոս և Պօղոս, այսպէս կոչուած՝ իբրև ստոյգ պատկերն ու դրոշմը անոր կեանքին: Ասոնցմէ Պօղոսը երկար ժամանակ ապրեցաւ մենաստանին մէջ, եւ սքանչելոյն Սաբայի ուղղութեանց կատարեալ փորձն առաւ. ատէպ խօսելով անոր չուրջիններուն հետ, որոնցմէ շատերն ապահովաբար հետևող էին մարդուն ներկայ վարքին հաւաստարեալ (Հած. 68):

«Արդ՝ երբ անոնք յարեցան մենաստանին, իրանելին Սաբա չատ ուրախացաւ. եւ անոնց յատկացուց այրին հիւսիսակողմի փոքրիկ խուցը՝ ուր իր ճգնութիւններն անցուցած էր առաջին օրէն, և ուր ջուրի հոսանք մը կար, և անոնց տուաւ փոքրիկ աղօթարանը, որպէս զի կիրակի և շաբաթ օրերը՝ իրենց լեզուով կատարեն սովորական փառաբանութիւնները. այդ օրէն էր որ Հայերը ընդունուեցան մենաստանին մէջ (Հած. 70):

«Եւ որովհետեւ առաջին աստուածաչէն տաճարը նեղ եկաւ եղբայրներու ժողովման եւ աղօթարանին մեծութիւնն ալ չէր բաւեց Հայոց բազմութեան. աստուածարեալն Սաբա անոնց հիմերուն վրայ ուրիշ չէնք մը կանգնեց՝ առաւելագոյն վայելչութեամբ եւ մեծութեամբ, ու զայն նուիրեց Աստուածածնի, եւ նաւակատիքը կատարեց ըստ սովորութեան, եւ յանձնեց զայն եղբայրներուն, որպէս զի յետ այնորիկ հոն ժողովուին, և Հայոց բազմութիւնն ալ նոյն սուրբ տաճարը փոխադրեց, որպէս զի քրիստոնէական փառաբանութիւնները եւ Աւետարանը իրենց լեզուով կարդան ունկնդիրներուն, աստուածային խորհուրդներուն հաղորդուելով ուրիշներու հետ, եւ հասարակաց ըլլայ ամէնուն մասնակցութիւնը (Հած. 92):

«. . . Տեսնելով որ Հայերը սրբազան երգերու կարգերը ուղղութեամբ կը պահեն, թոյլատրեց անոնց իրենց բնիկ լեզուով երգել, բայց ի երեքսրբեանէն՝ զոր յունարէն երգել կանոնադրեց. յանձնարարելով նաեւ որ չաբաթ օրերը այրին մատան եւ կիրակի օրերը՝ Աստուածածնի մէջ ժողովուին, եւ իրաքանչիւրին մէջ կիրակի՝ երեւելի և տէրունական ծնեներու առթիւ՝ երեկոյէ մինչև առաւօտ երկարաձգուի հոկումը» (Հած. 93):

Այս տողերէն կը հասկցուի ուրեմն որ նոյն իսկ Մար-Սաբայի կենդանութեան կազմուած էր տեղւոյն Հայ Միաբանութիւնը, շինուած էր յատուկ մատուռ մը՝ ուր բազմաթիւ միաբանք իրենց լեզուաւ պաշտամունք կը կատարէին եւ կը հետեւէին վանական կեանքի:

Բ. Հայազգի Երեմիայի վանքը.

«Շնորհներով պայծառացած աստուածարեալ մարդը» Հայազգի Երեմիան, Մար-Սաբայի վերջին տարիներուն՝ կը մեկնի վանքէն, ուրիշ վանք մը հաստատելու կեդրոնի Զորին հիւսիսային եզերքը, Սբէլիոն կոչուած (Քարայրի վանք) վանքին մօտ, դէպ ի հիւսիս, ինն հարիւր մէթր հեռաւորութեամբ: Մար-Սաբա լսելով իր պատուական սարկաւագին մեկնումը և դիտաւորութիւնը՝ կը հետևի անոր՝ ատաղձ, գործաւոր և դրամ առնելով իր հետը. կը չինէ մատուռ մը և վանք մը Երեմիայի և հետևողաց համար, կը կանոնադրէ գործադրելու իր սեփական վանքին կանոնները եւ ընդհանուր վերակացու կը նշանակէ Երեմիան: 532 ին էր որ կը հաստատուէր այս վանքը և կը կոչուէր Երեմիայի վանք, և ընտիր սարկաւագը հակառակ իր ակնկալութեան, ունեցաւ իր բաժինը տարափէն ա՛յն ոսկիներուն՝ որ այնքան տխրեցուցած էին զինքը. այս ակնարկութիւն մըն է Մար-Սաբայի կողմէն՝ Յուստինիանոս կայսրէն առնուած և վանքերուն ծախսուած մեծ գումարներուն մասին: Երեմիայի ձեռնարկը վանականաց համար բացառիկ իրողութիւն մը չէր. կային ուրիշներ ալ նոյնիսկ Մար-Սաբայի հակառակորդներ՝ որ թողուվ վանքը՝ կ'երթային այլուր և կը հիմնէին մենաստաններ և ինքը՝ Մար-Սաբան ալ կ'օժանդակէր: Երեմիայի ուրոյն վանք չատակած իր վերոյիշեալ գրքին մէջ. տարբեր տեսակէտ կը բերէ Raymond Génier (Տե՛ս վերը, էջ 30–31): Վերև կարդացինք Սկիւթոպոլսեցիին փառաւոր վկայութիւնը Հայազգի Երեմիայի նկատմամբ. տարբեր անձ մը չենք կրնար նկատել ա՛յն Երեմիա սարկաւագը՝ որ իր անուամբ վանք մը կառոյց կեդրոնի Զորին հիւսիսային եզերքը, օժանդակութեամբ Մար-Սաբայի: Ըստ մեր

կարծեաց, մեծ հաւանականութեամբ երկու անձերը նոյն են, քանի որ մանաւանդ՝ վաղեմի յիշատակութիւն մ'ալ ունինք թէ Սաբայի Զորին մէջ հայկական վանք մը գոյութիւն ունեցած է։ Հայոց Անաստաս վրդ.ի վանօրէից ցուցակին մէջ կը կարդանք. «Այլ վանք Սիւնեաց ի Զորն Սաբայի». այս վանքը անտարա- կոյս Մար-Սաբայի վանքէն տարբեր էր և հայկական. հետքը կորսուած ուրիշ վանօրէից նման, այս փոքրիկ վանքն ալ, իբ կործանումէն յետոյ, անյիշատակ մնացած է մեր կարծեօք։ Սա- բայի Զորին հայկական այս վանքը՝ հայազգի Երեմիայի կողմէն կառուցուած վանքը պէտք է ըլլայ։ Սիւնեաց անուամբ կը յիշ- ուի այն պատճառաւ որ է. կամ Ը. դարուն, Սիւնիք նորոգած են զայն և կոչուած է իրենց անուամբ։ Ս. Տեղեաց մէջ Սիւն- եաց նախարարութիւնը ունէր ուրիշ չորս վանքեր եւս, ըստ Անաստաս վարդապետի Ցուցակին։

Գ. Մար-Սաբայի Հայ Միաբանութիւնը Ջեռագիր Ցիշատակարանի մը համաձայն.

Մար-Սաբայի Հայ Միաբանութեան նախնական կազմութե- նէն մինչև ԺԵ. դարու կէսը նոյն Միաբանութեան պատմական կեանքի մասին ոևէ տեղեկութեան չենք հանդիպած. այլ և այլ ժամանակ նոյն վանքին վրայ տեղի ունեցող յարձակումնե- րուն հետևանքով, Միաբանութիւնը անտարակոյս ունեցած է իր ընդհատները և վանքին վերանորոգման՝ դարձեալ վերսկսած է իր կանոնաւոր կեանքը։ Այս պարագան ցոյց կու տայ մեզ հա- յերէն ձեռագրական յիշատակարան մը, ԺԵ. դարուն, ընդօրի- նակուած Մար-Սաբայի վանքին մէջ. որմէ կը հասկցուի թէ Հայ Միաբանական կեանքը տեւած է մինչեւ ԺԵ. դարուն կէսը, եւ հաւանաբար վերջ գտած 1639ին, Սերպերուն նոյն վանքէն քաշ- ուելէն յետոյ։ Այդ ձեռագրական յիշատակարանը ընդօրինակ- ուած է Հալէպի Ս. Քառասունք եկեղեցւոյն սեպհական Աւետա- րանէն (Թ. 23). նոյնութեամբ զայն կը դնենք հոս.

«. . . . . Յամի ՋՆՀԱԲԷ-ԷԲԲԲԲ և ԸԲԲԲԲ ԲՈՒԱԿԱՆԻՒ հայկազանց թուականի (904 = 1455), ասպրապուրճնել եղև աստուածախաւս և կենա- պոյ սուրբ Աւետարան Քրիստոսի Ասուածոյն մերոյ։ . . . . . Զոր ի մե-

ղապարտ և աստի անուն Սարկաւագի Թագեոսի ցանկացող եղէ այսմ ասպուա- ձախաւս մատենի և ապացոյց ըստ ինձ գանձ անխղճապարծի և ճրկոնս մեղաւոր ևս։ . . . . Բայց արդ ճրեցաւ ես յերամբ յոգնանդիլ և ասպուա- նուն և ճգուն և անարհեստ ճրչի Թագեոս ասպանուն Սարկաւագի։ Ի լա և չընդրէ ասրչնակի, ի սահման Սուրբ Քաղաքիս Երուսաղէմի և հաւանաբար Անապատս ի վանս սրբոյն Սաբայի, ընդ հովանեաւ սրբոց որ անդ են հան- ճուցեալ։

Դարձեալ ապաչեմ զձեզ զի չնչելոչիւ զհոգեւոր եղբայրն ի ջՅովհան- նէս որ ընդունելն կոչեաց եւ ընդմարիս ճեռնակնեցն եւ ընդեանս Սուրբ Փրկչէս։

Դարձեալ ձանրագոյ ևս սուրբ եղբարք որ պոտոյ չնչապակ հոգւոց ճե- րեց ընտրեալ Աւետարան հոգեւոր արդուց ճերոյ և ապակերպին ինձ ճեր Աբ- րահամ պետաբուխիկ տհանայլին Մեծրոյ. Ասպուած ասրնեն զինեն և զնոր սրդիւն, զի բազում անգամ աչեպարեցաւ հնար ի ճեղ ի մարճապոր պիրոյնոր ձառայութենան անելով։

Ծանրագոյ ևս սուրբ եղբարք վնասութեամբ Աբրահամ վարդապետին և ճեր Տաճկանին և ճեր Սաղմանին և ճեր Հայրապետին որ պոտոյ ընտրեալ աչեպարան չնչապակ հոգւոց ճերոյ ճեր Աբրահամին. երբէ ոչ կարեցի ի գրանել գրաւ հանելով կամ գրաւնալով. զնան ցաւոյն ասպե և ընչաչահանասպանն թվիդրենեն ?. Հայոց ՉԻ (= 1471)։

Այս յիշատակարանէն որոշապէս կը հասկցուի որ Թագէոս սարկաւագ, իբր հայ միաբան, 1455ին, Սաբայի վանքին մէջ կ'ընդօրինակէ Աւետարան մը, իր անձին համար, աշխատակ- ցութեամբ Ս. Փրկչի միաբան Թուղթ կոկող Ցովհաննէսի՝ իբ հոգևոր եղբօրը եւ Մարկոս միայնակեացին, եւ 16 տարի ետքը նոյն Աւետարանը կը նուիրէ իրեն աշակերտին Մսրցի Տէր Աբ- րահամ ճահանային։

Դ. Հայ Միաբանութեան եկեղեցին Մար-Սաբայի մէջ.

Ըստ Սկիւթուպոլսեցւոյն բացատրութեան, ինչպէս տեսանք վերև, Մար-Սաբա Հայոց միաբաններուն բազմութեանը պատ- ճառաւ իր յատկացուցած մատուռը նեղ գալուն համար, յանուն Ս. Աստուածածնի նոր եկեղեցի մը կը չինէ «առաւելագոյն վա- յելչութեամբ և մեծութեամբ»։ 501ին կը կատարուի այս չինու-

թիւնը, ոչ թէ միայն անհրաժեշտ պէտքի մը համար, այլ իբր բողոք ընդդէմ Նեստորի։ Այս նորաչէն եկեղեցւոյն նաւակատիքը կը կատարէ Երուսաղէմի Եղիա պատրիարքը, որ աշակերտակից էր և մտերիմը Մար-Սաբայի (Տե՛ս Raymond Génierի Conferances de Saint Etienne, *1910*, էջ *295*)։ Պատահած դէպքերուն պատճառաւ կը թուի թէ Հայ Միաբանութեան յատկացուած եկեղեցին փոփոխութեան ենթարկուած է։ Երուսաղէմի Նօթր-Տամի բրօֆէսորներէն 1922ին հրատարակած "La Palestine Guide» խորագրով գրքին մէջ (էջ 323) կ'ըսուի թէ՝ «Աւետման եկեղեցին Սաբայի հայ վանականաց կողմէն չինուեցաւ. բայց ան չունի այժմ ոևէ յիշատակարան»։ Չգիտենք թէ նոյն հեղինակները ո՞րկէ քաղած են այս տեղեկութիւնը։ Վերջին դարու մեր պատմիչներէն Հանդէ, զոր յիշեցինք, իր Պատմութեան մէջ (էջ 282) Մար-Սաբայի վանքին թուած եկեղեցիներու կարգին կը յիշատակէ Ս. Աստուածածնայ եկեղեցին և կը յարէ. «Ն- աղբս որ ոանն է ամա հան ի վէրս»։ Իսկ Յորէն վրդ. Մխիթարեան՝ (յետոյ եպս.) իր Հանդոս Պատմութիւն Երուսաղէմի գործին մէջ (էջ 158), Հանդէի յիշած եկեղեցիներուն անուններուն մէջ բերելէ յետոյ, կ'աւելցնէ սա՛ խօսքերը. «Ո-ՐՆԵՐԴԸ՝ Սրբոց Ա-ա-ԹԼԾՅ որ Հայոց նախաբաններէն ընտրած է. բայց այժմ Բոլորվին փոփոխած է»։ Յորէն վրդ.ի այս վերջին ծանօթութեան աղբիւրը մեզ անծանօթ կը մնայ. նոյնիմաստ կրկնութիւն մը ունի նաև Մկրտիչ վրդ. Սրբդրանեան իր Ստորագրութիւն Երուսաղէմի գրքին մէջ (էջ 274)։ Տիգրան Սաւալան՝ իր Երուսաղէմի Պատմութեան մէջ, ոևէ նշանակելի տեղեկութիւն մը չի տար դժբախտաբար. միայն կը գրէ (էջ 298) սա հակիրճ տողերը. «Ի վերայ գմբեթի եկեղեցւոյն որ ի վանս Հ. Սաբայի՝ գտանին երկաթագրեալ անուանիք Հայ վարդապետաց ոմանց. . . եւ գտանին անդ հայերեն ևիսի ձեռագիրք»։ Մեր այցելութեան առթիւ, հակառակ մեր հետաքննութեանց, չը կրցինք տեսնել Սաւալանի յիշած երկաթագիր այդ արձանագրութիւնը. իսկ հայերէն ձեռագրաց գոյութեան ապացոյց է անտարակոյս Հալէպի Ս. Քառասունք եկեղեցւոյն Աւետարանը՝ որուն յիշատակարանը գրինք վերը. իսկ այն Ամերիկացին որ Երուսաղէմի յունաց պատրիարքարանին յունարէն ձեռագիրները ցուցակագրած է, իր ցուցակին մէջ կ'ըսէ թէ կը գտնուին հայերէն 16 ձեռագիրներ՝ որ Մար-Սաբայի մէջ ընդօրինակուած և անկէ փոխադրուած են։

Լ

ԹԷՈԴՈՍԻ ՎԱՆՔԸ, ԱՆՈՐ ՀԱՅԱԶԳԻ ՎԱՆԱՀԱՅՐԸ, ԵՒ ԻՐԱԿԵՐՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

1. Թէոդոսի վանքին տեղագրութիւնը.

Ինչպէս ակնարկած ենք մեր նախընթաց տողերուն մէջ, Մար-Սաբայի մեր ուղևորութեան առթիւ, հանդիպեցանք նաև Աբբա Թէոդոսի վանքը, Մար-Սաբայէն դէպ արեւմուտք վեց քիլօմէթր, իսկ Բեթղեհէմէն նոյն չափ հեռի կը գտնուի դէպ ի արևելք։ Մար-Սաբայի զառիվերէն 10-20 վայրկեան յետոյ, ուղևորը կարող կ'ըլլայ տեսնել Թէոդոսի վանքը, շինուած արդաւ սարահարթի մը վրայ, հիանալի դիրքով մը և ակնապարար տեսարաններով։ Վանքին սարահարթէն՝ աչաց առջև, գեղեցկորէն կը պարզուի Մեռեալ Ծովը։ Եթէ Մար-Սաբան հաստատիմն չէնքերու խոր վիրապի մը դիրքն ունի, ընդհակառակն Թէոդոսի վանքը գեղազարդ ծաղկաքուրի մը հմայքը կ'ընծայէ։ Վանքին չուրջը գտնուած ընդարձակ բացատները եւ այլ տեղագրական գեղեցկութիւնները ճշդօրէն կ'արդարացնեն բոցակիզեալ խորհրդաւոր խնկամանի մը սիրուն զրոյցը, որուն համաձայն, Աբբա Թէոդոս ընտրած է իր չինելիք վանքին տեղը, իբրեւ խունկով տաճած ուղևորին համար, ան յարմարագոյն վանքն է, ուր կրնայ գտնել հանգիստ և կազդոյր։ Վանքին այժմեան չէնքերը արժէք մը չեն ներկայացներ, թէև յայտնի է որ բազմաթիւ ուխտաւորներ եւ վանականներ պարունակող չէնքերու հիմեր դեռ կ'երեւան։ Վանքին արտաքին գոնէն դուրս, դէպ ի Բեթղեհէմ տանող ճանապարհի մուտքը ունի գեղեցիկ ծառուղի մը, և սակաւաթիւ պարտէզներ զարդարանքն են այս վանքին. պատերազմէն յառաջ նորոգութիւն մը ակսուած է, բայց մնացած, և այժմ

ալ աւելի մեծ նորոգութեան մը պէտքը զգալի է, մանաւանդ սա պատճառաւ որ պատերազմի ընթացքին այս վանքը պատնէշ եղած է Պաղեստինը դրաւող անգղիական յաղթապանծ բանակին՝ որուն մէկ ջոկատը հո՛ս ապաստանած՝ կռիւ մղած է ընդդէմ Թրքական զինուորներուն, որ իրենց ռմբաձգութիւններով աւերներ պատճառած են վանքին։ Արդէն ոչինչ մնացած է վանքին վաղնջական չէնքերէն, բացի Մոգերու Քարայրեն և Մայր Եկեղեցիեն, որուն գմբէթը դարեր յառաջ քանդուած էր, բայց հնօրեայ պատերը կը մնան, իբր նմոյշ գեղեցիկ ճարտարապետութեան մը։ Ինչպէս տեսանք, միայն 3–4 վանականներ կային, և կը զբաղէին վանքին անկարևոր նորոգութիւններով. վերջնոցս ծախքը կը հոգացուէր վանքին պարտէզներուն և արտերուն արդիւնքովը, պակսածը կ'ստանային Երուսաղէմի Ցունաց պատրիարքարանէն։ Այս վանքին կրճատեալ արաբերէն անունն է *Տէյր Տօզի*, կը կոչուի նաև՝ *Տէյր Իսկի Սպիյս*։

2. Թէոդոսի վաճին պատմութիւնը.

Այս վանքը հիմնած է Աբբայ Թէոդոս Կապադովկիացին, Մար–Սաբայի հայրենակիցը. ա՛ն ծնած է 423ին։ Բեթթայի եպիսկոպոս Թէոդոր, անոր աշակերտը, իր ուսուցչին Ներքողին մէջ, կը յիշատակէ թէ Թէոդոս ծնած է Կապադովկիոյ Մոգարիոս գիւղին մէջ, որ անծանօթ գիւղ մը ըլլալով՝ Թէոդոսի չնորհիւ հանրածանօթ եղած է։ Ան 451ին եկած է Երուսաղէմ. ժամանակ մը վերջ ընդհանուր վարիչ կարգուած է Գարիզիմայի վանքին, (*Տե՛ս «Հայոց Ս. Աստուածածնի վանիքը Բեթղեհէմի ճանապարհին վրայ»*, էջ 6–12). 460ին եկած հաստատուած է Մոգերու Այր կոչուած տեղը, և հո՛ն 476ին հիմնած է վանք մը ընդարձակ հաստատութիւններով. այնպէս որ մինչև 400 վանականներ ապաստան գտած են հո՛ն. նոյն իսկ Թէոդոսի ժամանակ, վանքը աւելի ընդարձակ չէնքերով եւ ճոխութիւններով պայծառացած էր. հիմնադիրը աւելցուցած էր զանազան արհեստանոցներ՝ ուր վանականք կ'զբաղէին իրենց արհեստներով, և աղքատանոցներ ուր կը կերակրուէին չքաւորք և պանդուխտք։ Թէոդոսի օրով, վանքը քաղաքի մը երևոյթն առած էր. ան բո-

լոր հաստատութեանց հոգին դարձած էր, և որ նշանաւոր հանդիսացաւ նաև իր առաքինական առատաձեռնութեամբն։ 513–518 ի պաղեստինեան սովին, Թէոդոս «հասարակաց գանձանակն» եղած էր, ինչպէս կը գրէ Մետափրաստ, իր կենսագիրը. ան ժողովրդական դէմք մը եղած էր իր դարուն, լաւագոյն յարաբերութիւններ կը մշակէր Մար–Սաբայի, և այլոց հետ. 529 Յունուար 11ին վախճանեցաւ, գրեթէ հարիւր տարեկան, ժողովրդական բացառիկ յուղարկաւորութեամբ իր մարմինը ամփոփուեցաւ Մոգերու Քարայրին մէջ։ Իր հիմնարկութեան տարեդարձի յիշատակը սովորութիւն դարձաւ տօնել Մայիս 6ին և Դեկտ. 2ին, համաձայն Երուսաղէմի ծիսարանին։

Արևելցի դէմք մըն էր Թէոդոս, և ան իր վանքին մէջ մասնաւոր սէր ցոյց կու տար Արևելքէն եկող բոլոր իր հայրենակիցներուն։ Իր ժամանակակից կենսագիրը՝ Սկիւթուպոլսեցին կը յիշէ թէ Թէոդոս իր վանքին մէջ հիմնած էր արևելեան վանականաց համար ուրոյն եկեղեցիներ՝ ուր իրենց լեզուաւ կը կատարէին սաղմոսերգութիւն և պատարագ։ Այս վանականաց մէջ մեծ թիւ մը կը կազմէին Հայերը, որ ունէին իրենց յատուկ եկեղեցին։ Բայց այս առթիւ պէտք է յիշել թէ Ս. Տեղեաց մէջ արևելեան վանականաց յատուկ այդ կանոնական սովորութիւնը կը յիշատակուի նոյն իսկ Ցերոնիմոսի (*331–420*) օրով. վերջնոյս Ծէ. նամակին մէջ, կը կարդանք հետևեալը. «Ի՞նչ պիտի ըսենք Հայաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Եթովպիոյ, Պոնտոսի և Կապադովկիոյ վանականներով ճոխացեալ երկիրներու մասին. ասոնք կը հաւասարին Եգիպտոսի, Խորին Ասորւոց, Միջագետքի բոլոր այն միայնակեաց խումբերուն որ Արևելքէն ղրկուած են, և անոնք են որ մեզ կ'ընծայեն ամէն առաքինութեանց տեսակները. լեզուն տարբեր է, բայց բարեպաշտութիւնը նոյնն է. որքան ազգեր կան աշխարհի մէջ, գրեթէ նոյնքան խումբեր՝ որ կը սաղմոսեն յերուսաղէմ։ Այս քաղաքին մէջ այնքան աղօթքի տեղեր կան որ մէկ օր չի բաւեր անոնց այցելութիւն տալու համար։ (*Տե՛ս* F. Lagrange, Lettres choisies de S. Jérome, էջ *160*)։ Ցերոնիմոսի այս չքնաղ տողերը կարելի է կարևոր յիշատակարան մը նկատել հայկական ծիսարանի կազմութեան և Ս. Գրոց, գոնէ Սաղմոսաց, հայ թարգմանութեան նախնականութեան, ե. դարէն յառաջ. մի և նոյն ժամանակ անհերքելի ապացոյց մը թէ

Թէոդոսի վանքին և Ս. Տեղեաց մէջ հայ լեզուաւ սաղմոսերգութեան և պաշտամունքի թոյլտուութիւնը չարունակութիւնն էր նախընթաց տարիներու կանոնական սովորութեանց:

Մինչեռնկաւ այս կէտը փակելով՝ չարունակենք Թէոդոսի վանքին պատմական մասը: Նոյն վանքը 614ին, Պարսից արշաւանաց ժամանակ, չենք կարծեր որ վերջ ունացած ըլլայ աւերումներէ. նոյն ատեն վանքին վանահայրն էր Մոտեստոս, որ Երուսաղէմի աթոռին տեղապահ կարգուելեալ և անոր վիճակուելեալ կործանուած եկեղեցիները վերաշինել: Բնական էր որ Մոտեստոս ամենէն աւելի պիտի անդրադառնար իր վանքին վերանորոգութեան: 808ին Commemoratorium de Casis Dei խորագրով գրուած յիշատակարան մը կը վկայէ թէ այս թուականին, Թէոդոսի վանքին մէջ կ'ապրէին 70 վանականներ. կը նկարագրէ Սարակինոսաց գործած աւերները. իսկ 809 և 813ին, Թէոփանէս պատմիչին համաձայն, նոյն վանքը ամբողջովին աւերակ դարձած էր, կրօնաւորներէն ոմանք փախած են Կիպրոս, այլք կ. Պոլիս, ուր Միքայէլ կայսրը լաւ ընդունելութիւն ըրած է անոնց: Այս թուականէն յետոյ մասամբ մը կը նորոգուի վանքը և կը սկսի կրօնաւորական կեանքը. այնպէս որ մինչև ԺԲ–ԺԴ դար այցելող յոյն և լատին ուղեգիրներ կանգուն կը գտնեն վանքը. և ԺԵ.ին ան դարձեալ աւերակ վիճակ մը ունեցած է (Տե՛ս Revue de l'Orient Chrétien. *1900*, էջ *286–289*): Այս կործանումներու մէջ անվնաս կը մնայ միայն Մոգերու Քարայրը, որ եկեղեցիի վերածուած է, յատակը մոզայիք, պատերուն մէջ ագուցուած են Աբբայ Թէոդոսի և ուրիշներու տապանաքարերը, առանց արձանագրութեան, ինչպէս մենք ալ տեսանք. հոն թաղուած են նաև ուրիշ բարեպաշտ կանանց հետ Թէոդոսի մայրը և Մար–Սաբայի մայրը:

Թէոդոսի վանքին մէջ ապրող նշանաւոր վանականները կը ներկայացնենք հոս, Ցուհաննէս Մոսքոսի Մարգ հոգևոր գիրքէն քաղելով և իւրաքանչիւրին քով նշանակելով գիրքին ա՛յն գլուխները՝ ուր կը կարդացուին անոնց անուանները.

Ղեւոնդիոս Աբբա (C)
Կոնովն Կիլիկեցի (IV)
Թեոտուղոս, ծեր զօրական մը՝ որ մենակեաց կ'ըլլայ (XXIII)
Գեորգ Վանական, առաջնորդ Թէոդոսի վանքին (XCII)

Գեորգ Կապադովկիացի (XCII)
Ցուլիանոս Աբբայ, եպս. Բոստրայի (XCIV)
Պատրիկիոս, յառաջացեալ ի ծերութեան Հայաստանի Սեբաստիա քաղաքէն: Սա առաջնորդ էր Աբազանոն վանքին (XCV)
Ցուլիանոս Ծերև Ասրաթացի (XCVI)
Ստեփանոս Մոլաթացի (XCVII)
Յովհաննիկ Անապատական (XCVII)
Հովիւ Եղիա (XIX)
Պետրոս Մեսակեաց Պոնտացի (C)
Պօղոս Աբբայ Հռոմվայեցի (CI)
Սոփրոնիոս Աբբա Սոփեսեցի (CII)
Աբբայ Սիոդասիկոս (CII)
Կիւրիկոս կամ Կիրակոս Աբբայ (CII)
Ստեփանիոս Աբբայ, առաջ. Թէոդոսի վանքին (CIII)
Թեոտոսիոս Եպս. Կաթիսուղիասոսի (CIV)
Նոնոս Աբբայ (CIV)
Գրիգորիոս Աբբա, առաջ. Թէոդոսի վանքին (CIX)

3. Թէոդոսի վանքին վանահայր հայազգի Սոփրոնիոս.

Մոգերու Քարայրին մեր այցելութեան առթիւ վանականք ցոյց տուին մեզ Թէոդոսի յաջորդ վանահայրը Հայազգի Սոփրոնիոսի գերեզմանը, որուն տապանաքարը, Թէոդոսի գերեզմանին մօտ, ագուցուած էր քարայրին հարաւային պատին: Մեր ուխտը կատարեցինք Սոփրոնիոսի տապանին, որուն վրայ դժբախտաբար չգտանք ոևէ արձանագրութիւն: Բայց հետաքրքրուեցանք գիտնալու ինքնութիւնը այս վաստակաւոր հայ վանականին, որուն կենսագրութիւնը Գերմանացի Hoffmann Usener յաջաբանով մը հրատարակած է 1890ին, Լայպցիկ, Թէոդորի և Սկիւթուպոլսեցւոյն յուշարէն քնագրերով: Ահա նոյն կենսագրութեան կարևոր մասը կը դնենք հոս, թարգմանութեամբ հոգելոյս Տ. Դուրեան Սրբազան Պաարիսր Հօր. «Աբբայ Թէոդոսի վանքին իրրև առաջնորդ յաջորդեց Սոփրոնիոս, որ վանական բարեկարգութեանց մէջ յայտնի հռչակ ունէր. Սոփրոնիոս հայ էր ազգաւ, Սեբաստիոյ մետրապօլտութեան ենթարկուած Զովէր ազգաւ, Սեբաստիոյ մետրապօլտութեան ենթարկուած Զովմերի կոչուած գիւղէն: Դեռ երիտասարդ՝ թողլով իր հայրենի-

քը՝ երուսաղէմ եկաւ, և բազմաթիւ հայրերու հանդիպելով, և իւրաքանչիւրին վանքն ուսումնասիրելով և այդ տպաւորութիւնը կրելով իր անձին վրայ՝ եկաւ և երանելի Թէոդոսի վանքը մտնելով՝ վանական սքեմն հագաւ, և վանականօրէն կրթուելով և վանական առաքինութիւններէ չրջապատուած՝ իր վարքին հիմը ըրաւ խոնարհութիւնը և հեզութիւնը: Առաքինասէր ճգնութեան բոլոր փորձերէն անցնելով՝ չա՛տ ու զանազան սպասարկութիւններ կատարեց այդ վանքին մէջ, և յայտնապէս հրահանգուած ըլլալով՝ վանքին մէջ երկրորդ եղաւ 15 տարիներ, և ըստ այսմ հաւանութեամբ մեծ աբբայն Թէոդոսի՝ անոր վախճանումէն յետոյ ստանձնեց վանքին առաջնորդութիւնը: Երանելին Սոփրոնիոս հօրեղբօրորդի մը ունէր Մամաս անունով: Այս Մամասը երիտասարդութեան մէջ՝ արկածի մը հետևանքով, ներքինացուած էր բժիշկներու ձեռամբ: Բիւզանդիոն երթալով՝ Անաստաս թագաւորին սեպհականեալ եղաւ, և հետզհետէ յառաջդիմելով հիւսիսարևելեան պաշտօնին ալ բարձրացաւ: Ասիկա չատ ճոխ ու առատ նուէրներ ըրաւ վանքին: Այդ նուէրներուն չընորհիւ՝ սուրբն Սոփրոնիոս քառապատիկ ընդարձակութեամբ չայնցուց վանքը, երանելի Թէոդոսի ննջումէն վերջը: Ի հիմանէ չինեց նոյն վանքին մէջ եկեղեցի մը յանուն Ամէնօրհնեալ Սուրբ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամու: Բայց Ի՛նչ հարկ որ ամէն ինչ թուեմ մի առ մի: Սոփրոնիոսի աչխատանքներն ու բարեկարգութիւնները մեծապէս փայլեցան երանելի աբբայ Թէոդոսի վանքին մէջ. վասն զի ոչ միայն տարուէ տարի աւելցուած չէնքերով և եկամուտներով հարստացուց զայն, այլ և անոր մէջ եռապատիկ բազմացուց վանականներու թիւը. և համառօտ խօսելով՝ 14 տարի և 2 ամիս բարեօք կառավարելէ յետոյ այդ վանքը, ուրախ սրտով մեռաւ 543ին, մարտ ամսու 21ին:

Երբ մօտ էր վախճանելու՝ ըսաւ իր մօտ կեցող ու լացող աչակերտին. «մի՛ ցաւիր որդեակս, եթէ երբեք համարձակութիւն գտնեմ, եօթներորդ օրը կ'առնեմ քեզ, որպէսզի ինծի հետ ըլլաս հանգստեան տեղւոյն մէջ», ինչ որ պատահեցաւ. վասն զի եօթներորդ օրը մեռաւ աչակերտը, ու ամէնքը վերահասու եղան Սոփրոնիոսի համարձակութեանը Աստուծոյ մօտ» (Տե՛ս քնագիրը 111–3): Այս տողերը ինքնին պերճախօս են ճանչցնելու համար հայազգի Սոփրոնիոսի իր սրբակեաց կեանքին, գործունէութեան և Թէոդոսի վանքին վերաբերութեամբ կատարուած չինարար աչխատանքին մէջ:

4. Հայազգի Սոփրոնիոսի իւրակերs մայր եկեղեցին.

Մենք տեսանք արդէն թէ ժե. դարուն կործանուած էին Թէոդոսի վանքին եկեղեցիները եւ ուրիշ հաստատութիւնները. աւերակի կոյտ մը դարձած էր ան եւ վերջին ժամանակները միայն սրտցաւ միաբաններ ձեռնարկած են կործանումէ ազատ մնացած Ս. Աստուածածնի մայր եկեղեցւոյ չորս պատերն և եկեղեցին իր ամբողջութեամբ կառուցուածքի հին ոճովին վերաչինել, բայց գործը երեսի վրայ մնացած է նիւթական պատճառներով:

Այս կիսակործանուն եկեղեցին անտարակոյս հայազգի Սոփրոնիոսի չինել տուածն է, զոր կը յիչատակէ իր կենսագիրը: Սոյն եկեղեցիին ճարտարապետական յօրինուածքէն յայտնի է թէ հայու ձեռքով չինուած է, ճարտարապետը հայ մըն է, ինչպէս. — արդէն վերի թարգմանուած հատուածէն տեսանք, պատմականօրէն յայտնի է հայազգի Սոփրոնիոսի յաջորդութիւնը՝ Թէոդոսի վանքին վանահայրութեան, եւ անոր առատաձեռնութեամբ նոյն մայր եկեղեցւոյն չինութիւնը. Սոփրոնիոսի նման Հայաստանցի մը պիտի փափաքէր որ իր ձեռակերտը ըլլար հայկական, հայաչէն. ուստի այն ճարտարապետական ոճը՝ զոր տեսած էր իր հայրենիքին՝ Սեբաստիոյ մէջ, պիտի մշտնջենաւորէր իր վանքին մէջ ալ: Անշուշտ այս բացատրութիւնը չատ համոզիչ պիտի չը թուէր, եթէ աւելի գօրաւորագոյն փաստ մը կամ գիտական ապացոյց մը ի ձեռին չունենայինք. այդ փաստը կը հայթայթէ մեզ Աւստրիացի գիտնական մը՝ J. Strzygowski: Ան 1901 ին երուսաղէմ եկած, այցելած է մեր վանքը. տեսակցած է հանգուցեալ Վեհապետեան Ցարութիւն պատրիարքին հետ. տեսած է Ս. Յակոբեանց վանքին ձեռագրաց մատենադարանը եւ հետացում յայտնած է վանքին և անոր հնութեանց մասին. յիշեալ գիտնականը անտարակոյս այցելած է նաև Թէոդոսի վանքը և ուսումնասիրութեան համար գրի առած է նոյն վանքին յատակագիծը, զոր զետեղուած կը տեսնենք «Հայկական Ճարտարապետութեան» վերաբերեալ իր մէկ գերմաներէն հոյակապ ուսումնասիրութեան մէջ (էջ 502), զոր հրատարակած է 1918ին,

ծանօթ հայ ճարտարապետ Թորոս Թորամանեանի գործակցութեամբ։ J. Strzygowski իր նոյն գրքին մէջ (էջ 502–4) մեզ կը լուսաբանէ թէ Թէոդոսի կիսակործան եկեղեցին հայ ճարտարապետի ձեռքով չինուած է, և ունի հայկական մասնաւոր ոճ մը։ Հետեւեալն է անոր լուսաբանութեանց իմաստը. Եգիպտական, Ասորական, Միջագետաց եւ Արեւմտեան ճարտարապետութեան մէջ եկեղեցիին գմբէթը կը զետեղեն չէնքին ո՛չ թէ «մէջ տեղը» այլ կամ արեւելեան կողմը, կոզակին և գասին մօտերը, և կամ արեւմտեան կողմը՝ չէնքին անդաստակին վրայ. իսկ հայ ճարտարապետը՝ եկեղեցւոյ հիմնարկութեան չսկսած, լրջօրէն կը մտածէ գմբէթին չինութեան վրայ. այդ պարագան, անոր համար օրէնք մը, էական սկզբունք մըն է, որպէս զի «գմբէթը չէնքին մէջ տեղը» ըլլայ (Der kuppel du Mitte). դարձեալ, հայ վարպետին համար, գմբէթը չէնքին ջիղն է. Թէոդոսի վանքին Ս. կուսի մայր եկեղեցւոյն գմբէթը ճիշտ «մէջ տեղն» է, նման Հայաստանի եկեղեցիներուն, ուստի նոյն եկեղեցիին չինել տուողին հայազգի ըլլալը, եւ հայ ճարտարապետութեան օրէնքին համաձայն, եկեղեցւոյ գմբէթը ճշդօրէն «մէջ տեղը» ըլլալը նկատի առնելով՝ J. Strzygowski կը հարցնէ թէ չե՞նք հակիր ընդունել թէ նոյն եկեղեցին չինողները Հայեր էին. եկեղեցին հայաչէն էր։ Ցիշեալ պիտուէնին յատակագիծը բաղդատելով մեր Մայր Մաշտոցին եկեղեցեաց «հիմնարկութեան» յատակագծին հետ, ըստ ամենայնի իրաւունք կու տանք յարգելի գիտնականին լուսաբանութեանց եւ գիտական ճշդումներուն, մեր ականատեսի վկայութեամբ ևս հաստատելով թէ Թէոդոսի վանքին եկեղեցին չինող ճարտարապետը հայ մըն է և ճշդօրէն հայաչէն։

Մենք զրեցինք այս տողերը, որքան քրիստոնէական այս հին հաստատութիւնը ծանօթացնելու տենչով, նոյնքան և աւելի հայ պատմագրութեան սեպհական ծիրանին հագցնելու մեծին Սեբեսաիոյ զաւակներէն մէկուն՝ հայազգի Սոփրոնիոսի՝ որ իր կազմակերպիչ ոգւոյն և հանճարովը յաջողած է ոչ միայն մեծ ծառայութիւն մատուցանել պատկանած վանքին և Երուսաղէմի Ս.նապատին, այլ նաեւ իր հայրենի երկրին հոգեւոր կեանքը եւ պեղարուեստի գեղեցկութիւնները չքեղօրէն պայծառացնել մինչեւ Պաղեստինի խորը, ի պանծացումն այն ցեղին որմէ սերած է ինքը։

ԼԱ

ՔՈԶԻԲԱՅԻ ՎԱՆՔԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԱՅ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ

1. Ո՞ւր կը գտնուի Քոզիբայի (Coziva) վանքը.

Ռուսաղգի Դանիէլ կրօնաւորին Ուղեգրութեան համաձայն, Երուսաղէմէն մինչեւ Յորդանան քսան և վեց վերստ է. իսկ մինչեւ Քոզիբա՝ տասն և հինգ վերստ. ան կը գտնուի խորունկ հեղեղատի մը մօտ, ճանապարհին ձախ կողմը։ Քոզիբայէն մինչեւ Երիքով հինգ վերստ է, և Երիքովէն մինչեւ Յորդանան՝ վեց վերստ։ Հեղեղատը կը թաւալի սեպացեալ ժայռերէ կազմուած մթաստուեր ձորի մը մէջ։ Այդ ժայռերու մէջ քարայրներ կան, ուր երբեմն կը բնակէին անապատականներ, որոնք հաստատած են հոն վանք մը, զոր Յոյներ կ՚անուանեն Քոզիբա։ Այս վանքը անդունդի մը վրայ գոգցես ծիծեռնակի բոյնի մը նման կառչած է լերան կողքին։

2. Ի՞նչ անունով կառուցուած է Քոզիբայի վանքը եւ ի՞նչ է ծագումը.

Քոզիբայի վանքը սխալ սովորութեամբ մը՝ իններորդ դարուն Ս. Աստուածածնի, և յետին ժամանակներու մէջ, Ս. Դէորգի անունով կ՚անուանակոչեն. վանքին արաբական անունն է Տէյր էլ Քէղղ։ Վանքին մէջ, հին դարերէն սկսեալ, պատերուն վրայ գոյութիւն ունեցող Ս. կուսի հօր Ս. Յովակիմայ պատկերները կը վկայեն թէ վանքը կառուցուած է անոր անունով։ Յուն

համար տաճար կը դիմէ, հակառակ իր բարեպաշտութեան, կը մերժուի. ան տխրութեամբ համակուած՝ կ'ուզէր անապատ քաշուիլ և առանձնանալ: Ինքը երուսաղէմացի էր և Ցուդայի ցեղէն. հարուստ էր և ունէր բազմաթիւ հօտեր: Հրեշտակը անապատին մէջ աւետեց Յովակիմայ Ս. Կուսին ծնունդը. մինոյն ներշնչմամբ լեցուած՝ Աննան ալ անոր կ'սպասէր տաճարին դրան առջև. ամլութեան և անզաւակութեան նախատինքը այլևս վերցուած էր անոնցմէ:

Երուսաղէմի և շրջակայից մէջ գտնուած վանքեր ու եկեղեցիներ ընդհանրապէս կառուցուած են Քրիստոսի Տնօրինական Ս. Տեղերու և կամ մարտիրոսներու դամբարաններուն ու սրբոց փոխադրուած նշխարներուն ամփոփուած տեղերուն վրայ: Յակոբու նախաւետարանը, թէև եկեղեցին վաւերական չէ նկատած ու մերժած է զայն, բայց ինչպէս կ'երևի քրիստոնէական հնախօսութեան պատմութենէն, նախնի քրիստոնեայք օգտուած են այդ անվաւերականէն ինչ ինչ հատուածներէն, որոնց պատմուածքները ուենցած են իրենց չինիչ կողմերը, ու անոնք անվարան օգտուած են անոնցմէ ու համաձայն անոնց իմաստներուն եկեղեցիներ ու վանքեր ալ հաստատած են. այս պարագան անժըխտելի է պատմականօրէն: Մենք ասկէ յառաջ գրած ենք այս մասին ու հաստատած ենք «Հայոց Ս. Աստուածածնի վանքը, Բէթղեհէմի ճանապարհին վրայ» հատուածին մէջ (տեսնել աշխատութեանս էջ 6–12), ինչպէս նաև Տարեւի մեր յօդուածը, Ս. Գրոց անխաւեռական գրեանք անուամբ, 1928, էջ 111–20, և պարզած ենք թէ նոյն անվաւեր գրուածքներն ալ նկատի առնուած են նախնի քրիստոնեաներէն կառուցանելու վանքեր և եկեղեցիներ: Բողիբայի վանքը այդ կարգի վանքերէն մին է և չատ հին ժամանակներու մէջ կառուցուած: Երիքովի ճանապարհին վրայ՝ Ս. Կուսի հօր Ս. Յովակիմայ առանձնացած անապատն էր Բողիբան: Յովակիմ քանի որ Երուսաղէմացի էր, անկասկած ան մինչև Երիքովի ուղղութեամբ: Ը. դարու եպիսկոպոս մը, Յովհաննէս Եւթիայ, իր մէկ քարոզին մէջ այս պարագան կը յիշէ ու կը խօսի Աւետումն Յովակիմայ կոչուած տօնին վրայ, որ բիւզանդացւոց օրերուն հաստատուած տօնախմբութիւն մըն էր, ու ան չի կրկներ Յովակիմայ առանձնացած տեղւոյն նկատմամբ յիշուած անապատ բառը, այլ կու տայ անոր նաև լեռ բառը. վասն զի Բողիբայի դիրքին համար

խիստ լաւ կը յարմարին անապատ և լեռ բառերը: Միևնոյն ժամանակ պէտք է ընդունիլ թէ Բողիբայի վանքը չատ հին է ու անոր ծագումը՝ անյայտ: Եւագր եկեղեցական պատմիչը (դ. 7) կը յիշէ Բողիբացին, Ջ. դարուն սկիզբը, որ առաջ անապատական էր նոյն վանքին մէջ (յետոյ եպս. Պաղեստինի Կեսարիոյ): Եւագրի խօսքերը սակայն, չեն բացատրեր Բողիբայի ծագումը, և նոյն իսկ Յովհաննէս Բողիբացիին օրով տակաւին եկեղեցի չէր հաստատուած հոն, այլ միայն միայնակեացներու բնակավայր մըն էր ան (laure). բաց ասոր, Բողիբան աւելի հին էր Եւթիմիոսի, Թէոդոսի և Սաբայի վանքերէն: Է. դարուն համաքաղաքացի երկու կրօնաւորներ, Սոփրոնիոս և Յովհաննէս Մոսքոս, բարեպաշտական ուխտաւորութեամբ մը կ'այցելեն Պաղեստինի և Եգիպտոսի վանքերը, մասնաւորապէս կ'այցելեն Բողիբայի վանքը, որ նոյն դարուն այլևս իր խցական վիճակէն դուրս ելած՝ վանական հաստատութիւն մըն էր եկեղեցիով, գերեզմանատունով և վանականաց բնակարաններով. ուրեմն պէտք կ'ըլլայ ընդունիլ թէ Բողիբան, թէև անապատականներու իբր ճգնարան հնագոյն ժամանակաց մթութեան մէջ մնացած է, բայց իբր մենաստան սկզբնաւորուած է Է. դարուն: Ս. Յովակիմայ անունը կ'երևնայ վանական Եպիփանի հետ: Ս. Երկրի վերաբերեալ իր նկարագրութիւնը գրեթէ կ'սկսի Ժ-Ը. դարէն. ինքը երուսաղէմացի էր, հետևաբար եկեղեցիին աւանդութիւններուն վրայ ճշգրիտ տեղեկութիւններ կրնար տալ: Եպիփան՝ երկրաւոր դրախտը կը դնէր Բողիբայի դիմացը. «Բեթանիոյ արևելեան կողմը, տասներկու մղոն հեռի, կար եկեղեցի մը. այն տեղին վրայ՝ ուր Ադամ եկած էր նստիլ, ողբալու համար երկրաւոր դրախտը կորնցուցած ըլլալուն հետևանքով»: Ան յետոյ կ'աւելցնէ թէ «այս եկեղեցիին մօտ էր Յովակիմայ տունը, որ է վանքը: Վանքին արևելեան կողմը չորս մղոն հեռաւորութեամբ կը գտնուէր Երիքովը». այս նկարագրութեան ճիշդ տեղը կը գտնուէր Բողիբան, և այս աւանդութիւնն ալ չատ հին է:

3. Բողիբայի գերեզմանատունը.

Բողիբայի գերեզմանատունը գտնուած է վերջին դարու կիսուն, բայց դժբախտաբար պէտք եղած ուշադրութիւնը չէր ըն-

ծայուած անոր: Երուսաղէմի Ցուհաց Պատրիարքարանի մատենադարանապետ և աւագ սարկաւագ Կղէոպա Քօյիքիլիտէս (յետոյ եպս. Նազարէթի, բայց այժմ վախճանեալ) միայն 1901 ին ուսումնասիրութիւն մը գրած է անոր նկատմամբ: Այս գերեզմանատունը ստորերկրեայ բնակարան և ընդարձակ քարայր մըն է, ուր փորուած են գերեզմաններ: Գրեթէ 150 մեռելներու անուններ գրչագրուած են նոյն գերեզմաններու առաստաղին ու պատերուն վրայ, հոյակապ մեռելամատեան մը՝ ոլուն մէջ գրեթէ իւրաքանչիւր անունի քով նշանակուած է մեռելին տիպրոսը, ազգատոհմը, տարիքը և մահուան թուականը, յիշատակելով ամիսը և ընդիկտիոնը (indiction), բայց ոչ երբեք տարին: Այդ անուններուն մէջ կը գտնուին եպիսկոպոսներ, պարզ վանականներ, նոյն իսկ երեք սարկաւագուհիներ: Ցիշատակարանին թուականը գտնելու համար Կղէոպա աւագ սարկաւագը կը դիմէ հնագրութեան (paléographie) և միևնոյն ժամանակ մէջ կը բերէ զանազան պատմական փաստեր, որոնցմէ այս եզրակացութեան կը հասնի թէ նոյն գերեզմանատունը ե. դարու վախճանէն սկսեալ վանքին յատկացուած էր մինչև ժԲ. դարու սկիզբը:

Կղէոպայի հրատարակած մենագրութիւնը ունի Ներածութիւն մը՝ ուր կը համառօտէ Քոզիբայի լեցական և վանական վիճակներու պատմութիւնը, յետոյ կը գրէ կենսագրութիւնները Քոզիբացի Ցովհաննէսին և Գէորգ Կիպրացիին, որոնք վանական այս մեծ կեդրոնին երկու գլխաւոր փառքերը եղած են, և նոյն վանքի վերաբերութեամբ հատուածներ մէջ կը բերէ Ցովհաննիկես Մոսխոսի, Կիւրեղ Սկիւրուպոլեցիի ու Եւագրիի: Գերեզմանատունէն զատ, Կղէոպա կը խօսի Ռասի Քիղէն Քոզիբա բերուած ջրի ճանապարհի մասին: Ան կը մատնանշէ այլ եւ այլ լեզուով արձանագրութիւններ, որոնց մէկ քանին աստիճաններն են և չատերին կը թուին: Նոյն հեղինակը քանի մը տարի առաջ ալ հրատարակեց Քոզիբայի մէջ գտնուած մոզայիք մը, որ կը կրկնէ յունարէն արձանագրութիւն մը:

Ցարգելի հեղինակին այս ուսումնասիրութիւններէն կը հասկցուի որ Քոզիբայի գերեզմանատան մէջ թաղուած են զանազան ազգութիւններէն այլ եւ այլ ննջեցեալներ, որ մահուամբ եղբայրացած ու հոն ամփոփուած են. այսպէս, Հայեր, Իտալացիներ, Կիլիկեցիներ, Միջագետացիներ, Արաբներ, Հռովմայեցիներ,

Դալմացիներ, Ասկալոնացիներ, Մայումցիներ, Տիւրացիներ, Սիտիոֆացիներ, Դամասկացիներ, Եգիպտացիներ, Կապադովկիացիներ, Եղդադացիներ, ինչպէս նաև մէկ Թեսաղոնիկեցի, մէկ Հնդիկ, մէկ Սարակինոս եւ մէկ Արեքուսացի:

4. Քոզիբայի վանքին հայ միաբաններ.

Վերև գրեցինք որ Քոզիբայի վանքը Քոզիբացի Ցովհաննէսի օրով (✻ 532) տակաւին խուցերէ բաղկացեալ հաստատութիւն մըն էր, է. դարուն էր որ հոն կը հիմուի վանք ու եկեղեցի, կը ծաղկին նշանաւոր վանականներ՝ Քոզիբացին Գէորգ (✻ 625) և Անտոն, որ գրած է առաջնոյն վարքը: Քոզիբան՝ է. դարուն իր պայծառութեան գլխիքին վրայ կը գտնուէր, յետոյ տակաւ առ տակաւ անչքացաւ ու մինչև ԺԲ. դար թէև գոյութիւն ունէր, սակայն նոյն ժամանակէն սկսեալ քայքայուեցաւ և վերջին տարիներուն միայն նորոգուեցաւ: Վանքին պատմական գերեզմանատան մէջ ամփոփուած ննջեցելոց արձանագրուած անուններէն կը հետեւցնենք վանքին զարգացման թուականը, որ ժամանակ հաւաքուած էին բազմաթիւ երկիրներէ ու ազգութիւններէ վանականներ, որոնք թէև ապաստանած օտար հաստատութեան մը հովանիին տակ, բայց կը պահէին իրենց կրօնական դաւանութիւնը: Վերոյիշեալ հեղինակին այն կարծիքը թէ անոնք յունադաւանութիւնը ընդունած էին ու այդ հանգամանքով միայն կը մնային Քոզիբայի մէջ, ուղիղ չենք գտներ ա՛յն փաստերով որ իրեն ալ անտարակոյս անծանօթ չեն: Սիոնի մէջ և այլուր մեր հրատարակած յօդուածներով ըստ բաւականի պատմականօրէն հաստատուցինք թէ Հայոց եկեղեցին Երուսաղէմի և շրջակայից օտար վանքերու մէջ՝ ի հնուէն ունեցած է հայ միաբաններ, որոնք իրենց դաւանութեամբն ապրած են, իրենց լեզուովը աղօթած ու սաղմոսած են ուրոյն եկեղեցիի մը մէջ, թոյլտուութեամբ օտար վանքերու առաջնորդներուն: Այս մասին ամենէն հին վկայութիւնը կու տայ Ցերոնիմոս: Ընթերցողը երբ կը կարդայ Սիոնի անցեալ տարուան էջերուն մէջ մեր յօդուածներով պարզուած և գրքիս մէջ ամփոփուած պատմական փաստերը, պիտի տեսնէ որ Գաթիզնայի (Սիոն, 1927, էջ 109–

112), Սաբայի (անդ. 1927, էջ 366–372, 1928, էջ 16–19). Թէոդոսի (անդ. 1928, էջ 42–46), Եւթիմիոսի (անդ. 1928, էջ 364–367), Սինայի (Արեւ, 1926, թ. 2338–39) վանքերու մէջ յանուանէ յիշելով հայ միաբաններ՝ նկարագրած ենք անոնց պատմական կեցցաղը ու դաւանական վիճակը: Երուսաղէմի օտար վանքերու մէջ հայ վանականութեան այս որոշ հանգամանքը՝ հայ եկեղեցական մատենագրութեան համար յիշատակելի պարագայ մըն է և պատմական նորատաց տեղեկութիւն մը, որ անտարակոյս ուշադիր պրպտումներով և աշխատանքներով պիտի ճոխանայ ի պատիւ հայ քրիստոնէութեան:

Բոզիբայի գերեզմանատան ննջեցելոց արձանագրութիւնները հասկցուած է թէ հոն ուրիշներու հետ խառնուած և թաղուած են հայազգի երկու միաբաններ ևս, հայ Խահակ մը և Յովհաննէս անուն հայ սարկաւագ մը: Հաւանական է որ հոն ուրիշ հայ միաբաններ ալ թաղուած ըլլան, բայց արձանագրութիւն չունին: Այս երկու հայ միաբաններու մասին կղէոպա սարկաւագ հետևեալ կարծիքը կը յայտնէ, ըսելով թէ նոյն գերեզմանատան մէջ թաղուած հայ միաբանները ո՛չ թէ Քաղկեդոնի ժողովէն առաջ, այլ յետոյ թաղուած են, երբ դեռ իրենց հերձուածը(?) ոչ ընդհանրացած և ոչ ալ դրութեան մը վերածուած էր իրենց մէջ: Ցիշեալը անոնց մասին կը մտածէ երկու բան, անոնք կամ ա՛յն հայերէն են որոնք հաւատարիմ մնացեր են օրթոտոքս եկեղեցիին ծոցին մէջ, երբ միաբնակութեան դէմ հալածանքը սկսաւ Պաղեստինի մէջ և հերձուածը դադրեցաւ մեծ վանահայրերուն՝ Եւթիմիոսի, Թէոդոսի, Սաբայի և ուրիշներու չնորհիւ, և կա՛մ անոնցմէ էին, որոնք բիւզանդական պետութեան սահմաններուն բնակիչներ ըլլալով՝ Հերակլի օրերուն մըտան կաթողիկէ եկեղեցին, երբ կայսրը յաղթանակաւ դարձաւ Պարսկաստանէն և կարնոյ մէջ 628ին գումարեց ա՛յն ժողովը որ կարճ ժամանակի մը համար միայն երկու կողմերը միացուց:

Այս բացատրութիւնները մեր կարծիքով բնաւ հիմնաւոր չեն, վասն զի Բոզիբայի հայ վանականներուն և նոյն իսկ անխտիր բոլոր վանականներուն համար այն ատեններ անծանօթ էին վարդապետական իմաստներու տարբերութիւնները, անոնք ամենքն ալ եղբայրացած էին մէկ յարկի տակ: Եւ յետոյ վերև մեր թուած գրուածքներուն մէջ պատմականօրէն պարզած ենք թէ

հայ վանականներ Պաղեստինի օրթոտոքս վանքերուն մէջ բնակելով՝ խառնուած են տարբեր ազգութեանց վանականներուն հետ, բայց անոնք իրենց սեպհական եկեղեցիներուն մէջ իրենց լեզուովը կը կատարէին պաշտամունք, կ'աղօթէին, կը սաղմոսէին, կը հետևէին ձեռական աշխատանքի և գրչութեան արհեստին, և ասոր կը վկայեն ա՛յն բազմաթիւ գրչագիրները, որ կը մնային Երուսաղէմի, Մար–Սաբայի, Սինայի և վերին Եգիպտոսի անապատներուն մէջ, ինչպէս այլուր գրած ենք (Տարեւ, 1929, էջ 39–50). ամուր կերպով կը պահէին Հայ եկեղեցիին դաւանութիւնը, առանց զատուելու ընդհանուր եղբայրակցութենէն. անոնք հայ կը մնային միևնոյն նուիրական յարկին տակ. և այս պարագան տարօրինակ երևոյթ մը չէր կրնար ըլլալ, քանի որ հին օրերէ սկսեալ այլևայլ ազգերու վանականները թէ՛ Երուսաղէմի և թէ՛ չրջակայից Տնօրինական Ս. Տեղերու մէջ կը պահէին միևնոյն քրիստոնէական եղբայրակցութիւնը, անխտրօրէն մասնակցելով օրուան պաշտամունքներուն և արարողութեանց:

Այս եղանակաւ էր որ ի հնումն Բոզիբայի վանքին նաւակատիքի տօնադարձը, ըստ Երուսաղէմի ծիսարանին, հանդիսաւորապէս կը կատարուէր Յունուար 18ին (R. B. 1914, էջ 461): Ի զուր Abbé Martigny իր Dictionnaire des Antiquités chrétiennes բիւրքին մէջ (էջ 318) կը պնդէ թէ Ս. Յովակիմայ տօնը Թ. դարուն միայն հաստատուած է, և թէ Ս. Կուսի ծնողաց անունը Է. դարէն առաջ միայն աւանդավէպ մը կը նկատէ. բայց յիշեալ հեղինակը եթէ տեղեակ ըլլար Արևելեան եկեղեցիին դաւանաբանական և Բոզիբայի վանքին պատերուն վրայ նկարուած Ս. Յովակիմայ պատկերներուն և անոր անուան կառուցուած հնադարեան վանքին և եկեղեցիին, ապահովաբար պիտի չհամարձակէր գրել այդ տողերը:

ԼԲ

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻ ՎԱՆՔԸ ՆԱՊԼՈՒՍԻ ՄԷՋ

Նապլուս քաղաքը կը գտնուի կեդրոնական Պաղեստինի մէջ. անոր հարաւն է Քարիզիմ եւ հիւսիսը՝ Գերազ լեռը: Հին Սիւքէմէն՝ դէպ ի արեւելք մէկ քիլոմէթր է. կ'ոռոգեն զայն բազմաթիւ ընտիր աղբերակներ՝ որոնց գլխաւորը Քարիզիմի ստորոտէն բղխելով՝ կը կոչուի Բաս էլ-Այն: Նապլուսը պարիսպով մը շրջապատուած է եւ ունի բազմաթիւ դռներ, որոնց գլխաւորներէն մին՝ կը բացուի արեւելք և միւսը՝ արեւմուտք: Նապլուսի բնակչութիւնը կը բաղկանայ Իսլամներէ, Յոյներէ, Հրեաներէ, Սամարացիներէ և Լատիններէ:

Նապլուսի վրայ տեղեկութիւններ կու տան արաբ աշխարհագրիչներն ալ, ի մէջ այլոց, Եագուբ (1225) և Տիմաշքի (1300). Եագուբ հետեւեալ կերպով կը գրէ. «Նապլուս նշանաւոր քաղաք մ'է Պաղեստինի մէջ. ան չինուած է երկու լեռներու մէջ, յայնութիւն չունի, նեղուածք է, բայց երկայնութիւն ունի. Նապլուս ջրառատ է, վասն զի կոթնած է լերան. որուն հողը քարուտ է: Նապլուսէն Երուսաղէմ 10 մղոն է: Քաղաքը ընդարձակ հողեր ունի և գեղեցիկ չրջակայք մը, ամէնքն ալ չինուած Ս. Լեռան մօտ: Նապլուսի եռւի կողմը կը գտնուի լեռ մը, ուր Ադամ, ինչպէս կը պատմեն, երկիրպագելով աղօթեց, և հոն կար լեռ մը՝ ուր ըստ հրէական հաւատալեաց, Աբրահամ զոհ ըրաւ հոն և զոհն էր Իսահակը: Հրէայք մեծ յարգանք ունին հանդէպ այս լեռան, և զայն Քարիզիմ կը կոչեն: Նապլուսի մէջ կը բնակին Սամարացիներ և որոնք միշտ հոն կը մնան, և դուրս կ'ելլեն միայն վաճառականութեան և չահու նպատակաւ: Սամարացիները Հրէից մէկ աղանդը կը կազմեն: Անոնք Նապլուսի մէջ ունին ընդարձակ մզկիթ մը (1225), անոր համար քաղաքը կը կոչուի Էլ-Գուսս. անոնք Երուսաղէմը կը նզովեն և երբ անոնցմէ մին ուխտուի հոն երթալ, քար մը կ'առնէ և զայն

կը նետէ Երուսաղէմի դէմ: Քարիզիմը կը յիշատակուի Հընգամատեանին մէջ. Սամարացիները դէպ ի անոր կեցած կ'աղօթեն: Հոն կայ աղբիւր մը՝ որուն այրը կը պատուեն եւ կ'այցելեն անոր ներսը, և այդ պատճառաւ է որ Նապլուսի մէջ չատ Սամարացիներ կը գտնուին»:

Տիմաշքիին խօսքերն են. «Նապլուսը Սամարիոյ գաւառին մէջ կը գտնուի: Շատ բարերար եւ հաճելի քաղաք մ'է երկու լեռներու միջև ընդարձակօրէն չինուած: Ան ունի առատ վազուն ջուր և ընտիր բաղնիքներ. նաեւ գեղեցիկ մզկիթ մը՝ ուր չատ մարդուններ գիչեր և ցերեկ Դուրան կը կարդացուի յատուկ մարդերու միջոցաւ: Քաղաքը կը նմանի պարտէզներով պալատի մը: Անոր ձիթենիներէն հանուած իւղը կը տարուի Եգիպտոս, Սիւրիա, Հիճազ և Արաբիոյ անապատը: Նոյն իւղէն տարին հազար քիս, Հիճազ և Արաբիոյ անապատը: Նոյն իւղէն տարին հազար քիս դանթարի չափ կը տարուի նաև Դամասկոս՝ Օմմիատեան մզկիթին գործածութեան համար: Նոյն իւղէն կը չինեն նաև առաջնակարգ օշարակ, որ կ'արտածուի ուրիշ տեղեր և Միջերկրական կղզիները: Նապլուսի մէջ կ'ապրի դեղնորակ սեռ մը՝ քաղցր քան ուրիշ տեղերունը: Հոն կան երկու լեռներ՝ որ կը կոչուին Ճէպէլը Զէյթա՝ որուն Սամարացիները ուխտի կ'երթան. հոն գոհ կը մատուցանեն, գառնուկներ կը մորթեն և կ'այրեն անոնց միսը: Հոն կան չատ Սամարացիներ ուրիշ տեղերէ ալ՝ կ'ըսուի թէ՝ երբ Իսլամ մը, Հրեայ մը, Սամարացի մը եւ Քրիստոնեայ մը ճանապարհի վրայ կը հանդիպին, Սամարացին նախամեծար կը համարի ընկերանալ Իսլամին հետ»: Իպն Պաթութահ արաբ աշխարհագիրը այցելած է հոն 1355ին (Տե'ս "Palestine under the Moslems». էջ 512–14): Միւեիր էտ–տին կը գրէ թէ Նապլուսի դիտուններէն մին էր Ապո'ւլ Ֆէդհ Նասր իպն Իպրահիմ իպն Նասր էլ Մուգատտեսի էն Նապլուսի, Շաֆիիդ, և հեղինակ բազմաթիւ գործերու. ան երկար տարի Երուսաղէմ բնակած է. իր երկասիրութիւններն ասոնք են. Թահդիպ, Քիթապ էլ թագրիպ, Քիթապ էլ Ֆօզուլ, Քիթապ էլ Քաֆի: Ան ունի նաև մեկնաբանական գրուածքներ: 1097ին մեռած է Դամասկոսի մէջ եւ թաղուած է Պապ–էս–Սաղիր (Տե'ս թրգմ. Sauvaireի, էջ 64–5):

1. Նապլուսը Սիւքարը չէ. Քրիստոնէական քարոզութիւնը նոյն քաղաքին մէջ.

Յովհաննու Աւետարանին (Դ. 5) մէջ կը յիշատակուի Սամարացւոց քաղաք մը՝ Սիւքար անուն, մերձ այն կալուածին՝ զոր Յակոբ Նահապետ ընծայեց իր Յովսէփ որդւոյն, եւ հոն էր Յակոբի աղբիւրը եւ Յիսուս ճանապարհէն յոգնած՝ կը նստէր նոյն աղբիւրին վրայ, և ուր քիչ յետոյ Սամարացի կին մը գալով՝ երբ ջուր պիտի քաշէր, Յիսուս անոր հետ խօսեցաւ (անդ, 6–7)։

Շատերը Նապլուսը կը նոյնացնեն Սիւքարի հետ, բայց Եւսեբիոս և Ցերոնիմոս Սիւքարը կը զատեն Նապլուսէն։ Պորտոյի Անանուն ուխտաւորը Սիւքէմէն հազար քայլ հեռի Քարիզիմի ստորոտը գտնուած Նապլուսէն դուրս կը դնէ մասնաւոր Սհար գիւղ մը ուրկէ եկաւ Սամարացի կինը Յակոբի ջրհորը։ Անունը այս տեղւոյն՝ որ կը թուի թէ կը գտնուի ջրհորին անմիջական չրջակայքը, մեզ կը յիշեցնէ այժմու մէկ գիւղին՝ Ասհարի անունը, համանուն աղբիւրովը, բայց այս անուն գիւղը մէկ քիլոմէթր հեռի կը գտնուի Գեբաղ լեռան ստորոտը գտնուած Յակոբի ջրհորէն։ Ասիկա կը համաձայնի Askaroth՝ որ կը գտնուի Եփրեմի երկրին «բարձունք»ը և En Sokhar աղբիւրին հետ, այն դաշտին մէջ՝ որ իր կանխահաս ցորենովը նշանաւոր հանդիսացած է. Սաքարի դաշտ կը նշանակէ ասս, որ Քարիզիմի և Գեբաղի առջևէն կը տարածուի արևելք։ Յակոբի ջրհորին քով կառուցուած եկեղեցին ձախ կողմը՝ Մատապայի քարտէսը բաժնուած կը ներկայացնէ Նապլուսը վերոյիշեալ տեղերէն. ահա կը հասկցուի ուրեմն որ հինները զատ զատ տեղեր կը նկատէին Նապլուսը եւ Սիւքարը։ Ըստ Պոնիփակիոսի, Յակոբի ջրհորի եկեղեցին մօտ չինուած էր վանք մը՝ ուր կային հարիւր կիներ. բայց իր օրով վանքը ու եկեղեցին քանդուած էին. Յակոբի ջրհորի մօտ կանգնած վանքը չինուած էր յիշատակին այն Սամարացի կնոջ՝ որ հաւատաց Յիսուսի և որուն զաւակները նահատակուեցան և ինքն ալ բանտին մէջ մեռաւ։ Լատին եկեղեցին անոր տօնը կը կատարէ մարտ 20ին (Mislin, Հոր. Գ. էջ 427)։

Աւետարանէն սորվեցանք թէ Սամարացիք նոյն իսկ Փրկչին բերանէն լսեցին կենաց բանին քարոզութիւնը և շատերը հաւատացին։ Ս. Փիլիպպոս յաջողութեամբ քարոզեց Աւետարանը Սամարիոյ չրջակայքը. Ս. Պետրոս և Ս. Յովհաննէս իրենց կողմէն Սամարիոյ այցելութիւն տալէ վերջ, «եւ ի բազում գեօղս Սամարացւոցն աւետարանէին» (Գործ Առաք. Ը. 25)։ Միևնոյն թուականին քրիստոնէութիւնը մուտք գտաւ Նապլուսի մէջ, որ ծնունդ տուաւ Յուստինոսի՝ երկրորդ դարու քրիստոնէութեան մեծ չատագովին։ Դ. դարուն հոն հաստատուեցաւ եպիսկոպոսութեան մը աթոռը։

636ին Նապլուսը մտաւ Իսլամաց լուծին տակ. եւ 1100ին Խաչակիրք տիրեցին անոր. 1120ին հոն սինոդ մը գումարուեցաւ։ 1184ին Սալահէտտին աւարառութեան տուաւ քաղաքը և 1187ին տիրացաւ անոր։ 1202ին Նապլուս երկրաշարժէ մը քանդուեցաւ և միայն Սամարացիներուն թաղը ազատ մնաց։

Արդի ժամանակաց պատմութիւնը միչտ ըմբոստ կը ներկայացնէ Նապլուսի բնակչութիւնը Դամասկոսի և Աքքեայի կառավարիչներուն դէմ։ 1834ին անոնք զարձեալ ըմբոստացան Իպրահիմ փաչայի դէմ։ Վերջինս յանկարծ յարձակեցաւ Նապլուսի վրայ, թալանեց զայն և իր Շէյխը՝ Հասան Ասմէտը չղթայելով տարաւ Դամասկոս՝ ուր ան մահուան դատապարտուեցաւ իր չորս զաւակներուն հետ։

2. Խաչակրաց եկեղեցիները Նապլուսի մէջ.

Սալահէտտին երբ Նապլուսը գրաւեց, եկեղեցիներուն տիրացաւ և զանոնք վերածեց մզկիթի. նոյն գրաւուած եկեղեցիներն են.

Ս. Ձամի էն–Նասըր

Այս եկեղեցին Ձամի էն–Նասըր անունը տրուած է. և Clermont-Ganneau հրատարակեց անոր նկարագրութիւնը յատակագիծովը։ Բիւզանդական եկեղեցի մ'է ան, յատակագիծը կը պարունակէ ուղղանկիւն գերանամիջով յառաջացած կոզակ մը, ուղղանկիւն թաղեր պատերու մէջ հիւսուած երկու կոզակիկներ, և նաւի հինգ գերանամէջեր խաչաթևերով, ամբողջ ցցանկիւնիներով կամարակապ։

Երկու կողման աղեղները եւ փոքր պատուհանները կամարաձեւ են: Նաւին ամենամեծ պատուհաններն ալ նմանապէս կամարաձեւ են: Կամարները կը հանգչին ուսերու (consoles) վրայ, արեւելքի և արեւմուտքի վերջին սիւները քառակուսի են, միւսները գլանաձեւ:

Բ. Էլ-Քասրա

Արեւմտեան ճարտարապետութեամբ չինուած միւս մզկիթին նկարագրութիւնը չէ հրատարակուած, և պէտք է յատակագիծը հանել: Այս մզկիթը կը կոչուի Էլ-Քասրա, Երկինքի մզկիթը: Ըստ աւանդութեան, այս մզկիթը այն տեղն է, ուր Յակոբ լացաւ Յովսէփին վրայ, երբ անոր մահը սուտութեամբ իրեն հաղորդուեցաւ: Իսլամները նոյն տեղւոյն մէջ կը յարգեն սոյն յիշատակը: Գոթական յիշատակարան մ'է աս, և Իսլամ ալիրապետութեան տակ չինուած է, հաւանաբար 1242ին: Ոմանք տակաւսելի կը գտնեն այս մզկիթին եկեղեցի մը ըլլալը:

Էլ-Քատրայի մզկիթը կը գտնուի քաղաքին ամենէն ծայրը, Քարիզիմ լեռան գառիվայրին վրայ, ոչ շատ հեռի Սամարացիներուն տաճարէն: Ան ծածկուած է պարէտներու խորքին մէջ, դէպ ի հարաւային արեւելք: Երկք գերանամէջերու պարզ ուղղանկիւն մ'է, բաժնուած որմայեղերով, որոնց մէջ կը բացուին հիւսիս-արեւելք ճակատին վրայ կամարաձեւ դռներ:

Դռները կամարաքիւ ունին հորիզոնական լարով մը կապուած. իրենց լայն չեղեզը զարդարուած է թերահարթ սիրուն սաղարդանկարներով. բայց այս քանդակագործութիւնը արաբական է:

Այս կամարները, ընդհակառակն, գաղղիական սրակամարներ են չեղեզրային բարաւորներով կիսասիւներու վրայ ինկող աղեղներով. որմայեղերն ալ գոթական են: Մէկ խօսքով, այս չէնքը երեք դռներով գոթական մզկիթ մ'է:

Գ. Ս. Յարութեան եկեղեցին *(Մեծ Մզկիթը)*

Մեծ Մզկիթը յաջորդած է Ս. Յարութեան եկեղեցին որ աւերուած է 1169ին: Ան չինուած է այն գետնին վրայ ղոր ընծայած է Ամորի թագաւորը: Vogüé, որ իր "Les Eglises de la Terre Sainte" գործին մէջ կը յիշէ զայն, չէ կարողացած տեսնել զայն և ոչ ալ յատակագիծը հանել: Հազիւ Թոյլ տրուեցաւ իրեն դուռը տեսնել. յետոյ է որ Bonfils լուսանկարեց: 1881ին գնդապետ Conder կարողացաւ տեսնել զայն և անոր նկարագրութիւնը հրատարակել. Camille Enlart յաջողեցաւ ստանալ քանի մը նօթեր, գծագրութիւններ և լուսանկարներ, բայց ներքին մասին վերաբերեալ մանրամասնութիւնները կը պակսին:

Մեծ Մզկիթը տեսակ մը պազիլիքա է արեւելքէն արեւմուտք երկարած, ան գրաւած է այն տեղը հանդիպումովը հարաւի կողմէն մեծ պողոտային և հիւսիսի կողմէն պազարի փողոցին:

Շէնքը կամարաձեւ չէ: Շատ մը հատածներու (profils) բաւորներով պսակուած ուղղանկիւն սիւներու վրայ կամարաձեւ աղեղներու երկու կարգեր ունի, որ կը թուի թէ յարմարած են հին եկեղեցիին թուականին և ոճին հետ: Իր նա՞ն է արդեօք: Խնդիրը լուծելու համար պէտք է հանդարտօրէն եւ ուշադրութեամբ ուսումնասիրել այս սրբավայրը որ վերին աստիճան փոխուած է և ծեփերով ծածկուած:

1881ին գնդապետ Գոնտէր արեւմտեան երկք դերանամէջերուն մէջ կարծեց թէ գտած էր հին պազիլիքայէն մնացորդ մը, տեսաւ հոն սիւներ՝ որոնց խոյակները չատ կը նմանէին Բեթղէմի եկեղեցիին խոյակներուն, բայց ի մէկէն, որ բաղկացած էր նեղ լուտասի (lotus) երկայն տերեւներէն: Աս իրապէս գոթական կեռճանաւոր խոյակ մ'էր 1242ին կարճ գրաւման թուականին:

Արեւելեան կողմը գտաւ խաչակիրներէն չինուած մաս մը, հին սիւնազուխներու խմբաւորումէն կազմուած երկաւորեակ սիւներու հետ, այս խումբերէն մին կը կրէր միակ գոթական խոյակ մը: Եկեղեցիին գասը կրնար ըլլալ աս, միւնոյն թուականին նորոգուած:

Ան նկատեց նաև որմնադիրներու երկու նշաններ մին A եւ միւսն B տաչուած քարերուն վրայ գծագրուած:

Մզկիթը ունի դէպ ի հիւսիս, կողմնակի երկու դուռներ, պազարին փողոցին վրայ, հին սիւներ և տղբիւրներ ունեցող բակերուն առջեւը: Հիւսիս-արեւելքի մուտքը ունի բիւզանդական դուռ մը. Պէրուէթի Ս. Յովհաննէսի դրան նման:

Գլխաւոր մուտքը արեւմտեան կողմն է, տրապիզաձեւ բակի մը

մէջ, ուր կայ աղբիւր մը: Տրապիզին փոքր մասը դուռը գրաւած է մզկիթի վերածման ժամանակ մեծ այլանդակութիւններու և փոփոխութիւններու ենթարկուած է: Ս. յապիսի փոփոխութիւններ Աչակերներու գործին ուրիշ շատ մը գեղեցիկ կոթորներուն ողբալի պատմութիւնը կը յիշեցնեն:

Ս. Ցարութեան եկեղեցիին խոյակները բիւզանդական կեռանտի նման խիստ գեղեցիկ խոյակներ են, ինչպէս որ Ֆրանսայի մէջ ԺԳ. դարու բազմաթիւ դուռներու վրայ կը գտնուին, մանաւորապէս Mantes ի դուռներուն վրայ, որ մեծ նմանութիւններ ունին այս եկեղեցիին խոյակներուն հետ: Անոնցմէ մին ունի տեսակ մը փոքր տերեւներով գօտի մը, որուն նմանները կը տեսնուին Mantes ի եւ Charliau ի մէջ: Ուրիշ մը ունի փոքր ծաղկերով կիտանիչ կողմով տերեւներ. մանրամասնութիւն մը՝ որ կը գտնուի Saint-Lomer de Blois ի մէջ:

Այս խոյակները կողովաձեւ մասին մօտ ունին հազիւ նըշմարելի ուռոյց մը: Կոճերը (astragales) սիւնագլխի մասերը կը կազմեն:

Թակազակները ունին ցցուածակիր վերին եզերք մը և նեղ չեղեզր մը քանդակազործեալ, բայց շատ ատորին խոյակներու քանդակներէն: Հոն կը տեսնուին սաղարթանկարներ և խոյօդներ. հիւսիսի կողմը՝ պտուղ մը, կեռանտի խոյօդ մը, ուրիշ խոյօդ մը, մարդկային գլուխ մը, կարիճ մը: Հարաւի կողմը՝ կը գտնուին պատկերներ բոլորովին նման անոնց՝ որ կը զարդարեն Chatillon-Sur-Cher ի թակազակներու խորոիը: Կարատուած գլուխ մը, թռչուն մը եւ գառնուկ մը կը յիշեցնեն գլուխները այն խոյերուն որ կը զարդարեն Կ. Պոլսի, Վենետիկի Ս. Մարկոսի թանգարաններուն բիւզանդական շատ մը խոյակներու անկիւնները:

Բայց տեսնուած այս գառնուկը հոս ունի խորհրդանչական իմաստ մը, վասն զի թակազակին երեսներուն վրայ, ճախին կեցած յուշկապարիկ մը իր ժպիտովը կը ջանայ մոլորեցնել զայն, մինչ առջևն առիւծ մը կը ջանայ վախցնել զայն իր մռնչիւններով. այսպէս սպառնալիք և մոլորանք կը ճգնին քրիստոնեան ուղիղ ճանապարհէն մոլորեցնել: Այս գառնուկը՝ քիչ մը կոչտ չինուածքով, կը թուի օժտուած ըլլալ աւելի շատ նուազ ոգիով քան թէ առաքինութեամբ:

Այս նիւթը իր նմանը ունի. Chadenac (Deux-Sèvres) եկեղեցիին ճակատին վրայ բարձրահասակ երեք անասուններու քանդակները երեւան եկած են. գառնուկ մը՝ որուն կ'սպառնան երկու առիւծներ, և Գոթոիքայի մէջ Մարիանայի հին մայր եկեղեցիին դրան կամարին վրայ ցոյց կը տրուի սպառնացող կատաղի անասուններէն չրջապատուած գառնուկ մը, թերեւս այլաբանութիւն մը աւետարանական խօսքին համաձայն, «իբրեւ գոչխարս ի մէջ գայլոց»:

Սիւներու միջև դրանդիներուն ցցանկիւնները քանդուած են և իրենց չեղեզրները խորոիիկներով (congé) նուազած են:

Ժողովակաձև պատուանդանները տափուկ խմբարդով պսակուած են և բարձրացուած ատորեզրի մը վրայ: Որմախարիսխներուն այս կարեւորութիւնը և ակօսաձև փորուածքները իրենց նմանութիւնները ունին Mantes ի, Chalons ի, Etampes ի և Chartres դուռներուն վրայ. խոյակներն ալ կը յիշեցնեն Ֆրանսայի արքունական կալուածներու չէնքերուն ոճը. բայց թակազակները քիչ մը կը չեղին այս ոճէն, և կամարները ունին մի ուրիշ նըկարագիր. կարելի է աւելի մօտեցնել զանոնք իտալական ոճին քան թէ ֆրանսական տիպարներուն և անոնց փոքր գծաքանդակուածները կը թուին ըլլալ բաժինը արաբ ձեռքի մը որ կարծեր է գեղեցկացնել արեւմտեան յօրինուածը և դրած է միայն անպէտ բան մը: Ամբողջութիւնը սակայն, կը պահէ ամրութիւնը, ոգմտութիւնը, յստակութիւնը և գեղեցկութիւնը որոնք ոչ մէկ ատեն կը պակսին Ֆրանսական գործերէն (Տե՛ս այս թուականին նշանաւոր կ'ընեն Camille Enlart, Les Monuments des Croisés de Jérusalem. էջ 284–289):

3. Նապլուսի Ս. Յովհաննէս Մկրտչի եկեղեցին.

Շատ կանուխէն ցամաքէն եկող հայ ուխտաւորաց համար Նապլուսի մէջ հաստատուած էր Ս. Մկրտչի անուամբ վանք մը. այդ վանքին անունին կը ծանօթանանք միայն հին յիշատակարանէ մը զոր կը գտնենք Սաւպաւնահացի Երուսաղէմի Պատմութեան մէջ (էջ 261) ուր, սակայն, միայն կը յիշատակուի Ս. Յովհաննէս Աւետարանչի անունով, որ կրնայ չփոթուիլ Յովհաննէս Մկրտչի անո-

ուան հետ, եթէ իր մօտը չգտնուէր Սեբաստիա գիւղը, ուր էր Յովհաննէս Մկրտչի բանտը և ուր ան գլխատուեցաւ և հոն էր որ չինուեցաւ յետոյ Ս. Կարապետի հոյակապ եկեղեցի մը, որ այժմ աւերակ է: Ս. Յովհաննու Մկրտչի գերեզմանին ու եկեղեցին մերձաւորութենէն օգտուելով Նապլուսի Հայոց վանքը Ս. Յովհաննէս Մկրտիչ կոչուած է և յիշատակարանը Ս. Յովհաննու ըսելով կ'ուզէ հասկցնել Ս. Յովհաննէս Մկրտիչ: Հակառակ որ չատ հնագոյն վանք մը եղած է Նապլուսի Ս. Յովհաննու Մկրտչի վանքը, բայց ան դժբախտաբար պատմութիւն չունի, կամ մենք չհանդիպեցանք անոր մեր պրպտումներուն հակառակ: Նոյն վանքը կը յիշատակուի Սալահէտտինի կողմէն Աբրահամ պատրիարքի տրուած հրովարտակին մէջ (Սաւասան, էջ 410), ինչպէս նաեւ Սուլթան Սելիմ Ա.ի արաբ. 923 թուին Սարգիս պատրիարքի տրուած (անդ, էջ 881) եւ օսմանեան կայսրերէն Ս. Աթոռոյ գահակալներուն տրուած բոլոր պերաթներուն մէջ յիշատակուած է Նապլուսի եկեղեցին, իբր Հայոց սեպհականութիւն. բայց կ'երեւի որ տեղացիները ԺԶ. դարուն վերջերը գրաւած են եկեղեցին ու վանքը ու մզկիթի վերածած են, արգիլելով ո՛եւէ քրիստոնեայ ուղեւորի հոն մտնել: Մենք կը հանդիպինք ծանօթագրութեան մը (անդ, էջ 625) ուրկէ կ'իմացուի թէ Աստուածատուր պատրիարք Տարոնեցիի (1645–1664) խընդրանքով հիճրէթի 1058 (= 1648) թուականին տրուած հրամանագիր մը կը պատուիրէ Նապլուսի գիւղացիներուն՝ չվնասել Ս. Յակոբի վանքին սեպհական ձիթենիներուն ու ծառատունկներուն:

Այս հրամանագիրին մէջ խօսք կ'ըլլայ միայն Նապլուսի Հայոց ձիթենիներուն և ծառատունկներուն. վանքի կամ եկեղեցիին խօսք չկայ. կամ այն է որ 1648ին վանքը արդէն գրաւուած ու մզկիթի փոխուած էր, և կամ այս թուականէն յետոյ, ինչպէս ձիթենիները ու պարտէզները գրաւուեցան, նոյնպէս եկեղեցին մզկիթի վերածուեցաւ. այսպիսի դարաւոր հաստատութեան մը մասին, որպիսին էր Նապլուսի վանքը, պատմական ծանօթութիւն կը պակսի թէ քաղաքին ո՞ր կողմը չինուած էր եւ ի՞նչ էր նկարագրութիւնը. Ս. Աթոռոյ դիւաններուն մէջ ո՛եւէ մեծ կամ փոքր յիշատակարանի մը հետքը չգտանք: Քրիստոնէական այսպիսի սրբավայրի մը գրաւումը անտարակոյս յանկարծական կերպով կատարուած չի կրնար ըլլալ, տեղացիներուն

սկզբնական ոտնձգութիւնները անշուշտ ընդդիմութեան բաղխած են, ինչպէս կը տեսնուի նման հաստատութեանց գրաւման պարագաներուն առթիւ. անշուշտ վանքը ունէր տեսուչ մը եւ միաբաններ՝ որոնք իրենց բողոքն ու գանգատը լսելի պիտի ընէին ուր որ պէտք էր. բայց այս ամենուն հակառակ ո՛եւէ յիշատակարան չերեւիր. ըսե՞նք թէ ժամանակը անհետացուցած է զայն, եթէ կար: Նապլուսի վանքին պատմութիւն չունենալն կը հետեցնենք թէ ան երկար դարեր յառաջ վերածուած է մզկիթի, և անգամ մը ևս կարելի չէ եղած յիշել կամ յիշատակել զայն այցելութեան մը և կամ ուրիշ ոեւէ պարագայի մը առթիւ, քանի որ տեղացիք բացարձակ կ'արգիլէին ո՛եւէ քրիստոնէի մուտքը այն հաստատութեանց մէջ, որոնք փոխուած էին մզկիթի, ինչպէս վերև ալ յիշուեցաւ:

Բայց մենք պիտի կեդրոնացնենք մեր ուշադրութիւնը Նապլուսի մէջ գտնուած մզկիթի մը յօրինուածքին վրայ զոր տեսած է Camille Enlart և կը յիշէ իր գիրքին մէջ (էջ 289). հոս կը դնենք իր խօսքերը. «Մեծ մզկիթին արեւմտեան կողմը, գլխաւոր պողոտային վրայ, տեսայ խալամ սրբավայր մը, որ բիւզանդական հին եկեղեցի մ'է. չորս գեղեցիկ սիւներ կը կրեն կեդրոնական գմբէթ մը եւ ութը ցցանկիւն կամարներ: Սրգիլուեցայ մտնել մզկիթին մէջ»:

Նկատի առնելով թէ նկարագրած եկեղեցին ունի չորս սիւներու վրայ կեդրոնական գմբէթ մը կամարներով, և այս կերպ եկեղեցիները բիւզանդական ըլլալէ աւելի՝ հայկական են, ինչպէս նկատած ենք այլուր, չատ հաւանական կը գտնենք թէ Նապլուսի գլխաւոր պողոտային վրայ գտնուած սրբավայրն էր Հայոց վանքը ու եկեղեցին, ուր այժմ կը գտնուի Շէյխ Պատրանի դամբարանը:

Երուսաղէմի երկու հայ պատմիչները՝ Հաննէ և Մկրտիչ վրդ. Սրծրունեան հակիրճ տողերով միայն կը յիշատակեն Նապլուսի եկեղեցին. առաջինը կը գրէ (էջ 299) «իսկ քաղաքն Սամարիա որ է Նէյուպոլիս, եւ այժմ ասի Նապլուս՝ սա քաղաք էր թաղաւորացն Իսրայելի, եւ է ըրաւէտ: Աստ գոյր եկեղեցի մի ազգիս մերոյ, այժմ ի ձեռս այլազգաց է: Եւ Սամարացի Հրէայք գասնին 'ի քաղաքս որք են աղանդաւորք»: Իսկ երկրորդը կու տայ (էջ 278) վերնոյն մի և նոյն տեղեկութիւնը:

Իսկ Թադէոս Միհրդատեանց իր մէկ գիրքին մէջ (Տե՛ս Նկարագիր աղեւից Երուսաղէմի, էջ 60) կը գրէ՝ թէ «նոյնպէս եւ Նապլուսի եկեղեցինիս ալ՝ որ չատ ժամանակէ ի վեր քայքայուած ու ամայի մնացած է, եւ որուն հրովարտակներն ալ (ինչպէս կը լսեմք) երեսի վրայ կեցած են, ու ժողովուրդը ցրուած եւ կամ յունադաւան եղած է»։

ԼԳ

ԹԱԲՈՐ ԼԵՐԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Քրիստոսի Այլակերպութիւնը կը պատմեն Մատթէոսի (Ժէ. 1–3), Մարկոսի (Թ. 1–12) եւ Ղուկասու (Թ. 29–36) աւետարանները։ Անոնք չեն յիշեր անունը լերան՝ ուր այլակերպեցաւ մեր Տէրը։ Աւանդութիւնը եւ առաքելական դարու մօտ ապրող եկեղեցական մատենագիրները կը հաստատեն թէ Փրկչին այլակերպած լեռը Թաբոր էր։ Առաջին դարու վերջերը կամ Բ. դարու ըսկիզբը խմբագրուած Եբրայեցւոց կոչուած անվաւեր աւետարանին մէկ հատուածը կը պատմէ թէ՝ Յիսուս Ս. Հոգիէն առաջնորդուեցաւ «Թաբոր լերան վրայ». սոյնին յաջորդ համարը կը պակսի. բայց, ըստ քննադատներու, պիտի պատմուէր թէ Յիսուս պիտի այլակերպէր հոն Մովսէսի և Եղիայի ներկայութեան։ Որոգինէս (185–254) կ'ըսէ. «Թաբորը Գալիլիոյ այն լեռն է՝ որուն վրայ Քրիստոս այլակերպեցաւ» (Մեկն. ԶՐ. Սաղմոսի, 13)։ Գ. էն Դ. դար խմբագրուած «Նկոյտւն Ս. Կուսին» գրուածը երկրցս կը պատմէ թէ Փրկչին Այլակերպութիւնը տեղի ունեցած է Թաբոր լերան վրայ։ Կիւրեղ Երուսաղէմացի «Կոչումն Ընծայութեան» գիրքին ԺԲ. ճառին մէջ կ'ըսէ. «Ելոհիւ իսկ հին (Մովսէս և Եղիա), որ ի ժամանակին յայտնեցան լինելոյ եկին կացին ի լերինն Թաբոր...»։ Պրոկղ՝ Պատրիարք Կ. Պոլսի (✻ 447), Անդրէաս Երուսաղէմացի, Յովհաննէս Դամասկացի և այլք իրենց Այլակերպութեան ճառերով կը վկայեն, ինչպէս Դ. Ե. և Զ. դարերու ուխտաւորներն ալ կը հաստատեն, թէ Թաբոր լեռը եղաւ Փրկչին Այլակերպութեան լեռը։

Կ. Պոլսի Ե. Ժողովը 553 ին Թաբորի վրայ հաստատեց եպիսկոպոսութիւն մը։ Դ. դարէն սկսեալ ան եղաւ նշանաւոր ուխտատեղի մը։ Դ. դարու լատին Ուխտաւորուհին և այլք ուխտի գացած են Թաբոր լեռը։

Մեր այս գրուածքը պիտի ունենայ երեք մաս.— Ա. Թաբորի եկեղեցիներուն պատմութիւնը, Բ. Անոնց նկարագրութիւնը, և Գ. Թաբորի մասին մեր ազգային յիշատակարանները։

Ա.— Քրիստոնէութեան չատ կանուխ թուականներուն Թաբորի վրայ կառուցուած էր ընդարձակ եկեղեցի մը, յարակից երկու եկեղեցիներով։ Ե–ի դար Թաբորի եկեղեցիներուն ամենէն պայծառ ժամանակն էր և ամէն ազգէ կրօնաւորութիւն մը հասած էր իր զարգացեալ վիճակին։ Նոյն ժամանակին կ'այցելեն Բլէզանսի (Իտալիա) Անտոնինոս, և Արգուլֆ եպիսկոպոս։ Նոյն եկեղեցիները, ինչպէս նաև տեղւոյն վանքերը և հիւրանոցները կը քանդուին և խաչակիրք կը նորոգեն զանոնք։

Թանկրէտ երբ 1099 ին տիրացաւ Գալիլիոյ՝ գրաւել տուաւ Թաբորի ամրութիւնները։ 1101 ին իր զինուորները պարպեցին զայն, Թշնամւոյն սպառնալիքին տակ մնացած Յոպպէի պարիսպները կրկին քով ուրիչ զինուորներու հետ կատարելու համար իրենց ներուն քով ուրիչ զինուորներու հետ կատարելու համար իրենց կեդրոնացումը։ Թանկրէտ Գալիլիոյ իշխանապետութեան խաղաղ ստացողը եղածին պէս, Թաբորի վրայ հիմնեց վանք մը և օժտեց զայն առատաձեռն նպաստներով. այս վանքը իր առատաձեռնութեանը և ռազմական կարևորութեանը պատճառաւ բերդի մը վերածուեցաւ։ 1101 ին աբբայ Ժէրար կը վարէր զայն և վանական մը հոն կ'ընդօրինակէր Կիկերոնի յօրինած Սկիպիոնի երազը խոշագրով ձեռագիրը, որ պահուած է Կանդի մատենադարանին մէջ։ Միևնոյն տարին Պաղտին Ս. հաստատեց Թանկրէտի կողմէն Ս. Փրկիչ եկեղեցիին տրուած պարգևները։ 1102 ին Ժէրար եպիսկոպոսական տիտղոսով ներկայ կ'ըլլայ Երուսաղէմի ժողովին (Mansi, Ժողովք Ի.)։ 1103 ին Փասգալ Բ. կոնդակով մը կ'ընծայէ անոր Գալիլիոյ արքեպիսկոպոսութեան տիտղոս և Պաղիտա։ Պահուած է այն կապարեայ կնիքը՝

որով կը կնքէր իր գրութիւնները։ 1107 ին Պաղտին Թաբորի եկեղեցւոյն ընծայեց նոր պարգև մը։ Լատին վանքը ունէր երկու եկեղեցիներ — Ս. Փրկչի եւ Մովսէսի։ Շատ հեռի չըլլալով՝ հին եկեղեցիին մօտը յունական վանք մը կար յանուն Ս. Եղիայի։ Ի յիշատակութիւն Ս.յլակերպութեան կառուցուած այս երեք եկեղեցիներն են՝ որոնց այցելեցին Sæwulf 1103 ին, և 1113 ին՝ Դանիէլ ռուս վանականը։

1113 ին Խորասանէն եկած արկածախնդիր աւազակներ, հակառակ զինուորական պաշտպանութեանց, աւերեցին Գալիլիան, Թաբորը կողոպտեցին, և սպաննեցին կրօնաւորները։ Երբեմն Ara Coeli վանքին մէջ (ի Հռոմ) պահուած ԺԵ. դարու ձեռագիր մը կ'ապահովէ — չի գիտցուիր ո՛ր աղբիւրներու համաձայն — Թէ այս կրօնաւորները գերմանացիներ էին, և Թէ զոհերուն Թիւն էր 72։ Յովհաննէս Փոկաս 1185 ին այցելեց եկեղեցիները և նշանակեց պղնձէ այն վանդակները (chancels) որ չրջապատած էին դասը, կեդրոնը, սեղանին առջև։ Խաչով մը նշանակուած սպիտակ մարմարէ բոլորակ քարայատակ մը ցոյց կու տար ճիշդ այն տեղը՝ ուր Քրիստոս այլակերպած էր։

1187 ին Սալահէտտինի բանակը կործանեց եկեղեցիները եւ վանական հաստատութիւնները։ Կրօնաւորները ցրուեցան Անտիոք, Աքքա և այլուր։ 1228 ին Ֆրէտէրիկ Բ. Թաբորի վրայ եկեղեցի մը նորոգեց, բայց ան չկրցաւ դառնալ իր նախկին պայծառութիւնը։ 1263 ին Պիպարս վերջնականապէս քանդել տուաւ վերաչինուած հաստատութիւնները։ Նոյն թուականէն մինչեւ 1745 Թաբոր աւերակոյտ մ'էր. այցելող ամէն ազգի ուխտաւորները տխուր չեչտերով և սրտի բեկումով կ'արձանագրեն Ս. Լեռան վրայ տիրող ամայութիւնը և այրեցաւեր վիճակը։ ԺՍ. դարու վերջն էր որ Ֆրանչիսկեանք չինեցին իրենց նոր եկեղեցին հին սրբավայրին տեղւոյն վրայ (Camille Enlart, Les Monuments des Croisés. Բ. Հար. էջ 380–385)։

Բ.— Թաբոր լերան կրօնական յիշատակարաններու գլխաւոր աւերակները կեդրոնացած են սարահարթին արևելքը, քառակուսի չրջափակի մը մէջ։ Հոն մտած ժամանակ, ձախին կը գտնուին մնացորդները փոքր եկեղեցիի մը որուն պատերը տակաւին կանգուն են մէկէն մինչև երկու մէթր բարձրութեամբ։ Սյս առաջին եկեղեցին է, որ քառասուն տարի առաջ սարահարթին աւերակները մաքրուած ժամանակ երևան ելած է, և de Vogüé կարողացած է ուսումնասիրել. «Թաբորի վրայ դիզուած աւերակներուն մէջ, կը գրէ ան, երկու եկեղեցիներուն աւերակները կ'որոշուին. անոնցմէ մին չատ հին է և միւսն Խաչակրաց ժամանակ չինուած։ Առաջինը ունի մոզայիքներով յատակ մը, եւ կը կրէ Դ. և Ե. դարերու եկեղեցիներու նկարագիրը. ըստ իմ կարծեաց, չեմ վարանիր ըսելու՝ Թէ ան Ս. Երկրի եկեղեցիներուն հնագոյններէն մին է»։ Այս եկեղեցիին արևմտեան դիմացը կը գտնուի փոքր վանք մը՝ որուն աւերակները Խաչակիրներէն առաջի հին են։ Այս վանքին դուռը կը բացուէր եկեղեցիին մէջ, հարաւային կողմէն։ Ինչպէս յայտնի կ'երևի, սոյն դուռը նորոգուած է Խաչակրաց ժամանակ։ Այս եկեղեցին դուրս, ըստ Նիկոփոր Կալիքստի, Հեղինէ Թագուհին ի պատիւ Ս.յլակերպութեան չինած է հոյակապ եկեղեցի մը, ինչպէս նաև Թաբոր լեռը երևնելու համար չորս հազար երեք հարիւր քառասուն երեք աստիճաններով սանդուղ մը։ Դէպի արևելք, քիչ մը հեռի, գտնուած են աւերակները երեք նաւով (nef) եկեղեցիի մը՝ որուն երկու կողմերը կան մէյմէկ մատուռներ։ Բացայայտ ապացոյցներ կան Թէ սոյն աւերակներու քանի մը մասերը աւելի առաջ են քան լատին յիշատակարանները, և ստուգիւ Զ. դարու հնութիւն ունին։ Այս եկեղեցին ի հարկէ պէտք էր ունենար իր նախագաւիթը, որ Զ. դարուն հաւանաբար գաւիթի վերածուած է. ի հարկէ այժմ ոևէ հետք մը չի տեսնուիր, բայց ապացոյց մը մնացած է։ Եկեղեցիին հարաւային կողմը, գաւթին համապատասխանող տեղէն դուրս, կը գտնուին մնացորդները քառակուսի մկրատարանի մը՝ որ ներսի կողմէն չորս մէթր է։ Ցատակը կազմուած է երկչրջանակեայ գեղեցիկ մոզայիքով մը, և ունի կոր գիծերով մէկտեղ սպիտակ, կարմիր և սև խորանարդներ։ Կեդրոնը կը գտնուի մէկ մէթր տրամագիծով առանց մոզայիքի չրջանակ մը, որ մկրատարանին տաշտին տեղն է։ Արդ, հնախօսութիւնը մեզ կը սորվեցնէ՝ Թէ եկեղեցիին առաջին վեց դարերուն, մայր եկեղեցիներուն մկրատարանի մատուռը միշտ կը գտնուէր հարաւի կողմը, մերձավայրքի մը մէջ, նախագաւիթէն դուրս և գաւիթէն դուրս։ Մասնաւոր խնամքով մը պահուած է այս աւազանը, նոյնպէս Մովսէսի և Եղիայի եկեղեցիները, ինչպէս կը

գրեն Է. Ր. դարերու մատենագիրները: Գլխաւոր եկեղեցին առ-ջևը կը տեսնուի աւերակները երկու փոքր եկեղեցիներուն, ո-րոնց մին աջ կողմը՝ նուիրուած է Մովսէսի, միւսը ձախին՝ Եղի-այի: Այս երկու մատուռները չինուած են միևնոյն ժամանակ և գլխաւոր եկեղեցին յատակագիծով: Գլխաւոր եկեղեցին ա-ւերակներուն մէջ գտնուած են սպիտակ մարմարէ խոյակներ, ամէնքն ալ միևնոյն ճարտար ձեռքով քանդակուած: Այս խո-յակներէն մին չատ լաւ պահպանուած է, և կորնթական է, թէ-պէտև յետին ժամանակի գործ, և Բեթղեհէմի եկեղեցիին խո-յակներուն նման: Հնախօսները կարծիք կը յայտնեն թէ Մեծն Կոստանդիանոսի ժամանակի հնութիւն կրնայ ըլլալ:

Սարահարթին արևմտեան կողմը Ցոյները մատուռի վերա-ծած են այր մը՝ որ Ժ. դարուն նշանաւոր եղած է: Թէ՛ Դա-նիէլ վանականին եւ թէ յոյն կրօնաւոր Փոկասի եւ ուրիշ ուխ-տաւորներու Ցոյնք ցոյց տուած են զայն՝ իբր բնակարան Մել-քիսեդեկ Թագաւորին: Ոմանք կը կարծեն թէ Մելքիսեդեկ Աբ-րահամու հանդիպեցաւ Թաբորի ստորոտը, կամ այն լեռնէն եր-կու մղոն հեռի, դէպ ի Հերմոն: Բայց անոր բնակութեան մա-սին պատմուածք մը չկայ: Թաբորի վրայ գտնուած են յունա-կան և արաբական արձանագրութիւններ(*). վերջիններս կը խօ-սին տեղւոյն ամրութեանց չինութեան մասին:

P. Barnabé իր le Mont Thabor, Notices historiques et descriptives խորագրով մենագրութեան մէջ, ինչպէս Թաբորի սրբավայրե-րուն աւերակաց, նոյնպէս տեղւոյն բերդին, աղօրիքին, գերեզ-մանատան այրերու, Թաբորի վրայ գտնուած արձանագրութիւն-ներու, հողէ ամանէ չինուած արաբական ձեռակերտ ռումբերու և այլ հնութեանց վրայ կու տայ մանրամասն տեղեկութիւններ, որոնցմէ մենք ալ օգտուած ենք:

Գ.— Հայաստանեայց եկեղեցին չատ կանուխէն ըմբռնած է թէ Թաբորն է Քրիստոսի Այլակերպութեան լեռը. այդ պատ-ճառով իր չարականներուն, տաղերուն եւ երգերուն մէջ պան-ծացուցած է նոյն լեռը: Այլակերպութեան կամ Վարդավառի

(*) Արաբական արձանագրութիւնները ու ընդօրինակութիւնները լուսանկարներով և բացատրութիւններով տեսնել P. Henri Lammens ի 1909ին հրատարակած Inscriptions Arabs du Mont Thabor տետրակին մէջ:

մասին ճառեր և աղօթքներ ունին Յուստոս եպս. Երուսաղէմի, Բարսեղ Կեսարացի՝ որուն աղօթքը կը կարդացուի Վարդավառի երեկոյին, Յովհ. Ոսկեբերան իր Մատթէի մեկնութեան մէջ, Մովսէս Խորենացի, Զաքարիա կաթողիկոս և այլք, որոնք կը փա-ռաբանեն Թաբորը: Մեր մատենագրութեան մէջ վերև յիշուած-ներէն դուրս՝ կը գտնուի նաև ուրիշ ճառ մը՝ «Մրգապհրի Տեառն Եղիշէի էահապետի եւ ձգնաւոր կրօնաւորի եւ միայնակեցի ի Թաբոր լերին յայտնութիւն Տեառն առ Պետրոսեանց եւ ի վեծի աւուր Վար-դավառի» մակագրութեամբ: Եղիշէ քահանան հաւանաբար Վար-դանանց պատերազմին պատմիչը ըլլայ, վասն զի Արծրունի Թով-մայ վարդապետն ալ իր Պատմութեան մէջ (էջ 27) նոյն անունով կը յիշէ զանի: Եղիշէ քահանայ նշանաւոր մենակեաց մ'էր, որ պետի փափաքէր ուխտի գալ Քրիստոսի Տնօրինական Ս. Տեղե-րը, և ինչպէս կը գրէ ճառին մէջ, ուրիշ համակրօն եղբայրնե-րու հետ հետուտն Թաբոր լեռը ելած ու աննման գրիչով մը նկարագրած է՝ ինչ որ տեսած է նոյն լերան վրայ: Ճառին վեր-ջին հատուածին մէջ կարճ տեղագրական մաս մը կը խօսի լերան սրբավայրերու, կրօնաւորներուն կենցաղին և պաշտամունքի մա-սին. կը յիշէ որ իր ընկերակիցներէն ոմանք փափաքած են հոն մնալ և հետևիլ անապատականութեան: Եղիշէ քահանային այ-ցելութիւնը կը պատահի Թուականի մը՝ երբ լերան կրօնաւորա-կան կեանքը և եկեղեցիներուն պայծառութիւնը հասած էր իր գեղիթին: Իր տաղերէն կը հասկցուի թէ եկեղեցիները, զոր կը յիշէ յանուանէ, կը պատկանէին ընդհանուր քրիստոնէութեան, և իւրաքանչիւր համայնք ունէր իր ուրոյն վանքը և հիւրանոցը: Ընդհանուր եկեղեցիներէն զատ կային նաև մասնաւոր եկեղեցի-ներ: Եղիշէ քահանային ճառին վերջին հատուածը թանկարժէք յիշատակարան մ'է, որուն մէջ՝ եթէ ո՛չ յանուանէ, բայց պար-զօրէն կը հասկցուի գոյութիւնը հայ վանքերու և եկեղեցիներու: Նոյն հատուածին խիստ կարևոր մասերը աչխարհաբարի վերա-ծելով կը դնեմ հոս, իրենց չահեկանութեան համար:

« . . . Մենք անձամբ գալով մեր աչքովը տեսանք, ոչ թէ առանձին՝ այլ շատ ընկերակիցներով, որոնցմէ ոմանք փափաքե-ցան հոն մնալ ի սէր Քրիստոսի, վասն զի հոն կար բազմութիւն մը աքանչելի եղբայրներու, որոնք աւելի հոգիով կ'ապրին քան թէ մարմնով: . . . Թաբորը Գալիլիոյ ընդարձակ դաշտին մէջ

բարձրացած է. ան չատ բարձր է և բոլորանիստ, և իր չուրջը կը գտնուին ջրհորներ և ծառաստաններ, որ կը բերեն քաղցրահամ պտուղներ. կային այգիներ, որոնցմէ կը չինեն թագաւորական դինի, ձիթենիներ եւ եղջիւրենիներ: Լերան գագաթէն բոլոր դաշտը առհասարակ յայտնի կ'երեւի. արեւելքի կողմէն՝ Ծորդանան, արեւմուտքէն՝ Միջերկրական աշխարհին ծովը, հիւսիսէն՝ Տիբերիոյ ծովը, հարաւէն՝ Նաբովթի այգին. բոլոր երեւցած տեղերուն մէջ կը գտնուէին գիւղեր, ագարակներ եւ քաղաքներ: . . . Լերան արեւելեան կողմը՝ ուր Քրիստոս այլակերպեցաւ, Պետրոսի խօսքին համաձայն, իրարմէ հեռու երեք եկեղեցիներ չինուած են, և անոնք ունին չատ պաշտօնեաներ. առաքինիներ են՝ որոնք մարմնոյ կարօտութեան համար չէ որ կ'աշխատին, վասն զի անոնք մէկէ մը չեն ստացած ոսկի կամ արծաթ կամ հանդերձ: . . . Անոնցմէ իւրաքանչիւրը երկմատնի փայտատով մը հողը կը խարխարէ և անոր մէջ կը սերմանէ ցորեն, գարի և ուրիշ սերմեր մարդոց ապրուստին համար. հասկերը երբ հասունանան, ոտքերով կը չփեն, և չեղջերուն արդիւնքը հոսելով՝ հովին կու տան եւ տպա կը չտեմարանեն. իրենք՝ որ ցորենը երկանով կ'աղան, եւ մեծ տաժանքով կը պատրաստեն ամէն օրուան կերակրիկը, լոկ հաց եւ ջուրը աղով կը համեմեն և ատոր խորտիկ անուշը կու տան: Ձմեռ ատեն լերան ձիւը (բանջար մը) կը քաղեն եւ ազով, ջրով եւ զոպայով կը թթուեցնեն և, ինչպէս իրենք կ'ըսեն, տաք օրերուն չատ օգտակար ըմպելի մ'է: . . . Իւղը կերակուրի համար չեն գործածեր, այլ երեք եկեղեցիներուն մէջ մշտապէս վառուող կանթեղներուն համար: Իրենց սափորին գինին միայն տէրունական բաժակին կը գործածեն: . . . Հանապազ չեն ճաշակեր, այլ ի բնէ առաւորութիւն ունին՝ ամառ ատեն հանգչիլ և երեկոները միայն ճաշել, իսկ ձմեռները չաբթուան կէսօրերուն: Իսկ անոնք որ աւելի տոկուն են՝ ամբողջ չաբթուան մէջ չեն ճաշակեր: Եթէ հեռի տեղերէ մէկը նոյն եղբայրներուն մօտ երթայ՝ անոնք առաւորականը զանց կ'ընեն: Հոգևոր կերակուրին համար չատ ըզգոյշ են, և չեն ուզեր դադրիլ ճաշակելէ. թէպէտև ամէն ատեն անյագութեամբ կ'ուտեն, բայց աւելի կ'անօթենան և ծարաւ կ'ըզգան: Ոչ միայն հարիւր յիսուն սաղմոսները ձայնով կը կարզան, այլ նաև եկեղեցւոյ բովանդակ սուրբ կտակարանները, և

փառաւոր և բարձր ձայներով լերան սուրբ եկեղեցիները կը չքեղացնեն: Աբեղաները երեք եկեղեցիներու կը բաժնուին և անդադար փոխն ի փոխ կը կատարեն ցերեկուան և գիչերուան պաշտամանց կարգը. իսկ երեկոյեան և առաւօտեան ժամերգութիւնը կը կատարեն միաբանութեամբ: Երեք եկեղեցիներէն մին մեծ է միւս երկուքէն, և Տէրունեան կը կոչուի. երկու փոքր եկեղեցիներուն մէջ պահուած են նչխարները ա՛յն առաքելոց՝ որ հիմնարկեցին այն օրը՝ երբ խօսեցան երեք տաղաւարներու մասին, և զանոնք կ'անուանեն սուրբ վկայարաններ և կը յիչատակեն Մովսէսի և Եղիայի: Կիւրակէ օրուան աղօթքը կը կատարեն մեծ եկեղեցիին մէջ և փառաբանութեան համար կը յաճախեն նաև միւս երկու եկեղեցիները: Ամէնքն ալ մաչկազգեաց են, ձեռնակերտիկ արուեստ ալ գիտեն. մէկը կը չինէ սփիւրիդ (կողով), ուրիշներ՝ սապատ, և ինչ որ պէտք է: Իրենց չինածն ու չահածը մչտավառ կանթեղներու լուսավառութեան համար կը գործածեն, ինչպէս նաև իրենց հագած ոչխարի կաշւէ չինուած հանդերձներուն համար. նոյնպէս իրենց վաստակովը կը հայթայթեն հողաբիր գործիքները: Շատ սիրով կ'օգնեն իրարու և կը հոգան զանոնք մանաւանդ՝ որ իրը պանդուխտ կը մնան հոն: Բարոյապէս տկարներուն մօտ չուտով կը հասնին, և կը խրատեն, և կը փարատեն անոնց վիչտը ու կը հասկցնեն թէ որտեղ, և կը փարատեն անոնց վիչտը ու կը հասկցնեն թէ որ վայրի պարարումը բազմագլուխ գազան մ'է, որմէ պէտք է ըզգուչանալ, որպէս զի նոյն լերան վրայ երկրաւոր բարձրութենէն դէպի երկնաւոր բարձրութիւն, այսինքն Տիրոջը մօտ կարենան հասնիլ, ինչպէս Մովսէսը և Եղիան նոյն լերան վրայ Տիրոջը առջև փառօք երեցան. . .»:

Այս տողերը կատարեալ պատկերացումն են Թաբորի վանականներուն կեանքին, որ առաւելապէս զարգացած էր Ե. և Զ. դարերուն, լատինական կամ խաչակրական դարերէն չատ յառաջ:

Անաստաս վրդ. ի վանօրէից ծուցակին ներածական մասին մէջ կը գտնենք հետևեալ տողերը. «Արդ, բազումք յԵգիպտոս և յԱղեքսանդրիա և Թեպայիտ և ի լեառն Սինէական կային մենաստանք Հայոց, նաև ի սուրբ չեառն Թաբոր, և ի յեզր ծովուն Տիբերիա և յայլ սահմանս Պաղեստինոյ, զոր յորում իմովիմ իսկ աչօք տեսեալ. զանս բազումս կայի՝ ընդ յաշխարհին յայնմիկ և ամենայն

աստուածաչունչ և հոգեպատում պատուիրանք անպակաս գոյր ի հայկեան լեզուս յաւիտեանս վեհասաւանս Երուսաղեմի եւ որ նովաւ շուրջ զԵրուսաղիմաւ»: Ցիշեալը իր նոյն ներածութեան մէջ կ'աւելցնէ նաև թէ քաղկեդոնական խնդրոց պատճառաւ երբ հայ վանականք ցրուեցան ու Հայոց վանքերէն չատերը գրաւուեցան, մաս մը վանականներ գացին Զիթենեաց լեռը, Բեթղեհէմ, Յորդանանի եզերքը, Փորձութեան լեռը, Փրկչի անապատը, Թաբորական լեռը և Հերմոն՝ որ կը գտնուէր հանդէպ Թաբորի, և այլն: Պարզ է թէ սոյն դարուն վերոյիշեալ տեղերուն մէջ արդէն հաստատուած էին հայկական վանքեր և երուսաղէմէն մեկնողները գնացին հոն ապաստանելու:

Տ. Հ. Թ. Սաւալանեանց իր Պատմ. Երուսաղեմի գիրքին մէջ (Ա. Հատ. էջ 247) կը գրէ թէ Զ. դարէն սկսեալ Պաղեստինի և շրջակայից մէջ Հայոց վանքերը անչքացած կամ գրաւուած էին, բայց մինչև տասն և հինգերորդ դար հայկական մենաստաններ կը գտնուէին Եգիպտոսի, Սինայի և Թաբոր լեռներու վրայ եւ այլուր: Ասոնց մասին մեր վարդապետներէն մին իր յիշատակարանին մէջ կը գրէ որ 1520 թուականին՝ այցելած էր այդ վանքերուն: Սաւալանեանց ո՛չ յիշատակարանը կը յիշէ և ոչ ալ այցելու վարդապետին անունը կուտայ. հաւանական է որ ինքը տեսած ըլլայ այդպիսի յիշատակարան մը. բայց տասնեւհինգերորդ դարուն արդէն Թաբորի վանքերը աւերակաց կոյտ մը դարձած էին, ինչպէս նաև իր յիշած միւս վանքերը: 1520ին այցելու վարդապետը աւերակները միայն տեսած կրնայ ըլլալ և հին վանքերուն ու եկեղեցիներուն տեղերը:

Հարիւր տարի վերջ, Երիզոր վրդ. Դարանաղցի իր Ժամանակագրութեան մէջ (էջ 536–540) կը գրէ թէ 1626ին Ս. Յակոբեայ մենակեացներէն մին (իր բառով ապցաղ) Երիզոր պատրիարք Պաղեստէրին կողմէ նուիրակութեան կը ղրկուի Հալէպ ու այդ առթիւ մենակեացը, ինչպէս սովորութիւն ունէր, ուխտի կ'երթայ Թաբոր լեռը, ուր կը տեսնէ միայն տաճկահաւատ և սեաղէմ պարսիկ մը՝ որ տարիէ մը ի վեր հոն կը մնար: Կը թուի թէ մենակեացը գիրքի տէր մէկն էր, ու կը խօսէր տաճիկ, ֆրանք, քանանացի լեզուներն, ինչպէս նաև պարսկերէն: Մենակեացը տեսակցութենէ յետոյ իր յորդորներով քրիստոնեայ դարձուց պարսիկը ու Երիստոսի Աչլակերպութեան խորհուրդը անոր բացատրած ժամանակ ցոյց տուաւ Երիստոսի, Մովսէսի, եղիայի և Առաքելոց կեցած տեղերը, «որ են հրաշազան եկեղեցիք եւ եկեղեցեկիք»: Մենակեացի մեկնելէն վերջ, նորահաւատ պարսիկը չրջակայ գիւղերու մէջ քրիստոնէական քարոզութիւն ըրած ժամանակ կը նահատակուի: Մենակեացին բացատրութեան նայելով՝ Թաբոր լերան վրայ տակաւին չատ անխախտ տուներ կային, թերևս քանի մը եկեղեցիներ ալ. բայց Դարանաղցին իր չինած եկեղեցիներուն չատերը կործանուած էին:

Վերագոյն բոլոր տողերուն մէջ տեսանք արդիւնքը հաւատքին այն քաջահաւատ անձերուն որ Երիստոսի Աչլակերպութեան փառքին համար Թաբորի վրայ բարձրացուցին ամենէն հոյակապ յիշատակարանները՝ զոր քանդեց թշնամիին ձեռքը. և հոն դարերէ ի վեր սրբավայրերու աւերակները չեղջակուտուած են և ամայութիւն կը տիրէ: Բայց մենք առանց Թաբոր բարձրանալու և աւերակները տեսնելու կրնանք զմայլիլ դարեր յառաջ հոն ապրող կրօնաւորներուն կեանքին, և անոնց նման կրկնել սրբազան քերթողին սա սրտառուչ երգը.

«Հանբարձցեա զմեզ, Տէր, առաւել քան զգայի զԹաբորական զլեառն, յերկինսաբերս եւ յիսանայի խորանսդ»:

ԼԴ

Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ ԵՐԻՔՈՎԻ ՄԷՋ

(Կրտի վանքը)

1.— Վերնագրիս կրտի բառը սեռականն է կուրս բառին՝ զոր կը գործածեն Ոսկեբերանի եասչեայ մեկնութեան հայ Թարգմանիչը, Մխիթար գօշ՝ իր Դատաստանագիրքին մէջ, Ոսկեփորիկ, Վարդան Պատմիչ, Ուռհայեցի և Սանահնեցի: Կուրտ կը նշանակէ ներքինի. թէ ինչու համար երիքովի այդ վանքը կրտի կը կոչուի, ստորև պիտի բացատրենք:

Կրաի վանքին ծագումը բացատրող երկու աղբիւրներ ունինք։

Ա.— Կիւրեղ Սկիւրուպողսեցիին Եւթիմիոսի և Մար-Սաբայի կենսագրութիւնը, որուն մէջ յիշեալը հետևեալ կերպով կը գրէ Կրաի վանքին ծագման պատմութիւնը։ Երուսաղէմի Մարտիրոս պատրիարքին ընկերն ու յաջորդն էր եղիա՝ որ առանձնացաւ Ցորդանանի դաշտը, Երիքովի առջև։ Ան չինեց հոն խցիկներ՝ ուր իսկոյն հաւաքուեցան աշակերտներ։ Վերջնոցս համար եղիա չինեց կրկին վանքեր՝ վանահօր մը հսկողութեան տակ։ Եղիա՝ իր կենդանութեան՝ երբեք չներից որ իր հաստատած կրկնակ վանքը բաժնուի։ Ան իր մահուան ժամանակ նոյն իսկ կտակեց որ չբաժնեն զայն. բայց չյարգուեցաւ անոր կտակը։ Եղիայի վանքերուն աւերակները կը ճանչցուին Բուռմ ել Լէվրաֆիր անուններով որ կը գտնուին Երիքովի հարաւային արևելքը։ Նոյն աւերակները կը պարունակեն ճոխ չինուածանիւթեր՝ որ գործածուած են Երիքովի արդի չինութեանց, ու անոնց ամենէն գեղեցիկ քարերը մտած են Երիքովի ռուսական նորակերտ հիւրանոցին մէջ։

Կարելի չէ հաւատալ թէ Եւթիմիոսի աշակերտը՝ եղիա պատրիարք՝ նախանձախնդիր կրօնական աղքատութեան՝ այնքան ճոխութիւններ տուած ըլլայ իւրակերտ վանքին. հաւանական է որ կրկնակ վանքերուն վանահայրերէն առաւելապէս իր կամքը չյարգող վանահայրն եղած պիտի ըլլայ վանքը նորանոր ճոխութիւններով օժտողը։ Այժմ գանք Մար-Սաբայի կենսագիր Սկիւթուպոլսեցի պատմագրին խօսքերուն. «Ցուլիանիա պատրիկին մահուանէն յետոյ իր ներքինիները Երուսաղէմ եկան։ Եւ որովհետև անոնք Պոլսի մէջ տեսակցած էին Մար-Սաբայի հետ, գըտնացին գտան զինքը իր վանքին մէջ։ Անոնք չատ դրամ ունէին, ազաչեցին Սաբայի ընդունիլ զիրենք իր վանքին մէջ։ Ծերունին մերժեց ընդունիլ զանոնք ինչ ինչ զգուշութիւններու համար, բայց որովհետև ծանօթ էր անոնց՝ քաղցր խօսքերով ղրկեց զանոնք առ որ անկ է։ Ներքինիները ըստ բաւականին ծանօթ ըլլալով վանական կեանքի՝ դիմեցին Երուսաղէմի պատրիարք Պետրոս արքեպիսկոպոսին (524–544) խնդրելով անորմէ որպէս զի իրենց յարմար տեղ մը փութայ յատկացնել։ Արքեպիսկոպոսը յանձնարարեց Երիքովի մօտ գտնուած եղիայի վանքերուն վանահօր Աղեքսանդր անուն մէկու մը՝ յաջորդն Նէսդապոսի և Զաքարիայի՝ որպէս զի մէկ քանի օրուան համար այս ներքի-

նիները ընդունի իր վանքին մէջ։ Աղեքսանդր տեղի տալով ազնուութեան կամ սին փառքերու՝ հակառակ եղիա արքեպիսկոպոսին հրամանին՝ բաժնեց վանքերը։ Այն ատենէն սկսեալ բաժնուած վանքը կրտի վանք կոչուեցաւ» (Տե՛ս Raymond Génier ի Vie de Saint Euthyme le Grand, էջ 35–36)։ Հաւանաբար այս վանքին անունը եղիա պատրիարքին օրէն սկսեալ Ս. Ստեփանոս կը կոչուէր։ Լատին յիշատակարանը՝ Commemoratorium de Casis Dei անուամբ, թերևս այս վանքն է որ կը յիշատակէ ըսելով՝ «Ս. Ստեփանոսի վանքը Երիքովի մօտ (Եղիայէն?) չինուած» (Տե՛ս Itinera A. Descriptiones. Հտր. Ս. էջ 303. Revue de l'Orient Chrétien, 1899, էջ 530)։

Բ.— Յովհաննիս Մոսխոսի (Mosch) Մարգ Հոգևոր (Pré Spirituel) գիրքը։ Կ'արժէ հոս տեղեկութիւն մը տալ հեղինակին և անոր գիրքին մասին։ Յովհաննէս Մոսքոս ծնած է Դամասկոս, Ջ. դարու կիսուն. ան Ս. Թէոդոսի վանքին վանականներէն էր, բայց յետոյ մեկնեցաւ Փառան, Երուսաղէմի մօտ, ուր մնաց տասը տարի, 567–578։ Մոսքոս ձեռնարկեց մեծ ճամբորդութեան մը, դէպի Եգիպտոս, Թեպայիտի և Սինայի վանքերը, և վերջնոյս մէջ մնաց տասը տարի Յովհաննէս պատրիարքի օրով (575–593)։ Ցիչեալը դարձեալ ճամբորդեց Պաղեստինի բոլոր վանքերը և ուսումնասիրութիւններ կատարեց։ Մօրիկի սպանութեան և Պարսից արշաւանքին հաւանականութեան պատճառաւ 603ին վերջնական նապէս թողուց Ս. Երկիրը, այցելեց Անտիոքը և Կիլիկիան ու մեկնեցաւ Եգիպտոս։ 615ին երբ պարսիկները Ս. Երկիրը արշաւելէ յետոյ, Եգիպտոսի վրայ պիտի յարձակէին՝ Հռոմի մեկնեցաւ և հոն լրացուց իր գիրքը՝ Մարգ Հոգևոր կոչուած՝ զոր իր մահէն առաջ յանձնեց իր աշակերտին և բարեկամին Սոփրոնիոսի։ Վախճանեցաւ կամ 619ին և կամ 634ին, և Սոփրոնիոս իր ուսուցչին ոսկերոտիքը փոխադրեց Երուսաղէմի մօտ Ս. Թէոդոսի վանքի գերեզմանատունը։

Մոսքոսի գիրքը Migne ի Հայրախօսութեան մէջ հրատարակուած է յունարէն և լատիներէն, Pratum Spirituale խորագրով, զոր հայերէն անուանեցինք Մարգ Հոգևոր։ Ունի 219 գլուխներ, որոնց մէջ կը յիշուին իր անձնական յիշատակները և իր երիտասարդութեան յուշերը։ Ոճը յանկուցիչ է և յստակ, պատմուածքները ժողովրդականացնելու գաղտնիքը ունի. չատ մըշ-

գրտօրէն կը պատկերացնէ իր ժամանակի վանական կեանքը. պարսկական և արաբական արշաւանքներէն յառաջ Պաղեստինի բազմաթիւ վանքերուն պատկերը կու տայ մեզի տեղեկագրական մանրամասն պարագաներով. յայտնի է թէ քանիցս այցելած է այդ վանքերը: Կրտի վանքի մասին տեղեկութիւններ կու տայ իր Մարգ Հոգևոր գիրքին ԺԹ. ՃԼԵ. ՃԼԶ. ՃԼՀ. ՃԿԵ. գլուխներուն մէջ(*). կը գրէ թէ Կրտի վանքը կը գտնուի Երիքովի մէջ, Յորդանանի մօտիկ. կը յիշատակէ նոյն վանքին վանահայրերէն Եղիա՝ որ իբր թէ Երուսաղէմի Մակար արքեպիսկոպոսին հետ յարաբերութիւն չընելու համար քաշուած է այս վանքը. Նիկողայոսը՝ որ երբեմն ալ Կիլիկիոյ կուսակրօններէն միոյն մեծաւորն եղած է. Յովհաննիսը՝ որուն առակաւոր պատմութիւնները և կեանքին հետաքրքրական դրուագները կու տայ: Կ'երևի որ թէ՛ Կրտի վանքի և թէ ուրիշ վանքերու մասին իր գրածները զանազան ժամանակի իր այցելութեանց ծանօթագրութիւններն են. այդ պատճառաւ իր գիրքին մէջ չէ պահուած դէպքերու և դէմքերու ժամանակագրական կարգը. բայց պէտք է խոստովանիլ թէ իր դարու վանքերու տեղագրութեան համար կարևոր գիտելեաց ծաղկաստան մ'է, ըստ իր յորջորջման:

2.— Կրտի վանքին ծագման պատմական ճշդումները պարզելէ յետոյ հարկ է անոր հայեցի հանգամանքն ալ ճշդել. և որպէս զի մեր ձեռքը գտնուած համառօտ յիշատակարանին ոյժը և ճշգրտութիւնը կարենանք արժեցնել, պէտք է որ Կրտի վանքին գնման և վաճառման դարուն Երուսաղէմի եկեղեցիին դաւանական վիճակը և չեղումները փութանք պարզել:

Ծանօթ է եկեղեցական պատմութենէն թէ Քաղկեդոնի ժողովը չեղելով երեք Տիեզերական ժողովներու դաւանական ըսկզբունքներէն՝ պատճառ դարձաւ կարգ մը հերձուածներու և եկեղեցեաց պառակտումին: Երկաբնակութեան խլրտումներէն Ա. ըևելքի քրիստոնեաները դժգոհ մնացին: Մարկիանոսի գինու զօրութեամբ Երուսաղէմի եկեղեցիին հանդէպ կատարած ոչ-կանո-

(*) Մեր «Վարք Հարանց»ի հայ թարգմանիչը քանի մը կտորներ առած և թարգմանած է Մոաբոսի գիրքէն. ատոնք յիշուած երկուքը կը յիշատակէ Ներիլեաց վանքին հետ (Վարք Հարանց, Հատ. Ա. էջ 610, ր. 391):

նական ձեռնարկները վտանգ մը նկատուեցան: Եգիպտոս, Սիւրիա, Միջագետք և Հայաստան չարունակեցին իրենց կիւբեղեան բանաձևի համաձայն միաբնակ դաւանանքի վաղնջական սկզբունքներուն մէջ. սակայն բիւզանդական պետութեան յարատեւութեան համար վտանգ մը կը նկատուէր նոյն երկիրներէն դաւանական տեսակէտով անջատ մնալը: Ուստի բիւզանդական ինքնակալներէն մանաւանդ Զենոն (474–491) և Անաստաս (491–518) կայսրերը պետութեան բարոյական միութիւնը և ոյժը պահպանելու համար հրովարտակներով հաստատեցին Տիեզերական ժողովներու հաւատքը և միաբնակ դաւանութիւնը: Առաջնոյն Հենետիկոնը (482) և երկրորդին անոր հետևողութեամբ հրատարակած հրովարտակը սիրով ընդունեցան Արևելքի եկեղեցիները, մասնաւորապէս Հայ եկեղեցիէն: Հենետիկոնը և Անաստաս կայսեր դաւանական պաչտօնագիրը չատ կանուխէն հայերէնի թարգմանուած են, և կը գտնուին մասամբ «Փիրք Թղթոց»ին և ամբողջութեամբ «Կնիք հաւատոյ» կոչուած հաւաքածոներու մէջ:

Երուսաղէմի եկեղեցին ալ մինչև Քաղկեդոնի ժողովը Հայ եկեղեցւոյ նման դաւանանք մ'ունէր. ուղղափառ միաբնակ էր: Յոբնաղ նենգութեամբ անցաւ հակառակ կողմը, և Մարկիանոսի քաղաքական դիտաւորութիւններուն ծառայելով՝ ուղղափառութեան հակառակ չարժեցաւ, ոտնակոխ ընելով Տիեզերական ժողովներու դաւանական սկզբունքները և Երուսաղէմի մէջ պատճառ դարձաւ ծանր արիւնահեղութիւններու և անկարգութեանց: Երուսաղէմի կղերն ու վանականութիւնը մեծ մասամբ միաբնակ էին: Յոբնաղի յաջորդները, սակայն, չմնացին քաղկեդոնականութեան մէջ: Թեոդորոս, Անաստաս, Մարտիրոս, Սալուստիոս, Եղիա, Յովհաննիս և Պետրոս մինչև 518, Երուսաղէմի եկեղեցիին պատրիարքական Աթոռը կը գրաւէին: Ի ձեռին ունինք 1899ին հրատարակուած ասորերէն անանուն ժամանակագրութեան մը անգլ. թարգմանութիւնը՝ The Syriac Chronicle known as that of Zachariah of Mitylene խորագրով, քաղկեդոնական վէճերու ժամանակ գրի առնուած և անոնց վերաբերեալ կարևոր թուղթերու բովանդակութեամբ: Նոյն գիրքը գլխաւորապէս կը ցոլացնէ Երուսաղէմի եկեղեցւոյն հաւատքը և Յոբնաղի յաջորդէն մինչև 518 գահակալող եպիսկոպոսներուն դաւանութիւնը: Առհասարակ անոնք, բացի եղիայէն՝ որ աքսորուած է, և Յովհաննէսէն՝ որ

ուխտադրուժ մը եղած է, ամէնքն ալ դաւանութեամբ զուտ միաբնակներ են: Նոյն իսկ ըստ նոյն ժամանակագրութեան, Մարտիրոս պատրիարք միաբնակութիւնը ջատագովող յայտարարութիւն մը ունի, ինչպէս նաև թուղթ մը՝ Աղեքսանդրիոյ Պետրոս պատրիարքին: Երուսաղէմի մէջ միաբնակութեան դէմ հալածանքը կը սկսի Յուստինոս կայսեր օրով (518–521), որուն գործադրողը կ'ըլլայ կայսեր օգնականը Յուստինիանոս, Յովհաննէս պատրիարքի ձեռքով: Այդ ժամանակին էր որ մեծ տագնապ յառաջ եկաւ Երուսաղէմի հայ վանականներուն մէջ, ինչպէս յայտնի կ'ըլլայ մասնաւորապէս նոյն Յովհաննէս պատրիարքին Աղուանից Աբաս կաթողիկոսին գրած նամակէն, որուն հայերէն թարգմանութիւնը հրատարակուած է 1896ին Վաղարշապատի մէջ: Յուստինոսի յաջորդը՝ Յուստինիանոս իր արևմտեան քաղաքականութեանը համար ա'լ աւելի յառաջ տարաւ հալածանքը Երուսաղէմի մէջ և շարունակուեցաւ ան մինչև Սրաբաց արշաւանքը:

Գրեցինք այս տողերը հասկցնելու համար թէ ներքինիները Երուսաղէմ այցելեցին Անաստաս կայսեր օրով: Անոնք Զենոնէն սկսեալ միաբնակ դաւանանք ունէին, և կը դիմէին Երուսաղէմի եկեղեցիին որ նոյն ժամանակ գլխովին միաբնակ էր, ինչպէս ցոյց կու տայ ասորի ժամանակագրութիւնը: Ուրեմն պարզապէս կը հասկցուի թէ Եղիայի երկու վանքերէն մին գնող բիւզանդական արքունիքէն եկած ներքինիները միաբնակ էին և թէ անոնք քաջալերութիւն և պաշտպանութիւն կը սպասէին Երուսաղէմի եկեղեցիէն, որ տակաւին չէր արձակած մոլեռանդութեան և դրժումի չանթերը ընդդէմ Հայ եկեղեցւոյ և այլ միաբնակ արևելեան եկեղեցիներուն:

3.— Վերև յիշատակուած ասորերէն ժամանակագրութենէն կը հասկնանք նաև որ Պետրոս վրացիին վանքին հիմնադրութեան օգնողը ներքինի մ'էր, Յովհաննէս անուն, որ միևնոյն ժամանակ անոր կնքահայրն էր: Նոյնպէս Զաքարիա հեռաւորի մեկենասը՝ Եւպրաքսիոս ներքինի մ'էր և կայսեր սենեկապան: այս երկուքն ալ դաւանութեամբ միաբնակ էին: Հանգիստութեան կանոնով կը տարուինք մտածել թէ «բարեպաշտ և ուղղափառ թագաւորաց» որով բիւզանդական պալատին այն ներքինիները որոնք Երուսաղէմ եկան և Զ. դարու սկիզբները Եղիայի վանքերէն միոյն տիրացան, հաւատքով միաբնակ էին և դաւանակից Հայոց: Elousaի մօտ միաբնակեաց (555–558) վանական Պօղոս Հելլատիկոսի (Paul Helladique) նամակին մէկ հատուածը ցոյց կու տայ այս ներքինիներուն պետը որ կը կոչուէր Եւտրոպէ (Eutrope): Այս անձն էր որ գնեց Եղիա պատրիարքին երկրորդ վանքը և հոն հաստատուեցաւ իր ընկերներով և երիքովի շուրջը գտնուող իրեն յատկացած մարդերով (Տե'ս Société Russe de Palestine, 1891, էջ 25, Revue de l'Orient Chrétien, 1899, էջ 533): Կրտի վանքը ուրեմն իր ծագումով միաբնակներու կը վերաբերէր. այնպէս որ սեպհականատէր ներքինիներու մահէն յետոյ կը ժառանգէին զայն մեռնողներուն դաւանակիցները, այսինքն Հայերը: Հայ Երուսաղէմի վանքերուն ցուցակը կազմող Անաստաս վարդապետ երիքովի Կրտի վանքը Հայոց սեպհականութիւն կը ճանչնայ, և այդ պատճառաւ իր ցուցակին մէջ կը գրէ հետևեալ յիշատակութիւնը. «Կրտի վանք, Ջորրոդ Հայոց, յարեւելից կուսէ կայ»: Կրտի վանքի մասին ասկէ զատ ուրիշ յիշատակութիւն մը չունինք դժբախտաբար: «Յարևելից կուսէ կայ» խօսքը պէտք է հասկնալ Երուսաղէմի արևելեան կողմը, որ է երիքովը, վասնզի նոյն վանքը չինուած էր բիւզանդական երիքովի մօտ: Դ. դարէն մինչև Զ. դար երիքովի մէջ ծաղկած էր քրիստոնէութիւնը: Այցելած են հոն Պորտոյլ Անանուն ուղևորը (333ին), Արգուլֆ եպս.ը Է. դարու սկիզբը, և կը նկարագրեն անոր դրախտանմման վիճակը: Կային հոն շատ մը եկեղեցիներ և ուխտաւորաց բնակարաններ: Հետևեալ դ'երևնար Եղիսէի աղբիւրին վրայ կառուցուած եկեղեցին իր բարձրադիր յիշատակարանովը: Մատապայի մոզայիք քարտէսէն կը հասկցուի թէ երիքովը արմաւենիներէ չրջապատուած գեղեցիկ քաղաք մ'էր: 637–1099 թուականները երիքովի մէջ քրիստոնէական կեանքը բոլորովին չէր անհետացած, այնպէս որ տեղւոյն եպիսկոպոսներուն ոմանց անուններն կը յիշատակուին ժողովական արձանագրութեանց մէջ: Կրտի վանքը հաւանաբար մինչև Թ. կամ Ժ. դար գոյութիւն ունեցած է, և յետոյ քանդուած է արաբական արշաւանքներէն, և անոր աւերակոյտի ճոխ չինուածանիւթէն կարելի է դատել թէ ան կարեւոր հաստատութիւն մը եղած է երիքովի սահմաններուն մէջ և կը վկայէ սեպհականատէրերուն բարձր դիրքին և նոյն վանքին վարչութիւնը ստանձնողներուն գործունէութեան ոգւոյն մասին:

Գանք Անաստաս վրդ. ի յիշատակութեան, Զորրորդ Հայոց խօսքին՝ որով կը հասկցուի թէ կրտի վանքը կը վերաբերէր Զորրորդ Հայոց: Նոյն գաւառի հայերը տիրացած էին անոր և կը մատակարարէին զայն իրենց նուէրներով կամ տուրքերով տեղացի պաշտօնէից ձեռքով: Զորրորդ Հայ ըսելով Հայաստանի ո՞ր կողմի ժողովուրդը պէտք է հասկնալ:

Հռովմայեցիք, յետոյ Բիւզանդացիք Հայաստանը գաւառներու բաժնած են, Հայք բառին քով դնելով թիւ մը: Անոնցմէ վերջ Արաբներն ալ բաժանումի միևնոյն դրութիւնը ընդունած են: Հայերն ալ գործածած են իրենց տիրապետողներուն դրութիւնը: Լատին, յոյն, արաբ և հայ գրուածքներուն մէջ, անխուսափելի կը պատահինք Ա., Բ, Գ, Դ Հայք բաժանումներուն:

536ին, Ցուստինիանոսի օրով, Զորրորդ Հայք ըսելով կը հասկցուէր Մելիտինէի դիմացի երկիրը մինչև Տիգրիս և մինչև «Մարտիրոսաց քաղաքը» (= Նիփկերտ = Մֆարղին), այս գետէն անդին:

591ին Մօրիկ կայսրը Հայաստանը Պարսից հետ բաժնելէ յետոյ երկրին տուաւ վարչական նոր բաժանում մը: Այս կերպով Ցուստինիանոսի օրով կատարուած Զորրորդ Հայքը պահուեցաւ և կոչուեցաւ Միջագետք. բայց անոր վրայ աւելցաւ երկրորդ Զորրորդ Հայք մը կամ Զորրորդ Ցուստինիանա մը, Դադեմի, Արշամոսատի և Բիթարիզոնի հետ: Այս վերջին Զորրորդ Հայքն է որ երկար ժամանակ այս իմաստով կը հասկնայինք Բիւզանդացիք և Հայք (Տե՛ս L'Arménie entre Byzance et l'Islam, depuis la conquête Arabe jusqu'en 886, J. Laurent ի. էջ 303): Իսկ մեր վարդան վրդ. ը իր աշխարհագրութեան մէջ Դ. Հայք ըսելով կը հասկնայ «Մոկս՝ Հիզանով մինչև ի Ծաղիղ»:

Ուրեմն, ըստ այս բացատրութեան, Երիքովի Կրտի վանքը կը հոգային իրենց տուրքերով և ուխտաւորութեամբ Զորրորդ Հայքի սոյն քաղաքները, որք են Եփրատէն անդին Խարբերդ, Արշամոսատ (*), Նիփկերտ, Ամիդ, Տիգրիսէն անդին Արզանիկ (**), Թերեւս նաև Տարոն և Սասուն:

(*) Ըստ Մատթէոս Ուռհայեցիի (ձշ.) կը կոչուի Ածմուշատ. Խարբերդի և Բալուի մէջտեղ:

(**) Arzanène Հայոց Աղձնիքն է, Տիգրիսի ձախ ափին վրայ:

ԼԵ

Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՎԱՆՔԸ ԳԱԶԱՅԻ ՄԷՋ

1. Քրիստոնէութիւնը Գազայի մէջ.

Գազայի բնակիչները չատ տրամադիր չէին քրիստոնէութիւնը ընդունելու, վասն զի այս քաղաքը հելլենական հեթանոսութեան կեդրոն մ'էր և իր գլխաւոր մեհեանը Marnéion անուամբ կը մրցէր Sérapeion ի հետ: Ընդհակառակն Մաւեւմայի բնակիչները չէին ընդդիմանար քրիստոնէութեան. այդ պատճառաւ էր որ Կոստանդիանոս հրամայեց Մաւեւման բաժնել Գազային: Մաւեւման դարձաւ անկախ քաղաք մը Կոստանդիա անուամբ, մինչ եպիսկոպոսութիւն Ցուլիանոս Ուրացողի, որ դարձեալ զայն միացուց Գազայի: Դ. դարու վախճանին հեթանոսութիւնը վերջ գտաւ Գազային Իլարիոնի հրաշքներով, Ս. Պորփիւրի ջանքերով և Կինոս զօրութեամբ: Գազայի գաւառը ունէր եօթը եպիսկոպոսներ, մին՝ ի Գազա, միւսն՝ ի Մաւեւմա, և երրորդն յԱնթէդոն. Գազա և Անթէդոն այժմ ալ ունին անուանակիր եպիսկոպոսներ: Գազայի քրիստոնէական դպրոցը ե. և Զ. դարերուն նշանաւոր եղած է Զոզիմի, Պրոկոպոսի, Կորիքիոսի, Իզոտորի, Ենայի, Տիմոթէոսի և Ցովհաննէսի ընորհիւ: Նոյն ժամանակները Գազայի մէջ կային առնուազն հինգ եկեղեցիներ, որոնցմէ մին էր EUDOXIANA՝ Marnéion ի տեղ. հաւանաբար այժմու մեծ մզկիթը: Տօները կը կատարուէին մեծ հանդիսաւորութեամբ: Քաղաքը պալատներով լեցուն էր այն աստեն, երբ Արաբները կ'իշխէին հոն Գազայի մօտ, Թատուռնի պատերազմէն վերջ (635):

2. Գազան ըստ արաբ պատմագիրներու.

Արաբ պատմագիրները Գազայի վրայ կու տան չահեկան տեղեկութիւններ. Եագուպի 874ին կը գրէ. «Գազան Պաղեստինի

ծովեզերեայ քաղաքներէն մին է. ան կառուցուած է կլիմայական երկրորդ գօտիին սահմանին վրայ: Հոն կը գտնուի Հաչիմ Իպն Մանաֆի դամբարանը: Իսպահի 951ին, և Իպն Հօթալ 978ին կը գրեն. «Գազան վերջին քաղաքն Պաղեստինի տարածութեան դէպի Եգիպտոս, ճիշդ երկրին մէջ: Հաչիմ Իպն Ապտ Մանաֆի դամբարանը հոն է. և ծննդավայրն է Մուհամմէտ Իպն Իտրիս էշ-Շաֆիի (Օրինաց մեծ ուսուցչին). ան թաղուած է Ֆոսդայի մէջ (հին Գահիրէ): Հոն գտնուած է նաև Օմար Իպն էլ-Խատտապ խալիֆան. չատ կանուխ ժամանակները Գազան մեծապէս հարստացած է. հոն կայ Հիճազի ժողովրդեան համար մեծ չուկայ մը»: 985ին Մուգասսհի կը գրէ. «Եգիպտոսի պողոտային վրայ ընդարձակ քաղաք մ'է, անապատի եզերքը: Քաղաքը ծովեզրէն չատ հեռի չինուած չէ: Հոն կայ դեղեցիկ մզկիթ մը, և կը տեսնուի նաև Օմար խալիֆային յիշատակարանը. հոն է նաև ծննդավայրը մեծ աւանդապաշտին Իշ-Շաֆիին և հոն դամբարան ունի Հաչիմ Իպն Ապտ Մանաֆ (Մարգարէին մեծ հայրը)»: 1154ին Իտրիսի կը գրէ. «Գազան այժմ չատ բազմամարդ է, և կը գտնուի Ցոյներուն (Խաչակրաց) ձեռքը: Գազայի նաւահանգիստը կը կոչուի Թիտա (կամ Թէտա)»: Ասպուլ Ֆետա (ԺԴ. դար) Իսթախրին յիշելէ յետոյ կը գրէ. «Գազան միջակ տարածութեամբ քաղաք մ'է. ծովեզերքը պարէզներ ունի: Արմաւենիները հոն քիչ են. պաղաւէտ այգիները բազմաթիւ են: Գազայի և ծովին միջև կան աւազակոյտեր, որոնց մէկ կողմը կը գտնուին պարէզները: Գազայի վերև չինուած է փոքր միջնաբերդ մը»:

1355ին Գազա այցելած է Իպն Պաթութահ: Ան իր Օրագրութեան մէջ անոր մասին կը խօսի իբր Սիւրիոյ առաջին քաղաքը Եգիպտոսէն յետոյ. «ան բազմամարդ է և ընդարձակ. ունի չատ մզկիթներ: Բայց ան իր չուրջը պարիսպ չունի: Հոն կայ հնագոյն գեղեցիկ մզկիթ մը. ներկայիս կայ ուրիշ մ'ալ Իմիր Ճավալիէն չինուած. հոյակապ չինուածք մ'է աս, և ունի սպիտակ մարմարէ բեմ մը» (Palestine under the Moslems, էջ 441–442):

3. Խաչակրաց եկեղեցիները Գազայի մէջ.

Ա. Պատմութիւնը.

Գազան՝ լատին յաղթանակի ատեն աւերուած և լքուած ըլլալով՝ Խաչակիրները նորոգեցին զայն: 1149ին Պաղտին Բ. ամբացուց Գազան. 1170ին Սալահէտտին աւերակի վերածեց զայն. բայց դղեակը դիմադրեց. 1187ին ան գրաւուեցաւ: 1192ին Ռիչարտ վերագրաւեց զայն. դաշնադրութեան պայմաններուն համաձայն ամրութիւնները քանդուեցան. 1244ին Խարիզմեանց արշաւանքներուն պատճառաւ Գազան դարձեալ աւերեցաւ, և այլևս իր հին կարևորութիւնը չկրցաւ ստանալ:

Գազան քրիստոնէական հին քաղաք մ'էր: 406ին Պորփիւրիոս եպիսկոպոս հոն չինած էր երկու թևերով պազիլիքա մը: Պորփիւրիոսի գերեզմանը ցայժմ կը տեսնուի Ցունաց եկեղեցիին մէջ. չէնք մը որ իր ամբողջութեամբը չինուած է Խաչակիրներուն կողմէն և թև չունի: Հին պազիլիքայէն գտնուածները ուրիշ բաներ չեն, բայց եթէ գործածուած հին սիւներ և թևերէս յղկուած քարեր:

Բ. Մայր եկեղեցին.

Ս. Յովհաննէս Մկրտչի նուիրուած լատին մայր եկեղեցին ուրիշ թաղի մը մէջ կը գտնուի, և ան կը կոչուի Մեծ Մզկիթ: Այժմ ան աւերակ է, վասն զի 1916ին անգլիական հրետանին անկէ օգը հանած է ռազմանիւթերու մթերք մը:

Vogüé պարզապէս միայն կը յիշատակէ: The Survey of Western Palestine նկարագրած է նոյն եկեղեցին և յատակագիծն ալ չինած: Գազայի Մայր եկեղեցին և Ս. Պորփիւրը ընտիր և կատարեալ ուսումնասիրութեան նիւթ եղած են Clermont-Ganneauի կողմէն ընկերակցութեամբ ոչ նուազ գեղեցիկ յատակագիծերով Lecomte du Nouyի:

Մայր եկեղեցին բիւզանդական պազիլիքայի մը տեղը կը դրաւէ, և կ'օգտագործէ անոր հին սիւները: Ան վերաչինուած է

1150ին, երբ Պաղտին Բ. քաղաքը կ'ամրացնէր։ Անոր յատակագիծը նման էր Խաչակրաց ուրիշ շատ մը մայր եկեղեցիներու յատակագիծերուն. ունի երեք կողակ, նաւ մը, կողմնակի թեւեր։ Իսլամները կողակները քանդած են. բայց անոնց թերի մասերը կը մնան. կը թուի թէ գլխաւոր կողակը երկու կողմով ուղղանկիւն երկու խոռոչներ ունեցած է, ուրիշ բազմաթիւ բիւզանդական եկեղեցիներու նման, և թէ կողակները ուղղագիծ պարքի մը մէջ տեղաւորուած են։

Երեք միջավայրերը ցցանկիւններով կամարակապ են. ունին չորս գերանամէջերը, քառակուսի գաւիթ մը, այն ալ կամարով և կ'երկարաձգէ նաւը, ինչպէս Պէյրութի Մայր եկեղեցին։ Մոյթերը խաչաձև են. բարաւորները և թակաղակները կը ձևացնեն չարունակական լար մը, որուն վրայ կրկնակ նաւին սիւները կը դնէ երկրորդ հիմ մը։ Վերի խոյակներու թակաղակները կապուած են լարով մը որ կ'անցնի պատուհաններու նեցուկին ներքևէն։ Միևնոյն կարգը կը տեսնուի կողմնակի թևերուն մէջ։

Թակաղակները և լարերը ունին միաձև հատած մը (profil), այսինքն գօտի, փողաձև փորուած խորովի, կլոր փոքր ցցուակ։

Բոլոր աղեղները բեկուած դրոշմ ունին։ Նաւը որմայեցեր չունի, բայց կողմնաթևերու որմայեցերը խաչաձև կիսասիւներու դրոշմը ունին։

Բոլոր սիւները կը բաղկանան կորնթական խոյակներէ և գործածուած հին մարմարէ սիւնագլուխներէ։ Սիւնագլուխներու մէկուն վրայ քանդակեալ կ'երևնայ պսակի մը մէջ զետեղուած եօթնաստեղնեան աչտանակ մը, և հոն կը կարդացուի հրէայական արգաւիր արձանագրութիւն մը։ Ուրեմն սիւները սինագոկէ մը բերուած են և հոս օգտագործուելէ յառաջ բիւզանդական եկեղեցի մը զարդարանքը եղած են։ Ուրիշ սիւնագլուխներ պատերու մէջ հիւսուած են, իբր որմաբարձք (chaînage)։ Clermont-Ganneau կը յիշէ թէ Եւզոկսիա թագուհին պազիլիքային ընծայած է երեսուն մարմարեայ սիւներ և կը կարծէ թէ անոնք բերուած են կեսարիոյ սինագոկէն։

Գաւիթը ունի թեռաս մը, ինչպէս կողմնաթևերը. բայց նաւին տանիքը ցած է, վասն զի չէնքին ամբողջ երեսը կը վերջանայ երեք անկիւնի զարդով մը (fronton)։ Այս զարդին և գաւիթին միջև կը բացուի պարզապէս դէպ ի ներս չեղակուած չըր-

ջանակաձև մեծ պատուհան մը (rose), զարդարուած անուրներէ և բացուածքներէ՝ կրկնակ չրջանակի մը վրայ ընդելուզուած ըլլալով։ Ան կորուսած է իր քարէ պահպանակը։

The Survey Western Palestine ի ծանօթագրութեան մը մէջ մայր եկեղեցին դուռը իտալական արուեստ կը համարուի. վասն զի չինուած է համակ սպիտակ մարմարէ. բայց իր ոճը ֆրանսական է. խիստ թեթև կերպով փոխուած արաբական ազդեցութեան տակ։ Աս ժԲ. դարու երկրորդ կիսուն պաղեստինեան ոճէ է իր բոլոր պարզութեամբը։

Թմբուկը ողորկ է և նկարուած պէտք է ըլլայ։ Ան չի կըռթնելը ցցուած ձևով փայտի մը՝ այլ զրանդիններուն բարաւորներուն վրայ։ Կամարաքիւը ունի երեք կամարներ՝ իւրաքանչիւր կողմէ սիւներու համապատասխանող և զարդարուած բացուածքներով։

Գ. Ս. Պորփիւրի եկեղեցին.

Clermont-Ganneau այս եկեղեցին նկարագրականը ունի յատակագիծով միասին։ Եկեղեցին արտաքին կերպով չատ խորացած է և ունի լայն կողակ մը, և կամարակապ դասի կարճ գերանամէջ մը։ Կամարի պարանոցը կրող երկու կիսասիւներուն գործածած են սիւներ՝ որ հին հատուածներ են և ամբողջացուցած են բիւզանդական թակաղակով մը և չեղեզրուած պատուանդաններով։ Դուռը ոճ չունի. գաւիթը անհետացած է. պատուհանները կամարաձև են. որմայեցերը կրկնակ են, ինչպէս մայր եկեղեցիինը։ Արևելեան կողմի խոշոր որմայեցերուն մէջ է որ հոգացուած են երկու փոքր առանձնոցներ։

Դրան վրայ զետեղուած յունական արձանագրութիւն մը կը վկայէ թէ եկեղեցին նորոգուած է և պաշտամունքի համար կը ծառայէ յոյն հասարակութեան միջոցաւ 1856 թուականին։

Գ. Տուճերու դուռներ.

Ս. Պորփիւրէն ոչ հեռի միջահասակ դուռներով երկու տուներ կը տեսնուին, հորիզոնական չեղեզրով մը վեր ելած և մանրա-

ծաղիկներով քանդակուած. Այս ոճը բիւզանդական է, բայց մանրածաղիկներուն օրինակը տեղական ծագում ունենալ կը թուի:

Ե. Կոռնը կամ գինաճեաճակիր աւիւծը.

Հետաքրքրական յիշատակարան մը գտնուած է Գազայի մէջ և հրատարակուած է Clermont-Ganneau էն, որ գտած է զայն Սիւլէյման Զարիֆի տանը մէջ: Էլ-Մունթարի արևելեան կողմը երեք ժամ հեռի գտնուած աւերակէն բերուած է ան:

Սողացող քարէ կորճ մը (առասպելական անասուն) կամ ածիւծ մ'է ան, որուն յետակողմեան թաթերը կը հանգչին սիւնակի մը վրայ և առջևի թաթերը կը բռնեն անհետացած առարկայ մը՝ որ կը կարծուի ըլլալ գինանչան մը:

Անասունը որովայնին տակ ստինքներ ունի, ինչպէս Moissac ի մեծ դրան էգ ածիւծները: Հաւանական է որ այս քանդակը կը վերաբերի արևմտեան արուեստին և թէ ատ մնացորդն է յիշատակարանի մը տաճուտիրական իրաւանց վկայող ազգի մը կամ ազնուական ընտանիքի մը, որուն գինանչանը բռնած է սոյն կենդանին: Այս դասակարգին մէջ կը մտնեն ազնուականաց սանդուխները, տաճուտիրական սահմանաքարերը, տեսացիցերը, հիւպատոսական դրօշակները: Կրնան այսպէս զարդարուիլ աղբիւր մը, սանդուխ մը, կամ ո՛և է շէնք մը: Ֆրանսայի մէջ այսպիսի օրինակներ պահուած են:

4. Գազայի Ս. Հրեշտակապետաց վանքը.

Ինչպէս վերի տողերէն յայտնի եղաւ, Գազան կը գտնուէր Եգիպտոսի սահմանին վրայ. անկէ երուսաղէմ եկող ուխտաւորները պիտի գային Գազայի ճանապարհով. ինչպէս ուրիշ տեղեր, հոս ալ ուխտաւորաց համար հին օրերէն սկսեալ հաստատուած էր Հայոց եկեղեցին և վանքը, Հոգևտուն անունով, ուր կ'իջևանէին և հանգստանալէ յետոյ կը հասնէին Երուսաղէմ:

Գազայի Հայոց Հոգևտան ու եկեղեցին հիմնարկութիւնը քնականաբար չատ հին է, վասն զի Եգիպտոսի հայ ուխտաւորներուն երթևեկը՝ իբր սահմանակից երկիր ամէն աւելի յաճախադէպ և բազմութեամբ տեղի կ'ունենար, մանաւանդ Եգիպտոսի թեմը հոգևորապէս կապուած էր Երուսաղէմի պատրիարքութեան՝ ուրկէ կը ղրկուէին անոնց հոգևոր հովիւները: Ա. հպս. Տ. Յովհաննէսեան իր Պատմութեան մէջ (Ա. Հար. էջ 364) կը գրէ. «... չինեաց (Եղիազար Պատրիարք) եւ զեկեղեցի ի Գազա յանուն Հրեշտակապետաց, այլ յետոյ յանհոգութենէ աւերեալ խանգարեցաւ յԱրաբացւոց, և մի մասն աւերակաց տեղւոյն կայ մնայ անդ»: Այս տողերէն կը հասկցուի թէ Եղիազար պատրիարքն է որ Գազայի մէջ կը կառուցանէ Հայոց Ս. Հրեշտակապետաց եկեղեցին. բայց այս պարագան սխալ կը թուի, վասն զի ինչպէս վերև ալ գրեցինք, նկատի առնելով Եգիպտոսի հայ ուխտաւորներու յաճախութիւնը, բնական էր որ չատ կանուխէն Գազայի մէջ իբր սահմանագլուխ հաստատուած պէտք էր ըլլար եկեղեցի մը և հոգևտան մը հիմնարկութիւնը: Եղիազար պատրիարք 1657ին Տարոնեցի Սատուածատուր պատրիարքի կողմէն փոխանորդ կը կարգուի Երուսաղէմի Ս. Աթոռին, ինչպէս կը հասկցուի իր կոնդակէն (տե'ս Սաւալանեանց, Բ. Հար. էջ 1202–1207), սակայն նոյն թուականէն չատ առաջ հիճ. 1025 սէֆէր 16 (= 1647) թուականին Հէօճէթը Շէրիով նոյն եկեղեցին կը նորոգուի. նոյն հէօճէթին իմաստը հետևեալն է. Գազայի Սուգ էլ Ղատր փողոցի Հայոց եկեղեցիին տանիքը ու պատուհանները նորոգութեան կարօտ ըլլալով՝ անոնց խնդրանաց համաձայն քաղաքին դատաւորը Գազայի իսլամ մէկ քանի երևելիներու եւ իսլամ ժողովրդեան բազմութեան մը ներկայութեան քննութիւն մը կը կատարէ և իրօք նորոգութեան կարօտ կը նկատուին եկեղեցիին առաստաղը և պատուհանները, որուն համար դատաւորը կ'արտօնէ որ Հայերը կատարեն վերոյիշեալ մասերուն նորոգութիւնը առանց ուրիշ տեղեր նորոգելու: Այս նորոգութիւնը կը կատարուի Եղիազար պատրիարքին Երուսաղէմ գալէն տասն տարի առաջ, որով ան չի կրնար նոյն եկեղեցիին չինողը նկատուիլ, քանի որ արդէն հինէն ի վեր գոյութիւն ունէր: Եղիազար պատրիարք, ինչպէս յայտնի կ'ըլլայ ուրիշ հէօճէթներէ, վանքին սահմանակից քանի մը տուներ և պարտէզներ ծախու առնելով կցած է վանքին ու եկեղեցիին. նոյն հէօճէթներուն մէկ քանիին մէջ որոշապէս կը յիշուի Եղիազարի անունը իբր գնող.

նոյն կալուածներուն թերևս այս պարագան է որ կարծեցնել տուած է թէ ան էր Գազայի եկեղեցին չինել տուողը։

Իսկապէս եղիազար պատրիարք կարևոր ծառայութիւն մը մատուցած է թէ՛ Գազայի և թէ՛ Ռէմլէի հայ վանօրէից ու ժողովրդեան թէ՛ իր չինարար ձեռնարկներով թէ այն պետական արգելիչ միջոցներու գործադրութեամբ որոնց կը հրաժարէին արքունի պաշտօնեայք. նոյն արգելիչ միջոցներէն մին էր այն կայսերական հրովարտակը զոր ձեռք բերած էր եղիազար և ներկայացուցած էր երուսաղէմի գաւազին՝ որը արձանագրելով նոյն հրովարտակը, իմաստը Գազայի գաւազին և Ռէմլէի նայիպին և Յասէքի սուլթանի վագֆի մութէվէլլիին իմացնելով կը յայտարարէ՝ թէ Հայոց ժողովուրդը կայսերական գահուն իրաւունքը մը մատուցանելով յայտնած է որ կարգ մը աւազակները ճանապարհին կենալով՝ Հայերը իրենց մեռելները թաղելու տարած ատեննին՝ կը քարկոծեն և մեռելի վրայ դրուած լաթերն ալ կը գողնան։ Հայոց այս խնդրանքին վրայ, կայսերական հրովարտակ մը կը տրուի իրենց որու համաձայն երուսաղէմի դատաւորը կը հրամայէ արգիլել հաւատարիմ հպատակներու դէմ եղած այդ արարքը։ Դատաւորը խօսիլ կը պատուիրէ որ այսուհետև զիւմմիներուն (քրիստոնեայ) իրենց մեռելները գերեզմանատարած ատեննին՝ բռնութիւն ի գործ չդնեն, չքարկոծեն, եւ մեռելի վրայ դրուածները չառնեն։ Եւ եթէ մէկը համարձակի կայս. սոյն հրամանին հակառակ կենալ, կը պատուիրէ անունը և կերպարանքը նշանակելով իրեն ղրկել։ Երուսաղէմի դատաւորին այս հրամանագիրին թուականն է հիճ. 1084 (= 1706)։

Ժ֊Ը. դարու առաջին քառորդին, Գազայի հայ քրիստոնէից ենթարկուած այս բռնութեանց վրայ ուշացած էին նաև տեղական քրիստոնէից ապօրէն արարքները. Գազայի հին թղթածրարին մէջ կը գտնուի անթուական արաբերէն նամակ մը որով 3–4 հայ քրիստոնեաներ կը գրեն թէ «կարգ մը չահամոլ զիւմմիներ (քրիստոնեայ) մեր եկեղեցին կոխելով, մէկուն մօրուքը փետտեր ուրիշ մը անկողնոյ ծառայելու աստիճան ծեծեր են։

Կը խնդրենք ձեր վսեմութենէն որ յիշեալ սրիկայ զիւմմիները պաշտօնեաներու միջոցաւ բռնել տալով ձեզ բերուին։»

Ո՞րքան կրնան ըլլալ այս զիւմմիները որ կը համարձակին Հայոց եկեղեցին կոխել, եկեղեցականաց մէկուն մօրուքը փետտել եւ

միւսն ալ մեռցնելու աստիճան գանակոծել. նոյն ատեննները Հայոց եկեղեցիին դրացի էին օրթոտոքս արաբ յոյներու և խպտիներու եկեղեցիները. արաբ յոյներ հիմակ ալ տէրն են իրենց Ս. Գորփիւրոս եկեղեցիին, իսկ Գազայի մէջ խպտիները հիմակ գոյութիւն չունին. հաւանաբար այս քրիստոնեաներն էին անոնք՝ որ Հայոց եկեղեցին կոխելով կատարած էին այդ խոշտանգումները։

Նոյն թղթածրարին մէջ կը գտնենք նաև ուրիշ անթուական նամակ մը ուղղեալ եղիա վարդապետին, որուն ընծայուած յարգանքէն վերջ, նամակագիրը կը գրէ. «սոյն գրութեամբ կը յայտնեմ թէ մենք՝ ձեր տեսութեան կարօտ ենք և երկրորդ հոտ գտնուող բոլոր անօթները ձեզ ղրկած ենք, զայս ի գիտութիւն կը հաղորդենք. մուալլիմ Սալիմ»։ Ըստ վերոգրելոյն ղրկուած անօթներն են. «7 գիրք, մէկ սինի, ղոյդ մը քչոց, երկք բրոնիչ, մէկ սկիհ, չորս սաղաւարտ, հին վեղարներ, պղնձէ բուրվառ մը, որոնք սնտուկի մը մէջ դրուած են, վարագոյր, վարագոյր պատկերով, վարագոյր մանիչակագոյն, ծաղկենկարուած ժամարարի զգեստ. ամերիքանէ ժամարարի չապիկ մը, խասայէ ժամարարի չապիկ մը, երկու զգեստ տէնտէլի, տուփի մը մէջ երկու չուրջառ, մէկ փիլոն կանանչ, մէկ թևնոց, ծրարի մը մէջ ծրարուած թաւշեայ զգեստ, գօտիներ և այլն։ ... Ասոնք ղրինք տեղ մը և բանալին առինք։ Միտք ունինք հայ ազգատին մէկը հոն պահակեցնել։ Սոյն իրեղէնները ստանալնիդ լմացուցէք»։

Սալիմը կ'երևի թէ տեղւոյն ուսուցիչն էր. եկեղեցին անտէր ու անտիրական մնացած է ու յիշեալը ծանր կացութեան մը առջև գտնուելով՝ կը փակէ եկեղեցին ու անոր անօթները ցուցակով մը կը ղրկէ Ս. Յակոբի վանքը, ինչպէս վերև տեսանք. հաւանական է որ եկեղեցին մինչև 1730 թուականը բաց էր և կանգուն, վասն զի Հաննէ կը գրէ իր Պատմութեան մէջ (էջ 293). «Սա ասլ Ղազէ որ է Գազա։ Աստ է տունն Սամփսոնէ հզօրին և տուն Մագդալինացւոյն։ Աստ գոյ վանք մի ազգիս Հայոց. եւ եկեղեցի յանուն Սրբոց Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միխայէլի։ Եւ ունի պարտէզս եւ ծառս եւ խցերս։ Զսա ասեն լեալ տուն Իլարիոնի սրբոյ հօրն»։ Հաննէի այս խօսքերուն մէջ փակումի և քանդումի խօսք չկայ։ Իսկ Մկրտիչ Վրդ. Արծրունեան (էջ 248) Հաննէի վերևի տեղեկութիւնները տալէ վերջ կ'աւելա-

ցընէ «Բայց այժմ աւերակ է եւ անհետացեալ: Ցամքի Տեառն 1854 առաքեցաւ աստի քննիչ ի Գազա, որոյ բնակիչք պարտաւորեցան տալ մեզ ամ յամէ իձարէ քառասուն դահեկան սակս մեր վանուց տեղւոյն»:

Ահա այս է վիճակը Գազայի երբեմնի այն շէն և ընդարձակ Ս. Հրեշտակապետաց վանքին ու եկեղեցիին, որմէ միայն մնացած է չորս արտաւոր գետին մը քաղաքին արևմտեան հարաւային կողմը Հարէթ էլ–Զէյթուն կոչուած թաղին մէջ որ ասկէ յառաջ կոչուած էր Սուգ էլ–Ղոտ. եկեղեցիին տեղը 70–80 տարի առաջ բռնագրաւուած էր տեղացիի մը կողմէն և հաղիւ կարելի եղած է մեծ ճիգերով գրաւումէ ազատել:

Վանքին տեղը կը կոչուի Հագուրեդ էլ Մէղէֆ (Հրեշտակաց արտ) և տեղացի բարեպաշտ կիներ իրենց հիւանդ փոքրիկ մանուկները հոն կը տանին, ջրով կը լուանան, և կը պաշտմին թէ փոքրիկները կը բժշկուին: Ցայտնի է թէ Հագուրեդ էլ Մէղէֆ գետինը ա՛լ աւելի ընդարձակ էր, վասն զի, ինչպէս տեսնուեցաւ, վանքը բացի եկեղեցիէն և Հոգետունէն՝ իր չուրջը ունէր նաև պարտէզ և խուցեր. կ'ըսեն թէ այժմու գետնին կից ասկէ յառաջ խաւն մը կար, ուրիշներ կը սեպհականեն զայն և կը ծախեն սահմանակից մէկու մը որ երբ խանը փլցնելով տուն չինելու կը ձեռնարկէ՝ հիմերը փորուած ատեն մոզայիքները երևան կ'ելնեն: Ծախուած խանը հաւանաբար վանքին մասը կը կազմէր, թերևս վանքին երբեմնի Հոգետունը, որ եկեղեցիին հետ ունէր իր պատշաճ զարդարանքը, յատակին, որմերուն ու այլ տեղերուն վրայ մոզայիքներ և թերևս հայերէն յիշատակարաններ ալ. բայց քանդող ձեռքերը սրբութիւններէն չեն հասկնար, վասն զի անոնց վրայ կ'իշխէ կիրքը և ատելութիւնը:

ԼԶ

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

ՅՈՐԴԱՆԱՆԻ ԵԶԵՐՔԸ

Քրիստոսի Տնօրինական տեղերէն մին կը նկատուի Յորդանան գետը, ուր մկրտուեցաւ մեր Տէրը Յովհաննէս Մկրտչէն, ինչպէս կը վկայէ Աւետարանը: Յորդանանը կը բղխի Լիբանան և Հերմոն լեռներէն և ընդարձակ դաշտերը թրջելով կը թափի Մեռեալ ծովը: Հին Ուխտի մէջ անուանի է ան հրաշագործ անձերու և դրուագներու պատմուածքներով: Իսրայէլի համար ան կը նկատուէր երկրորդ Կարմիր ծով մը. մարգարէից գրուածքներուն մէջ անպակաս են ակնարկութիւններ՝ որ այլաբանական իմաստներով կը հասկցնեն գետին յորդումները, ընթացքը, անոր ջրվէժներուն և հոսանքներուն արագութիւնը և այլն. բայց հոգևոր իմաստով ամէնէն խորհրդաւորը Զաքարիա մարգարէին ակնարկութիւնն է (ԺԴ. 3), «Զայն ողբալոյ հովուաց, զի թըշուառացաւ մեծութիւն նոցա, ձայն գոչելոյ առիւծուց, զի թըշուառացաւ բարձրութիւն Յորդանանու»: Թշուառացած Յորդանանու բարձրութեան վրայ ուրիշ առիւծ մը պիտի գոչէր, և պիտի սրբագործուէր գետը տնօրինական այն մեծագոյն գործով՝ զոր Տէրը պիտի կատարէր Յորդանանի ջուրերուն մէջ, վասն զի ան պիտի ըլլար մեղաքաւիչ ուսազան մը ուրկէ վերստին պիտի ծնէին մարդիկ: Մեր Տէրը իր մկրտութեամբ նուիրականացուց Յորդանանի ջուրերը որոնց վրայ արձագանգեցին քրիստոնէական երկու մեծագոյն խորհուրդներու՝ Ս. Երրորդութեան և Փրկագործութեան վարդապետութիւնները, որոնց վրայ դրուեցաւ աստուածային կնիք մը ազատնակերպ իջումովը Ս. Հոգիին: Տէրունական այս սուրբ գործերով պանծալի գետը աննչմար չպիտի անցնէր սրբազան բանաստեղծներուն գեղեցիկ արտադրութեանց մէջ և պիտի փառաբանէին Յորդանանը, փառաբանած ըլլալու համար Անիկա՝ որ մկրտուեցաւ հոն լուալու մարդոց

մեղքին արատները և իբր Գառն Աստուծոյ բառնալու աչխարհի մեղքերը, ինչպէս կը գոչէր Ս. Յովհաննէս Մկրտիչ: Քրիստոնէական մաքին մէջ այլևս Յորդանանը «թշուառացած բարձրութիւն» չէր, այլ մաքրութեան, սրբութեան և ազատութեան յաւերժական աւազան մը՝ որուն մէջ դարերու սերունդները պիտի գային սրբուելու համար:

Քրիստոնեայք չէին կրնար մոռնալ մեր Տիրոջ Տնօրինական տեղերը. իրենց հոգիին սիրափանքն էին անոնք, և թշուառացած անձեր այժ և կաղդոյր գտնելու համար կը կտրէին անհուն տարածութիւններ՝ հակառակ մեծամեծ արգելքներու և վտանգներու, բազմութեամբ կը յաճախէին Ս. երկիր, ի գոհացումն իրենց բեկեալ սրտերուն, և արտասուաթաւալ աչքերով կը համբուրէին Ս. Տեղիքը և կը փութային երթալ Յորդանան լսելու այն աստուածային ձայնը որ տակաւին կ'արձագանգէր ըսելով. «Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»: Ջրի մէն մի կաթիլ այդ ձայնին այժը կը կրէր և անոր մէջ սրբուող կամ լուացուողը պիտի ունենար Աստուծոյ որդեգրութիւնը, և իր առաքինական գործերովը պիտի ստանար Բարձրելոյն հաճութիւնը:

Այս հաւատքով կուգային քրիստոնեաներ հաստատուելու Յորդանանի եզերքը, ուր իրենց հաւատքի ցոլքը և ջերմեռանդութեան արգիւնքը կը ցուցադրէին հոգևոր ձեռնարկներով: Յորդանանի երկու անապատացեալ եզերքներուն վրայ՝ այն տեղը՝ ուր մեր Տէրը մկրտուեցաւ, քրիստոնէական ջերմեռանդութիւնը մանաւանդ Դ. դարէն սկսեալ չէնցուցած է նախ մենաստեացներու բազմաթիւ խուցերով, յետոյ հոյակապ վանքերով և եկեղեցիներով: Նոյն իսկ Քրիստոսի մկրտուած տեղւոյն վրայ կառուցուած է փառաւոր եկեղեցի մը: Արդարև սրտառուչ և հիացական են դարերու ընթացքին մէջ այլ և այլ աղգաց այն ուխտաւորական բազմութիւնները որ կը դիմէին դէպի նուիրական գետը լուացուելու կամ մկրտուելու համար:

Մենք այս տողերով պիտի չանանք գրել նախ այս ուխտաւորութեանց և անոնց սովորութիւններուն պատմականը, ուղեգիրներու վկայութիւններով. յետոյ ականատեսի մը վկայութեամբ պիտի նկարագրենք գետին հանդիպակաց կողմը Քրիստոսի մկրտուած տեղւոյն վրայ չինուած եկեղեցին, և ապա պատմական ապացոյցներով պիտի ճշդենք Յորդանանու եզերքը

գտնուած Հայոց Ս. Յովհաննու կարապետի վանքը: Իբր ծանօթութիւն սա աւելցնենք թէ գետին ալ կողմը կամ արևմուտքը ըսելով պէտք է հասկնանք Յիսուսի մկրտուած տեղւոյն մօտ գետին այն եզերքը որ կը գտնուի երիքովի դիմացը, իսկ ձախ կողմ կամ արևելքը գետին անդիի կողմը, այսինքն միւս ափունքը:

1.— Ուխտաւորութեանց պատմական վկայութիւնները Յորդանանու երկու կողմերուն վերաբերութեամբ գրուած են, նմանապէս վանքերը երկու կողմին վրայ հաստատուած են: Մենք երկու մասի պիտի բաժնենք, երկու կողմի վկայութիւնները, քաղելով զանոնք ուրիշ ուղեգիրներէ ժամանակագրական կարգաւ: (Տե՛ս F. Vigouroux ի Dictionaire de la Bible հատորներուն JOURDAIN և BETHABARA անունները:

Ս.— Բիւզանսի Անտոնիանոսը կը պատմէ թէ իր ժամանակը (Զ. դար) ժողովրդական մեծ բազմութիւն մը Աստուածայայտնութեան օրը կ'երթար գետին եզերքը, արշալոյսին լուացուելու համար: Ան կը պատմէ թէ փայտէ խաչ մը կար գետին մէջ տեղը և երկու եզերքները մարմարով ծածկուած էին: Իւրաքանչիւրը գետ կը մտնէր սաւանով, զոր ամէն օք կը պահէր իր մահուան օրուան համար: Տուրացի Դրիգոր ևս կը յիշէ թէ բոլոտները Յորդանան կ'երթային բժշկուելու համար: Ուխտաւորներէ առնուած տեղեկութեանց համաձայն մկրտութեան նշանակուած տեղն էր Յուննայ Ս. Յովհաննէս Մկրտչի վանքին մօտերը: Նոյն վանքը Արաբները կը կոչեն Քասր հ–Եհուս, «Դղեակ Հրէից», և Քրիստոնեայք՝ «Ս. Յովհաննու վանք»: Շատ հին ուխտաւորներ կը կարծեն թէ ան չինուած էր նոյն իսկ այն տեղը ուր Յովհաննէս կը մկրտէր, բայց աւելի հաւանական է որ քիչ մը հեռի էր անկէ, վասն զի Յորդանանի անմիջական եզերքները չէին կրնար տանիլ այդպիսի հաստատուն չինութիւն մը: Ուխտաւորներուն այցելած գետին տեղը ժամանակի ընթացքին փոխուած է: Դարձեալ 530ին Թէոդոսիոս ուխտաւոր ուղեգիրը կը գրէ. «այն տեղը ուր Տէրը մկրտուած էր տեսայ մարմարէ սիւն մը՝ որուն վրայ կար երկաթէ խաչ մը: Հոն էր Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցին՝ Անաստաս կայսեր կողմէն չինուած որ կամարներու վրայ բարձրացուած էր Յորդանանի ջուրերուն չատ մօտ ըլլալուն պատճառաւ: . . . Տիրոջը մկրտուած

տեղէն մինչև ա՛յն տեղը ուր, Ցորդանանը Մեռեալ ծովը կը թա-
փի, հինգ մղոն է»։ 780ին Վիլլեպալտ կ'այցելէ և կը վկայէ թէ
«Ցորդանանի աջ կողմը կը գտնուէր եկեղեցի մը որ քարէ սիւ-
ներու վրայ բարձրացած էր. հոս այն տեղն է ուր Տէրը մկըր-
տուեցաւ և կար փայտէ խաչ մը և ջուրի փոքր դարձուածք
մը»։ 1112 ին Ռուսաղէմի Դանիէլ վանական կը գրէ թէ «Ցորդա-
նանը երկու նետընկէց հեռի էր Ս. Յովհաննու հին վանքէն և Ս.
կարապետին ի պատիւ չինուած եկեղեցիին աւերակներէն»։ 1170ին
Թէոդորիք երիցուի մօտ երեկոյ մը տեսաւ վաթսուն հազար ան-
ձեր՝ մեծաւ մասամբ վառուած լապտեր ի ձեռին։ 1187 ին յոյն
վանական Փոկասը կը գրէ թէ Ս. Յովհաննու եկեղեցին երկրա-
չարժէ մը քանդուած ըլլալով նորոգուեցաւ Մանուէլ Կոմնենոս
կայսրէն։ Յիշեալը կը յաւելու. «երկու նետընկէց հեռուէն կը
հոսի Ցորդանանը։ Ափունքին մօտ, քարընկէց մը հեռի, կայ
չորս կամարներու վրայ բարձրացուած չէնք մը, որուն բոլոր-
տիքէն առաջ կը հոսէր Ցորդանանը»։ Սրաբներու տիրապետու-
թեան ժամանակ ալ, 1217 ին Աստուածայայտնութեան տօնին
չատ հեռի տեղերէ տղաքները կը բերէին մկրտելու Ցորդանանի
մէջ։ 1309ին Ricoldi ուղեգիրը հանդիպեցաւ տասն հազար ան-
ձերու՝ որոնք Ցորդանան կ'երթային լուացուելու և մկրտուելու
համար։ 1480ին Ֆապրի կը գրէ թէ իսլամ արաբներ մակաղա-
տեղի ըրած էին Ս. Յովհաննու Ցունաց վանքը։ 1552ին լատին
ուխտաւորներ կ'երթային աղօթելու վանքի եկեղեցին և կ'այ-
ցելէին Ցորդանանը, որ վանքէն գրեթէ երկու մղոն հեռի էր։
Մկրտութեան եկեղեցին այլևս ծանօթ չէր և կը կարծուէր թէ
ան Ս. Յովհաննու կարապետի եկեղեցին էր, որմէ Ցորդանանը
հեռացած էր։

Վերև յիշուած ուղեգիրներուն Ցորդանանի աջ կողմը յիշած
Ս. Յովհաննու վանքը, երկու ուրիշ վանքերու հետ, կը վերա-
բերի Ցունաց։ Անտարակոյս անոնք չատ հին վանքեր էին, ինչպէս
կը վկայեն հին մոզայիքները և յունական արձանագրութիւննե-
րը։ Երկրաշարժի և յարձակումներուն հետևանքով բոլորովին
աւերակ դարձած էին, մին միայն 1882ին կը նորոգուի եկեղե-
ցիով և հիւրանոցներով։

Ցունաց Ս. Յովհաննէս Մկրտչի վանքին ճիշդ դիմացը Բե-
թաբարան է ուր կը բնակէր Յովհաննէս և ուր մեր Տէրը մկրտը-

ւեցաւ. «Այս ի Բեթաբարա եղև յայնկոյս յորդանանու, ուր էր
Յովհաննէս և մկրտէր (Յովհ. Ա. 28)։ Բեթաբարան՝ որ կը նչա-
նակէ «անցք», այն ծանծաղուտն էր՝ ուրկէ կարելի էր հետիոտն
երթալ, այդ տեղը կը կոչուէր էլ-Կորաիէհ, որուն վրայ ի հնուէն
չինուած էր քարէ կամուրջ մը՝ ինչպէս յայտնի է մօտի գետե-
զերեայ աւերակէն, և այժմ ալ կը գտնուի փայտէ կամուրջ մը.
նոյն տեղէն է որ կ'երթային մէկ եզերքէն միւսը։ Քրիստոսի մը-
կըրտութեան տեղւոյն քրիստոնէական հին աւանդութիւնը Բե-
թաբարան ցոյց կու տայ, ինչպէս Աւետարանը։ Ցորդանանի ան-
դիի կողմն էր որ քրիստոնեայ ուխտաւորներ կը յաճախէին։ Հո-
գևոր և վանական կեանքը հոն առաւելապէս զարգացած էր չատ
հին դարերէ սկսեալ։ Եւսեբիոս իր Պաղեստինի տեղերու անուանց
պիրքին մէջ (Onomasticon) Բեթաբարա անունին տակ կը գրէ, և ա-
նոր կը ձայնակցի Յերոնիմոսն ալ թէ՝ Կոստանդիանոսի ժամա-
նակէն սկսեալ բազմաթիւ նորադարձներ Ցորդանանի անդիի
կողմը կը յաճախէին մկրտուելու Բեթաբարայի մէջ. հետագայ դա-
րերու հաւատացեալք կ'ընէին նոյնը։ Պորտոլի Անանուն ուխ-
տաւորը 333ին իր Ուղեգրութեան մէջ մեր Տիրոջ մկրտութեան
տեղը ցոյց կու տայ արևելեան եզերքին վրայ և կը յարէ թէ
նոյն տեղը Մեռեալ Ծովէն հինգ մղոն վեր է, և այն բլուրին
մօտ՝ ուր Եղիա մարգարէն երկինք վերացաւ։ Յովհաննէս Մոս-
քոս իր Մարգ Հոգևոր գիրքին մէջ մանրամասն կը յիշատակէ
այն մենակեացները որ Ցորդանանի անդիի կողմը գետեզերեայ
այրերու մէջ բնակութիւն հաստատած ու հետևած են անապա-
տական կեանքի։ Նոյն իսկ անոնցմէ մին՝ Յովհաննու Մկրտչի
այրին մէջ բնակելով յաջողած է չինել նոյն սուրբին անունով
եկեղեցի մը, ուր պիտի կառուցուէր յետոյ Ս. Յովհաննու Մը-
կըրտչի վանքը, այլ անուամբ Սահապայի (Sapsas) վանքը։ Մի ու-
րիշ չինած է Քոփրաթայի (Copratha) վանքը, որուն վանականները
կը պահպանէին Քրիստոսի մկրտութեան եկեղեցին, Ցորդանանի
անդիի կողմի եզերքին վրայ չինուած (Տե՛ս Migne, P. G. Հատ 3,
Pratum Spirituale, Ս. Դ. Դ. Դ.)։ Պաղեստինագէտ մատենագիր
Guerin կը գրէ (Samarie, Հատ Ա. էջ 114) թէ «Ժ. դարուն ուխ-
տաւորները Ցորդանան կ'երթային լուացուելու Քասր էլ-Եհուտի
արևելքը գտնուած Մաֆթսախ էլ-Կորաիէհ անունով ծանծաղուտին մէջ. այժմ ընդհակառակն կ'երթան նոյն աւերակ-

Ներուն հարաւ–արեւմտեան Մaffuahp հ–Հաճիա: Այս ծանծաղուտը իրապէս կրնայ ըլլալ Բեթաբբան՝ ուր Յովհաննէս կը մկրտէր, և հետևաբար ներելի է մտածել թէ հոն էր որ մեր Տէրն ալ մկրտուեցաւ իր կարապետին ձեռքովը: Այժմ լատին ուխտաւորները Մաքքատէթ էլ–Կորանիէ ծանծաղուտը չեն երթար լուացուիլ՝ սա պատճառաւ որ անոնք ընդհանրապէս Մեռեալ Ծովուն եզերքը պտոյտ մը ընելու նպատակը կ'ունենան, և որպէս զի անոնց ճանապարհը չերկարի՝ առաջնորդները զանոնք կը տանին առաւելապէս Յորդանանի այնպիսի մէկ տեղը՝ որ Մեռեալ Ծովէն նուազ հեռի ըլլայ»:

2.— Կ'արժէ գիտնալ թէ ո՞ւր չինուած էր մեր Տիրոջ մկրտուած եկեղեցին: Տիրոջ աւանդութեան մը համաձայն, նոյն եկեղեցին չինուած էր Յորդանանի անդիի կողմը, Բեթաբբայի մօտ. այս մասին Արգուլֆ եպիսկոպոս՝ որ 670ին այցելած է Յորդանան՝ ունի չահեկան տեղեկութիւններ: Յիշեալին տեղեկագրական բոլոր յուշերը նաւարեկութեան մը պատճառաւ կորսուած կ'ին. երբ Եւրոպա վերադարձաւ Սկովացի Ադամնեան վանականի մը գրի առնել տուաւ իր բոլոր յուշերը Պատմութիւն Ս. Տեղեաց խորագրին տակ (Տե'ս Orient Latin. Հար. Ա.):

Արգուլֆի նկարագրած մկրտութեան եկեղեցին կը գտնուի Copratha ի արեւմուտքը, 150 քայլ հեռի, գետին մէկ փոքր թեւին կամ ջրանցքին վրայ: Արգուլֆ հետևեալ կերպով կը յիշատակէ նոյն եկեղեցին. «Գետին եզերքին վրայ կը գտնենք քառակուսի փոքր եկեղեցի մը որ, կ'ըսեն թէ՝ չինուած է այն տեղը ուր կը պահուէին զգեստները մեր Փրկչին՝ որ մկրտուեցաւ: Այս եկեղեցին հաստատուած էր չորս սիւներու և քարէ կամարներու վրայ. բայց ջուրին վրայ ըլլալով բնակելի չէր, վասն զի ջուրերը ներքեւի կողմէն պատած էին: Կղմինտրով ծածկուած էր ան, և հիմը չինուած էր կամարակապ քարերով»: Ճամբորդները կ'ըսեն թէ այս մատուռին ատորին բոլոր մասերը մինչև այժմ կ'երևնան:

3.— Հայերը Յորդանանի եզերքը վանք կամ եկեղեցի ունէի՞ն.— պատասխանս հաստատական է, քանի որ, ինչպէս յայտնի է յիշատակարաններէն, Յոյները և Վրացիները հոս վանքեր և եկեղեցիներ հիմնած էին, որոնցմէ մի քանին գոյութիւն ունին մինչև ցայսօր: Հայերը որ Ս. Քաղաքին մէջ և շրջակաները

հոյակապ վանքերով և եկեղեցիներով ճոխացած էին և որոնց ուրացումը կարելի չէ, անտարակոյս պիտի փափաքէին վայելել Յորդանանու օրհնութիւնները: Մենք վերև յիշատակեցինք Յովհաննէս Մոսքոսի մէկ վիճաբանութիւնը որուն համաձայն կը հաստատուէր թէ Բեթաբբայի այրերուն մէջ հաստատուած էին ապաստականներ՝ և անոնցմէ մին Յովհաննէս՝ իր բնակած այրը փոխակերպած է եկեղեցիի՝ անուանելով զայն Ս. Յովհաննէս Մկրտիչ: Ինչպէս այլ ափունքին՝ նոյնպէս ձախ ափանց գետերքը զարդարուած էր այլևայլ ազգաց վանքերով և եկեղեցիներով: Մեր հին մատենագրութեան մէջ Մովսէս Կաղանկատուացի առաջին անգամ կը յիշատակէ հայկական վանք մը և եկեղեցի մը Յորդանանի գով (Տե'ս Պատմ. Աղուանից, էջ 423) «... ուր Փրկիչն վկրտեցաւ, յորում եկեղեցի սագաչհն խաչաւնական յարմարեալ՝ 80 կանգուն երկայն 80 չափ, երիվ սեղան խորհրդոյ, եւ պատարագ մատչի...». ասոնք ականատես ուխտաւորի խօսքերն են. եկեղեցին չինուած է որբանաձև, խաչանման և երեք սեղաններով: Ի՞նչպէս պէտք է ճշդենք նոյն եկեղեցւոյ չինութեան թուականը: Բազկեդոնական խլրտումներուն պատճառաւ Երուսաղէմի հայ Միաբանութեան մէկ կարևոր մասը երբ Ս. Տեղերէն ցրուեցաւ, կարևոր հատուած մ'ալ հաստատուեցաւ Յորդանանի եզերքը: Անատոլ հայազգին իր Վանօրէից Յուցակին ներածականին մասին մէջ կը գրէ. «... եւ նոցա ոչ կարացեալ համբերել՝ թողին զտեղիս իւրեանց. և ժե. վանք միայն մնացին. և կիսք ի լերին Զիրևնևաց եւ այլք ևերձ ի Բեթղեհեմ, եւ Սիւնական (Սինէական) կրօնաւորք, եւ ի յիզր սուրբ գետոյն Յորդանանու, եւ ի վերինն Փորձուբեան, յԱնապատ Փրկչին. եւ ի Թափօրական լեառն, եւ ի Հերմոն՝ հանդերձ Թափօրայ, եւ այլ ևս ի նոյն կողմանս Տիբերեական ծովուն...»: Եթէ, ըստ կաղանկատուացիին յիշատակարանին, չենք կրնար աւելի հնագոյն թուականի մը տանիլ Յորդանանու հայկական վանքը, վստահաբար պիտի ընդունինք թէ Ժ. դարու կիսուն քաղկեդոնական խնդրով ներսաղէմէն ցրուող հայ կրօնաւորները Յորդանանու եզերքը չինած պէտք է ըլլան հայկական վանք մը: Այս հայկական հաստատութեան մասին Ս. Տեղեաց արձանագրութեանց մէջ յիշատակարան չունինք և այժմ աւանդութիւնն ալ մոռցուած է: Միայն մէկ դար առաջ 1813ին Յունաց հետ տեղի ունեցած դատավարութեանց առթիւ Պոլսի

Փոխանորդ Անդրիանուպոլսեցի Պօղոս վարդապետէն (յետոյ պատրիարք Կ. Պոլսոյ և ծայրագոյն կառավարիչ Ս. Աթոռոյ) և ամիրայից կողմէն Բարձրագոյն Դրան մատուցուած յիշատակագրին մէջ Հայոց անյայտացած ու յափշտակուած վանքերու ու ստացութեանց յիշատակութեանց առթիւ հետեւեալ տողերը կը գըրուին. «... բայց հետզհետէ յայղեւայդ պատճառաց առնայի վնասուհալ, օտարաց յափշտակեալ եւ անհետ եղեալ են. որպես եւ յեզր Ծորդանանու ի տեղի ովրտութեան Տեառն մերոյ Յովհաննու կառապետին կառուցեալ վանիք մի ազգի մերում յատկացեալ աւերակն վկայէ . . .» (ձեռ. թ. 893)։ Սակէց աւելի զօրաւոր փաստ մը չի կրնար ըլլալ հաստատելու համար հայկական վանքի մը գոյութիւնը Ծորդանանու եզերքը յանուն Ս. Յովհաննու Մկրտչի, և միևնոյն ժամանակ ապացուցանելու թէ ան չինուած էր մեր Փրկչին մկրտուած տեղւոյն մօտ. վասն զի Աւետարանի, աւանդութեան և ուղևորաց՝ մասնաւորապէս Սրդուլֆի նկարագրութեան համաձայն մեր Տէրը մկրտուած էր Ծորդանանի անդիի կողմը. հետեւաբար Հայոց վանքն ու եկեղեցին ալ չինուած էին գետին ձախ ափունքին վրայ, այսինքն մօտը այն վանքին՝ որուն կրօնաւորները կը պահպանէին մկրտութեան եկեղեցին։ Հայկական վանքին բուն տեղւոյն համար յիշատակարան կը պակսի. բայց հաւանական իբր փաստ կրնանք յառաջ բերել Բրօֆ. Goussen ի 1923 ին գերմաներէն թարգմանութիւնը Ս. Տեղեաց այն ծիսարանին որուն վրայերէնը (թ. 3) կը գտնուի Բարիզի Ազգ. Մատենադարանին մէջ։ Նոյն ձեռագրին հետ (ԺՍ.–ԺԲ. դար) բաղդատուած է Երուսաղէմի Ս. Խաչ և Վրաստանի Սապերդ վանքերէն բերուած ձեռագիր Տաղարաններուն (Ժ. դար) մէջ բովանդակուած ծիսարաններու տարբերակներուն հետ։ Նոյն ծիսարանին մէջ կը կարդանք հետեւեալ հատուածը. «Ս. Յովհաննիս ի Ծորդանան. մեծ solեմնասարութիւն Յունվար 6ին, միևչ ըստ Սապկերդի օրինակին, Յունվար 6ին մեկ շաբաթ առաջ մեծ soն կը կատարուի գետին անդիի կողմը (Սափսա, Քարրար օժանդակ գետին վրայ), միեւնոյն ծիսարանը Ս. Յովհաննու solեմնասարութիւն ցոյց կուտայ 3 եւ 7 Յունվարին Տիբերեական Լճին ափանց վրայ» (Տե՛ս R. B. 1924, էջ 611–623)։ Երուսաղէմի ծիսարանի այս հատուածը մեզ խորհրդածել կուտայ թէ Դեկտ. 25 ին Ծննդեան տօնը կատարող եկեղեցիները Յունվար 6 ին Ծորդանանի մէջ կը կատարեն Աստուածայայտ-

նութեան տօնին հետ Ս. Յովհաննու տօնը, ինչպէս նաև մինչև այսօր Յոյները, Ղպտիները, Ասորիները և Հապէշները Յունվար 6 ին Յորդանան կ'երթան նոյն տօները կատարելու համար։ Հայերը Յունվար 6 ին Ծնունդը կը կատարեն Բեթղեհէմի մէջ և հետեւաբար Յունվար 6 ին Յորդանան չեն երթար, այլ պէտք է երթային կա՛մ Ծնունդէն առաջ կա՛մ վերջը։ Սրդ, երբ Դեկտ. 25 ին Ծնունդ կատարողները Յունվար 6 ին Աստուածայայտնութիւն և Ս. Յովհաննու տօնը կը կատարեն Յորդանանի եզերքը, որո՞նք են որ նոյն օրը Ծնունդ կատարելով Բեթղեհեմի մէջ Յորդանան չեն կրնար երթալ. պատասխանը որոշ է՝ Հայերն են անոնք, որոնք փոխանակ Յունվար 6 ին՝ մէկ շաբաթ առաջ կը կատարէին նոյն տօները Յորդանանի անդիի կողմ ի Սափսա, Քարրարի օժանդակին վրայ։ 1316 ին Երուսաղէմի Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ Ստեփանոս երկայն գրիչը Երուսաղէմի պատրիարք Դաւիթ եպիսկոպոսի համար կ'ընդօրինակէ ձաշոց մը (թ. 271) որ ունի զանազան Տաղեր ալ հին խազերով։ Ձեռագրիս յիշատակարանին նայելով՝ երբ Մխիթարեանները Աստուածայայտնութեան տօնին Յորդանան կ'երթար՝ կամ ուրիշ Ս. Տեղերը՝ պաշտամունքի համար կը հետեւէր այս տաղարանին. չգիտենալու համար հոս կը դնենք նոյն յիշատակարանին ընդօրինակութիւնը.

«Ով սուրբ եղանակողք զմեղաւք գատապարտեալ աշխատողիկս Ստեփանոս յիշեցէք յեզր սբ. Յորդանան գետոյ մլով տր. ողորմեայիւ աղաչեմ». «. . . վասն այնորիկ գրեցի զայլ աւելի կարդացմունքդ եւ զգանձերդ եւ զտաղերդ զի յորժամ պատահեսցին ի տնաւրինական սբ. տեղիսն Քրիստոսի, ի Բեթղահէմ, ի Յորդանան, ի Համբարձումն, ի սբ. Վերնատունն, ի Յաչելուքիւնն, ի Գեթսեմանի, ի Փոխումն Տիրամաւրն առ ձեռն պատրաստ գտցին զամենայն աւուր պատչաճ լիով ի սմա առանց աչխատանաց»։ Երուսաղէմի մէջ տօնին օրէն առաջ ոեւէ տօնակատարութիւն անսովոր չէ. ուխտաւորական կեանքի պահանջ էր ան, ինչպէս մինչև այժմ Զատկի տօնէն առաջ Համբարձման տօն կը կատարենք Տնտեսին Կիւրակէին՝ Զիթենեաց լերան վրայ։ Նման պայմաններու տակ թերևս վերոյիշեալ տօնը Յունվար 3ին եւ 7ին ալ կը կատարուէր Տիբերեական ծովուն չուրջը չինուած վանքերու մէջ՝ ուխտաւորաց համար։ Այս տողերը գրեցինք Յորդանանու մեր հայկական վանքին իսկական տեղը ճշդելու հա-

մար. վերեւ պարզուած տօնակատարութեան մը տարբեր ժամանակի մէջ գործադրուելուն հետեւանքով հաւանական կը նկատենք որ Սափսայի Ս. Յովհաննու նախնական եկեղեցին Հայոց յատկացուած էր իրը վանք, և այն աւերակը որուն Հայերը 1813ին կ'ակնարկեն Բ. Դրան մատուցած իրենց յիշատակագրին մէջ՝ Սափսայի վանքին տեղւոյն աւելի կը յարմարի վերեւ մէջ բերուած տուիքներուն համաձայն։

Սափսան կը գտնուի, Մատապայի ծանօթ մոզայիք քարտէսին համաձայն, Յորդանանի անդիի կողմը, Քարբար օժանդակին վրայ։ Սափսան ճիշդ դիմացն է Յունաց Յովհաննու վանքին և քովը ունի Քորբատայի վանքը զոր վերև յիշեցինք։ 1902 ին Երուսաղէմի Ս. Աննայի վանքին մեծաւորը Հ. Ֆէտէրլէն աշակերտներով հնախօսական շրջագայութիւն մը կատարած է Սափսա և մերձակայ տեղերը։ Սափսայի գետնին վրայ գտած է աւերակները, վանքին կարծր քարէ սեմին երկու մասերը, երկու կողմերով ծակեր բացուած, մոզայիքի կտորներ, բիւզանդական ժանդոտած երկու ղրամներ, 800–1000 քառակուսի մէթր տարածութեան մը վրայ չէնքերու հետքեր, և այլն։ Ցիշեալը կը յարէ թէ՝ եթէ պեղումներ կատարուին կարելի է հանել վանքին յատակագիծը, (Տե՛ս La Terre Sainte, 1902)։ Ուրիշ մէկ պատմնագէտ մ'ալ, Barnabé Meistermann, կը գրէ թէ Սափսայի աւերակները յայտնապէս կ'ապացուցանեն կաղանկայտուացիին մէջ յիշատակուած Հայոց Ս. Յովհաննէս Մկրտչի վանքին գոյութիւնը (Nonveau Guide de la Terre Sainte, էջ 275)։

Այս և ուրիշ աւերակներու մէջ կատարուած պեղումները և հետազօտութիւնները անտարակոյս երևան պիտի բերեն յիշատակարաններ՝ որ առաւելապէս պիտի հաստատեն այս վանքերուն ազգային հանգամանքը, բացատրելով պատմութեան անորոշ մնացած կէտերը և պարզելով մոռցուած անցեալը՝ որուն մէջ աւա՛ղ, շատ արժէքներ անյայտ կը մնան։

ԼԷ

Ս. ՋԱՔԱՐԻԱՅԻ ՎԱՆՔԸ ՆԱԶԱՐԷԹԻ ՄՕՏ

(«յարտեան լերինն.» Ղուկ. Դ. 29).

1.— Հին կտակարանը և Յովսեպոս Նազարէթի վրայ տեղեկութիւն մը չեն տար. միայն Նոր Կտակարանի Աւետարանները հարևանցի տեղեկութիւններով կը ծանօթացնեն Գալիլիոյ սոյն քաղաքը։ Նազարէթ նշանաւոր հանդիսացաւ աւետումովը հրեշտակին առ Ս. Կոյսն՝ որուն հաղորդեց Քրիստոսի Մարդեղութեան և Փրկագործութեան մեծ խորհուրդները. անտարակոյս այս աւետարանական դէպքը աննշմար չպիտի մնար հին քրիստոնէից մօտ։ Ուղղակի Նազարէթէն մեկնեցաւ Ս. Կոյսը իր խօսնեցեալին հետ գալու Բեթղեհէմ, Դաւթի քաղաքը, ուր ծնաւ Յիսուս՝ մեր Տէրը։ Տիրոջ քառասնօրեայ տաճարի ընծայումէն և Եգիպտոսի պանդխտութենէն յետոյ Յիսուս Նազարէթ կը մեկնի իր ծնողաց հետ. հոն էր որ աճեցաւ և զօրացաւ լի իմաստութեամբ «և շնորհք Աստուծոյ էին ի վերայ նորա»։ Անոր ծնողքը ամէն տարի Զատկի օրը Երուսաղէմ կ'երթային։ Յիսուս տասներկու տարեկան էր երբ անոնք, ըստ սովորութեան տօնին, Երուսաղէմ գացին և ուխտերնին կատարելով դարձան։ Յիսուս հոն կը մնար, բայց չէին գիտեր իր ծնողքը և կը կարծէին թէ ուղեկիցներուն հետ կը գտնուէր. մէկ օրուան ճամբայ եկան ու տեսան որ Յիսուս ուղեկիցներուն հետ չէր գտնուեր, ետ դարձան Երուսաղէմ ուր գտան պատանի Յիսուսը տաճարին մէջ։ Ան վարդապետներուն հետ կը խօսէր որոնք կը զարմանային Անոր իմաստութեան և տուած պատասխաններուն վրայ։ Յիսուս՝ ծնողքին հետ միանալով դնաց Նազարէթ «և էր նոցա հնազանդ»։ Ան հոն կը զարգանար իմաստութեամբ և հասակաւ «և շնորհօք յԱստուծոյ և ի մարդկանէ»։ Մեր Փրկիչը կը

թեւակոխէ երեսուն տարեկանին՝ Նազարէթէն կու գայ Յորդանան՝ ուր կը մկրտուի Յովհաննէս Մկրտչէն, և «նոյն ժամայն Հոգին հանէ զնա յանապատ»։ Տէրը Բառասնօրեայ փորձութենէն յետոյ, դեռ Գալիլիա չվերադարձած՝ կ'ընտրէ իրեն աշակերտները՝ որոնք պիտի ըլլային իր Աւետարանին քարոզիչները. ընտրեալներէն մին՝ Փիլիպպոս՝ Նաթանայէլը կը գտնէ ու կ'ըսէ անոր թէ՝ Անիկա՝ որուն համար գրած էին Օրէնքը ու Մարգարէք, գտանք — Նազարէթցի Յովսէփի որդին Յիսուսը. Նաթանայէլ կ'ըսէ. «իսկ ի Նազարէթէ մարթ ի՞նչ իցէ բարւոյ իմիք լինիլ»։ Այս խօսքը ակնարկութիւն մ'է Նազարէթի աննշան վիճակին կամ տեղացիներու անոպայ վարուց և կամ ուրիշ պատճառի մը՝ որուն վրայ լռութիւն կը պահէ Աւետարանը։ Նաթանայէլ ի վերջոյ կը հետեւի Յիսուսի։ Յիսուս կ'ուզէր քարոզել եւ գործել նաև իր ծննդավայրին՝ Նազարէթի մէջ, բայց իր հայրենակիցները, ինչպէս Նաթանայէլի խօսքերէն ալ կը հասկցուի, և Յիսուսի անձին նկատմամբ Նազարէթի ժողովրդեան կողմէն կատարուած մէկ արարքն ալ ապացոյց է ատոր, արժանի չէին Անոր քարոզութեան և հրաշքներուն։ Այդ պատճառաւ կ'ըսէ Աւետարանը Յիսուսի համար թէ «զարմանայր վասն անհաւատութեան նոցա»։ Մեր Տէրը կը շարունակէր իր քարոզութիւնները Գալիլիոյ ամէն կողմերը և կը փառաբանուէր ամենուն կողմէն։ Եկաւ Նազարէթ «ուր անհալն էր»։ Տեղւոյն ժողովարանին մէջ Եսայի Մարգարէին մէկ հատուածը կը բանայ ու կը բացատրէ Նազարէթցիներուն, որ կը զարմանային Անոր իմաստութեան և կը վկայէին անոր չնորհաց խօսքերուն։ Բայց Յիսուս հոն հրաշք չի գործեր, վասն զի արժանի չէին, անհաւատներ էին և թէ «չէ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում»։ Կոչումներ կ'ընէ կեանքէն եղիա և եղիսէ մարգարէներուն՝ որոնք Իսրայելի անարժանութեան համար Աստուծոյ գթութեան տուրքը չնորհեցին Սարեփթացի այրի կնոջ և ասորի Նէեմանին։ Մարգարէից այս չընորհընկալները օտարներ էին, բայց կ'արժանաւորէին նիւթական պարգևներու և բարոյական չնորհաց. Յիսուս Նազարէթի մէջ այս վճռական քարոզութեամբ հասկցուց թէ Աստուած կը կոչէ արժանաւորները առանց ազգի խտրութեան և իր չնորհը պիտի ծաւալէր առ հասարակ բոլոր մարդոց, և իր Աւետարանը պիտի քարոզուէր բոլոր տիեզերքի մէջ և բոլոր ազգերը պիտի

կոչուէին երկնից արքայութեան. այս խօսքերէն զայրացան Նազարէթցիները «և յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչև յարտեան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր, զահավէժ առնել զնա։ Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր»։ Իր գաւառին անունով Յիսուս կը կոչուէր «Նազարէթի Մարգարէն» և կը յորջորջէին զԱնիկա «Նազովրեցի» և Փրկչին խաչելութեան տախտակին վրայ Պիղատոս գրեց «Յիսուս Նազովրեցի՝ Թագաւոր Հրէից»։ Աւետարանական այս պատմուածքներէն կը հասկցուի որ մեր Տէրը երեսուն տարի Նազարէթի մէջ տպրած, անուն ու աճած էր իմաստութեամբ և՝ հասակաւ, և անկէ սկսաւ իր քարոզութիւնները։ Նազարէթ քաղաքին Յիսուսի կեանքին և Մարդեղութեան խորհուրդին հետ այս սերտ կապակցութիւնը քրիստոնեաներուն ներշնչած էր բարեպաշտական զգացումներ՝ որոնցմով անոնք փափաքած են յաւերժացնել Յիսուսի յիշատակները նոյն քաղաքին մէջ՝ հաստատութիւնով զանազան յիշատակարաններու՝ որոնք գարէ գար մերթ պայծառ ու չքեղ և մերթ յարձակումներու հետևանքով անչուք կամ աւերեալ կը մնային, ինչպէս ցոյց կու տայ պատմութիւնը։ Քրիստոսի տնօրինական գործերը առաւելապէս տեղի ունեցան երեք քաղաքներու մէջ, որոնք են Երուսաղէմ, Բեթղեհէմ և Նազարէթ։ Վերջինս հակառակ իր տեղագրական ու պատմական անչքութեան և Քրիստոսի քարոզութեան առթիւ տեղւոյն ժողովրդեան դաժան վարմունքին՝ եղաւ, ըստ Ցերոնիմոսի, «Գալիլիոյ ծաղիկը» ինչպէս կը գրէ ան իր նամակներէն միոյն մէջ։ Ուրիշ լատին մատենագիր մը Նազարէթ անունին նըկատմամբ ունի գեղեցիկ պատկերաւոր խօսք մը. «ինչպէս որ, կ'ըսէ, վարդը գինքը չրջապատող ծաղիկներով կը գեղեցկանայ, նոյնպէս Նազարէթը վարդի մը կլորակ ձևը ունենալով կարծես թէ չրջապատող և գինքը զարդարող լեռները կը թուին ըլլալ վարդին տերևները»։

Նազարէթի նկատմամբ Աւետարանի այս պատմուածքներէն վերջ, թէև մեր նիւթէն դուրս, բայց պատմական կարևորութեան և չահեկանութեան համար կ'ուզենք հակիրճ տողերով նկարագրել բուն իսկ քաղաքին ընդհանուր քրիստոնէութեան վերաբերեալ մեծ սրբավայրերը, յետոյ պատմագրել քաղաքէն դուրս չատ կանուխէն Գահավիժման լերան գագաթը չինուած հայոց վանքը։

2.— Առաջին եկեղեցին որ չինուած է Նազարէթի մէջ Ա-
ւետման եկեղեցին է՝ կառուցուած Ս. Աստուածածնի տան տեղւոյն վը-
րայ: Եպիփան երբ Տիբերիացի Կոմս Ցովսեպոսի վրայ տեղեկու-
թիւն կու տայ, հետևեալ կերպով կը գրէ. «ան կայսերական հը-
րաման մը ընդունեց Հրէից քաղաքներու և աւաններու մէջ ե-
կեղեցիներ չինելու: Ոչ մէկը կրնար եկեղեցի չինել նոյն տեղերը,
վասն զի անոնց մէջ չէին գտնուեր ո՛չ յոյն, ո՛չ սամարացի և ո՛չ
ալ քրիստոնեայ. մանաւանդ Տիբերիայի, Դիոկեսարիոյ՝ որ է Սե-
ֆորիս, Նազարէթի և Կափառնաումի մէջ ուրիշ ազգէ մէկը չկար
(Patr. Gr. Հար. ԽԱ.)»: Որչափ որ, ըստ Եպիփանեի, Հրեայք Նա-
զարէթի և յիշեալ քաղաքներուն մէջ բազմաթիւ էին և քրիս-
տոնեայք չէին կրնար հոն բնակիլ, բայց սա չի նշանակեր թէ
վերջիններս բոլորովին յարաբերութենէ դադրած էին, ընդհակա-
ռակն անոնք կ'այցելէին Նազարէթի տնօրինական տեղերը և կը
պահպանէին զանոնք: Որքան որ դժուարութիւններ ըլլային Հը-
րէից կողմէն՝ այսու հանդերձ 359ին Կոմս Ցովսեպոս յաջողած էր
պետական օգնութեամբ կառուցանել Նազարէթի եկեղեցին, ինչ-
պէս Սկիւթուպոլսի մէջ ան պատմած էր Եպիփանին: Նազարէթի
եկեղեցիներու մասին պիտի տանք միայն քանի մը վկայութիւն-
ներ: 670ին Արգուլֆ եպիսկոպոս Նազարէթ այցելած էր և ծա-
նօթագրած էր թէ «Նազարէթ քաղաքը կափառնաումի նման
պարիսպ չունէր, չինուած էր լերան մը վրայ: Սակայն ունէր
քարաշէն մեծ չէնքեր. հոն կը գտնուին երկու մեծ եկեղեցիներ,
մին քաղաքին մէջ, որ կը կենար երկու կամարներու վրայ, և
ուր երբեմն կը գտնուէր այն տունը որուն մէջ մեր Փրկիչը ապ-
րեցաւ: Այս եկեղեցին կամարներով միացած սիւներու վրայ կը
կենար, իր ստորին մասին մէջ նոյն սիւներուն տակ կը գտնուէր
ականակիտ աղբիւր մը, բոլոր ժողովուրդը հոս կը յաճախէ ջուր
առնելու համար: Միւս եկեղեցին չինուած է այն տան տեղւոյն
վրայ որուն մէջ Գաբրիէլ հրեշտակապետը միայնակ գտաւ Ս.
Կոյսը և անոր տուաւ աւետիսը»: Միևնոյն վկայութիւնը կը կըրկ-
նեն 720ին Պիտա, և 1137ին Թասսին լերան Պետրոս վանականը:
Տիւրացի Կիլեոմ կը գրէ թէ «Թանկրէտ Գալիլիոյ իշխան կար-
գուելով՝ մեծ խնամքով հիմնարկեց այս գաւառին եկեղեցիները
և օժտեց զանոնք մեծամեծ կալուածներով, մասնաւորապէս Նա-
զարէթի և Թաբորի եկեղեցիները» (Տե՛ս Recueil des Historiens des

Croisades. Occident, Հար. Ա. էջ 384): Պատմիչին այս խօսքին հիմնարկել բացատրութիւնը պէտք է հասկնալ ոչ միայն նորոգել, այլ ամբողջութեամբ վերաշինել: Անկլօ-Սաքսոն Sœwulf՝ որ 1102 ին Ցոպպէ հասած է, յստակօրէն կը գրէ թէ «Նազարէթ քաղա-քը Սարակինոսներու կողմէն ամբողջութեամբ քանդուած է, սա-կայն խիստ գեղեցիկ վանք մը ցոյց կու տայ աւետման տեղը» (Recueil des voyages et des mémoires publiés par la Société de Géographie. 1839. Հար. Դ. էջ 550): Ռուսազգի Դանիէլ վանական 1106-1107ին կը գրէ (Գլ. 89) իր այցելութիւնը հետևեալ կեր-պով. «Նազարէթ փոքր աւան մ'է լեռներէ չրջապատուած. ե-րեք սեղաններով բարձր և մեծ եկեղեցի մը կը բարձրանայ ա-ւանին մէջ. հոն մանելով՝ ձախին կը տեսնուի փոքր սեղանի մը առջեւ խորունկ այր մը, որ ունի երկու նեղ դռներ. մին՝ արեւելք եւ միւսն՝ արեւմուտք, որ կը տանին այրը. արեւ-մտեան դռնէն մտնողը աջին կը տեսնէ խուց մը որուն մուտքը փոքր է և հոն կ'ապրէր Ս. Կոյսը Ցիսուսի հետ: Նոյն նուիրա-կան խուցը կը պարունակէ այն մահիճը՝ որուն վրայ Ցիսուս կը հանգչէր. խուցը գրեթէ հողին հաւասար էր»: «Նոյն այրին մէջ, արևմտեան դռնէն մտած ժամանակ, ձախէն կը տեսնուի գերեզ-մանը Ս. Ցովսէփի: Ս. Կոյսին խօսեցեալը հոն թաղուած է նոյն իսկ Ցիսուս Քրիստոսի ձեռքով» (Գլ. 90): Ցիշեալը 91, 92 և 93 գլուխներու մէջ կու տայ ուրիշ երկրորդական ծանօթութիւններ: Ցար և նման ծանօթութիւններ կու տան 1172ին Թէոտորիք, 1177 ին յոյն Ցովհաննէս Փոկաս: 1187ին Երուսաղէմ Սալահէտտինի ձեռքով գրաւուեցաւ և Ցաչակիրները վտարուեցան Պազեստինէն. բայց ծովեզերեայ քանի մը տեղեր պահպանեցին, մասնաւորա-պէս Ակքեան՝ որ մինչև 1291 քրիստոնէութեան մեծ ամրու-թիւնը եղաւ: Անոնք քանիցս յաջողեցան Գալիլիոյ զանազան կողմերը այցելել, և 1229ին փետր. 20ի դաշնագրութիւնը իրենց ապահովեց Նազարէթի ճանապարհը: Նոյն թուականէն քիչ վերջ 1252ին Ս. Լուդովիկոս այցելեց Նազարէթ և Թաբոր լեռը: 1263 ին Եգիպտոսի Սուլթան Պիպարս Պինդոքտար յարձակելէ յետոյ Ակքեայի վայ, Պէյսան եկաւ և անկէ արշաւախումբ մը ղրկեց Նազարէթ և Թաբոր լեռը, եկեղեցիները և վանքերը քանդելու համար: Պիպարս ո՛ևէ քրիստոնէական չէնք կանգուն չձգեց և ամէնքն ալ հողի հաւասար ըրաւ: Նազարէթի սրբավայրերը դա-

բերով մնացին աւերակ վիճակի մէջ. հոն յաճախող ուխտաւորները ամէնքն ալ սրտի ճմլումով մը կը նկարագրեն տիրող տըխուր վիճակը: 1620ին էր որ Ֆրանչիսկեանք էմիր Ֆախր-էտ-Տինէն գնեցին աւերակ գետինները և 1889ին տեղւոյն տեսուչ Prosper Viaud ի ձեռքով պեղումներ և հետազօտութիւններ կատարուեցան նոյն աւերակներուն մէջ. երեան եկած են կիսաքանդ պատերն ու հիմերը, ինչպէս նաև շինուածքին մնացորդները որոնք կ'ապացուցանէին Նազարէթի սրբավայրերուն կառուցուածքը: Վանքին ընդարձակութիւնը և Աչակերաց թուականին հոյակապօրէն կատարուած նորոգութիւնները, որոնցմէ կը հասկցուի թէ արևմտեան քանդակագործութիւնը մեծ չափով գործադրուած է սրբավայրերու կամարներուն, սիւներուն և ամբողջ շինուածքին տարածութեան վրայ, տեղական արուեստէն դուրս, Աչակիր վարպետներու ճարտարութիւնը կը փայլեցնէին պեղումներէն դուրս բերուած քանդակազարդ բեկորներուն մէջ: Անակնկալօրէն պեղումներէն դուրս եկած պատկերաքանդակ ու զարդաթուն հինգ խոյակները քանդակագործութեան պատմութեան հայելիները են՝ որոնց մէջ կը տեսնուին արևմտեան արուեստին ներքութիւնը, ճաշակն ու զարգացումը. հինգ խոյակներէն մին աւելի մեծ էր քան միւսները, որոնք ուղթանկիւնային են. երեքին քանդակները կը պատկերացնեն Փրկչին ու առաքելոց մասին Սուետարանէն և Գործք Առաքելոցէն քաղուած դրուագները, իսկ միւս երկուքը ցոյց կուտան Յակոբոս Զեբեդեան և Մատթէոս առաքելոց նահատակութիւնները, որոնց քանդակները ճարտարօրէն շինուած են անվաւեր վկայաբանութիւններու հիման վրայ: (Տե՛ս Prosper Viaud ի "Nazareth et ses deux Eglises» գիրքը:)

3. Հիմակ պիտի նկարագրենք Ս. Զաքարիայի հայոց վանքը որ շինուած էր Նազարէթի մօտ գտնուած լերան գագաթը՝ ուրկէ Նազարէթցիները ուզեցին գահավիժել մեր Տէրը: Սուետարանիչը լերան գագաթը կը հասկցնէ «արտեան լերին» բառերով. չի գիտցուիր ինչ պատճառով մեր մատենագրութեան ամէնէն հեղինակաւոր դէմքերէն Զամարիա Կարուղիկոս (Թ. դար), Մագիստրոս Իշխան (ԺՍ. դար), Իգնատիոս Մեկնիչ (ԺԲ. դար) արտեան բառը յատուկ անուն կ'իմանան, ինչպէս կ'երևի իրենց գրուածքներէն: Միայն Վարդան Վարդապետ (ԺԳ. դար) չիտակ կը հաս-

կնայ ու կը գրէ «հանին զնա յարտեան լերինն, այսինքն ի գլուխ լերինն, յարարն» (Սիոն. 1928. էջ 12): Նազարէթի սրբավայրերու մասին ոչ մի յիշատակութիւն չունինք մեր նախնեաց մօտ: Մատթէոս Ուռհայեցին (էջ 23-27) մէջ կը բերէ հայազգի Յովհաննէս Զմշկիկ կայսեր (969-976) առ Աչոտ Գ. Ողորմած գրած նամակը՝ որուն մէջ (էջ 27) Զմշկիկ ի մէջ այլոց կը պատմէ թէ իր արշաւանաց ժամանակ գացած է Նազարէթ. «ուր զաւետիսն իսկ ի հրեշտակէն լուաւ Աստուածածին Սուրբ Կոյսն Մարիամ»: Տարակոյս չկայ թէ ի հնումն հայ ուխտաւորները այցելած էին նաև Նազարէթ: Այսպէս այցելած է Վարդան վարդապետ Մաթաթացին ԺԲ. դարուն, և հոն իր աղօթքներէն մին յօրինած է, ըստ խնդրանաց Ս. Յակոբայ վանքին մէկ վանականին: Նազարէթի աւերակներուն մէջ կը տեսնուին նաև երկու հայ անուններ՝ մին Յակոբ, խոշոր սիւնի մը անկիւններէն միոյն վրայ քանդակուած թանձր ու հաստ գրերով. միւսն՝ որ անընթեռնլի է՝ կը տեսնուի եկեղեցիին գաւթին հարաւային պատին ապուշուած քարի մը վրայ: Նոյն անուան գրերը մինաստաւի գրերու նման իրարու կապուած են: «Յարտեան լերինն» կառուցուած Ս. Զաքարիա անուն հայ վանքի նկատմամբ ալ ոչ մի հայկական յիշատակութիւն չունինք դժբախտաբար. բայց մենք ըստ կարելւոյն պիտի ջանանք օտար աղբիւրներով հաստատել նոյն հայկական վանքին գոյութիւնը:

Գահավիժման լեռը՝ տեղական աւանդութեան մը համաձայն, Նազարէթէն դէպի հարաւ քառասուն վայրկեան հեռի կը գտնուի. նոյն լերան գագաթը ժայռի մէջ փորուած եկեղեցիի փոքր կոզակ մը կ'երևայ, հոն կան նաև հիմեր, մոզայիքներ և ջրհորներ, անտարակոյս սուրբ վաղեմի վանքի մը մնացորդներն են: Տեղւոյն հայոց Ս. Զաքարիայի վանքը ունի պատմական երկու յիշատակարաններ. մին՝ անանուն լատին ուխտաւորի մը յիշատակութիւնը՝ իր 1231ին գրի առած Pelerinages por aler en Iherusalem հին ֆրանսերէն լեզուով Ուղեգրութեան մէջ, որուն թարգմանութիւնն է հետևեալը. «Նազարեթեն դէպի գահավիժման լեռը մէկ մղոն է. լերան վերի մասնապարհին վրայ կը գտնուի Ս. Զաքարիա անուամբ սուրբ մը որ Հայոց կը վերաբերի եւ շատ գեղեցիկ տեղ մ'է» (Հրատարակիչք՝ H. Michelant et G. Raymond, Itinéraires à Jérusalem. Genéve, 1882, էջ 100): Միւս աղբիւրն է Ս. Տեղ-

եաց արաբերէն նկարագրութիւն մը Ժ. դարուն, վերլնէն բռ-
լորովին անկախ. անոր մէջ կը յիշատակուի արաբերէն ձեւիկը
հլ-Ռաֆղե բառը, որ կը նշանակէ Գահավիժման լեռ: Նկարագրու-
թեան հեղինակը կը գրէ թէ նոյն լերան վրայ կը գտնուի հայկական
վանք մը. այս տեղեկութիւնը խիստ համաձայն է Ժ. դարու
լատին ուղեգիրներուս, մասնաւորապէս վերև յիշուած լատին
Ուղեգրութեան: Այս վերջին յիշատակարանը կը քաղենք ծանօթ
հնախօս Clermont Ganneau ի Archéologie Orientale ըսուած գործէն
(Ա. Հար. էջ 340): Նոյն հաւաքածոյին հեղինակը կը գրէ թէ
ձեռագիրը իր մօտն է և անտիպ, ու կը խոստանայ տպագրել,
և կը յարէ թէ հաւանաբար այս վանքին ու եկեղեցիին կը վե-
րաբերէին լերան վրայ տեսնուած ու ժայռի մէջ փորուած կո-
զակը, հիմերը, մոզայիքները, ջրհորները եայլն: Այս վանքին
աւերակները կը տեսնուէին մինչև 1882 թուականը, որմէ վերջ
Ցրանչիսկեանք տիրանալով նոյն տեղւոյն չինած են Ս. Կուսի
անուամբ մատուռ մը: Ան կը չարունակէ գրելով թէ հաւանա-
կան է որ այս վանքը կապակցութիւն մ'ունէնար այն Ս. Աստ-
ուածածնի եկեղեցիին ու վանքին՝ որուն տասներկու վանական-
ները կը յիշուին 808ին գրի առնուած "Commemoratorium de Ca-
sis Dei» խորագրով լատին յիշատակարանին մէջ (Tobler, Des-
criptiones Terrae Sanctae, էջ 81): Նոյն տեղը աւելի որոշ կը յիշ-
ուի Ժբ. դարուն Յովհաննէս Վըրզպուրկցիէն որ Գահավիժման
լեռը ցոյց կու տայ մէկ մղոն Նազարէթէն դէպի հարաւ: Ganneau ի
այս բացատրութիւններէն Ս. Զաքարիա վանքին թուականն ալ
կրնայ ճշդուած նկատուիլ. որով ըսել է թէ ան արդէն Թ. դա-
րու սկիզբէն գոյութիւն ունէր: Նոյն լերան գագաթը և ճանա-
պարհին վրայ ուրիշներ ալ, ինչպէս լատինք յոյնք և հապէշք,
վանքեր ունէին և ունին այսօր ալ: Ի հնումն հոն կար նաև
վանք մը Տէր հլ Պհնաթ ըսուած, որ կը նշանակէ կուսանաց: Հայ
բարեպաշտութիւնը անտարակոյս ետ չպիտի մնար իր սեպհական
վանքը ունենալէ նոյն լերան վրայ:

Բայց կը տարուինք հարցնել թէ Գահավիժման լերան աւե-
տարանական պատմուածքին նշանակութիւնը յայտնի ըլլալով՝
ի՛նչ պատճառներէ մղեալ Հայք իրենց հիմնարկած վանքը ան-
ուանակոչեր են Ս. Զաքարիայի վրայ: Այս հարցման պատասխա-
նը կու տայ մեզ Ernoul լատին քրոնիկագիրը (Ժբ. դար) որ իր

ժամանակագրութեան մէջ կը գրէ թէ տեղւոյն քրիստոնէից մէջ
աւանդութիւն կայ որ Ս. Կոյսը Զաքարիայի տան մէջ նոյն կող-
մերը այցելած է եղիսաբեթի: Ուրեմն այդ տեղական աւանդու-
թեան վրայ յենլով է որ Հայք Ս. Զաքարիայի վանքը կառուց-
ած են Նազարէթի մօտը՝ յարեւելս լերինն: Անտարակոյս այս
տեղական աւանդութիւն մ'է որը կը տարբերի Աւետարանի պատ-
մութենէն (Ղուկ. Բ. 39) և որուն համաձայն կը հասկցուի թէ՝
Ս. Կոյսը եղիսաբեթը ողջունելու համար Նազարէթէն կը մեկնի
«լեռնակողմ ի քաղաքն Յուդայ»: Իգնատիոս՝ Ղուկասու մեկնիչը և
չատերը «քաղաքն Յուդայ» ըսելով կը հասկնան Երուսաղէմի մօ-
տիկ Այնքարիմ ըսուած տեղը, ուր նմանապէս Հայեր կառուցած
են փառաւոր վանք ու եկեղեցի (Տե՛ս Այնքարիմ գիւղի Հայոց
վանքը ու եկեղեցին, էջ 30–46): Փա՜ռք մեր նախնիքներուն՝ որ
բարեպաշտօրէն կը յարգէին աւետարանական բոլոր աւանդու-
թիւնները և կը յայտնէին իրենց սէրը և կը կոթողէին իրենց
հաւատքը տիրանուէր յիշատակարաններով:

ԼԸ

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԳԱՒԻԹԸ

Ս. Յարութեան գաւիթին մէջ Ղպտոց Ս. Միքայէլ եկեղե-
ցիին դրան ուղղութեամբ 6 կամ 7 մէթր դէպի հարաւ՝ գաւի-
թին արեւելեան կողմ՝ Հայոց սեպհական Ս. Յովհաննու Աւետա-
րանչի մատուռը կայ երեք սեղանով. աւագ սեղանն է յանուն
Ս. Յովհաննու Աւետարանչին, աջակողմինը՝ Զարչարանաց և Կա-
պանաց Քրիստոսի, ձախակողմինը՝ յանուն Հօրն Աբրահամու և
Ղեւոնտի Իսահակայ: Աջակողմեան փոքր սեղանին մէջ կը գըտ-

նուի Զարչարանաց սիւնին մէկ կտորը՝ որուն վրայ Յիսուսը կա-
պեցին Կայիափայի տան մէջ, և զոր հաւատացեալք կը համբու-
րեն ի յիշատակ չարչարանաց Քրիստոսի:

Աւանդութիւն է թէ Քրիստոսի չարչարանաց և խաչելու-
թեան ժամանակ այս մատրան տեղւոյն վրայ կը կենար Ս. Յով-
հաննէս Աւետարանիչը, երբեմն միայնակ և երբեմն ալ Ս. Կու-
սին հետ. և Քրիստոս խաչին վրայէն իր մօրը ըսաւ. «Կին դու՝
ահա որդի քո: Ապա ասէ ցաշակերտն, ահա մայր քո» (Յովհ.
ԺԹ. 26-27): Այս եկեղեցիին երկայնութիւնն է արևելքէն արև-
մուտք 11 ոտնաչափ, և լայնութիւնը՝ հիւսիսէն հարաւ՝ 28:

Ս. Յովհաննէս Աւետարանչի այս եկեղեցին կը յիշատակուի
Սալահէտտինի կողմէ Հայոց տրուած հրովարտակին մէջ (Տե՛ս
Սաւալանեանց Պատմ. Երուսաղէմի. Ս. Հար. էջ 410), որով եւ
Խաչակրաց ժամանակ և ալ աւելի կանուխէն կը պատկաներ Հա-
յոց: Մեր այս կարծիքին ապացոյցը սա է որ Անաստաս վրդ. իր
Ցուցակին մէջ կը յիշէ այս եկեղեցին, իբր վանք, «Ս. Յովհան-
նու վանքն ի դրանն Ցարութեան» խօսքերով. երեք բառերով ալ կը
հասկցնէ այն ոտնձգութիւնը, զոր Վրացիները նոյն թուականին
սկսած էին կատարել հայկական սրբավայրերու մէջ: Հանդէպ
պատմութեան համաձայն (էջ 216), 1631ին Փրիփոր Պարոնտեր
պատրիարք մեծ նեղութեամբ և աշխատութեամբ և յատուկ հր-
րովարտակով չինած է այս եկեղեցիին կամարները, և դարձեալ
նոյն պատմիչը կը յարէ՝ թէ «Առաջի դրան սրբոյ եկեղեցւոյս՝
այլազգիքն այրեալ են զոմն վկայեալ վասն ի Քրիստոս հաւա-
տոյն, և տակաւին երևի հետ ոտիցն որ տպեցաւ ի վերայ քա-
րանց ի նշան հրաշից. ոմանք ասեն վասն Բագոսի որ թաղեցաւ
ի Սիոն»:

Այս եկեղեցիին վերաբերութեամբ Հայք հետևեալ վէճը կ'ու-
նենան Յունաց հետ. Յոյները կը ձեռնարկեն նորոգել իրենց Հայր
Աբրահամու վանքը՝ որ նախագոյն Հապէշաց սեպհականութիւնն
էր և սահմանակից Ս. Յովհաննէս Աւետարանչի Հայոց եկեղեցի-
ին: Այս նորոգութեան ժամանակ կը քակեն Ս. Յովհաննէս Հա-
յոց եկեղեցիին տանիքը և վերջնոյս քարերն ալ կը վերցնեն՝
իրենց տանիքին հաւասարցնելու համար զայն. վասն զի Ս. Յով-
հաննու տանիքը մէկ կանգունի չափ բարձր էր ուրիշներէն, և
բնական էր որ հաւասարած ժամանակ՝ եկեղեցիին առաստաղը

պիտի նրբանար և ձմրան եղանակին անձրևները քանդում և ա-
ւերում յառաջ պիտի բերէին: Զաքարիա պատրիարք այս ան-
իրաւ յափշտակութեան համար բողոքեց դատաւորին և բդեշ-
խին. վերջինս մերժեց պատրիարքին պատգամաւորները պատ-
ճառելով թէ նորոգութեանց ծախքերը պետութենէ են. այսպէ-
սի հնարքով Յունաց գործը յառաջ կը տանի և Յոյները ծածու-
կէն կը վճարէին ծախքերը: Հայերը տեսնելով բդեշխին հնարք-
ները, դիմեցին դատաւորին և վաւերական գիրերով ցոյց տուին
իրենց իրաւունքն ու սեպհականութիւնը և ժամանակ ժամանակ
իրենց կատարած ներքին ու արտաքին նորոգութիւնները: Դա-
տաւորը երկու անգամ տեղւոյն վրայ գնաց բազմութեամբ քըն-
նութեան համար. մանրամասն քննութիւն կատարեց. հետն էր
նաև բդեշխը՝ որ լաւ հասկցաւ Հայոց իրաւունքը, անոնց թէ՛
վաւերական գիրերով և թէ տեղին գիրքէն: Յոյներէն ալ գիր
պահանջուեցաւ. անոնք բան մը չկրցան ներկայացնել, այլ կը
պնդէին թէ եկեղեցիին տանիքը և օդը իրենցն է, իրենց տանի-
քին կից ըլլալուն համար. թէպէտ և ղիչան տեղը ընկերակցու-
թեամբ չինելու, բայց Հայերը յանձն չառին. դատաւորը Հայոց
հէօճէթ տուաւ ըսելով թէ եկեղեցին անոնց սեպհական է և նո-
րոգութիւնն ալ իրենց կը պատկանի. և օրէնքը կը հրամայէր
Յունաց վանքէն անարգել եկեղեցիին տանիքը ելնել, սակայն
Յոյները և բդեշխը ասոր չհաւանեցան, այդ պատճառաւ վէճը
օրէ օր կ'աւելնար: Հայերը տեսնելով որ Երուսաղէմի մէջ խըն-
դիրը չի վերջանար՝ դիմեցին Ազգային Պատրիարքարան և Սիւրիոյ
կուսակալին և խնդիրը պարզեցին իր բոլոր պարագաներով: Մա-
թէոս պատրիարք գրով մը եպարքոսին տեղեկագրեց պատրիար-
քին և Միաբանութեան դիմումը: Կայսերական գիւանի արձա-
նագրութեանց մէջ եկեղեցիին նորոգութեան մասին Յոյներուն
տրուած ո՛չէ հրաման մը չգտնուեցաւ, ուստի գրուեցաւ Սիւ-
րիոյ կուսակալին, Երուսաղէմի դատաւորին և չինութեանց վե-
րատեսչին՝ տեղւոյն վրայ խնդիրը քննելու և արդիւնքը տեղեկա-
գրելու Բ. Դրան: Անոնք յետ քննութեան գրեցին և ամբաստա-
նեցին բդեշխին անկարգութեան և ագահութեան ապօրինութեանց
մասին, վասն զի ան օրէնքի հակառակ և առանց մէկու մը հար-
ցընելու ինքնագլուխ հրաման տուած էր Յունաց՝ իրենց վանքերը
նորոգելու, մինչդեռ այդ պարագային անհրաժեշտ էր կայսերա-

կան հրամանը. երբեք տեսնուած չէր որ վանքերու նորոգութեան ծախքը հոգացուէր արքունիքէն, որուն համար ան կը պարծենար. և այս կերպով բդեշխը Հայոց աղաչանքները չլսելով՝ մեծ վնասներու ենթարկած է զանոնք. Թէ նոյն եկեղեցին Հայոց սեպհական է և այլն: Քննիչներու գիրերը Բ. Դրան մատուցուեցան. Զաքարիա պատրիարքն ալ հին վաւերական գիրերու պատճէնները դատաւորին իլամին հետ ղրկեց Կ. Պոլիս. Մատթէոս պատրիարքն ալ իր գրովը ղրկեց Մեծ Եպարքոսին: Նոյն ատեններն պաշտօնանկ եղան բդեշխը և Սիւրիոյ կուսակալը: Եպարքոսը ղրկուած գիրերը յղեց Մուղթազային՝ արձանագրութիւնները վերջապէս հետազօտելու համար. պտնուեցան երկու հրովարտակներ՝ տրուած Հայոց և Յունաց հինգերէթի 1228ին, որոնց մէջ յիշատակուած էր Ս. Յովհաննէս եկեղեցին. իսկ հինգերէթի 1257ին Ս. Յարութեան և Բեթղեհէմի եկեղեցիին նորոգութեան համար տրուած հրովարտակին մէջ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ մասին բան մը անգամ չգտնուեցաւ. բայց Յոյները անդադար կը յուղէին այս խնդիրը Կ. Պոլսի մէջ, ուստի հարկ եղաւ վերստին հարցում ուղղել Երուսաղէմի նոր բդեշխին՝ լաւ կերպով քննել նոյն եկեղեցին այլազգիներուն, հայ և յոյն միաբաններուն ներկայութեան, և ստուգել թէ արդարև Հայերը իրե՛նք կը նորոգեն իրենց սեպհական տեղերը և իրենց վանքերը, և թէ Յոյները ինչպէս ձեռնամուխ եղան վանօրէից չինուածքի և նորոգութեան, առանց բարձրագոյն հրամանի. այդ պատճառաւ վէճը երկարեցաւ և խնդիրը առկախ մնաց. և վերջապէս Յոյները թոյլ չտուին Հայոց վերաշինելու իրենց եկեղեցիին տանիքը, և մնաց այնպէս, ինչպէս որ էր (Տե՛ս Ա. եպս. Տ. Յովհաննէսեան, Պատմ. Երուսաղէմի, Բ. Հատ. էջ 528–530):

Հոս կը դնենք Ս. Յովհաննու Աւետարանչի եկեղեցիին մէջ այլ և այլ թուականներուն գետեղուած յիշատակարանները.

Դրան ճակատը.

«Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք Զուղայեցի Խանոնց մհի. Մարգարին եւ իւր ծնողացն եւ կողակցին եւ որդւոցն եւ ամենայն արեան մերձաւորացն որ օգնութիւն արար տրաւք ողորմութեամբ վասն նորոգութեան Ս. Յովհաննէս Առաքելոյն աւետարանչին Յիսուսի Քրիստոսի. Տէր Աստուած իւրն վարձահատոյց լինի եւ երկնից արքայութեան արժանի լիցի հանդերձ ամենայն ընտանեօք. ամէն. Թվ. յամին Հայոց ՌՄ (= 1751)»:

Երկաթեայ դրան վրայ.

«Յիշատակ է երկաթեայ դուռս Թէքիրտաղցի Քիրազեան մհի. Սարգսի կենդանի արեւուն եւ որդւոյն մհի. Սերոբէին հոգւոյն ի դուռն սրբոյն Յովհաննու եկեղեցւոյն որ ի սուրբ Երուսաղէմ. Թվին ՌՄԻէ (= 1778)»:

Դրան պղինձին վրայ.

«Յիշատակ է դուռս Տիրացու Պաշարաթին եւ իւր ծնողացն հաւրն Միրիջանին եւ մաւրն Մարգարտին ի Թվին ՌՋ (= 1631), սուրբ Յովհաննէս Աւետարանչի դրանս. Յիշեցէք զմեզ ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք որք հանդիպիք. եւ Տէր Աստուած ձեզ ողորմեսցի եւ նմա փառք յաւիտեանս. ամէն»:

Դրան պղինձէ երկու օղակներուն վրայ.

«Յիշատակ է օղս այս սարկաւագ Պաշարաթին նպաստաւոր ի սուրբ Երուսաղեմայ, Տէր Գրիգոր Հայրապետին»:

«Յիշատակ է օղս սարկաւագ Մեղոր եւ անպիտան . . . . Յիշատակ դուռս Տիրացու Պաշարաթին որ թարգմանի Յաւետիք. Թվ. ՌՋ (= 1631)»:

Ներսը՝ դրան վերեւը.

«Ի պատրիարգութեան Տ. Կիրակոսի Վեհի ի նորոգութեան սրբոյ տաճարի. բոլոր մարմարեայ քարինք պատկերօք արար յիշատակ Պուլանըխցի Թադէոս վարդապետն վասն հոգւոյ ծնողացն Աւետիսի եւ Նուպարի եւ համայն պարագայիցն. ի 1849 տեպտ. 10» (Տե՛ս Սաւալանեանց, անդ, Բ. Հատ. էջ 1296–97):

Լ Թ

ՍԱԼԹԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԵՒ ԱՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ

---

1. Սալթի նկարագրութիւնը.

Էս–Սալթը ստուգիւ խիստ հին քաղաք մ'է. բայց իր նոյնացումը տեղի տուած է ծանր վէճերու: Եւսեբիոս կ'ըսէ թէ Ռամովդ՝ «քաղաք նուիրական և ապաստանարան Դաղ ցեղին, Փիլատելփիոյ արեւմուտքը 15 մղոն հեռի աւան մ'է» (Տե'ս Onomasticon*): Պատմիչը առանց ո՛եւէ տարակուսի Ռամովդը ցոյց կու տայ Գաղաադի մէջ (Դ. Թագ. Իբ. 3), կամ Գաղաադի Մասփան (Դատ. ԺԱ. 29) մինչև Էս–Սալթ՝ որ 24 քիլոմէթր հեռի է Ամմանէն դէպի արեւմուտք–հիւսիս–արեւմուտք: Բայց այս նոյնացումը սխալ է, վասն զի աստուածաշնչական բոլոր տուիքներուն համաձայն, Գաղաադի Ռամովդը կը գտնուի հիւսիսային կողմը Յաբովկի, Նահր հլ Զերքայի և նոյն իսկ Մահանայիմի՝ Խուսիդ հլ Մահնհհի հիւսիսը:*

Էս–Սալթ անունը կը ծագի լատին saltus *բառէն որ կը նշանակէ անտառ. իսկ յոյները կ'ըսեն անոր* Salton Hieraticon, *որ կը նշանակէ նուիրական Սալթը: Գէորգ Կիպրացին որ կը յիշատակէ զայն այս անուամբ, կը դնէ զայն Գ. Պաղեստինի մէջ: Մի և նոյն հեղինակը այս քաղաքը կ'անուանէ "*Salton Bataneos Արաբիոյ մէջ»: *Արդ, Էս–Սալթի արեւմտեան կողմը վեց քիլոմէթր հեռի տակաւին կը գտնուի* Khirbet Bataneh՝ *զոր կը նոյնացնեն* Betonim *աստուածաշնչական քաղաքին հետ (Ցես. ԺԳ. 26):*

Խիստ հաւանական է որ Salton *հին* Gadara *քաղաքն է զոր Ցովսեպոս կը յիշէ իբր քաղաք Արաբիոյ: Ուրիշ հատուածի մը մէջ ան ցոյց կու տայ թէ* Nimrim*էն չատ հեռի չէ: Պտղոմէոս ալ կը յիշէ* Gadare *քաղաք մը Սկիւթոպոլսի եւ Պելլայի հետ, որ հրեայ պատմիչին յիշածէն տարբեր քաղաք մը չի կրնար ըլլալ:*

Սակայն եւ այնպէս Gadara *անունը կը թուի թէ պահուած է քաղաքին հարաւային կողմը* Aïn Djâdour *ըսուած աղբիւրին անունով:*

Salton Hieraticon *Պաղրայի քորեպիսկոպոսական քաղաք մ'էր յիշատակարանի մը համաձայն, կամ Բեթրայի՝ ըստ տարբեր յիշատակարանի: Նաչակրաց ժամանակն Պաղտին Ա. տարեկան տուրքեր հաւաքեց Ամմանի լեռներէն և «Սալթի չրջականերէն»: Հաւանական է որ Ֆրանկները նորոգեցին միջնաբերդը որուն աւերակը կը տեսնուի հիւսիսային–արեւելք: Ննթաչինուածներու մեծ յօրինուածքը ցոյց կու տայ հռովմէական կամ բիւզանդական ծագում մը: Միւս կողմէն արաբ հեղինակները մեզ կը տեղեկացնեն թէ 1260ին Մոնկոլներու կողմէն միջնաբերդը քանդուած և 1266ին Պիպարսի կողմէն վերաչինուած է: 1840ին Իպրահիմ փաչան օդը հանեց զայն:*

Քաղաքը ամփիթատրոնի ձեւով կը տարածուի իրար միացող երկու բլուրներու վրայ: Ի սկզբան ան կը գտնուէր միջնաբերդի աւերակներուն հիւսիսային զառիվայրին վրայ. ժողովրդեան աճումով նոր թաղեր կազմուեցան հարաւ–արեւմուտքի կողմի հակառակ զառիվայրին վրայ: Քաղաքը աչ ու ձախ ունի արգասաբեր հովիտներ գեղեցիկ այգիներով և պարտէզներով: Բնակիչներն են իսլամ, յոյն և լատին. վերջիններս ունին եկեղեցի եւ դպրոց: Իսլամ եւ քրիստոնեայ իրենց լեզուին, բարքերուն եւ սովորութեանց մէջ պահպանած են չատ կապեր թափառաշրջիկ ցեղերու չատուկ:

Էս–Սալթի գինին ընտիր է և չամիչները համբաւաւոր: Հոն չատ կը մշակեն ազտորը (sumac) *զոր խաղախորդութեան համար կ'արտածեն: Այս քաղաքին փոքր ճարտարարուեստին կը միանայ չահագործութիւնը ֆոսֆատային կաւիճի՝ զոր* Blankanhorn *գտած է* Sirouh *սարահարթին վրայ, դէպի արեւելք: Անգղիական ընկերութիւն մը փորձեց չահագործել այս հանքերը. բայց չատ հրաժարեցաւ անկէ՝ չահաւոր չգտնելով զայն: Կանոնաւոր ճանապարհներ չինուած են Սալթէն Ամման* (Meistermann, Guide du Nil au Jourdain, *էջ 314–6):*

1321ին Ապուլ–Ֆէտա արաբ պատմագիրն ալ տեղեկութիւններ ունի Սալթի վրայ:

2. Սալթի հայ գաղութը եւ անոր եկեղեցին.

Պատմութենէ գիտենք թէ Ծորդանանի անդիի կողմը զանազան տեղեր՝ մանաւանդ Յաչակրաց ժամանակ, հայ գաղութներ հաստատուած էին. մասնաւորապէս սոյն աշխատասիրութենանս մէջ (էջ 47–58) գրեցինք Քէրէկի հայ գաղութին ու անոր եկեղեցիին պատմութեան մասին մէջ բերելով կարեւոր յիշատակարաններ: Հ. Ալիշան իր Սիսուանին մէջ (էջ 482) Քհրեկի հետ կը յիշէ Շորակ (Schaubak), Մոնրեալ բերդաքաղաքները եւ կը յարէ թէ այդ անունով կը կոչուէին եօթը բերդերը Քէրէկի տէրութեան որ սահմանորդ էր Եգիպտոսի, Աբաթիոյ Անապատին եւ Շովու. եւ յետոյ կ'աւելցնէ «Այդ զանց առարեալ զայդովք վերագոյն սահմանիսք, անմոռաց կացցի եւ մնայ խակ» խօսքը: Այս տողերէն մենք կը հասկնանք թէ Քէրէկի տէրութեան, ինչպէս իր կեդրոնին՝ Քէրէկի, նոյնպէս Շորակի եւ Մոնրէալ բերդաքաղաքներուն մէջ կային հայ գաղութներ, որոնց վրայ ծանօթութիւններ կը պակսին: Նոյն տէրութեան սահմանին մէջ էր նաեւ Սալթը՝ Ծորդանանին անդիի կողմը, ճիշդ Երիքովի դիմացը, ըստ Ապուլ-Ֆէտային, Սալթը երկու օրուան ճանապարհ հեռի էր Քէրէկէն:

Գլխաւորաբար աւանդութենէ կ'իմանանք թէ Սալթի մէջ կար հայ գաղութ մը, որ նմանապէս պատմութիւն չունի. տեղւոյն վրայ մինչեւ այսօր ցոյց կը տրուի փոքրիկ եկեղեցի մը Ս. Գէորգ անունով, որուն համար կ'ըսուի թէ կանուխէն Հայոց կը վերաբերէր, բայց յետոյ հայ գաղութին ցրուումին կամ ցուլման հետեւանքով Ծոյները գրաւած են, և կը կարծուի թէ այս առթիւ ջնջուած են նոյն եկեղեցիին հայեցի յիշատակարանները: Թ. Մխիթարեանց իր մէկ գիրքին մէջ (Տե՛ս Նկարագիր Սղեւից Երուսաղէմի, էջ 59) կը գրէ թէ «Ծոյնք յափշտակած եւ յուննադաւան ըրած են Գազայի մեր ժողովուրդը՝ Քերեկի, Երիքովի և Սալթի ժողովուրդներուս նման...». տարակոյս չկայ որ ժամանակի խառնաշփոթութենէն և Հայոց տկարութենէն օգտուելով դրացի քրիստոնեայք՝ շատ անգամ առ նախանձու զանազան նեղութիւններով ստիպած են Հայերը յարելու ուրիշ եկեղեցիներու և ի վերջոյ ձուլուելու օտար ազգութիւններու մէջ. այս-

պէսի վիճակի ենթարկուած են ընդհանրապէս Անդրյորդանանի երբեմնի բարգաւած հայ գաղութները, որոնց մէջ կը գտնուէր Սալթի գաղութը: Գաղութին ցրուումէն յետոյ Սալթի Ծոյները կը տիրանան Հայոց եկեղեցիին՝ որ մօտիկն էր իրենց մեծ եկեղեցիին. տեղագրութիւնն իսկ կը վկայէ թէ եկեղեցին Ծուննաց չէր պատկանէր. քով քովի երկու յոյն եկեղեցիներու գոյութիւնը չ'արդարանար. արդէն փոքրին մէջ ժամերգութիւն չեն կատարեր. հայոց կը վերաբերէր փոքրը որ յետոյ բռնագրաւուած է, ինչպէս Քէրէկի Ս. Գէորգը, որ նոյնպէս գոյութիւն ունի մինչեւ ցարդ: Սալթի Ս. Գէորգի եկեղեցին կը գտնուի քաղաքին հիւսիսային կողմը, երկայնութիւնը 15 մէթր, լայնութիւնը 8 մէթրը, բարձրութիւնը 8 մէթր, տանիքը հարթ հաւասար, եւ քարուկիր է, պատուհան չունի, լոյսը կ'առնէ սեղանին կամարի վրայի երկու փոքր պատուհաններէն, միափեղկ փայտեայ դուռը կը բացուի հարաւային կողմէն, եկեղեցին դէպի արեւմուտք հետզհետէ կը բարձրանայ և արեւմտեան կողմը ապառաժի վրայ չինուած է. նոյն կողմը՝ պատին ներսի կողմէն կայ քարայր մը:

Երուսաղէմէն յօդուածագիր մը «Քանի մը խօսք ասիրական հայ հնագրութեան մասին» խորագրով գրուածք մը ունի 1898ի Հանդէս Ամսօրեայի մէջ (էջ 161) ուր կ'ըսէ թէ «մասնաւորապէս կարող եմ յիշել Սալթի եկեղեցին, որոյ գմբէթի վարի մասերուն վրայ հայկական գրեր ցարդ անաղարտ մնացած են»: Ինչպէս յիշեցինք վերեւ, Սալթի եկեղեցին գմբէթ չունի հետեւաբար գմբէթին վրայ հայկական գիրերու գոյութիւնը սխալ տեղեկագրի մը վրայ հաղորդագրուած կը թուի, միայն ուրիշներ ինձ հաւաստեցին թէ եկեղեցիին դրան վրայ կէս կանգուն մեծութեամբ յիշատակարան քարին հայերէն գիրերը ջնջուած կամ տաշուած կ'երեւնան:

Խ

ԿԵՍԱՐԻՈՅ (ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ) ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԵՒ ԱՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ

1. Կեսարիոյ պատմութիւնը.

Պլինիոս երկու տողով կեսարիոյ պատմականը կ'ընէ. «Straton ի աշտարակը, որ է Կեսարիա, շինուած է Հերովդէս թագաւորէն, և այժմ կը կոչուի Colonia Prima Flavia՝ հաստատուած Վեսպասիանոս կայսրէն»: Ցովսեպոս երկարօրէն կը պատմէ և քիչ մը չափազանցութեամբ, ինչ որ կատարեց Հերովդէս այդ տեղը վերածելու գեղեցիկ նաւահանգիստի և քաղաքի մը՝ որ մինչև այն ժամանակ գրեթէ անապատ մ'էր, ուր յոյն արկածախնդիր մը՝ Straton անուն, մտածած էր ապաստանարանի աշտարակ մը շինելու: Հերովդէս նախանձախնդիր ամէն տեղ մեծ քաղաքներ հիմնելու, նոյն աշտարակին տեղը յարմար տեսաւ շինելու ապահով նաւահանգիստ մը: Ան Հռովմայեցւոց նմանելու մարմաջով հիմնարկեց կեսարիա քաղաքը. նաւահանգիստին մուտքին վրայ՝ մեծ խոչոր քարերու վրայ զետեղեց հսկայական արձաններ՝ որոնք ալ ու ձախ կը զարդարէին. Ցովսեպոս զանոնք իր չափազանցութեամբը կը նմանցնէ Բիւրէի նաւահանգիստին: Հոն շինեց կամարակապ շտեմարաններ, ինչպէս այդ կերպ շինուածքներ կը տեսնուին Ոստիի, ինչպէս նաև կենքրայի մէջ, և անոնք կ'ընդունէին ապրանքները, կամ իբր ապաստանարան կը ծառայէին նաւաստիներուն, մինչ քաղաքին բնակիչները կ'զբօսնուն իբր ճեմելավայր շինուած քարափներու վրայ: Կեսարիա շինուած է ամփիթատրոնի ձևով, աւելի հեթանոսական քաղաք էր քան թէ հրէական. ունէր իր մեհեանները, պալատները, իր վիթխարի արձանները և յիշատակարանները: Երբ կը մտածենք թէ այդպիսի կարևոր քաղաք մը տասն երկու

տարիէն հողէն դուրս ելաւ, ինչպէս կը գրէ Ցովսեպոս, տեղի չկայ պանծացնելու շինուածական և ճարտարապետական մեր արդի եղանակները՝ հին ժամանակներու բաղդատութեամբ: Թատրոն մը, ամփիթատրոն մը, կոկորդիլոսներու գետէն առնուած կամ կարմելոսի զառիվայրէն ջուր բերելու համար հիւսիսէն եկած ագուգանները, Օգոստոսի նուիրուած պերճաշուք մեհեան մը, ուր կառուցուած էին երկու հսկայ արձաններ՝ միւն ի պատիւ կայսեր՝ և միւսն Հռովմի, ոչ մի կերպով ստորին, ինչպէս կ'ըսէ Ցովսեպոս, աղիմպոսեան Արամազդէն կամ Արգոսեան Հերայէն, անոնք կեսարիան ըրած էին Պաղեստինի ամենէն գեղեցիկ քաղաքը: Այս պայմաններուն մէջ, Հերովդէս յարմար տեսաւ որ ան կրէ անունը Հռովմի տիրոջ որ իր բարերարն էր: Մեծ հանդիսաւորութեամբ ընծայեց զայն. և նաւահանգիստն ալ ընդունեց Սեբաստոս (Օգոստոս) անունը: Կեսարիա քաղաքային և վիճաբանական կրկին տեսակէտներով այն տեղն էն կը համարուի Հրէաստանի մայրաքաղաքը եղաւ:

Բոլոր աշխարհ գիտէ թէ ան կարևոր դեր մը կատարեց քրիստոնէական նախնական պատմութեան մէջ: Փիլիպպոս սարկաւագ աւետարանիչը հոն կը բնակէր և կը քարոզէր (Գործ Ա. ռսմ. Ը. 40): Պետրոս հոն եկաւ մկրտելու Կուռնելիոս հարիւրապետը և իր ընտանիքը, հեթանոսութեան նախախոյրիքը (անդ, ժ. 1, ԺԱ. 11): Հերովդէս Ագրիպպաս հոն պատժուեցաւ Աստուածմէ (անդ, ԺԲ. 19–24): Կեսարիոյ մէջ էր որ Պօղոս՝ իր կեանքը ազատելու համար երուսաղէմը թողլու ստիպուած ըլլալով՝ Տարսոն գացած է (անդ, Թ. 30): Պօղոս Ցունաստանէ վերադարձին կեսարիա եկաւ (անդ, ԺԸ. 22): Ցետոյ ան հոն եկաւ դարձեալ իր առաքելական երրորդ ուղևորութենէն վերջ (անդ, ԻԱ. 8) և հիւրընկալուեցաւ Փիլիպպոս սարկաւագին մօտ որ հոն կը բնակէր իր չորս մարգարէուհի աղջիկներով: Անկէ երուսաղէմ գնաց Ագաբոսի գուշակութեանց և հաւատացելոց աղաչանքին հակառակ (անդ, ԻԱ. 8–16): Հոն տարուեցաւ իբր բանտարկեալ, այն քաղաքին մէջ երկու տարի մնալէ վերջ Հռովմ երթալու և հոն կայսեր առջև դատուելու համար (անդ, ԻԳ. 23–33. ԻԵ. 1, 4, 6, 13. ԻԶ. 11–12): Առաքելական թուականի այս մեծ յիշատակները մեծապէս նպաստեցին որ կեսարիոյ եկեղեցին ըլլայ Պաղեստինի ամենէն նշանաւոր եկեղեցիներէն մին: Ժողո-

վուրդը՝ կիսով հրէական և կիսով սիւրիական, անհանդարտ էր, և երկու ցեղերը քանիցս արիւնոտ կռիւներ ունեցան։ Յունա–սիւրիական տարրին առաւելակշռութիւնը հրէայ տարրին վրայ՝ անտարակոյս պատճառներէն մին եղաւ Կեսարիոյ եկեղեցիին ա–րագ զարգացման։ Ինքնաստնեայք չատ կանուխէն հոն խիստ բազմաթիւ էին և եպիսկոպոսները ազդեցիկ։ Զատկի խնդրոյն առթիւ հոն ժողով մը գումարուեցաւ, Բ. դարու վախճանին։ Գ. դարու սկիզբը՝ Որոգինէս հոն ապաստանեցաւ և հոն չարու–նակեց աստուածաբանութեան և մեկնաբանութեան իր աշխա–տանքը եպիսկոպոսին հովանաւորութեան տակ։ Դ. ին սկիզբը, Եւսեբիոս՝ եկեղեցիին առաջին պատմագիրը և Պաղեստինի ա–ռաջին աշխարհագիրը, հոն արքեպիսկոպոս ընտրուեցաւ (Տե՛ս Dict. de la Bible, Vigouroux, բառն Césarée du bord de la mer, էջ 456–458)։

Յուստինիանոսի օրով (548) Կեսարիոյ Հրեայք և Սամարա–ցիք ըմբոստացան քրիստոնէից դէմ, որոնցմէ չատեր սպաննը–ւեցան. անոնց տուները թալանուեցան ու կրակի տրուեցան ա–նոնց եկեղեցիները և մեռցուցին քաղաքին կառավարիչը։ Կայսրը իր կողմէն Պաղեստին ղրկեց Սմանտիոս ոստիկանապետը, որ խստօրէն պատժեց յանցաւորները։

Յուստինիանոս կայսեր պատմագիր Պրոկոպիոսի հայրենիքն է Կեսարիան։

Աւելի ուշ այս քաղաքը լքուեցաւ Կոստանդին կայսրէն՝ որ որդին էր Հերակլի, որուն զինուորները տասանորդուեցան հի–ւանդութեան, թերամարտ կռիւներու և դասալքութեան պատ–ճառներով։ Կեսարիան անձնատուր եղաւ Եզիտի և Մուավիահի և դարձաւ իսլամական քաղաք մը (Տե՛ս Guide-indicateur de la Terre-Sainte, Liévin de Hamme, Դ. Մասն, էջ 242)։

Եագուպի, Մագուտի, Եագուր և Ապուլ–Ֆետա արաբ պատ–մագիրները Կեսարիոյ մասին չատեկան տեղեկութիւններ ունին։

Իսկ Նասիր–իւ Խոսրով պարսիկ ճանապարհորդը 1047ին Կե–սարիոյ այցելութիւն տուած ըլլալով իր Օրագրութեան մէջ կը գրէ նոյն քաղաքի մասին։

2. Խաչակրաց եկեղեցիները Կեսարիոյ մէջ.

Ա. Պատմութիւնը.

Խաչակրաց յաղթանակով գրաւուեցաւ Կեսարիան և դարձեալ ան եղաւ կեդրոն բարգաւաճման և զարգացման. Նորոգուեցան բիւզանդական չրջանէն մնացած եկեղեցիները և չինուեցան նո–րեր արևմտեան ճարտարապետական ոճով։ Անոր նաւահանգիս–տին դիւրութիւնները կը հրապուրէին զանազան ազգերէ վաճա–ռականներ՝ որոնք իրենց առևտրական ձեռնարկներով ծաղկե–ցուցին քաղաքը։

Պաղտին Ա. էր որ 1101ին գրաւեց Կեսարիոյ նաւահանգիստը Ձենովացիներու նաւատորմին օգնութեամբը։ 1148ին Ալֆոնս–Ժուրտէն՝ Թուլուզի կոմսը հազիւ ոտք կոխած Սուրբ Երկիրը՝ ուր ան ծնած էր և կու գար պաշտպանել զայն՝ ապրիլին մեռաւ Կեսարիոյ մէջ և հոն թաղուեցաւ։ 1187ին Սալահէտտին գրաւեց այս հին քաղաքը և քանդեց ամրութիւնները։ Անոր կողմէն 1192ին յանձնուեցաւ քրիստոնեայ իշխաններուն։ Gautier Avesnes-ի ձեռքով 1218ին քաղաքը թէև նոր պարիսպներով օժտուեցաւ, սակայն դարձեալ Սարակինոսները աւերեցին։ Զինուորները ա–պաստանեցան Ակքէայի մէջ։ 1251 մարտին, Ս. Լուդովիկոս հոն եկաւ և տարի մը բնակեցաւ և զբաղեցաւ վերաշինելու պա–րիսպը, բայց 1265ին Պիպարս պաշարեց զայն, մարտ 5ին գրա–ւեց և կործանեց։ ԺԸ. դարու վերջին տարիները անոր աւե–րակները ճէզար փաչա գրաւեց և իրր քարահանք չահագործեց՝ Ակքէայի պարիսպը և մեծ մզկիթը կառուցանելու համար։ Ա–նորմէ վերջ, տեղացիներն ալ սկսան ժողվել տաչուած քարերը իրենց պէտքերուն գործածելու կամ արտածելու համար, այն–պէս որ այժմ քաղաքին հին չինուածքներէն գրեթէ այլևս բան մը չէ մնացած։

1659ին ասպետ Arvieux Կեսարիոյ մէջ գտած է «աւերակնե–րու կոյտ մը, ինչպէս նաև Ակքէայի մէջ»։ ԺԸ. դարուն Pococke, 1854ին Guérin տեսան միևնոյն քաոսը։ 1859ին Rey գծեց Խա–չակիրներու պարսպին յատակագիծը. անկէ յետոյ հին պարիս–պին ուրիշ նոր յատակագիծ մ'ալ հրատարակուեցաւ The Survey

of Western Palestine ի մէջ։ Խաչակիրներու այս քաղաքը հին քաղաքէն մէկ փոքր մաս մը միայն կը պարունակէր։

Կեսարիան լատին մայրաքաղաք մը եղաւ, ան ունէր մէկ քորեպիսկոպոս՝ որ էր Սեբաստիոյ եպիսկոպոսը։

Լատին եօթը արքեպիսկոպոսներէն առաջինը Պաղտին՝ քաղաքին գրաւման ժամանակ 1101 մայիս 18 և 23ին ձեռնադրուեցաւ Մօրիկ Լեկադէն, որ միևնոյն ժամանակ օծեց երկու եկեղեցիները՝ Ս. Պետրոս և Ս. Լաւրենտիոս անուամբ, առաջինը նախապէս մզկիթ մ'էր։ Այս երկու շինուածքները 20 օրուան պաշարման և յարձակման ժամանակ չէին վնասուած, բայց սակայն, անոնք գոնէ մասամբ Լատիններէն վերանորոգուեցան։ Կը յիշատակուի նաև Ս. Յովհաննէս անուն եկեղեցի մը։

Բ. Հնախօսութիւնը.

Ս. Պետրոսի մայր եկեղեցին, որ կը թուի թէ Ս. Պօղոսի ալ նուիրուած էր, նշանաւոր դարձած է Եւսեբիոսի կողմէն։ Այն մզկիթը ուր գտնուեցան Խաչակիրները՝ հաւանաբար հին պազիլիքան էր։ Ասպետ Arvieux, Pococke, Rey և Guérin տեսած են երկու եկեղեցիներուն աւերակները, փոքրէն՝ որ Ս. Լաւրինտիոսն էր, քիչ բան մնացած էր։ Մայր եկեղեցիին աւերակները ընդհակառակն ժէ. դարուն կարկառուն կերպով մնացած էին։ Arvieux ասպետը կ'ըսէ թէ տեսած է «հոյակապ եկեղեցիի մը նըկուղները և պատերը։ Նկուղները ամբողջութեամբ կը մնան.... անոր թանձր պատերը և սիւները տակաւին ամբողջութեամբ չեն ջնջուած։

1854ին Guérin կը հաստատէ երկու կողման պատերուն երեսին չորս խոշոր որմայեցերուն կամարակապ ոտքերկրեայ սեղանին և երեք կոզակներուն գոյութիւնը։ Փիլ վերջը Պարոն Rey տակաւին անձնաս գտաւ ստորերկրեայ սեղանը և եկեղեցիին աւերակները, որ Թորթոզի Ս. Աստուածածնի եկեղեցիին նման է։ Ան հրատարակեց ամբողջական յատակագիծ մը՝ որ թէև փոքրիկ՝ բայց կը հաստատէ այս ծանօթութիւնը։ Աւերակներու յատակագիծը իրենց նկարագրութեամբ Անգլիացւոց կողմէն ալ հրատարակուած է, բայց ան Rey ի հրատարակածէն վերջն է, և

կը կարծեմ թէ Rey կարող եղած է ճշդել երկու մանրամասնութիւնները՝ որ վրիպած են իր յաջորդէն. կոզակներու զետեղումը ուղղանկիւն թանձր պատի մը մէջ և եկեղեցիին արեւելեան մասին և արեւմտեան ճակատին միջև եղած լայնութեան տարբերութիւնը։

Երկու յատակագիծերէն հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք.

Եկեղեցին ունէր 36 մէթր երկայնութիւն, 32 լայնութիւն. կոնքը 7 մէթր, կողմնաթեւերը 5.20 մէթր։

Երեք կոզակները ուղղանկիւն պատերու մէջ զետեղուած են. կեդրոնական կոզակը դուրս ցցուած է, ինչպէս Թորթոզի եկեղեցիինը, բայց աշտարակ չունի։ Կողմնաթեւերը, ըստ անգղիական յատակագիծի, գէթ հարաւային կողմը, ունին խիստ տակաւ ցցուածքներով որմայեցեր, ինչպէս Պէյրութի եկեղեցիինը։ Հիւսիսային կոզակին պատուհանը տակաւին կը մնար. մեծ կոզակնալ ունէր իր աւազանը՝ որ խոռոչ մ'էր կամարակապ՝ կեդրոնական կցեալի մը հետ։ Կոզակին հարաւը կը տեսնուէր եպիսկոպոսական քարէ աթոռի մը մնացորդը։

Արեւմտեան երեսին վրայ կային չորս զօրաւոր որմայեցեր որ ունէին 15,25 մէթր բարձրութիւն. լայնութիւնն 1,83 մէթր, ցցուածքը գրեթէ 5,30 մէթր։ Կարելի է ենթադրել թէ աղեղները պրկուած էին այս վիթխարի կամրջակալներու միջև թէ՛ վերի կողմէն, գաւիթը կազմող լայն կամարի մը տակ, դուռները չըրջանակելու համար, ինչպէս Laon ի մայր եկեղեցիինը, թէ՛ վերի կողմէն, իբր որմածակ, եթէ եկեղեցին իբր ամբութիւն չինուած է։ Իր պատերը ունին 1.53 մէթր երկայնութիւն. խիստ գեղեցիկ տաշուած քարերով պատերը զարդարուած են գրեթէ 20 սանտիմէթր բարձրութեամբ։ Ցատակը չինուած է սպիտակ մարմարէ սալայատակով մը։

Պարոն Rey դիտած է որ վերջին որմայեցերը նուազ լայն են քան սնարքինը. կ'ենթադրէ թէ վերջին որմայեցերը ճակատի անկիւններուն հետ համադիր չեն։ Կը կարծեմ թէ այդպիսի անկանոն դիրք մը չի կրնար գոյութիւն ունենալ և թէ ճակատը իրապէս աւելի նեղ էր քան եկեղեցիին արեւելեան մասը. վերջինս պէտք էր ունենար թև մը, որուն տակ ցցուածքը, միայն արեւմուտքէն յայտնի, ճշդօրէն կը համապատասխանէր պատե-

րուն թանձրութեան։ Գուցէ Թորթոզի և Ժիպլէի եկեղեցիներուն պէս դրսէն միայն ցցուածք ունէր, պատին թանձրութիւնը կըրկնուած էր կողակներու առջևի գերաններուն անջրպետներուն մէջ։

Հաւանական է որ այս բիւզանդական կողակները չինուած են 1101ի կեսարիոյ գրաւման և 1187ի նոր տիրապետութեան, մերձաւորապէս ԺԲ. դարու կիսուն, ինչպէս Թորթոզի եկեղեցինը։ Գալով ճակատին՝ անոր որմայեցերուն զօրաւոր ցցուածքը կը թուի ցոյց տալ նուազ հին թուական մը, թէպէտ և ԺԲ. դարէն սկսեալ Երուսաղէմի Ս. Աննայի ճակատին վրայ և Թորթոզի եկեղեցիին մէջ այս տեսակ որմայեցեր կը գտնուէին։ Թեթև եկեղեցիին ճակատը մաս կը կազմէր այն աշխատանքին զոր կեսարիոյ մէջ կատարեցին Gautier Avesnes 1218ին, կամ Ս. Լուդովիկոս 1251ին։ Եթէ ան կը վերաբերի ԺԳ. դարու, կրնայ դիտուիլ թէ ան չատ կը տարբերի Թորթոզի, Աքքեայի և Ցամակուստայի առանց որմայեցի ճակատներէն։

Ս. Լաւրենտիոսի փոքր եկեղեցին քաղաքին հիւսիսային կողմը կը գտնուէր։ Ան ունէր կոնք մը 5·50 մէթր լայն, 1·50 մէթր թանձրութեամբ պատերով, որմայեցերով բռնուած։ Այս եկեղեցին՝ որուն երկու գերանամէջերը գոյութիւն ունէին, 4–5 մէթր բարձրութեամբ, սրաձև կամարներ ունէր։ Հողէն երեք մէթրէն քիչ մը աւելի վեր կար ներքին լար մը, որ կապուած էր կամարի պարանոցները (retombée) կրող ուսերու (consoles) թակաղաններուն, ինչպէս Ռեմլէի եկեղեցիին կողմնաթեւերուն կամ Աքքեայի եկեղեցիին ատրնյարկ սրահին մէջ։ Այս լարին տակ, հիւսիսային կողմը կը բացուէր աղեղնաձև խիստ ցած դուռ մը։

Որմայեցերուն երկու կողման երեսներուն վրայ կը դիտուին աղեղներ՝ որ կրնային ունենալ իրենց բարձրութեան մէջ չինուած անցք մը։

Այս տեղեկութիւններուն համաձայն, կը թուի թէ Ս. Պետրոսի եկեղեցին ԺԳ. դարու չինուածք մ'է (Տե'ս Camille Enlart, les monuments des Croisés de Jérusalem, էջ 85–87)։

1101ին երբ կեսարիա Խաչակիրներէն գրաւուեցաւ, անոնց ձեռք բերած աւարին մէջ կը գտնուէր թանկագին սպաս մը, վերջին ընթրեաց ժամանակ Քիստոս գործածած բաժակը կամ սկիհը, զոր Ճենովացիները իբրև իրենց աւարի բաժինը նախընտրեցին զայն և տարին յետոյ իրենց հայրենիքը. նոյն սպասը

գտնուած էր մզկիթի մը մէջ, որ առաջ եկեղեցի էր. կ'ըսուի թէ ան վեցանկիւնի ձևով եղնգնաքար մ'էր, ըստ Կիյեօմ Տիւրացիի նկարագրութեան. բաժակին տրամագիծն էր 13 մատ, բարձրութիւնը վեց ուկէս. սպասին պատեանը ոսկիով և պատուական քարերով զարդարուած էր. այնպէս կարծուած էր թէ ան զմրուխտ է, և յետոյ ըսուած է թէ ապակի է։ Այս սկիհին զրոյցը պատմական յիշատակարան չունի, բայց մեծ համբաւ հանած է միջին դարու գրականութեան մէջ (մանրամասնութիւնները տեսնել՝ Mislin, Les Saints Lieux, Բ. Հատ. էջ 109–110)։

3. Կեսարիոյ հայ գաղութը եւ ազնր եկեղեցին.

Ինչպէս վերևի պատմական տողերէն յայտնի եղաւ, Պաղեստինեան կեսարիա քաղաքը և իր նաւահանգիստը որքան ծաղկեալ և բարգաւաճ վիճակ մը ստացաւ բիւզանդական շրջանին և Խաչակրաց ժամանակ։ Կեսարիոյ վաճառականները կը տարածուէին մինչև Ասիոյ խորերը և Հայաստանի մէջ, ինչպէս նաև Արևմուտքի կողմերը. կեսարիոյ ազատրականները կ'արտածէին կեսարիոյ թանկագին ծիրանին և կը փոխանակէին տեղական ապրանքներու հետ, զոր կը ներածէին կեսարիա։ Այս ծաղկեալ քաղաքը և իր Ս. Գրոց դրականութիւնը ե. դարուն անծանօթ չէր կրնար ըլլալ Հայոց. վասն զի հոն էր որ, ինչպէս տեսանք վերև, Որոգինէս տաղանդաւոր վարդապետը լրացուց իր սուրբգրական աշխատանքը և երկասիրեց Բառիջեան և Վեցիջեան անուամբ գործերը՝ որոնք կարևոր աղբիւրներ դարձան Ս. Գրոց աղաւաղեալ օրինակները սրբագրելու գործին։ Պատմութիւնը կ'ըսէ թէ Պամփիլիոս Բիւբլիոտհեկայի վկան ու անոր մտերիմն ու աշակերտը Եւսեբիոս կեսարացին գաղափարեցին Ս. Գրոց օրինակներ Եօթանասնից ընտիր և ստուգահաւատ թարգմանութենէն և նոյն օրինակները բաղդատել տուին Որոգինէսի վեցիջեան և Բառիջեան երկասիրութեանց վրայ, որ կը պահուէին կեսարիոյ մատենադարանին մէջ. և այդպիսի խնամով սրբագրուած օրինակները կը կոչուէին Պաղեստինեականք։ Այս օրինակներն էին վաւերացեալ գիրքերը, որ կը կարդացուէին գաւառին եկեղեցիներուն մէջ, արտօնութեամբ կեսարիոյ եպիսկոպոսին։ Պամփիլ-

լիոսի նահատակութենէն յետոյ նոյն Ս. Գրոց բազմաթիւ և ընտիր օրինակները մնացին Եւսեբիոսի մօտ, որուն ձեռքով ու ջանքով Կ. Պոլիս փոխադրուեցան կայսերական հրամանաւ։ Այս պաղեստինական կոչուած ընտիր օրինակներուն գոյութիւնը անծանօթ չէր մեր թարգմանիչ վարդապետաց, որոնք աշակերտներ ղրկեցին Պոլիս՝ կեսարիոյ մէջ ընդօրինակուած այդ Ս. Գիրքէն օրինակ մը ստանալու և թարգմանելու համար զայն։ Այս կարեւոր դէպքը մտածել կու տայ մեզի թէ Հայերը վաղուց ծանօթ էին Պաղեստինեան կեսարիոյ, և հոն կը յաճախէին հայ վանականներ՝ հիմնելու առևտրական ճիւղեր, և աշակերտներ՝ օգտուելու եկեղեցական և սուրբգրական ուսումներէն։ Արդէն Զենոբ Գլակ պատմիչին մէկ հատուածէն ալ (էջ 15) յայտնի կ'երեւի որ Պաղեստինեան կեսարիան ծանօթ էր Հայոց։ Զենոբ Թղթակցութեան ձեւին տակ կը գրէ Ս. Լուսաւորչի պատմութիւնը, և նոյն Թղթակցութեան մէկ նամակը կը ղրկուի Պաղեստինեան կեսարիա, ուր Սիւրիոյ եպիսկոպոսներէն Բեկտոր, Անաստաս և Գայիոս կը տեսնեն զայն ու կը կարդան. թէև պատմութեան բնագիրը նոյն եպիսկոպոսները «եպիսկոպոսք Եգիպտոսի» կ'անուանէ, սակայն անոնք իրականին մէջ Սիւրիոյ, այսինքն Պաղեստինեան կեսարիոյ և Երուսաղէմի եպիսկոպոսներ էին, ինչպէս կը հաստատէ Victor Langlois՝ Զենոբ Գլակի իր գաղղիերէն թարգմանութեան մէկ ծանօթագրութեան մէջ (Տե՛ս Collection des Historiens anciens et modernes de l'Arménie, Հատ. Ա. էջ 340) և արդէն պարզօրէն նոյն տողերուն իմաստէն ալ յայտնի կ'ըլլայ. Ս. Լուսաւորչի եղիազար եպս. ի ուղղեալ նամակը պատուիրակները կը տանին նախ Եգեսիա, յետոյ կեսարիա, ուր չը գտնելով զանիկա, անկէ Երուսաղէմ կը մեկնին. նամակը կը տեսնեն վերոյիշեալ եպիսկոպոսները, որոնք Սիւրիոյ, այսինքն Երուսաղէմի մէջ կը գտնուէին, և որոնցմէ մին՝ Գայիոս՝ եպիսկոպոսապետ ալ եղած է Երուսաղէմի Սիւմաքոսի մահուանէն վերջ (Տե՛ս Եւսեբիոսի Եկեղց. Պատմ. դպր. Ե. էջ 367). ուրեմն մենք այս ծանօթութենէն հետևցնենք թէ այս տողերուն մէջ յիշուած կեսարիան՝ Պաղեստինեան կեսարիան էր։ Ս. Լուսաւորչի Սիւրիոյ եպիսկոպոսներուն գրած այս թուղթը թէպէտև ժամանակավրէպ մը կը նկատուի, վասն զի նոյն եպիսկոպոսները կ'ապրէին Բ. դարու վախճանին, բայց մենք պատմիչին այս յիշատակութիւնը կ'ընդունինք քրիստոնէական նախնական ժամանակներուն քրիստոնեայ Հայաստանի մէջ տեղի ունեցած դէպքը, զոր աւանդութիւնը կը կապէ Ս. Լուսաւորչի անուան, և մենք կ'ընդունինք զայն յարաբերութեան սկիզբ մը Պաղեստինեան կեսարիոյ հետ։

Զ. դարու կիսուն կամ վերջին քառորդին Երուսաղէմի Յովհաննէս պատրիարքը նոյն ժամանակ Երուսաղէմի մէջ ծագումառած Քաղկեդոնական խնդրոց և հայկական վանքերու գրաւման և ընդդէմ Հայոց կատարուած հալածանքներու մասին ընդարձակ նամակ մը ունի գրած Աղուանից Աբրաս կաթողիկոսին, որով կ'զգուշացնէ պատրիարքը մտիկ չընել Հայոց կողմէն տըրուած թելադրութիւններուն։ Նոյն նամակը նախնիք թարգմանած են և 1896ին Վաղարշապատի մէջ հրատարակած է հանգուցեալ Կարապետ վրդ. Տ. Մկրտիչեան (յետոյ եպս. և այժմ վախճանեալ). նոյն նամակը յստակ հայելի մ'է այն դէպքերուն՝ որ Զ. դարու վերջերը կամ Է. ին սկիզբը պատահեցան Երուսաղէմի մէջ, և նոյն ժամանակ Քաղկեդոնի խնդիրը ուժգնօրէն յուզուեցաւ հոն և Հայոց վանական սեպհականութիւնները վտանգուեցան, և վանականները ցրուեցան։ Յովհաննէս պատրիարքի նամակին մէջ քանիցս կը յիշուին «Հայոց իշխանները» որ Երուսաղէմ կը մնային և այս չորթներուն ժամանակ հայկական վանքերու մասին կը բանակցէին պատրիարքին հետ և հնարք մը կը մտածէին գրաւուած վանքերը վերստանալու, և այս խնդրոյն համար դիմած են նաև թագաւորին։ Նամակագիրը կ'ըսէ. «Իսկ ևս կոչեցի զիշխանս Հայոց եւ բազում ինչ խօսեցայ, եւ ևոքա զկեսարիա կալան քարուրս, եւ ևս ասեմ, թէ կեսարիայն հանոյ է ձեզ, երթայք ի կեսարիան եւ կացէք . . .»։ Հայ իշխանները հայ վանքերու պաշտպանութեան համար կը թուի թէ որոշ լիազօրութիւն ունէին և կը դիմադրէին հոռոմ պատրիարքին, և վերի տողերով ըսել կ'ուզէն թէ այս կերպ խնդրոյ լուծումը կեսարիոյ մէջ կըրնայ ըլլալ. քանի որ սկիզբէն կեսարիան նկատուած է հռոմէական կամ բիւզանդական առաջին մայրաքաղաքը, և նոյն տեղի եկեղեցական իշխանութիւնն է որ կրնայ դատել և վճռել խնդիրը. Երուսաղէմը երկրորդական մայրաքաղաքն էր, և հոն ու շրջականները նստող եպիսկոպոսները կախում ունէին կեսարիայէն. վասն զի արդէն Զատկի խնդրոյն առթիւ Բ. դարու վախ-

ճանին կեսարիա գումարուած ժողովին կը նախագահէր կեսարիոյ Թէոփիլոս եպիսկոպոսը, որ էր գլուխ եպիսկոպոսաց, իսկ Նարկիսոս՝ Երուսաղէմի եպիսկոպոսը, մին էր ա՛յն եպիսկոպոսներէն՝ որ ունէին միմիայն ներկայութեան հանգամանք մը, ըստ Եկեղեցական Պատմութեան (ՏՒս Տաշեան Յուցակ, էջ 225)։ Նամակին հրատարակիչ կարապետ վարդապետը իր յառաջաբանին մէջ «կեսարիա կալան բարուրս» խօսքը կը հասկնայ կապադովկիոյ կեսարիոյ մասին, և եկեղեցական իրաւասութեան վերաբերեալ մի խնդրի հետ կապակցութիւն կը նկատէ։ Այս խօսքին նկատմամբ իմ հասկացողութիւնս պարզեսի վրև և հնար չէ կապադովկիոյ կեսարիան հասկնալ, քանի որ Հայոց իշխանները ձեռնհասութեան խնդիր կը յուզէին. ուստի կեսարիան պէտք է նկատել Պաղեստինեան կեսարիան։ Հայոց իշխաններուն արտայայտութենէն կարելի կ'ըլլայ հասկնալ թէ անոնք լաւ կը ճանչնային կեսարիան ու տեղեակ էին անոր քաղաքական և կրօնական իրաւասութեանց. յարաբերութիւններ հաստատած էին, մարդեր կը ճանչնային և ընտանի էին անոնց. այս պարագաներու տակ պիտի տարուբերնք մտածել թէ բիւզանդական չրջանին առաւելապէս բարգաւաճ կեսարիոյ մէջ հայ գաղութ մը պէտք էր որ գոյութիւն ունենար իր եկեղեցիով և հաստատութիւններով։ Այս մտածման աւելի ոյժ կու տայ հետևեալ պատմական պարագան։ Զ. դարու կիսուն երբ Քաղկեդոնի խնդիրը բռնկեցաւ Երուսաղէմի մէջ ու հայ վանքերը գրաւուեցան և հալածանք հանեցին յոյները, հայ վանականները այլևայլ չրջակայ տեղեր ցրուեցան. շատերը գացին կեսարիա, ինչպէս կը կարդանք Անաստաս վարդապետի Ցուցակին ներածական մասին մէջ. «Եւ բազումք բողին զվանսատանս իւրեանց եւ գինչս եւ ի բաց գնացին. եւ այլք բնակեցան ի Կեսարիա...»։ Կասկած չկայ. ակնարկուած կեսարիան Պաղեստինեան կեսարիան է, ուր կային հայ համայնք ու եկեղեցի, որոնց մօտ գացին ապաստանեցան այս հալածական վանականները ու պայծառացուցին եկեղեցին ու վանքը, և անտարակոյս անոնց հետ հիմնեցին նաև նոր վանք ու եկեղեցի։

Է. դարու քառորդին կեսարիա, ինչպէս տեսանք վերև, իսլամ տիրապետութեան ձեռքը մնաց և իսլամ քաղաք մը նկատուեցաւ ու շատ մը եկեղեցիներ մզկիթի վերածուեցան։ Ժբ. գարուն, երբ Մաչակիրք գրաւելով զայն հոն հաստատուեցան, դարձեալ քրիստոնեայ բնակչութիւնը ստուարացաւ. նոր եկեղեցիներ հիմնուեցան և գտնուածներն ալ նորոգուեցան. արևմտեան ճարտարապետութիւնը և քանդակագործութիւնը մեծապէս հոն զարգացան։ Մաչակրաց ժամանակ հայկական կարևոր գաղութի մը և եկեղեցիի մը գոյութիւնը յիշատակարանով մը կըրնանք հաստատել։ Մաչակիրք՝ Ս. Երկրի իրենց տիրապետութեան չրջանին ունէին Les Assises de Jérusalem խորագրով Օրինագիրք մը, որուն մէջ (Բ. Հար. էջ 511, 528) երկու տեղ կը յիշատակուի Պաղեստինեան կեսարիոյ Հայոց գաղթականութիւնը և եկեղեցին։ Հ. Ալիշան ևս կը յիշատակէ իր Սիսուանին մէջ (էջ 482). «Կեսարիոյ Պաղեստինոյ, ի սմին ևս լինել թուով ինչ Հայոց վկայեն Ասսիզք Եկուսաղէմի, ի կէս ԺԲ. դարու»։

Թերևս Պաղեստինեան կեսարիոյ հայ գաղութին և եկեղեցիին երբեմնի գոյութեան պատճառաւ է որ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին մէջ եղած են եպիսկոպոսներ, որ նոյն տեղւոյն անուամբ տիտղոսակիր եպիսկոպոսներ եղած են, ինչպէս Յարութիւն եպս. Լևոնեան Պոլսեցի, 1670ին ծնած, և եպս. Ձեռնադրուած Պաղեստինեան կեսարիոյ. յիշեալը ճամբորդութիւններ կատարած է 1719–1720ին Սպանիա և Հռոմ, կ'այցելէ Լիզաբոնայի թագաւորին և 1728ին Վենետիկ գալով հոն կը վախճանի. յիշեալին ստորագրութիւնն է հետևեալը.

«Ես Յարութիւն արքեպիսկոպոս կեսարիա Պաղեստինոյ, և ապաստաւոր Ս. Երուսաղէմի»։ Մանրամասնութեանց համար տեսնել մեր աշխատութիւնը, «Միաբանիք եւ Այցելուք Հայ Երուսաղէմի», էջ 334–335)։

Ասերականերու անսպառ նիւթ ունեցած է կեսարիան. ձեզար փաչա Ասքեաի իր չինած մզկիթները նոյն ասերականերու պատուական մարմարներով չինած է, ինչպէս կը գրեն կեսարիոյ ասերականերուն այցելող պիտնականները. տակաւին կիսափուլ վիճակի մէջ կը գտնուին եկեղեցիներ, պալատներ, աչտարակները ևայլն ևայլն. և որչափ պեղումները չարունակուին, այնքան ասերականերէն դուրս պիտի գան նոր յիշատակարաններ։ 1894ին Vigouroux և Le Camus գիտնականները այցելեցին հոն և տեսան չատ մը եկեղեցիներու փլատակներ. անոնցմէ առաջ այցելած է հոն Abbé Michon, և տեսած է ուրիչ եկեղեցիի մը կոզակները։ Անտարակոյս լուրջ պեղումներ և հետազօտութիւններ երևան

պիտի բերեն Պաղեստինացի և Կեսարիա նահատակուած վկայէ մը՝ Ս. Պրոկոպիոսի եկեղեցին, որ շինուած էր 484ին Զենոն կայսրէն նոյն քաղաքին մէջ և կը յիշատակուի Chronicon Pascale գիրքին մէջ (Տե՛ս Հար. Ա. էջ 604)։ Նոյն նահատակին անուամբ Երուսաղէմի մէջ ալ կը գտնուէր եկեղեցի մը՝ զոր կը յիշատակէ մեր Գրիգոր Արծրունեան եպիսկոպոս՝ Տեառնընդառաջի չփոթ-ներու առթիւ Հայաստան գրած իր նամակին մէջ (Տե՛ս Ճառընտիր)։ Կեսարիա քաղաքէն դուրս ալ կը գտնուէր Ս. Առաքելոց անուամբ եկեղեցի մը (Տե՛ս Patrologia Orientalis, Հար. Ը. պրակ 1)։

Ցուսով ենք թէ նոր պեղումներ և հետազօտութիւններ երբեմն պիտի բերեն նոր սրբավայրեր, և թերևս նաև հայկական յիշատակարաններ։

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ ԱՆՁԵՐՈՒ ԵՒ ՏԵՂԵՐՈՒ

Ա

Աբամիա 288
Աբաս կթ. Աղուանից 149, 400, 449
Աբաս 162, 163
Աբգարոս Թուղթ 346
Աբիբա, որդի Դամազիէլի 13
Աբուսահլ Հայ պտմ. 204, 205, 211, 212, 214, 215
Աբրահամ Նհպ. 237, 240, 376, 431
Աբրահամ (Տէր) 241, 243
Աբրահամ, որդի մհ. Աստուածատուրի և Գոհարի 247
Աբրահամ Պե. Ա. 308
Աբրահամ Պե. Բ. 262, 384
Աբրահամ Պե. Գ. 5, 20, 44, 296
Աբրահամ վրդ. 359
Աբրահամ քհ. Տես Լեռնակոման 44
Աբրահամ քհ. Մըսըրցի 339
Ագաթոս 441
Ադամ Նհպ. 371
Ադդալին վ. Անկիւրիոյ 352
Ադոնիս կամ Թամմուզ 219, 220
Ադրիանոս կայսր 135, 219
Ազատ գետ 245
Ազ-Զուհրի վ. 214
Աթանաս Ծայրեցի 29, 30
Աթանաս հպ. (Ս.) 283
Աթանաս վրդ. Չէյթունցի 247, 387
Աթենացիք 183
Ալ Ազդ Հասան իբն Սալամայ Պահլանի 214
Ալ Ամիր Պի-Ահքեամ իլլահ խալիֆա 212
Ալ Աֆտալ Շահինշահ, վզրուկ 206
Ալիշան (Հ. Ղ.) 4, 54, 57, 132, 134, 164, 202, 205, 212, 215, 438, 451
Ալի պէկ 313, 314
Ալլատիոս պտմ. 4
Ալ Համրա (Թ.) 212, 214
Ալ Հաֆիզ խալիֆա 212
Ալտըրսըն գնդապետ, Անգղիացի 305
Ալպերդ Իշխան Մեծն Բրիտանիոյ 267
Ալֆոնս-Ժուրտէն, կոմս Թուլուզի 443
Ականիոս, ուսուցիչ Եւթիմիոսի 330
Ակեղդամա 17, 126
Ահմէտ Ա. սլթ. 166
Ահմէտ իբն Համպալ 308
Աղեքսանդր Գ. կայսր Ռուսիոյ 267
Աղեքսանդր, Տես Եղիայի վ.ին 396
Աղեքսանդրիա 190, 218, 393
Աղթամար 4
Աղձնիք 402
Աղուանք 116, 159, 160

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ Բ. — աբ=աբեղայ. առհ=առաքեալ. գղ=գիւղ. գռ=գաւառ. եկ=եկեղեցի. եպ=եպիսկոպոս. թ=թաղ. թգ=թագաւոր. թգն=թագուհի. Լս=Լատին. կթ=կաթուղիկոս. կթս=կաթուղիկոս Սսոյ. հ=հայր. հպ=հայրապետ. մհ=մահեայի. մրգ=մարգարէ. մբ=միաբան. մտգր=մատենագիր. Ցճ=Ցուցաց. ննպ=ննաւապետ. ողգ=ուղեգիր. Պե=Պատրիարք Երուսաղէմի. Պկ=Պատրիարք Կ. Պոլսի. պտմ=պատմիչ. սլթ=սուլթան. Ս=Սուրբ. սրկ=սարկաւագ. ՍՁբ=Ս. Ցակոբեանց. ՍՁր=Ս. Ցարութիւն. վ=վանք. տես=տեսուչ. Ֆհ=Ֆահանայ. Ֆպ=Ֆահանայապետ. Ֆղ=Ֆաղաք.

Աղբիւսաց դուռ 105
Աղլուն (քղ.) 437
Ամալրիք աբբայ 320
Ամաղու (գղ.) 127
Ամանտիոս ոստիկանապետ 442
Ամատուենաց վ. 18, 110
Ամատուենիք 19, 21
Ամբրոսիոս (Ս.) 284, 345
Ամման 437
Ամովս մրգ. 236
Ամոր թգ. 120, 237, 238, 304, 381
Այծեհնիկ 302, 303, 306
Այնքեաբիմ (Գղ.) 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 45, 46, 431
Անանիա վրդ. Շիրակացի 60
Անանուն Բլէղանսի ողգ. 7, 66, 67, 125, 303, 387, 445
Անաստաս կայսր 103, 130, 356, 366, 399, 400, 415
Անաստաս հպ. երուսաղէմի 299
Անաստաս վրդ. 2, 3, 18, 26, 75, 87, 98, 99, 109, 110, 115, 116, 118, 126, 128, 133, 134, 136, 137, 141, 144, 159, 160, 164, 202, 294, 358, 393, 401, 402, 419, 432, 450
Անաստաս եպ. Սիւրիոյ 448
Անաստասիա, Տես Ս. Յարութեան եկ.
Անատոլիա քոյր Մօրիկ կայսեր 137
Անգղիա 268
Անդամալուծի եկ. տե՛ս Յովակիմ-Աննայի եկ.
Անդրէաս երուսաղէմացի 386
Անդրէաս եպ. Մելիտինեցի 259, 338
Անդրէաս կրետացի 352
Անդրէաս Պե. Մերտինցի 112, 166, 195
Անդրյորդանան 49, 221, 439
Անթէմոն (քղ.) 403
Անկիւրիա 237
Անկլիքան եկ. 196
Անկլո-Սաքսոն 306
Աննապահ մզկիթ 322
Աննա խաթուն 29
Աննա Մայր Ս. Աստուածածնի 66, 67, 69, 369
Աննա Քպ. 81, 101, 105, 106, 107, 108
Անյոյշ բերդ 143
Անշէնի Աբբայարան 295
Անտիոք 237, 388, 397
Անտիոքցիք 372
Անտիոքոս վանական 153
Անտիոքոս, Տես Մար-Սաբայի 352
Անտոն աբ. Եւդոկիացի 93
Անտոն (մհ.) ամիրա Զոփենց 315, 316
Անտոն եպ. Ասկալոնցի 227
Անտոն (Ս.) 238
Անտոն պատրի 108
Անտոն Քողիքացի 373
Անտոնինոս վկայ, տես Անանուն Բլէղանսի ողգ.
Անտոնինոս վրդ. Ռուս 139
Աշակերտարանի եկ. 144, 146, 147, 148, 150, 152, 153, 156-158, 222, 378
Աշոտ իշխան Մսակեր 348
Աշոտ Գ. Ողորմած թգ. 429
Աշոտ վրդ. Տես Բեթզեհէմի 63, 348
Աշտիշատ 119
Ապահունիք 128
Ապու Մէրագ 316, 317
Ապու-Սայիտ Զէննկի, հայր Նուբէտտինի 207
Ապու Տիղի (գղ.) 355
Ապու Ֆուդրուս (գետ) 320
Ապուլ Գասիմ Խալիլ Ասկալոնիացի 214
Ապուլ Հասան Շաբուշտի պտմ. 205
Ապուլ Պարաքաթ Պտմ. 205
Ապուլ Ֆէտա-Մուհամմէտ սլթ. 325
Ապուլ Ֆէտհ Նասր Իպն Իպրահիմ Իպն Նասր էլ Մուգատտէսի 377
Ապուլ Ֆէտա պտմ. 47, 68, 69, 318, 404, 437, 438, 442
Ապտ Իւլ Ղանի Նապլուսի 309
Ապտ Իւլ Մէլէք, Օմմիատեան Խալիֆա 185, 318, 319
Առաքել եպ. 192
Առաքելոց այր 343
Առաքելոց եկ. Սաբայի 360
Առաքելոց (Ս.) Մատուռ 261
Առաքել Գիրաքեան 58
Առաքել (Տէր) 241, 243
Ասատ Իպն Ասուլ 31
Ասիա 114, 115, 207, 448
Ասկալոն 233, 307
Ասկալոնցիք 372
Ասողիկ Պտմ. 116, 149
Ասորեստան 122
Ասորեստանցիք 129, 300
Ասորիք 26, 172, 181, 195, 208, 313, 421
Ասորւոց վ. 248
Ասպահան 55
Աստղիկ 230
Աստուածատուր դռնապան 89
Աստուածատուր եպ Տ. Յովհաննէսեան, Պտմ. 54, 76, 93, 98, 119, 134, 141, 142, 164, 165, 242, 243, 295, 314, 326, 354, 409
Աստուածատուր Միայնակեաց 44
Աստուածատուր Պե. Տարոնեցի 384, 409
Աստուածատուր վրդ. 90
Աստուածատուր Քհ. 29
Աստուածատուր (մհ.) 247
Ատրպատական 55
Ատքար (գղ.) 378
Ատամենան վանական Սկովտացի 418
Արաբիա 218, 309, 313, 331, 337, 338, 377, 436, 438
Արաբք 67, 68, 87, 106, 115, 116, 121, 128, 158, 172, 229, 231, 232, 245, 372, 400, 402
Արամազդ 219, 441
Արապիսոս (քղ.) 137
Արգուլֆ եպ. 16, 61, 154, 185, 231, 287, 288, 387, 401, 418, 420, 426
Արեթուսացիք 372
Արիմաթիա 318, 319, 320, 323
Արիստակէս (Ս.) հպ. 134
Արծրունիք 116
Արծախ 29
Արմենակ Սագըզեան 56
Արշակ (թգ.) 127
Արշակունեաց վ. 26, 76
Արշակունիք 80
Արշամոսատ (քղ.) 402
Արտա (թգհ.) Պաղտին Ա. ի 68
Արտաշ 19
Արքեզայոս Իշխան Ծուփաց 134
Աւազ (մհ.) Թարգման 314
Աւետիս՝ հայր Թադէոս վրդ. Պուլանըխցիի 435
Աւետման եկ. Սաբայի 360
Աւետման եկ. Նազարէթի 426
Աւետեաց երկիր 31, 301
Ափրիկէ 70, 77, 162, 206
Աք-Սոնքոր 207
Աքարեան կամ Իսմայիլեան 381
Աքքեա 53, 313, 315, 316, 379, 388, 427, 443, 446, 451

Բագրեւանդ 252
Բալլատիոս 62, 145, 160
Բակուր 202
Բաղատամ 236
Բայէն, Սեղանապետ Ֆուլկ Թգ. ի 49, 50
Բաներեգէս, Որդիքն Որոտման 250
Բաներեգէս, եղբայր Խաբբերդցի կարապետ աբ. ի 114
Բառնաբաս վրդ. Գանձակեցի 308, 309
Բառնաբաս (Հ.) Մէյսթէրման 15, 38, 62, 63, 64
Բատին վ. 143
Բատրոյ կամ Բատուր 202
Բարթուղիմէոս (Ս.) Առ. 183, 196
Բարթուղիմէոս վրդ. Սատաղեան Մալաթիացի 327, 328
Բարսեղեան 70

Բաբսեղ հպ. Կեսարացի (Ս.) 145, 188, 391
Բաբսեղ վրդ. Վանցի 109
Բասիլ կամ Բարսեղ վրդ. 29
Բարսեղ մբ. 113
Բաւդլէբ, քեռի Լեւոն Դ. թգ.ի 53, 54
Բաւլա (Տիկին) Հռոմայեցի 303
Բեթել 21
Բեթհեզդա 66, 67, 68
Բեթաբբա 416, 417, 418, 419
Բեթանիայի վ. 69
Բեթանիա 151, 371
Բեթաքարիմ (գղ.) 30
Բեթղեհէմ 6, 7, 8, 9, 10, 11, 12, 21, 53, 58, 59, 60, 61, 62, 63, 65, 92, 216, 217-246, 276, 344, 394, 419, 421, 423
Բեթղեհէմի եկ. Տես Ս. Ծննդեան եկ.
Բեթղեհէմի Մանկունք 35, 36
Բեթրա 437
Բեթքովը (գղ.) 31
Բեկտոր եպ. Սիւրիոյ 448
Բենեթիկեան 68
Բենիամինի ցեղ 21
Բեռնարդոս վանական 17, 68, 95, 101, 231
Բեսսարիոնի վ. 61
Բերիա 207, 308, 316, 394
Բերութքամամ, տե՛ս Պէյթ Սահուր
Բէդ Պատկառելի, Անգղիացի պտմ, 16, 426
Բէլք (Տր. վ.) Գերմանացի 129
Բիզա (Իտալիա) 303
Բիւզանդ Փաւստոս պտմ. 119, 127
Բիւզանդացիք 47, 121, 208, 402
Բիւզանդիոն 29, 163, 183, 225, 238, 239, 288, 366
Բլրի եկ. 144, 146, 147, 148, 149, 150, 152, 153, 154, 156-158, 160, 164, 278
Բոշնիա (Տիկին) Հռոմայեցի 152
Բրիտանական Հնախ. Վարժարան 333
Գաբրիէլ Հրեշտակապետ (Ս.) 237, 426
Գաբրիէլ եւ Միքայէլ Հրեշտակապետք (Ս.) 109
Գաբրիէլ Պե. Նիկոմիդացի 313
Գաբրիէլ վրդ. 327
Գաբրիէլ վրդ. 87
Գաղերայ աշտարակ 62
Գադի ցեղ 436
Գադրըմէր, արեւելագէտ 205
Գազա 28, 51, 92, 201, 308, 310, 314, 315, 338, 403-412, 438
Գազացիք 372
Գազաւոն կամաարականի վ. 134, 138, 139, 141, 142
Գաթիզմայի վ. 7, 8, 9, 10, 12, 33, 216, 362, 373
Գալուստ Կիւլպէնկեան 271, 273
Գալուստ սրկ. Պոլսեցի 314
Գալիլիա 22, 167, 346, 386, 387, 388, 391, 423, 424, 426, 429
Գալիլիոյ Ծաղիկ 425
Գահիրէ 26, 206, 209, 210, 212, 213, 304
Գաղատ 436
Գամալիէլ 13, 14, 21
Գայիանեան վարժարան 276
Գայիանէ Կոյս (Ս.) 137, 141, 143, 190, 346
Գայիանոս եպ. Մելիտինեցի 338
Գայիոս եպ. Սիւրիոյ 448
Գանգրէա 237
Գանձակ 245
Գառլո Կիւրմանի, պաշտօնեայ 295
Գառնալ միայնակեաց 89
Գարդման (գռ.) 244, 245
Գափամաճեան (Սիմոն) 26
Գափատաղ (Ագարակ) 13
Գեբաղ (լեռ) 378
Գեթսեմանի 11, 12 59, 74, 81, 84, 89, 96, 101, 117, 120, 127, 147, 148, 152, 173, 175, 176, 178-181, 182-192, 194, 195, 343, 421

Գեհոն (գետ) 122
Գերաք-Միւրման 57
Գերաք Ագա 55, 56, 57, 58
Գերեզման (Ս.) Քրիստոսի 22, 23, 24, 26, 82, 83, 138, 140, 151, 170. 179, 187, 223, 227, 242, 285, 290, 291, 292, 304
Գերմանիա 15, 242
Գէորգ Ե. կթ. Սուրբէնեան 269
Գէորգ Կապադովկիացի 365
Գէորգ Կիպրացի պտմ. 372, 436
Գէորգ վանական 364
Գէորգ (մհ.) մբ. 314
Գէորգ վրդ. 327
Գէորգ վրդ. 314
Գէորգ քհ. 9, 10
Գէորգ Քողիբացի 373
Գէորգ (Ս.) 238
Գէորգ (Ս.) զօրավարի սեղան 24
Գէորգի (Ս.) Գերեզման 325
Գիլան 55
Գիւտ Խաչ եւ եկ. 220, 284, 287, 344, 347
Գլակ 252
Գլաձորի վ. 88
Գլխադիրի (Ս.) Մատուռ 250, 251, 254, 256-260, 338
Գնթունիք 131
Գոհար՝ կողակից մհ. Աստուածատուրի 247
Գողգոթա 5, 59, 84, 140, 145, 179, 185, 191, 219, 221, 278, 287, 292-300, 305, 340, 344
Գոնտէր գնդապետ Անգղիացի 15, 24, 26, 38
Գորգիճաձ վզրուկ 206
Գորնէյլ թատերգակ 132
Գուարէզմիոս, տե՛ս Քուարէզմիոս
Գրագ (Քէրէկ) 47
Գրիգոր եպ. Արծրունեան 452
Գրիգոր (Ս.) եպ. Նիւսացի 30, 130
Գրիգոր եպ. Տուրացի 132, 133, 345, 346, 415
Գրիգոր Աբծկեցի, գրիչ 114
Գրիգոր Երէց Սիմանակլացի 53, 54
Գրիգոր Կրօնաւոր 245
Գրիգոր կթ. Պահլաւունի 150
Գրիգոր կթ. Տղայ 211
Գրիգոր մբ. 113
Գրիգոր Պե. Մըսըրցի 43
Գրիգոր Պե. Շղթայակիր 76, 93, 112, 247, 252, 253, 254, 258, 261, 265, 270, 274, 299, 300, 310, 311, 327, 394
Գրիգոր Պե. Պարոնտէր 84, 90, 166, 246, 258, 299, 432, 435
Գրիգոր (Ս.) Լուսաւորիչ 160, 241, 251, 260, 341, 448, 449
Գրիգոր (Ս.) Լուսաւորչի սեղան 256
Գրիգոր սրկ. 9, 10
Գրիգոր վրդ. Դարանաղցի 394, 395
Գրիգոր վրդ. Կ. Պաստմաճեան 312
Գրիգոր վրդ. Տաթեւացի 60, 340
Գրիգոր քոռեպ. Արշարուհի 59, 229
Գրիգորիս աբբա 365
Գրիգորիս կթ. Ալուանից 160
Գրիգորիս մբ. 113

Դամասկացիք 353, 372
Դամասկոս 77, 90, 134, 136, 209, 241, 308, 309, 317, 322, 377, 379, 397
Դամասկոսի դուռ 161
Դամիանոս (Ս.) 238
Դանիէլ Ռուս, աբբայ ողգ. 7, 35, 63, 76, 186, 231, 333, 369, 388, 416, 427
Դաստիմ (քղ.) 402
Դաւթի աշտարակ կամ բերդ 23, 92, 99, 118, 168, 169, 197, 200, 202, 203, 262
Դաւթի Գերեզման 230
Դաւթի դուռ 17, 18, 83, 97, 118, 119
Դաւթի տուն 121
Դաւթի քաղաք, տե՛ս Բեթղեհէմ

Դաւիթ Անյաղթ 345
Դաւիթ Ա. Պե. 113, 421
Դաւիթ մրգ. 237
Դեբովրա, կին մրգ. 21
Դեկապոլիս 227
Դեկոս կայսր 131
Դեմաս 341
Դեմետրիոս եպ. 49
Դիոնեսիա, մայր Եւթիմիոսի 329
Դիոնեսիոս (Ս.) եպ. Արիսպագայի 183
Դիոսպոլիս (քղ) 13, 323
Դոմինիկեանք 14, 70, 180, 181, 197, 295
Դուին (քղ.) 119, 164, 211, 294
Դուբեան Մատենադարան 271
Դուբեանաչէն 272
Դրազարկի վ. 53

Եագուպի, պտմ. 303, 320, 403, , 442
Եագուպիէ (մզկիթ) 196-203
Եագուպիէ եկ. 99
Եագուպի պտմ. 47, 229, 476, 442
Եահիա իպն Սահիտ պտմ. 291, 292
Եանէս, վզրուկ 206
Եաֆա 15, 92, 262, 300, 303, 304, 305, 306, 315. 387
Եբբայեցիք 114, 115
Եգիպտացիք 372
Եգիպտոս 43, 56, 87-114, 115, 124, 204, 205, 206, 207-215, 246, 257, 309, 313, 324, 354, 363, 371, 377, 393, 394, 397, 399, 423
Եգեսիա 448
Եդուարդ Է. (Թգ.) Մեծին Բրիտանիոյ 267
Եզեկիա (Թգ.) 122
Եզեկիէլ (մրգ.) 220, 236
Եզեկիէլ մբ. 268
Եզիտ Ա. Օմմիատեան խալիֆա 442
Եէմէն 209
Եթովպիա 204, 246, 363
Ելլադացիք 372
Եղիա հպ. Երուսաղէմի 72, 352, 360, 396, 397, 399, 400, 401
Եղիա (Ս.) մրգ. 239, 386, 393, 395, 417, 424
Եղիա վրդ. 411
Եղիա տես. Կրտի վ.ին 398
Եղիազար եպ. Սիւրիոյ 448
Եղիազար Պե. Այնթապցի 107, 253, 261, 267, 310, 326, 327, 409, 410
Եղիէ Պե. Դուբեան 89, 225, 269, 271, 273, 355, 365
Եղիէ քհ. Ճգնաւոր 391
Եղիսաբեթ, մայր Ս. Ցովհ. Մկրտչի 32, 33, 34, 36, 37, 42, 431
Եղիսէ (մրգ.) 424
Եղիսէի Աղբիւր 401
Եղնովիտ (գղ.) 240
Եննայ եպ. Գազայի 403
Եննոմի Ջոր 121
Եպիփան վանական 35, 63, 96, 100, 101, 154 186, 218, 287, 333, 371, 426
Եսայի Անապատական 161, 164, 201
Եսայի Պե. Թալասցի 267, 268, 269, 274, 327
Եսայի (մրգ.) 122, 126, 127, 220, 236
Եսայի վրդ. Նչեցի 88
Երուսաղէմ (ստէպ.)
Երուսաղէմի ժողով 387
Երեմիա (մրգ.) 125
Երեմիայի վ. 357
Երեմիա հայազգի 356, 357
Երիցավանք 118
Երիքով 334, 339, 369, 370, 371, 395, 396, 398, 401, 415, 416, 438
Երկրորդ Դողգոթա 295, 299
Եւագր պտմ. 371, 372
Եւդոկսիա (Թգհ.) 14, 17, 61, 66, 124, 259, 350, 406
Եւդոկսիայի Աշտարակը 350
Եւթիմիոս (Ս.) 100, 132, 136, 138, 329-339, 348, 349, 350, 396
Եւթիմիոսի (Ս.) վ. 259, 333, 371, 374
Եւնոմիոս (հերետիկոս) 33
Եւպրաքսիոս Ներքինի 400
Եւսեբեանք 353
Եւսեբիոս եպ. Կեսարացի պտմ. 2, 138, 139, 151, 176, 191, 221, 222, 251, 283, 284, 319, 330, 344, 347, 436, 442, 444, 447
Եւստաթիոս Անկիւրիոյ 153, 352
Եւստաթիոս քհ. Բիւզանդացի, ճարտարապետ 151, 227
Եւտիքիոս (Սայիտ Իպն Պատրիք), պտմ. 205, 223, 227, 228
Եւտոքսիա՝ դուստր Բաւլայի 303
Եւտրոպէ Ներքինի 401
Եւրոպա 55, 70, 114
Եփեսոս 182
Եփեսոսի ժողով 236, 332
Եփրատ 122, 129, 130, 402
Եփրեմ Նկարիչ 238
Եփրեմ Պկ. Ղափանցի 29
Եօլանտ՝ դուստր Ցովհաննէս Թգ.ի 242

Զաւրակ՝ հայր Գազաւոնի 142
Զաքարիա (մրգ.) 413
Զաքարիա եպ. Բելլացի 227
Զաքարիա Ա. կթ. Զագեցի 391, 428
Զաքարիա հռետոր 61, 400
Զաքարիա Պե. ցն. 16, 149, 153, 286
Զաքարիա Պե. Կոփեցի 269, 274, 327, 328, 433
Զաքարիա քհ. հայր Ցովհ. Մկրտչի 31, 32, 33, 36, 37, 38, 40, 42, 431
Զաքարիա, տե՛ս Եղիայի վ.ին 396
Զեբեդեայ որդիք 173
Զենոբ Գլակ 448
Զենոն կայսր 61, 356, 399, 400, 452
Զըմրխտի պալատ 212
Զոզիմ եպ. Գազայի 403
Զոզիմէր (գղ.) Սեբաստիոյ 365
Զորաբաբել 153
Զուայլար, ողգ. 37

Զուար ձիյէրճի Օղլու քհ. 255, 260, 263

Էթէրիա, կոյս, ողգ. 11, 59, 84, 177, 184, 190, 191, 221, 223, 280, 282, 283, 287,
Էթիէնդ տը Միւսի, այրի Տօրոնի Պարոնին 49
Էյակապալ կայսր 48
Էլ-Ապիյատ (սպիտակ մզկիթ) 322
Էլ-Ատիտ, Ֆաթիմեան խալիֆա 206
Էլ-Աւրէզ 315
Էլ-Գուտս 376
Էլիա Գաբիդոլինա 219
Էլ-Խալիլի մզկիթ 324
Էլ-Կորանիէ, Տես Բեթաբրա
Էլ-Հաճաճ, զօրավար Ապտ Իւլ Մէլիք խալիֆայի 185
Էլ-Համիտ Պիլլահ, որդի Էլ-Ատիտ խալիֆայի 210
Էլ-Մաքուն, պտմ. 205
Էլ-Մէլէք Էն-Նասըր, Տես Սալահէտտին
Էլ-Մէլէք Էս-Սալիհ, որդի Ալթապէկ Նուրէտտինի 209
Էլ-Մէլէք Էլ-Մուազզամ Շէմսէտտին Իսա, սլթ. Դամասկոսի 241
Էլ-Մուգատտէմ, պտմ. 303
Էլ-Մունդար, բերդ մը Գազայի մօտ 408
Էլ-Մուսթանսըր, Ֆաթիմեան խալիֆա 206
Էլ-Պիրէհ (գղ.) 21, 22, 23, 25, 26, 27, 28, 29
Էլ-Վալիտ Ա. Օմմիատեան խալիֆա 320
Էլ-Քաարա մզկիթ 380
Էլ-Քեամիլ սլթ. Եգիպտոսի 242
Էմաուս-Էմաուտին, Տես Ամուս-Սայիտ Զէնկի
Էմիր Ձավալի 404
Էմիր Ֆախրէտտին Ա., Ա. Ազատասըր Լիբանանի 428

Էմմանուէլ կայսր, տե՛ս Մանուէլ Կոմնենոս
Էմմաուս Նիկոպոլիս, 35
Էմմաուս (գղ.) 232
Էյուպ, Տես Նէեմ-էտ-տին Էյուպ
Էյուպեանք, 212, 214
Էջմիածին (Ս.) 29, 252
Էջմիածնի (Ս.) եկ. 254, 255, 269
Էս-Սալթ, 436, 437-439
Էվրմար Պե. լտ. 304
Էր-Րամ (գղ.) 22
Էօժէն Ռոժէր (Հ.) ողգ. 37

Ըմբռնման եկ. 173, 175-181

Թաբոր լեռ 254, 386-395, 419, 426, 427
Թագաւորաց Աղօթատեղի 299
Թադէոս (Ս.) Առք. 196, 346
Թադէոս կրօնաւոր 245
Թադէոս վրդ. Պուլանըխցի 435
Թադէոս սրկ. 359
Թադէոս մբ. 113
Թադէոս Մխիրդատեանց 77, 261, 438
Թադէոսի (Ս.) և Սանդխտոյ սեղան 265
Թաթարք 235
Թալապիտք, արաբ ցեղ մը 383
Թալինի եկ. 143
Թանթուր, բլուր մը Երուսաղէմի մօտ 216
Թանկրէտ 232, 387, 426
Թաւէրնիէ (ժ. Պ.) ճանապարհորդ 57
Թատուն (գղ.) 403
Թեբայիտ 133, 393, 397
Թեկուսյի վ. 62
Թեսաղոնիկէ 162, 192
Թեսաղոնիկեցիք 372
Թեւայ 162
Թէոդոս (Ս.) 7, 8, 62, 238, 355, 361-363
Թէոդոսի (Ս.) վ. 100, 104, 105, 216, 286, 361-368, 371, 374, 397
Թէոդոս Բ. կայսր 14, 103
Թէոդոսիոս, ողգ. 67, 82, 86, 303, 415
Թէոդորոս Պե. վանեցի 92, 254, 317, 327
Թէոդորոս (Թգ.) Հապէշիթեանի 268
Թէոդորոսի (Ս.) սեղան 265
Թէոկտիտոսի վ. 348
Թէոտոս հպ. Երուսաղէմի 61, 259, 399
Թէոտոսիոս եպ. Կապիտուղիատոսի 365
Թէոտոր Հարտարապետ 227
Թէոտոր եղեսացի, Ապիկուբա 352, 353
Թէոտոր եպ. Բեթբացի 362, 365
Թէոտորէտ Կիւրացի, մեկնիչ 47, 345, 346
Թէոտորիք եպ. Վըղպրկի, ողգ. 97, 99, 118, 416, 427
Թէոտորոս Ռչտունի 116, 117
Թէոտուղոս 364
Թէլ-Շուպանա 201
Թէոփանէս Ժամանակագիր 288
Թէոփիլոս եպ. կեսարիոյ 450
Թիտա (Նաւահանգիստ Գազայի) 404
Թիֆլիս 95
Թոգատ (Թ.)
Թոպլէր Գերմանացի 38
Թովմա 16
Թովմա քհ. հայր կարապետ վրդ.ի 88
Թովմա բժիշկ, յետոյ Պե. ծն. 352
Թովմա վրդ. Արծրունի, պտմ. 391
Թովմայի (Ս.) եկ. 197
Թովմաս Սայեղ 31
Թոմպաս 319
Թորգոմ Արքեպ. Գուշակեան 271
Թորթոզ (քղ. Տրիպոլսի) 27, 28, 50, 51, 444, 445, 446
Թորոս Իշխան 211
Թորոս, որդի Հեթում Ա.ի 264
Թորոս աբ. խոստովանահայր 113
Թորոս Թորամանեան, հարտարապետ 368
Թորոս մբ. 113
Թորոս քհ. 29
Թորոսի գերեզման 265
Թուլուզ 443
Թրակացիք 299
Թրէբէոն 121, 122

Ժագ տը Վիթրի, կարտինալ եպ. Ակեայի 297
Ժէրար աբբայ 387
Ժէօֆրօա զէնքի ընկեր Կոտըֆրօայի 26
Ժիպլէ (Ձէպել կամ Պիպլոս) 446
Ժիրպէր (Սեղբեատրոս Բ. Պապ) 71
Ժուբտէն քհ.ի վ. 118

Իաբուհ կամ Իօբուհ 300
Իգնատիոս վրդ. մեկնիչ 428, 431
Իզապել (Թգհ.) Ռուբէն Բ.ի 52
Իզոտոր եպ. Գազայի 403
Իթֆիհ կամ Աթֆիհ (Թ.) 212
Իլարիոն (Ս.) 403, 411
Իննովկենտիոս քհ. 160
Իպն Ապի Տահէր 290
Իպն էլ-Ափհիր, պտմ. 210
Իպն էլ-Ասսալ, պտմ. 205
Իպն էլ-Գասիմ 207
Իպն Հօքալ, պտմ. 404
Իպն Պաթուքահ, պտմ. 377, 404
Իպրահիմ վաչա 437
Իսահակ Նհպ. 376, 431
Իսաւրացիք 372
Իսթախրի պտմ. 404
Իսկիտէի Անապատ 201
Իսրայէլ 21, 31, 424
Իսրայելացիք 115, 302, 413
Իտալիա 57
Իփրիա պտմ. 126, 186, 404
Իրաք 331
Իւղաբերից եկ. 167, 172

Լաբուբնիա, դիւանագիր դպիր Եդեսիոյ 346
Լազարեան հեմարան Մոսկուայի 217
Լակրանժ (Հ. Մ. ժ.) Դոմինիկեան 17
Լայբցիկ 265
Լաչէրնա (Պլաչէրնա) 118
Լավըժըրի, կարտինալ 77
Լաւոդիկէ 237
Լեւոն Ա. (Թգ.) 9, 52
Լեւոն Գ. (Թգ.) 111, 164
Լեւոն Դ. (Թգ.) 53, 54, 57
Լեւոն Զ. (Թգ.) 257, 258
Լեռնակողման վ. Լտ.
Լէնտ (Տքթ.) անգղիացի, արեւելագէտ 61
Լէոնարտոս (Ս.) 238
Լըքլէրք (Տոն Հենրի), հնախօս 16
Լիբանան լեռ 413
Լիզպոնա 451
Լիեվէն Տը Համ, պտմ. 15, 63, 64
Լիսան հրեւանդան 48
Լիվորնիա 57
Լիւդ (քղ.) 302, 314, 318, 319, 320
Լուդովիկոս (Թգ.) 304, 427, 443, 446
Լուկրետիոս, բանաստեղծ Լտ. 115
Լուվրի թանգարան 67, 133

Խադ եպ. Կարնեցի 127, 128
Խադայ վ. 127
Խաթուն (մեծ) 20
Խան էլ-Ահմար 332, 334, 339
Խաչատուր եպ. Հալէպցի 195
Խաչատուր քհ. Տարոնեցի, ուսուցիչ 328
Խաչ Գլուտ 341, 342
Խառաբատ (Քաջբերունիք) 296
Խասէքի սուլթանի վագիֆ 410
Խարաթա, կոյս 165
Խեր, քոյր Խաբբերդցի կարապետ աբ.ի 118
Խէրպէթ էլ-Մահնեհ 436
Խոսրով Բ. (Թգ.) պարսից 15, 68, 229

Խոսրով (թգ.) 143
Խորազմեան թաթարք 82, 405
Խորասան 388
Խորենացի Մովսէս, պտմ. 127, 183, 190, 346, 347, 391
Խորէն վրդ. Մխիթարեան 107, 360
Խորին Ասորիք 363
Խրիմ 77, 197

Ծայդանացիք 392
Ծովեաց աչխարհ 129
Ծովիք (մեծ) 129, 134
Ծովիք (Շահուենի կամ փոքր Ծովիք) 29, 134

Կաթաղտոս (Ս.) 238
Կալիցիա 147
Կամսարականք 143
Կայիափա քպ. 81, 82, 83, 84, 85, 86, 87, 94, 96, 97, 98, 99, 101, 102, 103, 105, 106, 432
Կանանց Աչտարակ Մար-Սարայի 349
Կանդի Մատենադարան 387
Կանուդ, (թգ.) 239
Կապադովկիա 246, 337, 363
Կապադովկիացիք 105, 372
Կարալոս (Մեծն) կայսր 68, 72, 93, 117, 160
Կարալոս (Կուենդ) թգ. 68
Կարապետ աբ. Խարբերդցի, փիլիսոփայ 113
Կարապետ արքեպ. Եւդոկիացի 327
Կարապետ կթս. Եւդոկիացի 5
Կարապետ Շուլտովեան, Նոր Նախիջևանցի 276
Կարապետ Պե. Գանձակեցի 311, 327
Կարապետ վրդ. Երուսաղէմացի 88, 89, 194
Կարապետ վրդ. Տոսպեցի 88, 89, 173, 344
Կարապետ վրդ. 113
Կարապետ վրդ. 113
Կարապետ վրդ. Քաջբերունի 296
Կարապետ վրդ. Տ. Մկրտիչեան 449, 450
Կարապետ մբ. 91
Կարապետի (Ս.) սեղան 265
Կարդագինէ 237
Կարիմ (քղ.) և լեռ 30, 35
Կարմեղեան կրօնաւորուհիք 158
Կարմեղոս լեռ 446
Կարմիր ծով 413
Կարնոյ ժողով 374
Կափառնաւում (գղ.) 426
Կափարքամաղա (գղ.) 13, 14, 15
Կեղրոնի Ձոր 3, 121, 122, 144, 155, 186, 189, 190
Կելսոս, փիլիսոփայ, հակառակորդ քրիստոնէութեան 218, 349, 357
Կեսարիա Կապադովկիոյ 132, 450
Կեսարիա (Պաղեստինեան) 135, 303, 440-448, 450
Կիլիկեցիք 88, 372
Կիլիկիա 52, 53, 54, 57, 253, 265, 296, 397, 398
Կիկերոն 387
Կիւեմ Տուրացի, պտմ. 120, 150, 293, 318, 320, 323, 426
Կիպրոս 53, 364
Կիրակոս Պե. Մնացականեան 112, 253, 269, 274, 328, 435
Կիրակոս գրիչ 89
Կիրակոս՝ եղբայր Խարբերդցի կաթողիկոս աբ. ի 114
Կիրակոս միայնակեաց 44
Կիրակոս՝ ուսուցիչ Մարտիրոս քհ. 113
Կիրակոս մբ. 113
Կիրակոս պտմ. 150, 340
Կիրիա 260
Կիւլպէնկեան սաներ 275
Կիւռնելիոս հարիւրապետ 441
Կիւրեղ (Ս.) հպ. Երուսաղէմացի 2, 82, 85, 145, 146, 175, 176, 177, 219, 282, 283, 345, 346, 347, 348, 386

Կիւրղի (Ս.) Երուսաղէմացիի սեղան 256
Կիւրեղ հպ. Ալեքսանդրիոյ 14, 165, 345
Կիւրեղ Սկիւթուպոլսեցի 14, 61, 62, 100, 259, 329, 331, 332, 333, 336, 352, 353, 355, 359, 365, 372, 396
Կիւրեղ կրօնաւոր 29
Կիւրեղեանք 353
Կիւրղի (Ս.) Երուսաղէմացիի աւազան 256
Կիւրիկիոս աբբայ 365
Կիւրոս վկայ 124
Կղեմէս (Ս.) հպ. Հռոմայ 2
Կղեմէս Ալեքսանդրացի, վրդ. Եկեղեցւոյ 251
Կղէոպա սրկ. Քայիքլիտէս 372, 374
Կղոդիոս կայսր 346
Կոզմա (Ս.) 238
Կոզմա Երգեցող 352
Կոհար զօրապետ 206
Կոմիտաս կթ. Աղցեցի 19, 149
Կոնիբիր, անգլիացի հայագէտ 10
Կոնոփէ Կիլիկեցի 364
Կոստանդ կայսր 145, 345, 347
Կոստանդիա, Տես Մարեռւմա։
Կոստանդիանոս (Մեծն) կայսր 36, 67, 138, 140, 151, 191, 218-222, 279, 284, 286, 288, 344, 345, 390, 403, 417
Կոստանդիանոսի (Ս.) եկ. 284, 287, 289
Կոստանդին (քղ.) 29
Կոստանդին Մոնոմախոս կայսր 292
Կոստանդին կայսր, որդի Հերակլ կայսեր 442
Կոստանդին ե. կթ. Սսեցի 296
Կոստանս՝ մայր Անտիոքի իշխան Պէմոնտ Գ. ի 188
Կոստանդնուպոլիս 29, 73, 92, 107, 112, 132, 133, 182, 231, 236, 274, 264, 382
Կոստանդնուպոլսի ժողով 389
Կոտըֆրոյ Տը Պուիյիոն (թգ.) 22, 26, 232, 233, 303, 304
Կորիքոս Գազացի 403
Կուտինա 252, 255
Կուտովիք (Ծովհաննէս վան) ողգ. 37
Կտորզա-Ֆէբրադայի վ. (Հռոմ) 70
Կտուց Անապատ 89
Կրեգինիոս վանահայր, ողգ. 36
Կրտի վ. 395, 408

Հագուբէթ էլ-Մէլէք եկ. 412
Հադդին (Տիբերիոյ եւ Նազարէթի միջև) 157
Հալէպ, Տես Բերիա
Համազասպ Կամսարական 143
Համամ, որդի Շ. Ամատուենի 19
Համասփիւռ՝ կողակից Էվգարեցի մհ. Մարտիրոսի 327
Համբարձման (Ս.) եկ. 151, 152, 155, 166, 421
Համբարձման լեռ 77, 143, 221, 344
Համբարձման մատուռ 261, 270
Հայաստան 26, 83, 89, 109, 116, 117, 119, 126, 129, 131, 133, 134, 211, 324, 352, 355, 365, 368, 399, 402, 447, 449, 452
Հայոց թաղ Երուսաղէմի մէջ 248
Հայր Աբրահամու վ. ցն. 432
Հանդերձից բաժանման սեղան 341
Հաննա իւմմ Միրիէմ 69
Հաշիշէ 327
Հաւիմ իպն Ապտ Մանաֆ, Մուհամմէտ մրգ. ին. մեծ հայրը 404
Հապէշխութեան, տե՛ս Եթովպիա
Հապէշք 421, 432
Հապս էլ-Մէսիհ 87, 94
Հասանիէհ (թ.) 304
Հատալպա Ղուզլի 212
Հատեանք կամ Խալտեանք 129, 130
Հարա Ջաւիլա (թ.) 212, 213, 314
Հարէթ էլ-Ջէյթուն (թ.) 412
Հաքեմ, Ֆաթիմեան խալիֆա 177,

290, 292
Հեգեսիպպոս, պտմ. 2. 251
Հեթում Ա. (Թգ.) որդի Կոստանդինի 53, 54, 241, 242, 264, 270
Հեթում Բ. (Թգ.) 196, 264
Հեղինէ (Թգհ.) 22, 36, 61, 67, 80, 83, 151, 152, 158, 221, 223. 231, 287. 289, 341. 342, 343, 344, 345-347, 389
Հեղինէ՝ կին Մուբատ Աղայի 312
Հենրիկոս Տը Շամբանեը (Թգ.) 304
Հերա Աբգոսեան (դիցուհի) 441
Հերակլ կայսր 164, 288
Հերմոն լեռ 390, 394, 413. 419
Հերովդէս (Մեծն Թգ.) 33, 35, 38, 440. 441
Հերովդէսի պալատ 55
Հերովդէս Ագրիպպաս (Թգ.) 250, 441
Հերովդէս Անթիպաս (Թգ.) 172
Հերպերդ Աբբայ 320
Հիզան 402
Հիճազ 377, 404
Հիւշամ իպն Ապտ էլ-Մէլիք, Օմմիատեան խալիֆա 322
Հնդիկք 373
Հնդկաստան 246, 313, 363
Հոգին Սրբոյ մատուռ 265
Հոնֆրոյ Տը Տօրոն, Պարոն Անդրծորդանանի 49
Հոնք 246
Հովիւ եղիա 365
Հովհաննոցի եկ. 58, 59, 60, 61, 62, 63, 64, 223
Հովր լեռ 154
Հռաքէլի գերեզման 7, 12, 222
Հռիփսիմեանք 190, 191
Հռիփսիմէ կոյս (Ս.) 137, 141, 143, 346
Հռոմ 108, 162, 346, 441, 451
Հռոմայեցիք 48, 115, 130, 162, 373, 402
Հռութի վ. 62
Հրահատ, հայր կամսարական գաղաւնի 142

Ձաղանաց եկ. 172
Ձիթենեաց լեռ 84, 126, 136, 144, 145, 147, 148, 149, 152, 155, 158 160, 161, 163, 164, 174, 177-179 184, 201, 344, 394. 421
Ձիթենեաց պարտէզ 173, 174-176, 178

Ղազար աբ. 113
Ղազար վրդ. 316, 317
Ղազարիոն (գղ.) 355
Ղազարիոնի եկ. 59, 152, 281
Ղալաթիա 4
Ղայիպի եգիպտացի 298
Ղանտիլ վարպետ կեսարացի 254
Ղեւոնդ պտմ. 19
Ղեւոնդ վրդ. փիրղալէմեան 5
Ղեւոնդ Սարացի 352
Ղեւոնդիոս Աբբայ 364
Ղուղիբայի վ. 355
Ղուկաս Աւետարանիչ (Ս.) 31, 32, 72, 74, 167
Ղուկաս (մհ.) կեսարացի 247
Ղուկիանոս քհ. 13, 14
Ղպտի 181, 195, 205, 211, 421

Ճամի լին-Նասըր 379
Ճափար Ալ-Մուզաֆֆէր վզրուկ 206
Ճենովացիք 443, 446
Ճէզար փաշա 315, 316, 443, 451
Ճէպէլը Զէյդա լեռ 377
Ճէպէլը էլ-Քափզէ 430
Ճիփար երկիր 404
Ճոհար, մայր խարբերդցի կարապետ աբ. ի 114
Ճորճ (Թգ.) Մեծին Բրիտանիոյ 268
Ճորոխ 19

Մագիստրոս Իշխան (Գրիգոր) 428
Մակարի (Ս.) գերեզման 253, 260
Մակար (Ս.) հպ. 238, 263, 287

Մակար Պե. ցն. 398
Մակարի (Ս.) մատուռ 260
Մակվելա 240
Մահանայիմ, տե՛ս Խերպէթ էլ-Մահանէհ 436
Մահմուտ Բ. սլթ. 195, 312
Մաղաքիա արքեպ. Օրմանեան 266
Մամաս՝ հօրեղբորորդի հայ Սուրբոնիոսի 366
Մամիկոնեանց վ. 42
Մամիկոնեանք 44, 143
Մայեումա (քղ.) 201, 403
Մայեումացիք 373
Մանէթոն պտմ. 115
Մանուէլ գրիչ 44, 114
Մանուէլ Կոմնենոս կայսր 237, 238, 333, 416
Մանուէլ մբ. 113
Մաշկեւորի վ. 84, 146, 278
Մառի, (= Տէրպէննտ էլ Մէրըի) 264, 265
Մատապա (քղ.) 338
Մատապայի մոզայիք 47, 49, 221, 378, 401, 422
Մատթէոս աբ. Զէրէզցի (Ակն) 93
Մատթէոս (Ս.) Առք. 72, 74, 428
Մատթէոս կրօնաւոր 44
Մատթէոս կրօնաւոր Դարանաղցի 113
Մատթէոս մբ. 113
Մատթէոս Պկ. Զուհաճեան 434
Մատոննա Տէլլա Փաչէ, (Նաւի անուն) 58
Մարաշ 207
Մարգար (մհ.) Խոնոնց Զուղայեցի 428
Մարգարիտ՝ մայր Պաշարաթ սրկ.ի 435
Մար-Եագուպի վ. տես Ս. Յակոբի վ.
Մարթա՝ Ներսէս երէցի մայրը 5
Մարթա՝ քոյր Ղազարու 168
Մարի իշխանուհի Մեծին Բրիտանիոյ 268
Մարիամ եգիպտացի 285
Մարիամ (Թգհ.) Պաղտին Բ.ի
Մարիամ Մագթաղինացի 167
Մարիամ (միւս) կամ Մարիամ Յակոբայ 167
Մարիամ Ս. Աստուածածին 11, 31, 32, 37, 182-185, 218, 237
Մարիամ՝ քոյր Ղազարու 168
Մարիամանք 167, 168, 169, 171
Մարիւս (Թգհ.) Լեւոն Զ.ի 257, 258
Մարին 162
Մարինայի եկ. Դորսիքայի մէջ 383
Մարինոս պտմ. լտ. 21, 61, 353
Մարինոս Սանուդոս, ողգ. 35, 318 323
Մարկիանոս Աբբայ 61, 62
Մարկիանոս կայսր 183, 184, 226, 398
Մարկիանոսի եկ. 62
Մարկոս Աւետարանիչ (Ս.) 167
Մարկոս Աւրելիոս Անտոնինոս կայսր 48
Մարկոս գրիչ 4, 8, 19, 171
Մարկոս միայնակեաց 359
Մարսէլլ 62
Մարտիրոս հպ. երուսաղէմի 61, 333, 396, 399, 400
Մարտիրոս (մհ.) Լվգարացի 327
Մարտիրոս Պե. եգիպտացի 194, 263, 298, 299
Մարտիրոս Պե. Ղրիմցի 257
Մարտիրոս քհ. եղբօրորդի Վարդան արքեպ.ի 113
Մարտիրոսաց քաղաք = Նփրկերտ 402
Մարքիզ Տը Վոկուէ, ողգ. 23, 26, 235, 236, 238
Մաւրիտանացիք 71
Մաւրկան 162
Մաքլէր (բրօֆ.) գաղղիացի 54
Մաքմաս (գղ.) 21
Մաքքատէթ էլ-Կորանիէ 417, 418
Մաքքատէթ էլ-Հաճլա 418
Մելանիա (Տիկին) 152

Մելանիա (Տիկին, վոգբը) 164, 191
Մելիսանդ (թգհ.) 68, 120, 188
Մելիտեանք 132, 329
Մելիտինեանք 132, 329
Մելիտինէ 129, 130, 131, 132, 134, 137, 329, 331
Մելիտինէի ընծայարան 337
Մելիտոն (մհ.) Տարսիսխցի 254, 256, 259
Մելիքա 29
Մելքիսեդեկ (թգ.) Սալիմայ 390
Մելքիսեդեկ վրդ. Մուրատեան (յետոյ եպ.) 25, 26
Մելքիտք 212
Մելքոնեան գասարան 275, 276
Մեհմէտ պէկ Ապու Տահապ 314
Մեռեալ Ծով 47, 48, 49, 144, 391, 348-361, 413, 416, 417, 418
Մեսրոպ եպ. Նշանեան 161, 258, 270, 272
Մեսրոպ Պե. 5, 44, 296
Մեսրոպ վրդ. Տիգրանակերտցի 312, 313
Մեսրոպեան վարժարան 275
Մետանացի Անտոն, ոզգ. 37
Մետափրաստ պտմ. 7, 8, 363
Մետինէ 207, 402
Մերկեռ, որդի Սեղբոս ամիրայի 311
Մերկեռիոսի (Ս.) սեղան 265
Մէլէք Զահըը Զահմահ, սլթ. 263
Մէլէք էն-Նասըը, սլթ. 48
Մէլէք Մանսուր Հիւսամէտտին Սալահ (սլթ.) 87
Մէլիք էլ-Մանսուր, տես Շերքուհ
Մէլիք Սալիհ Իսմայիլ (սլթ.) 43, 87
Մէհիտ սլթ. 77
Մէմլուք 297
Մէքքէ 185, 308
Մժավանք 159, 164, 165
Մժէժ Գնունի 164, 165
Միթրա 228
Մինաս (Տէր) 260
Մինաս (Ս.) եգիպտացի 124
Մինաս Պե. Ամդեցի 29, 45
Մինաս Պկ. ցն. 216
Մինաս վրդ. մբ. 314
Միջագետցիք 372
Միջագետք 29, 134, 246, 363, 399, 402
Միջերկրական կղզիք 377
Միքիջան՝ հայր Պաշարաթ սրկ.ի 435
Միւթասեմ-Պիլլահ, Օմմիատեան խալիֆա 321
Միւհիբէտտին պտմ. 68, 69, 197, 198, 201, 203, 290, 291, 308, 309, 324, 377
Միքայէլ Ասորի պտմ. 202
Միքայէլ Գ. կայսր (Աբբլիւ) 352, 364
Միքայէլ Նահատակ 352
Միքէլ-Անժ, նկարիչ 239
Միքիա (մրգ.) 218, 236
Մլեհ Իչխան 211
Մխիթար Գօշ վրդ. 395
Մխիթարեանք 8, 29
Մկրտիչ աբ. Լուսարար 296
Մկրտիչ Աւգերեան (Հ.) 4
Մկրտիչ (մհ.) Թարգման 314
Մկրտիչ վրդ. Արծրունեան 119, 172, 360, 385, 411
Մղբըղի 92, 314
Մոկաց վ. 128
Մոկս 402
Մոնթանա (գղ.) 35
Մոնկոլք 437
Մոնտրէլ ոզգ. 170
Մոնրէալ, բերդաքաղաք 49, 437
Մոսկուա 351
Մովաբացիք 48
Մովաբի լեռ 144
Մովսա թգ. 48
Մովսէս կթ. եղիվարդեցի 245
Մովսէս Կաղանկայտուացի, պտմ. 60, 64, 154, 164, 191, 240, 245, 295, 419, 422
Մովսէս (մրգ.) 239, 386, 393, 395
Մոտեստոս Պե. ցն. 16, 19, 100, 149, 153, 177, 185, 228, 286, 287, 289, 364

Մօրիա 121, 122
Մուավիահ Ա. Օմմատեան խալիֆա 185, 352, 442
Մուգատտասի պտմ. 4, 126, 128, 321, 404, 442
Մուիզզ, Ֆաթիմեան խալիֆա 206
Մուհամմէտ իպն Իսիրիս էլ-Շաֆիի (օրէնսգէտ) 404
Մուշ 46
Մուրատ Ագա Զմիւռնիացի 312
Մուրատ վարժապետ Արմաշի 328
Մրենի եկ. 143
Մրուվա վ. 164
Մօրիկ Լեհաղ 444
Մօրիկ կայսր 11, 15, 103, 137, 184, 397, 402

Յաբռվկ 436
Յակոբ 429
Յակոբ (Տէր) 162
Յակոբ Աչըգեան, կեսարացի 269
Յակոբ Ալփեան (Ս.) Առք. 199
Յակոբ Դպիր 89
Յակոբ եպ. 92
Յակոբ Զերեդեան (Մեծ) (Ս.) Առք. 180, 197, 199, 202, 250, 256, 263, 428
Յակոբ Կարապետեան, ուսուցիչ 63, 348
Յակոբ՝ հայր Գերաք Աղայի 55
Յակոբ Նհպ. 378, 380,
Յակոբ՝ որդի Գերաք Աղայի 55
Յակոբ վրդ. Թաշճեան 141
Յակոբ վրդ. Մըխալըճցի 327
Յակոբ վարպետ 257
Յակոբ Տեառնեղայը (Ս.) Առք. 2, 3, 4, 60, 146, 250. 263, 369
Յակոբ քհ. Ամասիացի 262
Յակոբ Փիւրտեան 254
Յակոբի եկ. 378
Յակոբի Ջրհոր 378
Յակոբոս Բ. (թգ.) 181
Յակովիկ պարսիկ վկայ (եագուպէլ-Ասէմի 198, 200, 201, 202
Յամիդ 402
Յամնիա (քղ.) 338
Յարութիւն եպ. Լեռնեան 451
Յարութիւն Թ. Տ. Յովհաննեանց 55, 57
Յարութիւն Պե. Վեհապետեան 265, 269, 367
Յեսու քհ. 245
Յեսսէի Ծառը 236
Յետակար 5
Յերոնիմոս (Ս.) մեկնիչ Ս. Գրոց 21, 22, 30, 122, 127, 151, 154, 176, 188, 219, 222, 246, 247, 247, 248, 283, 319, 320, 363, 373, 378, 417, 425
Յեփոնիա հրեայ 188, 191,
Յոբնաղ Պե. ցն. 61, 183, 200, 259, 399
Յոյնք 32, 54, 64, 65, 69, 71, 92, 115, 143, 164, 166, 180, 181, 195, 202, 215, 226, 237, 243-246, 260. 297, 352, 369, 376, 390, 433, 434
Յոպպէ, տես Եաֆա
Յոպպէի Արգելանոց 312
Յոպպէի գերեզմանատուն 311, 312
Յովակիմ-Աննա (Ս.) 168, 370
Յովակիմ-Աննայի (Ս.) գերեզման 67, 69, 70, 74, 76
Յովակիմի (Ս.) պատկեր 369, 373
Յովել (մրգ.) 236
Յովհան 136
Յովհան վրդ. Մայրագոմեցի 245
Յովհաննա, կին Փուզայ հաղարապետին Հերովդէսի 167
Յովհաննէս աբ. 43, 44
Յովհաննէս աբ. գրիչ 89
Յովհաննէս Ակնճատ 89
Յովհաննէս ամիրայ Պաշպազիրկանեան 255
Յովհաննէս Անապատական 365
Յովհաննէս արքեպ. Տայեցի կամ Տուեցի 204, 245

Յովհաննէս Աւետարանիչ (Ս.) Առք. 180, 182, 192, 193. 238, 244, 250, 293, 379, 383. 432
Յովհաննէս Բոլոնըը, ողգ. 36, 38
Յովհաննէս բրդագործ 89
Յովհաննէս Դազացի 403
Յովհաննէս գրիչ 113
Յովհաննէս գրիչ 192
Յովհաննէս Դամասկացի 66, 183, 351, 352, 386,
Յովհաննէս Ե. Դրասխանակերտցի, պտմ. 116
Յովհաննէս՝ եղբայր Խաբբերդցի Կաբապետ աբ. ի 114
Յովհաննէս եպ. աշակերտ Սաբայի վանական Ստեփանոսի 49
Յովհաննէս եպ. երուսաղէմացի (Հաննէ) 45, 76, 80. 107, 108, 109, 111, 187, 192. 254, 259, 261, 263, 298, 299, 326, 341, 353, 385
Յովհաննէս եպ. Եւփեայ 370
Յովհաննէս եպ. Թեսալոնիկեցի 193
Յովհաննէս եպ. լռակաց 352
Յովհաննէս եպ. Վըզպուրկցի, ողգ. 69, 96, 97, 99, 171, 203, 430
Յովհաննէս (Թգ.) երուսաղէմի 242
Յովհաննէս կթ. Մեծաբարոյ 9
Յովհաննէս Կասիանոս 62
Յովհաննէս կրօնաւոր 296
Յովհաննէս հայ. երուսաղէմի 13
Յովհաննէս Հեզահոգի 255
Յովհաննէս հգնաւոր 9, 10
Յովհաննէս Մարթա, կանոնիկոս 31, 33
Յովհաննէս՝ մեծաւոր Յովսափատի վ. ին 187
Յովհաննէս մբ. 91
Յովհաննէս միայնակեաց 359
Յովհաննէս միայնակեաց Յորդանանի մօտ 419
Յովհաննէս Մկրտիչ (Ս.) 31, 32, 34, 36, 38, 55, 160, 201, 239, 285, 341, 342, 417
Յովհաննէս Մոսքոս, պտմ. 216, 352, 364, 371, 372, 397, 417, 419
Յովհաննէս Ներանձն 352
Յովհաննէս Ներքինի 400
Յովհաննէս Շամախեցի 89
Յովհաննէսեան՝ որդի Գերաքի 55
Յովհաննէս Զմշկիկ կայսր 429
Յովհաննէս Պե. եւ կթս. Թլկուբանցի 166
Յովհաննէս Պե. Զմիւռնիացի 266, 267, 269, 274, 312. 313
Յովհաննէս Պե. Ճոպլին 20
Յովհաննէս Պե. ցն. 91, 149, 397, 399, 400, 449
Յովհաննէս Պե. ցն. 289
Յովհաննէս Պե. Պոլսեցի 29
Յովհաննէս Պկ. Կոլոտ 93, 253, 261, 270, 274, 299, 310
Յովհաննէս Ռուփինոս 200
Յովհաննէս վրդ. Արճիշեցի 88
Յովհաննէս վրդ. Թարգման 91
Յովհաննէս վկայ 124
Յովհաննէս Տես. Կրտի վ. ին 398
Յովհաննէս Տը Սոլմ. ողգ. 36
Յովհաննէս փակակալ 113
Յովհաննէս Փոկաս Կրետացի, ողգ. 97, 178, 333, 388, 390, 416, 427
Յովհաննէս քհ. Ատանացի 112
Յովհաննէս քհ. հայ Քոզիբայի 374
Յովհաննէս Քոզիբացի 371, 372, 373
Յովնան (մրգ.) 303
Յովսափատի Ձոր 1, 2, 3, 4, 5, 16, 17, 96, 103, 127, 128, 155, 158, 178, 181
Յովսեպոս հրեայ, պտմ. 115, 139, 140, 423, 436, 440
Յովսեպոս (կոմս) Տիբերիացի 426
Յովսէ, որդի փոքր Յակոբոս Առք.ին 250
Յովսէփ (Ս.) 218, 424
Յովսէփ Արիմաթացի (Ս.) 167, 280, 318, 323
Յովսէփ Արիմաթացիի (Ս.) տուն 287

Յովսէփ կրօնաւոր 113
Յովսէփ Նհպ. 380
Յովսէփ վանական հայ 104, 105
Յովսէփի (Ս.) գերեզման 196. 427
Յորդանան 57, 60, 68. 144. 154, 254, 297, 339, 369, 392. 394, 396, 398, 413-422
Յուդա՝ եղբայր փոքր Յակոբոս Առք.ի 250
Յուդա Իսկարիովտացի 101. 173, 178, 359
Յուդա Կիւբեղ եպ. (Ս.) 342
Յուդայի ցեղ 370
Յուդայի քաղաք 30, 31, 32
Յուդիթ՝ քոյր Մկլիսանդ Թգհ.ի 68
Յուլիանիա Պատրիկ 396
Յուլիանոս Աբբայ, եպ. Բոստրայի 365
Յուլիանոս Ծերն արաբացի 365
Յուլիանոս ուրացող, կայսր 124, 125, 160, 188, 403
Յուլիոս Սեւերոս, զօրապետ 219
Յունաստան 19, 355
Յուստինիանիա (քղ.) Զօրրորդ Հայք 400
Յուստինիանոս Բ. կայսր 185
Յուստինիանոս կայսր 49, 67, 73, 76, 125, 130, 132, 136, 163, 164, 200, 201, 216, 220-230, 297, 323, 353, 357, 400, 402, 442
Յուստինոս Բ. կայսր 226, 228, 400
Յուստինոս վկայ 115, 218, 379
Յուստոս եպ. երուսաղէմի 390

Նարդէոն Պոնաբարթ Ա. կայսր 92, 315
Նարովթի այդին 392
Նազար Կամարակապցի 257
Նազարէթ (քղ.) 32, 33, 66, 372, 423-431
Նազու՝ կողակից Տարսխախցի Մելիտոնի 256, 259
Նաթանայէլ 424
Նահապետ կթ. եղեսացի 29
Նահր էլ Զերքա 436
Նանա Աստղի սրկ. 352
Նապղուս 21, 29, 120, 376-385
Նասիր-ի-Խոսրով, ողգ. 120, 126, 442
Նարեկացի Գրիգոր վրդ. (Ս.) 168
Նարկիսոս հպ. երուսաղէմի 450
Նեէման Աստղի 424
Նեղոս (գետ) 115
Նեսպապա, Տես. եղիայի վ.ին 397
Նեստորիոս (հերետիկոս) 182, 360
Ներսէս աբ. Կրակցի 20, 113, 170
Ներսէս երէց 5, 20, 216
Ներսէս Շնորհալի կթ. (Ս.) 106, 167, 205, 217
Ներսէս Պարթև (Ս.) կթ. 119
Ներսէս վրդ. վանահայր Ս. Փրկչի 89
Նէարքոս, ընկեր Ս. Պողիկտոսի 131
Նէմմէտտին Էյուպ՝ հայր Սալահէտտինի 208
Նէյուպոլիս, տե՛ս Սամարիա
Նէպի Մուսայ 332, 334
Նիկիա 71, 220, 236
Նիկոդիմոս 13, 14, 323
Նիկողայոս եպ. Ագիւրմանցի 10, 20, 76, 180
Նիկողայոս (մհ.) մբ. 314
Նիկողայոս՝ տես. Կրտի վ.ին 398
Նիկողայոսի (Ս.) սեղան 261
Նիկոմիդիա 132
Նիկոպոլիս 352
Նիկոփորոս, պտմ. 61, 346, 389
Նիքոլա Ֆրէսքոպալտի, ողգ. 36
Նշանի (Ս.) մատուռ 260, 261

Նոնոս Աբբայ 365
Նորայր վրդ. Այնթապցի 63
Նորավանք 126, 127
Նոր Ջուղա 55, 57, 58
Նորվեկիա 239
Նուպար մայր Թադէոս վրդ. Պուլանըխցիի 435
Նուպիա 204
Նուբէտտին Աթապէկ 207-211
Նօթը Տամ 360

Շահապիվանի ժողով 119
Շամաթ պտմ. 210, 211
Շանթաճիգ գունդ 130, 131
Շապանի, վզրուկ 206
Շապուհ Ա.մատուռնի 19
Շավէր, վէզիր 207, 208
Շարթրը (Ֆրանսա) 2
Շաւարշ վրդ. Հաճընցի 63
Շաֆէ (իմամ) 209
Շաֆէական գերեզման 209
Շէյխ Դահիր Օմար 313
Շէյխ Իւլ Համպալի 308
Շէյխ Հասան Ահմէտ 379
Շէյխ Մէֆթա 261
Շէյխ Շէմս Լտ-տին Պաղտատցի 197
Շէյխ Պատրանի 385
Շիթթի, հնախոյզ 334, 336, 337
Շիրակ 4, 143
Շիրակացւոց վ. 143
Շիրքուհ, վէզիր 208
Շնուտիի վ. 226
Շոբակ, բերդաքաղաք 438
Շուշան 162
Շուշան 167
Շուշանիկ, մայր Արտաւանի 161, 164

Ոնորիոս կայսր 103
Ոնուփրիոս (Ս.) 239
Ոսկերերան (Ս.) Յովհան հպ. 30, 106, 353, 391, 395
Ոսկեհատ՝ մայր վահան գրչի 53
Ոսպնավանք 172
Որոգինէս, մեկնիչ Ս. Գրոց 127, 218, 319, 322, 442, 447
Որոգինէսեան 62
Ուատի Քէլթ 372
Ուշաթափման տեղ 172
Ուռհայեցի Մատթէոս, պտմ. 395, 429
Ուրարտական Շրջան 116
Ուրկանոցի վ. 110
Ոփալի լեռ 121, 122, 123

Զամ թաղ 249, 274
Զամուրճեան (Յ.) 77
Զինաստան 313
Զորրորդ վ. Սիւնեաց 128, 134

Պաալպէք 208
Պաղիլ Պոսնաքիով, ռուս ուխտաւոր 203
Պալիշահի եկ. 322
Պաղեստին 9, 10, 15, 24, 26, 32, 41, 57, 70, 72, 85, 92, 104, 114, 132, 135, 143, 154, 184, 185, 186, 198, 204, 218, 232, 239, 276, 300, 302, 337, 371, 393
Պաղէէ թաղ 271, 276
Պաղտատ 160
Պաղտին Ա. (թգ.) 35, 68, 233, 304, 387, 437, 443
Պաղտին Բ. (թգ.) 68, 120, 188, 233, 323, 405, 406
Պաղտին Գ. (թգ.) 35
Պաղտին եպ. 444
Պաղտին Պուրկի 282
Պամփիւլիոս Բիւբլիտոնացի վկայ 447
Պայարա (արտ) 327
Պանդ կթ. Աղուանից 159
Պանդայ վ. 159
Պանիաս 207
Պանոն հգնաւոր Աղուան 160
Պաշարաթ (տիրացու) 435
Պապ էլ-Սէպաթ 69
Պապ էս-Սաղիր (Դամասկոս) 377
Պատանատեզի 293, 294
Պատմոս 193
Պատր էլ-ձէմալի, վզրուկ 206
Պատրիկ Կիւլպէնկեան 276
Պատրիք Իպն էն-Նաքահ 321
Պատրիքիոս՝ Տես. Ապազանոն վ.ին 365
Պատրոնիկէ (թգհ.) 346
Պարագոս եպ. 227
Պարատահ (Ջրանցք) 321
Պարճելլօ (Թանգարան) 56

Պարոն վասիլ, իշխան 53, 54
Պարոնեան Սուքիաս (Հ.) 10
Պարոնիոս, պտմ. 350
Պարոնտատ, հայր Խաբբերդցի կաթապետ աբ.ի 114
Պարոնտէրի Ալդի 12
Պարտէզ (Ս.) 294, 299
Պարուք, զօրավար Հաքէմի 290
Պարսիկք 8, 15, 19, 64, 68, 86, 99, 128, 149, 153, 164, 165, 177, 185, 192, 228, 231, 246, 285, 288, 350, 353, 364
Պարսկաստան 19, 57, 163, 363, 374
Պարքոզիլիա 219
Պարքուք (սլթ.) 48
Պաւերիա 171
Պեթաֆալա (գղ.) 35
Պելլա (քղ.) 436
Պելագոս 13
Պետրոս 136
Պետրոս, աշակերտ հայազգի երեմիայի 356
Պետրոս (Ս.) Առք. 81, 84, 86, 94, 95, 96, 97, 101, 102, 103, 173, 180, 244, 250, 302, 379, 392
Պետրոս եպ. Եւթիմիոսի վ.ին 332
Պետրոս եպ. Սեբաստիոյ 33, 34, 66
Պետրոս եպ. Վրացի 66, 125, 152, 164, 184, 200, 203, 297, 400
Պետրոս հպ. Ալեքսանդրիոյ 400
Պետրոս հպ. Երուսաղէմի 396, 399
Պետրոս մբ. 113
Պետրոս միայնակեաց 365
Պետրոս Պե. Եւդոկիացի 92, 93, 255, 315, 316,
Պետրոս վանական Քասսին լերան 426
Պետրոս վրդ. 25
Պետրոս քհ. Աղուան 159
Պետրոսեանք 391
Պետրոսի (Ս.) մատուռ 255
Պետրոսի վ. 196-203
Պերլին 38
Պէյսան 427

Պէհա-Էտ-տին-իպն-Շէտտատ 69
Պէյթ Լպրի 12
Պէյթ Լիճճէ (գղ.) 22
Պէյթ ձէմալ (գղ.) 15
Պէյթ Պահիր 12
Պէյթ Սահուր (գղ.) 58, 61, 63, 64
Պէնի-Հէզիր 3
Պէնի Օմիահ 321
Պէրութ 51, 406, 445
Պէրրա (գղ.) 22
Պէքեաբ Թաղ 269
Պէրօթ 21
Պիլահի դուռը 322
Պիլատուբի պտմ. 320
Պիղատոս 101, 172, 280, 425
Պիղատոսի պալատը 344
Պիպարս Պընտըքտար (սլթ.) 48, 304, 324, 325, 388, 427, 437, 443
Պիպլոս 219
Պիտա, պտմ. տե՛ս Բէդ Պատկառելի
Պլանչ Տը Ֆրանս 304
Պլինիոս, պտմ. 440
Պլուտարքոս, պտմ. 349
Պոլլատեանք 2
Պողիկտոս հայկազն (Ս.) 330, 331
Պողիկտոսի (Ս.) դամբարան 337, 339
Պողքերիա (թգհ.) 226
Պոմպէ 162
Պոմպէա Լուկիլիա 67
Պոնիվակիոս Ռակուսացի 378
Պոնտոս 246, 363
Պոսրա (քղ.) 437
Պորտոյի անանուն ուղեգիր 82, 152, 173, 221, 222, 344, 378, 401, 417
Պորփիւրիոս եպ. Գազայի 403, 405
Պտղոմիոս 436
Պրենաիզի 306
Պրոկղ Պկ. 386
Պրոկոպիոս Գազացի 403
Պրոկոպիոս, պտմ. կեսարացի 130, 163, 200, 216, 225, 296, 442
Պրոպատիկէ 26, 66, 71, 75, 76, 77
Պրուքսէլ 27

Պողոս Աբբայ Հռոմմայեցի 365
Պողոս՝ աշակերտ հայազգի երեմիա-յի 356
Պողոս (Ս.) Առ. 250, 255, 441
Պողոս՝ հայր Ս. Եւթիմիոսի 329
Պողոս Հելլատիկոս, միայնակեաց 401
Պողոս մբ. 113
Պողոս Պե. յետոյ կթ. Գառնեցի 44, 194
Պողոս վրդ. Ադրիանուպոլսեցի (յետոյ վրդ. եպ. Պկ. և Ը. կառավարիչ Ս. Յակոբայ վ. ին) 269, 274, 420
Պողոսի (Ս.) մատուռ 255

Ջոջիկ 162

Ռամա 21
Ռամադան կամ Ռամահ 318, 319
Ռամադայիմ 318, 319
Ռամալլահ (գղ.) 22
Ռամոլդ 436
Ռամսէս Բ. Մինէփթան (թգ.) 301
Ռաուլ եպ. Լտ. Բեթղեհէմի 238, 324
Ռավեննա 132, 162
Ռեմլէ 28, 92, 120, 247, 290, 303, 308, 314, 318-320, 321-328
Ռեմլէի վ. 274, 276
Ռընօ, եղբայր Մարիամ թգհ. ի 188
Ռընօ Տը Շադիլյօն 49, 50, 52
Ռիչարդ (թգ.) 304, 405
Ռչտուննեաց վ. 114, 116, 117, 118, 120
Ռչտուննէք 116, 117, 119
Ռոմանոս վանական 61
Ռոպինսըն գիտուն 318
Ռուբէն Բ. (թգ.) 52
Ռուբինեանք 25, 211
Ռումանիա 354
Ռուսք 140, 141, 313
Ռուփինոս քհ. (Տորանիոս) պտմ. նախ բարեկամ Յերոնիմոսի, ապա հակառակորդ 345

Սաբա (Մար) 238, 353, 357, 396
Սաբայեցիք 353
Սաբայի (Մար) վ. 62, 99, 100, 153, 203, 283, 348-361, 371, 374, 375,
Սադպերդ (Վրաստան) 12, 200, 420
Սալահէտտին (սլթ.) 4, 14, 42, 49, 69, 119, 142, 157, 161, 179, 181, 189, 194, 195, 207, 208-211, 214, 216, 232, 239, 261-263, 294, 295, 304, 324, 342, 379, 384, 388, 405, 427, 432, 443
Սալահիէ վարժարան 91
Սայէզեանք 15
Սալիհ իպն Ալի Ապտուլլահ իպն էլ Ապպասի 321
Սալիմ ուսուցիչ 411
Սալուստիոս հպ. երուսաղէմի 399
Սահակ աբ. Ղրիմցի 89
Սահակ եպ. Աստուածատուրեան, Բաբերդցի 268
Սահակ իշխան? 183
Սահակ (Ս.) հպ. Պարթև 3, 346
Սահակ վրդ. 314
Սահառուննեաց վ. 3, 4
Սահառունի Դաւիթ 4
Սահէլ 332, 333, 337, 338, 339
Սամարացիք 224, 225, 227, 322, 376, 377, 378, 442
Սամարիա 22, 250, 301, 377, 379, 335
Սամուէլ Անեցի, պտմ. 150
Սամխոն 411
Սայիտ իպն էլ-Պատրիկ, տե՛ս Եւտիքիոս, պտմ.
Սանահնեցի (Անանիա) 395
Սասուն 402
Սարակինոսք 170, 304, 364, 427, 443
Սարգիս գրիչ 44
Սարգիս՝ եղբայր Խարբերդցի կաթողիկոս աբ. ի 118
Սարգիս խալիփայ 259
Սարգիս՝ հայր Գալուստ Կիւլպէնկեանի 273
Սարգիս մբ. 113

Սարգիս միայնակեաց 88
Սարգիս Պաղտասարեան Տիգրանակերտցի 328
Սարգիս Պե. 384
Սարգիս վրդ. 91
Սարգիս վրդ. Շնորհալի, մեկնիչ 5, 44
Սարգիս վրդ. պտմ. 254, 257, 264, 311
Սարգիս վարպետ Տ. Յովակիմեան 254
Սարգիս (մհ.) Քիւրազեան, Թէքիրտաղցի 435
Սարդիկէ 237
Սարեվթացի 424
Սարոնի դաշտ 315
Սաւաւանեանց (Տ. Հ. Թ.), պտմ. 45, 93, 258, 266, 295, 310, 312, 314, 360, 383, 384, 394, 409, 432, 435
Սափսա 420, 421, 422
Սափսայի վ. տե՛ս Յովհ. Մկրտչի վ.
Սբէլիոն (քարայրի վ.) 357
Սեբաստ (գղ.) 27, 160, 384, 444
Սեբաստիա 33, 34, 129, 164, 324, 365, 367, 368
Սեբաստոս 441
Սեբէոս, պտմ. 19, 116, 117, 149
Սելովամ 4, 82, 94, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 128
Սեղբոս ամիրայ Երևաննոյ 253, 310, 311
Սեպուհ լեռ 340, 341
Սերովբէ (մհ.) որդի Ս. Քիւրազեանի 435
Սերովբէք (գղ.) 340
Սերպք 202, 299, 354, 358
Սեւերոս, պտմ. 205
Սէլիմ Ա. (սլթ.) 56, 299, 354, 384
Սէլճուգեանք 155
Սէյրէթ ուլլահ, տես Իսմէրի մղկիթ
Սէնէկտրիոնի ժողով 85, 86
Սէքար (գղ.) 378

Սիաբ էլ-Ղանէմ 62, 63, 64
Սիդոնիոս հայազգի 329, 337, 338
Սիթթի Մարիամ 186
Սիթթի Մարիամ (Այն) 38
Սիմանակլայ բերդ 53
Սիմոն՝ եղբայր փոքր Յակոբոսի 250
Սիմոն խաղախորդ 302, 305, 310
Սինա լեռ 254, 393, 394, 419
Սինայի եկ. և վ. 259, 374, 375, 397
Սինայի սեղան 254
Սիոն 1, 2, 9, 13, 42, 82, 92, 94, 95, 96, 97, 98, 101, 110, 117, 121, 171, 196
Սիոնի գերեզմանատուն 93,
Սիոնի դուռ 83
Սիրաք երուսաղէմացի 314
Սիւլբիկոս Սևերոս, պտմ. 345
Սիւլէյման Բ. (սլթ.) 90, 112
Սիւլէյման Զաբիֆի Գաղացի 408
Սիւլէյման՝ Օմմիատեան խալիֆա
Սիւմաքոս եպ. երուսաղէմի 448
Սիւնեաց վ. 358
Սիւնիք 116, 127 318, 319, 320, 321
Սիւրիա 70, 73, 117, 207, 209, 288, 324, 377, 399, 433
Սիւքար (քղ.) 378
Սիւքէմ 378
Սկեւռացի Դէորգ? 167
Սկիւթուպոլիս 227, 233, 426 436
Սմբատ պտմ. 52
Մնարք Քրիստոսի Ս. Գերեզմանի 340
Սոզոմենոս, պտմ. 151, 283, 345
Սոկրատ Սքոլաստիկոս, պտմ. 151, 295, 345
Սողոմէ՝ մայր Զեբեթեան որդւոց 167
Սողոմոն (Տէր) 339
Սողոմոնեան տաճար 219
Սողոմոնի գերեզման 230
Սուգ էլ-Խար (թ.) 409, 412
Սուպիէ (գղ.) 22
Սուբաթ (քղ.) 55
Ս. Ակիւլինէի վ. (երուսաղէմ) 17

Ս. Առաքելոց եկ. (Երուսաղէմ) 5
Ս. Առաքելոց եկ. (Կեսարիա) 452
Ս. Առաքելոց եկ. (Պոլիս) 73
Ս. Աստուածածնի գերեզմանի եկ. (Երուսաղէմ) 5, 75, 89, 120, 179, 181-192, 310, 421
Ս. Աստուածածնի եկ. լատինաց (Ցոպպէ) 304
Ս. Աստուածածնի եկ. (Նոր-Ջուղա) 55
Ս. Աստուածածնի եկ. վլաչէրնի (Պոլիս) 226
Ս. Աստուածածնի վ. (Բեթղեհէմի մօտ) 6, 8, 10, 11, 12, 216
Ս. Աւետման վ. (Զիթենեաց լեռ) 159, 160
Ս. Գէորգ եկ. (Սալթ)
Ս. Գէորգ եկ. (Քէրքէկ) 54
Ս. Գէորգ եկ. և վ. (Ռէմլէ) 92, 247, 318, 326, 327, 446
Ս. Գէորգ եկ. Խպտոց (Երուսաղէմ) 31
Ս. Գրիգոր Լուսաւորչի եկ. (Երուսաղէմ, Սեբ.) 340, 341, 347
Ս. Գրիգոր Լուսաւորչի եկ. (Ղալաթիա) 4
Ս. Գրիգոր Լուսաւորչի կանթեղ (Երուսաղէմ, Սեբ.) 341, 344
Ս. Գրիգոր Լուսաւորչի վ. (Զիթենեաց լեռ) 143
Ս. Դոմետիոսի վ. (Երուսաղէմ) 17
Ս. Եղիայի եկ. (Թաբոր) 388, 389, 390
Ս. Եղիայի վ. (Երուսաղէմ) 7, 73, 216
Ս. Եղիսաբեթի եկ. (Այնքարիմ) 32, 44
Ս. Երրորդութեան եկ. (Բեթղեհէմ) 247
Ս. Զաքարիայի վ. (Նազարէթի մօտ) 423, 428, 429, 430, 431
Ս. Թէոդոսի վ. (Բեթղեհէմի մօտ) 35
Ս. Թէոդորոսի եկ. (Երուսաղէմ, Սեբ.) 249, 264, 265, 270
Ս. Լաւրենտիոսի եկ. (Կեսարիա) 444, 446
Ս. Լեռնակողման եկ. և վ. (Այնքարիմ) 5, 43, 44, 45
Ս. Խաչի վանք (Երուսաղէմ) 12, 200, 420
Ս. Ծննդեան Այր (Բեթղեհէմ) 344
Ս. Ծննդեան եկ. և վ. (Բեթղեհէմ) 5, 8, 63, 65, 217-244, 281, 310, 353, 381, 434
Ս. Կաթուղիկէ եկ. (Վաղարշապատ) 159, 160
Ս. Կարապետի եկ. (Սիւնիք) 127
Ս. Կարապետի եկ. Սեբաստի (Փոքր Հայք) 384
Ս. Կիրակոսի վ. (Երուսաղէմ) 17
Ս. Համբարձման Այր (Զիթենեաց լեռ) 344
Ս. Համբարձման եկ. (Զիթենեաց լեռ) 5, 59
Ս. Հրեշտակապետաց եկ. և վ. (Երուսաղէմ, Սեբ.) 5, 18, 19, 20, 44, 105, 106, 108, 112, 113, 114, 146, 249, 271, 310, 421
Ս. Հրեշտակապետաց վ. (Դազա) 403, 408-410
Ս. Ղեւոնդէսի վ. (Երուսաղէմ) 16
Ս. Ղուկիանոսի սեղան (Երուսաղէմ, Սեբ.) 341
Ս. Մարկոսի Թանգարան (Վենետիկ) 382
Ս. Մինաս Աղեքսանդրացի սեղան (Երուսաղէմ, Սեբ.) 258
Ս. Մինասի դամբարան (Երուսաղէմ, Սեբ.) 338
Ս. Մինասի մատուռ (Երուսաղէմ, Սեբ.) 251, 258, 259, 260, 338
Ս. Միքայէլ եկ. Խպտոց (Երուսաղէմ) 431
Ս. Միքայէլ, տե՛ս Ս. Հրեշտակապետի վ.
Ս. Միքայէլի Սիրպ վ. (Երուսաղէմ) 203
Ս. Մովսէսի եկ. (Թաբոր լեռ) 388, 389, 390
Ս. Յակոբ եկ. (Դահիրէ) 214
Ս. Յակոբ եկ. (Երուսաղէմ, Սեբ.) 5
Ս. Յակոբ եկ. (Քէրքէկ) 54
Ս. Յակոբի Դանձատուն (Երուսաղէմ, Սեբ.)
Ս. Յակոբի եկ. և վ. (Երուսաղէմ) 1, 2, 5, 9, 12, 19, 29, 76, 80, 89, 91, 92, 98, 105, 107, 111, 118, 120, 168, 170, 171, 179, 195, 213, 248-270, 451
Ս. Յակոբի սեղան, Ս. Նիկողայոսի եկեղեցիին մէջ (Ցոպպէ) 311
Ս. Յակոբի վ. (Յովսափատ) 16
Ս. Յարութեան գաւիթ (Երուսաղէմ, Սեբ.) 431
Ս. Յարութեան եկ. (Նապլուս) 380, 382
Ս. Յովակիմ-Աննայի եկ. (Երուսաղէմ) 23, 26, 33, 66, 67, 68, 69, 70, 72, 73, 74, 76, 77, 80, 142, 446
Ս. Յովհաննես Աւետարանչի եկ. (Ս. Յարութեան գաւիթը) 5, 431, 432, 434, 435
Ս. Յովհաննէս կարապետի վ. (Այնքարիմ) 35, 42, 43, 44, 45, 216
Ս. Յովհաննէս Մկրտչի եկ. (Դազա) 405
Ս. Յովհաննէս Մկրտչի եկ. (Դահիրէ) 213, 214, 215
Ս. Յովհաննէս Մկրտչի եկ. (Ռէմլէ) 324
Ս. Յովհաննէս Մկրտչի եկ. և վ. (Նապլուս) 376, 383, 384
Ս. Յովհաննէս Մկրտչի վ. (Յորդանանի եզերքը) 413, 417
Ս. Յովհաննէս Մկրտչի վ. ՅՆ. (Յորդանանի եզերքը) 415, 416, 422
Ս. Յովհաննէսի եկ. (Կեսարիա) 452
Ս. Յովհաննէսի եկ. (Պէյրութ) 381
Ս. Յովհաննէսի վ. Ֆրանչիսկեանց (Երուսաղէմ) 112
Ս. Յովհաննու կարապետի վ. (Զիթենեաց լեռ) 159, 161-165
Ս. Յովհաննու Հիւանդանոց (Երուսաղէմ) 35, 50
Ս. Յոզեանի եկ. լտ. (Ցոպպէ) 304
Ս. Նիկողայոսի եկ. լտ. (Ցոպպէ) 304
Ս. Նիկողայոսի եկ. և վ. (Ցոպպէ) 300, 302, 306, 308, 309, 310, 311, 313, 314, 347
Ս. Նիկողայոսի մատուռ (Մար-Սաբա) 350
Ս. Պետրոսի եկ. (Երուսաղէմ) 82, 86, 95, 96, 98, 101,
Ս. Պետրոսի եկ. լտ. (Ցոպպէ) 302, 303, 304, 305
Ս. Պետրոսի եկ. (Կեսարիա) 444, 446
Ս. Պետրոսի Հառաչանաց վ. և եկ. (Երուսաղէմ) 82, 94, 97, 98, 99, 100, 101, 102, 118
Ս. Պետրոսի սեղան (Ս. Նիկողայոս եկեղեցիին, Ցոպպէ) 311
Ս. Պողիկտոս 131, 132
Ս. Պողիկտոսի եկ. (Եգիպտոս, Թեբայիտ) 133
Ս. Պողիկտոսի վ. (Երուսաղէմ) 129, 134, 135, 136, 137
Ս. Պորփիւրի եկ. (Դազա) 407, 411
Ս. Պրոկոպիոսի եկ. (Կեսարիա) 452
Ս. Սարգիս զօրավարի սեղան (Երուսաղէմ, Սեբ.) 258
Ս. Սարգսի վ. Ապու Սիրճա (Երուսաղէմի մօտ) 204, 211, 213, 214
Ս. Սարգսի վ. (Երուսաղէմ, Թանթուր) 216
Ս. Սիմէոն մեծակեացի եկ. (Մար-Սաբա) 350
Ս. Սիմէոնի եկ. (Երուսաղէմ) 118
Ս. Սիոնի եկ. (Երուսաղէմ) 15, 16, 59, 86, 110, 112, 115
Ս. Սոփիայի եկ. (Պոլիս) 73, 226
Ս. Ստեփանոս Նախասարկաւագ 14, 15, 16, 21, 238
Ս. Ստեփանոսի դպրոց (Օքսֆորտ) 346

Ս. Ստեփանոսի եկ. (երուսաղէմ) 17, 67, 68, 120, 134, 139
Ս. Ստեփանոսի եկ. և վ. (երուսաղէմ, Սիոն) 13, 17, 18, 19, 20, 95, 110, 117, 118,
Ս. Ստեփանոսի մատուռ (երուսաղէմ, Սպք.) 256
Ս. Ստեփանոսի սեղան (երուսաղէմ, Սպք.) 256
Ս. Ստեփանոսի վ. (երիքով) 325, 397
Ս. Ստեփանոսի վ. (Սիւնիք) 127
Ս. Վէմ եկ. (Այնքեաբիմ) 44
Ս. Տեառնեղբօր եկ. (Յովսափատ) 1, 2, 3, 4, 5
Ս. Տեղիք 5, 6, 8, 10, 11, 19, 20, 42, 71, 84, 86, 88, 95, 98, 101, 124, 127, 128, 145, 147, 152, 160, 190, 219, 276, 310
Ս. Փոկասուռ եկ. (Սիւնիք) 127
Ս. Փրկչի գերեզմանատուն 248
Ս. Փրկչի եկ. (Թաբոր) 387
Ս. Փրկչի վ. և եկ. (երուսաղէմ) 5, 81, 82, 83 84, 87, 88, 89, 90, 91, 92, 94, 98, 105, 109, 110, 112, 117, 310, 359
Ս. Քառասնից եկ. (Զիթենեաց լեռ) 164
Ս. Քառասուն Վկայից եկ. (Ռեմլէ) 324
Ս. Քառասունք եկ. (Հալէպ) 358, 360
Ս. Քառասունքի վ. (Յովսափատ) 16
Ս. Քրիստափորի վ. (Յովսափատ) 16
Սուքա Անապատ 331
Սուիրոնիոս աբբայ 365
Սուիրոնիոս հայ, Տեսուչ Թէոդոսի վ.ին 100, 365-368
Սուիրոնիոս Պե. ցն. 66, 86, 124, 153, 155, 185, 229, 230, 232, 287. 288, 371, 397
Սպանդարատ, հայր Գազաւոնի 142, 143
Սպանիա 71, 451
Ստեփանէ Իշխան 211
Ստեփանոս աբքեպ. Օրպելեան, պտմ. 127
Ստեփանոս Բիւզանդացի 47
Ստեփանոս գրիչ (երկայն) 113, 421
Ստեփանոս գրիչ Սեբաստացի 43, 46
Ստեփանոս եպ. Մելիտինեցի 338
Ստեփանոս երէց 89
Ստեփանոս կաղմարար 44
Ստեփանոս, հայր Վահան գրչի 53
Ստեփանոս մբ. 113
Ստեփանոս Մոլաբացի 365
Ստեփանոս Ջուլհակ 113
Ստեփանոս Սաբացի 49, 352
Ստեփանոս վրդ. Տիգրանակերտցի 327
Ստրատիլատոս աբբայ, Տես. Թէոդոսի վ.ին 365
Սքաբրի կղզի (Ֆրանսա) 295
Սքոլաստիկոս աբբայ 365
Սօֆրանէս, տե՛ս Ծովփ (Մեծ)

Վահան Արշակունի 163, 164
Վահան գրիչ 53
Վահրամ վզրուկ 26, 206
Վահրամ Բաբունի պտմ. 265
Վաղան 161
Վաղարշապատ 400, 449
Վաղենդիանոս կայսր 124, 125, 132
Վայոց Ձոր, 127
Վանայ Լիճ 116
Վասակ, եղբայր Վահրամ վզրուկի 206
Վասիլ Պե. 87
Վատիկան 4
Վարագայ Լեռ 88
Վարդան գրիչ 146
Վարդան Մաթոսեան 141
Վարդան Պե. 113
Վարդան վրդ. 314
Վարդան վրդ. Բաբերդցի 296
Վարդան վրդ. Բաղիշեցի 261
Վարդան վրդ. Բարձրբերդցի պտմ. 211, 244, 395, 402, 428

Վարդան վրդ. Մարաթացի 98, 114, 429
Վենետիկ 8, 29, 55, 57, 274, 350, 451
Վենոան (Ս.) Մարտիրոս 239
Վեսպասիանոս կայսր 303, 440
Վերնատան եկ. 13, 16, 17, 18, 86, 101, 421
Վիլլիպալտ Անգլիացի, ողգ. 16, 303, 416
Վիլհելմ Ա. կայսր 267
Վիլհելմ Բ. կայսր 267
Վիրգիլիոս, ողգ. 67, 303
Վիրք 202, 296, 297-299, 354, 432
Վիքթորիա (Թգհ.) Մեծին Բրիտանիոյ 267
Վկայասէր (Գ.) հպ. 14, 215, 260
Վռամ ե. (Թգ.) 200
Վրանաքաղաք 332
Վրաստան 116, 298, 299, 420
Վրթանէս վրդ. Զէյթունցի 63

Տաբիթա 302, 303, 305
Տակիտոս, պտմ. 115
Տահէրի Մզկիթ 304
Տաճարականք 325
Տաճունի դուռ 322
Տամիէդ (քղ.) 208
Տանիմարքա 239
Տաչեան (Հ. ց.) 59, 241, 450
Տարկամ վէզիր 207
Տար էս-Սապպաղ 321
Տարը Մարիամաթ 171
Տարոն 42, 134, 402
Տարպը Եաֆա 322
Տարպը Լիւդ 322
Տարպը Մըսըր 322
Տարպը Պիրէլ Ասքար 322
Տար Տիս 169, 170
Տարսոն 242, 441
Տէմիսքի, պտմ. 47, 476, 477
Տէյր էլ-Ասէս 172
Տէյր էլ-Զէյթունէհ 106
Տէյր էլ-Պէնաթ 430
Տէյր էր-Ռաւաթ 61, 62, 63, 64
Տէյր էլ-Ֆէլդ 369
Տէյր իպն Ապէտ } 8, 62, 361
Տէյր Տուզի վ. }
Տէմիր թաղ 270
Տէրի, վզրուկ 206
Տէրպէնտ 116
Տիբերիոյ Ծով 392, 393, 419, 420, 421
Տիգրանակերտ 316
Տիգրիս 402
Տիզբոն 16
Տիկին, քոյր Խարբերդցի Կարապետ աբ.ի 114
Տիկներես 9
Տիմոթէոս Գազացի 403
Տիմոթէոս վրդ. Սափրիչեան 268
Տիյիրմէն թաղ 270
Տիվանը-Ֆարաւոն 3
Տիտոս եպ. Կրետացի 183
Տիտոս կայսր 130, 140, 303
Տիրուհի Կիւլպէնկեան, մայր Գ. Կիւլպէնկեանի 273
Տիւրոս 27
Տոներ 113
Տորա (քղ.) 333
Տուքա Անապատ 331
Տրդատ (Թգ.) 251
Տօնական (Տէր) 359

Բաս էլ-Այն 376
Բենոտոյ, արևելագէտ 205
Բոպէրթ, եպ. Ռուէնի 323
Բուճմ էլ-Էմկաֆիր 396

Փառան Անապատ 331
Փառան (գղ.) 355, 397
Փասգալ Բ. պապ 387
Փարախ 166
Փարաւոն 301
Փարիզ 10, 11, 12, 32, 59, 67, 131, 146, 204, 271

Փեննա, դուբտր Լևոն Զ. թգ.ի 257, 258
Փիլատելփիա 436
Փիլիպպոս Դեղեցիկ (թգ.) 324
Փիլիպպոս (Ս.) Առաք. 379, 424
Փիլիպպոս (Ս.) Աւետարանիչ 441
Փիլիպպոս կթ. Ազբակեցի 252
Փիլիպպոս եպ. 195
Փիտոս սրկ. 332, 333, 336
Փիւնիկեցիք 115
Փղշտացիք 288
Փոտիոս 287
Փորձութեան լեռ 394, 419
Փոքր Ասիա 104, 355
Փրկչի Անապատ 394, 419

Քալանտրէ (գղ.) 22
Քալաուն էս-Սալիհ (սլթ.) 325
Քալպ Լուզեհի եկ. 73
Քաղկեդոնի ժողով 61, 183, 202, 236, 374, 398, 399, 449
Քանանէող 131
Քասիմ-էտ-Տօլա 207
Քասր էլ-եհհուտ 415, 417
Քարաւանք 3, 5
Քարաք-Մոպա 49
Քարաք-Մովաբ 48
Քարիզիմ լեռ 376
Քարնաք 300
Քարրար (գետ) 420, 421, 422
Քեապէ 185
Քէրէկ 47, 48, 49, 50, 52, 53, 54, 55, 57, 58, 438-439
Քէվրոն 308
Քէքէլիձէ 95
Քէօր Եուսուֆ փաշա 315
Քիթաբիզոն (քղ.) 402
Քինէր Անգլիացի 15, 24, 26, 38
Քիպլէ 230
Քիր-Հարէս 47
Քիր-Հարէսէթ 47
Քիր-Հերէս 47
Քիրման 45
Քիր-Մոաբ 47, 48
Քլէրմոն-Կաննօ, հնախօս 54
Քոզիբայի վ. 369-375
Քովրաթայի վ. 417
Քուարէսմիոս, պտմ. 14, 38, 216, 235, 236, 237

Օգոստոս կայսր 441
Օլաք (թգ.) 239
Օմար Իպն էլ-Ալիզ Խալիֆա 321
Օմար Իպն էլ-Խատտապ Խալիֆա 68, 155, 229, 230, 289, 404
Օմարա 209
Օմարի մզկիթ 362
Օմիատեան մզկիթ 377
Օշին (թգ.) 53
Օտէ եպ. Մելիտինէի 330
Օրինէ (գղ.) 35
Օրպելեանք 127
Օքսֆորտ 59, 146

Ֆաթիմեանք 155, 206, 207, 269
Ֆամակուստա (քղ.) 446
Ֆէլիքս Ֆապրի, ողգ. 10, 82, 89, 102, 110, 170, 416
Ֆէտերլէն (Հ.) Տես. Ս. Աննայի 422
Ֆիլիպպա, քոյր Մարիամ թգհ.ի 188
Ֆլօրանսօ 56
Ֆոստա (հին Գահիրէ) 404
Ֆուլք (թգ.) 49, 120, 188
Ֆռանկք 26, 69, 133, 186
Ֆռանկիստան 108
Ֆրանչիսկեանք 64, 94, 112, 113, 173, 174, 203, 214, 388, 428
Ֆրանսա 71, 77, 382, 408
Ֆրանսօա Սիւբիանօ, պտմ. 36
Ֆրանց ժօզէֆ կայսր 267
Ֆրէտէրիք կայսր 267
Ֆրէտէրիք Բ. կայսր 242, 243, 305, 388
Ֆրէտէրիք Մուրատ 313

Ք

Aïn Djadour աղբիւր մը 437
Alexis Mallon (p.) մտգր. 205
Allard (p.) մտգր. 131
Antipov (B.) 139
Aracoeli վ. (Հռոմի) 388
Arculfe տե՛ս Արգուլֆ եպ.
Argles տեսուչ Օքսֆորտի դպրոցին 346
Arvieux ասպետ 324, 443, 444
Aubé մտգր. 131
Barnabé տե՛ս Meistermann
Barrois (A.) մտգր. 334
Bassi պտմ. 70, 71
Bethabara (Յորդանան) 415
Bétonim Սալթի արեւմուտքը 436
Blankanhorn եւրոպացի երկրաբան 437
Bliss (Prof.) 122, 125, 135
Bonfils պտմ. 381
Cabrol հնախօս 152
Camille Enlart հնախօս 26, 263, 305, 325, 381, 383, 384, 388, 446
Chadenac/ (Deux-Sèvres) եկ. 383
Chalon (քղ.) 383
Charlian (քղ.) 382
Chartres (քղ.) 383
Chatillon-Sur-Cher 382
Clermont-Ganneau հնախօս 126, 162, 163, 198, 305, 325, 379, 405, 406, 407, 408, 430
Colonia Prima Flavia տե՛ս Կեսարիա (Պաղեստինեան)
Conder գնդապետ Անգղիացի 325, 381
Copratha (Յորդանան) 418
De Belardo d'Ascoli ողգ. 178
Delehaye (H.) մտգր. 133
De Muralt մտգր. 163
Dickie մտգր. 125
Elouse (գղ.) Այաշ? 401
Ernoul քրոնիկագիր 420
Etampes (քղ.) 383
Etheria տե՛ս Էթէրիա կոյս
Eudoxiana եկ. Գազայի 403
Evetts Անգղիացի մտգր. 204, 205
Fabri Felix ողգ. 69, 157
Francois Pipino ողգ. 69
Frère Lièvin պտմ. 70
Gadara (քղ.) 436, 437
Gautier Avesnes 443, 446
Germer-Durand հնախօս 100, 102, 103, 104, 105
Godefroy de Bouillon (թգ.) 186
Goussen (Prof.) գերմանացի 11, 12, 118, 124, 200, 420
Guerin մտգր. 417, 443, 444
Guillaume Bandenzel ողգ. 69
Hanauer հնախօս 343
Henri Lammens պտմ. 390
Herr Von Schick (Prof.) 135, 139, 140, 169, 197, 198
Heydet (L.) պտմ. 319
Hoffmenn Usener պտմ. 365
Huart պտմ. 209, 309
Hugues Vincent et F. M. Abel (P. P.) պտմ. 105, 197, 240, 292
Jacques de Vérone ողգ. 102, 180
Jean de Wurzbeourg ողգ. 178
Jean Mandeville ողգ. 69
Jean Poloner ողգ. 102, 157
Joseph Derenbourg 123
Jourdain 415
Jugie մտգր. 193
Khirbet Bataneh 436
Khir-Moab 58
Khitrowo ռուս 203
Lagrange (F.) մնկնիչ Ս. Գրոց 363
Laon/ եկ. 445
Laurent (J.) 402
Lavegerie կարտինալ 70
Le Camus գիտնական 451
Le Comte de Nouy 405
Léon Cré 70
Levaillant ողգ. 263, 324
Lièvin de Hamme տե՛ս Լիէվէն

Londres 38
Louis de Rochechouart *ողգ.* 102
Ludolphe *ողգ.* 69
Mahomerie *(գղ.)* 22
Mansi *մտգր.* 387
Mantes *(քղ.)* 382, 383
Marnéion 403
Martigny *մտգր.* 74, 133, 375
Martin Abbé 26
Mauss *ճարտարապետ* 70
Max Van Berchem 325
Meistermann 43, 58, 172, 216, 390, 422, 437
Métochion *Վ. ՅՆ.* 99, 203
Michelant 429
Michon Abbé *ողգ.* 451
Migne *աստուածաբան եւ հրատարակիչ* 8, 497, 417
Mislin Abbé *ողգ.* 325, 447
Moissac 408
Montana 35
Montjoie 50, 51
Nau (P.) *մտգր.* 83
Palestine 12, 24, 38
Paris 58
Plaisance*ի Անանուն* 185
Pococke 443, 444
Prosper Viaud *պտմ.* 428
Prudence *բանաստեղծ* 85
Qarka 47
Radzivel *իշխան, ողգ.* 69
Rentis 319, 320
Rey *հնախօս* 443, 444, 445
Reymond Génier *պտմ.* 259, 339, 355, 357, 360, 377
Reymond (G.) 429
Ricoldi *ողգ.* 69, 416
Robinsin 139
Rocci *պտմ.* 70
Saint-Lomer de Blois 382
Salton Bataneos *տե՛ս Էս-Սալթ*
Sauvaire *Թարգմանիչ Մուհիբէտտինի* 324, 377
Schulz *Բր. հիւպատոս* 139
Seawulf *Անկլօ-Սաքսոն ողգ.* 68, 96, 306, 388, 427
Sepp 139
Serapeion 403
Shafeïtes *իսլամական դպրոց մը* 69
Sirou *լեռ.* 437
Straton*ի աշտարակ* 440
Strzygowski (J.) *աւստրիացի գիտնական* 377, 368
Taylor *Պարոն* 27, 28
Théodoric *ողգ.* 187
Théodosius *ողգ.* 184
Tobler 139, 203, 430
Urbain Coppens *ողգ.* 97
Vanslip 204
Victor Langlois *մտգր.* 448
Vigouroux (F. P.) *պտմ.* 3, 58, 114, 306, 415, 442, 451
Vogüé *պտմ.* 70, 139, 152, 178, 179, 198, 325, 381, 405
Willibald *ողգ.* 192
Zachariah of Mitylene 399

ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	տող	սխալ	ուղիղ
4	13	*Մուգատտաբի*	*Մուգատտէսի*
63	23	*Սաիբ էլ-Ղանէմ*	*Սիաբ էլ-Ղանէմ*
67	1	*Թէոդորիոս*	*Թէոդոսիոս*
119	17	*Շահպիվան*	*Շահապիվան*
253	34	*Գլխադիր*	*Գլխադիր*
329	11	*Դինիս*	*Դիոնիսիա*
367	34	*զետեղուած*	*զետեղած*
399	11	*Թէոդորոս*	*Թէոդոս*

ՍՄԻՒԹ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

5.00

1000

Հայաստանի Ազգային գրադարան
NL0424868

2916

206·5
Q-47